


ՀԱՄԿ
ԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

ПЕТРОС ДУРЯН

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

В ДВУХ ТОМАХ

2

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1972

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԵՏՐՈՍ
ԴՈՒՐՅԱՆ
Գ/11870

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ

2

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1972

ԱՐ 1
Գ 90

Տեխսը պատրաստեց և ծաճոթագրեց
Ա. Ս. ՇԱՐՈՒԽՅԱՆԸ

խմբագրությամբ
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ

7—2—3



Գործ՝ պրոֆ. Ա. Ճա լարեանի

ԿԱՉՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Պետրոս Դուրյանի երկերի ժողովածուի երկրորդ հատորն ընդգրկում է բառերգությունները: Նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով: «Տարագիր ի Սիպերիա» այլաբանական ողբերգությունը, որը ճեղինակի առաջին գործերից է, գեռեվված է վերջում՝ գրության ստույգ թվականը ճայտնի չլինելու պատճառով: «Հավելված» բաժնում ամփոփված է Պ. Դուրյանի կորած ստեղծագործություններից մեկի բովանդակության շարադրանքը: Ծանոթագրություններում տրված են անհրաժեշտ տեղեկություններ բառերգությունների իմաճատգրերի, հրատարակության, առաջին բեմադրությունների մասին: Ուրարական թվանշաններով նշված է ցույց են տրված 90-ական թթ. ապագրված ստեղծագործությունների գրաքննական և հրատարակչի ապավադումներ: Բնագրին վերաբերող բացատրություններ, որոնք նշվում են փակագիծ ունեցող արաբական թվանշաններով, տրվում են ծանոթագրություններում:

Տեղանուններ, պատմական անձնանուններ և դժվար հասկանալի բառերն առանձնացված են համապատասխան բառարաններում:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՎԱՐԴ ԵՎ ՇՈՒՇԱՆ
ԿԱՄ
ՀՈՎԻՎՔ ՄԱՍՅԱՅ

ԹԱՏԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՐԳԱԽԱՌՆ Ի ՉՈՐՍ ԱՐԱՐԻՍ

Սկյուտար, 1867

Ա Ն Ձ Ի Ն Ք

ՊԱՐՏՏ, ագարակապետ
ՎԱՐԴ, որդին
ՇՈՒՇԱՆ, պարեսի որդեգրուհին
ՄԱՐԻԱՄ, մուրացիկ կին
ՍՈՒՐՄԱԿ, ավազակ
ՏԻՐԱՆ, բարեկամը
ԳՈՒՐԳԵՆ, երկրագործ
ԳԵՂԱՄ, Սուրմակա որդին
ՀՈՎԻՎ ՄԸ

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Ս

Գիշեր է.—Դաշտավայր մը.—Խորը լուսնով լուսավորված անտառ մը.—Տեսարանին ալ կողմեն առվակ մը կը սահի, ձախ կողմը փոս մը կա:

Տեսիլ Ա

ՍՈՒՐՄԱԿ (առանձին)

Ահա գեղեցիկ գիշեր մը, որ ոճրագործին համար գմայլելի և հեշտ վայրկյան մ'է, որ երազի պես կանցնի, իր խիղճը միայն կը ննջէ, ինքը կը կարծէ, թե այս գեղեցիկ գիշերը միայն անմեղին համար է. երկնից սիրուն թագուհին անդամ հայրասպան եղեռնագործին պատասխան մը կը թվի, իսկ անմեղին համար՝ սիրտ Աստվածուհի մը... ո՞ւր թռար մանկութիւ՛ն, վազանցուկ վերջալույս մ'էիր, որ սահեցար և կենացս հորիզոնը մթագնեցիր... մանկութեանս առեն կյանքն ու մահը, երկուքն ալ լուսաթև հրեշտակներ էին, երկուքն ալ կը ժպտային ինծի, երբ երիտասարդութեանը հասայ, մահը սոսկալի կերպարանք մ'առաւ, մահն առնչի և կյանքը սիրեցի... աղետալի սեր մը ծնաւ սրտիս մեջ՝ սև պատվար մը խղճիս առջև... երեակայութեանս կը տանջև գիս երբեմն, կը

անանձնական ոտիցս տակ անմնդ կին մը, գունատ և խոժոռ դեմք մը և կը լսեմ երբեմն անհ՛ծք մրմնջող ձայն մը... ի՞նչ է եղեր ուրեմն հեշտութիւնը. վեհյուռ մը որ հրաժարած սիրտ մը պռավացնելով և իր հետքին վրա արցունք սփռելով կը սահի, որուն զովութիւնը մանրիկրորդ մը կը տեւե... բայց որչափ ալ տեւե դարձյալ այն վեհյուռին կը տենչանք... ուրեմն կը սիրեմ ես և ինդ սիրվիմ... ոտնաձայն մը կա... անշուշտ ճամբորդ մ՛է... քաջալերութի՛ւն:

Տեսիլ Բ

ՍՈՒՐՄԱԿ և ԴԵՂԱՄ

ԴԵՂԱՄ.— (աչ կողմեն գալով) *Ո՛հ, այո՛, գառն է այս սերը:*

ՍՈՒՐՄԱԿ.— (դաշույն ի ձեռին մոտենալով) *Քսակդ կամ կյանքդ...*

ԴԵՂԱՄ.— *Ի՛նչ քսակ կը խնդրես ինձնե, խեղճ ավազակ... ես միայն վշտահար սիրտ մ՛ունիմ...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ես անանկ խոսքերու ականջ չեմ կախեր... քսակդ կամ կյանքդ...*

ԴԵՂԱՄ.— *Ուրեմն մեռցո՛ւր զիս... բայց գիտցիր, որ բան մը չունիմ... եթե որք, խղճալի ու թափառական երիտասարդի մը արյան ծարավի ես՝ խողխողե զիս և իմ արյունլվա դիակս տարածե անոր առջևը, զոր ես կը սիրեմ ի բոլոր սրտե:*

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) *Խե՛ղճ տղա, իր խոսքերը սիրտս կը շարժեն, չեմ համարձակիր ձեռք վերցնել իր վրա, կարծես թե աներևույթ ձեռք մը կը բռնե զիս:*

ԳԵՂԱՄ.— Ի՞նչ վճռեցիր, ո՞վ ավազակ...

ՍՈՒՐՄԱԿ.— Գնա՛, կը պիտի քեզի...

ԳԵՂԱՄ.— Կը պիտա՞ս, ո՞չ, չնորհակալ եմ, վասնզի դեռ չուտ փոքրիկ նշույլ մ'ունիմ խաւար երկնքիս երեսը, որ ամպն այսպէս մը պես պիտ լեռնե լեռ կառաչնորդեմ. ա՜հ, Աստուծո սիրույն չամար ըլլա, եթէ Մարիամ անուն հերարձակ կին մը տեսնես, որ որդի մը կը փնտռէ Գեղամ անվամբ, քսան իրեն, ըն իր որդին ինշուառ է և քիչ առենեն պիտի մեռնի՝ անիծելով միշտ իւր հայրը, ինչպես որ ինքը պատուիրած էր...

ՍՈՒՐՄԱԿ.— (սարսափած) Ո՛վ երկինք, որդիս է... քիչ մնաց որ որդվույս արյունն ալ պիտի թափեի (բարձր) գնա՛, գնա՛, խնդճ ատա, բայց մի՛ անիծիր քու հայրդ... (մեկուսի) քու հայրդ ալ ինշուառ է, բայց անիծապարտ:

ԳԵՂԱՄ.— Շուշա՛ն, Շուշա՛ն, քեզի համար է որ մեռնիլ կուզեմ:

ՍՈՒՐՄԱԿ.— Շուշա՛ն ըսիր:

ԳԵՂԱՄ.— Այն հովվուհիվույն քաղցր անունն է, զոր ես կը սիրեմ:

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Որդիս իմ հակառակո՞րդս (բարձր). ա՜հ, հեռացիր շուտ այս տեղեն, վասնզի կրնա ըլլալ որ վատնդ մը պատահի քեզի (Գեղամ ախորժյամբ կը հեռանա) Ո՜հ, ի՞նչ եմ ես աշխարհիս վրա. անիծից նպատակ մը, ամենքը դիս կանիծեն... բայց դարձյալ սիրտս չի դողար ոճիրներ նյութելու... ոտքի ձայն մը կա... ուրիշ համբորդ մ'է անշուշտ, այս անգամ պահվրտիմ:

Տեսիլ Գ

ՍՈՒՐՄԱԿ (պահվրտած) և ՏԻՐԱՆ

ՏԻՐԱՆ.— (ձախ կողմնն կերևի, շուտ դին կը գնեն և Սուրմակը չի տեսներ) *Դեռ չէ եկեր, պիտի մտանեմ դիմը... տանեմ մը ի վեր է, որ իր Տոքը Վատրամ*[1] *նախատրին*[2] *ապաննիչը կը փնտռեն, չի գիտեն, թե իր Տարագատ որդին է։ Թագավորը մեծ գումար մը կը խոստանա գայն մատնողին... ո՞վ չուզեր պատրաստ ատակ ձեռք բերել։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Երդմնապանց վատ, ճշմարիտ բարեկամ կը կարծեի զքեզ։*

ՏԻՐԱՆ.— *Ինքն է...* (մեկուսի, աւաւափած) *մտանվեցա...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Տիրա՛ն, ատակի համար քու փորձդ բարեկամդ մտանե՞լ... միտդ բեր Անիի*[3] *հպատ ու մեկ եկեղեցիներուն վրա երած երդումդ, դու ալ իմ սճրիս գործակից ես, մանավանդ որ դու զրկեցիր զիս... եթե կուզես ինծի հետ բանտարկիլ կամ մեռնիլ՝ մտանե՛ զիս։*

ՏԻՐԱՆ.— (Երկիծաճառեն) *Հիրավի ճշմարիտ բարեկամ մ'ես եղեր, ես այս տաքիվ կուզեի փորձել զքեզ. տեսնենք թե ոչինչ խոսքի մը համար բարեկամիդ կենացը կը գտվե՞ս... այս բանը գիտնալու համար հետաքրքիր եմ։*

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) *Մտանվեցա՛ր, անմիտ,* (բարձր) *բարեկա՛մ, դու ինքդ ես իմ թշվառութեանս պատճառը... եթե դու չըլլայիր, Տիրան, ես հիմա հանգիստ քուն կը քնանայի, դու զիս սճրագործ ըրիր քու հանգստութեանդ համար... մինչև անգամ ամպագութեան բնելու տախտակիս գիս, ուսկից շատ մը չկա, և վերջապես իմ կյանքս*

բուխինիդ հետ դուզակշիռ ըրիր... Հիմա երկինք պլեսուս վերև դահիճ կը թվի ինձ և ամեն քայլափոխիս կը կարծեմ, որ դժոխք բացվելով վիս պիտի լափեն... ծաղկին անգամ ինծի համար թունավոր է... Ննդավո՛ր, քու դրժամբ սպաննեցի հայրս և անկե ժառանգած հարբուտութիւնները քեզի հետ կեր ու խումի և մոլութեանդ տվի. ապերա՛խտ Տիրան, ես քեզի համար օրհնութեան տեղ հոս անեծքն ընդունեցի... ուստի թշվառ եմ և թշվառ պիտի ըլլամ, վասնզի ապերախտի մը համար հայրասպանութեյուն ըրի... Երբեմն նախարարի[4] մը զավակ էի, իսկ հիմա՝ ավազակ։

ՏԻՐԱՆ.— Զգե՛ սա աչինչ խոսքերը, քաջասիրտ եղի՛ր, տղայսմիտ մի՛ ըլլար, գիտցիր որ այս[5] աշխարհս ոճրագործին և անմեղին համար նույնն է. երջանկութեյունն ամենուն սրտին ալ կը տեղա, ինչպես փշոտ ու ծաղկավետ հովիտ մը, զոր առհասարակ կը թանա առավոտյան ցողը, և արևը իր լուսովը զայն կը կենդանացնե... գիշերը կը թառամի, առավոտուն կը թարմանա, մարդուս կյանքըն ալ այսպես է, այսօր թշվառ է, վաղը երջանիկ... վերջապես կյանքը գետի մը կը նմանի, որ երբեմն ծաղիկներու և երբեմն ալ ժայռերու մեջեն կը սահի։ Հիմա մեր գործին նայինք, ի՞նչ էր մեր ժամադրութեյան նպատակը։

ՍՈՒՐՄԱԿ.— Պարեհի որդեգրուհին՝ Շուշանը հիմա անպատճառ[6] պիտի առևանգենք։ Պարեհի որդին՝ Վարդ, զայն կը սիրե և սովորապես[7] լուսին եղած գիշերները շրջագայելու կելլեն։ Ձեռնարկութեյունիս քիչ մը դժվար է, բայց

Ես մինչև անգամ մահն աչքս առեր եմ... մեկ մը Շուշանը թևերուս մեջ դանեմ։

ՏԻՐԱՆ.— Անհոգ եղի՛ր, հուսամ որ վտանգ մը չի պատահիր, առանց ձայնի կը լմննա գործը, արդեն դուն ալ իմ ճարտարութեանս տեղյակ ես... քաջալերութի՛ւն. ես եկած առենս մարգերուն մեջ շրջադայութեան կրնեին և բավական հեռու էին իրենց բնակարաններն։

ՍՈՒՐՄԱԿ.— Երջանի՛կ լուր, վերջապես ձեռաց մեջն ես, Շուշա՛ն, այն արհամարհոտ նայվածքդ ժպիտի պիտի փոխեմ, և իմ սրտիս հետ բարեխնդ պիտի ապրի ասոր բանութեամբ քու սիրտդ ալ։

ՏԻՐԱՆ.— Կեցի՛ր... ինծի հաստատում պիտի հանե՞ս...

ՍՈՒՐՄԱԿ.— Անշուշտ (մեկուսի) քու հաստատմդ մահն է այս գիշեր, եթե հաջողի։

ՏԻՐԱՆ.— Երթանք տեսնեմ... երկչոտութեան չուզեր, անվախ սիրտ, ճարտար հարված...

ՍՈՒՐՄԱԿ.—Երթանք անմիջապես... սպանութեանը քեզի. հակառութեանն ինծի. կեցցե՛ս Տիրան, եթե հաջողիս...

ՏԻՐԱՆ.— Կը տարակուսի՞ս (մեկուսի), կասկածը փարատեցինք... (բարձր) օ՜ն, այս կողմեն, զգուշութեան, դուցե պիտացնիս ալ ելնեն...[5] սա լուսինն ալ ի՞նչ ապեկ մեր գործին կուգա. եթե ճշմարտութեանը փնտռես, ինքն ալ մեղի[9] մեղսակից է, եթե բրածնիս կրնա մեղը համարվիլ։

ՍՈՒՐՄԱԿ.— (Երթալով. մեկուսի) անմիտը կը կարծե, թե մառնութեան խոսքը իրեւ ոչինչ անհետացավ. թող այնպես կարծե. (ձախ կողմեն կը ճեռանա.—Տեսարանը պարապ կը մնա պահ մը)։

Տեսիլ Դ

ՎԱՐԴ և ՇՈՒՇԱՆ (ձեռ ձեռքի աչ կողմնե կը մտնեն)

ՎԱՐԴ.— *Հոգնեցար, սիրելի Շուշանս... եթե կուզես, սա առավոտին քով նստինք քիչ մը։*

ՇՈՒՇԱՆ.— *Քանի որ դու հետդ եմ, սիրելի Վարդս, գիտես որ երբեք չեմ հոգնիր։*

ՎԱՐԴ.— *Շուշա՛ն, երբ առաջին անգամ սերը փափկիկ մատներովը կուրծքս բախեց, ես միայն[10] այն[11] առեն կերևակայեի գիրկ մը և քնքուշ թևեր... կըսեի ինքնիրենս. «ե՞րբ պիտի գա այն երջանիկ վայրկյանը յորում սիրուհի մը հեշտ ձայնը պիտի մրմնջե ինծի, «գրկե զիս, վա՛րդ». և ահա դու գիրկդ եմ, Շուշան, երջանիկ է այն ծաղիկը, որ դու շրթանցդ վրա կը թառամի, երջանիկ է այն հոտմիկը, որ դու ճակատդ կը շոյե, երջանիկ է այն ճառագայթը, որ դու մազերուդ մեջ կը նվաղի և ամենեն ավելի երջանիկ է այն, որ զքեզ կը սիրե ի բոլոր սրտե։*

ՇՈՒՇԱՆ.— *Ա՜հ, հիրավի, ի՞նչ քաղցր է սերը, Վարդ, սերը կենաց զարունն է, որ մեր սրտին մեջ կը փթթի և համբույրն անոր զեփյուռն է, որ մեր սիրաբորբոք սրտերը կը զովացնե... տե՛ս, վա՛րդ, բոլոր բնությունը սիրով կը խայտա... լուսինը սեր կը ցողե, ծաղիկը սեր կը բուրե, հոտմիկը սեր կը շնչե, թռչունը սեր կը գեղգեղե, աերևը սեր կը սոսափե, առվակը սեր կը մրմնջե, ո՜հ, ամեն ինչ սե՛ր... սե՛ր...*

ՎԱՐԴ.— *Շուշա՛ն, որչա՜փ քաղցր ես, քու սրտիդ ծալքերը շուշանա թերթերուն պես անբիծ են, քու նայվածդը արշալուսուն առաջին ճառագայթին նման քաղցր է, քու*

(-) 11850 A

շունչդ առավոտյան զեփյուռին չափ հնշառելի է... ո՜հ, եթե դու չըլլայիր, փուշերով ծածկված վարդի կոկոն մը պիտի ըլլայի ես և դեռ չի բացված պիտի թառամիի։

ՇՈՒՇԱՆ.— Գիտցավ Արարիչը, որ մենք առանց իրարու չի պիտի կարենայինք ապրիլ, ուստի իրարու դիրկ նետեց զմեզ, և հիմա սեր կը շնչենք միասին։ Այնպես չէ՞, վարդ, միշտ պիտի սիրենք զիրար, ինչպես որ ծաղիկն ու զեփյուռը միշտ զիրար կը սիրեն... ո՜հ, տես ի՞նչպես ուժգին կը բաբախեն սիրտս. կարծես թե կուրծքս ծակելով՝ քու սրտիդ քով թռչիլ կուզեն. մոտեցի՛ր ինձ, սիրելիդ իմ վարդ, միշտ գրկե՛ զիս... տես, լուսինը ի՞նչպես՝ կը ժպտի մեզի, կարծես թե նա ալ աստեղազարդ կամարին մեր զիրկը թռչիլ կուզե, նա ալ զմեզ կը սիրե, մեր վրա կը հսկե, մենք ո՞ւր երթանք, ինքն ալ մեզի կը հետևի... Ո՜վ լուսնակ, միայն կենդանի եղած առեններիս չի պիտի լուսավորես զմեզ, այլ երբ մեռնինք՝ մեր շիրիմներուն վրա ալ պիտի ծագես... (առ Վարդն) և այն առեն սիրտ տեղ արցունք պիտի ցողեն մեր շիրիմներուն վրա... քանի որ մեր երջանկության առեն կը ժպտի, անշուշտ մեր մահվան առենն ալ պիտի տխրի. խո՜ղճ լուսին, իր դերասանը թուխ ամպ մ՚է միայն։

ՎԱՐԴ.— Մի՛ այդ խոսքերը, Շուշան, ինչո՞ւ մեռնինք. ավելի աղեկ չէ՞ որ միշտ այսպես զիրար սիրելով հավիտյան երջանիկ ըլլանք... Մինչև չը գիտե՞ս, թե որչափ քաղցր ես դու ինծի համար... դու իմ կյանքս ես, վասնզի այն ժպիտը, որ դու առաջին անգամ ինծ ուղղեցիր, կինոցս[12] արշալույսն եղավ այն։

ՇՈՒՇԱՆ.— Եվ այն բարաբառն սիրտը, զոր դու իմ լանջքիս

մոռեցուցիր սիրտ քնար մ'է այն, որ սրտիս խորը նորա-փիիի սերն արթնցուց... դի ես ալ դեռ զքեզ չը ճանչցած՝ չը գիտեի, թե ի՞նչ է կյանքը... Ծնողքես զրկվելես հետո՝ իրենց ձգած դույզն ժառանգութիյամբը կապրեի և կը կարծեի որ ալ թշվառ եմ հավիտյան: Բայց խաբվեր եմ. քու առաջին նայվածքդ սիրտս պատած տխրութիյան քողը փարատեց... դեռ ես զքեզ չը ճանչցած՝ բոլոր օրը հովիտներու և անտառներու մեջ կանցունեի տխուր ժամերս և անհամբեր երկոյան կսպասեի... և երբ վերջալույսը կոսկեզօծեր հորիզոնը՝ սիրտս կը զվարթանար, վասնզի կը կարծեի որ կյանքս այն վերջալուսին հետ պիտի վերջանար... բայց երբ արշալույսը նորեն կը ծագեր՝ կանիծեի ես զայն... Ներե՛ ինձ, սիրեցյա՛լդ իմ, դեռ չէի ճանչըցած[13] զքեզ այն ատեն, դեռ չէի զգացած քու քաղցրիկ սերդ... բայց հիմա կը հասկնամ, թե անիսելք եմ եղեր այն ատեն:

ՎԱՐԴ.— *Եվ ի՞նչ կը կարծես, Շուշա՛ն, եթե ուրիշներն ալ մեզի պես սիրեն զիրար, այն ատեն ծաղկունք անգամ նախանձելով չի՞ պիտի թառամեին և այն ատեն ի՞նչ բան պիտի ըլլար Շուշանա սիրտ նվեր, թռչուններըր նախանձելով չի՞ պիտի երգեին, և ո՞վ պիտի արթնցներ գմեզ[14] արշալուսին ճառագայթներուն հետ՝ մեր համբույրներն իրարու տալու համար. ի՞նչ քաղցր է այն վայրկյանը:*

ՇՈՒՇԱՆ.— *Կարծեմ գիշերը բավական տարաժամեցավ: Կամաց կամաց մեր բնակարանը երթանք, վա՛րդ, և առտուն կանուխ ելնելով ոչխարներնիս առած՝ Մասյաց[15] արոտներն կելնենք[16], այնպես չէ՞, վա՛րդ:*

ՎԱՐԴ.— Շատ աղեկ, Շուշա՛ն, բայց այս ի՞նչ ձայն է, մարիկ ըրե... (հետևենք հետևյալ երգը կը լսվի):

ՈՂԲԵՐԴ

Ո՛վ դու գիշեր, գիշեր լռիկ լուսավառ,
Որ կը շնորհես ինձ ժամանակ, իմ բշվառ
Կյանքիս վրա արցունք թափել վշտաճար,
Միայն զքեզ գտա ցավույս մխիթար:

Ով դուք, Երկի՛նք, Երկինք գլխած, գոռոզյուն,
Տվե՛ք գոնե այս իմ շրթանց դողդոջուն,
Անե՛ծք կարդալ անոր, որ զիս արտասվաց
Մատնեց խարեց դերևացույց նույնս կենաց:

Թշվառ եմ ես բշվառությանս վերջ չը կա.
Ուրեմն անե՛ծք թափին գլխուս Սատանա
Ով ինձ ինիիս որ եղա վատ սիրադրուժ.
Երկի՛նք, գթա՛ և արցունքներս բեր դու նուշ:

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչ ողորմագին ձայն է այս... Ո՞վ է արդյոք...

ՎԱՐԴ.— Անշուշտ թշվառ կին մ'է, ո՞վ գիտե, ի՞նչ ապետքի հանդիպեր է:

ՇՈՒՇԱՆ.— Դու[17] կու լա՞ս, վա՛րդ... բայց ինչո՞ւ, բան', կաղաչեմ:

ՎԱՐԴ.— Այս ձայնը... այս ձայնը սրտիս խորը թնդաց, չը գիտեմ, ակամա արցունք հոսեցին աչվընեիս:

ՇՈՒՇԱՆ.— Ա՜հ, խե՛ղճ կին, արդյոք ի՞նչ է իր վիշտը, միթե դարման կրնա՞նք տալ իրեն, վա՛րդ:

ՎԱՐԴ.— Գուցե... ի՞նչ ծանր է արդյոք իր վիշտը, զոր այսպես ողբալով թևթևցնել կուզե: Կերևի որ մեկը չունի, որուն իր ցավը հայտնե և սփոփվիր է պիշնայրին լուս-

թյան հայտնել իր[18] գաղտնիքը և սիրտիանք գտնել... Թըշվա՜ռ կին։

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչ գորովալից սիրտ մը ունիս, վա՛րդ, ի՞նչ շուտով արտասվեցին անուշ աչքերդ... (ձեռքն աճուր սրտին դնելով) ո՞րչափ ալ ուժգին կը բաբախե սիրտդ... Հանդարտե՛, սիրելի՛ դ իմ, անշուշտ կրնանք մեր ձեռքեն եկած ձեռնտվությամբը մխիթարել զինքը։ Դեպի այն կողմը երթանք...

ՎԱՐԴ.— Կեցի՛ր... Ահա համր ոտնաձայն մը կը լսվի... կերևի որ ինքն է... սպասենք։

ՇՈՒՇԱՆ.— Բայց կաղաչեմ, հանդարտե՛։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ՄԱՐԻԱՄ

ՄԱՐԻԱՄ.— (ձախ կուլմեն մտնելով) Իզո՞ւր կաղաղակեմ... ձայնս լսող չկա, Աստված անգամ երես դարձուցեր է ինձնե... Թշվառ եմ ես, խելացնոր մը, որ ուր երթալը չը գիտեր և իր ոտիցը ներքև դերեզման կը փնտռե միշտ... Մա՜հ... Մա՜հ, ինչո՞ւ կը դանդաղիս... ալ հույս չունիմ ես... Թշվառությանս չկա վերջ... Սուրմա՛կ, անիծյա՛լ ըլլաս դու հավիտյան և թո՛ղ իմ աննեծքս միշտ քու կյանքդդ խռովե։

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչ ունիս, կին դու, ի՞նչ աղետք պատահեցավ քեզ... Միթե դո՞ւ էիր հիմա ողորմագին երգողը...

ՄԱՐԻԱՄ.— Բայց[19] ո՞վ ես դու, սիրուն աղջիկ... գիշեր ատեն ի՞նչ բան ունիս հոս։

ՇՈՒՇԱՆ.— Ես այս գյուղն որը հովվուհի մ'եմ, բարի երկրագործի մը որդեգիրը, այս երիտասարդին հետ հոս շրջագայելու եկած ենք... դիրար կը սիրենք:

ՄԱՐԻԱՄ.— Ջիրար կը սիրե՞ք: Ուրեմն երջանիկ եղիք և ըսե՛ք որ ես իմ թշվառությունս ողբամ առանձին, զուր չը դիտեք, թե ի՞նչ է թշվառությունը:

ՎԱՐԴ.— Քաջալերվե՛, թշվառ կին, պատմե մեզ ապետքդ և պիտի տեսնես, որ մեր ձեռքեն եկած օգնությունը չի պիտի պլանանք քեզ:

ՇՈՒՇԱՆ.— Գիտցիր, որ ես ալ քեզ նման թշվառ էի, խնդճ ու մինակ մնացած աշխարհիս վրա՝ երբ այս ապնիվ երիտասարդը զիս իր տունը ընդունեց և իր սիրով երջանիկ ըրավ զիս:

ՄԱՐԻԱՄ.— Ով եթե պատմեմ իմ ապետքս՝ պիտի տեսնեք թե ասոր պատճառը սերն է:

ԱՄԵՆՔԸ.— Սե՞րը...

ՎԱՐԴ.— Միթե սերը թշվառության պատճառ կրնա՞ ըլլալ:

ՇՈՒՇԱՆ.— Բայց ըսե, ի՞նչպես սիրեցիր և թշվառացար:

ՎԱՐԴ.— Այո՛, ըսե՛, կպաչենք:

ՄԱՐԻԱՄ.— Եթե պատմեմ, չի՞ պիտի անարգեք զիս:

ԱՄԵՆՔԸ.— Ոչ, երբե՛ք:

ՄԱՐԻԱՄ.— Ասկե 19 տարի առաջ այս գյուղիս մեջ երկրագործի մը հետ ամուսնացա, երկուքնիս ալ փոխադարձաբար զիրար կը սիրեինք... ժամանակ մը վերջը միածին կայտառ զավակ մը ունեցանք և բավական տաեն երջանիկ ապրեցանք... Օր մը... ո՛վ օր ապետալի... հովտի մը մեջ ժուռ կուգայի.. երեկոյան հեշտալի ժամերն էին... արևը մարր մտնելու վրա էր... սիրտս սիրո հեղհեղի մը մեջ կը

ծփար. քանի մը վայրկյաններ ալ անցան և արևն անհետացավ... ոսկեփայլ լուսինը հորիզոնին վրայ կը բարձրանար. ընտանեցս միության ժամը մոտեցեր էր... Բնակարանիս ճամբան բռնեցի՝ գնոնեն ծաղիկ ժողվելով... Երջանի՛կ օրեր... Հանկարծ ձայն մը ուր, որ իմ անունս կուտար... դողացի... դեպի ձայնին եկած կողմը դարձա, և մեկը չի տեսա... սիրտս ուժգին թունդ առավ. և[20] դարձյալ ճամբաս շարունակել սկսա. նորեն լսեցի ձայնը. դարձա և տեսա երիտասարդ մը, որ քիչ մը անդին ծունր եկած գիս կը կանչեր...

ՇՈՒՇԱՆ.— Ով ո՞վ էր այդ անձը...

ՄԱՐԻԱՄ.— Ճանչցա գինքը, ճանչցա այն, որուն սկիզբ խոստացեր էի, երբ աղջիկ էի... Սարսուռ մը եկավ վրաս և չը կրցա ճամբաս շարունակել... Սերը բռնեց գիս... Ակամա քանի մը քայլ ուղղեցի իրեն... վայրկենն մը բազկացս մեջ տեսա գինքը... Սե՛ր ազնաբեր... Վերջապես բաժնվեցանք իրարմե... Քանի մը օր անցան, փափաքած ժամս հասավ և իրեն հետ այս լեռներուն մեջ փախանք... ա՜հ... Հոն գիտցա արցունք թափել և վշտանալ. անառակ եղեռնագործի մը զավակ մ'ունեցա Գեղամ անուն և զայն առած այն ոճրագործեն հեռացա. զավկիս հետ միասին բավական տաեն տպրեցանք... Ամիս մը կա, որ զավակս ալ կորսնցուցի, այնուհետև՝ ոչխարներս, որով կը սնանեինք: Անկե ի վեր է թշվառ կյանք մը կանցնեմ, մինչև անգամ մուրալու ստիպվեցա՝ գյուղն գյուղ, տնտառն տնտառ, լեռնե լեռ թափառական շըրջելով... շատ ղջացի ըրածիս վրա, այլ ի զո՞ւր... Ա՜հ,

քանի որ սիրեցիք վիս որ գալանիքս ըսեմ, ուրեմն՝ հանցավոր եմ, ներեցե՛ք ինձ։

ՎԱՐԴ.— Կը ներենք, քեզի, խե՞ղճ կին։

ՇՈՒՇԱՆ.— Եվ կը պաղատինք Աստուծո, որ ինքն ալ ներե։

ՎԱՐԴ.— Բայց ո՛վ է քու առջի ամուսինդ, անշուշտ կը հանդնանք դինքը, եթե այս դյուղը կը բնակի։

ՄԱՐԻԱՄ.— Պարեա երկրագործն է. հիմա եթե դինքը տեսնեմ, չեմ ճանչեր, վասնզի դինքը թողելես ի վեր 17 տարի է։

ՎԱՐԴ.— Պարեա երկրագո՞ծն ըսիր... Ո՞վ երկինք...

ՇՈՒՇԱՆ.— Որդի ունի՞...

ՄԱՐԻԱՄ.— Բայց ինչո՞ւ խռովեցաք... այո՛, վարդ անուն որդի մ՚ունի... Ջավա՞կս...

ՎԱՐԴ.— Տե՛ր Աստված, ի՞նչ կը լսեմ... Ուրեմն մայրս ես դու, զոր մանկութեան[22] ատեն կորսնցուցի։

ՄԱՐԻԱՄ.— Քու մայրդ... Ա՜հ...

ՎԱՐԴ.— Այո, մայրի՛կ, վարդն եմ ես, քու որդիդ և դեռ կը սիրեմ դքեզ։

ՄԱՐԻԱՄ.— Եվ ներեցիր քու մորդ, այնպես չէ՞ (գիրար կը գրկեն)։

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչ անակնկալ դիպված։

ՎԱՐԴ.— Ալ երջանիկ ես, մա՛յր իմ, վասնզի քու որդիդ պիրկըդ է։

ՄԱՐԻԱՄ.— Այո՛, երջանիկ եմ... Որդյակ իմ...

ՎԱՐԴ.— Թե որ զքեզ հորս քովը տանիմ, այ չի պիտի վըշտանաս, այնպես չէ՞...

ՄԱՐԻԱՄ.— Հո՞րդ... Ա՜հ, ո՛չ, ո՛չ, արժանի չեմ ես յուր[23]

քաղցր սիրույն և հարգանացը... Եվ գուցե հիմա նա կատե պիս, և եթե երթամ՝ կը վռնտե պիս։

ՎԱՐԴ.— Կը սխալիս, մա՛յր իմ։ Ինքը գեռ կը սիրե քեզ, ինքը չը պիտեր քու պատմությունդ, այլ անհետացած կը կարծե քեզ, հիմա եթե գրեզ իրեն տանիմ, ինքը պիտի բանա յուր[24] *դիրկը։*

ՄԱՐԻԱՄ.— Իսկ եթե գաղտնիքս իմանա, պիտի...

ՎԱՐԴ.— Ներե քեզի... Շուշա՛ն, դու ալ գրկե մայրս... Քանի մը օրեն, մա՛յր իմ, դու ալ մեր հարսանյացը ներկա պիտի ըլլաս, դու ալ պիտի օրհնես մեր երջանիկ միությունը...

ՋԱՅՆ ՄԸ.— (ներսեն) Օգնությո՛ւն... Օգնությո՛ւն...

ՎԱՐԴ.— Ո՞վ. ապու մը ձայնն է... Երթամ, տեսնեմ, ի՛նչ կա (կերթա)։

ՄԱՐԻԱՄ.— Կեցի՛ր... Կեցի՛ր... Վտանգ մը չըլլա (նաևեն կերթա)։

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչ խոսք էր որ Վարդի բերնեն թռավ... Հարսանի՛ք, ո՛վ, քիչ առեննն Վարդ իմ ամուսինս պիտի ըլլա... քիչ առեննն ամուսինս պիտի կոչեմ գինքը... Ի՞նչ երջանիկ միություն...

Տեսիլ Զ

ՇՈՒՇԱՆ և ԳԵՂԱՄ

ԳԵՂԱՄ.— (տխուր ֆալելով և Շուշանա պատահելով[25]*) Շուշա՛ն է... (ծունր կուգա)։*

ՇՈՒՇԱՆ.— Երիտասարդ մը դիմացս ի ծո՛ւնր... ուոք ելի՛ր և ըսե՛, ի՛նչ կը խնդրես ինձեն (ուոք կը հանե)։

ԳԵՂԱՄ.— Նայվա՞ծք մը... ժպի՞տ մը... բա՞ռ մը...

ՇՈՒՇԱՆ.— Ձեմ հասկնար ըսածդ, բացատրե՛ միտքդ:

ԳԵՂԱՄ.— Եթե ըսեմ՝ լեզուս առաջ չերթար... ո՜հ, կը սիրեմ զքեզ, Շուշա՛ն:

ՇՈՒՇԱՆ.— Եկո՛ւր վա՛րդ:

ԳԵՂԱՄ.—Ո՜հ, լռե՛, լռե՛, կաղաչեմ, զքա՛ր ինծի...

ՇՈՒՇԱՆ.— Բայց կը զարհուրեցնեն[26] զիս քու խոսքերդ[27], կը հասկնամ որ...

ԳԵՂԱՄ.— Ո՜հ, մոխիկ ըրե՛... Ոտքերուդ տակ սիրտ մը կը կոխկռտես, և այն սիրտը ամեն մեկ քայլափոխիդ մեկ մեկ կաթիլ արյուն կը հեղու... Սիրտ մը ունիմ՝ քեզ կը նվիրեմ և դու զայն կարհամարհես... Ուրեմն ծակե այս սիրտը, որ ամեն մեկ վայրկյան քեզի համար կը բաբախի և ավրե՛ դաշույնով մը այն անունը, զոր սերը իր կրակե գրիչովը սրտիս խորը գրեց: Ո՛ր թառամին այս շրթունքները, որոնք ամեն վայրկյան քու անունդ կը մրմնջեն... Եթե անարժան եմ քու սիրույդ... դեռ «ձեմ սիրեր» չըսած՝ խոպոտեղ զիս կաղաչեմ... Ո՜հ, անզութ ես եղեր, Շուշա՛ն, ես կարծեցի որ պիտի գթաս վրաս... բայց խաբվեր եմ... բառ մը՝ այո կամ ոչ. պիտի սիրե՞ս զիս... Դու կուգա՞ս... Ուրեմն հավատա՞մ, որ կը սիրես դու զիս... Ո՜հ, ինձ դարձուր նայվածքդ, խոսե՛, սիրտս մի՛ հատցուներ:

ՇՈՒՇԱՆ.— (մեկուսի) Այո՛, կուգամ վարդ[28], խեղճ երիտասարդ, վասնզի գիտեմ, թե ի՞նչ է սիրելը և չը սիրվիլը:

ԳԵՂԱՄ.— Ի՞նչ կը մտածես, պիտի սիրես զիս, այնպես չէ՞... Ո՜հ, ուրեմն զրկե զիս, և երջանիկ ըլլանք, զիրկս հանդչած՝ հնչե՛ սրտիս քու սիրո խոսքերդ և հուսահատությունս փարատե, ինչպես որ սոխակն անտառին խորը

առավոտյան երգով բնության վրա տիրած գիշերային արհավիրքը կը փարատեն...

ՇՈՒՇԱՆ.— Ջեմ կրնար սիրել զքեզ... Ես՞ղճ պատանի, ես չկրկինս ուխտեցի միայն վարդս սիրել, և ի՞նչպես զըրժեմ ուխտս մը. ո՛չ, ո՛չ, չե՛մ կրնար թողուլ իմ սիրելի վարդս օտարականի մը համար, որ կրնա ուրիշ մը սիրել... երբ իմ վարդս...

ԴԵՂԱՄ.— Ուրեմն մահս վճռեցիր... Ո՜հ, գիտցիր որ ալ այսուհետև չկա ինծի համար երջանկություն, Հանգիստ կյանք, և սեր: Կյանքը ինծի վիշտ պիտի ըլլա, սերն ինծի դահիճ, քու հիշատակդ մինչև գերեզման պիտի հալածե զիս, և «Շուշա՜ն, Շուշա՜ն» հառաչած ատենս՝ փուշեր պիտի փթթին սրտիս վրա, և ամեն մեկ հառաչանքիս՝ մեկ մեկ ոտք գերեզմանին[29] հատակը պիտի իջնեմ: Վերջապես ցավոք ծնա և ցավոք պիտի մեռնիմ... խանձարուրիս մինչև գերեզմանս փշալից ճամբա մը պիտի ունենամ... Ուրեմն ուզեցիր որ ասանկով մեռնի նա, որ զքեզ հոգիեն ավելի կը սիրե... կուզե՞ս որ մեռնիմ հա, Շուշա՛ն:

ՇՈՒՇԱՆ.— Չե՛մ կրնար սիրել զքեզ (Խովեն կը ճեռանա):

Տեսիլ Է

ՆՈՒՅՆՔ և ՎԱՐԴ

ՎԱՐԴ.— (մոնելով) Երթանք, Շուշա՛ն... Մայրս հոն մեկի կսպասե:

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչ էր այն օգնության ձայնը...

ՎԱՐԴ.— Տղա մը լճին եղերքը վարճացած առանն՝ դիպվածով մեջն ինկեր է։

ՇՈՒՇԱՆ.— Ապառնե՞ր պինքը։

ՎԱՐԴ.— Այո՛ և իր մոտակա բնակարանը տարի։

ՇՈՒՇԱՆ.— Ո՜հ, վա՛րդ, պահապան հրեշտակ մ'ես դու... (կերթան առջևեն)։

ԳԵՂԱՄ.— Ո՜հ (ետևեեան հետևելով)։

Տեսիլ Ը

ՍՈՒՐՄԱԿ և ՏԻՐԱՆ (ձախ կողմեն կուգան)։

ՍՈՒՐՄԱԿ.— Որչա՜փ պատճուճիր պիս և դեռ չը գտանք... մինչև խաբեցի՞ր պիս։

ՏԻՐԱՆ.— Ինչո՞ւ պիտի խաբեմ... Թշվառականները նկած առենս կը շրջագայինին։ Այս բարկութեյանս առեն եթե գտնեմ՝ այնպիսի հարված մը պիտի տամ ինծի դեմ դնողին, որ երկու կտոր պիտի ըլլա։

ՍՈՒՐՄԱԿ.— Լռե՛, պռոտոտախո՜ս, դանոնք գտնելու է Հիմա, վտանգի կենս դիշերվան մոտ է... Գուցե բնակարաններին դարձած ըլլան։

ՏԻՐԱՆ.— Ուրեմն վաղ դիշերվան ձգենք մեր ձեռնարկութեյունը, վաղ դիշեր անպատճառ կը կատարենք և ալ կը հաջողի։

ՍՈՒՐՄԱԿ.— Մինչև վաղը մտատանջութեյան և կարոտանաց գա՞ր մ'ալ պիտի անցնեմ ես. Ո՛չ, ո՛չ, չեմ կրնար այս սիրուն դիմանալ, մինչև չգիտե՞ս, թե ի՞նչպես կայրի սիրտս...

ՏԻՐԱՆ.— Ուրեմն մեկ մը երթամ տանը կողմերը պիտեմ, դու

հոս կեցիր. եթէ օգնութեան հարկ ըլլա, ես նշան կ'ընեմ և իսկոյն հասիր։

ՍՈՒՐՄԱԿ.— *Ուրեմն գնա՛, Տիրա՛ն, պարապ չը դառնաս։*
(Տիրան աջ կողմեն կը ներառնա)։

Տեսիլ Թ

ՍՈՒՐՄԱԿ (առանձին)

ՍՈՒՐՄԱԿ.— *Մոլեգի՛ն կիրք, դեռ չի՞ պիտի մարիս. քու դժոխային բոցերդ դեռ պիտի լափե՞ն սիրտս. այս քանի՞ անգամ է որ անողորմ ձեռքս անմեղներու արտասուքը և մինչև անգամ Տոր մը արյունը թափեց քու բոցերուդ վրա և դեռ դու չը մարեցար. սի՛րտ իմ, մինչև չը լսեցի՞ քիչ մը առաջ անոր ձայնը, որուն ողբական եղանակը դու սորվեցուցիր. նա միայն անմեղության և սեր պիտակ, դու անոր սորվեցուցիր, թե ի՞նչ է վիշտը, ի՞նչ է ոճիրը... Դեռ իր ձայնը արտաս խառերը կը մրմնջե, դեռ իր տեսքը հոգիս կը խռովե, և դեռ իր անձեռքը սարսուռ կազդի ինձ, արեգական լուսին մեջ երկյուղով կը պատիմ՝ վախնալով որ չըլլա թե արտասվաթոր և հեթարձակ կույսեր ելնեն դիմացս և ջիս վազրերու նման հոշոտեն... Գիշերն ինծի համար թանձր քող մը ըլած եմ ոճիրներս ծածկելու համար... Արշալույսին քաղցր ծագումը, որ անմեղներու զվարթության կը ցողե, ընդհակառակը ջիս կը զարհուրեցնե, կը փախչիմ ես անոր տեսքեն անտառներու խորերը և իմ ոճիրներուս վրա կը խորհիմ... Ոտքի ձայն մը կա... մեկը կը վազե (աչ կողմը[30] ճայելով), Տիրանն է... Հաջողեր է... Շուշանն է իր գրկացը մեջ (մե-

կուսի) քաջալերութի՜ւն... մի՛ դողաք, բազուկնե՛ր, պետք է որ Տիրան մեռնի և այս փոսը անոր գերեզմանն ըլլա, ուսկից անկարելի ըլլա ելնել... որպեսզի իմ գաղտնիքս գիտցող չըլլա և բախտիս ալ ընկեր չունենամ:

Տեսիլ Ժ

ՍՈՒՐՄԱԿ, ՏԻՐԱՆ, ՇՈՒՇԱՆ (մարած)

ՍՈՒՐՄԱԿ.— Կեցցե՛ս, Տիրան... քաջ ես եղեր...

ՏԻՐԱՆ.— (Շուշանը գիրկը) Շունչս կտրեցավ... Հոգնեցա...

ՍՈՒՐՄԱԿ.— Մարա՞ծ է:

ՏԻՐԱՆ.— Այո՛:

ՍՈՒՐՄԱԿ.— Ի՞նչպես հաջողեցար:

ՏԻՐԱՆ.— Երբ ասկե բավական հեռացա՝ տեսա, որ առջևես կերթային. աղեկ մը վերարկուիս մեջ պլլվեցա չը ճանչցվելու համար. քիչ մը մոտեցա և տեսա որ Մարիամ, կինդ, հետերնին կը խոսակցեին:

ՍՈՒՐՄԱԿ.— Մարիա՞մ, կի՞նս... Ի՞նչ կը խոսակցեին... (սոսկալով):

ՏԻՐԱՆ.— Ականջ չի դրի... իսկույն վարդի վրա հարձակեցա և դաշույնի հարվածով մը գետին տարածեցի զայն:

ՍՈՒՐՄԱԿ.— Մահացո՞ւ էր հարվածը[31]:

ՏԻՐԱՆ.— Ո՛չ... բայց խորունկ... Հետո Շուշանը գիրկս առած երբ կուգայի՝ տեսա, որ ձեռք մը դիս կը բռներ, «որդի՜ս» կաղաղակեր... Դարձա և տեսա, որ Մարիամն էր. ուժգին կից մը տվի և զայն շնչասպառ գետին փռեցի, որով առանց արգելքի հասա հոս... օ՜ն, ուրիմն ի՞նչ պիտի բաներ... շուտ, վտանգ մը չը պատահի:

ՍՈՒՐՄԱԿ.— *Գիրկս տուր* (Շուշանը մեկ թևին վրա առնելը և դաշույնով մը Տիրանը զարնելը մեկ կրնե). *դու մեռի՛ր, որ ես աղեկ մը խորհիմ ընելիքս։*

ՏԻՐԱՆ.— *Ա՜հ, ապերա՜խտ... ննդալո՜ր...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մատնե՛ զիս հիմա... Հանդարտե՛ սիրտ իմ, ալ մատնիչ չի կա, հանգիստ կյանք վայլե։*

ՏԻՐԱՆ.— *Այս մարդը իր հայրը՝ վահրամ նախարարն*[32] *սպաննեց...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Խե՜ղճ Տիրան, միայն գիշերային լռությունը կը լսե քեզի...*

ՏԻՐԱՆ.— *Ո՛չ... Աստված մը կը լսե...* (կը մեռնի. Սուրմակ՝ Շուշանը գիրկը, երթալու կըլլա)։

ՄԱՐԻԱՄ.— (դրսեն) *Ա՜հ... ո՞վ զարկավ զավակս...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ո՛վ երկինք, ինձն է... մի՛ կթոտիք, ծունկե՛ր, հառաջ գացեք... Եվ դու, վա՛տ սիրտ, ինչո՞ւ կը զարհուրիս կնոջմե մը, դու որ այսչափ եղեռն գործելե չը զարհուրեցար... Հանդարտե՛...*

Տեսիլ ԺԱ

ՆՈՒՅՆՔ և ՄԱՐԻԱՄ

ՄԱՐԻԱՄ.— (հեռարձակ գալով) *Մարդասպա՛ն, ի՞նչ ըրիր զավակս։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մարիա՜մ, բավական է, թո՛ղ զիս, խոչընդոտ մի՛ ըլլար ինձ, ապա թե ոչ կսպաննեմ զքեզ ալ։*

ՄԱՐԻԱՄ.— *Այս ձա՜յնը... այս ձայնը պիտի ճանչեմ ես... Ո՞վ ես դու...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մի՛ հարցներ անունս... Քու հիշատակդ բավա-*

կան հալածանք պիտ, պիշեր ցորեկ ձայնդ ականջես չի դադրեցավ, ալ բավական անիծեցիր պիտ...

ՄԱՐԻԱՄ.— (Ցովը եբթալով և դիտելով) *Սուրմա՜կ...* (ինչ մը առձակելով) *Ա՜հ... մարդասպա՜ն, զարձյա՜լ դու ես... Անիծյա՜լ ըլլաս հավիտյան...* (Ցուսահատ ծունր կիջնե, Սուրմակ Շուշանը գիրկը առած կը հեռանա: Վարագույրը կիջնե):

(ՎԵՐՋ Ա. ԱՐԱՐՎԱԾԻՆ)[33]

ԱՐԱՐՎԱԾ Բ

Աւշալույս.— Պարեսա տանը պատռեզը.— Քարե արձանակներ.— Աջ կողմը Պարեսա տունը:

Տեսիլ Ա

ՊԱՐՍՏ և ԳՈՒՐԳԵՆ (տեսարանը մտնելով)

ՊԱՐՍՏ.— Ի՞նչ է խնդիրդդ, խոսե, ծնրունի՛դ Գուրգեն, պէտեսս որ երբեք քու խնդիրքներդ մերժած չեմ...

ԳՈՒՐԳԵՆ.— Գիտե՞ս ո՛րչափ քաղցր է պատակ մը...

ՊԱՐՍՏ.— Անտարակույս, պատակ մը հոր մը կյանքն է...

ԳՈՒՐԳԵՆ.— Եվ պատկի մը արցո՛ւնքը...

ՊԱՐՍՏ.— Կարծես թե հոր մը մահուան միտք կը փորձես, ինչպես որ ինձ ալ պատահեցաւ... Որպիս այն դիշերվընե ի վեր,յորում դու ճամբուն վրա վիրավորյալ տեսանել ի հոս բերիր, այն դիշերվընե ի վեր միշտ կարտասվի իր սիրուհվույն՝ Շուշանին համար, զոր որր ճանչելով մանկութենե ի վեր իմ տունս կը պահեի: Շիտակը բսելով, ես ալ կուզամ այն անմեղ աղջկանը կորստյանը վրա, զոր զավկի պես կը սիրեի, և քանի մը շաբաթե ետքը դինքը

իմ արդէօք հետ ամուսնացնելու միտք ունի... Բայց, ավա՜ղ...

ԳՈՒՐԳԵՆ.— *Քանի որ պիտես, թե ոչ՝ պատճառ է այս վիշտը, ուրեմն մտիկ ըրէ... Երկար դաշտին մնակս դարձա, աղջիկս դիս տեսնելուն պես դիրկս նետվեցավ: Ես չի նշմարեցի բնաւ, թե իր այտերն արտասուախոտ էին. քիչ առեցին սրտիս վրա թաց ութիւնն մը զգացի. վեր առի աղջկանս գլուխը և տեսա, որ հուշիկ մնջիկ կարտասվեր...«Ի՞նչ ունիս, դուստր իմ»,—քսի առկէմամբ: Իսկ նա... «Թշվառ եմ, Հայրի՛կ»,—պատասխանեց: Այս խոսքը դիս խռովեց, կուրծքիս վրա սեղմեցի յուր անուշիկ գլոմքը և «ասա, ի՞նչ ունիս» հարցուցի... Ինքը «Կը սիրեմ» բառը արտասանեց և արտասուքն իր խոսքն ընդմիջեցին... Վերջապես իր բերնեն առի, թե քու որդիդ՝ Վարդը, կը սիրէ նկեր:*

ՊԱՐԵՏ.— *Իմ որդի՞ս...*

ԳՈՒՐԳԵՆ.— *Այո, «Եվ եթե չը կրնամ իրեն ամուսնեն ըլլալ, Հայրիկ, միշտ թշվա՜ռ պիտի ըլլամ»,—բաւ նա... Ո՜հ, աշխատեցա զինքը համոզելու, բայց չը կրցա իր դիտավորութենեն շրջել. ինչ ընելիքս չեմ գիտեր, միայն կը մտածեմ, որ եթե իմ դուստրս թշվառ ըլլա, ի՞նչ պիտի ընեմ ես... Բոլոր հույսս քու վրադ է, ո՛վ առաքինի Պարետ, դու միայն կրնաս աղջիկս իրեն ապառնացող թշվառութենեն ազատել, թող ես մեռնիմ և աղջիկս երջանիկ ըլլա... Ես միայն աղջկանս համար կապրիմ, աղջկանս ժպիտներուն մեջ է իմ կյանքս... Այս մտքերը, որ մեկ մեկ վշտով ճերմկցեր են՝ փետուրով յուր[2] ոտիցը տակ կը սրեմ՝ եթե առանկով իր[3] երջանկութիւնը առանց*

պիտամ: Ես ամեն վայրկյան մատաղանջության մեջ եմ, որ չըլլա թե դժգույն շրթունքներս աղջկանս շիրմին ցըրտությունն զգան:

ՊԱՐՏՏ.— Մխիթարվե՛, ծերունի՛դ Գուրգեն, մի՛ հուսահատիր այդպես. անշուշտ երկինք ալևոր հոր մը վրա կը գթան և չեն թողուր, որ նա իր անմեղ աղջկան արտասուքը տեսնի... Տե՛ս, ես ի՛նչպես կը համբերեմ իմ միակ որդվույս արտաճմլիկ հառաչանացը, որ իր հայրը թողած՝ գիշեր ցորեկ առանձնության մեջ արտասուք կը թափե... Ա՜հ, անիծյալ ըլլա այն, որ իմ զավակս այսպես թշվառ ըրավ. ահա մեր երկուքին վիճակն ալ միևնույնն է... Հիմա ես որդվույս կառաջարկեմ քու աղջկանդ սերը, և՝ եթե ընդունի, թե դու երջանիկ կըլլաս և թե ես...

ԳՈՒՐԳԵՆ.— Ո՜հ, օրհնյալ ըլլաս, առաքինիդ Պարեհա, որչա՛փ բարեսիրտ ես... Հիմա ժամանակն անցած է. ես դաշտ կերթամ, իրիկունը կը տեսնվինք... Մնաս բարյո՛վ (ձախ կողմեն կը հեռանա):

ՊԱՐՏՏ.— Երթաս բարյո՛վ (խոհեն կը հեռանա):

Տեսիլ Բ

ՎԱՐԴ (առանձին)

Երբ արշալույսը կը ծագի, կը կարծեմ որ Շուշան գիրկս է... և կը խաբվիմ միշտ... Անձկանոք և հուսով՝ առավոտյան սիրո սուրհանդակ զեփյուռին կսպասեմ, որ գուցե Շուշանես ողջույն մը կամ համբույր մը բերե ինձ. իսկ նա լուիկ մնջիկ կը սահի և իր հետքին վրա կարծես թե սուգ կը ծավալե. ուրեմն մեռա՛վ Շուշան, պատաս-

խան ալևը, անտառը և հավիտը, Լոռմնցո՛վ այն բընքուշ ծաղիկը... Դուք կը լսեք և պատասխան չե՛ք տար... ա՜հ, հասկցա, անիծյա՛լ բլլա այն դիշերը... Նորածին լուսին մը բոլորնցավ, ի զո՛ւր սիրտս հուսով կը խայտա դևս... Գուցե ինքը, երկինքն է հիմա, ինձ կսպասե, որ երթամ դրկեմ զինքը. երթամ համբուրել այն շրթունքները[5], որոնք հավիտենական սեր մը մնջնցին... չեմ կրնար դիմանալ ևս[6] այս կարոտովն՝ կենացս օրերը, սրտիս խորերը[8] վիշտ ապավորելով կանցնին. տառապոտյան ցոլի կաթիլները մեկ մեկ արտասուր են աչացս և ծոցկունքս՝ մեկ մեկ տխուր[9] հիշատակներ... Սիրուհի մը հիշատակը միշտ կը տանջե զիս... Միայն շիրիմը պիտի կարենա սիրտս վշտերև արգելուլ (դաչույնը կը հանեն). ուստի Ֆող այս դաշույնը ծակե սիրտս, ալ ի՛նչ մեռնիմ ևս... (ինքզինքը զարնելու կըլլա. Պարեհս վրա կը հասնի և կը բռնե):

Տեսիլ Գ

ՎԱՐԴ և ՊԱՐԵՏ

ՊԱՐԵՏ.— Կեցիր, ի՞նչ կընես, որդյա՛կ, կը մոռնա՞ս քու խղճալի հայրդ, չե՞ս գիտեր ի՞նչ կընես իրեն...

ՎԱՐԴ.—Ա՜հ, Ֆո՛ղ որ մեռնիմ ևս, Տա՛ր իմ, Ֆո՛ղ որ երթամ իմ անձկալիս դրկեմ:

ՊԱՐԵՏ.— Ուրեմն քու ալևոր հորմե՞դ ավելի կը սիրես դինքը:

ՎԱՐԴ.— Ո՛չ, Տա՛ր իմ, բայց առանց իրեն չի պիտի կարենամ ապրիլ ևս:

ՊԱՐԾՏ.— Եվ դու մնռնիս և[10] երջանիկ ըլլաս. ի՞նչ ընե Տայրդ այն առանն մինակ՝ աշխարհիս վրա, գո՞վ իբր սիրելիանք՝ յար[11] գրկացը մեջ սեղմե. միայն գրկե ունի, դու ես իր միակ զավակը. այն առանն որո՞ւն գրկացը մեջ Տանգչեցնե իր ալևոր ճակատը... Տամբերե՛, որդյա՛կ իմ, գուցե գնո կատրի Շուշան, ինևիս օր մը գա գրկե գտնելու... և եթե գրկե մեռած գտնե, այն ալ իշվառ պիտի[12] ըլլա[13]. Տամբերե՛, անշուշտ երկինք օր մը կը լսեն մեր ապաչանացը... բայց, որդյա՛կ իմ, եթե կը սիրես դու Տայրդ, ջնջե՛ սրտեդ Շուշանա հիշատակը և պիտի տեսնես որ դու և ուրիշներն ալ երջանիկ պիտի ըլլան:

ՎԱՐԴ.— Ի՞նչպես...

ՊԱՐԾՏ.— Գուրգինա ապջիկը գրկե կը սիրե և գիշեր ցորեկ քեզի Համար կարտասվե նեկը, դու պիտես ին ինչ գեղեցիկ և պարկեշտ ապջիկ մ'է:

ՎԱՐԴ.— Կը ցնորի՞ս, Տա՛յր իմ, ե՞ս ջնջեմ սրտես Շուշանա հիշատակը և ուրիշ մը սիրե՞մ... Եվ այն առանն Տոմիտանեն ու անոատանեն լեզու պիտի եղնեն և «սիրտդրո՞ւժ» ապտակելով նախատանաց փուշեր պիտի սիտեն ոտիցս ներքև... Այն լուսինը, որ մեր սիրուն վկան եղավ, ամպերու եաև պահվըտած, առելության պիտի անուշանե ինծի դեմ... Ո՜Հ, ո՛չ, չեմ կրնար մոռնալ գինքը և իր սերը... Ինչո՞ւ սրգիլեցիր գիս մեռնելե, Տա՛յր իմ, այս վայրկենին գուցե մեր Տոգիները գիրար կը գգվեին, գուցե Շուշանա գիրկն էի ես Հիմա:

ՊԱՐԾՏ.— Եվ քու Տա՛յրդ... Եվ այն առանն քու ալևոր Տորդ գշատահար սիրար գերեզմանիդ գրատատարտուն քարին վրա

սառիլ սկսեր էր... Ո՜հ, հիմա կը հասկնամ, որ դիս չե՛ս սիրեր եղեր, Վարդ։

ՎԱՐԴ.— Ա՜հ, ո՛չ, կը սիրեմ զրեզ, հա՛յր իմ, ուզե արյունա՝ կյանքս կուտամ, բայց մի ուզեր սիրուս. Ի՛ղ որ այս սիրտը Շուշանա սիրուն համար հալի և մաշի... Չեմ կրնար ուրիշ մը սիրել... Շուշանա ախտուր ձայնը ականջես չը զադրիր, «միշտ սիրե զիս»,— կը մրմնջե... Չե՛մ կրնար, եթե Շուշան կննդանի է, իշխանության բաժակը մատուցանել անոր, իսկ եթե մեռած է՝ դինքը իր գերեզմանին մեջ խոսվել... Եթե ուրիշի մը դիրկն ըլլամ, իր հառաչանքներն ականջիս քովեն պիտի սլանան, քնույս առնն յուր[14] արտասուքը ականջիս քով պիտի մրմնջեն... Իր արտասվաց ամեն մեկ կաթիլը մեկ մեկ խոցեր խայթ պիտի ըլլա սրտիս... Շուշանա շրթունքներուն, ուսկից միայն համբույր կը բխեր, այն առնն անեծք պիտի թափին... Իր աչացը մեջ, ուր միայն ժպիտը կը խաղային, այն առնն առելության շանթեր պիտի փայլատակին... Ո՜հ, ի՞նչպես ուրիշ մը սիրեմ, հա՛յր իմ։

ՊԱՐՏՏ.— Եթե ուրիշ մը չե՛ս սիրեր, ուրեմն զադրի՛ ալ հառաչելե, որպեսզի քու հայրդ ալ զադրի վշտանալե. չե՛մ բռնադատեր զքեզ, որդյա՛կ իմ, որ ուրիշ մը սիրես, այլ կը փափագիմ, որ ալ հուսահատ ու տխուր չի տեսնեմ զքեզ... Եթե արտասվաց կաթիլ մը շողշողե աչացդ մեջ, եթե խղդուկ հառաչանք մը թռչի շրթունքներեդ այսուհետև, դիտցիր որ քու ծերունի հայրդ ալ պիտի սկսի զիրենմանին ատիճաններեր չափել...

ՎԱՐԴ.— (արտասվալից) Ո՜հ, անկարելի է, հա՛յր իմ... Եթե այդպես է, ուրեմն կը խոստում ես այս տնակը և լեռնե լես

կը խափանիմ, որպեսզի դու իմ հուսահատությունս չը տեսնես... կը հեծեմ միայնակ գիրկդ անոցներուն խոր-բերը, ինչվան որ արտասուքս և հառաչանքս դադրին... և սև հողեր ծածկեն իմ գլուխս:

ՊԱՐԾՏ.— Ո՛հ, չէ՛, որդյակ իմ, իմ գիրկս եղի՛ր, իմ գիրկս հեծե՛, ես ալ քեզի հետ պիտի հեծեմ... Դու արտասվոդ թրջե այս ալևոր ճակատը և ես ալ իմ արտասվախառն համբույրներովս ծածկեմ քու քաղցր դեմքդդ... Ո՛հ, մի՛ դառնար իմ գրկես, ա՛հ, երբե՛ք, երբե՛ք, զավակս...

ՎԱՐԴ.— Չէ՛, չէ՛, հա՛յր իմ... Դադրե՛... Ես միշտ քու քովդ պիտի լլլամ...

ՊԱՐԾՏ.— Օրհնյա՛լ լլլաս, իմ սիրուն զավակս... Բայց խոստացիր, որ ես քու քովդ չեղած ժամանակդ ալ չի պիտի լաս:

ՎԱՐԴ.— Կը խոստանամ, հա՛յր իմ, ապահով եղիր...

ՊԱՐԾՏ.— Շատ ապեկ, որդյա՛կ իմ, այդպես քու հայրդ ալ երջանիկ կրնես (ատեր դռնեն ներս կը մտնե). խե՛ղճ Գաւրգին...

Տեսիլ Դ

ՎԱՐԴ (առանձին)

Խե՛ղճ հայրիկ... Որչա՛փ վշտացուցի զինքը... Շուշա՛ն, տես քու սիրույդ համար հորս ցամքած աչքերեն արցունք հոսեցուցի... Ո՛հ, գիտեմ որ դու հորմես քաղցը ես ինծի, երբ հուշիկ մնջիկ գիրկս կը ննչես... երբ «կը սիրեմ զքեզ» խոսքը միշտ ականջիս կը կրկնես...

Շա՜տ քաղցր ես դու, ո՜հ... շա՜տ քաղցր... (ձեռքն երեսը ծածկած աթոռակի մը վրա կը նստի ետևաբար):

Տեսիլ Ե

ՎԱՐԴ (Սուրմակ ալմաստի զգեստով ձախ կողմեն կը մտնե)

ՍՈՒՐՄԱԿ.— Տեսնենք բիչ մ'ալ այս արհեստը ձեռք առնենք, ավազակութիւնը դժվար է և վտանգավոր, իսկ այս արհեստը՝ դյուրին և անվտանգ... Ինչպես Շուշան կը սիրե պես, բայց դարձյալ ոսկիեն չեմ կրնար բաժնվիլ... Քանի մը ժամանակի ի վեր է որ վրաս աւթօրինակ ապահովություն մը տիրած է (վարդը տեսնելով), *կարծեմ վարդն է սա... որչա՜փ թշվառ է... օ՜ն, պաշտոննիս կատարենք. վարդ բավական հարուստ է... Հիմա լալ ձևացնելու և ցավալի դիպված մը հորինելու է. այն ատեն ոչ միայն դիմացինս յարատևուն կը շարժեմ, այլ բանկն ալ կը պարպեմ. ա՜հա երջանիկ արհեստ մը, որով մարդ առանկի տեր կրլլա առանց չարաչար հոգնելու...* (կը մոտենա):

ՎԱՐԴ.— Ինչո՞ւ համար եկեր ես հոս, բարի մարդ, ի՞նչ կը խնդրես...:

ՍՈՒՐՄԱԿ.— (լալ կեղծելով) Եթե դիս ոգեկ մը դիտես՝ կը հասկնաս հոս գալուս պատճառը...

ՎԱՐԴ.— Կարծեմ ապրատ ես և ողորմութիւն խնդրելու եկած ես...

ՍՈՒՐՄԱԿ.— Տե՛ս, ողորմած մարդը, ինչպես կը հասկնա թշվառի մը վիճակը... սիրելի՛ որդյակ, երեք հատ[15] փորթիկ ապրանք առիր առանց մտր, երկու երեք օր կա որ

դժբախտությամբ աչք ինձ կտրեցավ և աշխատությամբ անուն հայթայթելու անկարող եմ, երկու օր կա որ ես անոթի, տպաքս անոթի՝ թշվառության մեջ կը տառապինք... Փաթրիկ խնդճերը բոլորաթիքս ժողված «Հայրի՛կ, անոթի ենք» ըսելով կուգան կողքան... Ո՞ր տար սիրտ կը դիմանա ասանկ ողորմելի տեսարանի մը... Քանի մը անգամ Տուտահատությեննս ինքզինքս սպաննել ուզեցի, բայց տղայոց տպտպա վիճակը նախատեսելով՝ ես կեցա դիտավորությեննս և սկսա տունն տուն ողորմություն խնդրել. շատերը վռնտեցին պես, Տպլիվ քիչ մը սառակ ժողվեցի, և ան ալ տուն տարած տանիս ամպոպակներդ կողոպտեցին... ա՜խ, գոնե դուն, գլուխ գործակ, Տանուն սիրելվույդ ըլլա, մեկ ողորմություն մը շնորհէ և սպասէ ինշվառ ընտանիք մը։

ՎԱՐԴ.— Ես՞կ մարդ, առ սա քսակը և գնա շուտ տպաքդ խնամէ... սա քսակը, որ քեզ կուտամ, իմ բոլոր Տարբությունս է (Քսակ մը կուտա)։

ՍՈՒՐՄԱԿ.— (առնելով) Շնորհակալ եմ տպնի՛վ գործակ... Աստված գրեթե սիրելյացդ գրկեն չի բաժնեսի... Մնաս բարյո՛վ։ (Գացած առեն) *Ես՞կ վարդ, իր սիրուհին Տափրշտակելես գաս քսակն ալ տուր. գործերնիս տղեկ սկսավ... Տեսեննք...* (Երթալու առեն Մարիամ դիմացը կելնե, Սուրմակ գայն տեսնելով կանապարհ և Մարիամ ասկմամբ ճիշ մը արձակելով կը ճվաղի)։

Տեսիլ Զ

ՎԱՐԴ և ՄԱՐԻԱՄ

ՎԱՐԴ.— Ի՞նչ եղավ այս կինը, պիտի ճանչնամ ես դինքը... Մա՛յրս, այո՛, մա՛յրս է... Ի՞նչ խորհրդավոր տեսա-րան... այս մարդը ո՞վ էր արդյոք (զայն գրկելով) մա՛յր իմ... մա՛յր իմ... ի՞նչ եղար հանկարծ... խելքդ գլուխդ բեր, խոսե...

ՄԱՐԻԱՄ.— (սթափելով և զայն դիտելով) Աստվա՛ծ իմ... զո՞վ կը տեսնեմ...

ՎԱՐԴ.— Մի վարանիր, մա՛յր իմ, քու որդիդ՝ Վարդն է դրր-կացդ մեջ։

ՄԱՐԻԱՄ.— Կը խաբես դիս, մինչև չը մեռա՛վ Վարդ այն ան դիշերը։

ՎԱՐԴ.— Ո՛չ, ո՛չ, ապաստյամ Վարդ այն նենդավորին ամած հարվածնեն... Բայց իսի՛վ քե այն դիշերը մեռներ... այլ բան, մա՛յր իմ, ո՞վ էր այն տղբատը... ինչո՞ւ իր[16] տեսքր խռովեց զքեզ։

ՄԱՐԻԱՄ.— (մեկուսի) Ես՛դճ տղա, յուր[17] հակառակորդը չի ճանչեր... (բարձր) Մարդագետ հրեշ մ'է նա, որ այս ողորմելի կերպարանոք...

ՎԱՐԴ.— Հրե՛շ մը... Ճշմարի՞տ կըսես...

ՄԱՐԻԱՄ.— Ինչո՞ւ համար եկած էր հոս...

ՎԱՐԴ.— Եկավ, «խղճալի եմ» ըսելով քառակս առավ գնաց։

ՄԱՐԻԱՄ.— Անօրե՛ն... Մինչև չի վախցա՞ր այս տեղն ալ տար կոխելու, ուր տեսներ կտրտանին քեզի... ո՛հ, այն տե-մեղներուն տեսներ չը վշրեցի՞ն քու գլուխդ, երբ գիրենք իրենց սիրելյաց գլխեն հալշատակեցիր. գերեզմանեն տե-

դամ կը գարշի քեզնե... Մեկ ուրդ քանի մը անմեղներու պիտանց վրա կեցած է և մյուս ուրդ գժոխոց բնությունը կը նայի, և դեռ՝ առանց ապաստիկու երկնից շանթերեն, բրած ոճիրներուդ վրա կյանք կը շնչես, անզգա՞[18]...

ՎԱՐԴ.— Քու խոսքերդ սոսկումն կազդեն ինձ, մա՛յր իմ... ի՞նչ բսել կուզես, չեմ հասկնար...

ՄԱՐԻԱՄ.— Ըսել կուզեմ, որ ես ալ քիչ առնեն այն անօրենին ոտիցը պատվանդան եղող դիակներեն մեկն սիրելյամ... Անօրենն մ՚է նա, նա է որ քու մայրդ գրկեց հափշտակեց, նա է որ քու սիրուհիդ գրկեց հափշտակեց...

ՎԱՐԴ.— Ա՜հ,[19] *Շուշանս հափշտակե՞ց...* (ձախեն վազելով):

ՄԱՐԻԱՄ.— Կեցի՛ր, կեցի՛ր... Ո՜հ, գնաց (ինքզինքին գալով) *արդյոք սառույցի որդի՞ էր որ տեսա, եթե ոչ՝ գիշերամանեն փախած անհանգիստ ամվեր մը, որ սիրուհին կը փնտռե:*

Տեսիլ Ե

ՊԱՐԵՏ և ՄԱՐԻԱՄ

ՄԱՐԻԱՄ.— Վա՜րդ, չըլլա՜ որ ապաննե զինքը, ի՞նչ ըրի ես...

ՊԱՐԵՏ.— Ջավա՜կս ապաննե... ի՞նչ կրսես, կին դու...

ՄԱՐԻԱՄ.— Ջավակս մարդասպանի մը գիրկը կը վազե, ապաստանը:

ՊԱՐԵՏ.— Ի՞նչ պատահեցավ տե՛ր Աստված, բայց ո՞վ ես դու...

ՄԱՐԻԱՄ.— (արտասվալից) Յուր[20] *մայրը...*

ՊԱՐԵՏ.— (զարմացմամբ) Մարիա՜մ...

ՄԱՐԻԱՄ[21]*.— Որ ամուսնույն ծնկացը կը փարի* (վարագույրը կիջնե):

(ՎԵՐՋ Բ ԱՐԱՐՎԱԾԻՆ)[22]

Ա. ՐԱՐՎԱԾ Գ

Ծաղկազարդ հովիտ մը.—Աջ կողմը բլուր մը.—Ետևը լեռներ, որոնց սառուցը ժայռերուն վրայեն ջրվեժ մը կը ցատի:

Տեսիլ Ա.

ՎԱՐԴ (առաջին)

Մինչև ցե՛րբ իմ Հայրենի տնակս Բոպած պիտի Թափառիմ շնչատպաս բևեռ Հասնար, Շուշա՛ն, զքեզ Տափրատակով ամպագին Հանեն, պիտի գտնեմ զքեզ... Ա՛հ, Լեռ չերկինս թռար, ցցուր անգամ մը գոնե քու լուսոտիպ գեմդ ամպերուն Հանեն... Տեսնեմ և մեռնիմ, գամ և զքեզ գտնեմ... Ա՛հ, սե՛ր, սե՛ր, երանի Քե ոչ թու քաղցրութիյունդ և ոչ ալ քու վշաերդ զգայի... Այլ ի՞նչ կրսեմ Հս... Սիրեցի Շուշանը և սիրս Համար են Համրույր, ժպիտ, Հառաչանք և արտասուք... Բայց երբ միտքս կուգան այն օրերն, երբ մենք Շուշանս Հետ իրարու գիրկ՝ իրարու շնչով կապրեինք, Հիմակվան՝ իրմե Հետու անցուցած վայրկյաններս մեկ մեկ փոթորկալից գիշերներ են ատանց արշալույսի... Ո՛վ Հրեշտակդ պիության,

Ոտ՛ր երկնից կամարն և այս արտասուքս քու թևոցդ վրա ժողվելով Ամենակալին տար, ըսե՛ իրեն, թե վայրկյան մը չեմ մոռցած զինքը...

Տեսիլ Բ

ՎԱՐԴ և ԳԵՂԱՄ (ճիճառ, դեղնած[1] և կրոտ կերևի)

ՎԱՐԴ.— (Գեղամը տեսնելով, ոտ ճուռաճառ և համրամայլ կուգա) *Ահա, հուսահատ երիտասարդ մ՛ալ... կարծես թե նա ալ ինձ նման սիրուհին կորսնցուցած է... Նա ալ ինձ նման ինշվառ է... և հառաչելով ուրվական մը դարձեր է։*

ԳԵՂԱՄ.— *Քիչ մ՛ալ խոզ գիս, ո՛վ անոզորմ հիշատակ, ալ բավական գերի եղավ քեզ սիրաս... բայց դու ինձ մոխիկ չես ըներ... Դու գիս չի պիտի խոզուս ինչվան որ աչքերս չը մթագնին... Ո՛վ սեր, մինչև ցե՛րբ օձի պես սրտիս արյունը պիտի ծծես... ե՛րբ պիտի հագենաս... Շուշա՛ն, երանի՛ թե աչքերս զրկեզ տեսած չըլլային քեզ...*

ՎԱՐԴ.— (մեկուսի) *Շուշա՛ն... Ո՛վ երկինք... ի՞նչ անուն էր որ լսեցի օտարականի մը բերնեն (ամոր մոտենալով). այն աղջիկը որուն անունը խոսել հիմա շրմունքներեզ, կը ճանչե՞ս... Տեսա՞ր զինքը, խոսե՛, շուտ խոսե՛...*

ԳԵՂԱՄ.— *Այն աղջի՞կը... Ա՜հ... կը սիրեմ ես զայն։*

ՎԱՐԴ.— *Կը սիրե՞ս... Իսկ ի՞նքը։*

ԳԵՂԱՄ.— *Մերժեց իմ սերս...*

ՎԱՐԴ.— *Ո՜հ... բայց ո՞ւր և ե՞րբ տեսար զինքը...*

ԳԵՂԱՄ.— *Ամիսներ մը ավելի է, որ զիշեր մը անտառի մը եզերքը տեսա զինքը, հոն հայտնեցի իմ սերս և նա մեր-*

ժեց, ուրիշ մը կը սիրեր, վա՛րդը... Միշտ «վարդ» կը ծռեր իր բերնեն։

ՎԱՐԴ.— Ո՜հ, Շուշա՜ն, ես պիտի, որ դու չամենայն սրտե կը սիրես վիս...

ԳԵՂԱՄ.— Ի՞նչ... Ջքեզ կը սիրե՞ միշտ... ուրեմն վա՛րդն ես դու... Բայց ո՞ւր է ինքը... Ա՜հ, շնորհ ըրե, գոնե վերջին անգամ մը տեսնեմ յուր[2] գեմքը, թեպետ նա վիս չը սիրեր... Ո՜հ, վերջին անգամ դեթ... կը տեսնես որ ալ պիտի մեռնիմ...

ՎԱՐԴ.— Եվ դու ալ իմ արցունքներս կը տեսնե՞ս։

ԳԵՂԱՄ.— Ա՜հ... Մեռա՞վ։

ՎԱՐԴ.— Ո՛չ, հոփշտակեցին։

ԳԵՂԱՄ.— Հոփշտակեցի՞ն։

ՎԱՐԴ.— Հիմա ես ալ տեսնել կուզեմ յուր[3] գեմքը, գոնե վայրկյան մը. այլ չի կա՞։

ԳԵՂԱՄ.— Ուրեմն առանց զինքն[4] անգամ[5] մ'ալ տեսնելու, պիտի մեռնի՞մ։

ՎԱՐԴ.— Եվ պիտի անիծե՞ս իմ Շուշանս, որ քու սերդ մեռժեց...

ԳԵՂԱՄ.— Ո՜հ, ո՛չ, զինքն օրհնելով պիտի մեռնիմ... վասընդի դեռ կը սիրեմ զինքը... Պիտի անիծեմ այն օրը՝ յորում զինքը տեսա հովտի մը մեջ, որ առվակի մը եզերքը հանդչած կը դիտեր թե ի՞նքն ավելի անբիծ է[6] նթե[7] առվակը...

ՎԱՐԴ.— Ո՜հ, Շուշա՜ն... Եվ մթե առվակն[8] անբիծ չէ՞ր...

ԳԵՂԱՄ.— Ա՛յո՛... վերջին հարված մը կը պակսեր... Պիտի մեռնի՞մ... (բլրին ետևեն կաճեռնութաձա)։

Տեսիլ Գ

ՎԱՐԴ (առաձնին)

Քունն արտևանացս վրա կը ծանրանա... երևք օր է որ աչքս չեմ գոցած... Ա՜հ, հոս քիչ մը նիրհեմ... գուցե երազիս մեջ տեսնեմ Շուշանս և կարոտս առնում... Շուշա՜ն, մի՛ մոռնար վիս բնավ... (ծառին կրթնած ննջելու կըլլա, իսկույն նեսևյալ երգը կը լսի՝ զոր մտախոհ և ապշած մտիկ կընե):

ՍԻՐԵՐԳ

Ա՜հ, արշալույս բացցրածավալ,
Յողն՝ լիրվիր ցող և ընշույլ,
Տես յանուտիճ[9] նեմմասվեր
Լավիճ բրուշոց բաղցր երգեր:

Աբի, զարթի՛ր, դու, վա՛րդ փուրթվ,
Յանուանս, նովիսս Աւարատյան[10],
Օ՛ն, սիրտ ի սիրտ և րև ի րև
Մինչ նրենը ատյուտ մեմ ման:

Համբույր նազար նողմույն ընդդեմ,
Նվ անդանար սգել[11] զսեր
Ի շուրջն ի սիրտ և ի նոգի
Ոխտել բզսեր նավերժական:

Այս ե՞րգը... այս ձա՞յնը... պիտի հիշեմ ես, կը զգա՜մ... սիրտս կը տրտիհ... Այո՛, Շուշանա ձայնն է... Բայց ո՞ւր եմ ես... երկի՞նքն եմ ևթե ոչ երկրի վրա...

այո՛, այո՛, այն երգն է, զոր արշալույսին անկողնույս քով նստած կերգեր նա... Երկի՛նք և երկի՛ր, պատասխան ունի՛ք ինձ, ո՞ւր է Շուշանա... ուսկի՞ց եկավ յուր ձայնը... Շուշա՛ն, հոս եմ հոս... իսկ դու ո՞ւր ես, գրկիմ գրկե... սեղմեմ ձևրդ սրտիս վրա (ձախ կողմեն շտապավ կը մեկնի):

Տեսիլ Դ

ՊԱՐՏՏ և ՄԱՐԻԱՄ (աջ կողմեն կուգան)

ՊԱՐՏՏ.— Ա՜հ, ո՞րչափ հոգնեցա... Այս ո՞րչափ բակերիներ, ո՞րքան սիրտ դաններ գինքը... արդյոք Վարդ Քոպո՞ւշ գինեց, իմ սիրելի արդյունս, որ իմ միակ հույսս և իմ ծերութիւնս նեցուկն էր...

ՄԱՐԻԱՄ.— Համբերե՛, սիրելի ամուսինս...

ՊԱՐՏՏ.— Համբերե՞մ... Այո՛, համբերեմ... Բայց այս քանի օր է որ իր հայրենի անակը Քոպուշ, հետացավ և իր ուխտ հայրը հուսահատության մեջ ձգեց... Որովհետև այս բաժանումը կենացս վերջերին էր, որ պայքեցավ և կարծեմ միայն մահվան առջև պիտի խաղաղի... Այս խոսքը միշտ սիրտ կրկնեմ. որովհետև մը հորը մահվան վրա քանի մը արցունք կը թափե, իսկ հայր մը որ որովհետև կենացը ամեն մեկ վայրկյանին մեն մի արցունք կը նվիրե... Ո՜հ, չը գիտեն որդիք հոր արժեքը... վա՛րդ, վա՛րդ, որչափ տպերախտ գտնվեցար քու ծերունի հորդ, որ ամեն մեկ վայրկյան քու երջանկութեանդ համար կը մտատանջեր, և դու սիրտ մը համար մոռցար գինը...

ՄԱՐԻԱՄ.— Սիրելի՛ ամուսինս, դու չը գիտե՞ս թե սերը որչափ ազդեցություն ունի 17 տարեկան երիտասարդի մը սրտին վրա, յորում դեռ նոր կը փթթին սիրո առաջին ծագիկները և որուն առջև շատ անգամ կը նվազի հայրական սերը, այսուամենայնիվ շատ[12] անգամ[13] հոր մը կաթիլ մը արտասուքը կարող է մարել այն սերը... համբերեմ, անշուշտ կը գտնենք գինքը և անակնկիս կը դառնանք խաղաղ կյանք[14] վարելու համար. (մեկուսի) իսկ իմ որդիս Գեղամս... Առանց անոր՝ ես չի պիտի կարենամ երջանիկ ըլլալ։

ՊԱՐՏՏ.— Այո՛, համբերեմ... Բայց եթե չը գտնենք երբեք գինքը, ի՞նչ պիտի ընեմ ես... Ո՜հ, արդյոք հուսահատութենեն ինքզինքն ապանանե՞ց... Սոսկալի կասկած... Արդյոք ո՞ր գետը քշեց տարավ իր ցուրտ դիակը, ո՞ր վայրն արդյոք իր արյամբը կարմրեցավ. վա՜րդ, վա՜րդ, արդյոք մահվան շունչը խամրեցո՞ւց գքնե, ինչպես ձրմռան հողմը վարդը կը խամրեցնե... Ո՜հ, մեկը չի գար ծնրունի հոր մը ավետելու թե՝ «Քու որդիդ կենդանի է և պիտի գտնես գինքը...» Կարծես թե բնությունը հուշիկ մնջիկ որովայս[15] վրա կը ապա... (ձախ կողմեն ճայնով) ի՞նչ կը տեսնես... Ահա մեկը անտառեն խորը կը թափառի... արդյոք վա՜րդո[16] է... Ո՜հ, ի՞նչ ուրախություն, եթե գինքն ըլլա (կերթա)։

ՄԱՐԻԱՄ.— Գնա՛, գնա՛, կարելի է որ գինքն ըլլա։

Տեսիլ Ե

ՄԱՐԻԱՄ (առանձին)

Բայց իմ Դեղամս ո՞վ պիտի դարձնեմ իմ պիրկս... Թեպետ ինքն ուխտապանցության մը կամ ճգիրի մը հիշատակն է, սակայն կը սիրեմ զինքը. երկու զավակներս ալ կորուսի. մին պոռնկով՝ դուցե մյուսին հիշատակը մոռնայի... Բայց պիրկս երկուքեն ալ զուրկ է... խե՞ղճ ամուսինս, ո՞րչափ թշվառ է... արդյոք հիրավի վա՞րդն էր տեսածը (ձախեն կերթա[17]):

Տեսիլ Զ

ԴԵՂԱՄ (աչքերովը մեկը փնտռելով)

Գացեր է... Պիտի մեռնիմ... ահա մահը ճիրաններըբացած՝ կսպասե որ երթամ գրկեմ զինքը... Այս ծաղկանց տակ թող թաղվին հույսս և սերս... Ի՞նչ եղա ես, ողբաձայն թել մը դարձա... Աննեւուլթ ձեռք մը գերեզմանս մը կը ցուցնե ինձ անդադար, զոր սերն իր արյունվա մագիլներովը ոտքերուս տակ փորից. Հո՞ն պիտի իջնեմ ես, Շուշա՜ն, վառնդի չափազանց սիրեցի գրեզ... Գերեզմա՛ն, թող հատակդ խոր ըլլա, որպեզի զիշերվան լռության մեջ աշխարհիս երեսեն ալացող սիրո խոսքերուն և համբույրներուն մրմունջը չըլլա որ գերեզմանիս թափանցե և իմ վշտահար սուվերս յուր[18] խոր քունեն արթնցնելով՝ աչքերեն արցունքի սառած կաթիլներ հոսեցնե... Ո՞վ սեր, դահի՛ճ երիտասարդաց, դու սրեցիր տապարդ... Մնաք բարյո՜վ, անուտոր և հովիտք

և ամենայն զրոսավայրը մանկութեանս... Մնաս բարյա՜վ, մա՛յր իմ, այսուհետև ինծի համար թափած արցունքներդ զովութիւնս վրա ժողվե... Կարոտութիւն չի մնաց վրաս, ոտքերս կը դեղեին (ինչ ինչ կը ակարացնա և վերջապես կիյնա) Ա՜հ, Շուշա՜ն... Մա՜յր իմ...

Տեսիլ Է

ՆՈՒՅՆ և ՄԱՐԻԱՄ (մտնելով)

ՄԱՐԻԱՄ.— Ի՞նչ ձայն է որ լսեցի... մեկը «Մայր իմ» կաղապակեր (կը տեսնե Գեղամը, ոտը կը մոտենա, աղեկ մը կը դիտե և ետ մը կաբձկե) ո՜հ, Գեղա՜մ։

ԳԵՂԱՄ.— Մա՜յր իմ... դո՜ւ ես...

ՄԱՐԻԱՄ.— Ե՛լ, ե՛լ, մայրդ գրկե, զավակս...

ԳԵՂԱՄ.— Ո՜հ, չեմ կրնար։

ՄԱՐԻԱՄ.— Ի՞նչ նիհար և գալկահար դեմք... ի՞նչ կիծոտ ծոմկեր... Բայց ի՞նչ եղար, զավա՜կս։

ԳԵՂԱՄ.— Սիրեցի աղջիկ մը և նա մերժեց սիրս։

ՄԱՐԻԱՄ.— Դարձյալ սեր...

ԳԵՂԱՄ.— Ես ալ ինքզինքս լեռները նետեցի, բան մը չէի ուզեր ճաշակել, շունչ մը չէի ուզեր շնչել... Իզո՜ւր ուզեցի զինքը մոռնալ, քեզ մոռցա, մա՜յր իմ, զինքը չը կրցա մոռնալ... Իր հիշատակը գահճի մը պես կը հալածեր զիս... սրտես գունդագունդ հառաչանքներ հանել կուտար, զիս ուժն կը ձգեր... մայր իմ... այնպես որ հիմա մորս վերջին մնաս բարով մը ըսելու անգամ կարողութիւն չի մնաց վրաս։

ՄԱՐԻԱՄ.— Որդյա՛կ իմ, պիտի զրկվիմ քեզնե, չի պիտի կարենամ խորտակել այն դռները, որոնք պիս քեզնե պիտի բաժնեն... որոնք որպի մը արտասվալից մոր մը զբրկեն պիտի զաւակն:

ԳԵՂԱՄ.— Մի՛ այդպես իրչեր այրած[19] արտասվօդ[20] սիրտս, մա՛յր իմ, որոնք սրտիս կրակը փոխանակ մարելու, ավելի կը բորբոքեն... Գոնե ըսէ որ կենացս վերջին վայրկյաններուս քու մայրական ծոցդ ինծի արցունքներուս վերջին մնացորդը, որոնք չեն նմանիր մանկութեանս առեն ինծի արտասվացս, որ մարդարի պես կը սահեին այտերուս վրայեն... իսկ այս կաթիլ, կաթիլ վազածը սրտիս արյունն է, որ աչքերես դուրս կը ժայթքի, վասնզի ալ[21] արցունքս ցամքեցավ:

ՄԱՐԻԱՄ.— Ո՜հ, ա՛յս է կյանք բսվածը... ա՛յս է զավակ ունենալը... Մայր մը զավակ մը ունենալու համար՝ պետք է որ անհուն սիրտ մը ունենա... ա՜հ, որդյակ իմ, արև մ'էիր դու երկնքին երեսը, և եթե դու աներեւութանաս կենաց հորիզոնեն, սև գիշեր մը պիտի պատե դիս...

ԳԵՂԱՄ.— Ուրեմն ինչո՞ւ ծնար դիս, եթե դու և ես այսպես շուտ պիտի բաժնվինք[22]:

ՄԱՐԻԱՄ.— Կը տեսնես, որ սերը կապառե[23] քեզ:

ԳԵՂԱՄ.— Ո՜հ, սերն առաջին անգամ ինծի սիրուն հրեշտակ մը երեցավ, ես ալ յուր[24] զմայլելի տեսքեն հրապուրված՝ զրկեցի զինքը... Բայց հետս տեսա, որ ալ նույն հրապույրը չուներ... Տեսա, որ[25] սերը զահիճ մ'է եղեր, որ տապար ի ձեռին դիս կը հալածեր կատաղաբար... Վերջապես հասավ ինձ... հարվածեց և դիս գետին տարածեց... Բայց, օրհնյալ ըլլա երկինք, իմ եղիտատարդ մր

յուր սիրելյալ մորը աւետիւնն չի պրկեց.... Ուրեմն վերջին անգամ մալ սրտիդ վրա պրկի պիս, մա՛յր իմ։

ՄԱՐԻԱՄ.— Ա՜հ, կը ծոզո՛ւս մայրդ, սրդյա՛կ իմ...

ԳԵՂԱՄ.— Աչքերս կը մթագնին... մահվան սավերը դիմացս կեցած ինձ կսպասե... Մնա՛ս բարյավ, մա՛յր իմ... (կը մեռնի)։

ՄԱՐԻԱՄ.— Օգնությո՛ւն, օգնությո՛ւն, զավակս կը մեռնի... Ա՜հ, մեռավ... դիակնացա՛վ... ա՜հ, ալ կենդանի չէ իմ Գեղամս... Իմ կյանքս ալ նորա գերեզմանին վրա արտասավելով պիտի սահի։

Տեսիլ Ը

ՄԱՐԻԱՄ և ՊԱՐԵՏ

ՊԱՐԵՏ.— (ճուտաճյաո երեսով) *Ի զո՞ւր... ինքը չէր...*

ՄԱՐԻԱՄ.— (Պատեաո տեսնելով) *Ա՜հ...*

ՊԱՐԵՏ.— *Ո՞վ է այդ... վարդը չէ՞...* (մոտենալով)։

ՄԱՐԻԱՄ.— *Ջավա՜կս է...* (վարագույրը կիջնի)։

(ՎԵՐՋ Գ ԱՐԱՐՎԱԾԻՆ)[26]

ԱՐԱՐՎԱԾ Դ

Կամարակապ մութ ճարայր մը.—Ճարը խոռոչ մը.—Կամարի մը կախված կաճրնեղ մը կը պլպլա:

Տեսիլ Ա

ՍՈՒՐՄԱԿ (ճատարաճի մը վրա կը մտափն). *ՇՈՒՇԱՆ* (խոռոչին մեջ կը ճնաճա)

ՍՈՒՐՄԱԿ.— (խռոված կարծնճա, շուրս կռմմր կը ճայի, խոռոչը կը դիտե և կը ճաճղատրի) *Դեռ ապատ և երջանիկ եմ, դեռ Շուշան ձեռքս է... Ա՜հ, ի՞նչ սոսկալի երազ էր որ տեսա... սիրտս զարհուրած՝ դեռ կը բարախե, դեռ բոլորովին դողի մեջ եմ, ինչո՞ւ համար հանդարտ չեմ կրնար սիրել... Անգո՛ւթ երկինք, ինչո՞ւ համար հանգիստս խլեցիք սրտես... Գիշերները՝ մեկ մեկ սևազգեստ դահիճներ են, որ գլխուս վերևեն կանցնին առանց ինձ սպաննելու՝ սպառնալից նայվածք մը միայն ուղղելով ինձ, որ մեջ հայելվո պես անցելույն հիշատակները կը նշմարեմ... Ցերեկներն ալ հանգիստ չեմ, վասնզի ալեւոր հորս տավերն՝ իր պարզ ձեռքը կուրծքիս վրա դրած սիրտս կը ճնշե... միշտ այն սոսկալի գիշերը միտքս կու-*

դա, այն սև դիշերը[2] յորում դողդոջելով անկողնես ելա, զարհուրած չորս կողմս նայեցա, հետս երկինք վերուցի աչքերս և տեսա որ լուսինը խաժռռադեմ դիս կը դիտեր... Արձանի մը պես պաղած մնացի, հառաչ զսպի և վարանեցա, միտքս բերի սիրուհիս և քաջալերվեցա, վասնզի կը հուսայի[3] հետը ազատ ապրիլ և ձեռացս մեջեն ոսկվո հեղնվներ թափել... Հորս սենեկին դռան սեմին վրա հաստած էի... ներս մտա... անկողնույն քով ծունր եկա... խղդուկ հառաչանք մը ալացավ սրտես... պաղ քրտինք մը հոսեց մարմնես... ամեն բան լմնցեր էր... խեղդամահ ըրի հայր մը, որ իմ ամոթալից գործքերուս խաչընդոտն կըլլար... Դեռ իր վերջին նայվածքը աչացս առջևն է։

ՇՈՒՇԱՆ.— (բանդագուշելով) Որչա՞փ կը սիրեմ զքեզ...

ՍՈՒՐՄԱԿ.— Այս անուշ ձայնը առածիս պես կը զվարթնամ... Երբ Շուշանա գիրկն եմ, ամեն բան կը հանդարտի... Քանի մը անգամ բռնադատեցի զինքը, բայց երբ օգնությո՞ւն պռռաց, ես կնցա դիտավորութենեն՝ վախնալով որ չըլլա թե հորս ուրվականը իր[4] դերեզմանեն դուրս ելնե անոր օգնելու համար... Բայց վերջապես... օր մը այսպես քնոմեջ էր... մարած էր... վայրենի փափագս լցավ... այնուհետև առնց զիս և արտասվեց... Բայց հիմա զիս կը սիրե և վրաս կը գուրգուրա... Որչա՞փ ալ սիրուն է... Կարծես թե հրեշտակ մ'է, որ սիրո համար երկինքը թողուվ՝ աշխարհք եկած է։

ՇՈՒՇԱՆ.— (նայվածքս) Ե՞ս սիրեմ Սուրմակը, այն անօրենը. երբե՛ք... Կատեմ ես զայն, սիրել կը կեղծեմ, որպեսզի

վրաս վատաՀելով այս խավարչային բարայրեն Հանի պիս...

ՍՈՒՐՄԱԿ.— Թշվառակա՜ն, մատնվեցա՜ր... ուրեմն բո՛ ժպիտներդ խաբեպատիր են... Այդ խոստովանությունը շատ սուղի նստավ բեզի...

ՇՈՒՇԱՆ.— (կարթնա, կը տխրի, հետո սրտիեվ՝ Սուրմակա կը մոտենա) Դեռ պիշի՞ր է, Սուրմակ... Բայց կարծեմ արշալույսը կը ծագի, վատնդի թռչուններուն ձայնն է, որ Հնուեն կառնում: Դու ըսիր, որ այսօր պիտի տեսնեմ արեգական ծագումը, չորմն բավական առնեմ ի վեր գալեկ եմ... Որչա՞փ բարեհիրա ես, Սուրմակ, և որչա՞փ կը սիրեմ զքեզ:

ՍՈՒՐՄԱԿ.— Բո՛ղ պիս, նեղսավո՛ր շողոքորթ, դու կը խաբես պիս, կը Հասկնամ. այդ աչացդ մեջ փայլող ժպիտներն առելությանդ շանթերն են, սպեր՜խաս, ես կը սիրեմ զքեզ, և դու այդ սերն արհամարհանաց ժպիտներով կը շողոքորթիս...

ՇՈՒՇԱՆ.— Ի՞նչ կրտես, Սուրմա՛կ, կը ցնորի՞ս թէ կատակ կրնես... (մեկուսի) Աստվա՜ծ իմ... Չեմ Հասկնար, ի՞նչ եղած է արդյոք...

ՍՈՒՐՄԱԿ.— Ո՛չ, ո՛չ, բաւծս պիտեմ և կը լսեմ այդ Հատուչանքները, որոնք լուսյան մեջ կը սահին, կը տեսնեմ ես այդ արցունքները, որոնք խավարին մեջ կը Հոսին. վերջապես սրտիդ Հատումնքները՝ դեղնած դեմքիդ վրա Հայելվո մը պես կը տեսնեմ... Ուրեմն մի՛ Հուսար, որ այսուհետև դու կեղծ սիրովդ պատրես պիս:

ՇՈՒՇԱՆ.— Կը մեղանչես դու, Սուրմա՛կ, կը մեղանչես իմ

սիրույս վրա այսպես կասկածելով. պիտի՞ ա որ այդ խոսքերը սիրաս նեամ պես կը խոցեն...

ՍՈՒՐՄԱԿ.— Ցավ, այդպես է, երդվի՛ր որ ճշմարիտ սիրով կը սիրես պիս... Դու լո՞ւռ կը կենաս... Այս խոսքը քեզ սոսկումն կը պատճառե, ուրեմն դեռ չնչի՛ այս խավարը, արտասվարդ թրջի՛ այս բարերը և հառաչանքներով բնությո՛ւր այս կամարները... Ոչ ոք պիտի լսե քեզ և պիտի պիա. միայն Սուրմակ կա հոս...

ՇՈՒՇԱՆ.— Ա՜հ, չարաչար կը տանջես պիս... Սուրմա՛կ, ո՛վ իշխանուհյուն տվավ քեզի մատաղ սիրտ մը այսպես խոցելու... Ո՜հ, մինչդեռ նոր սկսած էի սիրտ պարանեկեն ծոպկունք բացել և անոնցմով փունջ մը[6] կապել, դու այն փունջը հափշտակեցիր իմ ձեռքես և անոր փոխարեն փշոտ փունջ մը դրիր ձեռացս մեջ... Մինչդեռ նոր սկսած էի կապուտագեղ և ատեղազարդ կամարի մը տակ սիրել և ժպտիլ, դու վիհ մը բացիր առջես և պիս հոն քաշկրտանցիր, և հիմա խավարամած կամարի մը տակ կը ձեծեմ... Այո՛, կատեմ զքեզ, Սուրմա՛կ... Ըո՛ղ այս խավար լուսթյան մեջ լսիկ մնջիկ սահին արտասուրս, ըոզ մեկը չի պիա իմ վրաս:

ՍՈՒՐՄԱԿ.— Մի՛ այդ խոսքերը, Շուշա՛ն, սիրե՛ պիս և երջանիկ եղի՛ր, պիտցիր որ երբ սիրտ անկեղծ ժպիտ մը ծագի այտերուդ վրա, այս խավարչային բարայրն ալ պիտի լուսավորվի, այն ժպիտը արև մը պիտի ըլլա ինծի և բեզի համար... Երբ պիս սիրես, այս բարայրը դրախտ մը պիտի ըլլա... Երբ ժպտիս, այս սև կամարները՝ պիտի ոսկեզօծին... Երբ աչքեդ ուրախության կայլակներ հոսեն, յուրաքանչյուրն իրեն ծոպիկ պիտի փիլի

Հոս, իսկ երբ շրթունքներդ համբույր տան, անոնց մըրմունջն իբրև քնարի քաղցրաձայն նվագներ պիտի զբոսցնեն զմեզ. ուրեմն ասկե ավելի ի՞նչ բանի կը փափագիս...

ՇՈՒՇԱՆ.— Բանի մը միայն, զոր պետք չէ պիտնաս դու...

ՍՈՒՐՄԱԿ.— Բայց երբ դու ճշմարտիվ սիրես պիս, ես ոչ եթե[8] յուր[9] գերազմանը այլ զինքն իսկ կը ցուցնեմ քեզի...

ՇՈՒՇԱՆ.— Վարդս կենդանի ըլլա՞... Ո՛չ, անկարելի է այդ, մեզ դու չսպաննեցի՞ր զինքը... անդա՛ռ, միշտ կը տանջես զիս, միշտ սրտիս խորը թաղված սիրուր հիշատակները կարթնցնես... Դու կը խաբես զիս, կենդանի է կըսես, որպեսզի զքեզ յուր սպաննիչը չի կարծեմ...

ՍՈՒՐՄԱԿ.— Կերդնում, որ եթե զիս սիրես, պիտի տեսնես զինքը...

ՇՈՒՇԱՆ.— Ո՛չ, չե՛մ հավատար քու երդմանդ... եթե իսկ[10] զինքը տեսնեմ[11], պիտի ըսեմ, թե խաբեպատիր երազ մ'է կամ յուր սովերն է (ինսպիրատ՝ դեմքը ձեռքը ծածկելով կիրթա, կը ճտա):

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Պետք է որ մինակ թողում զինքը, որպեսզի հուսահատությեան և երկյուղի մեջ զարձյալ զրկե զիս և[12] երթամ քիչ մը ուտելիք բերելու:

Տեսիլ Բ

ՇՈՒՇԱՆ (առանձին)

Գացեր է... Զարձյալ առանձին մնացի խավարի և լռության մեջ... Շատ աշխատեցա այս սոսկալի տեղին փախչելու, այլ չի կրցա երբ մը դառնալ... Իսո՞ւր ասդին

անդին գացի, գլուխս միշտ կամարներու զարկի, բայց Հուսահատութենես ու[13] վախես նո կեցա... Ա՜հ, որչա՜փ ինչուան եմ, եթե գիտայիր, վա՛րդ, որ կաթիլ կաթիլ արատասուք կը հոսեն սիրտ քնարիս թելերուն վրայեն, որ երբեմն զմարթ եղանակներ կը նվագեր. քանի որ այս խավարին մեջ եմ, հուսա նշույլ մը չեմ նշմարեր. ուրեմն ինչո՞ւ ապրիմ ես. մահն արագաթռիչ թևեր պիտի տա ինձ և անոնցմով յերկինս պիտի սլանամ... Հոն պիտի փրնտռեմ վարդս և պիտի գտնեմ գինքը դրախտին մեջ, որ ծագկանց վրա հանգչած՝ ինձ համար կարտասվի, պիտի սրբեմ յուր[14] արցունքը և հավիտյան պիտի սիրենք գիրար, վասնզի հոն ինչնամի չիկա... Պիտի հեռանամ այս դժոխային բնակարաններ՝ արհամարհելով այս քարերը, որոնք իմ արցունքս ծծեցին, արհամարհելով այս կամարները, որոնք հուսահատ հառաչելու առենս իրենց սաված արձագանգովը կարծես ինձ վրաս կը խնդային... (ոտքը դաշույնի մը զարնվի) Ի՞նչ է այս (առնելով)[15] ո՜հ, այո՛ գործիքս ալ գտա. հեռացի՛ր մտքես, երջանկության հիշատակներ, հեռացի՛ր աչացս առջևեն, բնության հրաշալեաց տեսիլներ, իսո՞ւր կը հրապուրիք դիս, երկիրս միշտ վարդ մ՚է, իսկ երկինքն անփուշ վարդ մը...[16] ոտքի ձայն մը կա... Ինքն է... Ո՜հ, չը տեսնեմ մեկ մ՚ալ յուր[17] դժոխային դեմքը (դաշույնով ինքզինքը կը զարնե):

Տեսիլ Գ

ՎԱՐԴ և ՇՈՒՇԱՆ

ՎԱՐԴ.— (խարխափյալ գալով) *Այս խավարը և լռութիւնը սոսկալի է... Շուշա՛ն... Շուշա՛ն... Ո՛ւր ես...*

ՇՈՒՇԱՆ.— *Աստվա՛ծ իմ... Այս ձայնը... Կը ցնորի՛մ... Կը քայե՞մ արդյոք...*

ՎԱՐԴ.— *Շուշա՛ն, ձայն տո՛ւր ինձ, վարդն եմ ես:*

ՇՈՒՇԱՆ.— *Երկի՛նք, պիտի խենթենա՞մ հիմա... Բայց դարձյալ կը խաբվիմ, մեռած է նա...*

ՎԱՐԴ.— *Շուշա՛ն...* (մոտենալով) *Ո՛ւր ես... Ա՞խ*[18] (կը գրկե):

ՇՈՒՇԱՆ.— (զայն դիտելով) *Ո՞չ, ճշմարտիվ դո՛ւ ես իմ դիրկըս:*

ՎԱՐԴ.— *Միթե չե՞ս ճանչեր զիս... Մոռցա՞ր զիս... Շուշա՛ն...*

ՇՈՒՇԱՆ.— *Ո՛չ, ո՛չ, մոռցա երկինից և վարդին գույնը. այլ քու դեմքդ չեմ մոռցած... բայց այս խաբեպատիր երազ մ'է, վասնզի վարդո*[19] *ապանեմեցավ:*

ՎԱՐԴ.— *Հանդարտե՛, Շուշա՛ն, դեռ ես կյանք կը շնչեմ. ապաւեցա Սուրմակա հարվածնն... Բայց երթա՛նք, Շուշա՛ն, հեռանանք այս սոսկալի տեղեն:*

ՇՈՒՇԱՆ.— *Բայց ի՞նչպես մտար հոս... ի՞նչպես գիտցար թե ես հոս էի...*

ՎԱՐԴ.— *Քանի մը օր առաջ*[20]*, երբ արտասահմանաշ այս անմատչելի լեռները կը թափառեի, հանկարծ երգի մը ձայն առի, և նայեցա որ այն ձայնը բուկզ էր. խեղճի պես ասդին անդին վազեցի և իզուր փնտռեցի. սրտիս*

ցավը կրկնապատկեցավ. վերջապես նախախնամությանն օգնությամբն այս քարայրին բերանը գտա երկ. ականջ դրի, լսեցի խորունկին Սուրմակա և քու ձայնդ, ուրախությամբ քարայրես հետս մացառներու մեջ պատվեցա[21] *ապասելով որ Սուրմակա քարայրին ելած առնն ներս մտնեմ, բայց չելավ... Գիշերը հոն անցուցի, արշալուսնին կանուխ ելա և աշխարջ հսկեցի, տեսա որ Սուրմակ դուրս կելներ, ուզեցի վրան հարձակիլ. բայց նշմարելով որ պինյալ էր, չը համարձակեցա, վախնալով որ երկրորդ անգամուն գուցե սպաննելի*[22] *և գրկել չը կարենայի ազատել. ուստի թող ալի որ բավական հեռանար, շատ զժվարությամբ հոս մտա և ահա քու քովդ եմ... Բայց ինչո՞ւ չես աճապարեր, երթա՛նք, բայց այս ի՞նչ խոնավություն է... Այս ի՞նչ դաշույն է... (սոսկման ճիչ մը կարձակե) Աստվա՜ծ իմ... կը զարհուրեցնես զիս, Շուշա՛ն... տեսկյա՜նք, ո՜հ, բան, ի՞նչ կա, ի՞նչ եղար... Կը խենթենամ... Կը սարսափիմ... Ա՜հ, արյուն կը վազե սրտեդ... ի՞նչ ըրիր, Շուշան, օգնությո՜ւն, օգնությո՜ւն...:*

ՇՈՒՇԱՆ.— Ամեն ճիգ ընդունա՜յն է, վա՛րդ, հարվածը սրտեդ վրա է...

ՎԱՐԴ.— Ա՜հ, գոնե այդ դաշույնը տուր, որ ես ալ քեզի հետ մեռնիմ...

ՇՈՒՇԱՆ.— Ո՛չ, ո՛չ, դու պիտի ապրի՜ս...

ՎԱՐԴ. —Եվ ինչո՞ւ համար...

ՇՈՒՇԱՆ.— Վրեժս լուծելու համա՜ր...

ՎԱՐԴ.— Մինն Սուրմակ... այն[23] *հրեշը...*

ՇՈՒՇԱՆ.— Նոյնպիսյամբ հափշտակից ինձնի գանձ մը, զոր միշտ քեզի կը պատահի...

ՎԱՐԴ.— Ի՞նչ կը խոսիս, Շուշա՛ն, մինչ դիս ողջ ողջ[24] գերեզմա՛ն դնել կուզես... Այդ խոսքը մահվանե ավելի սարսափեցույց... սառնցույց դիս...

ՇՈՒՇԱՆ.— Նվ ահա ասոր համար մեռնիլ ուզեցի, վասնզի գիտեի որ քու սիրույդ արժանի չը պիտի ըլլայի, գիտեի որ դիս այսպես պիտի նախատես... Բայց եթե գիտեիր, Վա՛րդ, որչափ ցավ քաշեցի քեզնե հեռու. առանց արևու նշույլ մը տեսնելու, առանց անուշիկ զեփյուռ մը շնչելու... Ուրեմն կատե՞ս դիս, Վա՛րդ, չե՞ս գթար... չե՞ս ներեր ինձ...

ՎԱՐԴ.— Ո՛չ, ո՛չ, չեմ կրնար տալ զքեզ, Շուշա՛ն. այլ միայն կանխեցեմ այդ[25] անձը, որ զքեզ և դիս ըշվառ ըրավ... Ա՜հ, եթե դու մեռնիս, ի՞նչ պիտի ընեմ ես մինակ աշխարհիս վրա... Ես ալ կուզեմ մեռնիլ...

ՇՈՒՇԱՆ.— Չէ՛, չէ՛, Վա՛րդ, դու ինչվան մահդ լերանց վրա մինավոր[26] պիտի ապրիս քու և իմ հոգվույս համար... սրպհազի յերկինս երկուքս ալ երջանիկ ըլլանք հավիտյան... Բնավ մի՛ լար ինծի համար... այլ գիտցիր, որ երբ յերկինս ծուխինք, երկինքի հրեշտակք իրենց փափկիկ թևերովը պիտի սրբեն մեր արցունքը, հոն միշտ պիտի ժպտինք և պիտի հարցնենք իրարու, թե ի՞նչ է արտասուքը... Ծաղկանց մեջ պիտի ննջենք հանգիստ, զի հոն չիկա մեկը, որ մեր մեջ սուր նետե:

ՎԱՐԴ.— Բայց կենացս օրերն առանց քեզի իրրև մեն մի արցունք պիտի սահին. դու յերկինս երջանիկ պիտի ըլլաս. իսկ ես երկրի վրա՝ ըշվա՜ռ... միշտ ըշվա՜ռ:

ՇՈՒՇԱՆ.— Ես պիտի աղօթեմ Հանապազ Ամենակալին աթոռին առջև ծունր դրած, որ զքեզ շատով իմ դիրկս դարձնեն, միշտ պիտի նրաղիդ մեջ դամ զքեզ մխիթարելու, և դրախտին ծաղիկներովը արցունքդ սրբելով՝ այն արտասուաթորմ փունջն Ամենակալին պիտի ներկայացնեմ...

ՎԱՐԴ.— Բայց այն քաղցրիկ նրազդդ արթնութիւնը խիստ դառն պիտի ըլլա ինձ. ուրիմն ես ալ միշտ ննջեմ, որ անդադար զքեզ նրաղեմ...

ՇՈՒՇԱՆ.— Ինչպես պիտի դաւվիմ քեզնե[27], վա՛րդ, ահաւասիկ կենացս հետին վայրկյանը կը մոտենա. այս արտասուոտ և բաթախուն սիրտը վերջին անգամ սեղմե՛ կուրծքիդ վրա, վասնզի քիչ առենն պիտի սառի նա, մոռնցար ճակատդ շրթանցս, որոնք քիչ առենն պիտի թառամին... վերջին համբույր մը, սիրելի վարդս. վայրկյան մը անգամ դիս մտքեդ մի՛ հաներ, եթե ոչ այն վայրկյանը ինձ համար սխրութեան պիշեր մը պիտի ըլլա. միշտ քու դիրկդ երևակայե դիս, շրթունք շրթունքի, աչք աչքի, ինչպես երբեմն կը ննջեինք միասին... մի՛ թողուր դիս... վա՛րդ, դեռ զրկե դիս... Մնա՛ս բարյավ... (կ՚մեռնի):

ՎԱՐԴ.— Ա՜հ... Մեռա՞ր, Շուշա՛ն... վերջապե՞ս թառամեցար, ո՛վ սիրուն ծաղիկ... աչքերդ գոցեցիր հավիտյան... Ո՜հ, վերջին անգամ մ՚ալ բա՛ց աչքդ, վերջին անգամ մ՚ալ[28] տեսնեմ դեմքդ քու սևորակ աչքերուդ մեջ... Իպո՛ւր կաղաղակեմ. այսուհետև չը կա այն նաղելի Շուշանը, այլ անդգա և ցուրտ դիակ մը, որուն շրթանց համբույրները մահը ջնջեց պաղ ձեռք... Կը հուսահատեցնես

«Վաղը և Շուշան» ներկայացման բառերազրը:

պիս, պիակդ Շուշանա... Սիրտս ալ չզգար այն արիութիյունը, որով քիչ մը առաջ սիրտս կը խայտար... կարծես թե մահվանս ցուրտ ստվերն իմ վրաս ալ կը տարածվի... Ոտքի ձայն կա, ո՞վ են[29] արդյոք...

ՀՈՎԻՒ.— (դրսեն) Այո, այս քարայրն է, իրեն հոս մտնելը ես աչքովս տեսա... ես կը ճանչնամ[30] վարպը...

ՎԱՐԴ.— Ո՞վ կը փնտռեն պիս...

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ, ՊԱՐԵՏ, ՄԱՐԻԱՄ, ՀՈՎԻՒ ՄԸ (ջաճով)

ՊԱՐԵՏ.— Այս կողմը բռնեն ջահը... այս կողմը։

ՎԱՐԴ.— Հա՛յր իմ...

ՊԱՐԵՏ.— Ի՞նչ... Ձայն մը լսեցի՞ք...

ՄԱՐԻԱՄ.— Այո՛, այս կողմեն ձայն մը եկավ։

ՎԱՐԴ. —Ես եմ... Հոս եմ... Հա՛յր իմ... մա՛յր իմ...

ՊԱՐԵՏ.— Այո՛, որդվույս ձայնն է (մոտենալով և գրկելով). ո՛հ, վերջապե՛ս գտա զքեզ, սիրելի որդյակս։

ՄԱՐԻԱՄ.— Ի՞նչ բան ունիս այս խավարչային բանտին մեջ, որդյա՛կ իմ։

ՎԱՐԴ.— (դիակը ցուցնելով) Տեսե՛ք։

ԱՄԵՆՔԸ.— Շուշան մեռա՞ծ...

ՎԱՐԴ.— Անոր վրա կարտասվեի...

ՀՈՎԻՒ.— Սա կողմը ոտնաձայն մը կա... Մեկը կուգա։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ՍՈՒՐՄԱԿ (մտնելով)

ՍՈՒՐՄԱԿ.— Մա՜հ և անե՜ծք... Ո՞վ կա հոդ... ո՞վ կը հանդըգնի իմ քարայրս ոտք կոխել...

ՄԱՐԻԱՄ.— (մնկուսի) *Ի՞նչն է։*

ՎԱՐԴ.— (ետառջ գալով) *Քու վրեժխնդիրներդ. այս պիակն արյուն կը խնդրե քեզնե, վատարա՛նց։*

ՍՈՒՐՄԱԿ.— Շուշան մեռա՜ծ... (դիակը տեսնելով) *վա՜յ ձեզ*[31]*, թշվառակա՜նք* (դաշույն ի ձեռին վաղդին վրա հարձակելու կըլլա, Մարիամ գետնեն դաշույնը կառնե և Սուրմակը կը զարնե)։

ՄԱՐԻԱՄ.— Կեցի՛ր, անօրե՜ն...

ՍՈՒՐՄԱԿ.— Կորսվեցա՜... (ձեռքը կուրծքին կը տանի) *վերջապես վրեժդ առիր* (բավալգյոր կիյնա)։

ՎԱՐԴ.— Մա՜յր իմ...

ՊԱՐԵՏ.— Ի՞նչ ըրիր...

ՍՈՒՐՄԱԿ.— Հանցավոր չէ ինքը... Անիծյա՛լ եմ ես (կը մեռնի)։

ՎԱՐԴ.— Ո՜հ, ահա՛ երկնից հրեշտակները ժպտելով հոս կը թռչին և պիտի տանին Շուշանս... պի՛տ ալ տարնե՛ք, պի՛տ ալ... (վարագույրը կիջնե)[32]։

ՎԵՐՋ

ԱՒՎ, ՀՈՂԵՐ
ԿԱՄ
ՀՆՁԻՆ ՓՇՆԵՐ ԱՐԱՐԱՏՅԱՆ

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՐԳԱԽԱՌՆ Յ'ԵՐԻՍ ԱՐԱՐՍ ԵՎ Ի ՄԻ ՎԵՐՋԱԲԱՆ

Սկյուտար, 1868

ԱՆՁԻՆՔ ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ, ինքնակալ Թաթարաց
ՆՈՐԱՅՐ, իշխան Սևբաստիո
ՆԱԶԵՆԻԿ, Նորայրի զուտարը
ԵՐԱՆՅԱԿ, Վաչեի կինը
ՎԱՐԴԱՆՈՒՇ, Վազենակի աղջիկը
ՎԱՂԵՆԱԿ, Նորայրի փեսայն՝ զորապետ Հայոց
ՎԱՉԵ, զորապետ ուրացող
ՋԱՐՄԱՋԱՆ, զորագլուխ Թաթարաց
ՎԱՀՐԱՄ, Նազենիկի խնամակալը
ՆԵՐՍԵՀ, Վաչեի հայրը
ՀԱՅ ՋԻՆՎՈՐ ՄԸ
ԹԱԹԱՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՄԸ
Զորապետք, Թիկնապահք, զինվորք, ժողովուրդ, դեվք և այլն։

ԱՆՁԻՆՔ ՎԵՐՋԱԲԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՈՒՅՍ
ՍԵՐ
ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ
ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐՎԱԾ Ա

ԱՐՇԱՎԱՆՔ

Առջալույս.—Նորայրի ապարանքին մէջ փառավոր սենեակ մը.—Խորը դուռ, երկու կողմը պատուհան.—Աջ կողմի խորը սենեակ մը, ուր Նազենիկ կը բնանայ:

Տեսիլ Ա

ՆԱԶԵՆԻԿ (միևնակ. բնացած)

Վազենա՜կ... (իբրև մեկը կը գրկե և աւրթնալով նանկարած կը ախորի) *Դարձյալ երա՜զ... կը ծագիս արշալույս և դիս մխիթարելու կուգաս, այլ իզուր. ես քու տեսքիդ վրա զմայլած՝ չեմ մխիթարվիր, վասնզի վազենակիս ժպիտը քու ծագումիդ ավելի քաղցր էր... Ի՜նչ սիրափանք կրնան տղդել ինձ այս աստեղազարդ և կապուտակ երկինքը, մինչդեռ իր կապույտ աչքերն այս աստղերեն ավելի շողշողուն էին, իր դեմքը նորեկ գարնան մը ավելի գեղեցիկ էր... վերջապես անհուն դրախտ մ'էր իր սիրտը, և ես հոն զվարթ թիթեռնիկ մ'էի. իսկ հիմա արտասվալից վհի մը փոխակերպեցավ և ես՝*

հան հեծկլտող սակերի մը... Վազենակ, ե՞րբ պիտի գաս դիս գրկելու... Այլ ի՞նչ հույս ունիմ ես... Կը հասկնամ, մահվան ցուրտ ձեռքն զգով հավիտյան բաժնեց ինձնե... բախտը մեր երկուքին մեջ գերեզման մը գրավ... Ի՞նչ թշվառություն, դանդաղ տարիներ արցունք սիրելով անցան և դեռ չեմ տեսեր ես զքեզ, ես որ վայրկյան մը չէի ուզեր հեռանալ քեզնե... (Երեսը ձեռացը մեջ առած կուլա):

Տեսիլ Բ

ՆԱԶԵՆԻԿ և ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ.— Նազենիկ, դարձյալ կուլաս. մինչև ե՞րբ պիտի մեջ տեսար զինքը...

ՆԱԶԵՆԻԿ.— Այո՛, և առչինեն ավելի քաղցր էր քու նայվածքը... Ա՜հ, ինչո՞ւ ես ալ իրեն հետ չը վախցի պատերազմի դաշտը, ես ալ դյուցազնուհվո մը պես ամուսնույս գրկացը մեջ հայրենյացս որ ձոնեի արյունս և չէի հեծեր այսպես գերեզմանեն խոսված սակերի մը նման...

ՎԱՀՐԱՄ.— Իսկ վարպանույշ, այն անմոռ դասրի՞կը:

ՆԱԶԵՆԻԿ.— Արդեն որ կսպմ որ զառնաս՝ երկինք արցունք սիրած է հոն. ուրեմն, ո՛վ մահ, ելո՛ւր քու սուռ ձեռքովդ զոցե այս աչքերը և ինդ անհրեշտանա առջևես այս նախանձոտ աշխարհը, ուր սիրո քաղցրությունը գեռ չը ճաշակած, սիրո զառնությունը կը խմեմ: Վազենակ, փշալից է եղեր այն պսակը, զոր սերը ժպտելով մեր գլխուն բոլորեց և իր հեշտ ամպերովը զանոնք մեր աչքեն ծածկեց... Երանի՜ թե այն դիշերը, յորում առաջին համ-

բույրներն ղպային մեր շրթունքը՝ ղպային նաև մահվան դալուկը, երկուքնիս գրկախառն իջնեինք այն սև գերեզմանը... Վահրա՛մ, եթե հիմա զավակ չունենայի, հազար գերեզման ունեցած էի...

ՎԱՀՐԱՄ.— Մի՛ հուսահատիր այդպես, Նազենիկ, անշուշտ կը գթա երկինք անմեղին վրա... Հուսա՛, միանգամայն ինքզինքդ զվարթ ցո՛ւր, վասնզի կուզե՞ս տեսնել անմեղ աղջկանդ արցունքը:

ՆԱԶԵՆԻԿ.— Ինչո՞ւ:

ՎԱՀՐԱՄ.— Երբ հիմա անկողնես ելա, հնծկլտալու ձայն մ՚առի, քովս գարձա և տեսա, որ վարդանույշ կուլար... Հարցուցի, թե ինչո՞ւ կուլա, ինքն ալ վերչպես պատասխանեց. «Վասնզի մայրիկս միշտ կուլա»:

ՆԱԶԵՆԻԿ.— Ի՞նչպես չարտասվե զավակ մը, որուն աչացը վրա իր մորը համբուրին հետ մեկտեղ արցունք կաթեց... Ուրեմն, Վահրամ, ե՞րբ պիտի գթա երկինք մեր վրա, մինչդեռ անմեղ մ՚անգամ կը վշտացնես... Մի՛, մի՛ գոցեր սիրտս պատիր հույսերով, գիտեմ գերեզմանին սև պատվարները բաժնեցին ինձմե ամուսինս. ևս որ այնչափ կը պաշտեի այն գողտրիկ սիրտը... անարդ թշնամյաց ոտքը կոխան եղավ... Հայաստան դյուցազն մը կորսնցուց և Նազենիկ՝ պահապան հրեշտակ մը, որուն հաղթական ճակատը ցուրտ և արյունոտ մարմարյա դափնիներով պսակեց մահն անշուշտ:

ՎԱՀՐԱՄ.— Բայց դու ընդհակառակը հրճվելու ես, Նազենիկ, որ քու ամուսինդ անհուն Հայեր փրկեց իր մահվամբը, որոնց արյունը պիտի ծծեր թշնամվույն անխնա սուրը... Թող մեռնի ամուսինդ և ապրի Հայաստան, վասնզի կը

գոնես հետո ամուսինդ երկնից մեջ, իսկ Հայաստանը երբեք չես գոներ... Դու չես գիտեր, թե այս դողդոջուն բազուկը որչափ թշնամվույն արյամբը կարմրեցավ... Երկու որդի ունեի, երկուքն ալ պատերազմին մեջ ինկան մեռան, իսկ ես հրճվեցա, որ հայրենյաց ազատության համար մեռան... Եթե հայրդ զքիզ իմ խնամակալության հանձնած չըլլար, ես հիմա գուցե գիտապատա ինկած էի դաշտին վրա և կատաղի վագեր նման թշնամվույն արյունը կը խմեի. չը գիտես դու ի՞նչ զվարճություն է այն... Կորբամ զքիզ, Նազենիկ, որ հայրենյաց հուրը չես զգար դու... Ջը տեսա՞ր մեթե հայրդ, որ հոգիեն ավելի կը սիրեր զքիզ, հայրենյաց սիրուն համար թողուց հոս և ինքը սլացավ պատերազմի և ազատության դաշտը յուր ճերմակ մորուքն արյամբ ներկելու... և արժանացավ իսկ նահատակության լուսեղեն թագին. Նազենիկ, աշխարհիս վրա երջանկություննն աշնան պարզ երկնքին կը նմանի, զոր ամայած գիտելու ատենդ հանկարծ թուխ ամպերով կը ծածկվի

ՆԱԶԵՆԻԿ.— *Ո՜հ, մի՛ արթնցներ մտացս մեջ հորս մահվան տխուր հիշատակն ալ. դարձյալ կըսեմ, պետք է մեռնիլ, վասնզի միայն մահը, այն սուտած և տխուր հրեշատակը կրնա վշտահարս մխիթարել՝ հավիտենական տխուր հանգստարան մը, գերեզման մը շնորհելով, որուն յուրտ դրանը առջև կը դողդոջին դպալի հիշատակներ... Վահրամ, երբ կը տեսնեմ, որ վարդը կը ժպտի՝ կուգեմ վարդ մը ըլլալ, ժպտիլ վայրկյան մը և թառամիլ...* (ի ծուռ և ձեռն երկինք վերցուցած) *Հա՛յր իմ, դու գոնե խորհուրդ մ՚ազդն թշվառ աղջկանդ։*

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ և ՎԱՐԴԱՆՈՒՇ

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (մոր գիրկը վազելով) *Մայրի՛կ... դարձյալ կուլա՞ս...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ո՛չ, աղջիկս...* (գայն սրտին վրա կը սեղմե):

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Ի ո՛ւր կը ջանաս զիս խաբել, ահա կը տեսնեմ այդ արցունքները, որոնք տաք տաք սրտիս վրա կը կաթին... Ինչո՞ւ համար կուլաս, բան՝ որ ես ալ արցունքս բուկինիգ հետ խառնեմ, սիրուն մայրիկս:*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ես՞ղճ զավակ, զառն կորսայան մը տխուր հիշատակ, քեզի համար կուլամ, վասնզի թշվառ ես:*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Այո՛, թշվառ եմ, վասնզի աչքս բանալես, մայրս ճանչնալես ի վեր միշտ զինքը տրտում տեսա. զոնե անգամ մը չը ժպտեցար ինձ, անդո՛ւթ մայր:*

ՎԱՀՐԱՄ.— (մեկուսի) *Տարաբախտ տղա:*

ՆԱԶԵՆԻԿ.— *Եկո՛ւր պիրկս, մի՛ սրդոզիր, զավակս, այսուհետև միշտ պիտի ժպտիմ քեզի, թեպետև սրտես արյուն ալ պոռթկա:*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Պիտի ժպտի՞ս ինծի... մա՛յր իմ. Վահրա՛մ, կը տեսնե՞ս, ժպիտ խոստացավ մայրս... Ուրեմն այսուհետև միշտ երջանիկ պիտի ըլլամ:*

ՆԱԶԵՆԻԿ.— *Եվ ալ անգութ չի պիտի կոչես մայրդ, այնպես չէ՞:*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Երբե՛ք... Ներե՛ ինծի, մա՛յր իմ, վասնզի խիստ վշտացած էի. երեկ իրիկուն, երբ պարտեզը կը շրջագայեի, տեսա երիվներանոգ թիթեռնիկ մը, որ ծաղկե ծաղիկ կը թռչտեր զվարթաբար... Աչքերս լեցվեցան... ին-*

կա մարգագետնին վրա և սկսա դառնագին լալ, ըսելով ինքնիրենս «Ես որ մայր ունիմ, Թշվառ եմ, և պանդուխտ Թիթեռնիկն անգամ ինձնեն ավելի երջանիկ է»... Վերջապես ելա և նախանձով վառված՝ արյուն-քրտինք Թափելով հաջողեցա գանի բռնել և սպաննել... Խեղճ Թիթեռնիկ... Հետո որչափ սիրտս կտոր կտոր եղավ... Մի-Թե ոճրագործությո՞ւն էր ըրածս, մա՛յր իմ:

ՆԱՋԵՆԻԿ.— Ո՛չ, դու հանցանք չունիս, աղջիկս... Հանդարտե... Ալ այսուհետև իմ միակ մտածմունքս դու պիտի ըլլաս:

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Բայց ի՞նչ ձայն է այս, մարի՛կ ըրե, մա՛յր իմ...

(դուրսեն հետևյալ տխուր երգը կը լսվի):

ՈՂԲԵՐԴ

Երկինք, ցողե աչացըս լույս...
Դեր ընշույլ մը յաչս եղկելույս,
Որ ի խավար օրերն ճամբուն
Սիրտն ի սուգ, վիշտ ինծե անմուն...

Ո՛վ նագենիդ իմ նագենիկ,
Ո՛վ իմ աբև, իմ հույս հաղցրիկ,
Քայլամոլար շրջիմ ի զո՞ւր...
Քեզ կը ծածկե դամբան տրխուր:

Չկա ինծի երբեմ հույս լույս,
Դու ես սփոփանք իմ ցավերուս,
Ո՛վ դու դամբան, լրիկ դամբան,
Շերտումես զինզ միշտ կը կարդան:

ՆԱԶԵՆԻԿ.— Ո՜հ, այս ձայնը սխալ ապավորություն մը ազդեց ինձ... Ո՞վ է այդ երգողը, Վահրամ:

ՎԱՀՐԱՄ.— (պատուհանին նայելով) Ցնցոտիներ հագած կույր գինվոր մ՚է (վարդանույշ կերբա պատուհանին նայելու):

ՆԱԶԵՆԻԿ.— Վահրա՛մ, դնա՛, կազատեմ հոս բեր այդ գինվորը, զուցե նույն պատերազմին դարձած ըլլա և լուր մը տար մեզ ամուսնուս վրայոք. (վաճառամ կը մեկնի) Ո՜հ, արդյոք պիտի կարենա՞մ հաջող լուր մը առնել վաղենակևս, երեկ ոչ հուսո այն նշույլը, գիս կը մխիթարեր, պիտի խաղարի մահվան սոսկերին տակ... Անոգո՞ք բախտ, մինչև ե՞րբ սիրտս հուսահատության թուխ կռճակաց խաղալիք պիտի մատանես...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (մոր վազելով) Մա՛յր իմ, Վահրամ կույր գինվորին թևեն բռնած հոս կը բերե... Ահա եկան...

Տեսիլ Դ

ՆՈՒՇՆՔ, ՎԱՂԵՆԱԿ, ՎԱՀՐԱՄ (թևեն բռնած կը բերե, որն որ կրոտ և դեղնած է):

ՎԱՂԵՆԱԿ.— Ինչո՞ւ գիս հոս բերիք... Միթե գիս բանտարկե՞լ կուզեք, որպեսզի փոզոցներուն մեջ այսպես ստամոքսական թշվառությունս չը նվագեմ ողբաձայն... Ա՜հ, ապատ թողեք գիս, թողեք որ ողբամ ես իմ վիճակս, վասնզի իմ միակ մխիթարանքս իմ ձայնիս արձագանքն է, ինծի այնպես կը թվի թե սիրելիքս ինձ կը պատասխանեն:

ՎԱՀՐԱՄ.— Ապահով եղիր, խեղճ գինվոր, զքեզ սրգիլող չկայ, ապատ ես երթալու... Բայց ներե հանդուգն հարցմանս...

Ինչո՞ւ այսպես փողոցները կը թափառիս ողբալին... Մի՞թե ընտանիք չունի՞ս...

ՎԱՂԵՆԱԿ.— *Ո՛չ, արդեն երիտասարդությանս առեն որ մնացած էի, նոքը ամուսին մ'ունենալ... որուն վրա միայն դրեր էի կենացս հույսը, բայց երբ այսպես պատերազմին կուրացած կը դառնայի, զուժեցին ինձ, որ կինս լուր առնելով թե ես պատերազմի առեն մեռած էի, նա ալ ինքզինքը թունավորեր էր. ալ այնուհետև դերեզման փնտռելու, ինչպես ծարավյալն աղբյուրը... կը շնչեմ... բայց մեռած եմ:*

ՎԱՀՐԱՄ.— *Բայց ո՞ր պատերազմին համար կըսես...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Ասկեց 5—6 տարի առաջ Սեբաստիա մերձակաները Հագարացվոց դեմ եղած սոսկալի պատերազմը[1]:*

ՆԱԶԵՆԻԿ.— *Քա՛չ զինվոր, ահա առար համար բերինք քեզ հոս... Գիտցիր որ հոս ալ քեզ նման թշվառ կին մը կա իր ամուսինը կորանցուցած, որ սույն միջոցին քեզնե ուժ և հույս կակնկալե:*

ՎԱՂԵՆԱԿ.— *Թշվա՜ռ մը... ո՜հ, կը սիրեմ ես զայն... Բայց ես ի՞նչպես կրնամ ուրիշ մը մխիթարել, մինչդես ես իսկ կարոտ եմ... Եթե կարենամ մխիթարել զայն, այդ ինձ համար աննման սփոփանք պիտի ըլլա... Ա՜հ, տարօրինակ բարիք մ'է թշվառության անողոք ճիրաններեն մեկն ազատելը:*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ուրեմն անշուշտ կը ճանչնաս վաղենակ զորապետը, որ հիշյալ պատերազմին Հայ զորաց աջ դնդին հրամանատարության կրներ:*

ՎԱՂԵՆԱԿ.— (*տատամսելով*) *Այո՛...*

ՆԱԶԵՆԻԿ.— Գիտե՞ս արդյոք, մեռա՞վ նա պատերազմին մեջ թե կենդանի է դեռ։

ՎԱՂԵՆԱԿ.— Կենդանի է (ապշած)։

ՆԱԶԵՆԻԿ.— Կենդանի՞... Եվ ո՞ւր է հիմա... գիտե՞ս...

ՎԱՂԵՆԱԿ.— (նոանդյամբ և շփոթած) Բայց... չեմ հասկնար։

ՆԱԶԵՆԻԿ.— Ամուսինս կենդանի՞... իմ մոռաս... Բայց ո՞ւր է...։

ՎԱՂԵՆԱԿ.— (թոթովելով) Հոս եմ... Նազենիկ...

ՆԱԶԵՆԻԿ.— Վաղենա՞կ... (կը գրկվին)։

ՎԱՀՐԱՄ.— Վերջապես դիացի՛ր... երկինք...

ՎԱՂԵՆԱԿ.— Ճշմարի՞տ է որ կը դրկեմ զքեզ, Նազենիդ իմ Նազենիկ... եթե ոչ երկուքնիս ալ խաբուսիկ երազով մը կսփոփվինք։

ՆԱԶԵՆԻԿ.— Ո՛չ, ո՛չ... Բայց ո՞ւր են անուշ աչքերդ... ի՞նչ դալկահար դեմք... ի՞նչ դողդոջուն ծունկեր... ո՞ւր է նայվածքդ։

ՎԱՂԵՆԱԿ.— Հայրենիք մը ազատելու քիչ է այս կուրությունը, հինգ վեց տարվան հալումաշը... և սիրելվո մը միայն տեսքեն դրկվիլը։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Մա՛յր իմ, ո՞վ է այդ աղքատ մարդը որ կը դրկես։

ՆԱԶԵՆԻԿ.— Եկո՛ւր դու ալ դրկե... Հայրիկդ է... աղջիկս։

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Այն ի՞նչ գծուծ մարդ է, ես կը վախնամ դրկելու։

ՎԱՂԵՆԱԿ.— Ջավա՛կ մը... աղջի՛կ մը... ո՛հ, եկո՛ւր դիրկս, ինչուան հայրդ եմ ես... (զայն կը գրկե) երկի՛նք, լո՛ւյս, լո՛ւյս խավար աչքերուս, տեսնեմ մեկ մը ամուսինս և

զավակս վայրկյան մը միայն և թող դարձյալ խավարին... Զավակս, զոր դեռ չեմ տեսած...

ՆԱԶԵՆԻԿ.— Մխիթարվե՛, ամուսինս, բավական է որ Հայաստան կույր չըլլա դյուցազնի մը համար... Աչքերը վիրաւոր տեսնելն ավելի դեղեցիկ են, երբ սրտերը իրարու մոտ բարախեն. արդեն խամրած են սիրտ ազդու նայվածքները և սրտերը կը սիրեն։

ՎԱՂԵՆԱԿ.— Դժբախտ զավա՜կ... յուր կենացը գլխովթ արշալուսին սկսավ Թշվառութեան բաժակը քամել, և իր հորը աչացը չհան իր կենացը պայծառ օրերն ալ խավարեցան... Նազենիկ, ինչո՞ւ ծնար այս զավակը, մինչդեռ իր հայրը անոր քաղցրիկ դեմքը հավիտյան չը տեսնելու պիտի դատապարտվեր... մինչդեռ հայրական սերն անոր սիրուն աչացը մեջ պիտի չը կարդար... Անիծյալ է եղեր այն օրը, Նազենիկ, յորում ես քու գրկիդ բաժնվեցա... Անիծյալ է եղեր այն հաղթութիւնը, որով հրճվեցավ Հայաստան։ Նազենիկ, երբ հաղթանակավ պատերազմեն կը դառնայի, նույն տեսն, երբ գնդես բաժնված էի քանի մը տնձանց հետ, խումբ մը կատաղի Հագարացվոց հանդիպեցա, որոնք հանկարծ վրաննիս հարձակեցան և բնկերներս սպաննելով, գես ալ խողխողել ուզեցին, բայց զորապետիդ հրամայեց, որ միայն աչերս կուրցնելով թողուն գիս... Մինչև հիմա հինգ վեց տարի է այսպես վշտահար ու թափառական շրջեցա, մուրացի, միշտ գոչելով, երկինք, լո՜ւյս, լո՜ւյս իսավար աչքերուս... Այլ ի զուր... Ահռելի գույժ մ'ասի, թե մեռած էիր...

ՎԱՀՐԱՄ.— (մենուսի) Սոսկալի ճակատագի՜ր։

ՎԱՂԵՆԱԿ.— Խավարն ինձ գերեզման մը կը թվեր և ես հան

ողջ սավեր մ'էր, սերը սիրտս կրծող իժ մ'էր և կյանքն անողոք դահիճ մը. հույսը ինծի նոր կյանք մ'էր, մահը՝ ինծի համար հրեշտակ մը և անցուցած գեղեցիկ օրերս նրաղ կը թվեին ինձ... Բայց վերջապես փարատեցավ այն երազը... նազենիկ, դարձյալ դիրկս համբույր կը ձոնե դեղնած ճակտիս, իսկ անգութ երկինք դեռ լուսո նշույլ մը չը ցողեր խավար աչքերուս:

ՆԱԶԵՆԻԿ.— Կաղաչեմ, վաղենակ... ալ բավական է...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (ճայրը գրկելով) Ա'լ սիրով կը զրկեմ զքեզ, Տա'ր իմ, վաճռի դու ալ ինծի պես թշվառ ես եղեր և կուլաս:

ՎԱՂԵՆԱԿ.— Թշվա՞ռ ես կըսես, աղջիկս... բայց ինչո՞ւ...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Վաճռի միշտ կուլար մայրս... Բայց Տիմա երջանիկ եմ, վաճռի թե մայրիկս ժպտել խոստացավ և թե հայրիկ մը ունեցա:

ՆԱԶԵՆԻԿ.— Վարդանույշ, ահա այդ Տորդ Տամար էր որ կուլայի անդադար:

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Ուրեմն ալ երջանիկ պիտի ըլլանք, վաճռի Տայրս ալ գտանք:

ՎԱՂԵՆԱԿ.— Իսկ Տայրդ ի՞նչպես երջանիկ ըլլա, մինչդեռ աչքերը կորանցուցեր, չը տեսներ քու բաղդիկ դեմքդ. այլ միայն Տավիտենական խավարի մը խորերեն կը լսե քու անուշ ձայնդ՝ քու մրմնջած «Հայրիկ» բառդ...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (գայլ գրկելով) Թեզ Տայրիկ...

ՎԱՂԵՆԱԿ.— Ա՛յս է պիտույնդ, ո՛վ երկինք:

ՆԱԶԵՆԻԿ.— Բայց Տանդարտեւ, սիրելի ամուսինս, քու կնոջդ և զավկիդ զգվանքները պիտի մոռցնեն քու վշտալից անցյալդ... Քու աղջկանդ սերը տեսնցած լուսնեդ ավելի

քաղցր պիտի թվի քեզ. հիշե՛ մեր անցուցած սիրո օրերը, դարձյալ նույնն ենք մենք, միայն թե դու չես տեսներ զմեզ, քեզ այնպես թող թվի, որ մեր դիրկը կը նիրհես։

ՎԱՂԵՆԱԿ.— Նիրհե՛լ... Բայց վերջապես չի՞ս ուզեր արթըննալ, երբեք չի՞ս կարոտնար սիրելույդ դեմքը... երանի՜ քեզի որ չես պիտեր իմ թշվառությունս... չը պիտես թե ի՞նչ է կույր մը, որ կը սիրե։

ՆԱԶԵՆԻԿ.— Ո՜հ, մի՛ հուսահատեցներ զիս, Վաղենակ... Ուրեմն դու զիս չես սիրեր, որ այսպես անօգուտ կը համարես իմ սիրալիր համբույրներս։

ՎԱՂԵՆԱԿ.— Ո՛չ, ո՛չ, կը սիրեմ և պիտի սիրեմ զքեզ հավիտյան, Նազենիկ... Ալ չի պիտի վշտանամ... ալ զվարթ պիտի ըլլամ, ո՜հ, բա՛ց թևերդ և զրկացդ մեջ հանգչեցնեմ քիչ մը վշտակոծ ճակատս... Եկո՛ւ և դու զավակս ալ... (կը գրկվին)։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ՆՈՐԱՅՐ

ՆՈՐԱՅՐ.— (ծունր դնելով) Օրհնյալ ըլլա երկինք, որ երկաթե բանտերեն և շղթաներեն ազատեց ծերունիս և դարձուց իմ անձկալի հայրենիքս, իմ քաղցր ընտանյացս գիրկը։

ՆԱԶԵՆԻԿ.— Ո՛վ երկինք, ո՛վ է արդյոք այս ծերունին...

ՎԱՀՐԱՄ.— (մոտենալով) Աստվա՜ծ իմ... Նորայր իշխանը... Հայրդ է, Նազենիկ։

ՆԱԶԵՆԻԿ.— Հա՜յրս... (գիրկը նետվելով) Հա՛յր իմ... ի՜նչ

ուրախություն մեկ վայրկյանի մը մեջ... Բայց երազ չըլլա տեսածս... վաղվի քու մահդ դուժեցին։

ՆՈՐԱՅՐ.— Ո՛չ, ո՛չ սիրեցյալ դուստրս, երկինք դարձյալ չուզեց իմ մահս և քու դիրկդ դարձուց զիս... Դեռ պիտի ապրինք։

ՎԱՂԵՆԱԿ.— Ի՞նչ պատահեցավ... (բարձր) Նազենի՞կ...

ՆՈՐԱՅՐ.— Դուստր իմ, ո՞վ է այդ կույր զինվորը։

ՆԱԶԵՆԻԿ.— Չե՞ս ճանչնար... Ամուսինս է, Հայր իմ։

ՆՈՐԱՅՐ.— Ո՞վ երկինք (գրկելով) Վաղենա՞կ... դեռ կը գարնի բազուկդ, որուն կրթնեցավ Հայրը, ո՞վ արի դյուցազն, դեռ կզգամ բազուկը սրտիս վրա, որ միշտամեայ գլխուն անհուն հարվածներ թոթափեց։

ՎԱՂԵՆԱԿ.— Ո՜հ, դո՞ւ ես, դյուցազն Հայր, ես ալ կը համբուրեմ այն բազուկը, որն որ ծերության մեջ չը դողդոջեց սրուցս տակ... Բայց չեմ տեսներ...

ՆՈՐԱՅՐ.— Ավետ Հայաստանի օրհնությունը լսե։

ՆԱԶԵՆԻԿ.— Ի՜նչ տարօրինակ դեպք, Հայր իմ, երկուքնիդ մեկ օր հետացաք Հոսկե և երկուքնիդ մեկտեղ դարձյալ եկաք միասին...

ՆՈՐԱՅՐ.— Նազենիկ, ո՞վ է այս մանկիկը։

ՆԱԶԵՆԻԿ.— Աղջիկս է...

ՆՈՐԱՅՐ.— Աղջի՜կդ... Եկո՜ւր զքեզ ալ գրկեմ չվառ զավակդու որ մանկությանդ առեն վշտահար մայր մը ունեցար. անմեղ հրեշտակ, դու որ վիշտ քաշելու համար երկինքը թողուցիր աշխարհ եկար... դու որ արտասվաթուրմ վարդ մը փթթեցար աշխարհիս վրա... Երկինք սև ամպերով իր ճառագայթները քեզնե՛ն ծածկեց։ Վաղենա՛կ, ահա՛ քու աչերուդ լույսը, ահա՛ քու դագաղիդ վարդը... Ալ թող

արյունոտ դափնիները և այս գեղեցիկ ձիթենիին շուքին տակ հանգստացիր, բավական լույս ու արև թափեցիր հայկական ազատության վշտոտ ճամբուն վրա. ուրիմն հրճվինք, որ հայրենյաց համար վշտացանք:

ՆԱԶԵՆԻԿ.— Եվ դու, հա՛յր իմ, ինչվան հիմա դու ո՞ւր էիր:

ՆՈՐԱՅՐ.— Վեց տարի ես ալ եգիպտացվոց տերության բանտերուն խորերը ծանր շղթաներու տակ հնծեցի անոք և անմխիթար, բայց բանտապահիս և իմ մեջ այնպիսի սիրա բարեկամության մը հառաջ եկավ և այնչափ սիրելի եղա իրեն, որ ինքզինքը մահվան վտանգի մեջ ձգելով՝ ազատեց զիս... Երբ այն բանտերեն դուրս ելա՝ կարծեցի Թե նոր աշխարհ մը մտա, երբ հայրենյացս հողերը կոխեցի՝ Հայաստանիս հավը հայրենասիրության նոր ոգի մը ներշնչեց ինծի. ես որ բանտերու խորերը գերեզմանին սև եղերքները դողդոջող ծերունի մ'էի, ահեղ առյուծ մը դարձա... Բայց երբեք չէի հուսար, որ բնաւանիքս այսպիսի փոփոխ և երջանիկ վիճակի մեջ պտնեմ, միայն Թե Հայաստանի վերջին հառաչները սիրտս կը բեկբեկեն, երբ մարին հայոց որոտացող շանթերը:

ՎԱՂԵՆԱԿ.— Նորա՛յր, մի հուսար որ Հայուն աստղը ուռնես, այլ բոլոր Հայաստան Թշվառ պիտի Թավալի կորստյան վիհը, ինչպես որ կործանեցավ իր գահը... Երկինք ալ բարկացայտ աչեր կը նայի Հայաստանի. այն անխիղճ եգիպտացիները, Թաթարները, Հաղարացիները, ամենեն ալ երկնավրիժ հրեշներ են, որոնք անխնա Հայաստանը կը հարվածեն... Օ՜ն, ակնարկ մը ձգե Հայրենյացդ վրա և կարծեմ գերեզմաններն և ավերակներն զատ ուրիշ շենք մը չի պիտի գտնես... Մարիկ բրև պիտի ուռնես

որ Հայոց աշխարհին պիշերային լուսիյսն անգամ միշտ ողբաձայն չեծեծանքներե կընդհատի. ինչո՞ւ տապալի Հայաստան, վանդի Հայոց մեջ մատնիչներ կան, ինչպես որ մեր պատերազմին մեջ ալ գտնվեցան... Այսպես մատնությամբ Հայերը զիրար կենագրավ ընելե եաքը, եթե միայն Հայ մը մնա, այն ալ ինքզինքը պիտի մատնե, որպեսզի «Հայ եմ» բսելով՝ աշխարհի առջև պարծենա... Հայերն ի քուն են, իսկ մատնիչներն՝ արթուն...

ՆՈՐԱՅՐ.— Քիչ առևնեն գույն Սերաստացիք գույժ պիտի առնեն որ Բշնամիք աշխարհավեր բանակավ Սերաստիս վրա կը թափին:

ՋԱՅՆ ՄՐ.— Քաղաքացիք, արի՛ք, զենք առե՛ք:

ԱՄԵՆՔՐ.— (սարսափած) Ա՜ՀՆ... (լուրյուն):

ՎԱՂԵՆԱԿ.— Կը լսե՞ս, Նորայր:

ՋԱՅՆ ՄՐ.— Սերաստացի՛ք, արի՛ք, զենք առե՛ք:

ՆՈՐԱՅՐ.— Վահրամ, դնա՛, շուտ հոս բեր այդ մարդը (Վահրամ կը մեկնի) քաջալերությո՛ւն... Դեռ այս գողգոջուն բազուկը կարող է սուր շարժել և Բշնամյաց գլուխները թափել... Դեռ ողջ է Հայաստան, դեռ ողջ է Հայրենասիրության ոգին:

ՆԱՋԵՆԻԿ.— Ո՛վ երկինք, պիա՛ մեր վրա...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Մա՛յր իմ, ես ալ կը վախնամ:

ՎԱՂԵՆԱԿ.— Եկուր գիրկս, գավակս... մի՛ վախնար:

ՆՈՐԱՅՐ.— Քաջալերությո՛ւն, զուսար իմ, ողբալու ժամանակ չէ:

Տեսիլ Զ

ՆՈՒՅՆՔ, ՎԱՀՐԱՄ, ՋԻՆՎՈՐ ՄԸ

ՋԻՆՎՈՐ.— (մեկուսի) *Նորայր իշխանը կենդանի՞ և Սերաստիա մե՞ջ...* (զարմացած)։

ՆՈՐԱՅՐ.— *Խոսե՛, միթե նոր թշնամի՞ք կարշավեն Սերաստիա վրա։*

ՋԻՆՎՈՐ.— *Այո՛, վեհա՛պն տեր, Լանկթիմուր Թաթարստանի բռնավորը՝ Հայաստանը դրեթե հիմնահատակ ընելե հետո՝ սև ամպերու բանակով հոս կու գանա տարե մեկ[2]։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Ո՜հ, միթե շատ մո՞տ են մեզ, Աստվա՜ծ իմ...*

ՋԻՆՎՈՐ.— *Ո՛չ, վաղ առավոտյան դեմ հազիվ հոս կու հասնին։*

ՆՈՐԱՅՐ.— *Ուրեմն թող քաղքին բոլոր դռները փակվին, աղնվականք և ռամիկք ամենքն ալ զենք առնեն... Իմաց տուր Սերաստացվոց, թե Նորայր իր գերության շղթաներեն ազատելով իր հայրենիքը զարձեր է, իմաց տուր նաև բոլոր զորապետաց և զորաց, որ շուտով հիմա Նորայրի ապարանքը գան ժողովվին... Թող ամեն եկեղեցյաց զանգակները հնչվին՝ այս գույժը բոլոր քաղքին մեջ շուտով տարածանելու համար... Օ՜ն, ուրեմն ամած պատվերներս փութով թող կատարվին, քա՛ջ Հայկազն։*

ՋԻՆՎՈՐ.— *Անհոգ եղիր, վեհազն տեր, ջանք և կյանք հայրենյացս նվիրելու պատրաստ եմ ես։*

ՆՈՒՅՆՔ (բացի զինվորեն)

ՆՈՐԱՅՐ.— Արի զինվոր, երանի ինձ ամեն Հայ քեզի պես զգար, այն ատեն Լանկիմուր սարսափելով կը նայեր Հայաստանի դժնեզարդ սարերուն և կը սոսկար իր խրոխտ քայլը Հայաստանի հողին վրա դնել, ուր ինձ մատնիչներ իրենց մոր կաթը չը խմեին, ուր ինձ վատեր և ապազգայիներ նախնի փառաց հիշատակաց քանդակներն իրենց նախատատական քայլերուն տակ չը ջնջեին, ուր ինձ Հայերը ձեռք ձեռքի «միաբան մեռնինք» գոչեին... Ա՜հ, ե՛րբ պիտի ջնջվի աշխարհիս վրայեն ինգը, փառքը և միայն եղբայրութիւնը իր մանիշակներովմարդոց ճակատը պիտի պճնե փոխանակ դժնիի. բայց դու, Հայաստան, դու միշտ փուշեր պիտի տեսնես...

ՆԱԶՆԻԿ.— Ե՞րբ խաղաղութիւն պիտի գտնենք մենք այս աշխարհիս վրա, Տա՛ր իմ:

ՎԱՂԵՆԱԿ.— Նազնիկ, չկա երբեք Հանգիստ Հայուն Համար, մինչեռ անմիաբան է և օտար է իր սրտին Հայրենասիրութեան բառը, ինչպես գութն օտար է երկաթի թուրին:

ՆՈՐԱՅՐ.— Իսկ Հետո շատ պիտի ղղջա, ճակատը կոծկելով շատ պիտի վայն Հայը, բայց ինքզինքն անհատակ անդունդի մը գահավեժ բերանը պիտի գտնե, ուսկից անկարելի է ազատիլ... Խիստ վերջը պիտի սթափի Հայը և պիտի ըսե, թե ես ազգ մ'եմ. բայց պիտի տեսնե, որ ձեռքերը ամուր շղթաներով կաշկանդված են, մինչեռ բախտը յուր առջև կը թոչտի... (դրսեն ոռնաձայն մը կը լսվի):

ՆԱՋՆԻԿ.— Այս ի՞նչ ոտնաձայներ են... Աստվա՞ծ իմ:
ՎԱՐԴԱՆԻՅԾ.— Պաշտպանի՛ դիս, մա՛յր իմ...
ՆՈՐԱՅՐ.— (խոսքն ընդհատելով) Բան չկա... Զորապետներս և դինվորներս են, որ հոս կուգան... Քաջալերվի՛, սի՛րտ իմ... Երկի՛նք, զորացո՛ւր դողդոջ թևերս:

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ, ՎԱՋԵ, ՋՈՐԱՊԵՏՔ, ՋԻՆՎՈՐՔ

ՆՈՐԱՅՐ.— Կենցի՛ք, ա՛յրք հայկազունք, որ հայրենիքը պաշտպանելու համար միութով եկաք հոս ժողվվելու... Օ՜ն անդր, ժամանակ չը կորսնցուննք և զենքով ու սիրով վառված հառաչ խաղանք, դի ահա վրեժխնդրության ժամը հնչեց... Եթե չը խայտա մեր երակացը մեջ դյուցազն Հայկա արյունը, եթե եռանդ ի սիրտ և սուր ի ձեռին չը պաշտպաննք հայրենիքնիս, վա՛յ մեզի, կորբառյան սխտոր ժամն ալ պիտի հնչե, ուրեմն հազիննք և մեռնինք և թող մեր զավկընները դափնիներ սիտեն մեր գերեզմաններուն վրա, թող մեկ մեկ հազիութեյան կամարներ ըլլան մեր շիրիմները և թող մեր արյունը խաղաղութեյան սիտե մեր զավակաց բնաունյացը վրա... Մեռնինք կըսեմ ամենքնիս և ալ երբե՛ք անձնատուր չըլլանք այն անգութ և վատազգի մարդոց: Եվ թող վանկիմոտ մեր ցուրտ դիակացը վրայեն անցնի ամոթահար... Կերպնո՛ւք ամենքնիդ ալ մինչև վերջին շունչնիդ պատերազմին դաշտին վրա սպառելու և մինչև ձեր արյան վերջին կաթիլը հայրենյաց ծոցը ցողելու...
ԱՄԵՆՔԸ.— Կերպնո՛ւմբ...

ՆԱԶԵՆԻԿ.— *Պետք է երդնուլ, եղբարք, և ի՞նչպես մեր կյանքը հայրենյաց չը ձոննենք, ի՞նչպես արյուննիս անոր չը պարտինք, մինչդեռ հայրենիք իր զրկացը մեջ ծնող և սնուցյ մեզ. մեր կուրծքերն անոր պարիսպ պիտի ըլլան և մինչև որ պիտապատառ չը գլորինք, մեր սուրերն իրենց պատյանը չի պիտի դառնան... Վատ է այն, որ ավելի կյանքը կը սիրե՝ քան ինք ազգը:*

ՎԱՂԵՆԱԿ.— *Երանի ձեզ, Հայե՛ր, որ դեռ կը վառի սրտերնուդ խորերը հայրենասիրության կայծը... Ա՜հ, իմ արյունս ալ կեռա... Սուր մ՚ալ ինծի տվեք, և Թող վեհերոտ երիտասարդները տեսնեն ալևորը և կույրը պատերազմի արյունաշաղախ դաշտին վրա և ամոթահար ըլլան:*

ՆՈՐԱՅՐ.— *Հապ, օ՜ն, մերկացուցեք սուրերնիդ, հրաժեշտ տվեք աշխարհի, օ՜ն անդր, Սերաստիո պարսպացը վրա, Հաղթությունը մեզ կսպասե՜... Դողա՛ Լանկթիմուր, Հայերը ձեռք ձեռքի տվին...*

ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Վրե՜ժ կը գոռաս շիրմաց խորեն
Դուռ դյուցազանց սավերճն աճեղ,
Վրեժ կը մրմռաս արդ տխրորեն
Մեր հեգ եղբարց արյան հեղեղ.
Մասյաց ժեռուտ սարն բոցավեժ
Մեր սոսեռուն խոր ժայրին վրեժ...
Օ՜ն, անվեհեր վաճենիք գրկանիք,
Ու Հայաստան առնե նոր կյանիք.
Բյուր սուր, նուր, մահ
Ջազդեն մեզ աճ...
Արդ բաջալանջ՝
Նետվինիք հառաջ,

Սուր մեր հագուդ,
վատ և անգութ՝
Թող իշնամվույն
Խմի աչյուն...:

ՆՈՐԱՅՐ

Կայծակնահար թող կորչին
Որ կը մատնեն հայրենիքին:

<(վարագույրը կիջնե)>

(ՎԵՐՋ Ա ԱՐԱՐՎԱԾԻՆ)

ԱՐԱՐՎԱԾ Բ

ՄԱՏՆԻԹՅԱՆՆ

Առշալույս.—Դաշտակ մը.—Խորը Սեբաստիո պարիսպները կերևին.—Ջինվորներ ապին աջին ննացած են.—Ջեմիր, դրոշակներ ցիրուցան տարածված:

Տեսիլ Ա

ՎԱՋՆ և ՋՈՐԱԿԱՆՔ (ննացած)

Մի՛ ծագիր, արշալույս, Թող դիշերն իր Թուխ Թևերովը երկինքդ երեսը սրսդև... Թող դիշերն իր խավար ծոցին մեջ ծածկե մատնությունս... մատնություն մը, որ իմ սրտիս երջանկության պիտի բլլե... Ա՜հ, ինչո՞ւ կույր ղկուրայն պլորիմ դերեզմանը, մինչդեռ կենացս գարունը ժպտելով վարդև պսակներ կը բոլորե ճակտիս, ինչո՞ւ զանոնք մահվան ցուրտ ոտիցը տակ ննետեմ... Ի՞նչ հիմարություն, հայրենասիրություն ըսված անիմաստ բառի մը զոհել աշխարհիս փառքն ու հաճույքը և բանդագուշանաց ծնունդ հանդերձյալ երջանկություն մը վայելելու հուսով չարաչար սատակել... Հիմար չեմ ես, դեռ խելքս գլուխս է...

Ահա Սեբաստիո պարիսպները կը տատանին և պիտի տապալին վերջապես, ես ալ փոխանակ անոր ավերակացը տակ ջախջախելու, քանի որ թշնամին կյանքս շնորհելն զատ վարձք ալ կը խոստանա ինձ, ուրեմն անոր գիրկը կը դիմեմ և զայն կը գտնեմ ինձ ապաստանարան... Թող վայն և ողբա Հայրենիք, Հայրենիք՝ որ բոլոր սիրելեաց ապահիցը պատճառն է... Հիմա հարկ է որ զորքերս համոզեմ... Բայց ապահով եմ, որ անոնք ալ ինձ պիտի հետևվին, վասնզի Հայ են և ես իրենց հայրենասիրությունը փորձելի արդեն... Բայց նրին չը համոզվին ամենքը մեկտեղ և ալեկոծի գտնես, «ես զձեզ փորձելի» ըսելով միևնակ թշնամվույն կողմը կանցնիմ... Բայց շուտ ընեմ, վասնզի հիմա արևը կը ծագի... (փողը կը ճնշեցնե):

ՋՈՐԱԿԱՆՔ.— (հանկարծ ցատկելով) *Ի՞նչ կա, զորապետ, ի՞նչ կա...*

ՎԱՋԵ.— *Ահա արշալույսը կսկսի ծագիլ և քիչ մը ետքը Սեբաստիո պարիսպները տարսել. զուր քնացաք, բայց ես անբուն ձեր վրա հսկեցի, պիշևրվան ազգամուղջը խորհուրդներ հղացավ մտացս մեջ... ես՝ որ այչափ տաեն սոսկալի պատերազմներն խրոխտ ճակատով վերապրեցա, կը հետևի՞ք ինծի:*

ԱՄԵՆՔԸ.— *Միշտ քեզի հետ ենք, զորապետ:*

ՎԱՋԵ.— *Ուրեմն ձեզի հարցում մը ունիմ այսօր... Մեռնի՞լ կուզեք, թե վաղը ապրիլ... Պատասխա՛ն տվեք:*

ՋԻՆՎՈՐ ՄԸ.— *Մեռնի՞լ ի սեր հայրենյաց...*

ՋՈՐԱԿԱՆՔ.— *Այո՛, մեռնի՞լ ի սեր հայրենյաց...*

ՎԱՋԵ.— *Իրավունք ունիք, պետք է մեռնիլ... բայց այն տաեն՝ երբ մեր արյամբը հայրենյաց ապատությունը կարենանք*

դնել... Իսկ պե՞տք է որ մեռնիմք կուրորեն, երբ մեր հայրենիքը չը կրնալ ազատելեն զատ՝ հայ և հոգի ըլլալե զատրինք... որովհետև տեսաք և լսեցիք, որ Վանկիմուր, այն աշխատասիրավեր ճիվաղը, ինչպես Պարսկաստանը, Ասորեստանը և մեր խեղճ Հայաստանը չուր խրոխտ զարշապարյար տակ չախջախեց... Ուրեմն մենք ի՞նչպես կրնանք դեմ դնել, մենք որ Սերաստիա մ'ենք, մենք որ այս մեծամեծ սերտիյանց քով հյուղե մը կը համարվինք:

ՋԻՆՎՈՐ ՄԸ.— Կը սխալիս, բաջդ զորապետ, Հայրենասեր Հայու մը դիմաց տասը կատաղի Թաթար քիչ են... վասնզի անոնք սրյան մեջ հոգզոգդ փառք մը կը փնտռեն, իսկ մենք՝ սեր... Կրնաս հիշել Մամիկոնյան վահանը և ուրիշ դյուցազներ:

ՎԱՋԵ.— Այս մարդը վտանգավոր է, պետք է հայրենյացը, զոհել... (բարձր) Ասիկա անխելք է... Արդեն ես գիշերն ի բուն՝ անբուն խորհեցա, բաջ զորականք, և թշնամյաց կողմ անցնելով մեր կյանքը ապահովել զատ ուրիշ լամ միջոց չը գտա. Վանկիմուր այնպիսի կատաղի հրեշ մ'է, որուն դժոխային սուրեն կիյնան հայրենասիրություն և բաջություն:

ՋՈՐԱԿԱՆՔ.— Արդեն մենք ալ քեզի հետ ենք, զորապետ:

ՋԻՆՎՈՐ ՄԸ.— Ի՞նչ կրնենք, բնկե՛րք. հայրենիք մատնե՞լ...

ՎԱՋԵ.— Ով որ բաջ է և իմասուն՝ թող ի՛նձ հետևի... (Վանի մը բայլ կառնե և մյուսներն ալ ետևեն):

ՋԻՆՎՈՐ ՄԸ.— Ուրեմն ես ալ կերթամ ձեր մատնությանը նորայր իշխանին իմաց տալու:

ՎԱՋԵ.— Զորականք, թո՛ղ մեռնի այդ ժպիրճ մատնիչը:

ՋՈՐԱԿԱՆՔ.— (սուր ի ձեռին վրան նարձակելով և ներս մղելով) *Մեռի՛ր, մեռի՛ր:*

ՋԻՆՎՈՐՔ.— (ներսեն) *Ապզուրաց Տիշներ...* (կռվելով) *Ա՜հ...* (կը մեռնի):

ՎԱՉԵ.— *Ի՞նչ լրիւք, տղեկ մը սպաննեցի՛ք...*

ՋՈՐԱԿԱՆՔ.— (գալով) *Այո՛, զորապետ...*

ՎԱՉԵ.— *Կեցցե՛ք, քաջ զորականք, դուք որ պիտցաք ձեր կենաց արժեքը՝ երջանիկ պիտի ըլլաք... Օ՜ն, խոհեմութեան և քաջութեան...* (երթալով) *Երթանք բաղրին դռները թշնամեաց առջև բանալու և թշնամեաց ու կենաց դիրկը նետուելու:*

Տեսիլ Բ

ՎԱՂԵՆԱԿ (միևնակ՝ մյուս կողմեն գալով)

Երանի՜ քեզ, Սեբաստիա, որ դեռ Լանկթիմուրի երկաթներուն տակ չինկար... Երանի՜ կըսեմ, որ քու հպարտ վրա մատնիչ չես անուցեր... Ո՜հ, իմիմ քեզ վայրկյան մը միայն բացվիլին հանկարծ այս սև աչքերս և տեսնելի անգութ Թաթարաց արյամբը կարմրած դաշտերդ... երբ հաղթության բառը քու խրոխտ պարապագդ վրա որոտա... Ա՜հ, երկի՛նք, դու զորացո՛ւր ինձ Հայուն բազուկը և մեղմացուր անգութ ինձնամփոփն սիրտս... Գիտե՛ն, գիտե՛ն. միթե չպատանեցա՞ն կայծակնևոր զորս անդադար տարտարոսե Հայաստանի սևեռ ճակտին ծածանիցիր... Ա՜հ, նեն Լանկթիմուր իր արյունոտ ոտքերը Սեբաստիոյ հողույն վրա դնե՝ Սեբաստիա Հայաստանի սև գերեզմանը պիտի ըլլա... Ո՜վ երկինք, նեն Հայաստանի

Համար վերջին կայծակ մը պատրաստեր ես, պի՛ս պարկ, պի՛ս... Հայե՛ր, դիս ալ ձեր բանակին մեջ առնք, ես ալ սիրտ ու սուր ունիմ, կուգամ մեռնիլ և արյունս Հայաստանի երակացը տալ (աւտեռամեռկ վազելու կըլլա)։

Տեսիլ Գ

ՎԱՂԵՆԱԿ և ՆԱԶԵՆԻԿ

ՆԱԶԵՆԻԿ.— (ճաճկարած դիմավորելով և գրկելով) *Ո՜հ, մեռնի՛լ կըսես, Վաղենակ...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Նազենիկ... Դու իմ գիրկս ես դարձյալ...*

ՆԱԶԵՆԻԿ.— *Այո՛, միշտ քու գիրկդ և ալ չի պիտի զատվիմ... Ես ալ քեզի հետ պիտի մեռնիմ, քու քաղցր գրկացդ մեջ պիտի տամ վերջին շունչս...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Դու մեռնիս, Նազենիկ, այսպես գեղեցիկ և երիտասարդ... Վա՛յ քեզ, դողտրիկ շուշան, քու պարնանդ մեջ խորշակ մը եղավ քեզի Վաղենակ, քու արևդ ծածկող սև ամպ մը եղավ իր սերը... Այնպես չէ՞, Նազենիկ... Ո՜հ, կարծեմ կուլա՜ս... վասնզի ջերմ կաթիլներ կզգամ արտիս վրա։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Այո՛, կուլամ, Վաղենակ, մեր ցավալի վիճակին վրա կուլամ... Կողբամ Հայը, որ երբեք չի վայելեր ընտանեկան սեր և խաղաղություն... Մինչդեռ այս ժամուս վարդենյաց մեջ մեկու մը գիրկը կը ժպտի, հետևյալ ժամուն սգալի նոճիի տակ նստած՝ տխուր կորստյան մը վրա կուլա... Փոթորիկ մը դարձավ Հայաստան... Մեկ կողմեն անողորմ թշնամին իր սուրը և մյուս կողմեն անհագ սովը իր սև թևերը տարածած՝ միշտ մա՜հ կսպառնան Հայոց...*

Մա՜հ... Մա՜հ... և բարեբար ձայն մը չը գոչեր՝ «ա՛լ բավական է»։ Վաղենա՜կ, սիրելի՜ս, մենք ևս հոս բանտի մը մեջ ենք. քիչ առեներն պիտի գան արյունռուշտ դահիճներ և մեզ խողխողելով՝ մեր դիակներովը հաղթության կոթողներ պիտի կառուցանեն և մեր արյամբը հաղթության պիտի գրեն Սեբաստիո մեծին փլատակացը վրա...

ՎԱՂԵՆԱԿ.— *Ա՜հ, սոսկալի է այդ... Եվ այն առեն նախաստաւից պիտի ըլլան ամուսնույդ ոսկորները, եղե սուր ի ձևոին չը մեռնի... Նազենիկ, երբ այս դիշեր անկողնույն մեջ անքուն՝ հայրենիքս, քեզ և զավակս կը մտածեի, հանկարծ սպառնալից ձայն մը որոտաց ականջիս. «Արի՛, գո՛ւ ալ դենք առ և կավե, ինչպես որ քու եղբարք կը կոչին»... Հանկարծ ապրատիահար ցատկեցի, մոռցա Հորդ և քու պաղատանքդ և զավկիս ողբը, դուրս նետվեցա խևցույն և իսուր խավարին մեջ թշնամի փնտռեցի այն ձայնին գտնելու համար։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Եվ չը մտածեցի՞ր անգամ մը, որ երբ ամուսինդ և զավակդ դքեզ չը գտնեն իրենց քով՝ ի՞նչ սոսկալի ժամ մը պիտի ըլլա այն...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Նազենիկ, դու որ այնչափ սիրելի ևս ինծի, քու ձայնդ ավելի ազդու էր այն ձայնը... Կարծես ինձ մըրիկ մ'էր, որ դիս հատաջ մղեց։*

ՆԱԶԵՆԻԿ.— *Վաղենակ, ահա արևն իր վարդե ճառագայթները կը սփռե Հորիզոնին վրա. Հիմա վարդանույշ արթնցած՝ Հայրն ու մայրը կը փնտռեն, երթա՛նք, գոմ ունեցիր այն անմեղին վրա...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Երկի՛նք, դու ալ նույնպես գոմ ունեցիր Հայաս-*

տանին վրա... (կը մեկնին... Հնուհն պատերազմի փողեր կը հնչվին):

Տեսիլ Դ

ՆՈՐԱՅՐ, ՋԻՆՎՈՐՔ

ՆՈՐԱՅՐ.— Ահա, պատերազմի պատրաստության փողերը կը հնչեն... վա՜յ անոնց՝ որոնց սրտին հրճվանք չպզեր այս փողերուն ձայնը... Ուրախացե՛ք, քա՛ջ զորականք, պիտի տեսնեք, որ քիչ առենն Լանկիմուր Սերաստիս խրոխտ պարապազը տակին ամրհատար պիտի անցի... Պիտի հիանա բոլոր Ասիա, թե ի՛նչպես Սերաստիա Լանկիմուրի սպառնացայտ նայվածքին դեմ չը դողաց.—միութեամբ և քաջութեամբ—միութեան, միութեան է ապրի մը վենքն ու կյանքը... Հայե՛ր, երկնից երեսը հույս չի փնտռենք, մեր հույսը ինդ ըլլա մեր սիրտը և մեր սուրը... Ե՛լ, ե՛լ, արև, այսօր դու հորիզոնը իջած տեսնես՝ կամ Հայաստան բեզի հետ մեկտեղ վերելման պիտի իջնա և կամ յուր ստորը պիշերային աստղին աստղին հետ պիտի շողշողա, բայց ես տարակույս չունիմ, որ վերջինը պիտի ըլլա, այո՛, Հայաստանի աստղը պիտի փայլի, մինչդեռ ամեն Հայ՝ միաբան վենք առեր է և վենքն իր ձեռացը մեջ չը դողար... Այո՛, պիտի հաղթանակե Սերաստիա... Ո՛վ Սերաստուհիք, դուինյա պատկներ պատրաստեցեք ձեր վինվորական եղբարցը:

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Դո՞ւ ես, Նորայր, Սերաստիա իշխանը...

ՆՈՐԱՅՐ.— Այո՛... քաջդ պատգամավոր:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Լանկիմուր տիեզերակալ՝ Արքայն Թաթարաց, որ բոլոր Ասիան նվաճեց, տեսնելով Սերաստացվոց անօգուտ ընդդիմակալությունը, կերդնու յերկինս, որ եթե Սերաստիա անձնատուր ըլլա, երբեք սուր չի պիտի շոպացնի Հայոց գլխուն վրա[3]):

ՆՈՐԱՅՐ.— Իսկ եթե անձնատուր չըլլա՞:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Թե բոլոր բնակիչները անխնա սրո ճարակ պիտի մատնե և թե Սերաստիան հիմնահատակ պիտի կործանե...

ՆՈՐԱՅՐ.— Ուրեմն եթե այդչափ վեհանձն է Լանկիմուր, ինչ գենքով հաղթանակի, փոխանակ սուտ երդումներով աչք շլացնելու. Սերաստիա համար նախամեծար է պարտյալ մեռնիլ, քան թե անձնատուր...

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Մտածե՛ Նորայր, հետին զղջումն անօգուտ է... Դարձո՛ւր աչքդ Հայաստանի ավերակացը վրա, Սերաստիայեն ավելի ամրապարիսպ քաղաքաց բնակիչներն ալ այդպես ըսին, բայց երբոր ալ իրենց քաղաքաց վերատակացը տակ թաղվեցան անշշունջ...

ՆՈՐԱՅՐ.— Ո՛չ, ո՛չ, Լանկիմուր չի կործանեց այն քաղաքները, այլ Լանկիմուրեն զորավոր ոգի մը՝ անմխիթարը, որ Հայաստանի սիրտը մարեց... Ո՛վ պատգամավոր, մի՛ կարծեր, որ Հայերը քաջ չեն. եթե Հայերը իրենց քաջութեանը չափ միութեան ալ ունենային, Լանկիմուրը

չը պիտի Համարձակի իրենց երկրին մէջ ոտք կոխելու անգամ և այն երկիրն ավերել մաաբներուս:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Ի՛շխան, հիմա Հայութիւնը ողբալու ժամանակ չէ, այլ ազատելու. գիտցի՛ր որ զոռով անափառութեան մը կը զոհես Սեբաստիա մէջ ապաստանած Հայութեան մեկ մասը... Մտածե՛... Դու ծերունի մ'ես և մեկ ոտքդ արդեն գերեզման իջած է, իսկ անդին անթիվ Հայեր կան, զորս դու անխոհեմութեամբ կորստյան վէմ մը եղբը կը Թողուս:

ՆՈՐԱՅՐ.— Ո՛վ պատգամավոր, այնչափ ոգեւ չէ Նորայր, որ իր ազգը մատնի՝ վատահելով Հանկիմիսարի մը երդմանը, որ ո՛չ խիղճ ունի և ո՛չ ալ դուխ... Գնա՛ բան՛ ինքնակալիդ, որ Սեբաստիա պատրաստ է իր ծարավը Հագեցնելու... Եթե այդչափ հզոր է ինքը, ի՞նչ փոյթ կ'ընկալի Սեբաստիան կործանելով:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Հարկ է որ տկարը խոնարհի հզորին:

ՆՈՐԱՅՐ.— Եվ վատ է այն, որ սուր ունի և ինքզինքը չը պաշտպաններ փոռասների մը անիրաւ պահանջմանց դեմ, չը մեռնիր անարգ գերի ըլլալու համար:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Բայց գիտցի՛ր, որ եթե աշխարհակալ Հանկիմիսար իր ոտքերը Սեբաստիա հողույն վրա դնե, քար քարի վրա չի պիտի Թողու:

ՆՈՐԱՅՐ.— Այլ ավերակները սեւ տեղ կարմիրով կը ներկվին:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Հայկական շունչ մ'անգամ չի պիտի Թողու:

ՆՈՐԱՅՐ.— Իսկ Հայոց դիակները չեն կարմիրիր:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— Քանի որ մեռնիլ կը փափաքիք, ապե-

բախտ Հայկը, ուրեմն մահվան պատրաստվեցեք... Քիչ առնեն պիտի տեսնեք, որ Հաղթականն Լանկթիմուր Սեբաստիա կործանյալ պարսպացը վրայեն իր վրեժխնդիր սուրը տարածած մահ կսպառնա...

ՆՈՐԱՅՐ.— *Ո՞վ պատգամավոր, գիտցիր որ Սեբաստացիք երբեք անձնատուր չեն ըլլար, եթե մեկ անձ մնա... կը մեռնին՝ վատ չասրելու համար։*

ՋՈՐԱԿԱՆՔ.— *Այո՛, պատերա՛զմ... Կեցցե՛ Հայաստան։*

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ.— *Մի՛ խրոխտաբ այսպես, Սեբաստացիք, քիչ առնեն պիտի վայելեք* (սպառնալից կը հեռանա)։

ՆՈՐԱՅՐ.— *Կը տեսնե՞ք, քա՛ջ Հայեր, որ Պարսկաստան և Ասորեստան նվաճող սոսկալի բանակը ձեր մատաղ տարի նետերեն դարհուրած՝ դեսպան կը ղրկե, որ անձնատուր ըլլաք... Քաջալերվեցե՛ք, Հայե՛ր, եթե հաղթենք՝ Սեբաստիա Հայաստանի երկրորդ խանձարուրքը պիտի ըլլա, և Հայաստան դարձյալ իր կիսակործան ավերակացը մեջեն անեղկյուղ իր դռոդ գլուխը պիտի բարձրացնե... Ուրեմն կեցցե՛ն Հայք և կեցցե՛ Հայաստան...*

ՋՈՐԱԿԱՆՔ.— *Կեցցե՛ն Հայք և կեցցե՛ Հայաստան...* (հանկարծ աղմուկ մը կելնե)։

ՆՈՐԱՅՐ.— *Ի՞նչ ձայներ են սոսնք...* (ժողովուրդը սարսափած խոռեն կը վազե) *Ի՞նչ պատահեցավ... Ինչո՞ւ սարսափահար կը փախչիք։*

ԺՈՂՈՎՈՒՐԴ.—*Մահնությո՛ւն... Մահնությո՛ւն...*[1]) *Լանկթիմուր Սեբաստիան կոխեց։*

ՆՈՐԱՅՐ.— *Սոսկալի հարվա՛ծ...* (դողդոջուն ձվալելու կըլլա, բայց հանկարծ կսթափի) *Օ՛ն անդր... Քա՛ջ զորականք դեռ սուրերնիս չէ փշրած ձեռքներուս մեջ... Համ՝*

օ՜ն, մնացննք և մնոնինք՝ դարձյալ գոչելով «կեցցե՜ Հայաստան...»

ՋՈՐԱԿԱՆՔ.— Կեցցե՜ Հայաստան... (առաջարամբերկ կը սկսանան):

ՋԱՅՆԵՐ.— (դրսեն) Կեցցե՜ Լանկթիմուր:

Տեսիլ Զ

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ, ՋԻՆՎՈՐՔ, Հետո ՋԱՐՄԱՋԱՆ

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Քաջ զորականք, ահա ձեզի արյան ասպարեզ մը... Կատապի վտրերու նման հառաջ նետվեցեք, ահա նոր զլուխներ ձեր սուրերուն կսպասեն. երբեք մի՛ պիար, զարկե՛ք, մի՛շտ զարկեք. ձեր այսօրվան զբոսանքը թող այս ըլլա. եթե հոգնելով ծարավիք՝ ծարավնիդ հագեցնելու համար գոնէ նոյնուղ արյունը խմեցե՛ք... Ինչ-վան երկու ձեզի ժամանակ կուտամ. եթե երկուքին Հայ մը տեսնեմ՝ վա՜յ ձեզի... եթե գտնեմ ձեր մեջեն մեկը, որուն սրեն արյուն չը կաթիր՝ վա՜յ անոր... Տարէ՛ օ՜ն յատպարեզ, կրակ, կայծակ, վա՜յ և մա՛յ թափեցեք Հայոց գլխուն... (զորքերը աղաղակներ կը վազեն):

ՋԱՐՄԱՋԱՆ ԵՎ ՋՈՐՔ.—(դրսեն) *Կեցցե՜ Լանկթիմուր, կործանի՜ Հայաստան* (տեսարանը կուզան):

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Կեցցե՜ս արիդ զորավար Թաթարաց, դու որ միշտ ինքնակալիդ կամակատար գտնվեցար, դու որ քու քաջութիւններովդ Լանկթիմուրի ձակտին փառաց դափնիներն ավելցուցիր:

ՋԱՐՄԱՋԱՆ.— Քաջդ ինքնակալ, եթե քաջութիւն գործեց Ջարմաջան տիեզերատարած Լանկթիմուրի անվամբ

գործեց, անոր նվիրած սրովը Բշնամին գոգացուց և անոր ճաճանչավոր արևուն մեկ հառագայթովը ինքը կյանքը վայելեց... Երանի կուտամ ձեզ, Թաթարք, որ Լանկթիմուրի նման թագավոր մը ունեցաք, որ իրեն և ձեր անունը բոլոր ազգաց սրտերուն խորերը սոսկումով տպավորեց, որ իրենց և ձեր գորությունը մեծամեծ աշխարհաց փլատակացը վրա արյան հեղեղներով հիշատակեց, զոր ժամանակին երկաթյա ձեռքերը չի պիտի կարենան ջնջել. ահա, սատնդազարդ երկինք անգամ նախանձելով ձեր ինքնակալին կրած թագին վրա, կը սպա, որուն շողշողուն ակունքն իր Հաղթահարած ազգերուն ասպերն են, զոր նորը Համիշատակեց բաջությամբ:

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Քա՛ջդ Զարմագան, կը լսե՞ս այս ողբաձայն հեծեծանքները, այս ալ Հայաստանի վերջին Տոռչանքն է, և գարձյալ Լանկթիմուրի սիեկերակալ ձեռքն է, որ անոր արևը կը ծածկե:

ՋԱՐՄԱՋԱՆ.— Ո՛վ խնդճ Սերասատացիք, ինչո՞ւ այդպես ողբերով երկինքը կամարը կը թնդացնեք, զուր որ քիչ մը Հառաջ կը խրոխտայիք Լանկթիմուրի մը դեմ... զուր որ պարսպաց նեռնն նախատինք կը թափեիք... Ո՛վ կատաղություն, Լանկթիմուրը նախատե՛լ...

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Արյո՜ւն... արյուն թող թափվի և Լանկթիմուրի ու բոլոր Թաթարաց վրեժխնդրության ոգին թող արյամբ Հագենա. ահանեն, թե միայն վայրկյան մը կրնա՞ն Լանկթիմուրի դեմ խրոխտալ, գիտնան, թե քանի որ Լանկթիմուր աշխարհի վրա կը շնչե՝ բոլոր թագավորաց գահերուն մեկ ոտքն անդունդի մը վրա կը նայի... Մի՛ պարծենաք ձեր փառքին վրա, ո՛վ Թագավորք,

վանդի բանի որ ողջ եմ՝ ես՝ այդ գաղը ձեր գազազը պիտի ըլլա. մի՛ խրոխտաք, վանդի պիտի տեսնեք, որ ձեր ատող կարծած բախտը ատուկ մ՚է եղեր, որ պիտի սատի, խավարի... Ինչպես որ շատերուն Հանդիսատես եղա և Տրճվեցա... Ողբա՛ և դու ալ, Սևբատիա, որ իմ սիրտս խայտա... Լա՛ց որ իմ սիրտս զովանա... վանդի քու կարողութենեդ վեր Հանդգնեցար... Քաջդ Զարմանդան, ի՞նչ կրնե Հայոց ուրացյալ գունդը...

ՋԱՐՄԱՋԱՆ.— Քաղքին գոնեւուն Հակազդյուն կրնե, քա՛չդ ինքնակալ:

ՀԱՆԿԻՄՈՒՐ.— Քեզի քը պատմիրեմ որ երբեք չը վատահիս այն մարդոց, վանդի այն, որ իր բնիկ ազգը կը մատնե՝ անշուշտ օտար ազգ մ՚ալ կը մատնե... Թող բոլորն ալ ջարդվին և դու գնա միհակ իրենց զորապետը շղթայակապ Հոս բեր... Կրկին պատմիրե զորաց, որ Հաջողին առանց վերը մը տալու Սևբատիո իշխանը ձերբակալ բնելով ինձի բերել...

ՋԱՐՄԱՋԱՆ.— Կը Հնազանդիմ, վեՀափա՛ռ տեր:

Տեսիլ Է

ՀԱՆԿԻՄՈՒՐ (միճակ), ԹԻԿՆԱՊԱՀ

Ահա կակսին պիակաց բլուրներ ձևանալ և արյան գետեր մոնչմամբ սահիլ... Լանկիմուր, ա՛լ բավական արյուն թափեցիր, բոլոր աշխարՀ արյան ջրՀեղեղ մը զարձավ... Բայց դեռ սրտիս խորը այնպիսի կրակ մը կը վառի, կը բորբոքի, զոր այսչափ արյուն չը կրցան մարել... Փառասիրություններ «բալե՛, դեռ բալե» կը

մոմոա ականջիս և ոսքերուս առակ արյունանիկ ծաղիկներ, թագեր սիրելով, կը ցցուին ինծի աշխարհիս ծայրը ոսկեղեն լերան մը գագաթը ինկնքակալ պահ մը, և սիրտս թևավորյալ արյան ծովերու վրայեն առնելով կուգի ծուխել հոն, հոն՝ ուր դեռ չէ կոխած մահկանացուի ոտքը... Եվ այն առեն երկինք և երկիր պիտի հիանան, երբ Լանկթիմուր իր ձեռքը այն գահուն վրա դնե... Իր կյանքը այն առեն փառաց արև մը պիտի ըլլա և իր դափնեզարդ ճակատը միայն մահվան առջև պիտի խոնարհի... Անիծյալ գերեզման, որ գերեցիկ երազի մը արքունության նման թագակիրը կը ոտևկնե... Մի՛ մոռնար ինծի, ո՛վ մահ, մինչև որ ես այս փառաց կատարը բարձրանամ և այն առեն իմ անհուն դժնեության արյամբը կշտացիր։

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ, ՎԱՋՑ, ՋԱՐՄԱՋԱՆ

ՎԱՋՑ.— Ո՞վ մնծդ ինքնակալ, այս երկաթի շղթանե՞րն են արևմն իմ վարձքս, ասո՞նք են իմ դափնիներս։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Ի՞նչ ըսել կուզես, զորապետ, կը կարծե՞ս թե առեց ավելի վարձքի մը արժանի ըլլա մառնիչ մը, կը կարծե՞ս թե այնչափ անմիտ ըլլա Լանկթիմուր, որ մառնիչ մը վարձատրե... Ո՛չ, ո՛չ Լանկթիմուր երբեք վատաբար և անիրավ չը գործե։

ՎԱՋՑ.— Եվ ինչո՞ւ վարձք խոստանալով, իր երդմանը դեմ գործեց։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Ո՛չ... Բնավ Լանկթիմուր իր բուռ երդումն

ալ չը դժվեր... Այո՛, քիչ վարձք խոստացա, այլ ավելի արժան համարեցի երկաթեն շղթաներով վարձատրել մատնությունդ՝ ապահով ըլլալով, որ բոլոր աշխարհ այս պատապարտության իրավունք պիտի ատ:

ՋԱՐՄԱՋԱՆ.— Այո՛ և մինչև անգամ մահու արժանի է այն, որ իր շահուն իր եղբայրքը կը մատնե վատաբար:

ՎԱՋԸ.— Այդպես չէ՛, քաջ զորապետ, լավ գիտեի, որ մեծն Հանկիմուր պիտի կործանեն Սեբաստիան, ես ալ փոխանակ զուր տեղը իր արյուն ճարակ ըլլալու, նախամեծար համարեցի փութացնել կործանումն և ատով ազատել կյանքս:

ՀԱՆԿԻՄՈՒՐ.— Ուրեմն, վա՛յ քեզի, որ կյանքդ հայրենիքդ ավելի կը սիրես... Ինչ ես դու աշխարհիս վրա. հրեշ մը, որուն սրտին խորերը մարեր է հայրենասիրության կայծը... Նախատինք քեզի, որ սուր կը կրես ձեռքիդ մեջ և չես ուզեր զայն ի սեր հայրենյաց շարժել... Ուրեմն ինչպես հանգիստ պիտի ըլլայիր դու, երբ վարձատրեի զրկեր, մինչդեռ բոլորտիքդ բյուրավոր արհնակոցող դիակները դիզվեր են... Ինչպես դու կյանքդ չի պիտի խռովեր եղբորդ հեծեծանքներեն և ատ քեզ ուղղած անեծքներեն, մինչդեռ դու անոնց կորստեր պատճառեիր վատաբար.— ա՜հ, այսչափ ագռեր նվաճեցի ես և չը տեսա Հայեն ուրիշ ապտ մը, որուն մեջ գոնվին ուրացող մատնիչներ... Դուք շուտ կը կործանիք Հայեր, մինչդեռ այսպես անմխաբան եք:

ՎԱՋԸ.— Ո՛վ մեծդ ինքնակալ, եթե մատնեցի հայրենիքս՝ դու փառքդ ավելցուցի, դու վրեժխնդրությունդ հագեցուցի... Ուրեմն ինչպե՞ս արժան կը համարիս նախա-

տանոք վարձատրել պիտ, նա որ քու հպարտությունդ հայրենյացս փրկութենեն ավելի նախամեծար համարեցի... Վա՛յ քեզ, վաչե՛, որ ինչ որ ալ գործես, բախտը խոժոռ կը նայի քեզ:

ՀԱՆԿԻՄՈՒՐ.— *Ո՛վ ուրացող, երբեք Հանկիմուրեն հատուցում մի՛ հուսար, թեպետև քաջն Զարմապանի բռնած պես մահվան կը դատապարտես քեզ իրավունքը, սակայն ես կը ներեմ քեզի... Կը շնորհեմ կյանքդ, վասընդի վրեժխնդրությանս գործիքը եղար դու:*

ՎԱՉԸ.— *Ո՜հ, գոնե հրաման բրև, որ այս շղթաները բակվին:*

ՀԱՆԿԻՄՈՒՐ.— *Երե՛ք... Այդպես շղթայակապ թափառե գործած ավերակներուդ վրա, քանի որ եղբարցդ դիակները շղթաներուդ շառաչյունը լսեն, նախատինք կարդան քեզ իրենց գերեզմաններուն խորերեն... Թափառե՛ եղբարցդ արյամբը կարմրած դաշտերուն վրա, մինչև որ գոնեա քու գերեզմանդ ալ... Մի՛ լսեր, ապդե՛ր, ին անիրավ է Հանկիմուր, այո՛, անզոր է, բայց կը ճանչնա իրավունք* (կր մեկնի.— մյուսներն ալ նոնին):

Տեսիլ Թ

ՎԱՉԸ (առաձին)

Ի՞նչ լրբի նա... Ահա այս շղթաներն են եղեր մատնության վարձքը և կամ հավիտենական նախատինքս... Ես որ փառաց գահերեներ կերևակայեի, Հանկիմուր նախատանաց փուշերով պսակեց ճակատս... Ո՜հ, ո՞ւր փախչիմ հայրենյացս արյունվա ծոցեն... Ուր որ ալ երթամ՝ կայծակը գլխուս վերև, անդունդ՝ ոտիցս ներքև

և դիմացս՝ միշտ Հայաստանի սպառնալիք նայվածքը... Դադրեցե՛ք, աղեկտուր ձայներ, ո՜հ, մինչև ե՞րբ կանիծեք, դիս, հայրենյաց դահիճս... Կարծես թե Սեբաստիա պարիսպները վրաս պիտի փլին՝ անխնա ջախջախելու համար դիս... Ա՜հ, ո՞վ պիտի քակե այս շղթաները, որ ազատ փախչիմ... Ո՛չ ոք՝ ամենքն ալ կը նախատեն դիս... Ուրեմն ինձմե՛ պիտի քակվին այս շղթաները, մինչև որ գլուխս չը ջախջախեն... Ո՜վ անիծյալ գիշեր, ինչո՞ւ սրտիս խորն արձամփրք չը թափեցիր, երբ միութիւնդ տակ կը խորհեի այս վատ մտածումը... Ա՜հ, «անե՜ծք... վրեժ...» կը մռնչեն ականջիս, երկինք և երկիր, և դժոխք ծափ զարնելով դիս ծաղր կընեն... Խրնդա՛, ո՜վ Սանդարամետ[5]), որ վաչեն քու ծուզակդ գլուխս... խնդա՛, որ քու հպարտութեանդ սուրն ըրիր դիս:

Տեսիլ Ե

ՎԱՉԵ և ՆԵՐՍԵՀ

ՆԵՐՍԵՀ.— (դրսեն) *Օգնութի՜ւն... Օգնութի՜ւն...*

ՎԱՉԵ.— (աւազափած) *Ո՞վ երկինք... Ի՞նչ կը լսեմ... Հոս ձայնն է, կարծեմ կը խողխողեն պինքը...*

ՆԵՐՍԵՀ.— (դրսեն) *Ա՜հ...* (վիրավորյալ տեսարանը կուգա) *Սիրաս... Ջարնվեցա առանց զարնելու...*

ՎԱՉԵ.— *Այո՛, հայրս է... Ո՜հ, արյունը սրտեն կը վազե... Ո՞ւր փախչիմ, բացվեցե՛ք անդո՛նդք, և դիս ձեր խորութեանը և խաւարին մեջ ծածկեցեք...*

ՆԵՐՍԵՀ.— (զայն տեսնելով զարմացմամբ) *Ի՞նչ կը տեսնեմ... Վաչե հոս, շղթայակապ... Միթե սրդար երկի՞նք*

շղթայեր են պինքը... Ո՜հ, հեռացի՛ր, ինչո՞ւ կուգաս վերջին վայրկյանս խռովելու, անօրեն զավակ...

ՎԱՋԵ.— Ա՜հ, կը սարսափեցնես, հա՛յր իմ, այդպես ակնապիշ մի՛ նայիր աչացս մեջ... Ծածկի՛, ծածկի՛ արյունահոս վերքդ։

ՆԵՐՍԵՀ.— Ա՛ռ, ալևոր հորդ արյունն ալ առ և կշտացիր, վա՛մպիր մատնիչ։

ՎԱՋԵ.— Ո՜հ, պիտի՞ւն, հայր իմ, պիտի՞ւն...

ՆԵՐՍԵՀ.— Ո՛չ, ո՛չ, քեզի համար չկա պիտի՞ւն, այլ...

ՎԱՋԵ.— (ի ծուռ պաղատանոք) Հա՛յր իմ...

ՆԵՐՍԵՀ.— Անի՜ծք... Անի՜ծք... (բավալգուր կիյնա և կը մեռնի)։

ՎԱՋԵ.— (սարսափած) Ա՜հ... (վարագույրը կիջնե)։

(ՎԵՐՋ Բ ԱՐԱՐՎԱԾԻՆ)

Ա ՐԱՐՎԱԾ Գ

ՍԵՎ ՀՈՂԵՐ

Սև հողեր դաշտը.— Ադիճ ամպին ցրված դիակներ.— Աչեր դեռ ճոր հորիզոնին վեր կը բարձրանա:

Տեսիլ Ա

ՆՐԱՆՅԱԿ.— (վառազույը բացված առնն առանձին, հերարձակ. զավկին դիակաև Հով ծնրադրած կոպա, հետո կելնե).

Գնա՛ց արտասվալոր թևերով սև դիշերը, և ահա արևը վարդագոյն կսկսի իր լույսը Հայոց աշխարհի ավերակացը վրա սփռել... Ամեն տեղ սգաշապա լռութիւն մը կը տիրե և միայն մերթ ընդ մերթ խղդուկ հառաչանքներ սև նոճիներուն մեջեն սահելով այս լռութիւնը կը վրդովեն... Կը նիրհե ահա Հայաստան շնչասպառ վիրաւորեալ տակ և հուսահատ կսպասավե... (առ դիակը) Ա՛խ, որդյակ, երթ դու ալ կենդանի եղած ըլլայիր, քու կյանքդ միայն հայրենյացդ աղեկտուր վիճակին վրա սոսկալով պիտի մաշեր... Դու ալ ամոթահար պիտի պար-

հուրեիր, երբ տեսնեիր, որ Համայն Հայերը կանիծեն քու հայրդ, հայրդ՝ որ Հայաստանի գերեզմանը փորեց, հայրդ՝ որ զքեզ այսպես սառած Սև Հողերու վրա տարածեց... երկինք այնպես վճռեր է, որ դեռ մորդ մեկ ժպիտ մը չը ցցուցած՝ անիծյալ հայրդ այսպես գրեզ գերեզման գլորե... Ուրեմն դու ալ անիծե՛ այն՝ որ հայրդ և միանգամայն դահիճդ եղավ:

Տեսիլ Ը

ԵՐԱՆՅԱԿ և ՎԱՉԵ

ՎԱՉԵ.— (ցնորած գալով) *Ո՜հ, դարձյալ այս Սև Հողերը... Թո՛ղ զիս, թո՛ղ զիս, անողոք սոսկեր, թո՛ղ որ վայրկյան մը ազատ ըլլամ սպառնալից նայվածքեդ, թո՛ղ որ քիչ մը հանդչիմ... Այլ դու մարիկ չես ըլլեր, արյունոտ ձեռնամարդ մարդերդ ճակտիդ վրա ցցած դիս խողխողել կսպառնաս... Ո՜հ, մի՛ սրակեր ճակտիս վերքերեդ հոսող արյուներ... Ա՜հ, կը սարսափիմ ես քեզնե...* (զարհուրած վազելու առնե երանյակի կր դիպչի սառսափած) *Երանյա՜կ... Ջավակս... Ա՜հ...* (ձեռքերով աչքերը կր ծածկե):

ԵՐԱՆՅԱԿ.— (նույնպես սարսափած ոտի ելնելով) *Վաչե՜... Հեռացի՛ր սակե, դահի՛ճ, մի՛ վրդովեր թշվառ մոր մը խղճալի օրհասը... Մի՛ մտանար գալիքի դիակին քով, որուն գալհահար շրթանց վրա անեծք կր փայլատակեն:*

ՎԱՉԵ.— *Դարձյա՛լ անեծք... Անշունչ դիակներն անգամ կանիծեն դիս... Ո՜հ, գավակս... Դու գոնե մի՛ անիծեր հայ-*

բզդ, դու պետք պիտի իր վրա, վտանգի սրշտի մեղապարտ ըլլա, դարձյալ քու հայրդ է։

ԵՐԱՆՅԱԿ.— *Ասկա՛ զքեզ հայր կոչելու, մատնի՛չ... Փախիր հայրենյացդ արյունահոս ծոցեն... Ահա Հայաստանի հառաչանքները՝ երկնից երեսը թանձրացած այս սև ամպերը կայծակներ կսպառնան արյունոտ ճակտիդ... Երբ շղթաներդ կը շառաչեն՝ դժոխք ծափ զարնելով կը խայտան և երախաբաց երկնից մեկ ակնարկին կսպառնան, որ իսկույն լափեն զքեզ... Փախի՛ր...*

ՎԱՉԵ.— *Ո՛ւր փախչիմ... Ազատ չեմ ես, մերկն մղված սև ամպ մ'եմ, հեռ կառաչեցնողին պիտ քայլերս, ուր որ կը մղի Հայաստանի վրեժխնդիր սովերը. եթե անդունդներու հատակն ալ գտնվիլեմ՝ դարձյալ եհաևս պիտի գա և «անե՛ծք» պիտի գոռա ականջիս... Ո՛հ, ո՛ւր ապաստանիմ... Անմեղ զավկի մը զիրկն ունեի մինակ ապաստանարան, նա ալ զալկահար տարտծվեր է... Եթե կենդանի ըլլար, անշուշտ նա ալ նախատանոք պիտ իր զրկեն նա պիտի մղեր, նա ալ պիտ իրեն Հայր չի պիտի ընդուներ... վտանգի հայրենադրուժ մ'եմ ես։*

ԵՐԱՆՅԱԿ.— *Վայ՛ե, երբեք աշխարհի վրա ապաստանարան մի՛ գտնաես, ուր որ ալ երթաս միշտ աչացդ առջևեն պիտի տահին եղբարցդ խափած արյան հեղեղները, միայն դժոխք զքեզ կընդունի, ուր Հավիտենական տառապանք կսպասեն քեզ, փոխանակ այն մատնության, որով ոչրատ Հայաստան, որով նվաղեցար բոլորովին կարմիր Հայաստանի հուտ լուսապատ աստղը... Ծնու՛նդ դժոխոց, չը մտածեցի՛ր անգամ մը, թե ի՛նչ կը գործես... Միթե չը բերի՛ր մեկ մը վտանգն ու Միհրուժանը, որոնց*

մեկուն ճակատը փոխանակ Բապի՝ որպիսով պատկեցավ և մյուսին ճակատը՝ հրաշեկ շամփուրով... Եղո՜ւկ ինձի, որ անօրենի մը... մատնիչի մը կին ըլլալու բախտը և նախատինքն ունեցա...

ՎԱՉԵ.— *Երանյա՜կ... Ա՛լ հերիք նախատես վիա... Եթե կը տեսնես որ ձեռքերս շղթայակապ են, գիտցիր որ այս շղթաներն ալ դեռ կրնան պայտուքթս և վրեժս հագցնել. եթե գիտնամ որ երկինք վրաս պիտի փլին՝ զարձյա կը հարվածեմ զբնդ, մինչև որ քեզ ալ հողեսպառ ըլլս. Սև հողերուն վրա տարածեմ... Ալ չեմ տոկար մարդասպանութենն, քանի որ դժոխոց դառապարտյալ թշվառական մ'եմ արդեն... Դողա՛, դողա՛ ինձնե, Հայաստանի ժանտախտն եմ ես, Հայոց աշխարհին խորշակն եմ ես և դեռ կրնամ կենաց ծաղիկները խամրեցնել... Երանյակ, արդեն ես սիվ և պիշեր անքուն կը տանջվիմ, և դուս որ իմ կինս ես, դիս մխիթարելու տեղ՝ ամենեն ավելի դուս կը նախատես վիս:*

ԵՐԱՆՅԱԿ.— *Այո՛, ամենեն ավելի ես պետք է որ նախատեմ և անիծեմ զբնդ, վասնզի սիվ և պիշեր ավերակաց մեջ հնծող բուս մը ըրիր զիս... Թափե՛ վերջին սպառնալիքդ ալ իմ վրաս և զավկիս հետ զիս ալ խողխողե. օ՜ն, իմ արյունս ալ իմն եթե այնչափ արյուն չը կրցան բուս դժոխայեն սիրտդ զովացնել... Բայց դողա չերկնեց, ժանտա՛խտ<ը> Հայաստանի, վասնզի օր մը պիտի երևնա զերեզմանիդ և ոճրագործությանդ հաշիվը պիտի տաս Ամենակալին գահույքդ առջև... Այն զարհուրելյան փոքին գոչյունը[6]) այս արյան հեղեղներուն մեջտեղեն ավելի տոկալի պիտի ըլլա... Նախատե՜նք և անի՜ծք բեզի...*

ՎԱՉԻ.— Երանյակ... կը վայրացնես դիս, պիտի լա՞ս, ապա թե ոչ...

ԵՐԱՆՅԱԿ.— Չէ՛, չե՛մ վախնար քու սպառնալիքեդ և կը կրկնեմ դարձյալ. նախատի՞նք և անե՞ծք քեզի:

ՎԱՉԻ.— Ա՜հ, ալ չեմ կրնար կնոջ մը նախատանացն հանդուրժել (չղթաներով կնոջը վրա կը հարձակի կատաղաբար.—հանկարծ երկմիեն կայծակ մը սուսանալով վրան՝ թավալգոր կգգետնե զայն) երկնային վրեժխնդրությո՞ւն...

ԵՐԱՆՅԱԿ.— (սարսափած) Աստվա՞ծ իմ... Չըլլա որ երկինք դիս ալ կայծակնահար ընեն մատնիչի մը կինն ըլլալուս... վախչի՜մ... (դողով կը հեռանա.— պատկերը փոխվելով դժոխք կը ներկայանա, ուսկից սև ոգիներ կելլենե և վաչեի դիակը ի դժոխս կը հաշկռտեն.— պատկերը դարձյալ կիջնե):

Տեսիլ Գ

ՎԱՂՆԱԿ (վիրավոր)

Հայաստա՜ն... քաղցր հայրենիք... Իմ արյունս ալ ընդունի քու անձկալի դիրկդ... Որչափ սիրելի է ինձ այս մահը, երբ կզգամ, որ հայրենյացս հողերը կը ծծեն արյունս և դարձյալ հայրենյացս հողերը պիտի ծածկեն ոսկերքս... Արդյոք գերեզմանիս խորերը պիտի թափանցե՞ երբեք հուսալից ձայն մը. «Ցնծացե՛ք, սխուր ոսկերք վաղենակա, Հայոց ազատության արշալույսը ծագեցավ...»: Արդյոք դարձյալ պիտի վերականգնի՞ս, Հայաստան, ևթե ոչ մահարեր է վերջդ... Ասկալի կաս-

կած... Հայե՞ր, օ՜ն, օդնութեան հասնէք, չըլլա որ օրհասական ըլլա Հայաստան.— այլ Հայ մը չը պատասխաններ ձայնիս... Ամեն տեղ դիակ և ավերակ. անե՜ծք և վա՜յ այն վատին, որ հայրենիքը մատնեց: Եվ դուք, լսե՛նք Հայաստանյայց, արձագանք տվեք այս ձայնին և ետ լսեն այն վատները, որոնք իրենց եղբարցն արատավոքն ու արյամբը օտարներուն երջանկութեան գնել կը հանդգնին... Ինչո՞ւ ծնար այդպիսի որդիներ, Հայաստա՜ն, որոնք սուրերնիս ապերախտութեամբ քեզի դեմ դարձուցին՝ փոխանակ զքեզ պաշտելու և պաշտպանելու... Ա՜հ, ծնկներս կսկսին կթոտիլ, քիչ մը հանդչիմ հոս... Սրկի՛նք, միշտ նայվածքդ Հայաստանի վրա ետ ըլլա... (կը նստի.— ներսեն հետևյալ երգը կը լսվի, զոր Նապենիկ կերգե):

ՈՂԲԵՐԳ

Դժնյաց գիշերն անցավ ու լույս առևուն
Ծագեց կարմիր Հայաստանի սարերուն...
Դարձյալ մինակ գուրկ սիրելյացս գրկերեն,
Հնծող բուռ միայն ինձի ընկեր են:
Ո՜, դու, անգո՜ւր Սև հողեր,
Սիրելիս ծո՜ղդ ես պաղեր:
Ջնիյուռներեն երջանիկ մի խնդրեմ լուր...
Այլ անոնք ալ սաինն Ռովես տխուր, լուռ,
Ծաղկունք բոռմեր և լռեր է ալ սոխակ,
Մա՜ն կը հոսի, մա՜ն... Հայաստան ավերակ:
Ո՜ դու, անգուր Սև հողեր,
Սիրելիս ծո՜ղդ ես պաղեր:
Սրկի՛նք, գրա՛ չիս, տա՛ր գիս ի ծոց սիրելյաց.
Եվ կամ ցցո՛ւր իրենց դամբանն ազգզյաց.

Եվ թող հոն, հոն, ցամքին արցունքս ու արյուն,
Ո՜հ, հոն վերջ տամ կենացս սև օրերուն:
Ցցո՛ւր, անգութ Սև հողեր,
Իմ սիրելյացս դամբաններ:

ՎԱՂԵՆԱԿ.— Ի՞նչ քաղցր ձայն... Ասաված իմ, պիտի ճանչնամ ես այս ձայնը... Այս ձայնը քաղցրիկ հիշատակներ կը զարթուցանի սրտիս մեջ... Նազենիկիս ձայնն է... այո՛, անոր ձայնն է... (հանկարծ ոտքի կելլեն դողդոջուն) Նազենի՛կ... նկո՞ւր... Հո՛ս է վաղենակ... Հո՛ս...

Տեսիլ Դ

ՎԱՂԵՆԱԿ, ՆԱԶԵՆԻԿ

ՆԱԶԵՆԻԿ.— Երկի՛նք, մինչև ե՞րբ պիտի թափառիմ այսպես միայնակ ու արտասվալից. կամ սիրելյացս և կամ մահվան յուրտ դիրկը մղեցեք զիս:

ՎԱՂԵՆԱԿ.— Նազենիկ... Նազենիկ...

ՆԱԶԵՆԻԿ.— Ասավա՞ծ իմ... Ի՞նչ ձայն է այս, ո՞վ կը գոչի զիս...

ՎԱՂԵՆԱԿ.— Նազենիկ, նկո՛ւր... Հոս է վաղենակ...

ՆԱԶԵՆԻԿ.— (զայն տեսնելով և դեպի անոր վազելով) Վաղենա՛կ...

ՎԱՂԵՆԱԿ.— Նազենիկ... Դո՞ւ ես... Դարձյալ գրկացս մեջ կը դանեմ զքեզ, ես որ հուսահատ գերեզմանին սև հեղերքները կը թափառեի, ես որ զքեզ մեռած կը կարծեի... Ո՜հ, գրկի՛ զիս և կարոտիս առնենք, վասնզի քիչ ատենն դիակ մը պիտի դանես թևերուդ մեջ... վասնզի քիչ ատե-

նեն շրթանցս ցրտությունը պիտի զգան շրթունքդ... պիտի բաժնվինք իրարմե...

ՆԱԶԵՆԻԿ.— Պիտի բաժնվի՞նք, ի՞նչ կլսես, Վաղենա՛կ... Ա՜հ... Աստվա՛ծ իմ, այս ի՞նչ արյուն է, որ սրտեդ կը հոսե... Անդո՛ւթ, կը հեռանաս, կը փախչիս դրկես... Ա՛յս է մեր սերը... Անդադար հառաչանքներ ու արցունքներ խամրեցուցին մեր կենաց և սիրո գարնան վարդերը... Արդյոք մեր միության օրեն ի վեր քանի՞ ժամ հանգիստ իրարու գիրկ ժպտացանք:

ՎԱՂԵՆԱԿ.— Եվ ահա այն վշարթ ժամերն ալ սոսկալի տարիներով փոխանակեցան... Այս է եղեր մեր ճակատագիրը...

ՆԱԶԵՆԻԿ.— Անիծյալ ճակատագիր...

ՎԱՂԵՆԱԿ.— Նազենիկ, ո՞ւր է Վարդանույշ:

ՆԱԶԵՆԻԿ.— Ա՜հ...

ՎԱՂԵՆԱԿ.— Ինչո՞ւ այդպես աղեկտուր հառաչեցիր... Խոսի՛, կը սարսափեցնես զիս...

ՆԱԶԵՆԻԿ.— Ավա՛ղ... Թշվառ ենք միշտ...

ՎԱՂԵՆԱԿ.— Աղջի՛կս... աղջի՛կս... Ըսի՛... մինչև այն ալ մեռա՞վ...

ՆԱԶԵՆԻԿ.— Չը գիտեմ, բայց եթե թշնամվույն ձեռքն ինկավ... Ո՜հ, արդյոք արյունակաթ սուրը տեսած ատեն ի՞նչպես «մայրիկ, մայրիկ» աղաղակեց... Հարցուր Հայաստանի անդութ երկնքին և տե՛ս, թե անոր մահվանն ալ հանդիսատես եղա՞վ:

ՎԱՂԵՆԱԿ.— (ցնորելով) Բայց ահա աղջիկս է, որ ավերակաց մեջ արտասվելով կը թափառի... Վարդանույշ, եկո՛ւր, թշվառ հայրդ եմ ես... Ձայնս լսեց... Ժպտալով հոս կը

վազե... Գիրկս իննկավ, ո՜հ, երջանիկ վայրկյան... Հիմա կը տեսնեմ զքեզ, որչափ սիրուն ես եղեր, վարդանույշ, արշալույսի անգամ քեզնե գեղեցիկ չէ... շուշանն անգամ քեզնե գողտրիկ չէ... Ջավա՜կս, քու ժպիտդ և չամբույրնիդ կյանքեն ավելի քաղցր կը թվին ինծի։

ՆԱՋԵՆԻԿ.— *վազենակ... սիրտս կտոր կտոր կըլնես։*

ՎԱՂԵՆԱԿ.— (սթափելով) *Ո՞վ է գիրկս... Նազենիկ դո՞ւ ես... ինչո՞ւ կուլաս...*

ՆԱՋԵՆԻԿ.— *Կը թողո՞ւս գիս...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Թողո՜ւմ զքեզ, անկարելի է որ զույգ մը աղավնիներ իրարմե բաժնվին...*

ՆԱՋԵՆԻԿ.— *Բայց եթե անգութ որսորդը անոնցմե մեկը զարնե... միթե մյուսը կրնա՞ ապրիլ։*

ՎԱՂԵՆԱԿ.— *Մեռնիլ կըսես, Նազենիկ... Միթե չը գիտե՞ս, որ անիծյալ է անձնասպանը։*

ՆԱՋԵՆԻԿ.— *Վազենա՜կ... Իբր ավերակներու մեջ բու մը կուգես թողո՞ւլ գիս միայնակ և տխուր...*

ՎԱՂԵՆԱԿ.— *Ո՜հ, որչա՜փ կը սիրես գիս Նազենիկ, ուրեմն վերցուր գիս գերեզմանին եղերքեն և քու գիրկդ առ... Ապրիլ կուզեմ ես քեզի հետ մենակեզ... Բայց մխիթարվինք, Նազենիկ, եթե Տերը մեզի երկրի վրա այսչափ ցավ քաշել տվավ... եթե մեր սիրտ զվարճացնդ հովիտն արցունքով լեցուց... անշուշտ մեզ համար հավիտենական երկինք մը պատրաստած է, ուր մշտնջենավորապես պիտի ժպտինք, տո՛ն պիտի գտնենք նաև մեր սիրելի վարդանույշը...*

ՆԱՋԵՆԻԿ.— *Մա՜հ, մա՜հ, սիրելի են ինձ քու ճիրաններդ. այս*

Ժամուս ես ալ մնանիլ կուզեմ... Ի՞նչ կըլլաս, Վաղննակ, շրթունքդ կը կապուտնան...

ՎԱՂՆՆԱԿ.— *Եվ դեռ բոլորովին չը սառած, համբույր մը, երկրորդ և վերջին համբույր մը...*

ՆԱԶՆԻԿ.— *Ո՛ւր կերթաս...*

ՎԱՂՆՆԱԿ.— (երկինք ցուցնելով) *Վարպանույշ պիս կը կանչե... երթամ...*

ՆԱԶՆԻԿ.— *Ե՞ս ալ...* (դաշույնը աճուռ մեջքին կառնե):

ՎԱՂՆՆԱԿ.— *Ա՜հ, ի՞նչ կընես, Նազնիկ...*

ՆԱԶՆԻԿ.— *Մեկտեղ երթանք...* (ինքզինքը զարնելու կըլլա):

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— (դրսեն) *Մայրի՛կ... մայրի՛կ...*

ՆԱԶՆԻԿ.— (դաշույնը ձեռքեն ձգելով) *Ա՜հ... Աղչիկս...*

ՎԱՂՆՆԱԿ.— *Վարդանո՜ւշ...*

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ՎԱՐԴԱՆՈՒՇ

ՆԱԶՆԻԿ.— (խորը վազելով) *Հոս եմ, Վարդանույշ:*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Մա՛յր իմ... Մա՛յր իմ...* (գիրկը կիյնա) *Ի՛նչ ո՛ւր է հայրս, մթթե...*

ՎԱՂՆՆԱԿ.— *Նկո՜ւր գիրկս, Վարդանույշ...*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Ո՜հ, ի՞նչ ցավալի վիճակի մեջ կը տեսնեմ զքեզ, Հա՛յր իմ...* (գիրկը կիյնա լալով):

ՎԱՂՆՆԱԿ.— *Լա՛ց, լա՛ց, Վարդանույշ...*

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— *Բայց այս որչա՜փ լացի, ալ ցամքեցավ արցունքս և արյուն կը հոսին աչքերես... Ալ լալով աչացս լույսն անգամ նվաղեցավ:*

ՎԱՂՆԱԿ.— Խեղճ աղջիկ... Բայց դու ի՞նչպես ազատեցար այն բյուրավոր օրերեն:

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Վախրամ ազատեց զիս և ամո՛ղ որ ինքն ալ վիրավորվելով մեռավ զիս օրհնելով...

ՆԱԶԵՆԻԿ.— Մեռա՞վ... Խե՞ղճ Վախրամ...

ՎԱՂՆԱԿ.— Եվ դեռ ցավ քաշելու համար երկինք շնորհներ են դու կյանքդ:

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Հայր իմ, ինչո՞ւ դեմքդ կը սառի... ինչո՞ւ ձայնդ կը մարի:

ՆԱԶԵՆԻԿ.— Վախենա՞կ...

ՎԱՂՆԱԿ.— Ահա մահը սառած ձեռքերը կուրծքիս վրա կը դնե... մնաք... բարյա՞վ... (զառանցելով) Ո՞վ է այս սխրագործ ծերունին, որ դեմս արձանացեր է... ձեռքերը շղթայակապ... գլուխը փշապսակ... սիրտը վիրավից... և իր դեմքին խորշոմներուն մեջեն արտասվաց հեղեղներ կը ծավալին... ծունր չոքից... թևերը բացավ... զիս իր գիրկը կը կանչե... Հայաստանս է... ո՜հ, Հայաստանս է... (նեռվելով կիյնա կր մեռնի):

ՆԱԶԵՆԻԿ.— (սոսկմամբ) Ա՜հ...

ՆԱԶԵՆԻԿ.— Մեռա՞վ...

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Ուրեմն ի՞նչ ընենք, մայր իմ...

ՆԱԶԵՆԻԿ.— Մենք ալ մեռնինք... (վայն կր գրկե):

ՎԱՐԴԱՆՈՒՇ.— Այս ի՞նչ ոտքի ձայներ են... Թախտարնե՞րն, մա՛յր իմ, փախչինք...

Տեսիլ Զ

ՆՈՒՅՆՔ, ՆՈՐԱՅՐ (շղթայակապ), ՋԱՐՄԱՋԱՆ, ՋՈՐՔ

ՆԱԶԵՆԻԿ.— (հայրը տեսնելով) *Ո՜հ, հայրս է...* (աճուր վազելով) *Հա՛յր իմ, ո՞ւր կը տանին զքե՛զ...* (կուզե գրկախառնել, բայց զորեբր հրելով իրեն չեն տար):

ՆՈՐԱՅՐ.— *Նազենիկ... Ա՜հ, թողե՛ք, անգո՜ւթ դահիճներ, որ վայրկյան մը դոնե գրկեմ տղիկս... Պիտի մեռնիմ...*

ՋԱՐՄԱՋԱՆ.— *Այո՛, պիտի գրկես... բայց յուր ցուրտ դիակը...* (սուր ֆաշելով) *Ի ծոնր, իշխանուհի, Լանկթիմուրի հրամանը մահ է... Հայկյան շունչը պիտի սպառի:*

Տեսիլ Է

ՆՈՒՅՆՔ, ԼԱՆԿԹԻՄՈՒՐ և ԹԻԿՆԱՊԱՀՔ

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.—*Կեցի՛ր...*

ԱՄԵՆՔԸ.— *Լանկթիմո՜ւր...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Իմս թող ըլլա այդ գեղանի Հայուհին... Թո՛ղ ապրի...*

ՆԱԶԵՆԻԿ.— (ետ գիրկը իյնալով) *Հա՜յր իմ...*

ՆՈՐԱՅՐ.— *Ո՛չ... Թո՛ղ իմ գիրկս մեռնի...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Ո՜վ նազելի Հայուհիդ, ուխեզբակալ ա՜յր մը կուզես՝ նրև զաւտապարտյալ հայր մը:*

ՆԱԶԵՆԻԿ.— *Հայրս...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— *Կերդնում, որ շնորհեցի յուր կյանքը... Իմս Հղիր:*

ՋԱՐՄԱՋԱՆ.— *Սեբաստիա իշխանն է...*

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Սեբաստիո իշխա՞նը... (առ Ջարմազան) *Զոթապետա, երդում ըրի։*

ՆԱԶԵՆԻԿ.— Իրեն հետ կը մեռնիմ։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Իսկ հա՞յրդ կուզես՝ եթէ հայրենիքդ։

ՆԱԶԵՆԻԿ.— Հայրենիքս...

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Քաջ Հայուհի, քեզի թող ըլլա հայրդ ալ, հայրենիքդ ալ... Քակե հորդ շղթաները, իշխանդ Սեբաստիո, խոսք մը ղրկեղ ազատեց... Հայուհի մը սիրտս շարժեց...

ՆՈՐԱՅՐ.— (գրկելով) *Աղջի՛կս...* (Նազենիկ շղթաները կը բակե)։

ԼԱՆԿԹԻՄՈՒՐ.— Զորականք, ալ թող դադրին հարվածները... Հետանանք Հայաստաննն... Հայ աղջիկ, մի՛ անիծեր Լանկթիմուրը, որ հայրենիքդ հարվածեց, հիշե՛ միշտ դինքը, որ դթաց քեզի... Մնաս բարյա՛վ (կը մեկնին Թաթարները)։

ՆՈՐԱՅՐ.— Եվ ես, գերեզմաններու և փլատակաց պիտի մի՞մ։

ՆԱԶԵՆԻԿ.— Կրավե, որ շղթա չունինք, հա՛յր իմ, ազատ ենք...

ՆՈՐԱՅՐ.— Ալ չը մնաց Հայ մը...

ՆԱԶԵՆԻԿ.— Մենք Հայ ենք։ (վարագույրը կիջնե)։

(ՎԵՐՋ Գ ԱՐԱՐՎԱԾԻՆ)

ՎԵՐՋԱԲԱՆ

Գիշեր.—Լուսին.— Ավերակ վայր մ'է.— Սպիտակ աճյուններ շիրիմներ.—Հայաստան շղթայակապ և փշեպսակ գլուխը կուրծքին ծռած նուաճուած նստած է.—Թշվառութիւններ մեկ ձեռքը սև դրոշ մը, մյուս ձեռքը տապար մը Հայաստանի գլխուն վերև կանգնած է.—Գան:

Տեսիլ Ա

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Վերջապես թշվառութիւնդ սև դրոշը քու վրադ ալ ծածանեցավ, Հայաստա՛ն, ուրեմն այսուհետև դիր գլուխդ փոխանակ թագիդ այս փշյա պսակը և շքեղ ծիրանվույդ տեղ՝ այսպես ցնցոտիներ հագիր... Օ՜ն, արթընցի՛ր և լա՛ց, թշվառությունը քու չորս կողմդ արցունք և սուգ, անեծք և մահ սփռեց և ոտքերուդ տակ սև սև գերեզմաններ փորեց... Բ՛լ, կանգնի՛, չորս կողմդ նայի՛ և ալ չի՛ պիտի տեսնես գեղազվարճ դաշտերդ, այլ՝ արյան համատարած ծով մը, որուն մեջ կը լողան կիսաշունչ դիակներ, չը մնաց ծպտիկ մը՝ որ արցունքով չը թրջի, չը մնաց ալիք մը՝ որ արյամբ չը պղտորի... Անգամ մ'ալ դարձուր աչքդ

ներկինս. ահ՛ս, ասպրդ յուզասպատ կանթեղի նման կը պլպլա և մոտ է խամրելու... Այո՛, ան՛ս կը խամրի Հայաստանի պերճ բախտը:

ՀԱՅԱՍՏԱՆ.— (նուաճուած ցասկելով) Ա՛լ հետացիր քովէս, անդուր Ոգիդ Թշուառութեան, դու խեղճ Հայաստանը շղթայակապ գտար և կը ծաղրես... Ա՛հ, շանթեր բռնա-փեն այն Հայերուն դլուխն, որոնք իրենց հայրենիքը շղթայեցին այսպես, և թշուառութիւնը եկաւ իր սեւ դրոշը կանդնեց դլուխս վերև և փուշերով պսակեց ալեւոր ճա-կատս... Ա՛լ բաւական է, ճիվաղդ անողորմ, ալ բաւա-կան Հայաստանի արլունը խափեցիր... Ե՞րբ պիտի փշրի այդ անխնա տապարը...

ԹՇՎԱՌՈՒԹԻՒՆ.— Քու կուրծքիդ վրա միայն պիտի փշրի... Մի՛ նախատեր դիս, երկինքս արդարադատ բազուկն ևս ևս... Ուր որ չկա լոյս և ոգի՝ հոն է թշուառութիւնը... Ին-չո՞ւ կործանեցաւ Արարատեան գահը. վասնզի Հայը ազնիւ էր, վասնզի Հայաստան մարած սրտերու մխնաս-տան մ՛էր. վասնզի իր վերջին թագաւորը կրոնամոլ, անարդ և օտար էր. լեռները ողբացին, դետերն արտաս-վեցին, մինչդեռ Լևոն Ջ Կապան բերդին մէջ ապաստա-նած էր, բայց վերջապես ինքն ալ շղթա կրեց, փոխա-նակ պատերազմի դաշտին վրա իյնալու...[1]) Խեղճ Հայեր, իրենց ընկղմելիք անդունդը ձեռքնին կը փորեն և երբ անդունդին եղերը լլլալնին կզգան՝ կսկսին օգնութիւն ազաղակել, բայց իզուր... Խեղճ Հայ, որ ընդ երկար կը լռես... վերջապես կորստոտ և իր հանած կայծակեն նախ ինք կը սարսափիս:

ՀԱՅԱՍՏԱՆ.— Լռե՛... Ամօթահար պիտի կորնչի Հայաստան

և ոչ ոք պիտի դիմա իրեն և պիտի օգնի, վասնզի Քշնամին ու դահիճը իր զավակն է... Ո՛ւր ես Հայկ, Արամ, Արտաշես, Տրդատ, Տիգրան, քաջ դյուցազունք, ահեղ առյուծք Արարատյան, ելե՛ք ձեր դարավոր շիրիմներեն, տեսե՛ք ցնցոտիներ հագեր է, շղթայակապ է Հայաստան... Արթնցեք մեկ մը և պիտի տեսնեք, որ ձեր շիրիմներն անգամ ձեր թոռանցն արյամբը կարմրած են... Ուրեմն, դուք ալ ձեր դամբանաց խորհրդեն անե՞ծք մը ընդչացեք մատնիչ Հայերուն, դուք ալ վա՛յ և եղո՛ւկ կարդացեք Քշված Հայաստանի...

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Իզո՛ւր կավազես, Հայաստան, գիտցիր որ այդ արտասվաց հեղեղներն անկարող են որդվույդ ճակտին գառակնիքը ջնջելու, և այդ հառաչանաց մրրիկները չեն զարնր քու աստղդ ծածկող ամպերը փարատելու. այսուհանե հոս միայն սև նճիներ պիտի պատանն... Երբ աչքերդ երկինք վերցնես՝ ամպամած պիտի տեսնես զայն. երբ դանոնք ի գետին խոնարհես՝ փշատատ պիտի դանես զայն. վշտահար պիտի Քափառես փլատակաց մեջ, պիտի չի դանես կոթող մը, որուն վրա կարդաս հիշատակդ, պիտի չի դանես ծաղիկ մը, որուն վրա կարդաս երջանկությունդ, վերջապես պիտի չը դանես Հայ մը, որուն նայվածքին մեջ կարդաս հույսդ... Պիտի հեծես միշտ՝ մինչև որ քու խոր գերեզմանդ փորեմ... Քու որդիքդ պիտի մղեն տխուսարար բեզ հոն՝ կարծելով Քե գահ է այն, և օտարք փուշեր պիտի սփռեն դամբանիդ վրա, միմիայն նախնյաց տավիրներեն արցունքով պիտի Քանան այն փուշերը: Ահա բացի քու առջիդ ապագային մութ վարագույրը:

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ա՜հ... սոսկալի վճիռ... Լսեցի՛ք ուրեմն, Հայեր և զարհուրեցնք... Ո՛վ երկինք, չը պիտի ջնջեա ճակտես այս անեծքը... Միթե սպառեցա՞ն կայծակներդ՝ երբ կարգը զանոնք մատնչաց ճակտին թողնելուն եկավ... Ի՞նչ կը լսեմ... Հայաստան պիտի ջնջվի... Հեռացի՛ր, գուժկան ոգի... Ողբեր հյուսեցի՛ք, Հայ օրիորդներ, արցունք թափեցի՛ք, երիտասարդներ, և դուք ալ, ծերեր, ձեր գերեզմանը փորեցի՛ք... Հայաստան պիտի ջնջվի՜... Խնդացե՛ք, Պարսիկք և Հույնք, Եզիպտացիք և Թաթարք... և դու ալ երկնագրացիդ Մասիս, դու ալ ամպերու մեջեն որոտագոչ ձայնեա. «Հայաստան պիտի ջնջվի...» (հանկարծ կարմիր լույս մը կը ծագի) Ի՞նչ լույս է այս... Արդյոք Հայաստանի բա՞խտն է, որ ծագեցավ:

Տեսիլ Բ

ՆՈԻՅՆՔ և ՍԵՐ

ՍԵՐ.— Այո՛, Հայաստան պիտի ջնջվի...

ՀԱՅԱՍՏԱՆ.— (սարսափած) Ո՜հ, մահվան հրեշտա՞կն է այս

ՍԵՐ.— Ո՛չ, զքեզ ողբալու կուգամ, Հայաստան... Ձե՞ս ճանչեր զիս...

ՀԱՅԱՍՏԱՆ.— Այո՛ կը ճանչնամ զքեզ, հրեշտակդ խաղաղության:

ՍԵՐ.— Ո՛վ է այդ ճիվաղը, որ գլխուդ վերև կանգներ է՝ մեկ ձեռքը տապար մը, մյուս ձեռքը սև դրոշ մը բռնած... Անշուշտ կը ճանչես նաև զայն... Կը տեսնե՞ս որ քայլերուն տակ արցունք կը սփոի և սիրտ պես ծագկունք չի սբփ-

ախ... կը տեսնե՞ս որ ուր չկա սեր, հոն չկա խաղաղութիւն. վա՛յ ձեզ, Հայեր, որ ձեր նախնի փառաց կոթողները դուք ձեռքերնիդ կործանեցիք և ձեր արյամբ զոհացուցիք Սանդարամեան սև Հակատը... Ե՛րբ ուրեմն Տգիտութեան տապարը...

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— *Այո՛... վասնզի երբեմն Իշխանութիւնն կը ծնանի վերականգնումն... Բայց Յոզ պիտոյ Հայաստան, որ երբեք Իշխանության տապարը չը տգիտանա. միշտ կը հարվածե՝ մինչև որ ձայն մը գոչե. «Ա՛լ բռնակալն է»:*

ՀԱՅԱՍՏԱՆ.— *Եվ ե՞րբ պիտի լսվի այդ ձայնը:*

ՍԵՐ.— *Երբ Հայը սիրե իր եղբայրը:*

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— *Առանց այն ձայնին, նիհիլ բոլոր աշխարհ ապերասիկու ծունր դնե առջեւ՝ պարձյալ կը հարվածեմ... միշտ կը հարվածեմ:*

ՍԵՐ.— *Կը լսե՞ս, Հայաստան, ճանչցի՛ր զանիկա, ճանչցի՛ր Հրեշտակդ. երբեմն սիրտ ժպիտն էր Հայաստանի սրտի... իսկ հիմա քու ապերախտ զավակներդ տանջին և պարկին սերը... Ինկած նա և ինկած Հայաստան. արտասվելով անցավ Հայաստանեն Սերը և ուր որ հոսեցին քու արցունքը, հոն փուշեր բուսան... Ե՛րբ Հաղթանակի ուրեմն Անմխիթարը, Ե՛րբ Հաղթության կոթողներ, շիջմաններ և ազգի նոճիներ կանգնեն... և Իշխանության տապարը Ե՛րբ անխնա հարվածե Հայաստանը. Ե՛րբ փուշերով պսակվի իր կենճատ Հակատը՝ ինչպես որ նա փոխանակեց սիրտ նվիրած ձիթենիներուն:*

ՀԱՅԱՍՏԱՆ.— *Ա՛լ բռնակալն է. անհոգ մը միայն մնաց, այն ալ պերիզմանիս վրա կարգա. ես որ բնդեն սիրտ*

փանք կակնկալեի, դու նախ կը գտտապարտես զիս... Բայց ո՛չ, իրավունք ունիս, վասնզի ես արդյունք քամեցի քու արև աչերուդ։

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— *Հայաստա՛ն, մինչև Թշվառությունը անդամ գանելով՝ Սիրե՞ն կակնկալես դուիդ, գիտցիր որ Սիրն ինկավ քու գահեդ և միայն Անմխիթարությունն ու Թշվառությունն են անոր իշխողները... Չե՞ս տեսներ որ Հույսը սարսափով կը նայի Արարատյան սառնապատ սարերուն... Մինչև անգամ Ասբանապյան քաջերուն[8]) ոսկերքը գերեզմաններուն մեջ կը քամնին, կը դողան լերինք, կողրան ալիք, կուլան ծաղիկք, կը հնծեն վիմյուսք, կը հնչեն սոսա կոչնակաց մահաշշուկ գանչյունները. դեռ կը հուսա՞ս, Հայաստան, սոսկ սեղ օրհասականաց հնծեծանքներ կը լսվին... Սոսկ սեղ մահ սիրուց Անմխիթարությանը, մինչև անգամ գերեզմանաց հանգիստը խռովից, և դու դեռ կը հուսա՞ս, խեղճ Հայաստան* (ոտտմուճ և կայծակ)։

ՀԱՅԱՍՏԱՆ.— (սոսկմամբ) *Ա՜հ... Հուր և կործանում։*

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ և ԱՆՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ.— (խռոխառապաճած գանձ ելնելով) *Ողբացե՛ք, Հայկը, ձեր ողբերն իմ հաղթությանս դրվատիքն են, և օ՛ն, արտասվաթոր ծաղիկներն հաղթական պսակներ հյուսեցեք Անմխիթարյան խրոխտ ճակտին... Հաղթությունն կրկնեցեք ողբաձայն, ձորք և լերինք Արարատյան, Անմխիթարությունն իմ ես, սեր դաշտ ձայնը թո՛ղ մարի, սեր*

հնչող քնարը թո՛ղ փշրի, սեր տածող սիրտը թո՛ղ խորտակի... Անմիութի՞ւն եմ ես... Սարսեցո՛ք անունես, շիրմի՛մ դյուցազանց... Դողա՛ և սոսկա՛ ինձնե դու ալ, Հայաստա՛ն, վասնզի ալ իմ դերիս ես... Եվ դու ալ, Սեր, պարտութեանդ վրա ամոթահա՛ր հետացիր Հայաստանեն. թո՛ղ որ ես ալ տիրեմ Հայաստանի... Խե՛ղճ Հայեր չը գիտեի՛ք մութն, որ իմ գահս է գերեզման և թագավորական գավազանս է սուր, և հիմա զղջալով կը տեսնեք:

ՍԵՐ.— Ոդի՛դ Անմիութեան, այո՛, հաղթեցիր ինձ վատ մատնիչներու զենքերովը, որոնք եղբարց, որդվոց, ծնողաց և նաև իրենց գլուխը Թշվառութեան տապարին մատուցին... Ո՛վ ողբալի ժողովուրդ, արդյոք ե՞րբ պիտի արթննաս և պիտի գիտնաս, թե քու երջանկութեյունդ, կյանքդ, արևդ սերն է միայն:

ՀԱՅԱՍՏԱՆ.— Նախատի՛նք... Այս է ահա Հայաստանի ապագան... ո՛վ երկինք, դուք գոնե պիութեյան կաթիլ մը ցողեցեք Թշվառ ճակտիս վրա, դուք գոնե հուսո նշույլ մը սփռեցեք խավար հորիզոնիս վրա:

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Դեռ կը հուսա՞ս, Հայաստան:

ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ.— Կը մթագնի հորիզոնդ:

ՍԵՐ.— Մի՛ խրոխտար այդպես, Ոդիդ Անմիութեյան, անշուշտ դեռ չէ մարած բոլորովին սիրտ կայծը Հայոց սրտերուն մեջ. պիտի գա անշուշտ ժամանակ մը, որ երբ ոգիտութեյան մռայլը խուսափի, Հայաստան իր թմրած գլուխը բարձրացնելով պիտի սթափի և սպառնալից նայվածքով մը գրեզ դժոխոց ծոցը պիտի գլորե, և գարձյալ ես կը գրկեմ ու գգվեմ այն ատեն տառապյալ Հայերը. և իմ մազերովս կը պատեմ իրենց վերքերը:

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Սեր, կը տեսնե՞ս այս տապարը. գիտցիր որ խիստ տոկալի է այն, որ իր ձեռքը տապար և անմխիթարյանն ունի...

ԱՆՄԻՈՒԹՅՈՒՆ.— Եվ նաև անկարելի է մեռյալը կերևոմանին մեջ կենդանացնել... Սեր, ալ բավակա՛ն է, հեռացի՛ր Հայաստանեն ամօթահար, անցիր զարհուրած նույն արտասվալից դաշտերեն, կարդա՛ Մասիսի ճակատը պրոշմված սա արենագիծ տառերը. «Հայաստան պիտի չնչվի», և՛ հետո անոր գագաթը և պիտի տեսնես, որ սեր ու հաղթանակ նվագող մուսայից մատունքն իրենց տառած աչքերեն կաթած արցունքովը կը հնչեն տակի քնարներուն թելերը, և գոռոզն Մասիս իր գեմքը ամպերուն եռև ծածկած կը հառաչե... հետո անցիր Հայաստանի կործանյալ պարիսպներեն... ակնարկ մը ձգե եռևդ և պիտի տեսնես ավերակ, լուռ ու տխուր երկիր մը և նույնպես սև ու անարև երկինք մը և երկուքին մեջտեղը Անմխիթյան տավերը խրոխտապանծ կանգնած...

ՍԵՐ.— Սթափեցե՛ք, թշվառ Հայեր, զրկեցե՛ք ջիս, և դարձյալ ես կը վերականգնեմ ձեր ավերակ երկիրը... Մնաս բարյո՛վ Հայաստան... (տխուր ու համբայլ կը հեռանա. առջի պես խավար):

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ա՜հ, այս ի՞նչ մահաբույր խավար պատեց... Հեռացար ինձեն քաղցրիկ Սեր, ջիս միենակ Թողուցիր այս ճիվաղներուն քով, որոնց ծոցեն մահ կը բուրե և որոնց բերնեն դժոխք կը ժայթքե, դարձի՛ր, դարձի՛ր, տառապյալ Հայաստանի գիրկը... Հայե՛ր...

ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ.— Ա՛լ մի հուսար, Հայաստան:

ՀԱՅԱՍՏԱՆ.— (ձեռները գլխուն զարնելով) Ամա՛ղ...

ԱՆՄԻԹԻԹՅՈՒՆ.— Լայն՛ք, հրեշտա՛կք երկնից... խնդացե՛ք, հրեշք դժոխոց, և դուք ալ, երկի՛նք և երկի՛ր, միաձայն կրկնեցեք. «Հայաստան պիտի ջնջվի...», արդյունք Բափնեցեք, Արարատյան սառնամանիք:

ԹՇՎԱՌԻԹՅՈՒՆ.— Հայաստան պիտի ջնջվի՞... (ապառնալից կը հեռանան):

ՀԱՅԱՍՏԱՆ.— (հետին հուսահատությամբ ծունր իյնալով) *Աննո՛ծք, աննո՛ծք...* (խավարումն լուսնի.— աղմուկ.— սավերներ կամաց կամաց գերեզմաններեն կելլեն և հետևյալ երգը կերգեն տխուր ու միակերպ):

Տեսիլ Դ

ՀԱՅԱՍՏԱՆ և ՍՏՎԵՐՔ

ՈՂԲԵՐԴ ՍՏՎԵՐԱՑ

Մինչ ե՞րբ գըլուխդ պիտի ծեծես՝
Շղթայակապ այդպես հեծես,
Հեզ Հայաստան շիջելաբեր,
Ե՞րբ սոխակը սրգաաբեր
Նոճիներեն շուտ տալով խույս.
Պիտի երգե վարդ, աւշալույս:

Նո՞ւվ ըեզի, հեզ հայրենիդ,
Ու չորըելով շրեղ դափնիդ՝
Ոդիդ աճխիղճ գլխուդ վառում
Բոլորեցին սև նոճ ու փուշ...
Ա՜հ, վրեժխնդիր շանթեր նայրին
Հայրենադրում Հայոց նախին:

(սավերներ կսկիծն կամաց կամաց իրենց գերեզմանը մտնել):



«Սև հողեր» ներկայացման բատերազգի

Տեսիլ Ե

ՀԱՅԱՍՏԱՆ (առանձին)

Օ՜ն, դիւեզմաններիդ մահը, սավ՛ը դյուցազանց... Ձեր ողբերովը չե՛ն քակվիր այս շղթաները, դուք որ կաշկանդյալ եք հավիտենականության շղթաներով. հեռացե՛ք. ձեր ողբերը միայն նախնի փառաց հիշատակներ կը զարթուցանեն ավերակաց մեջեն... Խավար է Հայաստանի ճակատագիրը... Ա՜հ, երկինք, վերցուր գլխուս վրայեն վրեժխնդրության հրացայտ սուրը, որուն վրա հայելվո մը պես, ահա միշտ փշապատ դիւեզմանս կը նշմարեմ... Ո՜հ, այդ սրտիդ խորտակեն այս շղթաները և քու բարկության կայծակովը այրի՛ ճակտիս փուշերը... Դեռ չսպառեցա՞վ վրեժխնդրությունդ... Ջր տեսա՞ր մթին որշափ արյուն ծծեց այն Սև հողերը, մինչև անգամ արևը զարհուրեցավ իր լույսը սփռելու... Դեռ կը գոռա ականջիս այն ահռելի ձայնը. «Հայաստանը պիտի ջնջվի՞», դեռ աչացս առջև է Թշվառության արենակաթ տապարը... (ծունր գալով) Ձայն տվի՛ք, երկի՛նք, պիտի քակվի՞ն այս շղթաները, ձա՛յն տվիք, դեռ շա՞տ պիտի հեծեն Հայաստան...

Տեսիլ Զ

ՀԱՅԱՍՏԱՆ և ՀՈՒՅՍ

ՀՈՒՅՍ.— Մի՛ հուսահատիր, Հայաստան... Դեռ կրնան խորտակիլ այդ շղթաները... դեռ ատող մը ունիս:

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ա՜հ... Օրհնյալ ըլլան երկինք... Բայց ո՞վ ես դու... Ջըլլա որ մահվան հրեշտակն ըլլաս...

ՀՈԻՅՍ.— Հույսն եմ ես, որ գերեզմանին ցուրտ դռանն առջև խակ՝ թագին և զագաղին երեսին կը ժպտիմ:

ՀԱՅԱՍՏԱՆ.— Եվ ի՞նչ կը բերես ինձ, թա՞գ թե զագաղ:

ՀՈԻՅՍ.— Թա՜գ... եթե Հայը սիրե եղբայրը, Հայաստան պիտի վերականգնի... (Հայաստան ուրախության շարժում մը կրնե) Հայաստան չի պիտի վշտագնի, այլ պիտի ժպտի (գլուխ փշյա պսակը կր ևեռե): Հայաստան գերի չէ, ալ ազատ պիտի ըլլա... (շղթաները կը փակե) Օտարությունը Հայուն գլուխն հարվածող լախտն է, անմիությունը Հայաստանի ժանտախտն է, սերն ու լույսը Հայոց դրախտն է... Եվ քիչ առնեն երկնից երեսը նոր աստղ մը պիտի ցոլա՝ այն ալ Հայաստանի բախտն է (նանկարծ փաղցր լույս մը կը ծավալի):

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ողջ է Հայաստան... Ծափ զարկեք, Հայեր... (Անմիության գաղիե կործանումը):

ՍԻՐ.— (Երևալով) Ջե՜րթդ, Հայաստան:

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ահավասիկ... (կը գրկախառնվին):

ՀՈԻՅՍ.— Ուրեմն պիտի վերականգնի Հայությունը: (վարագույրը կիջնե):

ԱՐՏԱՇԵՍ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ

ԹԱՏԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ
ԵՐԿԱԼԱՒՈՐԱՑ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐԱԻ ԵՒ Ի ՄԻ ՊԱՏԿԵՐ

<1 ճոպիս. 1869>

ԱՆՋԻՆՔ ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ

ԱՐՏԱՇԵՍ Ա., արքա Հայոց
ՏԻԳՐԱՆ Բ, արքա Հայոց
ԿՐՅՈՒՍՈՍ, արքա Լյուդացվոց
ՄԻՀՐԴԱՏ, բդեշխ Վրաց՝ փեսա Արտաշիսի
ՎՐՈՒՅՐ, սպարապետ Հայոց[1])
ՎԱՐԱԺ, գինավարժ Տիգրանա
ԱՐՇԱՋ, գինակիր Արտաշիսի
ԽՈՍՐՈՎ, դեսպան Հայոց
ՎԱՀՐԱՄ ՎԱՀՈՒՆԻ, բրմապետ Հայոց[2])
ԿԱՄԱԴՐՈՍ, մտերիմ Կրյուսոսի
ՊՅՈՒԹՈՍ, բրմապետ Լյուդացվոց[3])
ՈՐՄՉԴՈՒԽՏ, սիրուհի Արտաշիսի

Թիկնապահք, զորապետք, գինվորք, պահապանք, պալատա-
կանք, դահիճք, քուրմք, նավաստիք:

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Ա

Պ Ա Լ Ա Տ

ՏԵՍԱՐԱՆ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Կեցցե՞ն հավերժ արիք Հայկյան,
Յոլան սուր, բազ, վիառ ու հույսեր,
Օտար ագինի ափ ի բերան
Թողուն դողդոջ ժանգոտ սուսեր:

Կեցցե՞ հավերժ վեհն Արտաշես՝
Օտար ափանց նախանձ սարսափ,
Կեցցե՞ Տիգրան՝ նոր բոցագես
Արքայն. լեռ, ձոր՝ զարնեն բող ծափ:

Տեսիլ Ա

ԱՐՏԱՇԵՍ (ի գահ) *ՄԻՀՐԴԱՏ, ՎՐՈՒՅՐ, ԱՐՇԵՋ, ՀՈՍՐՈՎ, ՎԱՐԱԺ, ՔՐՄԱՊԵՏ, ՆԱԽԱՐԱՐՔ, ԹԻԿՆԱՊԱՀՔ.— ՏԻԳՐԱՆԸ* բազավորական հանդիսին կը բերեն և կերգեն:

ԱՐՏԱՇԵՍ.— Ժողովուրդք Հայաստանյայց, ահա ճանչցե՛ք այսուհետև ձեր թագավորը. Արտաշես ծովերու, անա-

պատնեշու և բոլոր սինեկերայց Թագավոր կոչվելու կերթա, Թող իր փառքը ցոլա նաև Արևմտյան Հորիզոնին վրա և աղգերու փառաց վերջալույսն Հանդիսանա. Թագերու ներքև խրոխտ ճակատները դժգունին ու խոնարհին, լա՛ն փառք երազով բռնավորները. Ասիո խորևեն՝ Աչքարատառ դաշտևն մրրիկը կը մռնչե. «Թագակիրներ արյան ծովերն և արտասվաց գետերե անցնելով՝ Ով դան շրթայատակ խոնարհին Արտաշեսի առջև և դողդոջուն ձեռքով դափնիներ բոլորին իր ճակատին»... Կը կարծե՞ք որ կերպով Արտաշես, ա՜հ, բավական երազնեցի օրրանիս մեջ, հոգս գիրկը, վինուց ապմուկին մեջ, որսի ճերմակ երիվարիս վրա... Մանկութենես ատեն գահ մը կը պահեր, ահա այն գահին վրա կը գտնեմ ինքզինքս և անոնք որ երազ էին, հիմա կատարյա քողի մը նևևեն ինձ կը ժպտին... Ազատվը արծիվ չեզավ, այլ արծվի ձագին Թևերուն փետուրները հզկվեցան, Թռչելու ժամանակն է, կուզե՞ք որ Թռչի...

ՄԻՀՐԴԱՏ.— Տեր արքա, քանի որ Արտաշես աշխարհի իշխե՝ նախարարներն ալ մեկ մեկ Թագավորներ կը համարվին:

ԱՐՏԱՇԵՍ.— Կը հասկնամ, քաջ բզեշխ, և Միհրդատ ալ Պոնտոսի իշխանը կըլլա:

ՄԻՀՐԴԱՏ.— Կընդունիմ, վեհափառ տեր, արքայական այդ մեծ շնորհքը, Պոնտոսի իշխանը ու Արտաշեսի հպատակն եմ:

ԱՐՏԱՇԵՍ.— Երդվի՛ր որ Հայոց արքային միշտ հնազանդ և օգնական պիտի գտնվիս:

ՄԻՀՐԴԱՏ.— Կերդնում յերկինս, Աստվածոյ և արույս վրա:

ԱՐՏԱՇԵՍ.— Երդվի՛ր և դուք, ավագանիք Հայաստանյայց:

ԱՄՆՆՔԸ.— Կերդնումք:

ԱՐՏԱՇԵՍ.— Եվ դու որդյակ իմ Թագավոր, երդվի՛ր որ պիտի սիրես ազգդ Հոգվույդ չափ և պիտի նվիրես արյունդ իր փառացն ու ազատութեանը համար:

ՏԻԳՐԱՆ.— Կերդնում յերկինս և Աստվածոց, Թագիս և արույս վրա, որ պիտի սիրեմ ազգս և Թագս, և առանց Հորս փառքին նշան մը կորանցունելու՝ պիտի ջանամ ավելի փայլեցնել, իր արիութեյան սովերը և իր փառաց արձագանքն ըլլալու պիտի ճգնիմ:

ԱՐՏԱՇԵՍ.— Ո՛վ քաջդ վարաժ. դու, որ իմ որդիս քաջագործութեյանց վարժեցուցիր, զքեզ չեմ ուզեր անվարձ Թողուլ, արքունի որոտպետ կը կարգեմ և կը շնորհեմ քեզ Հրազդանի աննման ափունքը:

ՎԱՐԱԺ.— Նրախատապարտ սրտիվ կընդունիմ, վեհափառ տեր:

*ԱՐՏԱՇԵՍ.— Որդյակ իմ, ահա կը Թողում ես Հայաստանն իր փառացն Համար, կը Թողում այս գեղեցիկ Հայրենիքը, ուր Թագավոր ծնա և կերթամ օվկիանոսի կոհակաց հետ մոնչելու, Թագը մեկդի ձգելով՝ սաղավարտ կրելու: Թագը սաղավարտեն ավելի ծանր է և դժվարակիր. գիտցի՛ր որ այս լեռները, ժայռերը, ձորերը և գերեզմաններդ ձայն ունին Թագավորի մը դեմ, որ անիրավութեյուն կը գործե, գահիդ ոտքերը պիտի ըլլան Հայրենիք և Իրավունք, Պատիվ և Արիութեյուն, ասոնցմե զատ ուրիշ տեղը անդունդ կա. նայե՛ որ սուրդ չի ժանգոտի իր պատյանին մեջ, Թագավոր և միանգամայն գինվոր եղիր, զարկ, մի՛ զարնվիր, մեռի՛ր, մի՛ Հաղթվիր, ջանա՛ որ Թշնամիք

Հսկա Մասիսի կնճռոտ ճակտին չի թքնեն, այն պիտի մնա դարերով Հայուն արձան և հիշատակ, այն պիտի լա Հայկազն դյուցազանաց դամբաններուն վրա։ Գիտցիր որ Արտաշես երբ իմանա, թե Տիգրան պատերազմի դաշտին վրա հաղթվեր է՝ սուրը պիտի փշրի[2] իր փառաց և հույսերուն վրա։

ՏԻԳՐԱՆ.— *Հա՛յր իմ, աշխարհակալութենեն դարձած ժամանակդ, թագավորներ կառքդ պիտի վարեն, թագավորներ՝ զորոնք Տիգրան դերի պիտի վարե։ Ես ալ Արտաշեսի նման չեմ երազեր. Արևմուտքը քեզի, հայր իմ, Արևելքն ալ ինձի, ես ալ՝ Արտաշեսի որդին. գրկվինք հայր և որդի, գրկվինք երկու զոռով աշխարհակալներ, մա՞հ և կործանո՞ւմն աշխարհի։*

ԱՄԵՆՔԸ.— *Կեցցե՛ն Հայկազն Աշխարհակալք, կեցցե՛ Ասքանազյան թագավորութիյուն։*

ԱՐՏԱՇԵՍ.— *Կեցցե՛ս, որդյակ իմ, այո՛, իմ որդիս, իմ արյունս ես, Արտաշես չը գիտե պարտվիլ։ Տիգրան ալ պիտի հաղթե, Արևելք քունդ, Արևմուտք՝ իմս։*

ՎՐՈՒՅՐ.— *Ուրեմն թո՛ղ բոլոր ելլադա մոխիրի վրա նստի, իր Աստվածները օգնութիյան կանչե՛, գոհերու ճենճերով օդը մթագնեցնե՛, լա՛ իր բախտը, զրոշներովը արյունքը սրբե՛, ժանդոտ սուրը ժայռերու զարնե՛... Հնձե՛, ելլադա՛, Արտաշես մութ բանակավ դեպի քեզ կը քալե, այս սուրը կամ քու ավերակացդ և կամ իմ կուրծքիս վրա պիտի փշրի... Քա՛ջդ աշխարհակալ, հրաման տո՛ւր սպարապետիդ, որ զորքերը ժողվե. քալե՛նք, քալե՛նք դեպ 'ի նախանձոտ ելլադան։*

ԱՐՏԱՇԵՍ.— Կը հրամայեմ, քաջդ Վրույր, օ՞ն պատրաստվի՛ փութով, զարնենք Ելլադան:

ՎՐՈՒՅՐ.— Կը հնազանդիմ, վեհափառ տեր (կը մեկնի):

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ, բացի ՎՐՈՒՅՐԵՆ

ԱՐՏԱՇԵՍ.— Քաջդ դևսպան, վաղը արշալույսը չը ծագած ճամփա պիտի ելնես դնես՝ ի Լյուդիա, իմացուր Կրյուսոսի, որ Արտաշես անթիվ բանակով և նավերով դնես՝ ի իրեն երկիրը պիտի քալե, կամ անձնատուր ըլլա կամ՝ հաղթվի, կամ գահը ընտրե և կամ՝ մահը: Իսկ ևին չի պիջանիր խոնարհիլ Արտաշեսի՝ ինչ սուրը ամուր բռնե ձևրքին մեջ, որ Հայոց՝ նետաձգությամբ արևը մթագնեցնող բանակը՝) տեսած տեղը զողզոջելով չիյնա. ևին չի խնայեր ազգին՝ ինչ կուրծ դնե:

ՀՈՄՐՈՎ.— Կր հնազանդիմ, տեր, արդեն Լյուդիա շատ փոքր է Արտաշեսի դեմ խրախուսու համար:

ՔՐՄԱՊԵՏ.— Տեր արքա, ամեն բան կարգադրվեցավ, երթանք մեհյանը Աստվածոց փառաբանության տալու և իրենց զութն ու օգնությունն հայցելու, Արտաշես չէ պրավորը, Աստվածներն են: Երթանք մեհյանին բեմին վրա սուրերը սրելու, երթանք Աստվածոց մեծաց օրհնությունը վայելելու համար:

ԱՐՏԱՇԵՍ.— Այո՛, երթանք ամենքնիս ալ Աստվածոց երկրպագելու, որ մինչև հիմա Հայաստանը պաշտպանեցին և Հայկյան բանակը պարտության, անոնց զորեղ բազ-

կացը տակ պետ հավերժ պիտի մնան Հայք և Հայաստան (կը մեկնին)։

Տեսիլ Գ

ԱՐՇԵՋ, ՈՐՄԶԴԻԽՏ (կերևա և մոխիկ կրնե հետո)

ԱՐՇԵՋ.— *Արտաշես աշխարհակալելու կերթա, Տիգրան թագավոր կըլլա և պաշտոնատարից շնարհքներ կը բաշխվին, իսկ ես այսչափ առնե Արտաշեսի հետ կը պատերազմեմ, ազջիկը սիրեցի, իր ամուսնությունը մերժեց և գայն վրացի Միհրդատին տվավ, վերջապես ամենուն երկրներ շնորհեց և ինձ ալ մը հող չի տվավ, որ խոնչյալ ձակատս հանգչեցնեմ. շատ անգամ կըսեմ. «Արշեզ, դու քաջ ես, և պետք է որ քովս պահվիս»։ Այո՛, քաջ եմ, բայց վատ պիտի ըլլամ, եթե վրեժ չառնեմ, հետն ու ոխը սիրտս կը կրծեն, բինոխնդիր որդ մեմ... Ա՜հ, երանի թե գեղջուկ մ'ըլլայի և հայր ու մայր ունենայի, որս մը՝ պատերազմի դաշտի տեղ, ծառի մը շուք[3]՝ մեծաշուք հաղթանակաց տեղ, խրճիթ մը՝ պալատի տեղ, փոքր բնատնիքի մը տեր ըլլայի՝ բյուրավոր զորաց հրամանատարության տեղ. վա՜յ այս դժոխքը որդյոք ո՞ւր անգութ նետեց, որուն բոցերն են փառք, երազ, նախանձ և վրեժ։*

ՈՐՄԶԴԻԽՏ.— (մեկուսի) *Ես... որ Արտաշեսը սպաննեմ։*

ԱՐՇԵՋ.— *Ա՜հ, ոչ թագավոր ըլլալ, այլ վրեժ առնել կուզեմ...* (Որմզդիտար տեսնելով) *ուրվակա՞ն...*

ՈՐՄԶԴԻԽՏ.— (հառաչանալով) *Վրեժդ պիտի առնես։*

ԱՐՇԵՋ.— (մեկուսի) *Կին մը... Մատնվեցա* (բարձր) *ո՞վ ես*

դնչուի, որ Յագտվորին պալատը մտնելու կը համարձակիս։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (աճուր ավելի մոտենալով) *Մի՛ անարգեր զիս... Պիտի ճանչնաս...*

ԱՐՇԱԶ.— *Բայց ինչո՞ւ կը մոտենաս ինծի... Դնա՛, կորսվի՛։*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Հանդիսանդ առաջ նկած գաղտապողի՝ քեզ կսպասեի։*

ԱՐՇԱԶ.— *Ես քեզ չեմ ճանչնար... Պահա՛...*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (բնդմիջելով) *Արշա՛զ...*

ԱՐՇԱԶ.— (մնկուսի ապշած) *Անունս ալ գիտե...* (բարձր) *Բայց, ո՛վ ես դու, ի՞նչ կուզես ինձմե։*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Ես քեզի վրեժխնդրության սուրը կը բերեմ։*

ԱՐՇԱԶ.— *Ի՞նչ վրեժխնդրության։*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Վատ ես, եթե քիչ մը Հառաչ ըրած ուխտդ մոռցար։*

ԱՐՇԱԶ.— *Բայց ես ի՞նչպես կրնամ արի Արտաշեսի մը վրեժ առնել, որուն չոր կողմը կը Տակեն Հսկաներ, խուռն բանակ մը։*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Եվ այն Տսկաներեն մնկն ալ դու ես... Կին մը քեզի յուր թևը կուտա... Կը վատահի՞ս... Տուր ձեռդ։*

ԱՐՇԱԶ.— *Առանց զքեզ ճանչնալու չեմ կրնար ձեռքս տալ, դուցե այդ ձեռքը, որուն Տետ պիտի միավորի իմս ալ՝ անիրավ և կաշառաբեկ սրտի մը սուրն եղած ըլլա։*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Եթե մորդ անբիծ և վրեժխնդիր ձեռքն եղած ըլլար։*

ԱՐՇԱԶ.— *Մայր չունիմ ես։*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Եթե ունենայիր, զինքը շատ կը սիրեի՞ր։*

ԱՐՇԱԶ.— *Հոգիս ավելի, ես Տիմա իրեն Տետ գեղչկական*

կյանք մը կը վարեի... Ալ դպվեցա պատերազմիկ դերի լլլալե. զա՛րկ, որ թագավորդ պարծի, մեռի՛ր, որ թագավորդ ապրի:

ՈՐՄԶՈՒԻՆՏ.— Եվ մարդ համար թագավորդ կը պահեի:

ԱՐՇԵԶ.— Բայց ի՞նչ հարաբերություն ունիս դուն թագավորին հետ, դուն գեղջուկվո մը կը նմանիս... Պալատը նոր կը տեսնես:

ՈՐՄԶՈՒԻՆՏ.— Այո պալատը նոր կը տեսնեմ, բայց Արտաշեսը առջես ծունր եկած պաղատալիս տեսեր եմ... Ի՞նչ, միթե դեռ գեղցիկ չե՞մ: Արտաշես երբեմն գերիս էր, մի՛ զարմանար, պիտի ճանչնաս վիս:

ԱՐՇԵԶ.— Չեմ կարծեր որ հիմար եղած լլլաս:

ՈՐՄԶՈՒԻՆՏ.— Ես ալ գրեթե քիչ մը հասաչ հիմար կարծեցի, վրեժխնդիր մը հիմարի մը պես կը խորհի ու կը խոսի, բայց հիմարի մը պես ուժդին է հարվածը, պիս կը ծաղրես, բայց ես ալ գրեթե պիտի ծաղրեմ, երբ աւերը ձեռքիդ մեջ դողդոջե... Արտաշես իր աղջիկը բեզմի խլեց և ուրիշ աղջիկ մ'ալ աշխարհքին... Երկուքիս ալ վրեժխնդիր ենք... Տո՛ւր ձեռքդ:

ԱՐՇԵԶ.— Չեմ ճանչնար գրեթե:

ՈՐՄԶՈՒԻՆՏ.— Ուրեմն մտիկ ըրե... Արտաշես դեռ թագավոր չեղած օր մը որսի երած ատենը դեղանի Պարսիկ աղջիկ մը կը տեսնե, որ իր մոակին առջև կաղոթեր. Արտաշես վայրկյան մը կը կենա և զայն զմայլած կը դիտե և աղջիկը մոակը փախած ատենը՝ մտրակելով ձին սարբշավ կանցնի կերթա. հետևյալ օրը մինակ որսի երած ատենը նույնպես աղջիկը մոակին առջև կը գոնե և ձեռքի մատանին[4] անոր կը նետե. աղջիկն ապրատ՝

բայց չընդունիր[5]. սակայն ամեն օր հաճախելով Արտաշես՝ աղջկան սիրտը կը գրավե. աղջիկը վերջապես ալ անկե չի փախչիր, երկու շունչեր իրարու կը մոտենան, երկու ձևեր ղիրար կը գրկեն... Աղջիկը հոգվույն չափ սեր կուտա արքաորդվույն, բավական ժամանակ կանցնի այսպես, աղջկան ծնողքը անտեղյակ կըլլան այս անցքին, Արտաշես կը խոստանա զայն իրեն թագուհի ընել, երբ թագավոր ըլլա, բայց քիչ քիչ կսկսի իր տեսությունը ընդհատել և վերջապես դադրեցնել: Թագավոր կըլլա, սարի կանցնի՝ չերևար, շատ օրեր խնդճ կինը Արտաշեսի ճամփուն վրա կսպասե, բայց իզո՞ւր... դեռ կը սիրե... Օր մ'ալ Արտաշես որսի ելած առենը, հեռուեն կին մը կուգա փութաքայլ, դժգույն ու հերարձակ, և գրկի տղան Արտաշեսի երիվարին առջև դնելով. «Առ այս տղան.—կաղաղակե—Արշեղ է անունը, քու զավակդ է, սասր համար ծնողքես հեռու կը թափառիմ, չունիմ հաց՝ որ իրեն տամ... (Արշեղ զարմացական շարժումներ կընե) Արտաշես երեսը դարձուցած թիկնապահաց կը հրամայե, որ տղան առնեն և կսկսի սրընթաց հեռանալ, կինը հուսահատ կիյնա. վայրկյան մը արտասվելից կազդի... Ալ այնուհետև կատե, և վրեժխնդրության ասուպ մը կըլլա իր սիրտը: Վերջապես կը մեռնին հայրն ու մայրը, կը դառն առիթ, կը գոտեպնդի, և ահա այսօր կը հասնի պալատը, կը հարցնե Արշեղը, կը գտնե իր վահանը, կը ճանչնա իր զավակը... Այն կինը ես եմ, այն կինը քու մայրդ է...

ԱՐՇԵՂ.— Մա՜յրս (կը գրկվին), բայց Արտաշես... Իմ հա՜յրս...

ՈՐՄԶՈՒԽՏ.— Բայց դու իրեն գերին... Տիգրա՜նն է թա-
դավորը, դու չես թագավոր... ա՛ւր ձևոքդ...
ԱՐՇԵԶ.— Ջեմ ուզեր թագավոր ըլլալ...
ՈՐՄԶՈՒԽՏ.— Դահիճ եղիր... Մայր ունիս... Տո՛ւր ձևոքդ...
ԱՐՇԵԶ.— Ահավասիկ։
ՈՐՄԶՈՒԽՏ.— Երդվի՛ր...
ԱՐՇԵԶ.— Սրուկս վրա՞։ (վարագույրը կիջնե):

<(ՎԵՐՋ Ա. ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԱՐԱՐՎԱԾ Բ

ՊԱԼԱՏ

Տեսիլ Ա.

ԿՐՅՈՒՍՈՍ.— (միճակ՝ զարհուրած տեսարան կուգա, խռովյալ ճայվածքով շուրս կողմը կը զննե, ետտո կը ճանդարաի): *Երա՜զ... այս իմ պալատս է... Ես՝ Կրյուսոսն ու ոչչ եմ դեռ... Ահա կը տեսնեմ արեւուն նորատիպ ճառագայթները, որ ինձ կյանք կուվեռնեն... Ահա գահս, Բագա, սուրս. ձեռք մը զանոնք չէ տապալեր, չէ փշրեր... Երազ էր այն... Սակայն որոմոնքը կայծակին հարվածը կը զուժե, այս երազը որոմոնքն էր, կայծակը պիտի ճայթի... Ո՞վ դիք, միթե կատա՞կ կրնենք ինձ հետ, նիհե ոչ՝ բարկության կրակ պիտի ժայթքեք գահիս... Եվ ո՞վ պիտի բազմի անոր մոխրին վրա... օտար մը՝ գողոպն Արտաշես՝ իր փառաց հիշատակարաններուն մեջ անոր ոճրագործն ալ ամփոփելու և Կրյուսոսի արցունքն ու արյան կաթիլները թվելով հեշտանալու... Գիտե՞ն, ո՞վ դիք, Կրյուսոս մը ծներ կուգա, կը հեծե... աչքերը արցունքով կը փակփկին իր փառաց ատոկերուն հետ... Առեք կյանքս, բայց ոչ Բագա, կուզեմ մեռնիլ՝ քան թե*

գահեն ասոիճան մը խոնարհիլ... Միթե ձեր բարկութիւնը մարելու համար Կրյուսոսի արյո՞ւնը կուզեք, արյուն մը որ փառք կը մռնչե... Իր կմախքը գերեզմաննեն հաբը պիտի աղբա փառքն ու Լյուդիան... այո՛, Կրյուսոս չը պիտի մեռնի... Ինչո՞ւ կը լռեք, սակերք նախնյաց:

Տեսիլ Բ

ՆՈԻՅՆ և ԿԱՄԱԴՐՈՍ

ԿԱՄԱԴՐՈՍ.— Տեր արքա:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Դո՞ւ ես, Կամադրոս:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Այդ ի՞նչ այլայլյալ դեմք... Ծունկերդ կը դողդոջեն, տեր իմ:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Կյանքիս մեջ առաջին անգամ կը դողամ, Կամադրոս:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Կրյուսոսն ես դու, տեր արքա, պլուիդ՝ քաղ, մեջքդ՝ սուր, Կամադրոս՝ քոմդ, Լյուդիա՝ փառապդ ծափահար, ի՞նչ բանեն կը դողաս ուրեմն:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Աստվածներեն:

ԿԱՄԱԴՐՈՍ.— (զարմացած) Աստվածներե՞ն:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Այո՛, մեր Աստվածները դուցե ինծի դեմ բարկացեր են և կուզեն գահս տապալել և զուցե՝ բոլոր Լյուդիա համաջինջ կոթծանել:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ո՛վ երկինք... Ո՛վ ապեռիս...

*ԿՐՅՈՒՍՈՍ.— Սոսկալի է այս... Կրյուսոս մ'ալ խաղալիք կրլլա... Բո՛ղ բլլա Աստվածներ... Ուրեմն Աստված

մ՚բլլալ պետք է՝ անարգել և աներկյուղ խրախտալու համար:

ԿԱՄԱՌՐՈՍ.— Տեր արքա, Հանդարտեա, զուցե Աստվածները փորձել կուզեն զքեզ:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Բայց խիստ սոսկալի է, երբ փառասեր սիրտ մը Հուզեն Տզար ձեռք մը... կը կարծե՞ս որ փառասերը Հանգիստ ըլլա՝ երբեք... Միշտ ոտու մը պես արթուն կեբտզեն նա, կը Հառաչե սիրատարփի մը պես, ամեն բոպե անգունդեն անգունդ կը թռավալի... ատազ ատազ կը թրուշի... միշտ աչացն առջև տեսիլք... գահը կը շրջապատանն խումբ մը ճիվաղներ, կանայք ծիրանին կուզեն պատռել... վերջապես գինքը կը պատեն աղմուկ, երկյուղ, երազ, ճաճանչ... Փառքը՝ այն անհագ Հրեշը, միշտ աշխարհի ճախճախուտ անդունդներբր արյունաներկ ծոպիկներով կը ծածկե... Փառասերին Համար գեղեցիկ ատպարեզ մը... մեկ ձեռքովը զայն Հառաչ կը մղե. բալե՛, բալե՛, մինչև որ ոտքդ սայթաբի. բայց զորութենեն՝ մբրկե մը բռնված ես՝ միշտ պիտի բալես... Մինչդեռ երկե պիշեր Աբեներբ կերապեի, ան՝ այս պիշեր Աբեներեն պիշերվան մեջ ապատնացայտ նետի մը գոնչյուններ կը լսվի:

ԿԱՄԱՌՐՈՍ.— Բայց ի՞նչ պատասխանեմ, տեր արքա, չեմ Հասկնար, ո՞վ կը զրգռե Աստվածոց չանթիերբ:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Չեմ գիտեր... զուցե Կրյուտոսի փառքը... Բայց կզգամ, որ ինձ չեռ կատակ կբռնեն:

ԿԱՄԱՌՐՈՍ.— Բայց կապաչեմ, տեր արքա, Հանդարտե՛ ու պատմե՛ ինչ որ պատասխանեմ, գիտես որ Կամապրոս իր կյանքը կուտա իր Թագավորին և Հայրենյաց մեկ կոչին Համար... Եվ եթե Աստվածները բարկացեր են, եբ-

Թամ սուրս և վիզս կը նետեմ անոնց սեղանին վրա և կրամ՝ «Թող ապրին Կրյուսոն ու Լյուգիան»:

ԿՐՅՈՒՍՈՆ.— Կեցի՛ր, դու քաջ ես, Կամապրոս, և ես որ վատ չեմ՝ ինչո՞ւ պիտի զոհամ... Ահա սիրտս չը զարներ, չեմ զոհար, երեկվան գոռոզ Կրյուսոն եմ... ահա պալատս, զահս և ահա Լյուգիա... ահա սուրս և ահա Ասոլածնները... (սուրը կը ֆաշե):

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ի՞նչ կընես, տեր արքա... Սուրդ կը չոգա... Շանթեր...

ԿՐՅՈՒՍՈՆ.— Ա՜հ, մեղա՜... Գիտէիյուն... (ծունր կիյնա, հետո ոտքի կելնե բարկացած), բայց ի՞նչ ըրի... Մտներ եկա...

ԿԱՄԱԴՐՈՍ.— (ամոր առջև ծունր գալով) Ներե՛, քու գերիդ եմ, տեր արքա, հանդարտե՛ կոպշեմ... Պատմե ինչ որ պատահեցավ:

ԿՐՅՈՒՍՈՆ.— Մտիկ ըրե, այն Հայկազն Արտաշեսը, որուն գոռոզ հպարտկը արդեն լսեցիներ... Սոսկալի երազ մը տեսա այս գիշեր...

ԿԱՄԱԴՐՈՍ.— Սակա՜ն...

*ԿՐՅՈՒՍՈՆ.— Մտիկ ըրե... Գիշեր էր, լուսինը ալյուս գետին վճիտ ալյայը մեջ կը շողար[2], ես այն տանն գետնզրին վրա կը շրջագայեի, սիրտս ուրախությամբ զեղված մտիկ կընեի փառաց ներդաշնակավոր դրվատիքները, որոնք սիրտս կօրօրեին... Անծանոթ կամ դիցուհյայ ձայներ էին... որոնց մեջեն երբեմն «Կրյուսոս» անունը մրմնջող հպարտական եղանակ մը կը լսեի... Սիրտս այն ձայներուն հետ կը բրթոար... Հանկարծ գտիննգարդ բնար մը տեսա քովս, ուզեցի փառքս ինքնին ալ գրվատել, և այն-

պիսի բան հանդիպ մը կը հիշեցնէր, որ լարերը խորտակեցան, լռեցին այն անծանոթ մրմունջներն ալ և խոր լռութիւն մը տիրեց, ակամա դողացի... Գառն ծիծաղ մը այս լռութիւնը խանգարեց և պիս սարսռեցուց. զարձա այն կողմը, տեսա որ Հաղթահատակ ռազմը՝ գետին դիմացի եղերքը արձանացած՝ հիգնական ժպիտով մը պիս կը դիտեր... Վրաս ծիծաղողն այն էր... Ձայրութիւնս աչքերս բաց կը ցայտեին... «Ճանչցա՞ր դիս,—բռաւ այն մարդը,—ես Արտաշեան եմ»... Այս անունը լսելուս՝ սուրս քաշեցի... Նա ալ ակնթարթի մէջ սուրը քաշեց, գետին ապիի կողմը ցաթրեց... Սուրերնիս շառաչեցին... Բռավական ժամանակ տեւեց... Ուժս սպառեցաւ... Հարվածն ընդուներ էի... Հոգեսպառ գետը ինկա... Նա Հաղթական նայուածք մը ձգեց վրաս... «Կյուդիա, դու իմս ես»,—բռաւ և սրացաւ... Շեռս ապեկտուր հեծեծանքներ լսեցի... գետին մնչեն հյուծյալ աչքերով վերջը Սպոնր տեսա, որ պիս կողբար... Աչքերս գոցեցի, Տոմիտեանեան կոհակ մը վրաս բռավլեցաւ... և զգացի, որ գետին հոսանքը պիս քշեց տարաւ...

ԿԱՄԱԴՐՈՍ.— *Բայց մի՛ հուսահատիր, տեր արքա... Ձո՞ մատուցին Աստվածոց:*

ԿՐՅՈՒՍՈՍ.— *Ո՞հ, ըղերգին միաքս կաշկանդվեր է... Ձիս ուշաբերեցիր, Կամադրոս... Այո՛ ողջակե՞զ... Փախանակ Կյուդիա զոհ ըլլալու. Աստվածներր զիս՛ են... Ո՞վ կա հոգ... Պալատակա՞նք...* (պալատական մր ձիւս կր մրռնե) *դնա՛ շուտ մեհյանը և բա՛ր բրմապետին, որ հիմա անվիվ ողջակեզ մատուցանե Աստվածոց իրենց հաշտութիւնը Տայցելու համար և Յոզ քարոզի համայն*

Լուզացվոց, որ ամենքն ողջակեզ մատուցանեն Աստվածոց բարկութեան շանթերը արգելելու (պատառակաթը կը մեկնի)։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց մոզ չես տար, տեր արքա, որ ես զոհ բլլամ Կրյուսոսի համար, եթե իմ արյամբս Լուդիա ապատութիւնը գնելուս համին դիր։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Դու վախ չը պիտի ըլլաս... Լսեցիր քիչ մը առաջ այն տոհմալի երգը։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց նեթե՛, տեր արքա, եթե երբեք ես Կրյուսոս մ՚բլլալու վե՞ ճակատագիրն ունենայի՝ չէի վախնար Արտաշեսի մը հաչակեն... Հարցուր մեզ մը յապաւորներուն, թե առանց սարսուռի կրնա՞ն քու անունը արտասանել։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Հանգուցն խոսեցար, Կամադրոս... Ես միայն Աստվածներեն դողացի։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Աստվածները պիտի հաշտվին, տեր արքա։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ուրեմն Կրյուսոս ալ չը դողայ, այլ երգեց... և եթե վայրկյան մը դողայ՝ անցելուն հիշատակարանաց և ապագա փառաց վրա ուրախութեան սարսուռ մ՚էր այն... Հիմա գործել Կրյուսոսն եմ... Փառը կամ բոլ... երկուքն ալ չեմ դողար։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Մեղքանք երթանք, տեր արքա։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ո՛չ, հոս կաղմենք... Վայրկյան մը առաջ Աստվածոց դեմ դայրացա... Պիտի դղջամ... Ապրեցե՛ք ինձ հետ, սակ՚ըր բազմաթարց...

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ահա զոհերուն ճննճնըր երկինք կը բարձրանա, տեր արքա... Ահա կը լսվի բարեկերան մեղեդին... Անշուշտ շանթերու տեղ արմիր պիտի ցոլան։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ուրեմն ծունր դանք... այսօր է որ ծնրադրել սովրեցա...

ԿԱՄԱԴՐՈՍ.— Եվ Հաշտութեան ավետեաց ձայնին սպասանք... (ծուռ կուզան, ճնռուն աղմուկով խառն ապորի ձայներ կը լսվին, որ բավական կը տևեն):

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ձայները լսեցին... ճակատագիր մը կորոշվի... վճիռ մը կտրատա անշուշտ... Ա՜հ, ականջս սիրտս կը տրոփե... Ա՜հ, ձայն մը... Այս լռութիւնը սոսկալի է...

ԿԱՄԱԴՐՈՍ.— Տեր արքա...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ձա՜յն մը...

ՁԱՅՆ ՄԸ.— Հաշտութի՜ւն... Հաշտութի՜ւն...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ա՜հ, զնդկիկ բարբառ:

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ և ՔՐՄԱՊԵՏ

ՔՐՄԱՊԵՏ.— Արքա, Աստվածներն Հաշտվեցան:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Օրհնյալ ըլլան դիք:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Օրհնյալ ըլլաս և դու, պատգամդ Աստվածոց... Այսօր վերածնեցար Կրյուսոս, և առաջինն ավելի ահեղ, երազի մեջ երազ մը տեսար և այսուհետև կյանքին փառք պիտի բամեր. կյանքին մեջ վայրկյան մը դողաց և այն վայրկենին փոխարեն աշխարհ պիտի դողացնեի, քանի որ իրեն հետ հաշտ են Աստվածները:

ՔՐՄԱՊԵՏ.— Ուրեմն, արքա, պե՛տք է որ միշտ արդարութեամբ և խոհեմութեամբ իշխես կյուգիո, որպեսզի արդարադատ դիք երբեմն զայրանալով չը խռովին թագավորութիւնդ: Գիտցիր որ այն առեն Աստվածներն դատ

ոչ ոք կրնա պահել սարսել, երբ անոնց զարհուրելի բազուկները տարածվելով շուք տան Լյուզիան գահին և իրենց գոհ ժպիտներուն ճաճանչովը ակամակատ թագդ ցոլացնեն. լուզան Լյուզիք փառաց հեղեղի մը մեջ, հիանա համայն սիեզերք Լյուզիան դրախտին վրա... Մե՛ծ են Աստվածները և իրենց սիրելի ժողովրդյան փառաց՝ նախանձախնդիր և Կրյուսոս ալ՝ Աստվածոց ճնոր:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Դնդեցիկ խոսեցար, Պյութոս, Կրյուսոս Աստվածոց արժանի ճնոր պիտի ըլլա, անոնց փառացը պիտի զոհե սուր, կյանք և սիեզերք:

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ և ԽՈՍՐՈՎ

ԽՈՍՐՈՎ.— (մտնելով) Ողջույն ձեզ, արքայդ և ավազանիր Լյուդացվոց:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ո՞վ ես դու:

ԽՈՍՐՈՎ.— Արեևլյան հրեշատակ մը:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ո՛չ, Արեևլյան սատանա մը, որ հանդգնարար Կրյուսոսի պալատը կը մտնե առանց երկրպագելու անոր վեհափառութեյանը:

ԽՈՍՐՈՎ.— (առ Կրյուսոս) Արքա...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Կը տեսնեմ որ շատ հանդուգն ես:

ԽՈՍՐՈՎ.— Ես ալ կըսեմ, թե աշխարհակալն Արտաշես չը հանդուրժեր երբեք իր դեսպանը օտար թագավորի մ'առջև խոնարհած տեսնել:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Արտաշե՞ս...

ԿՐՅՈՒՍՈՍ.— (մեկուսի) Նույն ինքն է...

ՔՐՄԱՊԵՏ.— Կը պիտի քեզ, ո՛վ դեսպան, որ Արեւելքին կը խլրտիս հոս անխոհեմութեամբ Կրյուսոսի դէմ դուն պատերազմ հաշակելու, որուն հետ դեռ Հիմա Աստվածները հաշտվեցան:

ԽՈՍՐՈՎ.— Լավ կընես, քրմապետ, եթէ երթաս Աստվածոցդ օգնութիւնը հայցելու, որ սին հաւատով մը զոհասիրեն Կրյուսոս և իր բանակը:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Բա՛վ է... բա՛վ խրախտացիր, Հանդուգն, և Հիմա ալ մեր Աստվածները կը նախատես... Հիմա հոս կը պառկիս գլխուդ:

ՔՐՄԱՊԵՏ.— Երկաթամիտ են դիք, տեր արքա:

ԿԱՄԱԴՐՈՍ.— (մեկուսի) Կրյուսոսի դողը սկսավ... երազը իրականութեան կը կերպարանափոխի:

ԽՈՍՐՈՎ.— Ուրեմն վերջ տանք այս անօգուտ բարբաջանաց, և լսենք աշխարհակալ Արտաշեսի հզոր պատգամը:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Կը հրամայեմ քեզ, ո՛վ դեսպան, որ Այրարատյան բարձրերին չորտաս. դիմացդ որ կանանձ՝ Կրյուսոսն է... դուն համբերութեամբ սպասելով կրակ թափես գլխուդ:

ԽՈՍՐՈՎ.— Եվ դու, արքա, օվկիանոսի կոհակաց տակեն մի՛ մոնչեր, դուրս հանի՛ գլուխդ և տես մեկ մը քու հակառակորդդ... Օ՜ն, վերջացնենք, պետք է որ Հիմա գնենք և թագ, գահ և երկիր թափին Արտաշեսի լիապոր դեսպանին առջև... Ո՛վ Կրյուսոս, եթէ գոնե անշուք կյանքդ կը սիրես... խոնարհե... իսկ եթէ կը համառիս՝ մեռի՛ր, մեռի՛ր... ամենքնիդ ալ... Թե որ կը խնայես ժողովրդյանդ՝ անձնատուր և հպատակ բրի գանձեր մեծին Արտաշեսի և անոր փառապր ծաթահարի:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ջեմ կրնար հանդուրժել... Երկինք և երկիր...
ԿԱՄԱԴՐՈՍ.— Ո՛վ կատապուլյանս...
ՔՐՄԱՊՑՏ.— Արդա՞ր դիք...
ԽՈՍՐՈՎ.— Օ՜ն, պատասխան մը... Գա՛ր կամ մա՛ռ...
ԿՐՅՈՒՍՈՍ.— Համբերութեան կապարէ... ժամանակ ունինք խորհելու համար...
ԽՈՍՐՈՎ.— Խորհեցե՛ք... Թագ կամ դագաղ:
ԿԱՄԱԴՐՈՍ.— Ի՞նչ ծայրահեղ հանդգնութեան:
ԿՐՅՈՒՍՈՍ.— Բայց հանուն իսպառնալիքի, հանուն Աստուածոյդ՝ մնկնե՛, որ տառնձին խորհինք:
ԽՈՍՐՈՎ.— Լա՛վ, խորհեցեք:
ԿՐՅՈՒՍՈՍ.— Պալատականք, սենեակ մը տարեք պինքը և պատուհեցեք:
ԽՈՍՐՈՎ.— (Երթալով) Կրկուսս, դարձյալ կքանի, բնաբե՛ անշուք կյանքը:
ԿՐՅՈՒՍՈՍ.— Ալ բավակա՛ն է (բարկութեան նշան մը կրնե.— դեսպանը կը մնկնի):

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ, բացի ԽՈՍՐՈՎԵՆ

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ա՛խ, եթե Աստուածներեն պատկառանք չդպայր և իրմեն նաբր ևկոզ Արտաշեսը չը մատածեի, պինքը հիմա ջախջախած էի...
ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց բաջալերվե՛, տեր արբա, մեծ վա՞տ են հլուպայիք:
ՔՐՄԱՊՑՏ.— Եվ մեծ արդարադատ չե՞ն դիք... Անշուշտ

պիտի չսխալանն մեր ասոխին գլուխը, որ Հանդիսարար դիրննք և դիս և Համայն Լյուդիան նախատանց։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Սուրբ դեմ սուր, տեր տրբա... Մեկը կը փըշրի... մյուսը կը Տարվածն... Կը Տաղիանակն պայծառ ճակատագիր մը... Մինչև հիմա ուսկի՞ց դողացիր կամ Հաղիվեցար, տեր իմ... Փութրատեզ կոհակ մ'էիր անհուն Տարվածնեու դեմ, որ առանց վիրավորվելու զարձյալ կը մնչե... Ո՞վ կրնա օվկիանոսը կլլել... Տեր տրբա, գլուխդ վեր առ և տես փառապարգ ճակատագիրդ...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ես անշուր կյա՞նքն բնաբեմ... Երբե՛ք... Պիտի մաքառիմ... Արտաշեսի դեմ կրյուսո՛ս, փառքի դեմ Հաղիանակ, սուրի դեմ սակր, գորությանց դեմ Աատվածք... Արտաշես չի՞ պիտի գողա։

ՔՐՄԱՊԵՏ.— Ցնծա՛, տրբա... Հիմա վայրկյան մը աչքերս գոցվեցան և Աատվածնները պատգամ ապրեցին սրտիս... Ա՛խ՛, Տաղիանակ ձայն մը մրմնջեց. «Կրիտոս, անցնալ բնդ Ալիս գնա՝ բակեսցէ դիշխանութիւնս»[5])... բաշտելերութիւն, տրբա. Աատվածոց ճեռ մը կարելի՞ է որ պատուիրամբ ամոթ տարի։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Օրհնյալ բլլան դիք, որ միշտ կը պաշտպանեն Լյուդիան... Պիտի Հաղիննք... դեռ Ալյուս գետեն անդին ալ... Արտաշեսը կա... Պիտի խորտակի անոր իշխանությունն ալ... վայրկյան մը առաջ ուրացա դիս և փառահեղ անցյալս... ապագային մեջ Արտաշեսի վերջին Տառաչանքը կը լսեմ... Այրարատյան առյուծը կը տապալի

ԿԱՄԱԴՐՈՍ.— Հիմա կը ճանչնամ Մեծն Կրյուսոսը...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Զորակա՛նք, ինչ զա, զեռպանը... (Խառամ կերևա)։

Տեսիլ Զ

ՆՈՒՅՆՔ և ԽՈՍՐՈՎ

ԽՈՍՐՈՎ.— Ի՞նչ ըրիր, տեր արքա, ևս խոնարհ՝ հանկատ մը տեսնել կուզեի և խրախտ ու խոժոռ դիմք մը կը տեսնեմ... Ի՞նչ վհատիլիր, մեռնի՛լ, եթե՞ խոնարհիլ...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Հաղթել...

ԽՈՍՐՈՎ.— Կը պիտամ, Կրյուսոս, եթե տարր փշրի... Արտաշես չը պիտար:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Է՜հ, պատերազմը կսկսի... զգուշացի՛ր:

ԽՈՍՐՈՎ.— Խնայե՛ ժողովրդյանդ, արքա:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ո՛չ, անոնք կը սիրեն ասպին դեմ մեռնիլ:

ՔՐՄԱՊՏՏ.— Պաշտպան են Աստվածներբ:

ԽՈՍՐՈՎ.— Ուրեմն մեռնիլ և Լյուդիան կորսնցունել կուզեր:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Այո՛, հաղթել և Լյուդիան հավերժացնել:

ԽՈՍՐՈՎ.— Դու չես ճանչնար Հայն ու Արտաշեսը:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ալ բավական է, սուրս պատյանին մեջ կը խայտա:

ԽՈՍՐՈՎ.— Ղզջա՛, Կրյուսոս, դուն Արտաշես խիստ մտա է... Դուն Առյուծը խիստ մտաճն կը մոնչե:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Պատերազմը կսկսինք:

ԽՈՍՐՈՎ.—Ուրեմն՝ մեռի՛ր... (կը մեկճի) (վարագույրը կիջնե):

<(ՎԵՐՋ Բ ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

Ա Ր Ա Բ Վ Ա Ծ Գ.

ԲԱՆԱԿԵՏԵԳ.

Տեսիլ Ա.

ԱՐՏԱՇԵՍ (միճակ)

վարագույրը բացվելուն Արտաշես կը մտափն վրանին մեջ.—Չորեքը գիրուցան տարածված[1] կը ճնաճած.—Արտաշես արթնցնելով դուրս կելնե:

Դեռ առավոտ չէ ծագեր... Ահա լուսինը և աստղերը որ՝ կը փայփայեն... Ես չեմ կրնար ննջել, այնպիսի բոց մը կը վառի կուրծքիս տակ, որուն կայծերը այս աստղերեն ավելի բյուրավոր են, կայծեր՝ որոնց յուրաքանչյուրը մեկ մեկ գահ յաճյուն պիտի փոխեն... Ո՞վ գիշեր հեշտ և տխուր, ամպ և երազ. փախի՛ր... Դու որ այս նահատակվեր անտառին խորը Թագս, սուրս և սպառվարտս չես ցոլացներ, չես վառեր պիս ճաճանչներով, չունիս հարիւրյան ձայներ, պինդ շառաչներ, ծափեր և Թագեր. կը ծածկես սև քևերուդ տակ Արտաշեսն ու յուր փառքը... Գերեզմանական սավեր մը ունի[2]... Այս հովը. ալին ու տերևն ալ Թող մահվան մրմունջ մը ունենան...

Բայց ես չեմ ուզեր մեռնիլ ցուրտ քարի մը վրա, այլ փառաց հեղեղի մը մեջ խեղդվիլ. պիտի իյնամ շնչասպառ պահելու աճյունին վրա միայն և վերջին չունչս մառախուղ մը, փոթորիկ մը, սուգ մը, սարսուռ մը պիտի տարածե համայն աշխարհ... ես եմ Արտաշեսը, իշխանութեանց ժանտախտը, բռնավորաց սարսափը, դյուցազանց նախանձը, Հայաստանի փառքը... Դեռ չեմ մեռնիր, ճերմակ մորուքի մը տակ կուգամ փառս երիտասարդ տեսնել (Ուրմզդուխտ կ'երևա, որ կամաց կամաց Արտաշեսի կը մոտենա):

Տեսիլ Բ՝

ՆՈՒՅՆ և ՈՐՄԶԴՈՒԽՏ

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (մեկուսի) *Ինքն է...*

ԱՐՏԱՇԵՍ.— *Գեղեցիկ է փառքը, միայնության մեջ երազ, բայց ազմուկի մեջ՝ ճանճանչ:*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Կանչնի փառքը և կմախք մը կը մնա... կը սխալիս... ո՛վ թագավոր:*

ԱՐՏԱՇԵՍ.— *Ո՛վ ես դու:*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Նախ կին մը... երիտասարդության, սեր, սովեր, հիշատակ և...*

ԱՐՏԱՇԵՍ.— *Չեմ հասկնար:*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Մի՛ խռովիր, մահվան տրեշտակ մը չեմ և երբ բլլայի ալ՝ կը պիտի քու վրադ...*

ԱՐՏԱՇԵՍ.— *Ուրեմն ի՞նչ կուզես ինձմե...*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Վանդի կուզեմ բեզ փառաց երազներու մեջ տեսնել միշտ:*

ԱՐՏԱՇԵՍ.— Դու որ այդպես հանդուգն կը խոսիս՝ կամ խելագար մ'ես և կամ չես գիտեր որո՛ւ դեմ ըլլալդ։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Անշուշտ... վտանգի դուն ալ պիտ չես ճանչնար։

ԱՐՏԱՇԵՍ.— Ես ոչ քեզի պես կնոջ մը հետ պատերազմ ըրած և ոչ ալ երբեք ճանչցած ունիմ... Ես Արտաշեան եմ...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Երիտասարդության վրա խոսինք, Արտաշես, (Արտաշես կը սարսռի) կը տեսնես, որ առջի պես դեղեցիկ չեմ... Երբ բնության դեղեցիկ ավանդ մը խորշոմներու և ալեխառն մազերու տակ կը նվաղի՞... սերը դեպ յանմեղության և փառքը դեպ յաջյունչեղության կը քալե... Արյան մեջ ձայն մը կա, դու որ սիրույդ մեջ սխալեցար՝ փառքիդ մեջ պիտի տուժես... Ճանչցա՞ր դիս հիմա...

ԱՐՏԱՇԵՍ.— (մկուսի) Կը ճանչնամ... (բարձրեն) երբե՛ք...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ա՜... Չե՞ս ճանչնար։

ԱՐՏԱՇԵՍ.— Բայց պիտի ըսե՞ս վերջապես, ի՞նչ կուզես ինձմե։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Թագուհի ըլլալ կուզեմ։

ԱՐՏԱՇԵՍ.— Ա՜հ, բոլորովին հատուցանելիր, քե խենթ ես։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Դարձյա՞լ խենթ։

ԱՐՏԱՇԵՍ.— Միայն շղթա մը չեն կապեր պարանոցդ։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Կը տեսնեմ, որ թագը շղթայով փոխանակել կուզես։

ԱՐՏԱՇԵՍ.— Միշտ քա՜զ... Թագը դատարկ ձեռքով չատացվիր, թագը Հզոր սուրի ծայրն է, հիմար կին։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Երբեմն ալ Համբույրի մը կամ լեզվի մը ծայրն էր... կը տեսնեմ, որ սիրող լայն է Արտաշես,

պատիր խոսումով մը անբիծ լանջը մը պղծեցիր... Ա՜հ, ես թագն մը ավելի գեղեցիկ էի։

ԱՐՏԱՇԵՍ.— Կը զառանցես, կին դու։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Անունս տուր։

ԱՐՏԱՇԵՍ.— Բայց։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Որմզդուխտն եմ։

ԱՐՏԱՇԵՍ.— Սառանկ անուն մը չեմ հիշեր։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Սիրագ ժայռ է, սառ է, Արտաշես, ինչպես կը կոխկռտես արմատն թափած ծաղիկ մը։

ԱՐՏԱՇԵՍ.— Բայց բավակա՛ն է, ալ գնա՛, դիշեր առանն անհանգիստ մի՛ ըներ զիս։ Ուրվականի մը պես պաղ ես։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Սակայն միտքդ բեր երիտասարդության որսերդ... կը հիշե՞ս գյուղը, իմ անակս, մեր հովանին ու ծաղիկն կանաչ անկողինը, այն արցունքները, զոր լանջքիս վրա կը թափեիր և ես կը համրեի, բաժանումդ, որ դիս սառեցուց, հանդիպումնիս վերջին անգամ, որ Արշակը քեզի ավի, կը հիշե՞ս։

ԱՐՏԱՇԵՍ.— Բայց երբեք չեմ ճանչնար քեզ և բան մ'ալ չեմ հիշեր ըսի... Պիտի մեկնի՞ս։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Հապա՞ բա ես, Արտաշես...

ԱՐՏԱՇԵՍ.— Եվ դու ալ համբերությունս կսպառես։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Թագավո՛ր, դողա՛ Պարսկուհվո մի վրեժխնդրութիններն... Կամ մեռցո՛ւր զիս և կամ՝ մեռի՛ր։

ԱՐՏԱՇԵՍ.— Երե կնոջմն մը դողայի՝ Արտաշես չէի ըլլար, վատ կըլլայի, թագավոր չէի ըլլար՝ զահիճ կըլլայի... Բայց ես իմ զահճուհվույս կրսեմ՝ «միշտ ապատ ես»...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Մի՛ վստահիր... Արևը հորիզոն մը[8] և կյանքը գերեզման մը, ատոդը անկում մը[9] և բախտը անիվ մը

ունի... Ծագկին ծոցը արցունք[10], աերևին մեջ հառաչ, կոհակին մեջ մահ, խոտի[11] մը մեջ թույն և ափ մը հողին մեջ գանգ մը կամ թագմը կա[12]... Մի՛ վատահիր, կըսեմ, փառքիդ և զորութեանդ վրա, եթե առանձին գտնես ինքզինքդ՝ քու[13] դռռոց հրամանդ ու հնչակդ կապարի վիհերու և լեռներու, անտառներու[14] և դաշտերու անհունութեան[15] մեջ և ձայներու[16] արձագանքն իսկ զքեզ կը ծաղրե... Ես ալ դեղնցիկ էի և կը խրոխտայի[17], գեղեցկութեանս անցավ, կուզեմ տեսնել քո փառացդ վերջին ցոլմունքն ալ... Արտաշես, ծերութենես ավելի կատեմ զքեզ. շատ անգամ դեղնցիկ ծաղիկները թույն ունին... Սըրտերը խունկի կը նմանին, որ չայրած՝ անուշ և հեշտ հոտ չեն բուրե[18], հեռ, ոխ, վրեժ, ատոնք են որ սիրտս կը վառեն, ատոնք սիրտ վերջին բոցերն են՝ կը մարեն, բայց աճյուն մը կը թողուն... Կնոջ արյունը կոհակ կոհակ կհոսա, կնոջ դաշույնը կաթիլ կաթիլ արյուն կը քամե... Օձի մը պես կը սողա... Առյուծը կը դողա։

ԱՐՏԱՇԵՍ.— (սուրը նետելով) *Առ Արտաշեսի սուրը, որ մեկ հարված մը ունի, և տեսնեմ Պարսիկ և վրեժխնդիր կնոջ մը հարվածը[19]... Գիտես որ արծիվը օձեն վախ չունի[20], թեև[21] թույնը կը դերապանցի[22]։*

ՈՐՄԶԴԻԽԱՏ[23].— *Ես առ սուրդ, ես դաշույն ունիմ, ինքը սթեփյան մեջ կապաննե, որպեսզի օրհասական ոտքին միայն իր աչերուն փաղփյունը ցույնե... կը մարի, կիյնա... բայց հարվածը հաջողված է։*

ԱՐՏԱՇԵՍ.— *Ահա դիշեր, ահա խավար։*

ՈՐՄԶԴԻԽԱՏ.— *Քու աչերդ լույս ունին։*

ԱՐՏԱՇԵՍ.— *Ա՜հ, հանդարտ սիրտ կուզե՞ս հարվածել։*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Կինը չը հնշտանար թշնամվույն վերջին հնծնծանքներովը... Միայն անոր մարմինը սառած, աչքերը գոց, սիրտը դադրած և վրեժը մարած տեսնել կուզե... Կնոջ մը[24] սերը խիստ քաղցր է և ոխը՝ խիստ դառն[25]:

ԱՐՏԱՇԵՍ.— Ուրեմն դիս սպաննե՞լ, թե երազել կուզես:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Չքեզ սպաննե՜մ... խոցե՜մ այն սիրտը, որ երբեմն իմ լանջքիս վրա կը բաբախեր, ո՛չ, սիրտ հիշատակը արցունք մը ունի, արցունք մը կինը կուժաթափե. կը հաղթե... մի՛ խռովիր Արտաշես, ատա կը բաժնվիմ քեզմե, փառք կապասե քեզի, իսկ մահ՝ ինծի:

ԱՐՏԱՇԵՍ.— Ճիշտ հիմար մ'է (բարձր) այն, որ չը վախնար՝ կը վախցնե:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Թագավորին և դեղչկուհվույն մեջ սուր մը, թագ մը կամ վիհ մը կա, տեր արքա, քիչ մը հառաջ վրեժխնդիր մ'էի, հիմա կին մ'եմ... թագուհի չեմ, դարձյալ դեղչկուհի մ'եմ... մնաս բարյա՜վ... (մեկուսի) կր տեսնվինք... դուցե քիչ մը հաքը... Արշեղ կամ ես... Ե՜ս... (կը մեկնի):

Տեսիլ Գ

ԱՐՏԱՇԵՍ (միևնակ)

Վայրկյան մը դադցի, կնոջ մը աչերուն փոփյունը սոսկալի է... Որմզդուխտն է, կը սիրեի դինքը... վեհանձնությունս կը վիրավորի, երբ կին մը զարնեմ, տկար ու դադար արարած մը... Եվ ինչո՞ւ պիտի կասկածիմ. ազնիկ դիտեմ, որ խենթեցած է, սիրտ հիմար մը. կը խոսի, այլ չը խորհիր... Բայց դեռ առավոտ չըլլար, և

ես չեմ կրնար ննջել... խոսրով պեռ չերևցավ... Գուցե հիմա բանակը եկած ըլլա... (կը մեկնի):

Տեսիլ Դ

ԱՐՇԵՋ (միճակ)

Ի՜նչ թշվառական մ'եմ ես, հայր չեղած դաժիճ պիտի ըլլամ... Բայց մայր ունիմ, պետք է որ երդումս գործադրեմ և երթամ մորս հետ գեղչկական կյանք մը վարելու։ Ի՜նչ սուղ է այդ կյանքը... երեք օր պայմանաժամ ամսավ. առաու ըլլալուն միջոցը պիտի լրանա... վաա մը պիտի ըլլամ... Ահա վրանը, գլուխ մը որ մեկ հարվածիս կսպասե... Նա իմ հայրս չէ, այլ գույգ մը տատրակի որսորդ... Թևսևառ քույրս էր, սակայն դինքր կը սիրեի... Արտաշամա՜ն... մայրս չը տեսա, որ պայմանաժամը հապաղեի, բայց սոխպված եմ օր մը Արտաշեսի դժգույն գլուխը իրեն ներկայացնելու... Թող այս գիշեր ըլլա... (դեպի վրաներ կը մոտենա և մռիկ կրնե) *ձայն չկա, կը քնանա անշուշտ... Կը դողամ...* (ևեռս կը մռնա, վայրկյան մը լուռ կը դիտե) *ա՜հ, հոս չէ, հիմա Աբեր կը ծագի...* (նվաղյալ բազմոցի մը վրա կիյնա) *Արտաշամա՜ն... անգո՜ւթ մայր...* (գլուխը ձեռքերուվը կը ծածկե և կրնկոդմանի. վայրկյան մը տեսարանը պարապ):

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆ և ՈՐՄԶՌՈՒԽՏ

ՈՐՄԶՌՈՒԽՏ.— Բոցեղեն մրրիկ մը պիս-պիտ կը նետուի միշտ... Արտաշեսի արյունը դաշույնս կը քաշե, մե՛րը է Արշեղ-բող մարդասպան չըլլա, ո՞ւր է հիմա արդյոք... կը խոհա... Միթե վրա՞ն է թագավորը, կը նիրհե՞... Ջիս ծագրեց, խննի կարծես, անցյալը ուրացավ, նախատեց, վրե՞ժ, արյո՞ւն... Բոզ թագավի հուշերու պատրանքին կամ պատանքին մեջ... Փառք և սեր իրարու ոտքս հանդիսացան... Վայրկյան մը զոց աչքերը ինձ համար բավական են... (վրանին կը մոտենա և մոխիկ կընե) բնս շնչառությունն մը կը լսեմ... վերջինը պիտի ըլլա... (զգուշությամբ ճերս կը ապդի) ա՜հա կը բնանա... Ինքն է, Արտաշես... Հարված մը... (կը զարնե):

ԱՐՇԵՂ.— Ա՜խ... (կսկծալի և խոժոռ մայրը կը դիտե) Անիծյալ (կը մեռնի):

ՈՐՄԶՌՈՒԽՏ.— Արշե՛ղ... (սարսափած կարձաձայնա) Զավա՜կս... (կը գրկե) Մեռա՜վ պիս անիծելով... վրեժխնդրության համար ապրիլ մը չը մրմնջեց... Սոսկալի է այս... Ա՜հա վրեժխնդրության բոց մ'ալ... կը պատպակիմ, ծարավի եմ... կաթիլ մը արյուն ոտնիս սրսեն... Որեղրիմ բախտ, զավակիս արյունը չուզեցի... (ճակատը սրբելով) Ջըլլա որ հակտիս ցայտե... չնչեմ որդեսպան անունը... դինքը վրեժխնդրության համար սնուցի, երե ոչ կը չնչեի սիրտպուժի մը հիշատակը... Բայց դեռ ես կյանք և վրեժ կը շնչեմ... դեռ կրնամ ապտնել Արտաշեսը:

ԱՐՏԱՇԵՍ.— (դրսեն) *Ուրեմն չեն խոնարհիր...*

ՈՐՄԶԴԻՒՏ.— *Ինքն է... Բա՛խտ և խաւա՛ր, ինձ կրթնեցներ...* (կը մեկնի):

Տեսիլ Զ

ԱՐՏԱՇԵՍ, ՀՈՍՐՈՎ

ՀՈՍՐՈՎ.— *Երի՛ր, տեր արքա, չը կրցա վերջապես քու փառացդ ճաճանչներովը կրկուսոի աչքը շլացնել:*

ԱՐՏԱՇԵՍ.— *Լա՛վ, լա՛վ, արչան կուգեն:*

ՀՈՍՐՈՎ.— *Սուրին շողչունեն չեն զգուշանար, տեր արքա, պետք է որ Հարվածը զգան իրենց կուրծքերը... Ժայռի մը վրայեն խաղաղ օվկիանոսը կը դիտեն անտարբեր, պետք է որ հուզին կոհակները և այն ապաստանարանը ողողեն, մո՞ւ անխոհեմներուն...*

ԱՐՏԱՇԵՍ.— *Ահա արշալոյսը կը ծագի, կը գժգունին աստղերը՝ Կրկուսոի պարտությունը նախազգալով, և լուսինը շառագունած արևմուտքը կը խոնարհի գույժ տալու... Ահա սոխակներն առաջուց Հայկյան Տաղթությունը կը նվագեն... Հիմա Արևը կը ծագի... պիտի քալենք...* (վոռը կը ճիչեցնե. զորքերը բներեն ցատկելով կը պատրաստվին և տեսարանին վրա կուգան կը շարվին):

Տեսիլ Է

ՆՈՒՅՆՔ, ՎՐՈՒՅՐ, ՋՈՐԱԿԱՆՔ և ԱՅԼՆ

ՎՐՈՒՅՐ.— *Տեր արքա...*

ԱՐՏԱՇԵՍ.— *Կրկուսոս արչան մեջ կը փնտռե Տաղթությունը, Վրույր...*

ՎՐՈՒՅՐ.— Չը խոնարհելու կը հանդգնին... Մի՛ զարմանար, տեր իմ, Կրյուսոս սարսափելի գոռող մ'է:

ԱՐՏԱՇԵՍ.— Ես ալ զոռոգները կը ջախջախեմ... Օ՜ն անդր, զորականք, մերկացուցե՛ք սուրերնիդ Կրյուսոսի կենացը, լարեցե՛ք ձեր արևասրող նետերը Լյուդիս փառացը... Օ՜ն, փառաց գարու մեջ կը ցոլաք. ճանչցուցեք աշխարհի թե Հայ եք... Հակա Մասիսի հակա զավակներ, սարերուն բերող հակա կռճակներ... սրձանացե՛ք սպառազեն... Նեցուկ է մեզի բախտը, մեր թշնամյաց պիտուն կապտաոնա լախտը... Հայ բռնենք Արեմուտքը, Հայ բռնենք տիեզերքը, Հայ բռնենք Հայաստանը... Հայ հողմենք, Հայ պարծինք, Հայ սիրենք, Հայ մեռնինք... Մեր վրա կը տարածվին ահա Մասյաց շուքերը... Միթե ձեր ազիքներուն մեջեն չեք զգար անհագելի զորություն մը, բուռն հարված և հագեցնակ:

ՎՐՈՒՅՐ.— Տեր արքա, Հայուն պատերազմի մեջ սպառած սիրտը չը հանդուրժեր այս ժամուս և փառաց զգացմեն կուզե թավալիլ անհուն թշնամյաց դիակներուն վեր ըլլալու:

ԽՈՍՐՈՎ.— Հայուն սիրտը կը փշրի, տեր արքա, բայց սուրը՝ երբեք:

ՋՈՐՔ.— Հագեցե՛ք, հագեցե՛ք:

ԱՐՏԱՇԵՍ.— Սուր և հարված, սիրտ և քաջություն... օ՜ն անդր, հառաջ... կորյունք Այրարատա[26]...

ԻՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Ի փառագոռ փաճղոռանց ի շրինդ
Թուրզոմյանց) գոռ գոռինն ի բինդ

Սարսռասարսափ տան առձագաններ
Օտար ափունք, դողդոջեն գանգ:

Ճանճանչք բյուր բոց, նանչյուն նետից,
Արևասող փոշիք նետից
Բավ են ի մահ ոսոխաց վատ.
Տեղի տուք Հայ զբնդին անհաղթ:

(Վարագույրը կիջնե)

<(ՎԵՐՋ Գ ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԱՐԱՐՎԱԾ Դ

ԾՈՎԵՍՔՐ

Տեսիլ Ա

ԿՐՅՈՒՍՈՍ, ԿԱՄԱԴՐՈՍ, ՋՈՐԱՎԱՐՔ, ՋՈՐԱԿԱՆՔ, ՆԱՎԱՍՏԻՔ։

ԵՐԳ ԾՈՎԱՅԻՆ

Ահա արևն ոսկեվարսիկ
Կը փողփողե զալյոմ ծրփին,
Նրբա՜յրմ հաղթ ֆաջ. ինչո՞ւ սարսիմ
Մեր բշնամիմն ալ սիրտ ունին։

Մեր եռակներն ունին արյուն,
Մեր սուրերը՝ մանու հարված,
Մեզ համար է փառք, հաղթություն,
Թշնամին մեզ չնչել չանաց։

ԿԱՄԱԴՐՈՍ.— Տեր արքա, ահա կսկսի երկինքը ամպոտիլ, հեռավոր հորիզոններեն ցոլմունք կը տեսնվին, փոթորիկը պիտի պայթի, Պոսիդոն[7]) մեզի հետ է, օ՜ն, թշնամիները պիտի շանթահարին։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Կամադրոս, այս սև ամպերն Արտաշեսի բա-

նակին սովերն են և այս լույսերն ու ձայները Արտաշեսի ծիծաղները... Խնդացի՞ք, ո՞, Հայեր, քիչ մը հաքը պիտի լաք, Լյուդական ալինները ձեր արցունքը պիտի ծծեն և կարմիր կոհակներ պիտի թավալին Լյուդական եզրերուն վրա հնծկլտալու... Արտաշես չզղար, որ Կրյուսոս մը կա, Կրյուսոս մը, որ Արևմուտքը դողացուց, Արևելյան փառասեր մ'ալ իր թագը փառաց զոհելու կուգա... Թող գա... Երկու թագերու մեջ արև մը կա, մինչդեռ երկու սուրերու մեջ՝ ճաճանչ մը... կը հաղթահարե այն, որ սիրտ ու սուր ունի, կը լսե՞ք. Լյուդացիք, Կրյուսոսի փառքը ձերն է, եթե յուր ճակատը դափնյա պսակով մը կը պճնվի՝ հյուսողը դուք եք... Իմ թագս և ձեր սուրը ահեղ զարութեամբ մը իրարու միացած են, մեկը՝ պատկառ, մյուսը՝ սոսկում... Զարնե՛ք, հարվածե՛ք՝ մինչև որ ճակատագիր մը որոշվի... Հույսը անվրեպ և աննկուն հարվածե ու հաղթանակ կենթադրե... Աստվածները մեզ հույս տվին. մեր վահանը ա՛յն է, մեր նախնիքը մեզ սուր տվին. մեր ուժն ա՛յն է. արյան վերջին կա՛թիլն անգամ թափել. մեր հաղթությունն ա՛յն է. եթե քայլ մը ետ երթանք՝ այն քայլ մը տեղը ձեր անձուկ գերեզմանն է, վա՛յ անոր, որ չը սիրեր հայրենիքն ու սուրը, վա՛յ անոր, որուն արույն վերա կը ցամքին արյան կայլակները և վա՛յ անոր, որ առանց սպանելու կը զարնվի, Լյուդացի չէ, վա՛տ է այն։

ԿԱՄԱՏՐՈՍ.— *Տեր արքա, ահա կոհակները կը բարձրանան և դեռ թշնամյաց նավերը չեն երևար, անշուշտ Պոսիդոնի անդունդները լափեցին զանոնք։*

ԿՐՅՈՒՍՈՍ.— *Նայի՛ սա կողմը, ծուխն վրա արծվի նման*

մը կեռա, անոնք Արտաշեսի նավերն են, կը թալեն դեպի մեզ երկաթե թևերով։

ԿԱՄԱԴՐՈՍ.— *Բայց խիստ բազմաթիվ են, տեր իմ։*

ԿՐՅՈՒՍՈՍ.— *Արիությո՞ւն, Կամադրո՛ս, քիչ մը առաջ դիս կը քաջալերեիր։*

ԿԱՄԱԴՐՈՍ.— *Սիրտս չը զարներ, ո՛վ Կրյուսոս, սուրս կը պարնե։*

ԿՐՅՈՒՍՈՍ.— *Պաշտպաննենք զահս և Լյուդիան... Չըլլա որ այս կառապի կոհակները զմեզ ոչնչության օվկիանոսը թաղեն. պատմության էջերը չորդան Լյուդիան, այլ արցունքի տեղ մարգարիտներով գրվագվի Լյուդիա ճակատագիրը... Թող Արտաշես ալ վայրկյան մը վարանի իր ճակատագրին վրա... Ա՜հ, եթե մեկ մը միտակ պտենի պինդը դիմաց՝ երազ չէր ըլլար, հաղթության կըլլար, մեկ մը այս նավին բարձրեն տեսնեի իրեն կոհակաց մեջ սուզիլը՝ Արեևլք իմս կըլլար... Եկե՛ք, եկե՛ք, երկու փոթորիկներ իրարու թող զարնվին։*

ԿԱՄԱԴՐՈՍ.— *Ամպերուն նաև պատրաստ են Աստվածոց շանթերը, տեր արքա, երբ երկու գունդեր իրարու զարնվին՝ այն ատեն պրաի պոթիկան...*

ԿՐՅՈՒՍՈՍ.— *Ի՞նչ է սա, որ կոհակ կոհակ կը պլոքի... Հոն... Կամադրո՛ս։*

ԿԱՄԱԴՐՈՍ.— *Նավակ մը, դեպի այս կողմը կուգա կարծեմ։*

ԿՐՅՈՒՍՈՍ.— *Չըլլա որ մեր մարդիկներեն ըլլա։*

ԿԱՄԱԴՐՈՍ.— *Գուցե Արտաշեսի կողմեն պատգամավոր կուգա։*

ԿՐՅՈՒՍՈՍ.— *Բայց ազեկ դիտե մեջը նստողը... Կին... Այո՛, կին մ՚է կարծեմ, այնպես չէ՞ Կամադրոս։*

ԿԱՄԱԴՐՈՍ.— Այո՛, ան՛ր իմ... ան՛ս կոշակներու սոսկալի դռաի մր նավակին կողին կպաոնաս:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Նայէ՛, թևերը բացած մեր օդնուիյունը կաղերան:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ա՜հ... Կոշակը ծածկեց նավակը... Ամեն բան անելևուլի եղավ...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Տե՛ս, ղլուխ մր կերևաս ալիքներուն մեջ... նույն կինն է, պետի հոս կը հասաջանա լողալով:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ի՞նչ արհուիյուն, ո՛վ երկինք... Քիչ քիչ կը մոտենա:

ՋԱՅՆ ՄԸ.— Օդնուիյո՛ւն, օդնուիյո՛ւն, ես Արտաշեսի թըշնամին եմ:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Կը լսե՞ս, Կամադրո՛ս, Արտաշեսի թշնամին... Ազատե՛նք:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Բայց չըլլա որ կեղծ խոսքով մր ազատի:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Սակայն կին մ'է, ի՞նչ կրնա ընել մեզ... Ազատենք:

ՋԱՅՆԸ.— Ազատեցե՛ք վրեժխնդիր կին մը... Կը խեղդվիմ...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Նավաստի՛ք, օ՜ն, ազատեցե՛ք այդ կինը... (Նավաստիները ծովը կը ձգվին և իշ մր եռմր Ոսմրգդուխտր ազատելով նավր կը բերեն):

ԿԱՄԱԴՐՈՍ.— Շո՛ւտ րրեք, խեղճ կնոջ բազուկները թուլցան:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Մրցեցե՛ք, այլակերպ ձուկեր:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ահա կը հասնին... բռնեցին... Ազատեցավ. տեր աբբա:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Զարմանալի է այս, Կամադրո՛ս:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Դավադրութիյունն մր միայն կը վախնամ, տեր իմ:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Քիչ մը նաքը ճակատագիր մը կորշվի, ի՞նչ դավ կըլլա, զորապետ... Բայց ո՞վ է այս կինը... Արտաշեսի թշնամին... արդյոք Արևելյան խաղուն մ՚է:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ես ալ առաջ վրա կը զարմանայի, բայց բավական է որ Արտաշեսի թշնամին ըլլա:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ա՜հ, եթե հաղթության զաղանիք մը բներ իր հետը:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Մեր սուրը, տեր արքա, հաղթության զաղանիքն է, մեր հարվածներն ալ՝ հաղթություն... Արտաշեսի նավե՞րը...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Դեռ հոն են... բայց միշտ կը մտահոգան:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Ահա այն կինը, տեր արքա:

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆՔ և ՈՐՄԶԴՈՒԽՏ

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (ծունր գալով) Ո՞վ թագավոր, ապառնիկիր կին մը, որ միայն վրեժխնդրության համար կը շնչե, ուրվական մը, որ բոցավառ շունչ մը և կայծակի հարված մ՚է, սիրտ մը, որուն անցյալն է սեր և ատոթք, ներկայն՝ հեռ և վրեժ... Դու փրկեցիր գերեզմանին բոցերեն վրեժխնդիր կին մը, կին մը, որ Արտաշեսի արյան վտակին մեջ կուզե տեսնել անցնելուն հիշատակները և իր որդվույն պատակները, իր վերջին արցունքը խառնել այն կարմիր ալիներուն զավանալ և մեռնիլ... Օրհնյա՜լ ըլլաս, ո՞վ թագավոր, ընդունի՛ քու հաղթության և փառաց պրոշակիդ տակ գինվորական կին մ՚ալ... Թե որ գինավարժության մեջ հարվածել չեմ սորված՝ սիրտ

մեջ սրված եմ հարվածել... Կուրծս՝ ասպար, թևս՝ սուր... Կընդունի՞ս:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ո՛վ անծանոթ կին, դու Արտաշեսի արյունը միայն տեսնել կուզես, ուրեմն, պիտի տեսնե՛ս...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Բայց ո՛չ... ես ալ կուզեմ հարվածել...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Իր դիակը կրնաս հարվածել:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Վատ չեմ ես, արքա, կուզեմ որ հարվածը արյունոտ ըլլա:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Արյանը մեջ թաթիս սուրը:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Բայց կուզեմ որ հարվածին տակ վշտագին ձայն մը ըլլա:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ուրեմն պատերազմել և սպաննե՛լ կուզես:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Այո՛, վրեժ առնել... Սուր մը սուր ինձ:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Առ սուրս (կուտա):

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Օրհնյա՛լ ըլլաս:

ԿԱՄԱՊՐՈՍ.— Տե՛ր արքա...

ԿՐՅՈՒՍՈՍ.— (առ Կամապրոս) Բայց այս տաղտկալի կին մ'է... Կամապրոս, դուցե Արևսի մեկ հրեշտակն ըլլա: այս մարդկային դծուծ կերպարանքը ծպտյալ... Սոսկալի գաղանիք մը կը փակվի այս կնոջ հայվածքին մեջ:

ԿԱՄԱՊՐՈՍ.— Քիչ մը հոգը Արևս[8]) հաղթության մեջ կը ցոլա... Տեր իմ:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ո՛վ թագավոր, տե՛ս, այս սրույս հարվածին մեջ փայլ մը կա և այն փայլին մեջ թագ մը ու այն թագին տակ[2] դժգույն ճակատ մի պիտի ըլլա... Թագը՝ քեզի, դիակը՝ ինձի... Կը զարմանաս կնոջ այս հարվածին վրա, տակայն կին մը եղիր, սիրե և տես. սիրտ

մեջ՝ կյանքդ և առելության մեջ՝ թագդ կուտաս... Արտաշե՞ս, եկո՛ւր, աշխարհակալի մը սուրը ձեռքս և բազուկներ ունիմ բոլորտիքս, սուր և բազուկ, որոնք արևներ ծածկեցին և մթագնեցին:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Բայց ո՞վ ես, կին դու:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Քու պինդորականդ, որ ընդունեցիր:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Այլ անկե առաջ:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Արտաշեսի թշնամին:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Արտաշեսի թշնամին չեղա՞ծ դեռ:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Մի՛ հարցներ... մի՛ մտներ, ո՛վ թագավոր, գեղեցիկ անցեալդ թարշամ ծագկանցը մեջ, որոնց ծոցը դեռ սքողված են սիրտ և ապրիլի առաջին և վերջին արցունքները... Վրեժխնդրության հաղթության, սուրի և մահվան վրա խոսե... Տեսե՛ր, կը մոտենա Արտաշես... Սակայն չը դողաք... պիտի հաղթենք, անոնք ալ սիրտ, դուք ալ սիրտ, անոնք ալ սուր՝ դուք ալ սուր, անոնք ալ թագ՝ դուք ալ թագ, անոնք ալ մահ՝ դուք ալ մահ, և երկուքնիդ ալ միանգամայն երկինքը ունիք, բայց Կրյուսոս իր անհուն բանակին մեջ ավելի պինդոր մ'ունի:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Կին դու, եթե երկնից աստղերը և այս կոհակներն ալ պինդին մեզի դեմ, Կրյուսոս և իր բանակը զարձյալ զենք և զրահ կը ցոլացնեն անոնց դեմ... Արյո՛ւն փառաց համար, ինչման հիմա շատ ապրեր պինդեցան մեր դիմաց, բայց իրենց դիակներն ու սուրերը խրեցան Լյուդիական եզերքներուն վրա առանց իրենց հանելն հնծեծանք մը ձգելու:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Պատասխան ունեք, երկի՛նք և երկի՛ր, Արտաշես մեռնելո՞ւ կուգա:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Իր դահիճը պատրաստ է սուր ի ձեռին:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Իր գերեզմանը՝ ամեհի կոհակ մը:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Զայն ունեք, Աստվածնե՛ր, Արտաշես հաղթելո՞ւ կուգա:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Արդեն հաղթության պատգամ սրտացին Աստվածները, տեր:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ճշմարիտ է, կամադրո՛ւս... Ո՛ն, կը մոռանա թշնամին, միշտ կը քալե դեպ ի մեզ, շողա՛ն սուրերը, չը դեղնին ճակատները, չը դողդոջին թևերը... Զորակա՛նք, հարված և հաղթանակ... Վախը ձեր վատ դահիճն է, ի բաց վանեցե՛ք սրտի ծալքերեն... Հույսը ձեր երկրորդ կյանքն է... կը պարզեն ահա թշնամիք իրենց դրոշակները, պարզենք մենք ալ մեր ճակատն ու սրտերը:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Զինվորական կինը չը դողար, իսկ դո՞ւք, արի՛ կյուղացիք:

ԿԱՄԱԴՐՈՍ.— Երթա՛ք:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Տեսե՛ք... Հոն թշնամին, հոս մենք. երկու գնդի մեջ՝ երկու ազգաց փառազարդ սովերները կը մենամարտին, գերեզման և անմահություն... չը տապալի անմահությունը... Ով որ կը սիրե զայն՝ Բոզ մեռնի հայրենյաց բաբախուն ծոցը... կյուղացիք, այսօր չը հաղթվինք Հային, վաղը՝ մեռնինք:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Արտաշեսի գերեզմանին առկայծյալ ջահերուն հետ թափվիլ... կը սիրեմ...

ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅՈՑ

(Նախ հետևակը կը լսվի և կը շարունակվի մինչև որ տեսարանը մտնեն)

Հայկյան արի հրսկայք, արիք,
Հիլլենական կուլաճ ալիք,
Նոցա նվազ գրծուծ բանակ
Մեզ կավետեն փառք հաղթանակ:

Արդ բոզ սոսկաճ բե մեք Հայ եմք.
Զգաս Մասյաց հաչ հնկա եմք.
Լոզ ծածանի փառաց դրոշակ,
եմնեմ, համենմ, արյան բաժակ:

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ, ԱՐՏԱՇԵՍ, ՎՐՈՒՅՐ, ԽՈՍՐՈՎ, ՋՈՐԱՊԵՏՔ, ՋԻՆՎՈՐՔ ԵՎ ԱՅԼՆ (Սույն երգը երգելով ճավերով տեսարանը կը մտնեն.—Պատերազմի սկսելու նշաններ կըլլան,—երգը ինչվան վարագույրը գոցվելուն կը շարունակվի.—Որոտումներ, կայծակներ և խավար) (Վարագույրը կիջնե):

<(ՎԵՐՋ Դ ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

Ա Ր Ա Բ Վ Ա Ծ Ե

ՊԱՂԱՏ

Տեսիլ Ա

ԱՐՏԱՇԵՍ, ՎՐՈՒՅՐ, ԽՈՍՐՈՎ, ԹԻԿՆԱՊԱՀՔ, ԶՈՐՔ
(տեսարան կը ժոռնեն)

ԱՐՏԱՇԵՍ.— *Վերջապես Լյուդիս փառաց վերջալույսն ալ դեղապարդից Հայկական թագը և Արևմուտքն հուսո ամպեր բարևցին Արտաշեսի հսկա քայլերը, խորտակնցան բանակները՝ ինչպես կատաղի կոհակներ, որ անպատյալ ժայռի մը առջեւը փշրելով սխուր մրմունջ մը կը թողուն իրենց ետեւեն... Լյուդիա վերջին հառաչանք մը ուներ, թնդաց նա գերեզմանաց և ամայի պալատներու կամարներուն տակ... Ջարհուրեցա՞ք և դուք, սակե՛րք Թագավորաց Լյուդիա, որ հոգ սպառազեն քանդակված արձանացեր եք... Կործանեցնք՝ եթե ամոթ կղզաք, լացե՛ք՝ եթե արցունք ունիք, հեծեցնք՝ եթե շունչ ունիք... Դեռ երեկ Թագավորներ ձեր սակերին տակեն կանցնեին պատկառանոք, այսօր խրոխտ ճակատ մը կը խնդա ձեր վրա և ձեր հիշատակը ձեր կոթողներուն ավե-*

բակին և գահերուն աճյունին նետքն կը թողե... բայց ինչո՞ւ կուշանա Կրյուսոս՝ ալ շղթայակապ իր նախնյաց սովերներուն առջև ծնրադրելու գահճին տապարին տակ:

ԽՈՍՐՈՎ.— Տնր արքա, Կրյուսոս խնդրեց, որ վինքը մեհյանը տանին վայրկյան մը աղոթելու կամ դուցե իր անցեալն վրա դաղտնի արտասվելու համար... Այն բևերը որ վարժված են գեղեցիկ և վսեմ առարկաներ գրկելու՝ հիմա երկաթե շղթաներ կը կրեն, այն գլուխը որ միայն փառաց ու ծաղկանց մեջ կը հանգչեր՝ քիչ առեններն առաջ երկաթի մը հարվածը պիտի զգա, վերջապես այն որ կյանք ու մահ կը հրամայեր՝ արդ սարսուռ պիտի մեռնի... Միթե չողբա՞, տեր արքա, միթե չարտասվե՞:

ԱՐՏԱՇԵՍ.— Թո՛ղ լա... Փառաց մեջ նշույլ և արցունք միանգամայն կը շողշողան... Ես փառասեր չեմ, այլ փառասերները կը ջախջախեմ... Այս սուրը Բաբելի փառքը չը քամեր, այլ Հայաստանի ազատ ապագան կը քաղե... Քաջդ վրույր, այս հաղթությունը բայլ մ'էր դեպի տիեզերք. Հայաստանի պիտի դարձնեմ բոլոր աշխարհ:

ՎՐՈՒՅՐ.— Եվ Հայաստան ալ իր փառքը քու բայլերուդ և դեբեզմանիդ մեջ պիտի ամփոփե, ո՞վ Թագավորաց վեհագույնը... Հայաստան իր անուռանիերուն մեջ չունի քու հաղթությանդ հավասարելու չափ զսփնի, Հայաստանի երկինը չունի քու փառքդ վարձատրելու չափ աստղ, այլ Արտաշես՝ փառաց մեջ և փառք՝ Արտաշեսի մեջ:

ԱՐՏԱՇԵՍ.— Արշեղը հիշեցուցիր ինձ, Վրույր. նա ալ այսպես կը խոսեր հաղթութենն վերջը... Բայց կը գտմտանամ, թե ի՞նչպես հանկարծ անհրեշտ եղավ իմ քաջ զինակիրս:

ՎՐՈՒՅՐ.— Վեհափառ տեր, այն գիշերը, որ անտառին մեջ բանակիս իջեւանած էր, գինքը արյան լճակի մը մեջ անշնչացած գտանք Արքունի վրանիդ մեջ, քովն ալ արյունոտ դաշույն մը:

ԱՐՏԱՇԵՍ.— Ո՛վ երկինք...

ՎՐՈՒՅՐ.— Եվ գազաւուկ փոսի մը մեջ թաղեցինք գինքը՝ զգուշանալով թագավորիդ իմաց տալու, որ կրնար շատ ցավ ըզգալ:

ԱՐՏԱՇԵՍ.— Ճշմարի՞տ կըսես:

ՎՐՈՒՅՐ.— Անշուշտ, տեր իմ:

ԱՐՏԱՇԵՍ.— (մեկուսի) Դեռ կը սիրեր Արտաշաման... (բարձր) Ուրեմն չորցավ Արտաշեսի ճակտին մեկ դափնին, վերջապես կատարյալ է այն սուրը, որ պատերազմի գաշտին վրա անխոնջ կուրծս կը պաշտպաներ... Տե՛ղ Արշեղ... (մեկուսի) Ջալա՛կս... (բարձր) Արդ, բոլոր Լյուդիա հուսամ խաղաղեցավ, այնպես չէ՞, քաջդ Վրույր:

ՎՐՈՒՅՐ.— Այո՛, տեր իմ, գրեթե դիակ և գերի, ողջ և արյուն, սուրի բեկորներ և փլատակ, միայն տաճար մնացին Լյուդիո երկնքին տակ:

ԽՈՍՐՈՎ.— Եվ միանգամայն սարսուռ ու դառնապարտյալ թագավոր մը:

ԱՐՏԱՇԵՍ.— Ա՜հ, ինչո՞ւ կը փախչիս հորիզոնին տակ, Արև, ինչո՞ւ կը տանիս նախանձոտ ճառագայթներդ, կեցի՛ր քիչ մ՚ալ և թագավորի մը դիակին վրա վերջին ճաճանչ մը՝ վերջին նայվածք մը ձգե, դեռ վայրկյան մ՚ալ կրակ գառնան ճակտիս դափնիները քու կարմիր ճաճանչիդ տակ և օրհասական կրյուսոսի քինախնդիր նայվածքդ այրեն... Կեցի՛ր դեռ, ուրիշ սիրեցիր մը Տանդիսատես չի

պիտի ըլլա այսպիսի փառավոր հաղթության և պիտա-
ման... Կրյուսոս դեռ չերևար...

ԽՈՍՐՈՎ.— Ոտքի ձայներ կը լսվին, արքա քաջ:

ՎՐՈՒՅՐ.— Ահա կը բերեն, տեր արքա:

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆՔ, ԿՐՅՈՒՍՈՍ, ՈՐՄԶԴՈՒԽՏ գերիք շղթայակապ:

ԱՐՏԱՇԵՍ.— (մեկուսի) Որմզդո՞ւխտ...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (մեկուսի) Կը զարմանա... Կամ չէ տեսեր, կամ մեռած կը կարծեր:

ԱՐՏԱՇԵՍ.— Հառաջ եկո՛ւ, ո՛վ Կրյուսոս, նախնյացդ սովո-
րները արյանդ հեղեղը տեսնել կուզեն, անոնք կատեն
զքեզ և կորբան էյուդիս բախտը... Չես համարձակիր
նայիլ, քու ցասկոտ նայվածքդ կը հաղթվի անոնց քարե
նայվածքեն, էյուդիս հառաչանքը զերեզմանի քարե մը
ավելի ծանր և որոտընդոստ բամալեցյալ կիլոտ ծնկացդ
վրա... Շղթայիցդ շառաչյունը արթնցուց նախնյացդ
կմախքները հավիտենական փոսերեն, որոնք հնծկլտան
փլատակաց խորշերը... Մրրիկներ կը վանեն էյուդիս հո-
ղեն դահուկիցդ աճյունը... Վերջապես էյուդիս դամբան-
ներն ու օրրոցները կատեն զքեզ և պիտի տանեն հիշա-
տակդ... Սակայն սիրա առ, Կրյուսոս, մի՛ դողար մահ-
վանեն, ժպտե՛ դառնզաբար ինչպես երբեմն դահիճ վրա...
Այլ ո՛չ... Միթե գահ է վատին համար զերեզմանը:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Շղթա կրողը վատ չըլլար, Արտաշես, զուցե
գահին վրայեն զայն ծապրզը... Մի՛, մի՛ խրախուսար,
ո՛վ Բագավոր, այդ գահն ալ դարպաս կըլլա, երբ մխիթյան
նենգության կամ հաղթության մեջ բազուկներ չորս ան-
քերովը կրնեն զայն օդին մեջ... Միևնակ ես չէ, այլ այդ

սիրան ալ կուտ՝ այսպիսի անակնկալ Տարված մը երբ ղպա, Տարված մը, որ ինքնակալը վայրկյանի մը մեջ թագն, փառքն և կյանքն կը գրկի։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (ցած՝ առ Կրյուսոս) Սիրա ա՛ռ, ո՛վ թագավոր, քենն նաքը վրեժ մ՚ունիս, դեռ չը մեռած դիս առանց շղթայի պիտի տեսնես։

ԱՐՏԱՇԵՍ.— Եվ դուն կը մոռնաս, որ ես Արտաշես եմ։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ես ալ Կրյուսոս էի... Ձեռքս մոկան ունեի երբեմն, արդ շղթա կը կրեմ։

ԱՐՏԱՇԵՍ.— Այլ ես իմ ինչամիս արքուն, զորավոր և սուր ի ձեռին Տպրնգի։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Սակայն գուցե քենե տկար մը օր մը գրկե անշշունչ գահիդ գամե փորը դաշույնով մը՝ զորար ձեռքով մը...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (մեկուսի) Այն անծանոթի գահիճը ես պիտի ըլլամ...

ԱՐՏԱՇԵՍ.— Վա՛տ է այն։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Սակայն կապանեն, մութի մեջ գեմքը չես տեսներ։

ԱՐՏԱՇԵՍ.— Ո՛վ Կրյուսոս, գեղեցիկ երազներով օրհասդ ամոքե՞լ կուգես, կը տեսնե՞ս գահիճը (կր ցուցնե) պատրաստ եղիր...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Գթութի՛ւն, ո՛վ թագավոր, չնորհե՛ կյանքս։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (ցած առ Կրյուսոս) Սիրա առ... Դեռ թագավոր ես։

ԱՐՏԱՇԵՍ.— Ի՞նչ պիտի ընես կյանքը... Հո՞ւյս մը կը նրշմարես։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Սակայն... Ջեմ ուզեր... կը տեսնե՞ք ով իմ

Հարցս ուրվականներդ, կը լսե՞ք... Ինչո՞ւ լուռ և անշարժ արձանացեր եք: Ձեր նայվածքները կարծես իմ կենդանի են, իսկ ձեր սուրերը չեն փայլատակիր, գոնե ինկեք, կործանեցեք Տաճրշահիլին պլուխը չտեսնելու... Ձեր սավերին տակ դահիճ մը կը պահեք, որ այս նվիրական պալատը Լյուդիս վերջին թագավորին արյամբը պիտի ոռոգե և Լյուդիս հետին շունչը այս կամարներուն և ձեր շուրին տակ հևհևկելով պիտի սպասե: Ելե՛ք, գե՛նք առեք, սավե՛րը դյուցազանց, վրե՛ժ ժայթքեցնեք անոր դափնեպարփ պիտոն, որ Տաղիտական բայլերով ձեր դամբաններդ կը կոխկռտե... Կրակ թափեցնե՛ք՝ եթե նայվածք ունիք, մահ սփռեցնե՛ք՝ եթե շունչ ունիք, ձայն ավե՛ք՝ եթե ձայն ունիք... Ո՛վ դիք, ո՞ւր են ձեր կայծակները... Ա՜հ, մեկը սուր մը, հայր մը չը բերեր ինձ... Ուրեմն Աատաժը և սավերը, անիծյա՛լ բլլար:

ԱՐՏԱՇԵՍ.— Դեռ սպասե՞ դահիճը. ո՞վ կրյուտոս... ան՝ արևը անևևութացավ արդեն, վարդը իր սաստին ճառագայթը գևեզմանիդ վրա պիտի ցոլե... Կը զոհա՞ս մահվանդ:

ԿՅՈՒՍՈՍ.— Արդեն այս շղթաները և այդ ծիծաղները մահեն ավելի սոսկալի են... Թույլ տուր օրհասականին, Արտաշես, որ խոսի... կը մտածեմ, թե դեռ ո՞վ մնայ առելու և անիծելու համար... Ինչ բնեմ... Պիտի մեռնիմ... պիտի մեռնիմ գևեզմանիս վրա արյունոտ ահ շղթա մը, փոխանակ ծաղկանց և ջահերու... Ա՜հ, կզգամ որ մեկը միայն մնաց օրհնելու համար, Աատաժներդ անշուշտ անոր անմեղ արյան վրեժը լուծելին... Զրեզ Սոֆոն, Սոֆո՛ն, գեղեցիկ խոսեցար...

ՎՐՈՒՅՐ.— Տէ՛ր իմ, նոր Աստված մը կը կանչե՞ն:

ԱՐՏԱՇԵՍ.— Ո՞վ է այդ Սոզոնը, Կրյուսոս...

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ո՛վ Արտաշես, այս վայրկենիս միայն Սոզոնը և դահիճը կը սիրեմ:

ԱՐՏԱՇԵՍ.— Քեզի կը հարցնեմ, Կրյուսոս, թե ո՛վ է այդ Սոզոնը, որ կօրհնես:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Գոռոզներու թշնամին, Արտաշես:

ԱՐՏԱՇԵՍ.— Խոսի՛:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ես ալ երբեմն այդ գահին վրա էի, շքեղապատկառ թագավորներ, հպարտության ճոխության, փառք և զեղեցկության կը պատեին զիս, կը ցոլայի լուսնո մը պես անթիվ աստղերու մեջ... Օր մը Սոզոնը կանչեցի և բսի իրեն. «Սոզոն, ինձմե ավելի երջանիկ մարդ կո՞ աշխարհի վրա». նա ալ պատասխանեց. «Ո՛վ թագավոր, մարդուս երջանկությունը անհիմն է»... Կրակ կարեցա այս կարծր պատասխանին վրա և իր մահը որոտացի... Մեռավ նա... զեղեցմանը անհետացավ, բայց իր վրեժը վառ մնաց ճակտիս վրա Աստվածային շանթի մը պես. փառաց հեղհեղը վիս անոպա ժայռերու վրա նետեց... ժայռերը սիրա չունին... Արտաշես, ո՞ւր է գահիճդ:

ԱՐՏԱՇԵՍ.— Չի պիտի մեռնիս:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Մի՛ ծաղրեր վիս անգթաբար, Արտաշե՛ս, կուզեմ մեկ հարվածով մը մեռնիլ... Այդ կատակներդ դուլ սուերու հարվածներ են:

ԱՐՏԱՇԵՍ.— Կպատառեմ զքեզ մահվան ճանկերեն, ուսկից շատ կը դողաս:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ալ բավակա՛ն է... Ո՞ւր է գահիճդ...

ԱՐՏԱՇԵՍ.— Դեռ չի պիտի մեռնիս:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Բայց ո՞ւր է գահիճդ։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (ցած առ Կրյուսոս) Դեռ ապրե՛...

ԱՐՏԱՇԵՍ.— Ջորակա՛նք, վինքը սասրևրկրյա բանտ մը տա-րևք, նույնպես այս բոլոր գևրիներն ալ ուրիշ բանտևր։

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (նույնպես) Քևզ գահդ կը տանին... Գնա՛... (ամենքն ալ կը տանին):

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ, բացի *ԿՐՅՈՒՍՈՍԵՆ*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (չուզելով մյուսներին հետ բանտ երթալ) Ո՛վ թագավոր...

ԱՐՏԱՇԵՍ.— Քակեցնք այդ կնոջ շղթանևրը և ազատ թողնք. նախատինք է մեզի կնոջմե մը վրեժ առնել, որուն հարվածը վարդ մ'անգամ չը կրնար փթթեցնել (շղթաները կը քակեն):

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (մեկուսի) Դեռ կը տեսնվինք, Արտաշե՛ս... (Կերթա.—տեսարանին վրա կսկսի ինչ ինչ մարդ կոխել):

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ, բացի *ՈՐՄԶԴՈՒԽՏԵՆ*

ԱՐՏԱՇԵՍ.— Օ՜ն ուրեմն, դուք ալ, հպարտական վինակիցք իմ, գացեք հանդչելու գոփնյա անկողնոց վրա, զոր հպարտությունը ձեզ համար հարդարեց. ահա եկավ գիշերը իր անհուն ատոզներով ձեր հպարտական ճակատներուն վեհացիկ հովանի մը բլլալու... գիշերները երկնքին երեսեն թռչող ու թնկող ատոզներ՝ ազգերու բախտերն են, որ

Հայաստանի գոզը կը թավալին... Արշալուսին առաջին ճառագայթներուն զարձյալ կը քալենք, հաղթական քայլ մ'ալ դնելի սիեզերք...

ՎՐՈՒՅՐ.— Տեր արքա, գիշերները զարերը կը վվին։

ԱՐՏԱՇԵՍ.— Լյուկիս հետին հնձկլատանքները զմեզ կօրօրեն։

ՀՈՍՐՈՎ.— Սակայն, տեր արքա, սուրերը չեն ուզեր իրենց պատյանին մեջ նիրհել։

*ԱՐՏԱՇԵՍ.— Ճշմարիտ է, ռազմիկին սուրն ալ արտին հետ կը բարեխե... Այսու ամենայնիվ հանգիստն ալ փառաց սովերն է... Փոթորիկն նոքը կը տիրե լուիկ հանդարտութեան... Միթե չենք կրնար նիրհել արյան հեղեղներու քով... Ահա միայն այս գիշեր ձեզի կը թողում բանակին հսկողութեանը, քաջքդ իմ... Այս գիշեր Արտաշես պիտի ննջե փառաց մրմունջներու մեջ... Լավ հսկեցեք բանակը, զգույշ կեցեք, գեռ երկինքը ամպոտ է... (կը մեկնին ամենքն ալ.—պալատականք սենյակին աջահակներն և կաթեղներն կը վառեն.—երկու պահնորդ կը կանգնին սենյակին միջնական դռանը դով)։

Տեսիլ Ե

ԱՐՏԱՇԵՍ (միևնակ)

Պահնորդք, ազխեցե՛ք դռները, և գացեք դուք ալ հանդչելու... (պահնորդք դուռը կաղխեն և կերթան) *Սոդոնի խոսքը և Կրյուսոսի անկումը զրեթե զարհուրեցուցին զիս... Գիշերվան խավարին մեջ կը կեզրոնանան մտքերը, աշխարհային սոսկումները... Գիշերն իր լռությանը մեջ կարծես թե ձայն մ'ունի, որ կը հծծե. «կանգ-*

նի մարդը, կանհետ վարդը շուքի մը պես... Կանցնի փառքը, կը մարի գեղեցմանի կանթեղի մը պես... կը սահի, կանհետանա արյան հեղեղներուն հետ... կը նմաներին օր մը մարդկային փայլերը, կը նսեմանա գեղեցկութիւնը վշտին մեջ, փառքը՝ պարտութեան մեջ, ճախութիւնը՝ բախտին մեջ...» Ինչո՞ւ կը ծանրանաս սրբատիս վրա, ո՛վ դիշեր, ունայնութեան պատանքով, նախանձու կայծերով, անցավարութեան կոհակներով, եղերութեան հծծանքով և գեղեցմանական սովերով... Դու գահիճ մը՝ միայնութեանը տապար առած կուգես դողացնել, կուգես որ հառաչ մը թող Արտաշեսի շրթներեն... այլ դեռ պիտուն վրա կը ցոլան Լյուդիա փառայ ջահերը և անոնց ճաճանչովը կը տեսնեմ որ լակ սովեր մը, հառաչ մը, երազ մ'են, և ճառագայթ մը քու գահճիդ... Այդ ատեղապարդ երկինքը Արտաշեսի սիրեցեակալ ծիրանին պիտի ըլլա... Ոտքերուս տակ դեռ շրնչատապատ դիակներ կը հնծկտան... Թող որ գտինյա շուքին տակ հանդչի Արտաշես (բիկճարոոի մը վրա կը բազմի) աչքերս կը գոցվին... Ի՞նչ քաղցր են բո՛ւն, հոգեթական պատերազմներով խոնջյալ ճակատի մը համար... (աչքը կը գոցե.—տեսարանը վայրկյան մը պարապ կը մնա):

Տեսիլ Զ

ՆՈՒՅՆ և ՈՐՄԶԴՈՒԽՏ

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (գաղտնի դուռ մը բանալով) Կրյուսոս ապեկ ցոցոց... Ճիշտ իր սենյակը հանեց այս գաղտնի դու-

որ... (զգուշությամբ հառաչ կուգա) *Հոն է, կը քնանա... կը տապլակի փառահեղ երազներու մեջ... Ը՛ր գիտե, թե օձ մը մթության մեջ գինքը կը մտածե և օր մը պարտեզը պիտի փոթթվի, զույգ այս վայրկենիս, մինչդեռ տղուծը կը ննջե, կը խորխա... Արտաշես պիտի մեռնի, ես թագուհի պիտի ըլլամ և իր գերեզմանը պիտի բնեմ տատպատես և գոռա... Արտաշես տրծիլ էր, այս վայրկենիս ինձի չունի... Մեկ հարվածի մը նետքե տալիր մ'է անշշունչ և պիտի անհետանա գիշերվան մութին մեջ... Չեմ երազեր, Արտաշես գրեթե գիտակ մ'է... Հոս է գոռա, անոր վերջին շունչին մեջ, զոյ աչքերուն, հանգարտ սրտին և այս դաշույնին վրա... Հոս է թագո Արտաշեսի արյան վառ ալյագը մեջ... Կինը մթության մեջ կապանեն...* (ճռագները մեկիկ մեկիկ և յուրահանչյուրին կանգ առնելով զգուշությամբ կը մարե.— վերարկուին տակեն լապտեր մը կը հանե, կամաց կամաց Աստաշեսի կը մոտենա, լապտերը ճոռնի կը պահե... կը զարնե աստին և հանի մը բայլ նա կերթա կառապի ճայվածքով):

ԱՐՏԱՇԵՍ.— Ա՜խ... (դողդոջուն ոտքի ելնելով) *Ո՞վ էր այն...*

ՈՐՄԶՈՒՀԻ.— (լապտերը իր դեմքին բռնելով) Տե՛ս...

ԱՐՏԱՇԵՍ.— Որմզդո՞ւհտ... Միշտ դո՞ւն... (կիչնա):

ՈՐՄԶՈՒՀԻ.— Կին մը, որուն հարվածը ո՛չ քե վարդ, այլ վարդապուշն արյուն կը ժիժիցնե:

ԱՐՏԱՇԵՍ.— (մատած ձայնով) Օգնությո՞ւն...

ՈՐՄԶՈՒՀԻ.— Տեսե՛ք... Արտաշես մը կնոջ մը դիմաց օգնության կը կանչե:

ԱՐՏԱՇԵՍ.— Վա՜տ...

ՈՐՄԶՈՒԽՏ.— Ի՞նչ կըսես, Արտաշես... Թագուհի պիտի բլլա՞մ։

ԱՐՏԱՇԵՍ.— Դևս ոչ... (ձեռքը սուրին տարած կուզ ելնել. ճարեն կիյնա)։

ՈՐՄԶՈՒԽՏ.— Արտաշես... Սիրտ հիշատակներուն պես կանցնին կը սահին այս կարմիր ալիներն ալ... վրեժխնդրութեանս բոցերը մարեցան, բայց տանելութիւնը դեռ սիրտս կը լափե... Հայութիւնը պիտի ջնջեմ, Արտաշես...

ԱՐՏԱՇԵՍ.— Արտաշեսի պես դյուրավ չը մեռնիր նա...

ՈՐՄԶՈՒԽՏ.— Արդեն հիմա երկու բանակներ իրարու բռնեմի ձեռացուցի մթութեան մեջ և միրտս անխոնջ կը ջարդեն, պիտի երթամ հիմա Կրկեսոսի բանտը, պիտի քակեմ շղթաները... Պիտի պինդինք... Թագուհի պիտի բլլամ, Արտաշես։

ԱՐՏԱՇԵՍ.— Ա՜հ... Անե՛ծք, կայծակը...

ՈՐՄԶՈՒԽՏ.— Օն, մեռի՛ր, որ վայրկյան մը առաջ Թագուհի բլլամ, ալ հերիք գալարիս ոտքերուս տակ... Լավ բայ բնթանք... Շուտ, տուր Հոգիդ, և տեսնեմ միտաց ջահերով պիտի թռչի՞։

ԱՐՏԱՇԵՍ.— (նուաճատուրենեն և ցավեն ճվաղյալ կիյնա) Վա՜տ դահիճ...

ՈՐՄԶՈՒԽՏ.— Մեռա՜վ... Ձայնը մարեցա՜վ... աչքերը փակեցան... վրեժս առի... Հազար կարմիր ծիրանին... Թագ մը մնաց... Հոն է... Թագուհի պիտի բլլամ (դեպի մյուս գաղտնի դուռը կերթա կը բանա և կաճեռևութանա)։

ԱՐՏԱՇԵՍ.— (աչքերը բանալով զայն կը դիտե) Խարխեցավ... Բայց ես ալ կը մեռնիմ... Ո՜վ անոպոր գիշեր... Վերջա-

պես Հնոին Տառաչս, փառքս, սուրս կը Թավալես գերեզմանին աննշան Հատակը... Օգնութ՛յո՛ւն...

ՎՐՈՒՅՐ.— (դրսեն) *Տեր արքա, տեր արքա...* (դռներր ճարվածելով կը խոռոակեն և ներս կը մտնեն):

Տեսիլ Է

ԱՐՏԱՇԵՍ, ՎՐՈՒՅՐ, ԽՈՍՐՈՎ, ՋՈՐԱԿԱՆՔ

ՎՐՈՒՅՐ.— *Տեր արքա, բանակը պիրաթ կը ջարդե... Հա՛ս՛ր...*

ԽՈՍՐՈՎ.— *Բայց ո՞ւր է Թագավորը...* (փնտռած աոեներ դիակին կը դիպչի) *ա՜հ... Հոս բերեք ջահերը...*

ԱՄԵՆՔԸ.— (տեսնելով) *Թագավո՛րը...*

ԱՐՏԱՇԵՍ.— *Կին մը... Այս գաղտնի դուռը... Կրյուսոսի բանաը... Շուտ վրեժս... Հայաստանը ազատեցնք... «Ա՜ւ՛ղ փառացս անցաւորի»*[10]*:*

ԱՄԵՆՔԸ.— *Մեռա՜վ:*

ՎՐՈՒՅՐ.— *Օ՜ն, այս գաղտնի դռնեն* (ամենքը կը մտնեն վարագույր):

ՊԱՏԿԵՐ

ԲԱՆՏ

Տեսիլ Ը

ՀՐՅՈՒՄՈՒ.— (մինակ շղթաներով գետինը կապված է, ձեղունեն կախված կաճրեղ մը կը պլպլա): *Այս իմ պատառս է... բանտս է... Ճակատիս դափնիներն են այս շղթաներն, որ երկաթի փոխակերպելով կաշկանդած են դիս գերեզմանին սև ու սեպ ժեռափանցը... Նայվածք մը հոն... և ահա այն է գերեզմանս... Ա՜հ, հիմա կը հասկընամ, թե ի՞նչ է դառապարտյալ մը, որուն վճիռը տալն փառք և հաճույք կպզեր ինձ... Արդյոք ի՛նչ ալեւոր մազեր, սիրտ հառաչներ, թագեր, արտասվաց գետեր, աղիք, ճապաղիք, կմախք և անեծք սփռված են և կը հեծեն այս սև կամարներուն տակ... Չեմ տեսակը պատանեներեն՝ որչափ այս խաւարին, ուր գոհերուս ուրվականներն իրենց պատանքները գետնի վրա շրջելով կը շրջին միշտ, սուր չունին, նայվածք ու անեծք ունին... Ո՛վ պիտի ազատե դիս այս ոգեկոչ գերեզմանեն... այն կինը թէ մը առաջ երեցավ ինձ առանց շղթայի, այս վանդակապատ պատուհանեն. «Ասիրտ ա՛ռ,—ըսավ,—թագավոր*

պիտի ըլլաս... Արտաշեսը պիտի սպաննեմ»,—կըսեր, և պալատին գաղտնի ճամբաներուն վրա տեղեկութիւններ առած ինձմե... ա՜հ, մեկ մը դուրս նետվիլի, տեսնելի կյուդիս երկինքը... Նախ սուրս Աստվածոց դեմ դարձնելի, հետո՝ սրեղերաց վրա... Ա՜հ, գաղտնի դուռը կը բացվի կարծեմ... (Որմզդուխտ կերևա) ինքն է...

Տեսիլ Թ

ՆՈՒՅՆ և ՈՐՄԶԴՈՒԽՏ

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Այո՛, ես եմ... միշտ ե՛ս՝ թագավորին ու դատապարտյալին մեջ... միշտ ե՛ս՝ վրեժի և փառաց մեջ... (շղթաները կը ձակե):

ԿՐՅՈՒՍՈՍ.— Ո՞վ երկինք... Բայց ի՞նչ կընես... Ի՞նչ ըրիր, կին դու...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Ազատ ես... Լռե և քալե՛:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Բայց խոսի՛:

ՈՐՄԶԴՈՒԽՏ.—Բայց երթանք:

ԿՐՅՈՒՍՈՍ.— Գուցե երթ հոսկե դուրս ելնեմ՝ վատ և երթ երկրորդ անգամ հոս մտնեմ՝ կրկին մահ պիտի ըլլա... Խոսե՛...

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— Արտաշեսի զորքերը խիստ բազմաթիվ ըլլալուն երկու զորանոց փոխադրված էին... Նախ մեկ զորանոցը դացի և պոռացի «թշնամիք կուգան». անոնք որոտընդոստ և սուր ի ձեռին դուրս նետվեցան... Իսկույն մյուս զորանոցը վազեցի և գոչեցի «թշնամիք եկան», և դանոնք մյուս գնդին վրա առաջնորդեցի, որ բարկացայտ հառաջ կը խաղար... Երկու գնդեր իրար դարնվեցան

ինչպես երկու մրրիկ, լսեցի սուրերուն շաչյունները... Անոնք մեր թագավորությանը համար արյուն կը թափեին փոփոխակի...[11]) *Հասա Արտաշեսի քով, զինքը քնոմեջ խողխողեցի... Մեռավ աչացս առջև... Հոս էկա զքեզ թագավոր ընելու... քալե՛:*

ԿՐՅՈՒՍՈՍ.— *Ո՛վ դիք. այս մշտնջենավոր աղջամուղջին մեջ փառաց դռներ կը բանաք... ազատանք դահս...*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Օ՜ն, դարձյալ այս գաղտնի դռնեն Արտաշեսի սենյակը կելլենք և մյուս գաղտնի դռնեն պալատն դուրս... Պալատեն դուրս՝ դուն թագավոր, ես ալ թագուհի* (երթալու կըլլան):

Տեսիլ Ժ

ՆՈՒՅՆՔ, ՎՐՈՒՅՐ, ԽՈՍՐՈՎ, ՁՈՐՔ

ՎՐՈՒՅՐ.— (գաղտնի դռան մեջ երևնալով) *Այստեղ պալատ չէ, բանտ է, գերեզմանդ է, թշվառական:*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— *Ա՜հ...*

ԿՐՅՈՒՍՈՍ.— *Մատնվեցա՜նք...*

ՎՐՈՒՅՐ.— *Կը կարծե՞ք որ այս դռանը մեջ ահավոր և վրեժխնդիր սուր մը ձեր դիմաց չարձանանա:*

ՈՐՄԶԴՈՒԽՏ.— (առ Կրյուսոս) *Վատ արանց, առանց շղթայի արդեն չը կրցար քալել:*

ՎՐՈՒՅՐ.— *Զորակա՛նք, կապեցե՛ք երկուքն ալ, մեկը՝ վատ, մյուսը՝ արքայասպան:*

ԿՐՅՈՒՍՈՍ.— (զոռաց սպառնալով) *Դադացե՛ք, դեռ Կրյուսոսն եմ:*

ՎՐՈՒՅՐ.— Հոս սպրուկ ես և Տասկե դուրս՝ դիակ... Զորա-կանք, շղթայեցե՛ք (զորեբը Երկուքն ալ կը կապեն)։

ՈՐՄԶԴՈՒԽԱՏ.— Բայց ի՞նչ կը խնդրեք ինձմե։

ՎՐՈՒՅՐ.— Սրյո՞ւն... Արտաշես Տյուծյալ աչքերով քեզ լըր-տեսեր է։

ՈՐՄԶԴՈՒԽԱՏ.— (մեկուսի) Ուրեմն դեռ մեռած չէ հզեր... (բարձր) Մեռա՞վ Արտաշես...

ՎՐՈՒՅՐ.— Այո՛, ես եմ վրեժխնդիրը։

ՈՐՄԶԴՈՒԽԱՏ.— Մեռա՞վ... Ուրեմն ի՞նչ Տոգ եթե սպաններ զիս... Խորտակեցի Հայոց Տարմական քայլը, մարեցի Հայոց փառաց ջահը... Ես էի որ քիչ մը առաջ Հայերը ի զեն և ի մահ զրգեցի։

ՎՐՈՒՅՐ.— Դո՞ւն... Ինչպատակո՞ն։

ՈՐՄԶԴՈՒԽԱՏ.— Ես Տոս կը մեռնիմ... բայց Հայութիւնն ալ դարձը ինձի հետ կը մեռնի։

ՎՐՈՒՅՐ.— Դեռ ողջ է Հայը և անդին Հայաստան մ'ունի։

ՈՐՄԶԴՈՒԽԱՏ.— Հոգ չէ, եթե թագուհի չեղա՝ թագավորի մը դահիճը եղա (ծունր կը չոքի վերայր գայն զարնելու առնելու)։

ԿՐՅՈՒՍՈՍ.— Չի՛ ալ... (վարագույր)։

ԱՆԿԱԽՄՆ
ԱՐՇԱԿԱՆԻ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ

ԹԱՏԲԵՐԴՈՒԹՅԱՒՆ ԵՐԻՒԱՆԱՒՆ Ի ՎԵՑ ԱՐԱԲՍ,
ՅԵՐԻՍ ՊԱՏԿԵՐՍ ԵՒ Ի ՄԻ ՎԵՐՋԱԲԱՆ

ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐ
(Թաղլո Վիվաճ)

1870

Ա Ն Ջ Ի Ն Ք

ԱՐՏԱՇԻՐ, արքա Հայոց
ՎՌԱՄ, արքա Պարսից
ՄԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ, Հայրապետ
ՀՐԱՉՅԱ, արքայորդի
ՀԵՐԱՆՈՒՀՏ, Թագուհի Հայոց
ՋԱՐՄՈՒՀԻ, մայր Թագուհի
ՓԱՌՆԵՐՍԵՀ, իշխան Ազատնյաց
ՎԱՉԵ, իշխան Արծրունյաց
ՀՄԱՅԱԿ, իշխան Աշոցա
ՄԱՐԱՏ, մանրիմ Արտաշրի
ՇԱՎԱՐՇ, մանկլավիկ Թագուհւոյն
ՄՈՒՐԵՆ ՊԱՀԼԱՎ, Հազարապետ Պարսից
ՍՊԱՆԴԱՐԱՏ, զորագլուխ Թիկնապահացն Արտաշրի
ՄՈՒՐՄԱԿ, Լրեկ
ԲԱԲԵԼ, ծեր պինդար
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ, զուարթ Բարելի
ԲԱՆՏԱՊԵՏ ՄԸ

Ա Ր Ա Բ Վ Ա Ծ Ա

Հին տեսակ մը.— խոր դուռ մը, ուսկից դաշտ մը կերևի. մեկ կողմը խաչելության պատկեր մը. ցիրուցան և ինձ կառասիմ. պատեն կախված զրահ և զեմքեր.—վարագույր բացված ատեն շահաճդուխտ պատկերին առջև կաղոթե:

Տեսիլ Ա

ԲԱԲԵԼ և ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ԲԱԲԵԼ.— Ագռև, ագռև, ապչիկս... Տխուր հիշատակներ նկարված են այդ սիրուն դեմքին վրա... սակայն իր կոզնն հոսող արյան կայլակներն[1]) ապեզոնի են արտի խոցերու:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (նոր գիրկը գալով) Ո՛չմարիա է, հայր իմ... Այս պատկերը միշտ մորս զգացողը կը հիշեցնե ինծի, այս խաչին շուրջ՝ իր գերեզմանը և այս տխրանուշ դեմքը՝ իր սևեռն ու բարի սիրտը... Այս փուշ պսակն[2]) ալ իմ խանձարուրս կը նմանի, ուր մայրս զիս երկննց:

ԲԱԲԵԼ.— Ի՞նչ... Թշվա՞ռ ես, ապչիկս... Բայց դուն կուլաս... Ի՞նչ ունիս:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ոչինչ... Հայր իմ, այն ապչիկը որ մայր չունի՝ կուլա միշտ, ինչման որ մայր...

ԲԱԲԵԼ.— Չեմ հասկնար միտքդ, ապչիկս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ըսել կուզեմ թե, հայր իմ, մայրս չը մեռներ:

ԲԱԲԵԼ.— Բայց մեռավ... Եթե առջի երիտասարդ պինվորն ալ ըլլայի՝ դարձյալ չէի կրնար ջնջել իմ սրտես այն Աստվածային դաստակները:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն որբ ապչիկը չի լա՞... Հայր իմ:

ԲԱԲԵԼ.— Ճշմարիտ է, ապչիկս... Ահեռ Հոր մը գիրկն ունիս միայն, այն ալ գերեզմանի քարի մը պես պաղ է արդեն... Հայրդ իր մեկ ոտքը գերեզմանին ահ սեմին վրա դրած՝ ո՛չ վշտեն անցնիլ կուզե և ո՛չ ալ ապչիկին:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց, Հայր իմ...

ԲԱԲԵԼ.— Ապչիկս... դուն գազանիք մ՚ունիս, որ ինձմե կը ծածկես... ժամանակ մը ի վեր է, որ միայնություն և մթություն Հորդ շուրեն ավելի կը սիրես և Հորդ Համբույրեն ավելի՝ Հառաչանքիդ կախարժիս... Միշտ ձեռքդ ձեռքիս մեջ՝ դողդոջ, ճակատդ՝ դալկահար, սիրտդ միշտ՝ բեկբեկ... Դուն առաջները վարդի ավելի զվարթ էիր, թիթեռնիկե ավելի աշխույժ և շունչն ավելի թեթև, իսկ հիմա մանիշակի պես կորացուիս, ձմեռման առտո պես ախտոր, շուքի պես փոխուսիկ կը տեսնեմ զքեզ... Ապչիկս, բա՛ց սիրտդ, ինչպես կը բանա վարդն իր թերթերը առտվան գուրգուրացող ցողին... Խոսե՛... ի՞նչ ունիս:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Զքեզ, Հայր իմ:

ԲԱԲԵԼ.— Բայց սրտիդ մեջ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Զքեզ, Հայր իմ:

ԲԱԲԵԼ.— Ապչիկս (կը գրկե):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Միշտ զքեզ, հայր իմ:

ԲԱԲԵԼ.— Շահանդուխտ, կը խաբես զիս:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տես երկինքը ինչպես գեղեցիկ է, հայր իմ:

ԲԱԲԵԼ.— Դուն երկնքեն ավելի գեղեցիկ ես:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց դու զիս կը ծաղրես, հայր իմ... Ես գեղեցի՞կ... երբ անցյալ օր խաչելության պատկերը զարդարելու համար ծաղիկ կը ժողովեի առվակին քով, ինքզինքս անդրադարձած տեսա անոր մեջ, հիշատակ մը սիրտս շարժեց, արցունք մը կաթեց հոն աչքես և կաթիլ մը կրցավ պատկերս խաւնդարել. ա՜հ, որչափ վշտացա, հայր իմ, երբ կարծեցի թե ալ չի պիտի սիրվեի:

ԲԱԲԵԼ.— Ուսկի՞ց, Շահանդուխտ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քեզնե, հայր իմ... վասնզի դու գեղեցիկը շատ կը սիրես:

ԲԱԲԵԼ.— Գեղեցիկնեն ավելի՝ բարին:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ճշմարիտ է, հայր իմ... եթե իմ առջիս խաչ մը և թագ մը դնեն, ուրախությամբ խաչը կը զրկեմ... եթե պատան մը և ծիրանի մը դնեն, պատանը կընդունեմ, կը սիրեմ այն՝ որ արցունք և տխուր է, կը սիրեմ այն՝ որ երկինք կը տանի... կը սիրեմ այն՝ որ գեղեցիկ և բարի է հրեշտակի նման, ճաճանչի նման, շուքի նման, շունչի նման. կը սիրեմ այդ ալևոր մաղերդ, որ գեղեցիկ և բարի են... վերջապես կը սիրեմ զքեզ, հայր, վասնզի գեղեցմանս ես:

ԲԱԲԵԼ.— Ի՞նչ կըսես, Շահանդուխտ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, հայր իմ, չեմ սխալիր. դու իմ գեղեցմանս ես:

ԲԱԲԵԼ.— Բայց չեմ հասկնար, աղջիկս:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այդ սպիտակ վարսերը ամպերու նման կենացդ հորիզոնը կը ծածկեն, պիս մինակ կուգես թողուլ... (մեկուսի) Բայց Հրաչյա՞յն...

ԲԱԲԵԼ.— Աղջիկս, կը մոռնա՞ս մորդ այս պահուան հիշատակը... Բայց դարձյալ ես չի պիտի մեռնիմ... մորթ, ոսկր և շունչ պիտի բլլամ... պիտի լամ, պիտի գարնեմ, պիտի հեծեմ, պիտի անիծեմ... պիտի պաշտպանեմ աղջիկս ինչվան...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Մա՞յս, Հայր իմ:

ԲԱԲԵԼ.— Ո՛չ... Սակայն դու հանդարտ եղիր, աղջիկս... Մնաս բարով:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՞ւր կերթաս, Հայր իմ:

ԲԱԲԵԼ.— Քեզի բան մը պիտի ըսեմ, որ պինդարական թռչակս առնելու պիտի երթամ... Մի՛ վախնար, եթե մինակ բլլաս:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քաջասիրտ պինդարի մը աղջկանը կը վայլե՞ վախնալ, Հայր իմ:

ԲԱԲԵԼ.— Հիրավի այնպես է, աղջիկս:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ե՞րբ պիտի դառնաս, Հայր իմ:

ԲԱԲԵԼ.— Արևը մտնելու առեն գուցե... Մնաս բարով:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Երթաս բարով, Հայր իմ, (կը մեկնի):

Տեսիլ Բ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ (առանձին)

Գնա՛, Հայր... այլ մի՛ դառապարտեր աղջիկդ... Ի՞նչ ընեմ, բնությունը սիրտս մը ոսկով սիրելու համար, միթե չը՞ սիրվիր երկինքը, չը՞ սիրվիր այն՝ որ Հուր աշեր, բա-

ըի սիրա, զութ, գորով և անմեղութիւն ունի... Երանի ինձ բոլոր օրերը պիշեր բլլային և ես երկնքի փայփլուն աստղերուն տեղ միշտ լայն. կը սիրեմ, այլ կարտասուեմ, երջանիկ եմ, սակայն կուլամ. կուրծիս տակ բոց մը կա, որ անուշ խռնկի մը նման սիրտս կը վառե և անոր բույրին մեջեն կը սահին ոսկեթել երազներ, միշտ ամպերու նման կը սահին և արցունք կը սրսկեն... Ո՜հ, Հրաչյա, քու առաջին հայվածդ կենացս արշալույսն էր, ես անկե առաջ նճիի տավիր մը, ինչուան ժպիտ մը, առկայծյալ ջահ մը և անդգա պաճուճապատաներ մէի Տոքս գիրկը. դու պիացիր ինծի, շունչ տվիր ինծի, երբ «կը սիրեմ զբնդ» բսին շրթներդ և աչերդ, երբ ձեռքս քո դողդոջ ձեռացդ մեջ դողաց... Հայրս բան մը չը գիտե, գնաց Տանդարտ սրտով... (պատուհանը նետալով) ահա բլրակին գագաթը Տասեր է, կարծես ինձ կկչեր և գեռ Տոս կը նայի... կը բալե... անհեռութեացով բլրակին նետ... գեռ Հրաչյա չանցնիր... Բայց ո՞վ են այս երկու անձերը, որ ճամբուն վրա կեցած իրարու կը փսփսան և մերթ մերթ Տոս կը նային... Երկուքեն և ոչ մեկը Հրաչյան է... (տեսարանը գալով) Բայց անշուշտ որսեն գարձած առանձը Տոս կը Տանդիպի. նա չը խարեր գիս... Հրեշտակի պես անմեղ է... Հրաչյա՜... Անունն ալ ինչ գեղեցիկ... սակայն չեմ Տամարձակիր գինքը Հրեշտակ կոչելու...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ, ԱՐՏԱՇԻՐ և ՍՄԲԱՏ

ԱՐՏԱՇԻՐ.— Բարև, ազնիվ օրիորդ, կրնա՞ս ապաստան շնորհել երկու հոգնած ճամբորդներու։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ազատ եք, տյարք իմ, եթե կը հաճիք այսպիսի խեղճ տնակ մը ձեզի ապաստանարան ընտրելուս։

ՍՄԲԱՏ.— Շնորհակալ ենք, բարեսիրտ օրիորդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Կարծեմ կրնանք սա աթոռներուն վրա բիչ մը հանգչիլ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, տյարք իմ, բնակաւ հին են։

ՍՄԲԱՏ.— Հոգ չէ, բավական է որ մեր հոգնությունը փարատանն (կը նստին)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Մինակ գիտնալ պետք է, որ պինդարի մը տունը չը կրնար ասկե բիչ խեղճ վիճակ մը ունենալ։

ԱՐՏԱՇԻՐ.— Հայրդ պինդո՞ր է, օրիորդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, տեր իմ, ծերունի պինդար մը։

ԱՐՏԱՇԻՐ.— Հիմա հոս չէ՞ ինքը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՛չ, տեր իմ, դուրս եկավ։

ՍՄԲԱՏ.— (ցած, առ թագավորն) Խիստ գեղեցիկ է, տե՛ր արքա... յաճախես ավելի։

ԱՐՏԱՇԻՐ.— Մանավանդ իր անուշ ձայնը սիրտս շատ գրավեց... Կուզեմ քովը մոտենալ, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Ազեկ չես ըներ, տեր իմ, կը վախնամ որ հրեշտակային դեմքեդ շատ զարհուրի։

ԱՐՏԱՇԻՐ.— Այդչափ տգե՞ղ եմ, թշվառական։

ՍՄԲԱՏ.— Ո՛չ, տեր իմ, դուն քեզ գեղեցիկ կը նշմարես...

Անիծյալ ըլլան նախանձոտ աչքերը, որ ագնվությունդ նրնսիդ կը զարնեն։

ԱՐՏԱՇԻՐ.— Խղկատակ... (շուռ կողմը կսկսի զննել)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի) Բայց այս մարդիկը ինչ փըսփրսացին. Աստվա՜ծ իմ... Ի՞նչ կորոնեն չորս կողմերնին։

ՍՄԲԱՏ.— (նույնպես) Բայց ես դոս խաչեր և զենքեր կը տեսնեմ, տե՛ր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Զենքե՞ր, մենք ալ ունինք... Խաչերն ի՞նչ կըրնան ընել մեզ, Սմբատ։

ՍՄԲԱՏ.— Մանավանդ քեզի, որ խաչակնքելե անգամ կը սոսկաս՝ վախնալով որ աչքդ կը կուրցնես։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ես կըսեմ, թե ես այնչափ գեղեցիկ նրբին տեսած չեմ։

ՍՄԲԱՏ.— Նորերը միշտ նախամեծար կըլլան, տե՛ր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— (բարձր. առ Շահանդուխտ) Ամուսնացյա՞լ ես, օրիորդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (կարմրելով և աչքերը խոնարհեցնելով) Ո՛չ, տեր իմ...

ԱՐՏԱՇԻՐ.— Ճշմարի՞տ կըսես, քեզի պես գեղեցիկ աղջիկ մը ամուսնացած չըլլա, զարմանալի բան։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ննջանալով) Տարօրինակ կը խոսիս, տեր իմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Կը հաճի՞ս դոս քովերնիս նստիլ, օրիորդ... որ ձեր քաղաքին վրա խոսինք։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ինչ մը խառնուրյամբ) Շնորհակալ եմ, տե՛ր իմ... Մեր քաղաքին մեջ մոլի բագավորի մը պատմութիւնն ու չարիքներին ուրիշ բան չիկա։

ՍՄԲԱՏ.— (ցած առ աբեղյան) Գողգոթան փուշ կը փնտռես, տեր աբբա:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի) Աստված իմ, ազատե՛ դիս այս պժգալի նայվածքներեն:

ԱՐՏԱՇԻՐ.— (ցած, առ Սմբատ) Ապո՛ւշ, կը կարծես որ իշխին առաքած հոմանի Մարիամներ[3]) չե՞ն պանվիր:

ՍՄԲԱՏ.— (նույնպես) Բայց բախտը միշտ սուրբ Մարիամներու[4]) կը հանդիպեցնե զեզ, տեր աբբա:

ԱՐՏԱՇԻՐ.— (նույնպես) Պատառը պայն ագեկ կը մկրտե:

ՍՄԲԱՏ.— Ճշմարիտ է, Արտաշրի պալատն անմեղներու բռավարան մ'է ի շնորհս պատառականներու. իսկ զե՞զ եղնիկներ, հակա եղջյուրներով ազդին անդին կը առաջանին ու կը թափառին իրենց թագավորին համար ծագիկ որսալու:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի) Որչա՛փ կը սոսկամ, աստվա՛ծ իմ:

ԱՐՏԱՇԻՐ.— (ցած) Է՛հ, ի՞նչ պիտի բնենք, Սմբատ:

ՍՄԲԱՏ.— Ծերունի պինվարեն կը վախնամ, տեր աբբա, պետք է պայն կերպով մը բռնել... Հետագա պատգամներն ինծի թող:

ԱՐՏԱՇԻՐ.— Այդ դյուրին է... Բայց շուտ գործադրելու է... վաղը ես խիստ սիրեցի այս աղջիկը... զուցե ամենեն ավելի:

ՍՄԲԱՏ.— Է՛հ, ի՞նչ, սատանան գործյալ փորդ մտավ... Երթանք և դես կը խորհինք, տեր աբբա... բավական է որ աչքովնիս տեսանք զեզնցիկ բլլալը:

ԱՐՏԱՇԻՐ.— Այո՛, երթանք, եթե դես հոս կենանք... կը հասկնա՞ս (ոտի կելլեն):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ուրախությունը ծածկել ուզելով) *Կերթա՞ք, այսրք իմ:*

ՍՄԲԱՏ.— *Այո՛, օրիորդ, շատ շնորհակալ ենք, Տոզնուքյունիս բավական փարատեցինք:*

ԱՐՏԱՇԻՐ.— *Մնաս բարով, օրիորդ...* (երթալու առեթը շահագործելով վրա չարաշահ ճայվածք մը կը ձգե):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (աւարտելով) *Ո՜հ, Աստված իմ...* (կը մնկնե):

Տեսիլ Գ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ, (ներս) ՍՈՒՐՄԱԿ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (առաջին) *Որչա՜փ սոսկացի, տե՛ր Աստված... Աստղ մարգակերպ հրեշներ էին, աչքերնին զժոխոց բոցերուն պես կը փայլփլին, նախադգացում մը ինձ մտմտաց, թե ասոնք գահիճներ էին... Հայրս գնաց՝ այս մարդիկը կհան, ասոնք գացին՝ հայրս չի պիտի գա...* (պատկերին առջև ծնրադրելով բազկատարած) *Ո՜վ Խաչ, քու թևերուդ տակ պահպանե իմ ծնրունի հայրիկս ալ:*

ՍՈՒՐՄԱԿ.— (ներս մտնելով, մնկուսի) *Կապրի՜կ...*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ոտքաձայնը առնելով և աչը ճամբուրելու: Երթալով) *Բարի եկար, տեր Հայր:*

ՍՈՒՐՄԱԿ.— *Բարի տեսանք, աղջիկս... Կապրի՜ք...*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Գրկիկ, տեր Հայր... Հայրս դուրս ելավ. իրեն համար կապրիկ:*

ՍՈՒՐՄԱԿ.— (ետևելով) *Տեսնենք այսօր ի՛նչ մեկը գտծկցիր, Շահանդուխտ:*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ամչնալով) Պիտի ներե՞ս դարձյալ, բարեսիրտ հայր...

ՍՈՒՐՄԱԿ.— Անշուշտ, իմ պաշտոնս սիրել և նևրել է... Տես, այս Քրիստոսը խաչին վրայեն մարած ձայնով «սիրեցեք զմիմյանս» կը գոչեր. ես ալ ահա այն երկնային ձայնին հետևելով կը սիրեմ քեզի պես խելոք և մաստակ աղջիկները, և ակամա մարդկային սխալանց մեջ ընկղմելու հակամիտ ըլլալուդ, ահա ամեն օր քու նորանոր մեղքերդ քավելու համար անընդհատ կայցելեմ զքեզ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Պահապան հրեշտակս ես, ան՛ր հայր, եթե դու չըլլայիր, արդյոք ի՞նչպես պիտի այրևի դժոխոց անշեջ հրույն մեջ:

ՍՈՒՐՄԱԿ.— Անշուշտ... Տեսնենք, պատմե՛ մեղքերդ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Նախ այսօր չի կրցա եկեղեցի երթալ, վասնզի...

ՍՈՒՐՄԱԿ.— եկեղեցի չը գացի՞ր... Մե՞ր... Մե՞ծ մեղք...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (պաղատալից) Ո՛հ, հայր սուրբ...

ՍՈՒՐՄԱԿ.— Այո՛... և պատճա՞ռը:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս զիս իրմեն չը պահելու համար՝ պատվիրեց որ չերթամ:

ՍՈՒՐՄԱԿ.— Անօրե՛ն հայր, որ զքեզ դժոխոց լափյուրինթոսը կը քաշկռնե:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.—Բայց ի՞նչ ընեմ, հայր սուրբ, շատ կը սիրեմ զինքը:

ՍՈՒՐՄԱԿ.— Զինքը շատ կը սիրե՞ս, քու հրեշտակեդ և հոգևոր հորմե՞դ ավելի. ինքը որ թեև հայրդ, բայց սատանեդ ալ է:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս կը սիրեմ, սեր Հայր, բայց զքեզ կը պաշտեմ (մեկուսի) իսկ Հրաչյա՞ս:

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Ո՛րչափ ալ դեղեցիկ է... (բարձր) Ուրեմն դեռ պատմե:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քիչ մ՚առաջ երկու ճամբորդ Հոգնությեան առնելու համար այս տնակը եկան, ես ալ սիրով ընդունեցի զիրենք... Հետո գնշ անձեր երևեցան, վառնգի սոսկալի նայվածք և կերպարանք ունեին. վերջապես մեկնեցան, բայց ես զայրույթ և սոսկում զգացի:

ՍՈՒՐՄԱԿ.— Այդ ճամբորդները երիտասա՞րդ էին:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Գրեթե, սեր Հայր:

ՍՈՒՐՄԱԿ.— Դարձյալ մեծ մեղքի մեջ թավալեր ես... Գիտցիր, որ երբեք մեկը չի պիտի ընդունիք տնակը, բայց խոստովանահայրեդ և հորմեդ... Ցավդ և սիրտդ մի՛ բանար ուրիշի մը, եթե անոթի, ծարավ, խոնջյալ և օրհասական ալ ըլլա... Այս պատկերին հետ միշտ առանձին պիտի մնաս. աղոթք և արցունք՝ այս է քու փրկությունդ, միանձնության՝ այս է քու կյանքդ... Կը հասկնա՞ս:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն, Հայր սուրբ, ի՞նչ պետք է որ ընեմ այսուհետև ալ մեղայ խոր վիրապը[5]) չը գտնվիժելու համար:

ՍՈՒՐՄԱԿ.— Եկու քովս նստե տեսնեմ... Պիտի ըսեմ, թե ի՞նչ պարտիս ընել:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց ես արժանի չեմ քեզ աթոռակից ըլլալու, սեր Հայր, ես ի ծունր կիջնեմ:

ՍՈՒՐՄԱԿ.— Նախ միշտ իմ խոսքիս անսալով անմեղության փիլոնը պիտի զգենուս, տղյիկս... Կը լսե՞ս:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (Ցավը ննաեցով) *Խոսե, քեզի ունկնդիր եմ, Հայր։*

ՍՈՒՐՄԱԿ.— (մենկուսի) *Ո՜հ կը դողամ, չեմ կրնար դիմանալ (սույն միջոցին Հրաչյա կերևի խորը՝ զանոնք կը տեսնե, կանգ կառնե և մտիկ կընե) Ա՛ղջիկս, քեզի ըսի, թե քեզի պես բարեպաշտ և զեղեցիկ աղջիկներու շատ կը սիրեմ և ահա սիրելուս համար է որ քեզ անմեղության ապագա մը կը շնորհեմ... Մրմունջ մը, շունչ մը, զգացում մը, որ զքեզ պիտի վերածնի և զերապանցե... Բայց պետք է որ մենք չիմանա, մինչև անգամ այս անզգա պատկերը. մտածիր որ բանեմ...* (իբրև թե անոր ականջն ի վար խոսելու պատրվակավ համբույր մը առնելու կըլլա այտեն)։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ՀՐԱՉՅԱ

ՀՐԱՉՅԱ.— (հառաչ գալով) *Կեցի՛ր, մի՛ սրբապղծեր անմեղ աղջիկ մը։*

ՍՈՒՐՄԱԿ.— (սարսափած) *Ա՜հ...*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ապշած) *Հրաչյա՜...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ո՞վ ես դու, անօրեն, որ խոսոսվանության մը սրբազան կապը՝) կը խզես Հանդուգն սպառնալյոք։*

ՀՐԱՉՅԱ.— *Ես քեզ Հոն մտիկ կրնեի, այլ խոսոսվանությանը...*

ՍՈՒՐՄԱԿ.— *Լռե՛...*

ՀՐԱՉՅԱ.— *Կը ժպտնի սև ճակատը ալ, և լույսի տակ ծածկել կուզես ամօթդ ու անէրդ։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Լուռ՛, Հրաչյա... Նստի՛ իրեն, հայր, խնայե՛ իրեն և ինծի, մի՛ պատուհասեր...

ՍՈՒՐՄԱԿ.— Շահանդուխտ, անիծյալ ես, մինչդեռ այս անօրենը կը պաշտպանես և...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ, գթութիյո՜ւն, հա՛յր, թողութիյո՜ւն...

ՀՐԱՉՅԱ.— Շահանդուխտ... այս սրբազան և սեւ փիլոնը իր սեւ սիրտը քեզնե կը ծածկե. այդ մարդը խաչին տակ դարանակալ սպասել մ'է։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՜հ, Աստված իմ...

ՍՈՒՐՄԱԿ.— Կը համարձակի՞ս...

ՀՐԱՉՅԱ.— Այս մարդը Քրիստոսի հոտին գայլն է...[7]) Այս մարդը վատ մ'է։

ՍՈՒՐՄԱԿ.— Դողա՛...

ՀՐԱՉՅԱ.— Ո՜ւսկից... Քեզնե՞, որ մութին մեջ խաչը տապար կրնաս. քեզնե՞, որ աղավնիները միայն ճանկերուդ մեջ կրնաս առնել և չես վախնար, որ խաչն ալ, փայտի կտորն ալ հարված մ'ունի։ Դու որ մարդուն երակացը արյունը ծծելով զայն կամակատար դիակ մ'ընել կը ջանաս, դու որ չես դողար Աստուծմե, ե՞ս, ե՞ս դողամ քեզնե։

ՍՈՒՐՄԱԿ.— Գթա՛ իրեն, Աստված իմ և քեզի դարձուր...

ՀՐԱՉՅԱ.— Ա՜հ, հարվածդ չը հաչդիր, դիմակդ կը դնես... ծածկել կուզես շառագունող ճակատդ... Դու չես նեռվիր, չես Բափեր Բույնդ՝ տեսնելով որ ոսոխդ աղատ կը թռչի արծվո մը նման և կրնա քու ապաստանած ժայռերուդ վրա գլուխդ ջախջախել։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՛յր սուրբ, դու աղոթե իրեն համար... Նեռի՛ իրեն։

ՀՐԱՉՅԱ.— Բայց դու չես սթափիր, Շահանդուխտ, եթե ես վրա չը հասնեի...

ՍՈՒՐՄԱԿ.— Պիտի լռե՞ս վերջապես... Օ՛ն, դո՛ւրս ել այս տեղեն... Ալ բավական եղավ, հանդգնությանդ չափն անցուցիր։

ՀՐԱՉՅԱ.— Շահանդուխտ, այս մարդը խաչը կը կոխկռտե և ուրիշին պաշտել կուտա, այս մարդը սիրտ չունի և ուրիշներուն սիրտ կը քարոզե, այս մարդը փիլոնին տակ դաշույն ունի և կոչնակին դանդյունին մեջ սպանելույն վերջին հեծեծանքը կը խեղդե... Բարեպաշտ և դեղեցիկ աղջիկները կը սիրես, պարո՛ն երեց, խիստ լավ կրնես, եթե այդչափ չը սիրես։

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Ո՛վ կատաղությանս... (բարձր) Ամաւա՛ծ իմ, այս մարդը դիվահար մ՛է եղեր, ներե՛ եթե ակամա իրեն դեմ գայրացա։

ՀՐԱՉՅԱ.— Այնչափ ապահով եղիր թե ես հիմար չեմ, որչափ որ ապահով ես դու վատ մը ըլլալուդ. Շահանդուխտ, խորշե այս փիլոնեն, որ դիակի պատանք, դագաղի ծածկոց և ոճիրներ քողարկող վարագույր մ՛է, այս մարդը եկեղեցին գերեզմանի կը կերպարանափոխե, կը կեղծե, կը խոնարհի, կը սպաննե միմիայն իշխելու համար... Ապառաժ է այս մարդուն սիրտը, միթե կարելի՛ է ապառաժին վրա խաչ անկել... Նայվածքը գորովալի է, բայց թույն կը թափե, սիրով կը սեղմե ձեռքը, այլ նա կը սասի... Ինչպես օձն իր զոհը անուշահոտության մեջ կը թմրեցնե, նույնպես սատր սիրած անուշահոտությունը սասվածային մրմունջներն են... Եթե սիրելի մը ունի աշխարհի մեջ, այն է արյունարբու փառքը, եթե սանկի մը՝ այն է ժողո-

վուրդը... Ասիկա դժոխքին փախած սև ուրվական մ'է...
(Սուրմակ շարագույժ նայվածք մը կը ձգե աճոնց վրա):
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սարսափած ձիշ մը կարձակե) *Ա՜հ:*
ՍՈՒՐՄԱԿ.— *Ո՛վ Տանդուդն, չե՞ս մտաբերեր, որ կղերն իր արդար բարկութեանը մեջ կայծակ կամ անեծք ունի... Կուզես որ տարածեմ քեզնա:*
ՀՐԱՉՅԱ.— *Ապո՛ւշ կը խաբես, ավելի օրհնեքեդ կը վախնամ, քան քե անեծքեդ:*
ՍՈՒՐՄԱԿ.— *Գիտցիր, որ եթե այս խաչյալեն նեղել և ապրիլ սորված չըլլայի՝ հիմա գլեզ ափ մը մոխիր դարձուցած էի... Շնորհակալ եղիր, քեզի համար գեռ պիտի ապրիմ, զի՝ որ ձշմարտութեան համբեն մոլորած, ուրիշներն ալ քեզի պես կուգես մոլորել... Զգուշացի՛ր այդ համբեն քալլ մ'ալ և ա՛նա անդունդ մը ունիս... Դու գիս յանգիստ նախատեցիր, այլ ես քեզի կը նեղիմ... վրեժը վատերուն կը վայլե... Բայց գարձյալ օր մը պիտի բողքեմ քու անիրավ գրպարտութեանդ դեմ. կը ցավիմ որ չես ճանչեր գիս և բարեգործութիւններս:*
ՀՐԱՉՅԱ.— *Կուզե՞ս որ տամ անունդ:*
ՍՈՒՐՄԱԿ.— *Սուրմակ երեց՝ Հիսուսի Քրիստոսի արուսյակ ծառա:*
ՀՐԱՉՅԱ.— *Միթքդ բեր անցյալդ... Քու անունդ Սուրմակ երեց չէ, այլ...*
ՍՈՒՐՄԱԿ.— (սարսափած և ապառնալից) *Զգուշացի՛ր...*
ՀՐԱՉՅԱ.— *Սմբատ է... Պալատական:*
ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) *Ո՛վ երկինք:*
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Պալատակա՞ն...*
ՀՐԱՉՅԱ.— *Դու պալատական մ'էիր:*

ՍՈՒՐՄԱԿ.— Պիտի լռե՞ս...

ՀՐԱՉՅԱ.— Դեռ մտիկ ըրե... Դու չարագործ էիր, խոպոտ-վույն սիրահարեցար և ուզեցիր զայն կրկին զոհել. Թագավորն իմացավ, նա քեզ հետապնդեց և քու պիտավորությունդ իր վրա փորձեց. հետո զքեզ պալատեն վռնդեց... Դու երեսանկյալ՝ քինախնդիր գացիր վանքը և քանի մը կեղծ արցունք թափելով խաբեությամբ երեց ձեռնադրվեցար. մեկը քեզի չը հարցուց քու անցյալդ, խաչ մը ավին ձեռքդ, և դու զայն սուրի տեղ կը գործածես, կը տեսնես որ ամեն բան դիտեմ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՞վ երկինք:

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Բայց ո՞վ է այս անձը...

ՀՐԱՉՅԱ.— Ճանչեցի զքեզ... Սմբատ...

ՍՈՒՐՄԱԿ.— Թող որ քեզի համար ապրիմ...

ՀՐԱՉՅԱ.— Քու ոճիրներուդ քավության համար ապրին, անօրե՛ն... ես զքեզ ճանչեցի, դուլ ալ պիտ ճանչեի (կուրծքը կը բանա):

ՍՈՒՐՄԱԿ.— Հրաչյա՞... Արքայորդին:

ՀՐԱՉՅԱ.— Ես այն ատեն տղա էի, բայց ամեն բան լսեցի... Օ՛ն, կորի՛ր այս սրբավայրեն և մեկ մ՛ալ տաք չի պիտի կոխես հոս:

ՍՈՒՐՄԱԿ.— (ցած, առ Հրաչյա) Զգուշացի՛ր ասիկի բանալու, թե ես Սմբատն եմ:

ՀՐԱՉՅԱ.— Վատասրտե՞նց:

ՍՈՒՐՄԱԿ.— (երթալով, մեկուսի) Արբա և արբայորդի, դո զացի՛ք ինձնե:

Տեսիլ Զ

ՀՐԱՉՅԱ և ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ, մեզ անիծելու չերթա, Հրաչյա... Ի՞նչ ըրիր։

ՀՐԱՉՅԱ.— Նախ անիծյալ ըլլա այդ անօրենը, որ քու միտքդ այդպես չղծայնր է. բա՛ց աչքդ, Շահանդուխտ, քանանա կարծածդ դիմակավոր սատանա մ'է... Դու կը պաշտպաննա այդ անձը, որ մեր անմեղ սերը պիտի սրբապղծեր, երկու լուսոց ճառագայթներու մեջտեղ սև ամպ մը և երկու նայվածքի մեջ խավար պիտի արձանանար, նա քու աչքերդ կապեր է և լուսո մեջ անգամ քեզ խարխափել կուտար. դուն կուլաս. Շահանդուխտ, նա կը խնդա վրադ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կը հասկնամ... Մեկզի այս խոսքերը, Հրաչյա, մեր վրա խոսինք։

ՀՐԱՉՅԱ.— Բայց պիտի առնս այդ մարդը, ինչպես պետք է առնել մեր սիրույն դահիճը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Սակայն ի՞նչ հոգ, եթե բոլոր աշխարհ անիծեն և նախատեն զմեզ... Ես քու զիրկդ, դու իմ զիրկս, ես քու նայվածքդ, դու իմ նայվածքս, ես քու շունչդ, դու իմ շունչս, սիրույս մեջ այնպիսի հեշտ կաթիլ մը կզգամ, զոր վարդը երբեք ունեցած չէ. այնպիսի ճաճանչ մը, զոր Արտաշեսի թագը չուներ, այնպիսի երազ մը, զոր բերթողը վիրջալուսին հետին ճառագայթներուն մեջ չերևակայեր... Սի՜ր, սե՜ր, չի կրնար գրվիլ երկնի բոցավառ աստղերուն նման. բայց ի՞նչ է սերը, եթե ոչ դուն...

ՀՐԱՉՅԱ.— Բայց ի՞նչ ունիս, Շահանդուխտս... Կուլա՞ս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Միթե կարելի՞ է առանց արցունքի սիրել... Միթե դու չե՞ս լար, Հրաչյա, տես երկնագույն աչքերդ աքողված են... Միթե չե՞ս ուզեր մեռնիլ...

ՀՐԱՉՅԱ.— Այո՛... մեր սրտերը մեկ արձագանք մը ունին... Բայց եթե կոհակի մը մեջ նետվինք՝ մեր վրա ծավալող կոհակին վերջին ծալքը մրմունջ մը ունի. եթե դաշունով մեռնինք՝ մեր կսկիծը տրտունջ մ'ունի, մեր արյունը դարձյալ ձայն մ'ունի... չը գիտե՞ս որ ամեն ձայն ալ երկնի մեջ արձագանք մը ունի... Միթե կարելի՞ է որ երկու հոգիներու պես մարինք առանց ձայնի և կորնչինք փլատակի մառախուղի և ամպերու մեջ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Եվ կը կարծե՞ս, որ Թոզան մեզ որ հանգիստ սիրենք դիրար... ի՞նչ է մեր բրածը. սիրել, ապրիլ միմիայն իրարու նայվածքի մեջ... եթե դիրար առնելու ըլլայինք, այն ատեն ամենքը մեզ կօղնեին և հարյուրավոր ձեռքեր արով կը նպաստեին, և մեր հայրերն իսկ մեր զինավարժը կըլլային. ի՞նչ կլանք... Միթե սիրել է այս... Վախնալ և հուսալ ձայնե մը, տրտմե մը, տեսնե մը, լույսե մը, մութե մը, շունչե մը, շուրթե մը, վերջապես իրարմե... Կանցնին աշխարհի փառքերն ու վայելքները. մենք անոնց սակերին տակ երկու աննշան ծալիկ էինք գիրկընդխառն փթթած, դեռ կոկոն էինք. բացվեցան մեր թևրթերը, տեսանք դիրար, ժպտեցանք, սիրտ թոռմինք... Հրաչյա, դեռ գրկե՛ դիս...

ՀՐԱՉՅԱ.— Բայց վայրկյան մը աչքերուս մեջ նայե... Որչա՞փ գեղեցիկ ես... Ո՞հ, չէ՛, չը մեռնինք, Շահանդուխտ, դեռ ապրինք, երկուքնիս ալ նորատի ենք... Դեռ բառատանը չը մտած՝ միայն բառումներ կզգանք, տեսնենք

ծաղիկներն ալ, նախ անոնք մեր շուրթերուն վրա թոռմին, ետոս մեր նայվածքները անոնց վրա... Օր մը անշուշտ միասին պիտի մեռնինք... Դու առաջ ամոթատար էիր, հիմա ալ՝ վշտահար... Դեռ չեմ տեսեր ժպիտդ, Շահանդուխտ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ես չեմ կրնար ժպտիլ մինչդեռ կը սիրեմ, Հրաչյա... Ես մեռնելու համար կը սիրեմ, կը մեռնիմ սիրելու համար. սիրտ մեջ կյանքը մահ է, իսկ մահը՝ անմահութիւն. մենք չունինք պալատ, ոսկի, ծառա, այլ հովիտն ատատանող խարխուլ տնակի մը մեջ կը սիրենք. եթե սա բլրակին վրա, սա ծառին հովանիին տակ, լուսնի շաղին մեջ իրարու քով վախկոտ նստած տեսնեի մեզ աղնվականը, և երբ մեր շառագույն ճակատը մեզ մատնե, թե պիտար կը սիրենք, կը խնդա մեր վրա այն անսիրտը... Աղքատը սիրտ կունենա... Ո՛վ շուքի մը շունչ և հիշատակ պիտի տա... Հրաչյա, եթե չբանիր առաջին օրը, թե պարզ դինվոր մ'էիր, եթե իմ հոգս բախտակիցը չըլլայիր՝ չէի կրնար զքեզ սիրել... Բայց ինչո՞ւ կարմրեցար...

ՀՐԱՉՅԱ.— Մեր վիճակին վրա կը կարմրիմ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Իրավունք ունին, խեղճ դինվորներն իրենց արյամբը թագավորին և ազնվականաց երջանիկ ապագայն կը գնեն, բայց դարձյալ անոնցմե կը նախատվին, վասնզի ձայն չունին, վասնզի ցնցոտին մարդը անարդութեան կը դատապարտե... Աղքատն իր տնակին մեջ չոր և նեխոտ հացով կը գոհանա, իսկ հարուստին ապրանքը նոր խորտիկներ կը հնարվին... Զինվորը պատերազմի փողին գոռումն կը սարսռի, վասնզի իր սիրե-

լինն պիտի բաժնվի, թագավորը անդին կույս ապչիկ մը կառևանդի մորը գրկին... Ի՞նչ սոսկալի են ասոնք, ո՜հ, որչափ երջանիկ եմ որ աղքատ ծնող, աղքատութեան մեջ սիրտը չը կորսվիր... այս խաչյան ալ աղքատ էր, բայց ո՛չ նվաստ... Նա թևակռ Աստված՝ կոխկռտեց ոսկին ու ծիրանին և միայն սեր ու ցնցոտի Տպավ... որչափ կ՚սիրեմ այն Քրիստոսը, որ քեզ ալ ինծի տվավ։

ՀՐԱՉՅԱ.— Ո՜հ, այդ անունը ինծի համար խիստ բարդ է, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ձիս շատ կը սիրե՞ս, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Քու սիրտդ չը մրմնջեր, թե ևս քեզ որչա՞փ կը սիրեմ, վասնզի սեր բառը գուցե իմ սերս չը կրնար բացատրել... Կը հասկնամ, Շահանդուխտ, կինը սիրելի ավելի կուզե սիրվիլ... Բայց ևս զոհ կըլլամ միայն սիրելով, Աստուծմե ավելի պետք է սիրեմ զքեզ, վասնզի դու զիս Աստուծո կը տանիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ի՞նչ լսիր, Հրաչյա՜։

ՀՐԱՉՅԱ.— Բայց ինչո՞ւ սոսկացիր, դու իմ սիրույս չափը կուզես իմանալ... Ո՜հ, նեղում, Շահանդուխտ, եթե դու հրեղեն մ՚ըլլայիր և եթե Աստուծմե դերագույն մեկն ալ եղած ըլլար, անկե ալ ավելի կը սիրեի, Շահանդուխտ, ո՜հ, ո՞վ ևս դու....

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քու եղբայրդ... Ներսե... Հանցավորը ևս եմ...

ՀՐԱՉՅԱ.— Ա՜հ, որչա՞փ գեղեցիկ է մարդ մանող արևուն ճառագայթը քու սիրահար ճակտիդ վրա... Որչա՞փ փառաշարդ է այս անակը, ուր քու շրթունքդ եղբայր կը կոչեն զիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Արևը մարը կը մտնէ... Ուրեմն պիտի բաժնվինք, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Անտանելի է այս, երբ կուգես, չենք բաժանվիր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս հիմա կը դառնա... Պետք է որ մեր սերը գաղտնիք մ'ըլլա։

ՀՐԱՉՅԱ.— Իսկ երբ իմանա։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Վրեժ կառնէ... Ջմեկ չպաններ, այլ կը բաժնէ։

ՀՐԱՉՅԱ.— Սոսկալի է այդ, երբ մեռնիլ ըլլար՝ միասեռ կը մեռնեինք։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Սա արևուն վերջին կարմիր ճառագայթը զքեզ բնակարանդ կը դարձնէ։

ՀՐԱՉՅԱ.— Ուրեմն... մնաս բարյավ, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Երթաս բարյավ, Հրաչյա, անշուշտ չես մոռնար զիս։

ՀՐԱՉՅԱ.— Աշխարհ ինչ ըմեզ մոռնա (կը մեկնի)։

Տեսիլ Է

ԲԱԲԵՆ և ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ԲԱԲԵՆ.— (շփոթած ձեւս մանելով) Շահանդուխտ, ո՞վ էր այն երիտասարդը, որ հիմա անակնդ դուրս ելավ և զիս տեսնելուն շփոթեցավ... խոսէ', ո՞վ էր այն... Ձե՞ս պատասխաներ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (թոթովելով) Հայր իմ...

ԲԱԲԵՆ.— Կը կարմրիս... Ա՜հ, պատասխանէ', ի՞նչ գործ ուներ այն երիտասարդն այստեղ. ինձն ապնվական մը կերևիր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կը սխալիս, հայր իմ, նա ալ քեզի պես զինվոր մ՚է։

ԲԱԲԵԼ.— Խաբեր է քեզ անիկա... Ա՜հ, միակ ապջիկ մը ունիմ, այն ալ կուզեն ձեռքես կորզել... կայծակ մ՚ալ ճաղատ ճակտիս զարնել... Բայց դարձյալ կը կրկնեմ, ի՞նչ գործ ուներ նա հոս... Ո՞վ էր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՛յր իմ, դիա՛ տնծի, դեռ ապջիկդ եմ...

ԲԱԲԵԼ.— Ուրեմն դեռ չե՞ս պատասխաներ... Պետք է որ իրեն հարցնեմ (երթալու կըլլա)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՞ւր կերթաս, հա՛յր իմ։

ԲԱԲԵԼ.— Պիտի տեսնվիմ անոր հետ... Գուցե սրով...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՜հ, դի՛ս սպաննե, հայր իմ, անոր սեպ... Հանցավորը ես եմ։

ԲԱԲԵԼ.— Ուրեմն կը սիրես զինքը հոգեկեղ գազանի, ապնվական մը, զոր ես կատեմ... Ուրեմն դու ալ իմ ապջիկս չես, ես մինակ եմ, մինակ աշխարհիս վրա, և այսուհետև գերեզմանի բարերն են իմ կնճռոտ ճակտիս բարձ... Ա՜հ, Շահանդուխտ, ի՞նչպես չը գթացիր հորդ ալեւոր մազերուն... Կուզես որ արցո՞նք բալեն հորդ ցամքած աչերեն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հանգարտե՛ հայր իմ, ինքը քու որդիդ է...

ԲԱԲԵԼ.— Երթամ տեսնել, թե իրոք որդի՞ս է, թե որդեսպան մը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կեցի՛ր, հայր իմ... դեռ կեցիր... (ոտքը կիյնե, Բաբել գացած ատենը դատավորը և զինվորներ կը դիմավորեն)։

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ, ԲԱՆՏԱՊԵՏ ՄԸ և ՋԻՆՎՈՐՔ

ԲԱԲԵԼ.— Բանտապե՞տ... Կը տեսնե՞ս, այն վտառը դրկեցէ տուռնը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի) Այն երկու անձինքը...

ԲԱՆՏԱՊԵՏ.— Դո՛ւ ես Բաբել գինվորը...

ԲԱԲԵԼ.— Այո՛, ես ինքս եմ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՛ւր պիտի տանիք Տայրս։

ԲԱՆՏԱՊԵՏ.— Մեղապարտից բանտը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՛վ երկինք, սակայն Տայրս անմեղ է...

ԲԱԲԵԼ.— Բայց ի՛նչ ըրի ես, ես իմ վիճակիս վրա կուլայի հիմա։

ԲԱՆՏԱՊԵՏ.— Դատավորին հրամանն այսպես է... Ջորա-կա՛նք, կապեցնք գինքը։

ԲԱԲԵԼ.— Սակայն դիս աղջիկս չի պիտի բաժնեք...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Աշխարհիս վրա մինակ Տայրս ունիմ... Ձե՛ր լսեր...

ԲԱՆՏԱՊԵՏ.— Ջորականք, դատավորին հրամանը գործադրեցնք... (զոռակաճները կը պաշարեն զայն կը կապեն)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՛յր իմ, կը բաժնեն զմեզ իրարմե։

ԲԱԲԵԼ.— Շահանդուխտ, Տարգև Հորդ պատիվը...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Սակայն անմեղ է ինքը, ձե՛ր լսեր, անգութ մարդիկ։

ԲԱԲԵԼ.—Աղջիկս... Ա՜հ, չկա արդարության պաշտպան մը (խաչելության պատկերը կախված տեղն կիյնե)։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սարսափած) *Աստվա՜ծ իմ, պատիկիրը կործանեցավ։*

ԲԱԲԵԼ.— (սուրը ձեռքով) *Ուրեմն առ հորդ սուրը* (վարագույրը կիջնե):

<(ՎԵՐՋ Ա ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԱՐԱՐՎԱԾ Բ

Արտաշրի պալատը մեծ և փառավոր սրահ մը.—Ձախագան շրեղ կարասիք,—խորք մեծ և բաց դուռ մը և ճեմելիք մը, ուստի երկինք և լեռներ կերևին.—Գետ մը կը հոսի պալատին առջևեն:

Տեսիլ Ա

ՇԱՎԱՐՇ և ՍՄԲԱՏ (ներս մտնելով)

ՍՄԲԱՏ.— Ի՞նչ լրիր, Շավարշ, օրհնած ջուրը թագուհույն տվի՞ր:

ՇԱՎԱՐՇ.— Այո՛, տեր իմ, բայց ի՞նչ կը նշանակեր տիկոջ:

ՍՄԲԱՏ.— Ի՞նչ պիտի նշանակի, ապո՞ւշ... Այսօր Սահակ կաթուղիկոս Սուրբ խաչի նորակառույց վանքն առաջին անգամ պատարագ մատույց և իր կողմանե պալատ ղրկեց մեծազոր խաչին օրհնած ջուրը:

ՇԱՎԱՐՇ.— Ո՜հ, շատ կը ցավիմ, որ կաթիլ մը չը խմեցի:

ՍՄԲԱՏ.— Գուցե խելքդ գլուխդ կուգար, (մեկնուսի) կը թունավորվիեր, ապուշ... Հիմա ո՞ւր է թագուհին:

ՇԱՎԱՐՇ.— Աղոթարանն է, տեր իմ:

ՍՄԲԱՏ.— Կաղոթիւ անշուշտ. (մեկուսի) դեռ ապրելու յոյսը չըրաւ թուլնը։

ՇԱՎԱՐՇ.— Կը հասամ, որ խաչին զօրութեանը կը միխիթարի պինքը, վասնզի արտասուշ վիճակի մը մեջ է. ժամանակ մ'ի վեր միշտ ապիթարանը կառանձնանա։

ՍՄԲԱՏ.— Շիտակ խոսե, Շավարշ, քեզի բան մ'ըսած չունի՞։

ՇԱՎԱՐՇ.— Բնավ, տեր իմ... Մինչև անգամ երեսս ալ նայած չունի։

ՍՄԲԱՏ.— (մեկուսի) Կը հավատամ, վասնզի կառաջյալ ապուշ մ'է, (բարձր) Շավարշ, կը հասկնամ որ Բագուհին հիվանդ է և այսօր կամ վաղը Հայաստան իր Բագուհին պիտի կորսնցունե... Բագուհին կամ պիտի խնդիևնա կամ պիտի մեռնի, ինչպես որ մայր Բագուհին ալ խնդիևնալուն համար Բագավորը պալատեն վռնտեց զայն։

ՇԱՎԱՐՇ.— Բայց Բագուհին խելացի և առողջ է, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— Կը վախնամ, որ յուր խելքը պիտի կորսնցունե պինքը։

ՇԱՎԱՐՇ.— Այդպես անդիտարար մի՛ խոսիր, տեր իմ, նիև կը հավատաս, ամեն վայրկյան իրեն համար կաղոթեմ և կը հասամ, որ Աստված լսե ինձ ու ևս մազերուս շնորհիվ... Բագուհին շատ բարի է, այնպես չէ՞, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— Գուցե (մեկուսի), բայց դիս կատե. (բարձր) Բագուհին զաղանիք մը ունի, որուն ևս միևակ Բագիանցած եմ, ևս միշտ Բագավորեն Հետու կը բնակիմ... Գրեթե կատե Բագավորը, վասնզի պինքը կը կաշկանդե սիրա

մեջ... Երբեք տեսա՞ծ ես անծանոթի մը թագուհույն հետ... Շիտակ խոսե։

ՇԱՎԱՐՇ.— Բնավ, տեր իմ... Անիրավ տեղը կը դատապարտես զինքը։

ՍՄԲԱՏ.— Դուն կը բնանաս, ապուշ, նա կը սիրե...

ՇԱՎԱՐՇ.— Ատոմած իմ, չեմ հասկնար միտքդ։

ՍՄԲԱՏ.— Դու ծերունի ես, միայն երկինք նայելով մազերդ ճերմկցուցեր ես, դուն դիտե՞ր ես զժոխոց բոցավառ խոր-բերը, պատրաստի մը կամ տնակի մը մեջ աշխարհ քեզի համար տանիքին վրայեն կանցնի, այնպես չէ՞։

ՇԱՎԱՐՇ.— Կապշեմ, տեր իմ, տոտանկ դժվար հարցումներ մի՛ բներ ինծի։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն քանի որ խելքդ չը հասնիր՝ քեզի համար լոել պետք է աշխարհի վրա, լոել՝ ինչ որ ալ պատահի... Այն՝ որ չը հասկնար՝ տարկ է որ լոե. անշուշտ կիմանաս թե ի՛նչ է լոելը։

ՇԱՎԱՐՇ.— Այդ դյուրին է... և քանի որ կը պահանջես...

ՍՄԲԱՏ.— Պիտի գործադրես, այնպես չէ՞, եթե ոչ կը վռնտվիս պալատեն, կը հասկնա՞ս, Շավարշ։

ՇԱՎԱՐՇ.— Ո՛հ, տեր իմ, կենսացս հանգիստը չը խանգարող ի՛նչ բան որ ըսես՝ կը կատարեմ... (մեկուսի) վտանգի անկե դյուրին բան չկա։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն իմ խոսելուս կարգն անցավ և քու լսելուդ կարգը եկավ, դդուշացի՛ր, Շավարշ... Գիտես, որ սիրտս և խոսքս բարի է։

ՇԱՎԱՐՇ.— Կը հասկնամ, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն ի՛նչ պաշտոն որ ունիս, դնա տուն վայր-

կենիս գործադրեմ. քե՛զ տեսնեմ, թագուհին ազնիկ խնամես։

ՇԱՎԱՐՇ.— *Շատ ազնիկ, տեր իմ,* (երթալու առնե մեկուսի) *սատանային պոչին վրա կերդնում, որ բան մը չեմ հասկընար։*

ՍՄԲԱՏ.— *Շավարշ, արյունաթաթավ գլուխ մը կա... և դու մեկ խոսքով պիտի ձգես գայն, եթե սխալիս։*

ՇԱՎԱՐՇ.— *Ա՛հ, տեր իմ, կապշեմ, այդպիսի սոսկալի պաշտոններ մի հանձնեք ինձ, կը տեսնեք որ հիմակվընե կսկսիմ դողալ։*

ՍՄԲԱՏ.— *Մի՛ սխալիր... լռե՛... թշնամիներ կան։*

ՇԱՎԱՐՇ.— *Բայց...*

ՍՄԲԱՏ.— *Դարձյալ կը կրկնեմ... Պիտի լռես։*

ՇԱՎԱՐՇ.— *Շատ լավ, տեր իմ։*

ՍՄԲԱՏ.— (մեկուսի) *Թագուհին հոս կուգա, կարծես թե ավելի զեղեցկացեր է* (կը մեկնի)։

Տեսիլ Բ

ՀԵՐԱՆՈՒՇ և ՀՐԱՉՅԱ

ՀՐԱՉՅԱ.— *Սա դաշտերուն վրա ակնարկ մը ձգե, մայր իմ, տես ո՛րչափ զեղեցիկ ու գվարթ է գարունը. վերը կապույտ և վարը՝ կանաչ օթոց մը. տես սա ծաղիկները, տերևները, սա արծաթի առուները, որ կը սողան, մտիկ ըրե սա սրնգաց ու թռչնոց բյուր երգերը ու դեղդեղը... Հիրավի, միթե զեղեցիկ չե՞ն։*

ՀԵՐԱՆՈՒՇ.— *Տարփածուի մը համար... կը հասկնամ, Հրաչյա։*

ՀՐԱՉՅԱ.— Բայց, մայր իմ...

ՀԵՐԱՆՈՒՇ.— Իսկ առելութիւնն ու վիշտը անոնց վրա սև վարագոյր մը ձգած են, դագաղի ծածկոց մը, որուն վրա խաչ մը, փուշ պսակ մը և կմախք մը միայն բանված են... Այս պալատեն ավելի հեռու կերևի երկինքը. խըղճալյաց ձայները այս պալատին սև ու հաստ պատերուն զարնելով՝ անթափանց կը նվաղին և կը թավալին հոն... Թէև արձագանք մը ունին՝ դժոխային ծիծաղ մ'է... Մինակ անսիրտներն ու անխիղճներն կրնան երջանիկ ապրիլ հոս:

ՀՐԱՉՅԱ.— Կը հասկնամ, մայր իմ, հայրս անխիղճ է:

ՀԵՐԱՆՈՒՇ.— Անսիրտ ալ է, վասնզի իմ աչաց առջև ուրիշներ կը սիրե, թեպետ չեմ ուզեր որ զիս սիրե, սակայն չեմ ուզեր նաև, որ ուրիշները սիրե. խե՜ղճ աղջիկներ, որոնք քանի մը օր թագավորին հետ կենակցելու համար կը թողուն հովիտյան իրենց անմեղ և խաղաղ տնակը, կը նետվին պալատին ցոփության մեջ, կը խամրի իրենց կուսության ծաղիկը, որուն վրա կը շողային երկնից անմեղ արցունքները, զանոնք կը թափեն ադքերու տակ՝ մարգարիտներ առանալու համար... Ա՜հ, երանի թե դեղջկուհի մը ըլլայի և սիրվեի, և բոլորտիքս ալ ամենքը սիրեին զիրար:

ՀՐԱՉՅԱ.— Բայց մա՛յր իմ, միթե ես զքեզ չե՞մ սիրեր:

ՀԵՐԱՆՈՒՇ.— Գիտեմ, Հրաչյա:

ՀՐԱՉՅԱ.— Ուրեմն դևռ ո՞վ...

ՀԵՐԱՆՈՒՇ.— Հրաչյա, եթէ թագավորը վատթար ըլլա, ժողովուրդը թագուհին ալ մեկտեղ կը դատապարտե. չե՞ս տեսներ, որչափ լրյալ ու թշվառ է Հայր քու հորդ թա-

գավոութեան ժամանակ. օտարները միշտ Հայաստանը կը փեռնկանն և Հայուն փառաց ջահն ու գահը թավալելու կը տքնին... Հայրդ մինակ հնշաութեան և սրա կը ճանչե. ազգը թագին մեջ ամփոփած, Հայուն սիրտը կը ճմլե ու կը ճնշե իր արյունոտ գահին տոքերուն տակ. Հորդ ծիրանին անմեղներու արյամբը կարմրեցավ, թագը արցունքներով կը շոգա, սուրն ու սաղավարտը ժանգոտեցան. Հայաստան անոր թագ մը տվավ գանձ մը ունենալու համար՝ նա փոխանակ գափնիի՝ շղթաներ կը սփռե նախնյաց շիրիմներուն վրա, նա կը կոթծանե Հայաստանը՝ անոր փլատակացն ու աճյունին մեջ իր հաճույքն ու հոգին մարելու համար... Թագուհի եղա նախատավելու համար... Շատ ուշ հասկցա, թե ի՞նչ է պալատը, ի՞նչ է թագը:

ՀՐԱՉՅԱ.— Ճշմարիտ է, մայր իմ, սիրտ մեջ անակը պալատ կըլլա և ծագկե պսակ մը՝ թագ. սիրեն սիրելն շատ փառավոր չէ՞... կը հավատա՞ս, մայր իմ, ես թագավոր չի պիտի ըլլամ:

ՀԵՐԱՆՈՒՇԸ.— վաղվի հորդ արյունոտ թագովը չես ուզեր անմեղ ճակատդ պճնել:

ՀՐԱՉՅԱ.— Եվ սիրեն աշխարհի վրա կա՞ թագ մը, որ արյունոտ չըլլա, մայր իմ...

ՀԵՐԱՆՈՒՇԸ.— Հիրավի երանի անոնց, որոնց աչքերը գեղչկային օրրանի մը մեջ կը բացվին, երկինք, սեր և գինովման միայն կը ճանչեն... Կզգամ որ այս կյանքս շատ չի պիտի տևե, վաղվի կատեմ...

ՀՐԱՉՅԱ.— Մայր իմ, ի՞նչ կըսես... Չե՞ս ուզեր ապրիլ գոնե ինծի համար. ե՛ս որ արքայորդի ու սրբ եմ. չի՞ պի-

տեր, որ մայր մը թագավոր հորմե մը ավելի կընտրեմ... Դու մեռնի՞ս այդպես գեղեցիկ ու բարեսիրտ։

ՀԵՐԱՆՈՒՇԸ.— Մի՛ ըսեր ինձ, թե գեղեցիկ եմ, վասնզի առեւտրյանս կայծն ավելի կարծարծեն այդ բառը... Նախանձըն ու վիշտը սրտիս զգայունները խեղդեցին. ես որ բարեսիրտ էի՝ առեւտրյան պատկերն ըրին վիս... Կատեմ ես աշխարհի ճաճանչները, որոնք սիրտ ժպիտներ են... Ես ավելի կը սիրեմ՝ երբ երկինք սև, աշխարհ փլատակ և բնությունը լուռ ու տխուր ըլլա։

ՀՐԱՉՅԱ.— Բայց, մայր իմ, չե՞ս խնայեր քու զավկիդ... Այն արցունքները, զոր դու մենության մեջ կը թափես՝ իմ կուրծքիս վրա կը կաթին ու կը սառին... Մխիթարվե՛, մայր իմ, շատ անգամ դևերնմանի մը քով ծաղկունք կը փթթին... Մնաս բարով, մայր իմ։

ՀԵՐԱՆՈՒՇԸ.— Ո՛ւր պիտի երթաս, Հրաչյա... Կարծեմ կույս մը քեզի կսպասե ծառի մը հովանիին տակ, ուսկից պիրկընդխառն պիտի պիտնք վերջալուսուն հետին կարմիր ճաճանչները և հետո գիշերվան մութին մեջ պիտի հոմրնք երկնքեն թռչող աստղերը. այնպես չէ՞, Հրաչյա... Ի՞նչ գեղեցիկ է սիրելը և սիրվելը...

ՀՐԱՉՅԱ.— Սակայն, մայր իմ...

ՀԵՐԱՆՈՒՇԸ.— Գնա՛, Հրաչյա... Բայց մեկ մ՛ալ ե՞րբ պիտի տեսնվինք։

ՀՐԱՉՅԱ.— Անշուշտ վաղ առավոտ, մայր իմ (կը մեկնի)։

ՀԵՐԱՆՈՒՇԸ.— Գուցե...

ՀԵՐԱՆՈՒՅՇ (առանձին)

Որովհետև վրա անգամ կը նախանձիմ... Ա՜հ, թագս կուտայի սիրվելու համար... Հրաշէյա աղեկ ըսած, ի՞նչ է թագը... Սիրտ արցունքներով շաղացող վարդն պատկ մը անկե գեղեցիկ է, սիրտ ժպիտ մը տիեզերքն իր մեջ կամփոփե... Այս մեծաշուք պալատին տեղ ծառի մը շուք բավ է սիրելու համար և անոր տերևներուն մեջ սուլող զեփյուռը փառաց երգերն ավելի փառավոր է... Ի՞նչ է թագը. թռչուն ատող մը. ի՞նչ է ծիրանին. ժողովրդյան արյամբ կարմրած պատանքի կտոր մը, զոր դարձյալ ժողովուրդը կը կարկատե. ի՞նչ է պալատը. վիրապ մը, ուր մարդիկ շղթա և ատպար կը կոնե իրենց նմաններր հարվածելու. ի՞նչ է թագավորը. թագ կրող չոր գանգ մը, որ մութին մեջ կը հարվածե. Հայաստան կգա այս հարվածը և կը ճչե. կանիծե զիս ալ՝ որ թագուհի եմ... Այս պալատը չահագործող գործազ մ'է, շոշոփուն կմախք մը, իսկ ժողովրդյան անեծքր՝ փառաց արձագանքր... Արտաշի՛ր, դու թագ մը ավիր ինձ՝ գազազեն ատելու համար, ծիրանի մը՝ արյունաներկ պատանք մը ունենալու համար... Խեղճ գեղջկուհին պալատ կերազե, ևս ալ՝ իր գաշտը. գուցե գեղջկուհին թագուհի բլլա, բայց թագուհին գեղջկուհի չբլլար... Որչա՜փ երջանիկ է այն կինր, որ երեկոյին իր ամուսնույն քրտինքր կը սրբե... Ես չեմ կրնար ուրեմն սրբել... Երանի թե ցնցոտի Հագնեի, միշտ կրեի, բայց սիրվեի (խոկում ու տատում կը մնկնի):

ՍՄԲԱՏ և ԱՐՏԱՇԻՐ

ՍՄԲԱՏ.— (բազուկովդ նռանեն մեկուսի) *Միթե ես գքեզ չէ՞ի սիրեր, անգութ, բայց ես հիմար եմ։*

ԱՐՏԱՇԻՐ.— (ներս մոճելով) *Ի՞նչ ըսիր, Սմբատ։*

ՍՄԲԱՏ.— *Շամարշ ասիր է, տեր արքա, և նա գոհութեամբ ընդուներ է։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Եվ դեռ...*

ՍՄԲԱՏ.— *Գուցե քիչ մը հաքը, տեր արքա...*

ԱՐՏԱՇԻՐ.— *Ապահո՞վ ես։*

ՍՄԲԱՏ.— *Ինչպես ապահով եմ գորտականին աղջկան գեղեցկութեյան վրա։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Ա՜հ, թշվառական, սիրուդս բոցերը բորբոքել կուգես։*

ՍՄԲԱՏ.— *Բավական է որ քիչ մը ժամանակի համար բլլան։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Ինչպես, Սմբատ, չեմ հասկնար։*

ՍՄԲԱՏ.— *Ըսել կուգեմ, թե վազ առավոտ այն ապջիկը քեզ անկողնեդ ուղղ պիտի արթնցնեն իր անուշ ձայնովը։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Թշվառակա՜ն։*

ՍՄԲԱՏ.— *Բայց ասով չեմ ուզեր ըսել, թե այս գիշեր քուն չը քնանաս։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Սատանա՛, եթե թագ չունենայի, դիս քու խաղալիքդ կընեիր։*

ՍՄԲԱՏ.— (ակնածութեյամբ) *Տեր արքա... ես ծառայիով գոհ կրլլամ։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Շատ ապեկ կը ճանչեմ գքեզ, Սմբատ։*

ՍՄԲԱՏ.— *Ուրեմն, տեր արքա, քիչ առեններն թագուհին դիտակ

մ՛է, որ ալ ձայն չունի. և Բագավորը վազն իր սիրուն մեջ պիտի վերածնի, և Սմբատ ալ իր Հաղթական ձակատը երկու սիրահարի շառագույն դեմքերու մեջ պիտի փայլեցնեն... Այնպես չէ՞, տե՛ր իմ:

ԱՐՏԱՇԻՐ.— Խեղկատա՛կ, միայն գործդ կը պակսի:

ՍՄԲԱՏ.— Միտք ունեցողին համար գործն ի՞նչ է, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Աղեկ խորհե՞ր ես, Սմբատ:

ՍՄԲԱՏ.— Ինչպես որ աղեկ խորհեր եմ Արտաշրի մահրիմն բլլալու համար:

ԱՐՏԱՇԻՐ.— Ե՞րբ պիտի ճամբա ելնես:

ՍՄԲԱՏ.— Գուցե հիմա:

ԱՐՏԱՇԻՐ.— Ջորականին տնակը, այնպես չէ՞:

ՍՄԲԱՏ.— Անշուշտ... Հիմա աղջիկը մինակ է տնակը, և ջորականն ալ նույնպես բանտին մեջ մինակ... Միայն Սմբատ կը պակսի:

ԱՐՏԱՇԻՐ.— Արտաշիր ալ Բագավոր է, բայց միայն այն աղջիկը կը պակսի:

ՍՄԲԱՏ.— Ուրեմն Բագիդ մեկ ագամանդն ընդ կուգես դայն, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Անիրավ ես Սմբատ. ավելին... կենացս մեկ կայծն է նա:

ՍՄԲԱՏ.— Բագուհվույն գերեզմանին վրայեն վարդ պիտի քաղես, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Այդ վարդը ցող ունի, այնպես չէ՞, Սմբատ:

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, բոցավառ արևուն ճառագայթները շուտով կը չամրեցնեն դայն:

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց բավական է որ մեկ մը թևերուս մեջ տես-
նեմ:

ՍՄԲԱՏ.— Այո՛, տեր արքա, կին մը պետք է որ թագը մո-
տեն տեսնե, այնատեն ո՛չ միայն սերը, այլ կյանքն ալ
կուտա:

ԱՐՏԱՇԻՐ.— Շատ խորագետ ես, Սմբատ, քեզ տեսնեմ, թա-
գը չը տված՝ կարենայի աշխարհ վայելել... Ի՞նչ կընե
ինծի ազգը, բայց թագը հրաշքներ կրնա գործել... Թող
թագավորը և ժողովուրդը միայն ինքզինքնին մատածեն...
Թող առնեն Հայաստանը և ինծի զևզանի հավերժահար-
սեր տան, ես առով գոհ կըլլամ... Թագավորի մը մա-
կան կը վայլե և ժողովրդի մը՝ սուր, այն հնձե, ես վա-
յելեմ... Սմբատ, երբ միտքս կուգա այն աղջկան զե-
ղեցկությունը, վայրկյան մը թագս անգամ կը մոռնամ:

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, զևզանի աղջիկ մը քեզի համար վարդի
մը կյանքն անգամ չունի... կը տեսնենք:

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց դեռ դու հոս ես, Սմբատ:

ՍՄԲԱՏ.— Քայլ մը տեղ է, լեռ չի կա միջոցը, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Գիտե՞ս երբեմն ծաղիկն մը քույն կը հուսաց-
վի:

ՍՄԲԱՏ.— Ես հոտոտեր եմ. տեր արքա, դու ապահով և հան-
գիստ եղիր. երբ վերադառնամ, թագուհին մեռած պիտի
ըլլա:

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ես իր գերեզմանին գոնեբեն ավելի լավ պի-
տի նշմարեմ աշխարհը:

Տեսիլ Ե

ԱՐՏԱՇԻՐ (ինքն) ՇԱՎԱՐՇ

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչ գեղեցիկ օր մը պիտի ծագի վաղը, արշալուսին ծագումեն առաջ գեղանի նայվածք մը պիտի բաներ պիս... (կանչելով) Շա՛վարշ։

ՇԱՎԱՐՇ.— Ահռավասիկ եմ, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Թագուհին ի՞նչ կընես։

ՇԱՎԱՐՇ.— Իր սենյակը առանձնացած է, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Ըսե, թե կուզեմ իրեն հետ տեսնվիլ հիմա։

ՇԱՎԱՐՇ.— Գլխուս վրա, տեր արքա (խոնարհելով կը մեկնի)։

Տեսիլ Զ

ԱՐՏԱՇԻՐ (առանձին)

Հիմա ինքը խոժոռ է. ո՞րշափ կը նախանձի իմ սիրահարութեանցս վրա... Ի՞նչ ընեմ, կարծես թե կնոջ գեղեցկութեան շուտ կը թոշնի իմ ջերմ համբույրներես... Առջի օրը հրեշտակ մը կը նշմարեմ և հետևյալ օրը գրեթե ուրվական մը կը շոշափեմ... Ես կուզեմ Տով մ'ըլլալ և ամեն ծաղիկներուն հետո առնել... Շատ կօգնի ինձ թագը՝ այս շողշողուն իրը, որուն ադամանդները հազարավոր գեղեցիկ նայվածքներ կը շլացնեն, բայց կը տևեն, որ անխելք կրոնավոր մը կուզե թագիս վրա խոշ անկել... «Ապր, ապր» կը գոչե միշտ ինքը, նույն ձայնը սրտիս խորը միակ արձագանք մ'ունի, որ է «թագ, թագ»... Թագուհին շատ սխալեցավ...

ԱՐՏԱՇԻՐ և ՀԵՐԱՆՈՒՇ

ՀԵՐԱՆՈՒՇ.— Ջիս տեսնել ուզե՞ր ես, Արտաշիր։

ԱՐՏԱՇԻՐ.— Այո՛, Հերանուշ... Զարմանքի մեջ կը տեսնեմ ղքեզ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Կը հասկնաս...

ԱՐՏԱՇԻՐ.— Թեե կը հավատամ, բան մը չեմ հասկնար։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Շատ լավ... Ուրեմն ինչո՞ւ ուզեր էիր զիս։

ԱՐՏԱՇԻՐ.— Ամբաստանություն մը կա վրաղ... և դու չի պիտի կարենաս արդարացնել ինքզինքդ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Ամբաստանությո՞ւն մը... և տեսնենք, ո՞րն է այդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Հերանուշ, անխելքություն չէ՞ միթե, պալատին գաղանիքն օտարի մը հաղորդելու հանդգնիլը, անխելքություն չէ՞ թագուհվո մը ժողովրդյան արձագարն ըլլալը։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Արտաշիր, անցեալն վարագույրը մի՛ բանար։

ԱՐՏԱՇԻՐ.— Ես ներկային վրա կը խոսիմ, անցյալը ինծի՛ համար շունչ և հիշատակ չունի։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Ապահո՞վ ես թե ներկայն խղճիդ վրա չը ծանրանար։

ԱՐՏԱՇԻՐ.— Այո՛, ներկային մեջ դու իմ կյանքիս թելեն կախյալ ես, ո՛չ զայն բռնելու կարողություն ունիս և ո՛չ կարելու սուր։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Կը տեսնեմ որ անմեղի մը գազանին վրա տապար կը դնես՝ զայն գահիճ հրատարակելու համար...

Արտաշիր, բավական չեղա՞վ այսչափ ոճիր, այսչափ հարվածք... Դեռ անմեղ զոհերու արյունը բավական չողողեցի՞ն գահդ... դեռ այսչափ անեծք խղճիդ վրա չը ծանրացա՞ն և դեռ չը կրցա՞ր դժոխք ընել պալատդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ դու ալ չը կրցար ատոնց հանդուրժել, այնպես չէ՞։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Դուցե... Ա՜հ, ա՛լ բավական վիշտ կրեցի։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ կը կարծես որ մատնությունդ կը խնամեցավդ... Կը կարծես որ Սահակի խաչը իմ արույս կը ներմադրե՞... Դուցե քիչ մը եռքը սոսկալի մաքառում մը պիտի սկսի մեր մեջ... Շատ սխալեցար, Հերանուշ... և այդ սխալմունքը շատ սուղի պիտի նստի քեզ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Դեռ վրե՞ժ կը դավես, Արտաշիր, բավական չէ՞, գեղեցիկ էի, և ուրվական մ'ը ըրիր զիս, ինձ մը ավիր և դիակ մ'ըրիր զիս և չես ուզեր որ հարվածիդ առակ չնձեմ... Աստվածյան կը սերմանես և կըսես՝ մի՛ատեր... Ջիս չես սիրեր, կուզես որ զրկվ չատեմ... Ա՜հ, Արտաշիր, շատ անգութ ես։

ԱՐՏԱՇԻՐ.— Ես անգութ եմ, թող ուրիշներն ալ ինծի պես անգութ ըլլան, բայց Հայաստան իմս է, ո՛վ կը համարձակի ինծի խոչընդոտ կանգնել։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Նախ քու հորդ սովերը[8])։

ԱՐՏԱՇԻՐ.— Հայրս հանգիստ է իր գերեզմանին մեջ և ևին անխոհեմությամբ դուրս նետվի, իրեն հետ ալ կը մարընչիմ... Չեմ ուզեր, որ մեկն ամբարտակ կանգնի դիմացս, չեմ ուզեր, որ ձեռք մը դիս բռնե. ևին խավար ու մոլար է ճամբան, է՛հ, քայլամոլարի մը համար անդունդներ կան, թող անդունդները դիս պատժեն. Արտա-

վազդ իր երիվարովը գլորեցավ՞), ես մինակ կը գլորիմ հոն...

ՀԵՐԱՆՈՒՇ.— Բայց Հայաստան...

ԱՐՏԱՇԻՐ.— Նա ինձ հետ թող չը գա։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Ուրեմն հեռացի՛ր գահեդ, թոթվե՛ վրայեդ ծիրանիդ, որ զքեզ Հայաստանի հետ կը կապե։

ԱՐՏԱՇԻՐ.— Ա՜հ, այնչափ հիմա՞ր կը կարծես դիս... Ես չեմ ուզեր ապերախտ դանվիլ, Տայրս յուր ձեռքերը չը տառած թագ մը կարկառեց ինձի, թագ մը՝ որ ինձի միայն կը պատկաներ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Բայց այն թագին վրա Տայրենիք և իրավունք գրված էր։

ԱՐՏԱՇԻՐ.— Չեմ դիտեր. ես բան մը չը կարդացի հոն, մինակ տեսա որ գեղեցիկ էր և գեղեցիկները հրապուրող, և ակնե ավելի ի՞նչ պետք է ունենալ ինձի համար աշխարհի վրա։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Արտաշիր, դեռ չե՞ս ամոթահարիր։

ԱՐՏԱՇԻՐ.— Կր տեսնեմ որ չատ նախանձոտ ես գեղեցիկներու դեմ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Շատ... Բայց ի՞նչ կզգամ, Աստված իմ... Կարծես թե սիրտս կայրի։

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) Թույներ...

ՀԵՐԱՆՈՒՇ.— Արտաշիր, ի՞նչ կըլլամ... Սիրտս կը խոշտանգին... Բայց դու ինչո՞ւ երեսդ անդին կը դարձնես... Չես մտիկ ընել չես ուզեր... Արտաշիր...

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ի՞նչ կըլլաս, Հերանուշ, խենթեցա՞ր։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Արտաշիր, չես գիտեր ի՞նչ տռկալի ցավ է

այո... ո՜հ, գթա՛ ինծի, ազատե՛ դիս այս ցավեն... Կաղաչեմ, կը պաղատիմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց չեմ հասկնար։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Օ՛ն, կանչե պալատականները... Օգնութի՜ւն...

ԱՐՏԱՇԻՐ.— Լռե՛...

ՀԵՐԱՆՈՒՇ.— Արտաշիր... վրե՞ժ կառնես։

ԱՐՏԱՇԻՐ.— Գրեթե...

ՇԱՎԱՐՇ.— (կես մը երեսլով մեկուսի) Կարծես թե օգնութ֊յան ձայն մը եկավ։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Ա՜հ, անօրեն... կը հասկնամ, քիչ մը առաջ Շավարշին հետ օրհնած ջուր դրկեցիր. Թույն խառներ էիր դուն հոն։

ՇԱՎԱՐՇ.— (մեկուսի) Ի՞նչ կը լսեմ, Աստված իմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Գե՞շ ըրի, Հերանուշ, կապտաւեմ գբեզ Արտաշիրեն, կապտաւեմ գբեզ այն կյանքեն, ուր միայն աւետութ֊յուն և փիշտ ունեցար։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Դադա՛... ուրվական մը ունիմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ես մեծ բար մը պիտի դնեմ գերեզմանիդ վրա, զոր դու չը կարենաս պղտել և դուրս նետվիլ։

ՇԱՎԱՐՇ.— (մեկուսի) Ի՞նչ կանցնի, հոս, տեր Աստված։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Բայց դեռ ողջ եմ, դեռ կը շարժին շուրթերս, անեծք մ'ունիմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Վայրկենն մը հետդ պիտի տանիս։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Երկինք նայն անգամ մը։

ԱՐՏԱՇԻՐ.— Չե՛մ զոզար։

ՀԵՐԱՆՈՒՇ.— Դժոխք նայն ուրեմն։

ԱՐՏԱՇԻՐ.— Չե՛մ տեսներ։

ՀԵՐԱՆՈՒՅՇ.— Մեկեն պիտի դուրս և մյուսը պիտի տես-
նես. արյունս ճակատդ է, Արտաշիր, անիծյալ ես:
ՇԱՎԱՐՇ.— Ի՞նչ կը տեսնեմ... Թագուհին...
ԱՐՏԱՇԻՐ.— Մեռավ...

(Պալատականք կուգան)

ԱՐՏԱՇԻՐ.— Պալատակա՛նք, Թագուհին մեռավ, սև սենյա-
կը տարեք պինքը և քահանա մը կանչեցեք, որ ապթիե ու
հակե իր վրա (պալատականք դիակը կառնեն և խորհ
կողմնական սրահը կը տեղափոխեն անկողնո մը վրա և
կը մեկնին): Ամեն բան լմնցավ, քիչ առեղեն արևը պի-
տի ծագե, ի՞նչ երջանիկ եղավ ինծի համար այս գիշե-
րը... Շատ քիչ անգամ զգացած էի կենացս մեջ այսպիսի
սեր. զորականին աղչիկը Տորը սրովը կարծես Թե սիր-
ասս խոցեց... Ո՜հ, Սմբատի ամեն մեկ քայլը սրտիս բա-
բախմանցը Տետ կը տրտփեն... Վաղը պիտի զա (կը
մեկնի, տեսարանը կը մթնե):

Տեսիլ Ը

ՇԱՎԱՐՇ, (հետո) ՍՈՒՐՄԱԿ

ՇԱՎԱՐՇ.— Ես՞ղե Թագուհի... Ակամա իր սպանիչը եղա...
Անօրեն Թագավոր, գոնե ինծի ալ չը մեղքցար... Հիմա
ի՞նչ պիտի ընեմ ես:
ՍՈՒՐՄԱԿ.— (ներս մտնելով) Ողջույն քեզ:
ՇԱՎԱՐՇ.— (մեկուսի) Քահանա մը. (բարձր) շուտ եկար,
տեր Հայր:
ՍՈՒՐՄԱԿ.— Պալատին առջևեն կանցնեի և ձիս կանչեցին,
ո՞ւր է հանգուցյալը:

ՇԱՎԱՐՇ.— Հոս է, տեր Հայր (դուռը կը բանա և կը ցուցնե):

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Թագուհի՞ն...

ՇԱՎԱՐՇ.— Տեր Հայր, պաղանիք մը պիտի խոստովանիմ քեզի:

ՍՈՒՐՄԱԿ.— Խոսե:

ՇԱՎԱՐՇ.— Քիչ մը առաջ Թագավորը օրհնած ջուր թվավ ինձ Թագուհույն տալու համար... բայց մեջը Թույն կա եղեր:

ՍՈՒՐՄԱԿ.— Ուրեմն Թագուհին Թունավորված է, այնպես չէ՞, բայց ապեկ գիտե՞ս, ապահո՞վ ես...

ՇԱՎԱՐՇ.— Այո՛, տեր Հայր... Բայց մեղքս բավելու մի՛ մոռնար... Հավատա, որ ամենևին չը գիտեի Թե օրհնած ջուրին մեջ Թույն կար և քիչ մնաց ես ալ պիտի խմեի:

ՍՈՒՐՄԱԿ.— (մեկուսի) Այս ապուշ է... (բարձր) Այո՛, կը նեղեմ... բայց ինձ պիտի հնապանդիս, ինչ որ ալ ըսեմ... պիտի լռես... Առ այս բսակը, ահա քեզի ոսկի և բավություն:

ՇԱՎԱՐՇ.— Որչափ բարեսիրտ ես, տեր Հայր:

ՍՈՒՐՄԱԿ.— Մտիկ ըրե, այս սենյակը ցած է, այնպես չէ՞:

ՇԱՎԱՐՇ.— Այո՛... բայց ի՞նչ պիտի բնես, տեր Հայր:

ՍՈՒՐՄԱԿ.— Լռե՛ և հնապանդե՛:

ՇԱՎԱՐՇ.— Լա՛վ, լա՛վ...

ՍՈՒՐՄԱԿ.— Գիշերվան երրորդ պահուն այս սեննկին տակը պիտի դտնվիս, ես դիակը վար կիջեցնեմ, և դու աչալուրջ պիտի հսկես անոր վրա ինչվան որ ես բովդ դառնամ... կը լսե՞ս... Եթե խոսիս կամ չը հնապանդիս, գիտցիր որ Թե սոսկալի մեղքդ չեմ բավեր և Թե հավիտենական անեծք կը Թափեմ գլխուդ:

ՇԱՎԱՐՇ.— Բայց կսպասեմ, ի՞նչ կուզեք բնել, տեր Հայր:

ՍՈՒՐՄԱԿ.— Թագուհին պիտի վերակենդանացնեմ։

ՇԱՎԱՐՇ.— Ո՜հ, օրհնյալ ըլլաս, տեր հայր։

ՍՈՒՐՄԱԿ.— Ուրեմն դիշերվան երրորդ պահուն... Ինչվան այն ատեն խոսք մը չի պիտի ելնե բերնեդ... Միայն պատվիրե, որ այս սենյակը չը մտնեն... եթե ուրիշ խոսք մ'ընես, մեռած ես։

ՇԱՎԱՐՇ.— Ո՛չ, ո՛չ, տեր հայր, անհոդ եղիր (մեկուսի) *և այնուհետև ի՞նչ պիտի ընե այս քահանայի արդյոք* (կը մեկնի)։

ՍՈՒՐՄԱԿ.— Վրեժս պիտի առնեմ (սենյակը կը մտնե.— պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Ա.

Ջուրականին տեսակը.—Գիշեր է գրեթե.—Ձեղունեն կախված կանթեղ մը կը պլպլա։

Տեսիլ Թ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ և ՀՐԱՉՅԱ

ՀՐԱՉՅԱ.— (ներս մտնելով) Չեմ կրնար քեզնե հեռու մնալ, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Գիտեմ, Հրաչյա, դու շատ բարեսիրտ ես։

ՀՐԱՉՅԱ.— Բայց ինչու՞ այդպես դեղներ ես և գրեթե կը թուլանաս... կերևի թե վիշտ մը ունիս, Շահանդուխտ... խոսե, ի՞նչ ունիս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ոչինչ, Հրաչյա, չը գիտե՞ս որ գրեթ ամեն անգամ տեսնելուս կը շփոթիմ և գրեթե կուլամ։

ՀՐԱՉՅԱ.— Բայց միանգամայն անմեղ ճակատագիր վարդի գույն մը կատանար, իսկ հիմա թալկահար կը տեսնեմ... Մեր սիրույն համար ըլլա, Շահանդուխտ, խոսե՛, ի՞նչ պատահեցավ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց կը վախնամ որ զքեզ ալ կը տրամեցնեմ։

ՀՐԱՉՅԱ.— Եվ միթե աշխարհի վրա տրամություն և ուրախություն երկուքիս ալ բաժին չե՞ն. մեկուն մեռնիլ ուզողը պետք է որ մեկուն տրամի... Խոսե և պատահածը պատմե անհոգ ու զառն կասկածներեն, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հրաչյա, երեկ իրիկուն քու մեկնելեդ ետքը...

ՀՐԱՉՅԱ.— Ե՞տքը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հայրս բանտ տարին։

ՀՐԱՉՅԱ.— Ո՛վ երկինք, բայց ինչո՞ւ... Պատճա՞ռը...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Չեմ գիտեր... Ո՛հ, ո՛րչափ տրամեցա երեկ գիշեր առանձին հոս... Հովերու մռնչյունեն ուրիշ բան չէի լսեր... ոչ քու և ոչ հորս ձայնը։

ՀՐԱՉՅԱ.— Բայց միթե հանցանք մը գործա՞ծ էր հայրդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Չեմ կարծեր, հայրս անմեղ էր։

ՀՐԱՉՅԱ.— Անմեղ էր և բանտ դրին... Շահանդուխտ, դուն հանդարտ նստիր, հայրդ գիտի ազատի։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Եվ ո՛վ գիտի ազատե գինքը՝ խեղճ և անօթ գործական մը։

ՀՐԱՉՅԱ.— Ես։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Դո՞ւն, Հրաչյա, ա՛հ, իզուր գիտ խաբել կը ճգնիս։

ՀՐԱՉՅԱ.— Ես զքեզ խաբե՞մ... Եվ միթե չե՞ս վստահիր իմ վրաս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո, դու քաջ ես, Հրաչյա, բայց մեծ մեկը չես... Մի՛ ձեռնարկեր զուր տեղը, կը վռնտեն։

ՀՐԱՉՅԱ.— Կը սխալիս, Շահանդուխտ, չեն կրնար զիս վռնտել։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց չըլլա որ հայրս ազատեմ ըսելով...

ՀՐԱՉՅԱ.— Ապահով եղիր, զքեզ անոք և անօգնական թողելով չեմ ուզեր մեռնիլ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Սակայն ի՞նչպես պիտի կրնաս ազատել զինքը։

ՀՐԱՉՅԱ.— Ես գիտեմ... Դու հոգդ հանար ազատիլ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց դու ալ բան մը չե՞ս դուշակեր այս դեպքին։

ՀՐԱՉՅԱ.— Հոռմեդ ամեն բան կիմանանք... Մնաս բարյավ, սիրելիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կևրթա՞ս, Հրաչյա...

ՀՐԱՉՅԱ.— Դու ապահով և հանգիստ եղիր... Քիչ մը հաքը ամեն բան տեղը կուգա։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց կաղաչեմ, շուտ դարձիր։

ՀՐԱՉՅԱ.— Կայծակեն շուտ (կը մեկնի)։

Տեսիլ Ժ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ (մինակ)

Հայրս պիտի ազատեմ... Բայց ի՞նչպես... Ո՜հ, չըլլա թե իրեն ալ վտանգ մը պատահի (դեպի խոր երթալով) *Հրաչյա՛, Հրաչյա՛... Գացիր է... Ես դարձյալ մինակ պիտի մնամ... Բայց եթե նա ալ չը դառնա, ո՜հ, ի՞նչ պիտի ընեմ ես հոս առանձին, ո՛վ պիտի լուր առ ինձ անոնց

վրայոք... Ո՛վ երկինք, ինչո՞ւ կը տապալես անմեղ տնակ մը. ի՞նչ ըրի ես, ի՞նչ ըրավ հայրս... ինչո՞ւ կը պատուհասես զմեզ... Մայր իմ, մայր իմ, եկու գոնե քու գրկացդ մեջ տպաւանիմ. եթէ ուրվական ես, ո՛հ, կը դողամ, կը սոսկամ... Բայց ինչո՞ւ կը հուսահատիմ ես, մինչդեռ երկինքն Աստված մը կա, կրնա՞ անտարբեր ըլլալ անմեղին արցունքին... Աստված իմ, ներե ինծի, եթէ քու գթութիւնդ և գորովդ վայրկեան մը չը մտաբերեցի... Ո՛վ երկնից իմ սիրուն հայրիկ, գթա մեզի, գթա ալեւորի մը և երկու մանուկներու... Ե՛րբ պիտի գրկես գթութիւնդ հրեշտակը...

Տեսիլ ԺԱ

ՆՈԻՅՆ և ՍՄԲԱՏ

ՍՄԲԱՏ.— (ներս մտնելով) *Բաբել գորտականին տնակն ա՞յս է։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Բայց ի՞նչ պիտի ընես... Ո՛վ կը գրկե քեզ։*

ՍՄԲԱՏ.— *Դու իրեն աղջի՞կն ես։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Այո՛... ի՞նչ պիտի ըսես։*

ՍՄԲԱՏ.— *Մաիկ ըրե, հայրդ բանտեն փախաւ և իմ տունս տպաւանեցաւ, պետք է որ երթանք, հայրդ և դու գուն հիմա ճամբա պիտի ելնեք դեպի Պարսկաստան։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Բայց ինքը մի՞նակ է... Արդյոք երիտասարդ մը չկա՞ հետը...*

ՍՄԲԱՏ.— *Երիտասարդ մ՚ալ կա։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Ո՛հ, օրհնյալ ըլլաս, ո՛վ երկինք, այս բարի*

մարդն է եղեր քու պիտիդ հրեշտակը... Բայց ինչո՞ւ ինքը չեկավ քու տեղդ։

ՍՄԲԱՏ.— *Ես չը խոզուցի՝ վախնալով որ կը մատնվինք... Բայց երթանք... վայրկյան մը տապաղումը գուցե կը մատնե մեզ։*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Երթանք... վարձքդ երկնքեն պիտի ընդունիս, բարի մարդ. մնաս բարով, իմ սիրելի անմեղ տնտեսս։*

ՍՄԲԱՏ.— (մեկուսի) *Հրեշտակ մը, որ դժոխք կը տանի* (կը մեկնին, վարագույրը կիջնե)։

<(ՎԵՐՋ Բ ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

Ա. ՐԱՐՎԱԾ Գ

Թագավորին պալատը.—Դիշեր—Ի առաւվածին տեսարանը

Տեսիլ Ա.

ՍՄԲԱՏ և ՇԱՎԱՐՇ

ՍՄԲԱՏ.— Թագուհին ի՞նչ եղավ, Շավարշ... Դո՞ւն ալ բան մը չը տեսա՞ր:

ՇԱՎԱՐՇ.— Ինծի մի հարցներ, տեր իմ, ոչ բան մը տեսա և ոչ բան մը գիտեմ:

ՍՄԲԱՏ.— Տեր Աստված... Բայց քահանայն կնոջ ու ծպտյալ մեկն եղած չըլլա՞:

ՇԱՎԱՐՇ.— Ո՛չ տեր իմ... Շատ բարեպաշտ կերևեր:

ՍՄԲԱՏ.— Ըսել է թե տեսար գինքը:

ՇԱՎԱՐՇ.— (տատամսելով) Ո՛չ, ո՛չ... այս պալատին ներս մտած առենը տեսա:

ՍՄԲԱՏ.— Ե՞րբ:

ՇԱՎԱՐՇ.— Երբը... երբեն պատարհածին բոլորովին անտեղյակ եմ:

ՍՄԲԱՏ.— Բայց ի՞նչպիսի մարդ էր քահանայն:

ՇԱՎԱՐՇ.— Աստուծո մարդը, երկայն մորուք, խոժոռ գեմք,

ամվար ձայն և քահանայական զգեստներ ուներ, վերջապես ճիշտ քահանա մ'էր։

ՍՄԲԱՏ.— Ուրիշ անգամ տեսա՞ծ էիր զինքը։

ՇԱՎԱՐՇ.— Չեմ հիշեր, տեր իմ, երազիս մեջ անգամ չէի տեսած։

ՍՄԲԱՏ.— Ես ալ անխոհեմությամբ եկեր ապուշ մը հարցափորձ կրնեմ, որ հայելին նայած տեղը ինքզինքը կը մոռնա։

ՇԱՎԱՐՇ.— Իրավունք ունիս, տեր իմ... Անցյալ օր ավազանին քով շրջագայելու տեղս ինքզինքս անոր մեջ տեսա և որչափ ձայն ունեի կը պոռայի. «Ընկերնե՛ր, հասեք ավազանը ընկեր եմ». անոնք ալ եկան զիս ավազանին եզրեն ապին առին և ազատեցա. հիմա ծերությունս զիս չատ ձգեց... Երբ երիտասարդ էի, որսի երած տեղս եղնիկները եռևես և ես առջևնեն կը փախչեի. այն տեղն ո՛րչափ աշխույժ և առույգ էի։

ՍՄԲԱՏ.— Լա՛վ, շատակրաա, ես քեզի երիկվան անցքը կը հարցնեմ և դու երիտասարդությանդ հրաշքները կը պատմես ինձ։

ՇԱՎԱՐՇ.— Ըսել կուգեմ, թե այն տեղն շատ աշխույժ էի։

ՍՄԲԱՏ.— Ինձ կը բավեր, եթե օր մը միայն ապուշ չըլլայիր։

ՇԱՎԱՐՇ.— Բայց տեր իմ, դուն ի՞նչ կը հարցնեիր հիմա ինծի։

ՍՄԲԱՏ.— Թշվառական, ուրեմն երբ ես քեզի բան մը հարցնեմ, դուն այլդ բաց կը քնանաս, այնպես չէ՞։

ՇԱՎԱՐՇ.— Բայց ի՞նչ կրսեիր որ...

ՍՄԲԱՏ.— Քեզի կը հարցնեի, թե թագուհին մեռնելեն առեն ի՞նչ եղավ։

ՇԱՎԱՐՇ.— Հա, ես հասկցա, տեր իմ։

ՍՄԲԱՏ.— (ինտրիգայով) Խոսե...

ՇԱՎԱՐՇ.— Բայց մեկը չիմանա... Ազեկ դյուտ մը մտածեի. թագուհին ուրվական եղած ու փախած է պատպտեն։

ՍՄԲԱՏ.— Քու խելքդ փախած է գլխեդ, Իշվառական, ես բան կը հարցնեմ, դուն կատակ կընես ինծի հետ։

ՇԱՎԱՐՇ.— Ո՛չ, տեր իմ, ես մտածածս կըսեմ այս մասին։

ՍՄԲԱՏ.— Քու մտածածդ ինծի պետք չէ, տեսածդ ու լսածդը։

ՇԱՎԱՐՇ.— Եթե նույնպես է՝ ոչ բան մը տեսա և ոչ ալ լսեցի։

ՍՄԲԱՏ.— Բայց եթե դիտես ու կը պահես։

ՇԱՎԱՐՇ.— Բնավ, տեր իմ, (մեկուսի) հարցափորձ եկածդ, հիմա հատ պիտի ելնեն։

ՍՄԲԱՏ.— Եթե կը խոսիս, դիտցիր որ ձեռքես ապատելիք չունիս։

ՇԱՎԱՐՇ.— Բայց հավատա որ անկեղծ եմ, տեր իմ (մեկուսի) այն թահանայն ալ ուսկից էր եկավ։

ՍՄԲԱՏ.— Շավարշ, ուրեմն բան մը չե՞ս դիտեր։

ՇԱՎԱՐՇ.— Նախ և առաջ անկեղծորեն խոստովանիցա ես այդ, տեր իմ, (մեկուսի) ապատնցա կարծեմ։

ՍՄԲԱՏ.— Ուրեմն գնա, ես քեզ չը հարցաքննեցի... կիմա՞ նա։

ՇԱՎԱՐՇ.— Շատ ապեկ, տեր իմ... (երթալով մեկուսի) Առատնայն վկա, որ գեռ բան մը չը հասկցա։

ՍՄԲԱՏ (առանձին)

Ի՜նչ եղած է արդյոք... Չեմ հասկնար... Թագուհւոյն դիակը անեղեւութացեր է պալատին... Այս գաղտնիքը դավ մ'ըլլալու է թագավորին դեմ... Ուրեմն վայրկյան մը առաջ պետք է որ ես կորզեմ թագը. դյուրին է Արտաշիրը գահէն քաւալել... Ազմուկին մեջ դյուրին է դավադրել... Փայլ մը, հրաշք մը ամեն բան կը տապալէ... Ժողովուրդը կատե թագավորը... Պետք է զարնել բազեն՝ աղավնիներու սիրտն ու սերը որսալու համար. ժողովուրդն աղավնիի երամ մ'է... Ամեն բան աչքիս թագ կերեւի, ամեն բան ինձ թագ կը կարկառե. թագուհին մեռաւ և իմ թագավորութիւնս ազատ պիտի սկսի: Արտաշիր ազգկան մը թևերուն մեջ շուտ կանշնչանա... Երկու դիակ պետք է ինծի՝ թագավորը և թագաժառանգը... Ես՞ղճ Արտաշիր, խոնարհեցա առաջին փոս փորելու համար, կույս մը ավի իրեն՝ թագը մոռցնելու համար... Դեռ կը խոնարհեցնեմ դինքը գահավիժելու համար... Հիմա ինքը սիրտ բազկաց մեջ գուցե չերեւակայեր թագը... (Արտաշիր Սպանդարատի հետ խոր կերեւի, կանգ կառնե և մոխիկ կրնե) *Արտաշի՛ր, դու ալ ինծի խոնարհե թագդ գլուխս դնելու համար...*

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) *Ա՜հ... կը դավե... Բշվառականը:*

ՍՄԲԱՏ.— *Ա՜հ, մեկ մը թագավոր բլլայի... Արտաշի՛ր, երջանիկ ես, որ չի պիտի կրնաս թագդ Սմբատի գլուխը տեսնել... Դու սիրտ միշտ... Թագիդ մեջ օձ մը գալատած պահվրտած է, գուցե քիչ մը հետը վիրդ պիտի պլլվի և*

Թագավորական արյունդ պիտի ծծե... Թող անմեղ զոհերուդ չոր ոսկրները միայն պճնեն դամբանդ, փոխանակ դափնյաց և ջահերու... Քիչ մը հաքը Արտաշիր արվական մ'է, իսկ ես Թագավոր։

ԱՐՏԱՇԻՐ.— (ցած, առ Սպանդարատ՝ Ամբաւր ցուցնելով) *Պետք է որ մեռնի, դեռ պալատեն դուրս չելած... կիմանա՞։*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— (նույնպես) *Հարված մը բսել կուգես, տեր արքա։*

ԱՐՏԱՇԻՐ.— (նույնպես) *Բավական է որ շուտ մեռնի։*

ՍՊԱԴԱՐԱՏ.— (նույնպես) *Կը հնազանդիմ, տեր արքա (կը մեկնի)։*

ՍՄԲԱՏ.— *Գուցե վազն արևը Թագիս վրա պիտի ծագի։*

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) *Գուցե գերեզմանիդ վրա, Բշվառական։*

Տեսիլ Գ

ՍՄԲԱՏ և ԱՐՏԱՇԻՐ

ԱՐՏԱՇԻՐ.— (հառաչանալով) *Ի՞նչ կը մտածես, Սմբատ։*

ՍՄԲԱՏ.— *Կը մտածեմ, տեր արքա, Թե ի՞նչ կը նշանակե այս դեպքը։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Անհոգ եղիր, Սմբատ, կը վախնաս որ Թագս կամ կյանքս կը կորսնցնե՞մ, է՛հ, դյուրին բան չէ կործիմ կորսնցնելն ու ատանալը։*

ՍՄԲԱՏ.— *Եվ Սմբատ ալ իր Թագավորը պաշտպանելու մասին բավական հաջողակ է կարծեմ, տեր արքա... Ես շատ ապահով եմ։*

ԱՐՏԱՇԻՐ.— Գիտեմ, Սմբատ, դու այնպես աչալուրջ կը հըսկես իմ թագիս վրա, որ կարծես թե քունդ է... և գրեթե քունդ։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, երջանիկն ի՞նչ աչքով կը նայի այն աստեղազարդ երկնքին, որուն շուքին տակ ինքը կապրի։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց գոնե վայրկյան մ՚ալ երկինք թռչել չերեւակայեի՞ր միթե։

ՍՄԲԱՏ.— Ջիս կը ծագրե՞ս, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Խեղճ Սմբատ, քու անկեղծ սիրտդ կը վիրավորեմ... եթե լեզուս կը սխալի, սիրտս կը ճանչնե զքեզ... Գիտեմ, արեւուն ճառագայթն ալ թեպետ մաքուր է, բայց գեղեցիկ ու անբիծ ճակատ մը կրնա այրել ու սեւցնել... Սակայն դու անհոգ եղիր, Սմբատ, սիրտ մը զառնութիւններն է որ քու վրադ կը թափեմ այս գիշեր։

ՍՄԲԱՏ.— Ի՞նչպես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Ջորականին ազջկան վրա չը կրցա իշխել։

ՍՄԲԱՏ.— Եվ դեռ...

ԱՐՏԱՇԻՐ.— Դեռ նոր կը տեսնեմ թագն ատող մեկը, Սմբատ, մինչդեռ շատերը մահվան գրանցը մեջ թագր մի անգամ գրկել կերեւակայեն, այս աղջիկը թե թագը և թե գիս կատե...

ՍՄԲԱՏ.— Բայց միթե թագավորի մը նայվածքը սրտ հարվածե մ՚ավելի ազդու չէ՞, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ինքը գրեթե կը մեռնի, գիս չը սիրելու համար. ամեն անգամուն արցունքներով կը շողոքորթի գիս և պայմանաժամը կը հապաղե. կամոքհարիմ բսելու, թե այս աղջիկը սիրտս իր վրա կը շարժե։

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, կը տեսնեմ, որ իր արցունքները սի-

բույդ կայծը մարելու չափ զորավոր են... Այս բանը պիտ կը զարմացնեմ. դո՛ւթ... Ի՞նչ ըսել կուգեն մարդիկ զուր ըսելով... Թագավոր ըլլալ և աղջիկն մը հաղթվիլ, որ ոչ սուր ունի և ոչ հուր, այլ քանի մը ապի կաթիլ... կը վախնա՞ս արցունքը կոխկռտելու, տեր իմ, կտեսնեմ որ հնռուն կը սիրես միայն:

ԱՐՏԱՇԻՐ.— Սմբատ, այնպիսի սրտառուչ ձայնով խոսք մ՚արտասանեց, որ պիտ սարսափեցուց ու սառեցուց:

ՍՄԲԱՏ.— Ի՞նչպես, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Անգութ սիրտն ալ երբեմն փոքր բանե մը կը հալի... Վերջապես խոստացավ երեք օրեն սիրել պիտ... Ա՛խ, ծաղիկ, գուցե կը հուսա, որ երեք օրեն ձեռքիս կպատաի... Բայց գուցե դինքն արձակե՞մ, Սմբատ:

ՍՄԲԱՏ.— Ի՞նչ կըսես, տեր արքա... Մեկ մ՚ալ չես կրնար գտնել այնպիսի գեղեցիկ... կը տեսնեմ որ ջուրին մեջ ինկած անգին գոհար մը չես ուզեր առնել, վախնալով որ ձեռդ կը թրջի:

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) Ննջավոր, կուզե սիրտ բազուկներով կաշկանդել պիտ... (բարձր) Սմբատ, ի՞նչ ընեմ ես այն գոհարը, մինչդեռ թագիս և կյանքիս կը դավադրեն... Թագուհվույն դիակը կանհետանա պալատեն... մեկը չը տեսներ:

ՍՄԲԱՏ.— Բայց դու քիչ մը առաջ քաջասիրտ էիր, տեր արքա, է՛հ, ո՞վ պիտի արձանանա դեմդ. ժողովո՛ւրդը. սաստ ձայնը շուտ կը խեղդվի արյան մեջ... Դյուրի՛ն է մեկե գահ մը տապալել, որ կը հսկեն բանտ, աքսոր և սուր... Անհոգ եղիր, տեր արքա, գահդ Հայեն զորավոր է. ժողովուրդին բանտ, կռիվներուն աքսոր և նահատա-

բայց սուր... Դարձյալ Արտաշիր թագավոր է և գուցե առաջինն ավելի զորավոր... Թշնամին ջախջախելու համար հարված և հանճար պետք է. հարվածը դու եղիր, հանճարը ես կըլլամ:

ԱՐՏԱՇԻՐ.— Հիրավի, Սմբատ, կը տեսնեմ որ թագավոր մը րլլալու չափ հանճար ունիս, պետք է որ թագավոր մ'րլլայիր:

ՍՄԲԱՏ.— Չիս շատ կը ծաղրես այսօր, տեր արքա... Բայց նաև վատահ եմ, որ գոնե թագավորի մը կատարելապես ծառայելու չափ խելք ունիմ:

ԱՐՏԱՇԻՐ.— Սակայն կը խրատեմ նաև քեզ, որ խելքիդ վրա տահելով բաց մը կորզելու փորձ չը փորձես երբեք, Սմբատ:

ՍՄԲԱՏ.— Տեր արքա, կը տեսնեմ որ այսօր անսովոր կատակներ կը պրծես (մեկուսի). ի՞նչ եղած է արդյոք, բայց ես դեռ մութին մեջ եմ...

ԱՐՏԱՇԻՐ.— Է՛հ, Սմբատ, կայծակը հարվածեն առաջ փայլակ մ'ունի... Սև ամպը կը մոտենա, բայց դարձյալ արևը ծիծաղկոտ է... Գուցե փոթորիկ մը պիտի անցնի ճակատես. ի՞նչ ընեմ, պետք է որ խնդամ՝ շատ չը վախնալու համար:

ՍՄԲԱՏ.— Մի՛ հուսահատիր, տեր արքա... Փոթորիկը կանցնի և անուշարույր անդորրություն մը կը սփռե իր եռեվին:

ԱՐՏԱՇԻՐ.— Երբեմն ալ փլատակ... Շանթը բարձր կը զոռա ու կը զարնե, այնպես չէ՞, Սմբատ:

ՍՄԲԱՏ.— Ուրեմն պետք է խոնարհիլ երբեմն, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Երբե՛ք:

ՍՄԲԱՏ.— Գոնե սառնապատ սար մը ըլլայ, ուր շանիլը կը խրի ու կը մարի... ուր ցուակոտ քայլերը կը սահին:

ԱՐՏԱՇԻՐ.— Ճիշտ այդպես:

ՍՄԲԱՏ.— Լավ ուրեմն... կը սիրեմ անգութը, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Ախեկ կընես:

ՍՄԲԱՏ.— Ուրեմն դեռ չը խորհինք, տեր արքա... Ձայնի մը հարված հասցնելու է և նշանի մը՝ հանճար:

ԱՐՏԱՇԻՐ.— Անհոգ եղիր, Սմբատ, շատ կը սխալի այն, որ դեմս ելնե:

ՍՄԲԱՏ.— Հիմար մ'ըլլալու է այն, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ պիտի մեռնի:

ՍՄԲԱՏ.— Շանթի մը հարվածով:

ԱՐՏԱՇԻՐ.— Գրեթե:

ՍՄԲԱՏ.— Դեռ կը խորհինք, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ասկե առաջ դու կը զարնեիր, Սմբատ, այս անգամ ես պիտի զարնեմ:

ՍՄԲԱՏ.— Դու դիտես, տեր արքա, (մեկնուսի) ա՛յ, շատ կը սխալիս, չը պիտի թողում որ խորհիս կյանքդ կամ թագդ ընտրելու, երկուքն ալ իմս են:

Տեսիլ Դ

ԱՐՏԱՇԻՐ (առանձին)

Թշվառակա՜ն... Թակարդն ինկար... ի՞նչ բրիր թագուհվույն դիակը... Ուրեմն դու ալ դիակ մը եղիր... Դեռ ինծի դավելու կերթաս... Բայց պատշգիր, թագի տեղ սուր մը գլխուդ վրա կը շողա... Մութին մեջ գոնե ես պիտի թավալեի, բայց բախտին ջահը ինծի կօգնե...

Հանգարտե՛, սիրտ իմ, դեռ Հայաստան իմս է... Դիակներով լեցուցի այն փոսը, զոր ինծի համար կը պատրաստեին սև ձեռքեր... Սմբատ պալատեն դուրս չի պիտի ելլեն... Հոն է Սպանդարատ, Սմբատի ճամբուն վրա, սուրը կը փայլատակե... Զա՛րկ, զա՛րկ... Թող Թավալի իր սև գանգը փառահեղ երազներու մեջ... Կարմիր կոհակ մը գայն գերեզման գլորե և իր հետին հառաչը ճակտիս սև ամպը ցրվե:

ՍՄԲԱՏ.— (գրեթե օրհասականի ձայնով) *Տե՛ր արքա, տե՛ր արքա...*

ԱՐՏԱՇԻՐ.— *Ա՜հ... Անոր ձայնն է... Կը մարի... Սպանդարատ զարկավ:*

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆ և ՍՊԱՆԴԱՐԱՏ

ԱՐՏԱՇԻՐ.— *Ի՞նչ լրիր, Սպանդարատ:*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Ինչ որ հրամայեցիր, տեր արքա:*

ԱՐՏԱՇԻՐ.— *Զարկի՞ր:*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Մեռավ:*

ԱՐՏԱՇԻՐ.— *Ան այս քառակը:*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Շնորհակալ եմ, տեր արքա* (կառնե):

ԱՐՏԱՇԻՐ.— *Անեղեւույթ լրեր իր դիակը:*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Կը հնազանդիմ, տեր արքա* (երթալու կելլա):

ԱՐՏԱՇԻՐ.— *Կեցի՛ր... Այսուհետև իմ պինակիրս ես... Զգուշացիր, օր մ'ալ քու գլուխդ ուրիշի մը ձգել կուտամ:*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Վատահե սրտիս և սրտիս վրա, տեր արքա:*

ԱՐՏԱՇԻՐ.— Ձքեզ ալ կը ճանչեմ։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Ուրիշ հրաման մը, տեր սրբա։

ԱՐՏԱՇԻՐ.— Հսկե՛ թագավորիդ...

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Գլուխս քուկդ է, տեր սրբա։

ԱՐՏԱՇԻՐ.— Գնա՛, (Սպանդարատ կը խոնարհի և կը մեկնի) *հպմեցի... Շահանդուխտ, քու մեկ համբույրդ բավական է ճակատս վեհաշուք պահելու... Դափնին աշխարհակալին, ես վարդը կը սիրեմ. արևը թշվառին, ես քու ժպիտը կը խնդրեմ. քնարը փառասերին, ես քու սիրտդ կուզեմ. երկինք հիմարին, ես ձքեզ կը պաշտեմ* (պատկերը կը փոխվի)։

ՊԱՏԿԵՐ Բ

Գիշեր է.—Փառնեռանեի ապարանք.—Մեծ և փառավոր սրահ մը.— Տեսարանը բացված ատենը բոլոր նախարարները շրնջապատած են և գինիի գավաթներ առած ձևոներնին ճեպնյալը կերգեն։

Տեսիլ Զ

ՓԱՌՆԵՐՍԵՀ, ՎԱՉԵ, ՀՄԱՅԱԿ, ՆԱԽԱՐԱՐՔ և ԶՈՐԱՊԵՏՔ

Ակոսի բաղցր է գինին[10],
Որով ճերմի ավազանին,
Ամեն ապրին Հայն, Հայաստան,
Մարտի օրեր տեղի տալ ատեն։

Կեցցեն հավերժ իշխանիք Հայոց,
Վառին փառաց ճառագիչ ու լոյս.

Եվ Հայաստան մնա անսասան,
Յիշխանուրյան Արշակունյան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Հայաստանի կենացը։

ԱՄԵՆՔԸ.— Հայաստանի կենացը։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Թագավորին բարուց ուղղութեանը։

ԱՄԵՆՔԸ.— Թագավորին բարուց ուղղութեանը։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ազգական կենացը։

ԱՄԵՆՔԸ.— Թագուհուն կենացը։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ամենուս ալ կենացը։

ԱՄԵՆՔԸ.— Այո՛, ամենուս ալ կենացը (կը խմեն)։

ՎԱՉԵ.— Իշխանդ Սյունյաց, ես ալ առանձին գավաթով մը ծննդյանդ տարեգարձը և երկար կյանք կը բարեմաղթեմ (կը խմե)։

ՀՄԱՅԱԿ.— Ես ալ Արծրունյաց իշխանին Համամիա և Տամոխոս եմ (կը խմե)։

ԱՄԵՆՔԸ.— Մենք ալ նույնպես (կը խմեն)։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ես ալ իմ Տանդևաս պատվող Տանդիսակատաց շնորհակալութեան և երկար կենաց գավաթ մը անոնց կը քամեմ։

ԱՄԵՆՔԸ.— Կեցցե՛ իշխանն Սյունյաց։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Կեցցի՛ք և դուք, իշխանք և զորապետք. Այս Տանդևաը Յոգ մեր մէջ անմոռաց մնա, այս սեղանը որ խաղաղութեան և սիրտ բազին մը կը ներկայացնե... Մանավանդ զձեզ Տես հրավիրելուս պատճառն ուրիշ բան չէր, այլ գրեթե ազգին վիճակին վրա խոսելու և խորհելու, կը տեսնեք որ Արշակունի Տարատութիւնը կը տատանի։

ՎԱՉԵ.— Իշխանդ Սյունյաց, ավելի ազեկ է որ ամեն իշխան

իր տերութեանը վրա խորհի, բոլոր ազգին համար խորհիլ Թագաւորին կը պատկանի. մենք մեր վիճակը բարւոքել և փառաւորել ջանանք... Ի՞նչ կըսեք:

ՀՄԱՅԱԿ.— Ամեն բանի մէջ միշտ համակարծիք գտնուած ենք, իշխանդ Սրծրունեաց... կը գովեմ քու գաղափարներդ, որոնք իրաւացի են... Միայն ի՞նչ հոգ... Ապագայն Թագաւորը պիտի դատապարտի, որ Հայուն Թագը գրպին կանանց ոտնակոխ ընել կուտայ:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ճշմարիտ է... Բայց իրրև Հայ պէտք է որ Թագաւորին դէմ ձայն և ազգին դէմ ջանք չը պլանանք. եթէ Թագաւորութիւնը տապալի և Բշնամիները Հայաստանը հաղթական քայլերով չափեն... Ի՞նչ պիտի ընենք մենք. Թակարդն ինկած աղուէսներու պես բերդերու մէջ ապաստանած պիտի մռնչենք... Վերջապես մեր բաժինը պիտի ըլլա՝ կամ շղթա և կամ մահ... Իսկ արծիւն ապառաժի սաւառնի կատմիր դաշտերու, ամբարտաւանելու և դիակներու վրա:

ՎԱՉԵ.— Իշխանդ Սյունեաց, կը տեսնեմ որ գինեին մէջ Հայաստանի արյունոտ անկումը կերեւակայես... Է՛հ, որևմէն, կեցցե՛ գինին, որ արյուն կը ներշնչէ, շատ կը սիրեմ ես գայն, վասնզի ցամքած երակներու մէջ արյուն կը տեղափոխէ:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Իշխա՛ն, կը տեսնեմ, որ դու ալ գաւաթ մը գինիի համար կաթիլ մը արյուն կուտաս և Հայրենեաց Թագին համար քրտինք մը գրեթէ կը պլանաս:

ՀՄԱՅԱԿ.— Բայց ներե, իշխանդ Սյունեաց, կարծեմ մենք հանդիսի և տոնախմբութեան համար հոս եկանք և ոչ թէ գինին արյան հետ խառնելու, անզգամը գոհին հետ կցե-

լու և ապագայի մը ուրվականովը մեր հանդեսը զարհուրելու համար... Եթե ժամանակը գա, փոթորկին փայլակներուն հետ կը միավորենք մեր սուրերուն փայլը:

ՎԱՉԵ.— Շատ լավ խոսեցար, իշխան:

ՀՄԱՅԱԿ.— Եվ կարծեմ իրավացի:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Այնպես է... Ուրեմն դեռ խմենք, տյարք:

ՎԱՉԵ.— Այո՛, խմենք... կեցցե՜ Նոյ Նահապետ, որ գինին հնարեց[11]):

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց դեռ որո՞ւ կենացը պիտի խմենք:

ՀՄԱՅԱԿ.— Ամենքնիս ալ փոփոխակի իրարու կենացը համար:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ուրեմն ամենուդ կենացը (կը խմե):

ԱՄԵՆՔԴ.— Սյունյաց իշխանին կենացը (կը խմեն):

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Հիրավի Եթե Սահակ կաթուղիկոս իմանա, որ մենք հոս գինիի և զվարճության մեջ կը լողանք, մինչդեռ ինքը պիշերման ատակներուն հետ Հայության արցունքները կը համրե, գլուխն ու թևերը բացած մեզ համար պիտի աղոթե:

ՎԱՉԵ.— Չգի՛ սա հայրենամոլ կրոնավորը, որ փայտե խաչով մը Հայաստանը փառավորել ու վերականգնել կերազե և ահեղ սուրե մը գերազոր հաստատել կուզե խաչ մը, որ չնչին հարվածե մը կը խորտակի և Պարսկական հուր մը զայն շուտով կրնա լափել:

ՀՄԱՅԱԿ.— Ճշմարիտ է... Իբրև հաղթության դրոշակ մը ըմբռնած է զայն:

ՎԱՉԵ.— Եվ ինքզինքն անզարդ թագավոր մը... Աստվածունի թագավոր:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Հիրավի նա գրեթե անարգ ժողովուրդը մեղ-

նե ավելի կը հարգե, մենք որ Հայաստանի փառաց և հաղթութեան դրոշակիրներն ենք, նա ավելի կը սիրե ցնցոտիի տակ գանվող հոգի մը՝ քան թե ծիրանիի տակ ծածկվող սիրտ մը... Արդեն ապացնատ, կարծես թե Հայաստանի վրա հնծող տխուր նոճի մ'է, որ կը շարժի ու կը մռնչե միայն։

ՎԱՉԸ.— Սխալ... Հայաստանի հայրենանվեր հատապետն է նա։

ՀՄԱՅԱԿ.— Եթե սև վարդ հղած ըլլար, վարդապետ պիտի դուչեի դինքը... Իրավունք չունի՞մ, իշխան։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Կեցցե՜ս, խիստ սքանչելի գյուտ մ'ըրիր։

ՎԱՉԸ.— Հիրավի... Տյարը, մոռցանք մեկուն կենացը խմելու։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Եվ ո՞վ է այդ։

ՎԱՉԸ.— Նույն իսկ դինին։

ՀՄԱՅԱԿ.— Ուրեմն խմենք (գավաթներ լցնելու կըլլան. դուրսեն հետևյալ երգը կը լսվի)։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց ի՞նչ ձայն է այս... Մարիկ ըսիը...

Հայոց աշխարհ, բաչաց օրրան,
Ինչո՞ւ այդպես սուգ ես առեր.
Ո՞ւր հու նախնի փառաց արև,
Պայծառ կամարդ սուգ է պատեր։

Ջիր սպայիցդ գունդ սրաշավ,
Եվ ոչ կամար հաղթանակացդ.
Փոխան նոցա գերեզմանի այավ,
Ցրված ի սիյուռ չերեսս դաշտացդ։

ՀՄԱՅԱԿ.— Գնգնցիկ ձայն...

ՎԱՉԸ.— Հենթ կին մ'ըլլալու է... Գիշեր առեն մինչդեռ ամեն

մարդ և բնությունն իսկ կլռեն... Բարձրաձայն լալը խեղթի գործ է:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Կամ գուցե մուրացկան մ'ըլլալու է:

ՎԱՉԻ.— Բայց դարձյալ անխելք:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Այնպես չէ, իշխան, գիշերվան լռության մեջ կը գոչե, որպեսզի երկինք իր ձայնը լսե:

ՀՄԱՅԱԿ.— Իրավունք ունի, իշխանը:

ՎԱՉԻ.— Սևզձր չը գիտե, որ երկինքը վառ, բայց անտարբեր աչեր ունի միայն... Մենք ալ՝ անտարբեր ականջ:

Տեսիլ Է

ՆՈՒՅՆՔ և ՋԱՐՄՈՒՀԻ

ՋԱՐՄՈՒՀԻ.— Օրհասական Հայաստանն է ձայնողը, Հայոց իշխաններե:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ո՛վ է այս կինը:

ՎԱՉԻ.— Սա մուրացկանն է անշուշտ:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Որ հայրենասիրություն կը մուրա:

ՎԱՉԻ.— Գավաթ մը գինի կա, գոհ կըլլա՞ս... եթե ոչ՝ գնա՛:

ՋԱՐՄՈՒՀԻ.—Կը վախնաս արյուն տալու Հայաստանի երակացը:

ՎԱՉԻ.— Չեզի չըսի՛ արդեն, որ այս կինը խեղթ ըլլալու է:

ՀՄԱՅԱԿ.— Ագեկ գուշակեր ես, իշխան:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Չեմ հասկնար, կին դու, ի՞նչ ըսել կուզես:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Արշակունյաց դագաղին համա՞ր կը վառեք այս ջահերը, Հայաստանի մահվա՞նը կը խմեք այս գինիները... Խեղթ եմ ես, խեղթ կոչելով կուզեք ճշմարտության

ձայնն անարգել ու խնդրել. Հայոց իշխաններ, ամենքիդ մեկ մեկ ազգ եղած՝ Հայ ազգը վերջապես պիտի տապալենք և ձեր շիրիմներուն վրա լռյալ ապագայն կապարյա մատներով անեծք պիտի դրոշմե և իր նայվածքին առջև ձեր մաշած ոսկրները պիտի դողդողան... կը խնդաք... բայց ամպերը կը պիղծին, քիչ առենն կայծակը պիտի որոտա:

ՎԱՉԵ.— Կը զարմանամ, որ խենթի մը պատգամներուն ունկընդիր ըլլալով կը մոռնանք դինին ու խնդումը, իշխանդ Սյունյաց, օ՛ն, դինին մեզի կը խժռուի և իր կրակոտ նայվածքը կը հանդիմանե զմեզ:

ՀՄԱՅԱԿ.— Իշխանն իրավունք ունի. արդեն գիշերը կը տարաժամի և ապարանին ջահերը քիչ առենն կը մարին, մեզի համար շատ սուղ է այս փառավոր գիշերը... իշխան:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ուրեմն թողնք որ երթա:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ո՞ւր... Այն փլատակներո՞ւն մեջ, ուր շատ հնծեցի, այն նախնի դյուցազանց շիրիմներո՞ւն քով, որոնք շատ թրջեցի... Հայոց իշխաններ, Հայաստանն է որ ապիրներուս մեջեն կը հեծե... Շատ կը սխալիք. այն՝ զոր մուրացկան և խենթ կը կարծեք և վրան կը խնդաք, երբեմն թագի մը տակ լացած է Հայուն ու Հայաստանի վրա: Ես զեզ կը ճանչնամ և գրեթե ամենքնիդ ալ գիս կը ճանչնք, բայց ցնցոտիի տակ ձայնը ու փառքը կը մարի. Հայոց իշխաններ, դուք գինի կը խմեք, ջահեր կը վառեք, Հայաստանի կյանքը կը թունաւորեք, փառքը կը մարեք... Դուք կը խնդաք, Հայությունը գերեզմանի մը շուրջը կը դողդողա... Երբ փոթորիկը պայթի՝ նախ ազգաւին հյուղակը կը տապալի, այնպես չէ՞... Ձեր ապարանները ոսկի

այուներ ունին, բայց դողացեք. այն յուրաքանչյուր այունին հետ մեկ մեկ ոսկալի ուրվականներ պահված են, որ օր մը անշուշտ ձեր սիրտն ու խիղճը պիտի ըզկտեն... Դարձյալ կը կրկնեմ, այն՝ որ ձեր դիմացը կը տեսնեք՝ մուրացկան չէ, այլ կին մը, զոր կը ճանչեք դուք։

ՎԱՉԵ.— Այո՛ թագուհի մը... Մութի մեջ սովևրներու թագուհի։

ՀՄԱՅԱԿ.— Խենթ մը ոգաստ է նաև Աստվածուհի մ'ալ ըլլալու, իշխան։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ա՜հ, ես միշտ խենթ... դուք միշտ անսիրտ. ուրեմն իսկ՛ւր կը գոչեմ։

ՓԱՌՆԵՐՄԵՀ.— Պալատականք, դուրս հանեցեք այդ կինը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դու ալ պիտ կը վռնտես իբրև խենթ, ինչպես Արտաշիր պալատեն... Ծեռ ողջ եմ ես և կը տեսնեմ... Փառնեռահ, չը ճանչցա՞ր Զարմուհին, այնպես չէ՞ (բարկացած կը մեկնի)։

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ բացի ՋԱՐՄՈՒՀԻԷՆ

ՓԱՌՆԵՐՄԵՀ.— (զարմացած) Մայր թագուհի՞ն։

ՀՄԱՅԱԿ.— Ի՞նչ կըսես, իշխան։

ՓԱՌՆԵՐՄԵՀ.— Այո՛, մուրացկան կամ խենթ չէ նա, այլ նույն ինքը Զարմուհին։

ՎԱՉԵ.— Բայց նա պալատեն արտաքսվելեն վերջը գրեթե անհետացավ և միտած հրատարակվեցավ։

ՓԱՌՆԵՐՄԵՀ.— Ով ան՛ա այդ պատճառավ է, որ գինքը չը կրցա ճանչել։

ՀՄԱՅԱԿ.— Իսկ եթե ճանչնայիր, ի՞նչ պիտի ընեիր:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ձինքը չէի նախատեր այսպես:

ՎԱՉԵ.— Ըսել է որ թագավորը զրպարտութեամբ զինքը խեղի հրամայեցիր:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Կը հավատամ... վասնզի ապեկ կը հասկնամ, որ խեղճ չէ:

ՀՄԱՅԱԿ.— Բայց ուսկից էր, որ այս դիշեր պաղ ուրվական մը մեր հանգեսին մեջ նետվեցավ:

ՎԱՉԵ.— Ճշմարիտ է... Ո՞րչափ դժրախտ ենք եղեր, իշխան:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Օ՛ն, իշխանք և զորապետք, շարունակենք խնդումնիս, չեմ ուզեր, որ իմ ապարանիս մեջ ջան՝ մը մարի կամ սիրտ մը տխրի այս դիշեր, որ մեզ համար միության խանձարուր մ՛է, վշարճության համնատ քաղաքի մը, խաղաղ մը, ուր կը գտնի անցյալը իր կնճռոտ ճակատը, ուրեմն խմենք ու խնդանք, մինչդեռ ազգ է Հայաստան, մինչդեռ սուրն ազատ կը շարժի մեր մեջքը:

ՎԱՉԵ.— Հիրավի, իշխան, գվարճությունն ապատներու և իշխաններու համար է. մեր ձեռքը դինիի գավաթ կը շոշշոշա և ժողովուրդին ձեռքը՝ սուր. նա կը գարնե, մենք՝ կը խմենք... Նա գինին արյուն կը կարծե, կը պատկառի այն ծիրանիեն, որ իր կանգնած Հաղիության դրոշն է:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Իշխանք և զորապետք, մինչև առավոտ սեղանակիցներս ենք (խմելու կսկիծ):

Տեսիլ Թ

ՆՈՒՅՆՔ և ՍՈՒՐՄԱԿ

ՍՈՒՐՄԱԿ.— (դռանը մեջ կեցած՝ պատառմոտ դիակը կանգնեցուցած) Ի՞նչ է այս, ուրախության գավաթներու բախ-

յան, ծիծաղներ ու ջահեր: Այսոյց իշխանին ապարանքն է այս... Թագավորի պալատն ու այս ապարանքը միավորող ճամբան ջահապարզ կը վառի, մինչդեռ ուրվական մը կանցնի կը սպրդի անկե ծալիկ ու հրաշ կոխկռտելով... Գիշերվան մթության ու լռության մեջ գերեզման մը կը գոցվի և միայն երկնից աստղերը կը տեսնեն ու կուլան... Միայն արդար մը այն պաղ քարին և հոր մը սրտին վրա կը դնե իր ձեռքը... Ինչ է այս, մարեցե՛ք այս ջահերը, տապալեցե՛ք այս տեղանը... Հիմարներու պես գերեզմանի մը վրա կը ծիծաղիք... Ձե՛ր Տարցներ, թե ո՞վ ես, ինչո՞ւ համար եկեր ես հոս:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ասաե, ո՞վ ես դու, և ի՞նչ ընելու եկար, երկրպագե՞ն կուգաս թե՞ դժոխքեն... Ինչ ես դու... Պատասխանե՛:

ՍՈՒՐՄԱԿ.— Թող մարեն այս լույսերը և պիտի տեսնեք... Թող մարեն այս լույսերը և վրեժխնդրության ահեղ հրաշքը թող վառի քու սրտիդ մեջ, իշխանդ Այսոյց (թող կուտա դիակը, որ թավալգլոր կիյնա):

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ի՞նչ է այդ:

ՍՈՒՐՄԱԿ.— Տե՛ս և պիտի գիտնաս (Փառներսեհ կերթա պատառիճը կը բանա, կը դիտե և սարսափած ճիչ մը կարձակե) ճանչցա՞ր գինքը:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Աղջիկս է...

ԱՄԵՆՔԸ.— Թագուհին:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց ո՞վ սպաննեց գինքը. դո՛ւ, անօրեն...

ՍՈՒՐՄԱԿ.— Թույնը:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Եվ թույն ավազ ձև՞ոքը:

ՍՈՒՐՄԱԿ.— Արքայական մական մ՚ունի։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Թագավո՞րը։
ՍՈՒՐՄԱԿ.— Կը դողա՞։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Երբե՛ք։
ՍՈՒՐՄԱԿ.— Ուրե՞մն։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Վրե՞ժ...
ՍՈՒՐՄԱԿ.— Քաշե՛ սուրդ։
ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց ո՞վ ես դու։
ՍՈՒՐՄԱԿ.— Պիտի պիտնաս։ (Վառազույրը կիջնե՛։)

<(ՎԵՐՋ Ը ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Դ

Թագավորին պալատը.— Գեղեցիկ առաւ մը.— Խորը բաց պատուհան մը, ուսկից ընդարձակ դաշտ մը և հորիզոնը կերևի.— Արևը դեռ նոր կը ծագի.— Խորը հոյակապ առձաններ.— Շահաճդուխտ կողմնակի ննջասենեակեն դուրս կելնե:

Տեսիլ Ա

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ (միճակ)

Ահա արևը կը ծագի... բայց իր ճառագայթները չեն կրնար իմ սառած կուրծքիս թափանցել... Ի՞նչ գեղեցիկ են առավոտյան մրմունջները... Ավա՜ղ որ չեն կրնար ինձ օրորել... Սոխակին արցունքներն ալ բարդ մը սառ կաւելցնեն կուրծքիս վրա... Ա՜հ, ո՞րչափ երջանիկ է այն, որ ազատ կը թռչի... մինչդեռ տերևի մը կամ բունի մը փետուրի տակ ազատ սիրտ ու ձայն կա, հոս անոք աղջիկ մը զորավորի մը երկաթեն ձեռքերուն ներքև կաշկանդված ու ճնշված է. սոխակը կուլա գիշերը, բայց շուտ մը արևը կը ծագի և կը տեսնեմ վարդը... Ո՞րն է թշվառին արևը, ո՞րը սիրտ տեսնեմ զրկող, Հրաչյա՜...

Հայր իմ... Երկու օր, երկու գիշեր է, որ Թագավորի մը կամ դահճի մը ժժգալի դեմքը պաղած կարձանանա դիմացս, նա սիրտ մեջ կը մռնչե, մինչդեռ ես կուզեմ լալ... Հոս Թշվառին ձայնը կը մարի... այս շենքին բնակիչ սա արձաններն ալ բռնութեան և անիծից կոթնած կը քալեն... կը քալեն դեպի դժոխս, անոնց ձեռքերն ալ արյունոտ են... Որշափ կը տարբերին իրարմե հյուպակն ու պալատը... Երկուքին մեջտեղ վիհ մը կա, որուն մութին մեջեն ջահ ի ձեռին կարձանանա արդարությունը. հյուպակը հովեն կը սարսի, իսկ պալատը՝ սճիրներեն... Ո՛վ պիտի ազատե վիս այս դժոխքեն... (կերթա պատուհանեն կը նայի, հանկարծ ապշած ու խռոված տեսարան կուգա) *Ա՛հ, հոն... վարը, տեսա, Հայրս էր կարծեմ...* (նորեն կերթա նայելու) *վիս տեսավ... Բայց ինքը բանտըն էր...*

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆ և ԱՐՏԱՇԻՐ

ԱՐՏԱՇԻՐ.— Կանուխ արթնցեր ես, Շահանդուխտ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՛հ, (բարձր) *պիտես որ չեմ կրնար քնանալ:*

ԱՐՏԱՇԻՐ.— Հիրավի սա մռատակ անտառին առավոտյան մրմունջները և հովիվներու արնպաց ձայները կատիպեն, որ բնդոստ եղնես անկողնեն, արշալուսին առաջին ճառագայթներուն հետ քու անուշ նայվածքդ խառնես և քու սիրավառ սրտիդ բաբախումը սոխակին գեղգեղին հետ հյուսես... Հիրավի, միթե գեղեցիկ չե՞ն պալատն ու Բա-

գավորի մը աղերսը... Կարծեմ շատ անգութ կը վարվիս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՛վ թագավոր, սոխակը վանդակին մեջ չերգեր ու կը մեռնի. ավելի կընտրեմ թառիլ անտառին տերևներուն մեջ՝ քան թե թրթռալ վանդակին ոսկի թելերուն մեջ. չեն փակեր սոխակը՝ գիտնալով որ կը մեռնի. նա միայն տերևի մը ապաստանած է, իսկ ես՝ սրտի մը, որ անշուշտ հիմա կուլա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ո՛վ է այդ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հա՛յր մը... Գիտեյո՞ւն, տեր արքա, կը պատահի... Ո՛ր պիտ։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց ես կը սիրեմ զքեզ, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Եվ հոգս զրկացը մեջ, տեր արքա, ես ալ զքեզ։

ԱՐՏԱՇԻՐ.— Պիտի սիրես... ուշ... Բայց ես հիմա կը մոռնեմ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ... կը սոսկամ։

ԱՐՏԱՇԻՐ.— Ո՛չ այնչափ՝ որչափ մահվանե։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ի՞նչ ըսել կուզես։

ԱՐՏԱՇԻՐ.— Դու կրսեիր թե սոխակը վանդակին մեջ կը մեռնի։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Այո՛, կրգամ որ պիտի մեռնիմ չը սիրելու համար։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց մինչև ե՞րբ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հավիտյան... Տեր արքա, եթե կուրծս պատռես սիրտս ձեռք ձգելու համար, պիտի տեսնես որ ամի մը արցունք պիտի կաթի այն ձեռքերուդ մեջ. հոն թաղեր ըսւ սիրույդ մոխիրները, և ահա ես եմ այն ամի մը կաթ, ուր մարած է կայծն ու դեղնկուքյունը. կրնա՞ս վերստանծել զայն։

ԱՐՏԱՇԻՐ.— Ես Աստված մը չեմ... այլ թագավոր մը, որ կը սիրե ու չսպաններ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն բա՛ց ինծի այս պալատին մարմարյա դռները:

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդուխտ, չե՞ս հասկնար... կը սիրեմ զքեզ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Իսկ ես կը մեռնիմ, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց դու դեռ նորատի ու գեղանի ես... Տես ոսկեհուռ ծուռկերս քու առջիդ կը չոքին, մինչդեռ վատ կը համարիմ ինքզինքս Աստուծո մը առջև խոնարհելու... Եթե զիս չի պիտի սիրեիր, ուրեմն ինչո՞ւ համար այդչափ գեղեցիկ եղար... Այդ սիրտ կայծկռտող սիրտս վառեցին... Եթե քեզի նման գեղջուկի՛ մը ամած ես սիրած՝ թող նա ինծի տար իր բահը և ես իրեն կուտայի գահս, միմիայն քեզնով սիրվելու համար... Ասա, Շահանդուխտ, ի՞նչ պետք է որ ընեմ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բաժնվինք իրարմե, տեր արքա... Առջի պես դարձյալ դուն՝ թագավոր, ես՝ գեղջուհի... դուն՝ քու պալատդ, ես՝ իմ տնակս:

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդո՞ւխտ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ուրեմն ի՞նչ ընեմ, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Հիրավի փշոտ վարդ մ'ես եղեր:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, վարդին բացած վերքերը դեռ չը բուժած՝ ինքը կը թոռմի:

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց եթե դուն փուշ և սուր, կայծակ և մահ ալ ըլլաս, դարձյալ պիտի սիրեմ զքեզ, քանի որ գեղեցկութեյան մեջ սիրտ ժպիտ մը եղար ու սիրտս զրավեցիր... Եթե ես չեմ կրնար գեղջուկ մ'ըլլալ, դոնե դուն թագուհի եղիր և քու սիրտ ժպիտովդ լույս տուր թագի տակ նահ-

մացած ճակատի մը, դիր ձեռքդ ծիրանիի տակ հնծող սըրտի մը վրա, Աստուծո տար հոգի մը, որ ոգեմանդներու մեջ զժոխքց բոցերը կերևակայէ... Շահանդուխտ, գրկի գիս և հին կուզես՝ գերեզման ալ տար... Հոն առաջնորդի գիս, ուր քու սիրտդ կը հոլաթևի ու կը սավառնի:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, թևերս փետրազերծ են, և դու՝ թռի՛ր կըսես ինծի:

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդուխտ, ահա քեզի ոսկեզարդ պալատ, փառք և ճոխութիւն:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ես իմ տնակս կուզեմ... Տեր արքա, ես կուլամ՝ դու մարգարիտ կը խոստանաս, ես ինչ ընեմ գոհարներդ, մինչդեռ ալեւոր հոս անգին արցունքները գիրկս թափելն կը գրկվիմ... Հիմա թշվառ հայրս գերեզմանին եղերք գուցե կը դողդողա՝ հառելով նայվածքն այն հորիզոնին, ուսկից գիս ձեռակերպող ասպղը նշմարեց... Մինակ է նա, գիս և գերեզման մ'ունի միայն, բայց երկուքին մեջ փալփլող գեղեցիկ աստղ մը, որ իր վերջին դողդոջ քայլերուն պիտի առաջնորդեր, հիմա իրեն համար մարած է այն, մարած է ալեզարդ և կնճռոտ ճակատի մը ժպիտը:

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդուխտ, նախ գիս գրկե, որ հետո հայրդ ալ գրկես:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ... Ծերունիի մը թառամ ճակատին թառամ ծաղի՛կ կը վայլեցնես, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Է՜հ, ի՞նչ ընեմ, կը սիրեմ գրկել սրտիս խորեն... Փշրի՛ ոսկերաւոր տակ թագիս գոհարները և մի՛ մեծեր սերս, բարձրացիր գահս և մեկ մը ժպտե ինծի... Առանց քեզի ես թագավոր չեմ կրնար ըլլալ, այլ շողշողուն դիակ

մը, որ զուրկ է արևեն... Դու՝ արև, ես ալ՝ վէրին մէջ ինկած մարդ մը պիտի, որուն կը պլանաս ճառագայթդ. սոխակ մ'ես դու, որ թագի մը գոհարներն արհամարհելով՝ վարդին սուտ մարգարիտներովը խաբվիլ կուզես... որ մթին անտառին խորերը կախարժիս թառիլ. բայց եթե սոխակն ալ քեզի պես գեղեցիկ ըլլար՝ անի ու տեսնի տակ չի պիտի թաքչեր, այլ սրտերը շարժելեն զատ պիտի թովէր։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տեր արքա, այդ խոսքերով ավելի կը զարհուրեցնես զիս... Ավելի ապեկ կրնես, երբ ինծի «Տգեղ ես» ըսես և պալատեդ դուրս ընես. կը տեսնես որ չեմ սիրեր զքեզ. խնայէ ալևոր Հօրս, որուն մազերը բախտին շանթին անընդհատ գործած ավերակաց մոխրովը ճերմկեցան... Աշխարհիս վրա եթե ամենասիրելի մեկն ունիս՝ անոր սիրույն համար ըլլաս... Թո՛ղ զիս։

ԱՐՏԱՇԻՐ.— Ամենասիրելիս դու ես, քու սիրո՛ւդ համար թողում զքեզ, մինչդեռ դու չես սիրեր զիս... եթե թողում զքեզ, պիտի մթագնի այս պալատը, եթե ջահեր ալ վառվին... Սոսկալի կրլլա դիշերը, երբ լուսինը չը թագավորեր, լուսնի շաղովը ողողված գերեզմանին վրա անթիվ հուլսեր կը թռչին, իսկ մութին մէջ գերեզմանը զժոխոց դուռ կը ձևանա... Առանց քեզի կը զզվիմ ու կը սոսկամ ես այս պալատեն, որուն մարմարյա կամարներուն մէջեն անմեղներու արցունքները շիթ առ շիթ կը կաթին և այս ծիրանիին վրա արյունոտ սոկրներ կերևին աչերուս... Մի՛ մերժեր զիս, թագավոր մ'է, որ քեզ կը պաշտամ, թող մ'է, որ առջիդ կը ծռի... Պիտի սիրե՞ս զիս... վերջին խոսք մը, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տէր արքա, մանկիկն ալ թիթեռնիկին սիրահարն է, բայց շատ անգամ զայն կը մեռցնեմ։

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց դու իմ հոգիս պիտի ըլլաս։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տէր արքա, տարփածուս չեղած՝ սպաննիչս եղիր։

ԱՐՏԱՇԻՐ.— Շահանդուխտ, վերջապես դու իմ պիտի ըլլաս... կը հասկնա՞ս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տէր արքա, երե կաթիլ կաթիլ արյունս բամես, դարձյալ անմեղ պիտի մնամ։

ԱՐՏԱՇԻՐ.— Հայրդ բանտին երկաթներուն մեջ կամ ձեռացս մեջ է... Կուզե՞ս վերջապես իր դիակը տեսնել։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ա՜հ... Ո՛չ, ո՛չ... Հայրս թող ապրի։

ԱՐՏԱՇԻՐ.— Ուրեմն ալ իմս ես։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ո՜հ, Աստված իմ... Աստված իմ։

ԱՐՏԱՇԻՐ.— (մենակսի) Ոաբի ձայն մը կա... Ո՞վ է այն...

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ և ՍՊԱՆԴԱՐԱՏ

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչ կա, Սպանդարատ։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Տէր արքա...

ԱՐՏԱՇԻՐ.— Խոսե։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Սահակ կաթուղիկոս...

ԱՐՏԱՇԻՐ.— Շարունակե ուրեմն։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Եկած է և վեհափառությանդ հետ կուզե տեսակցիլ։

ԱՐՏԱՇԻՐ.— Անե՜ծք... Ձե՞ս կրնար դինքը ճամբել։

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Արդեն մեծ դահլիճը մտած է, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— (բարկացած) Սպանդարա՜տ...

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Պահնորդները քու հոս ըլլալդ արդեն կաթուղիկոսին իմացուցած էին, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Վռնտեւ շուտ այդ անպիտան մարդիկը:

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Գլուխս վրա, տեր արքա (երթալու կըլլա)·

ԱՐՏԱՇԻՐ.— Կեցի՛ր... Օրիորդը թագուհվույն սենյակը տար:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (առտասվալից) Տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Թագուհի պիտի ըլլաս (Սպանդարատ գայն կը տանի):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (մեկուսի սոսկմամբ) Ո՜հ, ո՛չ...

ԱՐՏԱՇԻՐ.— (առանձին) Խաչն ինծի միշտ խուչընդոտ է. կամ ես պիտի ջախջախիմ, կամ զայն պիտի ջախջախեմ վերջապես... Գիտեմ, դեռ զոհ պետք է դահիս անպարտությանը համար:

Տեսիլ Դ

ԱՐՏԱՇԻՐ և ՍԱՀԱԿ

ՍԱՀԱԿ.— Ա՛լ բավական է, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Բարի եկար, Սրբազան Հայր... Տեսնենք ի՞նչ լուր ունիս:

ՍԱՀԱԿ.— Արյան մեջ վարդ կը բուսնի՞, տեր արքա, փլատակը կը ժպտի՞ միթե... Այնպես է, խավարին մեջ ան ամպը չը նշմարվիր. վտանգի ինքն ալ խավարին մեկ մասը կը կազմե... Տեր արքա, դու արդունք կը սպասես և կուզես մարգարիտ ժողվել... Արդին խորհրդավոր ճակատագիրն աչերուս կաթիլ և հոգվույս բարբառ ուզավ՝ Հայությունը լալու ու ողբալու համար միայն. օրորոցիս մեջեն տեսա այն աստղին շողշողումը, որ գիտնմանես սև կամա-

բին վերև կը մարի... Թանձրացան ամպերն ալեւոր ճակատիս վրա, կայծակ մը կարող է պիս հավիտենականության մեջ դլորելու, բայց Հայաստա՞նը... Արդեն անոր դագաղը շրջապատեցին դյուցազանց ուրվականները... Սոսկա՛, տեր արքա, հայրդ կանդնեց, դու կը կործանես... Վառամշապուհ լուսո և հիշատակաց մեջ մնաց, իսկ Արտաշիր խավարի և փլատակաց մեջ պիտի իյնաս:

ԱՐՏԱՇԻՐ.— Սրբազան հայր, կարծեմ յանիրավի կը դատապարտես թագավոր մը, որուն հետ ոչ թե Հայաստանը, այլ նա Հայաստանի հետ կիյնա... Ինծի ոչ թե Հայաստանը, այլ թագ մը տվիր, եթե Հայաստանը չիյնալու համար թագս կուզեք, առեք դայն:

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, այն դահը, ուր նկար, տաճար մ'էր, իսկ այն, որ կը թողուս՝ դագաղ մ'է... Պալատեն ու անառաւեն, սերեն և սրտեն ուրիշ ի՞նչ տեսար ու գործեցիր... Միայն Հայութեան վերեզմանը փորելու համար գործածեցիր սուրդ. նախնյացդ այս վեհավայրը անառակութեամբ և արյամբ սրբապղծեցիր, թագիդ մեջ ամփոփեցիր ոճիրը և մոխիրը, գահիդ պատվանդանը ըրիր՝ արցունք և Աստված, հայրենիք և իրավունք. փետուեցիր Հայաստանի փառաց դափնիները և նախատանաց փուշեր բոլորեցիր, կործանեցիր կոթողը և նոճի կանգնեցիր, վերջապես թագ առիր, դագաղ կուտաս:

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ո՞վ այդչափ անիրաւներեն կը դատապարտե դիս, Սրբազան հայր, ո՞վ այդչափ մոխիր փառքիս և հիշատակիս վրա կուզե թափել, ուրեմն թագավոր եղա Հայաստանի դատապարտյալ դահիճը ըլլալու համար, ո՞վ

է որ այս անիրաւ զրպարտութեանց կը հանդգնի շուրթերը բանալ։

ՍԱՀԱԿ.— Քու արարքդ զքեզ կը դատեն և կը դատապարտեն, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եւ ի՞նչ ըրած ունիմ ես։

ՍԱՀԱԿ.— Ո՞ւր է Թագուհին։

ԱՐՏԱՇԻՐ.— Մեռաւ։

ՍԱՀԱԿ.— Ո՛չ, սպաննվեցաւ... այնպես չէ՞... Հանգուցելույն վրա հսկող քահանայն դիակը Փառներսեհի ապարանը կը փախցնի և թույն ալող պալատականը իր ակամա ոճիրն անոր կը խոստովանի։

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչ ըսել կուզես։

ՍԱՀԱԿ.— Փառներսեհի վրիժխնդրութիւնը կատեցուր, երդվի՛ր այսուհետև հարգել Թագդ և հայրենիքդ։

ԱՐՏԱՇԻՐ.— Ա՜հ, չեմ կրնար խոնարհիլ և գահին բարձրին նախարարի մը ոտքն իյնալ։

ՍԱՀԱԿ.— Եթե ոչ՝ պիտի տապալի գահդ և Հայաստանը։

ԱՐՏԱՇԻՐ.— Դեռ ի՞նչ կուզես ինձնից։

ՍԱՀԱԿ.— Հորդ սկզբունքը և նախնի Հայաստանը։

ԱՐՏԱՇԻՐ.— Ուրեմն այս պալատ չէ, այլ բանտ, այս փուռքերը իմ շղթաներս են, ես Թագաւոր չեմ, այլ Հայուն ստրուկը... Առեք ուրեմն այս անիծյալ Թագը և ազատ Թողեք զիս։

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, ազատ ես Հայաստանը վերականգնելու... Դեռ Թագաւոր եղիր և Հայուն ողջ տուր Հայաստանը... Մի՛ Թողուր, որ ճաղատ ճակտիս վրա իյնա հոգևսպառ Հայաստանը, մի՛ Թողուր որ գերեզմանիս խաւարին մեջ Թաւալին ու մարին մեր հայրենյաց փառաց և

Հուսո աստղերը... Եվ դու, ո՛վ երկինք, եթե Հայաստանի համար կայծակ մը պատրաստած ես, դի՛ս զարկ, դի՛ս, որ անոր համար կը շնչեմ, Թո՛ղ կորնչի Սահակ, միայն թե ապրի Հայաստան... Տեր արքա, Հայկի նետը Հայուն կուզես, Արտաշեսի սուրը կը ժանգոտես, Տիգրանի թագը կը նսեմացնես, Վռամշապուհի ջահը կը մարես...[12])

Կուզես Հայաստանը ավերակ և մոխիր դարձնել, ուր բուն կոպրա և հիշատակները կը թաղվին... Բայց մտածե, որ դու ալ այն գերեզմանը պիտի իջնես, ուր նախնիքդ իջան, և անոնք պիտի բզկտեն պատանդդ և ապագա սերնդյան արտասվաթոր զավակները պիտի գան գերեզմանիդ քով և պիտի դուշեն. «Թշվա՛ռ թագավոր, տո՛ւր մեր Հայաստանը». պիտի փշրեն իրենց սուրերը այն քարին վրա, որուն ներքև ապաստանած ես, դու չի պիտի լսես, բայց պիտի դողաս, դու չի պիտի զգաս, բայց պիտի լաս... Ուրեմն, տեր արքա, թագավորե՛լ կուզես թե՛ կործանել:

ԱՐՏԱՇԻՐ.— *Եվ ի՞նչ է թագավորելը, եթե ոչ հրամայել և զբոսնուլ. թագավորը սուր կուտա և ժողովուրդը կը զարնեն կամ կը զարնվի, դրոշակ կուտա և դինվորը կը կանդնեն կամ իրեն պատանք կընեն, գեռ գործադրելու ի՞նչ պարտք ունի թագավոր մը:*

ՍԱՀԱԿ.— *Պալատն արյամբ ողողել և ժողովուրդը մտածել:*

ԱՐՏԱՇԻՐ.— *Պալատն իր շուրջն սակավ պատվարներ ունի և պետք չէ որ ներսը ոգեսպառ իյնողին ձայնը դուրսեն լսվի. այս պալատը իմս է, հոս տեղի դիակը ժողովուրդին մարմինը չէ, այլ գրեթե քար մը՝ պալատին և գերեզմանին մեջտեղ:*

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, պալատը թափանցող ահեղ նայվածք մը կա:

ԱՐՏԱՇԻՐ.— Կայծակ մը գուցե՝ ուակից չը դողալու համար խղճի անապատ մ'ունիմ:

ՍԱՀԱԿ.— Տեր արքա, երկնի փոխարինը զայն կալևկոծեն:

ԱՐՏԱՇԻՐ.— Բայց կը խաղալի՛ կրծանում առնել հատա-հատած... Քանի որ այս բազը գլուխս դրիր՝ պետք է որ մեռնիք, եթե հրամայեմ:

ՍԱՀԱԿ.— Ի՞նչ կընես, Արտաշիր, կատես Հայաստանը և կը նախատես զԱստված. քեզ պատմնակից ընել կուզես Հայն ու Հայաստանը... Բազավորի մը համար հայրենիք մը կործանել, բազի մը զոհվի ազգ մը:

ԱՐՏԱՇԻՐ.— Ի՞նչ կուզես որ ընեմ. ահա ես կիջնեմ գահես. Թող Հայուն գահը և դամբանը իմ բազավորութեանս առեն չը պզծի, այնպիսի արի մը Թող գա իմ տեղս, որ Հայաստանի փառաց յուզաստատ կանթեղը կարենա վառել, որ Հայաստանի ավերակ վայրերը կարենա ոսկեզօծել:

ՍԱՀԱԿ.— Պարսիկն է այն, որ ավելի կը մարի ու կը տապալի, գահիդ վրա կը կանգնի իր սուրը և հուրը... Տեր արքա, ավելի կը մեղանչես, երբ գահդ Թափուր Թողուս, որուն վրա հառած են միշտ Պարսկաստանի արյունուշտ աչքերը, սուր հայկական սրտերու, հուր հայկական հիշատակարանաց. վերջապես Հայաստանի դամբանին վրա մութ ու փոշոտ կանթեղ մը միայն պիտի պղպղա, որ կարծես Թե կուլա, քան Թե լույս կուտա. այս ավերակներու մութ պրկում իրենց վրա «Արտաշիր» անունը պիտի

գրեն, թեպետև Արտաշիրի անունն ալ հավիտենականության դրանց վրա սև գրերով պիտի քանդակվի։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ դեռ ի՞նչ ընելու եմ ուրեմն։

ՍԱՀԱԿ.— Դարձուր ակնարկդ Տորդ դամբանին և Հայաստանին վրա, առաջինը կսպառնա, երկրորդը կը պաղատի։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ ի՞նչ կրնան խնդրել ինձնե անոնք։

ՍԱՀԱԿ.— Խոնարհություն և հեզություն։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ գահի՞ս վրա։

ՍԱՀԱԿ.— Այո՛... Ա՜հ, ես այդ խաղաղության բագինին վրա կը զոհվի Հայոն և գահուն մեջտեղ, եթե ինձնե հարքը Հայաստանը չը մատնեի, կուզեմ Հայոն ճակատագրին վճիռը կարդալ, տեր արքա, կերդնո՞ւս վերջին անգամ գահդ սուրը սրտով բնդդրկել։

ԱՐՏԱՇԻՐ.— Կերդնում... Սրբազան հայր, քու դողդոջ ձայնովդ դիս կը խրախուսես և կը վախցնես... Գնա, դեռ ողջ է Հայաստանը, կը խոնարհիմ զայն վերցնելու համար։

ՍԱՀԱԿ.— Որչա՜փ պիտսիրտ ես, տեր արքա։

ԱՐՏԱՇԻՐ.— Եվ դեռ ուրիշ բան մը կը խնդրե՞ս ինձնե։

ՍԱՀԱԿ.— Ոչինչ, միայն Հայաստանը... Զայն պիտի շնորհես, այնպես չէ՞։

ԱՐՏԱՇԻՐ.— Ինչպես որ ձեռքս հանձնեցիք։

ՍԱՀԱԿ.— Վռամշապուհի ջահը պիտի վառես։

ԱՐՏԱՇԻՐ.— Անցելույն արյան կոհակներեն թոթափած՝ Հայաստանի և խաղաղության գիրկը կուզեմ նետվիլ։

ՍԱՀԱԿ.— Օրհնյալ ըլլաս, տեր արքա, երբ Հայաստանը փրկեի, այնչափ ուրախ չը պիտի ըլլայի... Մնաստիր խաղաղությամբ... տեր արքա (կը մեկնի)։

Տեսիլ Ե

ԱՐՏԱՇԻՐ և ԲԱԲԵԼ

ԱՐՏԱՇԻՐ.— (միճաք) Գնա՛, անմիտ կրոնավոր, Արտաշիր թագ ու կամք ունի, կուգես որ սև փիլոնիդ և փայտե խաչիդ առջև խոնարհի՞մ. այո՛, կը խոնարհիմ՝ ավելի դիմագրելու համար:

ԲԱԲԵԼ.— (դրանն) Թագավորը, թագավորը, վայրկյան մը իրեն հետ պիտի տեսակցիմ:

ԱՐՏԱՇԻՐ.— Ո՛վ է այս մարդը (խուռնն ներս գալով) ծերունի մը, դոր պալատականք կարգիլեն. թողեք այդ մարդը որ գա, պալատականք. հիմա կը հանկնամ, թե ինչ կխնդրե այդ ծերունին:

ԲԱԲԵԼ.— (ներս մտնելով) Տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— (մեկուսի) Ծերունի զորականը...

ԲԱԲԵԼ.— Ձե՞ս պատասխաներ, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— Կը զարմանամ, թե զինվոր մը իր թագավորին պատասխանելով ինչպես կը հանդգնի, զրեթե սպասելից անտանելի հարցում մը ընել իր տիրոջը դեմ, որ ձեռացը մեջ կյանք և մահ կը բռնակալե:

ԲԱԲԵԼ.— Իմ տեր երկինքն է, տեր արքա, եթե դու հոս կը հրամայես՝ շատ կը սխալիս ու կը խարվիս, վասնզի գալուկ լուսիյան մը կրնա քեզ իր գիրկը բռնատարկել. եթե բախտ քեզ թագավոր ընտրեց, միայն թագավորե, և հեզ ու ծեր զինվորի մը սղջիկը մի՛ բռնակալեր պալատիդ արյունոտ պատերուն մեջ... Ա՛հ, մի՛ խնդար, տեսնելով որ կնճռոտ ճակատս կը գեղնի. եթե բիբերուս

կրակն սպառած է, երկնից կայծակները փոխ կառնեմ, տեր արքա, տո՛ւր աղջիկս։

ԱՐՏԱՇԻՒ.— *Ներուն, Սահակ կաթուղիկոսի քղանցքին տակ դնա, որ խելաբերիս։*

ԲԱԲԻԼ.— *Տեր արքա, թեպետ հոգիս բերանս է հասած, բայց խելքս գլուխս է, վատի մը ծիծաղը կը նշմարեմ թոռմած դեմքիդ վրա... Խնայե՛ աղջկանս, տեր արքա... Անմեղ է... ո՛րշափ ալ գունատած էր։*

ԱՐՏԱՇԻՒ.— *Ըսի, թե քու խոսքերեդ երբեք բան մը չեմ հասկըներ, կիմանա՞ս։*

ԲԱԲԻԼ.— *Եվ վերջապես պիտի տա՞ս աղջիկս։*

ԱՐՏԱՇԻՒ.— (*սպառնալից*) *Դուրս ե՛լ, ծերունի, ապա թե ոչ, ես կը հանեմ։*

ԲԱԲԻԼ.— *Առանց աղջիկս ինծի դարձնելո՞ւ... Անկարելի է այդ։*

ԱՐՏԱՇԻՒ.— *Կը դիմապրե՞ս արքայական բարձր հրամանիս։*

ԲԱԲԻԼ.— *Տեր արքա, ա՛ռ վիզս և տո՛ւր աղջիկս... Արցունքս ցամքած է, որ ոտքերդ թրջեմ, արյունս ալ ցամքած, որով աղջիկս ծնեի. տեր արքա, կմախք մըն եմ ես և իմ տիեզերքս աղջկանս նայվածքն է, եթե նա ողողի, ես ալ կը խեղդվիմ... Բայց դու երբեք ինծի մտիկ չես ըներ, երեսդ միշտ անդին կը դարձնես... Ա՜հ, Աստուծո ձեռքը քու աչերուդ մեջ արցունք չէ՞ քամեր, արտի տեղ քա՞ր է դրեր կուրծքիդ տակ... Տեր արքա... Տես, ալ չեմ սպառնար, այլ կը պաղատիմ... Ծունր կուգամ փոխանակ սուր փայլատակելու, կարտասվեմ՝ փոխանակ շանթեր թոթափելու... Իմ աղջիկս ինծի դարձնելու համար պաղատանք, արցունք և արյուն կը թափեմ... Ընտրե և վճռե վերջապես, ո՛վ թագավոր, կամ աղջիկս կամ անեծքս։*

ԱՐՏԱՇԻՐ.— (խոբեն կանչելով) *Սպանդարատ։*

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— *Պատրաստ եմ հրամանիդ, տեր արքա։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Հետս եկուր։*

ԲԱԲԵԼ.— *Տեր արքա... Տեր արքա...*

ԱՐՏԱՇԻՐ.— (առ Բաբել) *Դահլիճին մեջ սպասե։*

ԲԱԲԵԼ.— *Պիտի դարձնե՞ս ինձ աղջիկս։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Քիչ մը եսքը։*

ԲԱԲԵԼ.— *Շահանդուխտս, այնպես չէ՞* (պատկերը կը վոխվի)։

ՊԱՏԿԵՐ Դ

Պալատին մեկ սրահը.—Խոր դուռ.—Կողմնական անցյակներ.

Տեսիլ Զ

ՀՐԱՉՅԱ և ՇԱՎԱՐՇ

ՀՐԱՉՅԱ.— *Դուն աչքովդ տեսար, այնպես չէ՞, Շավարշ։*

ՇԱՎԱՐՇ.— *Գրեթե, տեր իմ... Ո՛հ, շատ մի հարցաքններ վիս, բավական է ինձ համար այն ցավը, որ այնպիսի բարի տիրուհիե մը զրկվեցա... Ալ պիտի թողում ես այս պալատը, ուր միշտ թագուհվույն ուրվականը գրեթե ամեն առեն աչքիս առջև կանգնած կը տեսնեմ։*

ՀՐԱՉՅԱ.— *Վերջապես անոր մնացի և գահի մը շուքին տակ կուլամ։*

ՇԱՎԱՐՇ.— *Եթե կը հաճիս, ես քու քովդ կը մնամ, տեր իմ և կը ծառայեմ։*

ՀՐԱՉՅԱ.— Բարի ծերուկ, ալ դնա այս պալատեն, քու վերջին օրերդ անմեղ ընտանյացդ միրկն անցնելու և ալևոր ճակատդ ձիթենիի մը զով սովերին մեջ հանգչեցնելու. Հոն հնշտ հովը հավիտենականության երաժներով ողողյալ կանցնի ճակատիդ բարդերուն մեջեն և արևուն վերջին ճառագայթը դեղնած ժպիտ մը կը թողու դեմքիդ վրա... Քանի որ անմեղ ես, դնա՛ ոճրագործ չըլլալու համար... դնա՛, խղճահար չը մեռնելու համար:

ՇԱՎԱՐՇ.— Այո՛, դեռ անմեղ եմ, տեր, թևպետև սխալմամբ... կարծեմ... Այո՛, անմեղ եմ և ալ կը թողում պալատը... Բայց տեր իմ, քեզ բան մը ըսել հարկ կը տեսնեմ, քանի որ ես պիտի մեկնիմ:

ՀՐԱՉՅԱ.— Խոսե՛, Շավարշ, ի՞նչ կուզես:

ՇԱՎԱՐՇ.— Ուզել չէ, տեր իմ, ըսել:

ՀՐԱՉՅԱ.— Ըսե ուրեմն, բարի ծերունի:

ՇԱՎԱՐՇ.— Բայց տեր իմ, քանի մ'օրն ի վեր է որ հոս չէիր հաճախեր, նույն միջոցին աղջիկ մը բերին պալատ և իմ խնամատարությանս հանձնեցին. աղջիկը դիշերանց խաբելով հոս բերեր էին, խեղճը լալով կը պաղատի, որ պինքն ապատեմ, մենակ ծերունի հայր մ'ունի եղեր, թագավորը պինքը շատ բռնագատեց:

ՀՐԱՉՅԱ.— Վերջապե՞ս:

ՇԱՎԱՐՇ.— Եթե այսօր չապատի... Թագավորը... Այո...

ՀՐԱՉՅԱ.— Եվ ո՞ւր է այդ աղջիկը:

ՇԱՎԱՐՇ.— Առ այս բանալին, տեր իմ, թագուհվույն սենյակը պիտի գտնես պինքը:

ՀՐԱՉՅԱ.— (առնելով և կողմնակաի դուռը ցուցնելով) Այս սենյակը, այնպես չէ՞:

ՇԱՎԱՐՇ.— *Այո՛, տեր իմ... Բարի ու անմեղ աղջիկ մը, գեղեցիկ՝ հրեշտակի նման, քու քույրդ պրեթեն, ազատեր վինքը հորդ ձեռքեն։*

ՀՐԱՉՅԱ.— *Դուն անհոգ եղիր, Շավարշ։*

ՇԱՎԱՐՇ.— *Մի՛ թողուր, որ թագուհվույն սենյակը կրկին պղծվի, տեր իմ։*

ՀՐԱՉՅԱ.— *Բավական է որ այս բանտին ինձ տվիր։*

ՇԱՎԱՐՇ.— *Բայց մի՛ աճապարեր, տեր իմ, ինչևան որ ես պալատեն բավական հեռանամ, կը վախնամ որ...*

ՀՐԱՉՅԱ.— *Ապահով եղիր, բարի ծերունի։*

ՇԱՎԱՐՇ.— *Ուրեմն հանգիստ սրտիվ կը բաժնվիմ, տեր իմ... Մնաս բարյավ* (կը մեկնի)։

Տեսիլ Է

ՀՐԱՉՅԱ (մինակ)

(Դեպի դուռը կուղղվի, հետո կանգ կառնե) *Չեմ համարձակիր... Գեղեցիկ և անմեղ աղջիկ մը, Շահանդուխտին նման, արդյոք կը գտնամ, կուգա՞, կերազե՞... Շահանդուխտիս սիրուն համար հարկ է որ ազատեմ վինքը... Ի՞նչ անգութ սիրտ պետք է գոլարիկ արարած մը լացընելու համար, արտասվաթոր սիրտ մը կոխկռտելու համար. ա՜հ, որչափ թշվառ է այն ազան, որ կատիպվի հայրն առնել... Հարկ է որ ազատեմ շուտով այդ անմեղը. բայց իմ Շահանդուխտս ի՞նչ եղավ, առանց անոր ուշս, ուժս և հույսս կտրտի... Վայրկյան մը աչերս բոցավառ կը բորբոքին, վայրկյան մը շանթահար գետնմանին ժայռոտ եղերքը կը թափառիմ... Ի՞նչ եղավ Շահան-*

դուխաս... Հավիտենական լուսիյան ու մթութիյուն կը տիրե այն հյուղակը, որ իմ տիկնիքս էր... Հոն՝ վիշտ, հոս՝ ոճիր, ո՞ւր երթամ, գնեզմա՞ն. բայց դեռ չապրեցա... (ինչ մը մռապրատ կենալեն վերջը) *այլ հոն ալ անմնալ մը կուլա, գոնե գայն ապառնեմ* (դեպի դուռը կերթա և գայն բաճալ կսկսի):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ներսեն) *Դեռ ոչ, տեր սրբա:*

ՀՐԱՉՅԱ.— (մեկուսի զարմացած) *Այս ձայնը...*

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆ և ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սենյակեն դուրս ելնելով և դեմքը ձեռքերովը ծածկած ոտքը իյնալով) *Կաղաշեմ... Դեռ ոչ:*

ՀՐԱՉՅԱ.— (մեկուսի հափշտակված) *Շահանդո՞ւխտ...* (Շահանդուխտ գլուխը վեր առնելով Հրաչյա կը տեսնի և ինչ մը կարձակե):

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Ի՞նչ կը տեսնեմ:*

ՀՐԱՉՅԱ.— *Շահանդուխտ, Հրաչյային եմ ես:*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Հրաչյային ոսկի չը հագնիր, Հրաչյայն պատասը գործ չունի:*

ՀՐԱՉՅԱ.— *Ձե՞ս ճանչեր պիս, Շահանդուխտ:*

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— *Կը ցավիմ, որ պիս խարեցիր... Բայց արդեն ժամանակն անցավ:*

ՀՐԱՉՅԱ.— *Ի՞նչ կրսես, Շահանդուխտ, կը մոռնա՞ս, կը մեռժե՞ս պիս, ա՜հ, նեղե ինձ եթե առելի և ապառնի ծիրանի մը ցնցոտիով ծածկեցի քեզնե սիրվելու համար... կը նեռնեմ ահա ես այս ոսկեհուռ զգեստները, կը թողում*

պալատը, ղոր մորս անբիծ արևը ողողից. երթանք հյուղակը, այն սիրո բագինը, ուր առաջին անգամ մեր ճակատը կարմրեցավ և մեր սիրտը բաբախեց, ուր արևուն և սիրո ճառագայթները մեզ իրարու կապեցին, ուր ոչ ես դեղչկուհի տեսա և ոչ ալ դու արքայորդի... Մինչդեռ մեր մեջտեղի երևակայական վիհը մեր սիրովը լեցուցինք, ի՞նչ բան կրնա արգիլել մեզ զիրար գրկելու, սիրելու և միատեղ մեռնելու... Ո՜հ, որչափ դեղներ է դեղեցիկ ճակատդ... Շատ վիշտ կրեցի՛ր, Շահանդուխտ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կը մեղքնա՞ս դիս դեռ, Հրաչյա:

ՀՐԱՉՅԱ.— Շահանդուխտ, ի՞նչ շուտ սառեցան սիրավառ շուրթերդ... Ա՜հ, այդ արհամարհոտ ակնարկները թունավոր նետերի ավելի կը խոցեն սիրտս... Դիմա՛ խնձ, Շահանդուխտ, դեռ ես այն Հրաչյան եմ, ղոր քու հյուղակդ ընդունեցիր... Շահանդուխտ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց արդեն ամեն բան լմնցավ:

ՀՐԱՉՅԱ.— Ա՜հ... Մթթի հայրս...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Տես ճակատս կը կարմրի, Հրաչյա... Ով ահա չը կարմրելու համար...

ՀՐԱՉՅԱ.— Վի՞րջը...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Պիտի մեռնիմ, Հրաչյա:

ՀՐԱՉՅԱ.— Ի՞նչ կրսես...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (սրվակ մը ցուցնելով) Տես... Թույն...

ՀՐԱՉՅԱ.— Խմեցի՛ր...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Քեզ սիրելու համար:

ՀՐԱՉՅԱ.— (ձեռին կորզելով) Ես ալ մեռնիմ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— (ծող չտալու ջանալով) Կեցի՛ր, կեցի՛ր:

ՀՐԱՉՅԱ.— (խմելով) Մթթի չտխտեցի՞ր միատեղ մեռնիլ:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Դեռ կը սիրե՞ս զիս, Հրաչյա։

ՀՐԱՉՅԱ.— Կը հարցնե՞ս... Դեռևսմանեն անդին ալ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ներե ինծի, Հրաչյա, դրկվինք... Պիտի մեռնինք. ըսի քեզ, որ չը պիտի թողուն մեզ հանգիստ սիրելու... Ոաքևրնուս տակ վարդը թոռմեցավ... գլուխնուս վերև աստղը մարեցավ... Սերը երկրի վրա վիշտ և հավիտենականության մեջ նշույլ ունի... Սերը՝ որ հոս կապարյա թևևր տվավ, հոն ոսկի թևևր պիտի տա... Հո՛ չ՛ թագ կա և ո՛չ սուր, որ մեր մեջ արձանանա... Ա՜հ, սիրտս կայրի...

ՀՐԱՉՅԱ.— Սիրտ վևրջին և ուժգին բոցն է այն, Շահանդուխտ։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հրաչյա, հա՛յրս...

ՀՐԱՉՅԱ.— Ազատևցավ բանտևն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Ազատևցի՛ր... Բայց ո՞ւր է հիմա։

ՀՐԱՉՅԱ.— Չեմ գիտևր... Ալ մեր վրա խոսինք...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Բայց վերջին անգամ չի՞ պիտի կրնամ տեսնել զինքը։

ՀՐԱՉՅԱ.— Ալ երկինքը, Շահանդուխտ... Մոռնանք աշխարհը։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հրաչյա, դժվար է մոռնալ աշխարհը, երբ հոն սիրելի մ՛ունիս... հայր մը, որուն հոգին ևս էի։

ՀՐԱՉՅԱ.— Մորս սենյակը երթանք, Շահանդուխտ, այն արտասվաթոռմ անկողնուն վրա, ուր դու նիրհեցիր և աշևրնիս հավիտենականության դռնևնք... Կզգամ, որ պիտի մեռնիմ... երթանք, այն սենյակը քաշվինք, որ մեր վերջին քունը չի վրդովի աոևլի մարդոց տրտինևրևն ու նայվածքնևրևն։

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Հառիր աչքերնիս այն հորիզոնին վրա, ուր պիտի թռչինք. մայրս ինձ կսպասի, որչափ պիտի հրճուի, երբ զքեզ իմ դիրկս տեսնե... Ես ալ հորս պիտի սպասեմ... Ո՜հ, այն հուր աչերդ, որ իմ սիրտս վառեցին, վերջապես պիտի մարին, Հրաչյա...

ՀՐԱՉՅԱ.— Քու աչերուդ վրա... որ անմեղությանս նշևը մը սփռեցին:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Կը կիսամիմ, Հրաչյա:

ՀՐԱՉՅԱ.— Եվ ես, Շահանդուխտ... (դեպի սենյակը կը նայեն դողդոջ) Տես հորիզոնը ի՜նչ գեղեցիկ է:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.— Թռչինք... (սենյակեն ներս կը մտնեն և դուռը կը փոցվի):

Տեսիլ Թ

*ԱՐՏԱՇԻՐ և ՍՊԱՆԴԱՐԱՏ (ինտո) ԲԱԲԵԼ

ԱՐՏԱՇԻՐ.— (դուռը բանալով) Ո՜վ երկինք... Հրաչյայի փիրկը:

ՍՊԱՆԴԱՐԱՏ.— Մեռած են, տեր արքա:

ԱՐՏԱՇԻՐ.— (դիտելով) Մեռա՞ծ... (դեպի խոր դուռը նրբալով և կանչելով) Ծերուներ, թույն խմեր են... Ինչո՞ւ քիչ մը չաճապարեցի (Բաբել ներս կը մտնե. առ Բաբել). առ ուրեմն աղջիկդ:

ԲԱԲԵԼ.— Օրհնյալ ըլլաս, ո՜վ թագավոր (կերթա և կը տեսնե...) Ա՜հ, մեռա՞ծ կուտաս:

ԱՐՏԱՇԻՐ.— Քովն ալ իմ զավակս է:

ԲԱԲԵԼ.— Բայց ես միևնակ մնացի (ինտոանաստ ծունր կիյնա.— վարագույրը կիջնե):

<(ՎԵՐՋ Դ ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԱՐԱՐՎԱԾ Ե

Գիշեր.—Գերեզմանատուն մը.—Տեսարանին առջև փա-
ռավոր շիրիմ մը.—Քովը սոսիի ծառ մը.—Տեսարանը
բացված առեն Բաբել խորը շիրմի մը վրա ընկողմա-
ցած է.—Նրաժշտություն:

Տեսիլ Ա

ԲԱԲԵԼ (առանձին)

*Լսեցեք ինձ, աղջամուղջք և աստեղք բնության, հոս աղջիկս կը նիրհե, այս քարին տակ, որ հավիտենական-
նության անողոք ձեռքն է... Որչա՜փ երջանիկ էի, մինչ երբեմն արյունոտ ճակատս պատերազմի դաշտին վրա մահվան դեմ կը խնդար... Ծերությունը ցավերու և հու-
սահատության հասակ մ'է... Ո՜հ, աղջիկս մեռավ, հայ-
րենիքս կը մեռնի, և դեռ ես կը շնչեմ... Եվ դու ինչո՞ւ կը դեղնիս, Հայաստան, երբ Բաբելի մազերը ճերմկցան և ցավոց սեմին վրա դողդոջեց... Ո՞ւր բանամ աչերս... Շահանդուխտ, կնճռոտ ճակտիս հովիկը, արթնցի՛ր, դու ինձ չես լսեր, և ես ալ քեզ չեմ լսեր, որ երկնքեն դիս կը կանչես... Դեռ կեցի՛ր, վրեժ պիտի առնեմ... Վրե՜ժ, վրեժ*

որ հյուծյալ աչերուս կայծակներ ժայթքեց... Ըսե քեզի շունչ տվող Աստծուն, որ դեռ կիծոտ բազկացս զորութիւն աղդե... Դեռ դինվորութեյան պարտքը կը ճանչնամ, պիտի զարնեմ և պիտի մեռնիմ... Ա՜հ, Շահանդուխտ, աղջիկս, մի՛ կիծոտեր զիս. դու ալ ույժ տուր ինձ, որ զարնեմ (գերեզմանին վրա կիյնա):

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆ, ՍՈՒՐՄԱԿ և ՓԱՌՆԵՐՍԵՀ

ՍՈՒՐՄԱԿ.—Միթե այս սոսկին տակ ժամադիր չեղա՞նք, իշխան:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Այո՛, աղջկանս գերեզմանին քով, ինչպես որ երեկ իրենց իմացուցինք... Անշուշտ դեռ պիտի գան:

ՍՈՒՐՄԱԿ.— Կը զարմանամ, թե ի՞նչպես կը հանդուրժեն արտերն այսպիսի արդար վրեժ մը ժամ հասաջ լուծելու... Արդեն Հայաստանը մոլի թագավորի մը և ապիկար կաթուղիկոսի մը ձեռքեն պիտի ազատենք, ինչպես որ դուք, Հայոց իշխանքդ խոստացաք, զիս կաթուղիկոսութեյան անձնվեր աթոռը բարձրացնել... Նվ ես ալ պիտի ջանամ Արտաշիրը և Սահակն իրենց անարժան գահերեն վար տապալելու հաջողիլ... Ուր որ արդար հարված մը կա՝ հոն կա նաև Աստուծո մատը:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց ես կուզեմ Արտաշիրեն վրեժ առնել և ո՛չ թե Հային, միթե պիտի չսիրվի՞նք Արշակունի թագավորութեյունը ծախել Պարսկին՝ Արտաշիրեն վրեժ առնելու համար... Ապագայն ապյուռ պիտի ժայթքե մեր գերեզմանաց... Նրբ մանուկը հորը գիրկը եղած առնե

Պարսիկ իշխող մը տեսնեն, պիտի հարցնեն իր հորը, թե ինչո՞ւ օտարը կիշխեն Հայուն... Հայրն անշուշտ անիծելով պիտի ընե պատմությունը... Երբ պատանին հայրենիք և ազատություն թոթովե՝ Պարսկին սուրը պիտի շողա կրակոտ ճակտին վրա... Կը խնդա՞ս:

ՍՈՒՐՄԱԿ.— Ի՞նչպես չը խնդամ, քաջ իշխան... Դու կը մոռնաս աղջկանդ դերեզմանը, որ պիշերային լռության մեջ արյուն կը հծծե և արդար ու կարմիր վրեժխնդրությունն իրե ամոթ կը նշմարես... Դեռ թողո՞ւնք, որ Հայաստանը վատթարանա, ես չեմ ուզեր որ թագավորին համազոր Սյունյաց իշխանը վրեժխնդրության առջև վատանա... Ես՞ղճ դիակ, ի՞նչ կղգաս արդյոք, երբ հայրդ դերեզմանիդ քով կը վարանի:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ա՜հ, կեցիր... Դեռ ողջ եմ... Հանդարտե՛ դերեզմանիդ մեջ, Հերանուշ... Եթե հակառակորդդ արյուն չառնեմ՝ իմ արյունս առ... Երբ թագն իյնա՝ մեռած է նա... Ներսե, տեր Հայր, եթե ապագային ձայները վայրկյան մը դիս շփոթեցին... Կղգամ որ մեր սուրն անբիծ է... Երբ հիշենք նախնի Արշակունի գոռոզները, որոնք Հայաստանի ճակտին մեկ մեկ մշտադալար դափնիներ կապեցին, ավելի լավ է որ պատմությունը Պարսկին անհարազատ իշխանությունը լա, քան թե Արշակունի ճեռի մը վատթարությունը... Նախատինք է Հայուն Հայե մը նվաստանալը և Պարսիկը փաստ մը պիտի ըլլա պատմության մեջ այս նվաստության, ուրեմն դեռ հանդուրժե՞նք:

ՍՈՒՐՄԱԿ.— Ո՛չ, պետք է որ թագը նախատինքին զոհենք:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Եվ դեռ ե՞րբ:

ՍՈՒՐՄԱԿ.— Քիչ մը նոքը այս գերեզմանին վրա հավատարմության երդում պիտի ընենք և վաղը Վռամի գահին տակ պիտի ժողվվինք Արտաշիրը կործանելու։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Բայց դեռ կուշտանան... Սակայն ի՞նչ ձայն է այս։

ՍՈՒՐՄԱԿ.— Անշուշտ անոնք են, որ կուգան։

ԲԱԲԵԼ.— (որ մինչև այն ատեն գերեզմանին վրա ընկողմանած էր, կը կանգնի, ապշած մտիկ կընե) Միթե վրեժխնդրության ոգինե՞ր են ատոնք։

(Դուրսեն նախարարները նետևյալ երգը կերգեն)

Երդնումք յԱստված ի Հայ երկին,
Կործանել գահ, իշխել ազատ.
Վրե՛ժ, անկումն խոնարհի բախտ,
Խորտակենք բազն ու բշնամին։

Եավ գիշերի դարաձ մըրիկ,
Եվ գերեզմանի լոկ արձագանգ
Մեր խորհրդոց արյունազանգ,
Խորտակենք բազն ու բշնամին։

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ, ՎԱՉԵ, ՀՄԱՅԱԿ և ՆԱԽԱՐԱՐՔ

ՎԱՉԵ.— (իրենները։) Սուր ի պատյան, քաջ իշխանք... Գերեզմաններն վրևժ առնելու չենք։

ՀՄԱՅԱԿ.— Այլ լուսո մեջ պիտի կռվինք։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Շնորհամալ եմ, քաջպատն ընկերք, որ ձեր խոստումը գործադրելու համար փութացիք այս վհատավայրը։

ՎԱՉԵ.— Խոստումն Եաբլը երդում մ՚ալ ունինք, իշխանդ Սյունյաց:

ՍՈՒՐՄԱԿ.— Ջոր Տիմա այս գերեզմանին վրա պիտի ընենք:

ԲԱԲԵԼ.— (մեկուսի) Հոս կը դավադրեն:

ՀՄԱՅԱԿ.— Այսպիսի Տանդիսավոր երդում մը վատ Արտաշիրի Տարդը կը բարձրացնե:

ԲԱԲԵԼ.— (մեկուսի) Արտաշի՞ր:

ՍՈՒՐՄԱԿ.— Ճշմարիտ է, իշխան, բայց պետք է երդնունք, թեպետև չեմ Տուսար, որ արդար դավադրության մատնիչ մը դանվի մեր մեջ... Եվ ես անդրանիկին ըլլալ ուզելով այսպիսի նշանավոր ձեռնարկի մը (գերեզմանին մոտենալով) կերդնում այս անբիծ գերեզմանին վրա, որ խաչը տապար և լեզուս թույն պիտի ընեմ և ինչվան որ Արտաշիրեն վրեժ չառնեմ, երկինք չը պիտի նայիմ... Իշխանդ Սյունյաց, կարգը քուկդ է:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— (նույնպես) Կերդնում աղջկանս անմեղ ոսկորներուն վրա, որ ինչվան որ Արտաշիրը գահեն չը ձգեմ՝ սուրս իր պատյանեն երբեք չի պիտի Տանեմ:

ՍՈՒՐՄԱԿ.— Քաջապուն իշխանք, օ՛ն ուրեմն, կարգը ձեզի եկավ... Դուք ալ ձեր երդումը կընե՞ք:

ԱՄԵՆՔԸ.— Կերդնունք մենք ալ մեր Աստծուն և սրուն վրա:

ԲԱԲԵԼ.— Դավաճա՛նք Արտաշրի, ես ալ ձեր երդումը կետ առ կետ կը կրկնեմ ահա Աստծուս, սրուս և աղջկանս գերեզմանին վրա:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Ո՞վ ես դու:

ԲԱԲԵԼ.— Ձեր վրեժխնդրության պինվորը, չե՞ք ընդունիր:

ՍՈՒՐՄԱԿ.— Ծերունի զորականը:

ՎԱՉԵ.— Չենք ճանչնր զրեզ:

ՍՈՒՐՄԱԿ.— Ես կը ճանչնամ (Բաբելի). աղչիկդ մեռա՞վ:

ԲԱԲԵԼ.— Արտաշիր մեռած ավալ զայն ինծի:

ՍՈՒՐՄԱԿ.— Այն անմեղ աղչիկն առևանգե՞ց:

ԲԱԲԵԼ.— Չեմ դիտեր... Մեռավ... Չե՞ք ուզեր սուրս... Մի՛ վախնաք, թեպետև ծերունի եմ, բայց կրնամ զարնել:

ՍՈՒՐՄԱԿ.— Դու ալ մեղսն ես, ծերունի... Վաղը, ինչպես որ ըսի, վռամի գահույիցը տակ պիտի արձանանանք... (Երթալու կըլլան):

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ և ՍԱՀԱԿ

ՍԱՀԱԿ.— Կեցի՛ք... Ո՞ւր կը դիմեք:

ՍՈՒՐՄԱԿ.— Մեկդի... Խաղաղության դիրկը:

ՍԱՀԱԿ.— Դողա՞ այն խաչեն, որ գլխուդ կը կրես... Պարսկին արյունոտուշա աչերեն խաղաղությո՞ւն կակնկալեք... Ձեր մոլար քայլերուն խոչընդոտ հսկա Մասիսն անցաք, բայց դիս կոխկռտելով չի պիտի անցնիք:

ՍՈՒՐՄԱԿ.— Ի՞նչ ըսել կուզես ուրեմն:

ՍԱՀԱԿ.— Ահա կուրծքս և խաչս, կրնա՞ք կոխել ու անցնիլ:

ՍՈՒՐՄԱԿ.— Ես ալ խաչ ունիմ, միթե իմ խաչս Ձախակոզմյան ավազակի՞ն է[13])... Մեկդի, որ անցնինք... Տես այս գերեզմանը:

ՍԱՀԱԿ.— Ես ալ կը սիրեմ այն բարեպաշտ ոգին, բայց Հայաստանն ավելի կը սիրեմ... Ես ալ կատեմ Արտաշիրը, բայց Պարսկին ավելի կատեմ... Դու որ կղեր ես, Քրիստոսի «ներեցեք միմյանցը» փոխանակ պաշտպանելու՝ ազդագրավ վրեժխնդրության մը դրո՞շը կը ծածանես...

Այո՛, Արտաշիր Հանցավոր է, բայց թող Արշակունին չըլլա Հանցավոր... Թագավորը կը զղջա իր պժգալի անցելույն վրա և խաղաղութեան դիրկը կը նետվի. եթե նա Հայ և դուք ալ Հայ եք, ուրեմն ներեցեք իրարու:

ՍՈՒՐՄԱԿ.— *Նա շատ անգամներ զղջաց և մենք մինչև ցե՞րբ ներենք:*

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Սրբազան հայր, մեռնողն իմ աղջիկս է և դու շատ դյուրավ կը հոչդորջես «ներեցեք» բառը:*

ՍԱՀԱԿ.— *Եթե այդպես է, վիս զարկեք և թո՛ղ ապրի Հայաստանը:*

ՎԱՉԵ.— *Ո՛չ մեր բայլին խոչընդոտ ըլլալ Հանդգնի և ո՛չ ալ զարնվի:*

ՍԱՀԱԿ.— *Ուրեմն, անգութներ, դեռ ի՞նչ ընեմ, որ Հայաստան ապրի. ես էի որ մինչև հիմա երկրե երկիր թափառեցա Հայաստանի ջահ տանելու և դուք կը մարեք զայն, ես վայրկյանի մը մեջ հազիվ խոնջյալ կյանքով մը Հայաստանի փոքր ինչ շունչ ավի, և դուք զայն բոլորովին կը խաբեք, և որո՞ւ կառաջնորդեք. Պարսկի՞ն, Պարսկի՞ն, որ մեր տաճարները, պալատները, դամբաններն և հիշատակարանները մոխրով և սրբապղծությամբ պիտի ծածկե, և այն ատեն դարերու բարդի բարդ մոխրույն տակ ո՛վ պիտի կրնա նշմարել Հայուն դամբանը, այն Հայը, որ երբեմն ազատության առաջին ախոյանը Հանդիսացավ. այն գահը, որու վրա տիեզերատաստ Հսկաներ որոտացին ու անշնչացան, այն գահը դուք Պարսկին կը ծախեք և ի՞նչ իրավամբ: Դուք Հայ չե՛ք, ազգ չունիք, դուք մարդ չե՛ր, ճիվաղ եք... Ա՜հ, ի՞նչ իրավունք է այս. մեկ Հայ*

մը անխոնջ աշխատի հայրենիքը լուսավորելու, և չատ մը Հայեր միաբանին զայն անդունդը ձգելու։

ՍՈՒՐՄԱԿ.— Հայաստանը ո՛չ թե անդունդը, այլ խաղաղության ձորը կը ձգևնք, մեր մեջ մատնիչ չկա, այլ ազգության պատվույն վրեժխնդիր, վատ է այն, որ պատմության էջերուն մեջ կարձանագրև, թե Սուրմակ մատնության սև դրոշը պարզեց։

ՍԱՀԱԿ.— Ե՛ս, և՛ս պիտի արձանագրեմ, երբ հայրենյաց ցավոց փոսերուն մեջ շնչատպատ իյնամ ժամանակն առաջ և ապագու առջև ո՛չ թե վատ, այլ արդարատատ պիտի ըլլամ... Բայց մինչ ես չի՛ պիտի դառնաք։

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Երբ այս աղջիկն իր գերեզմանին քարը թավալելով ես դառնամ՝ մենք ալ մեր վրեժխնդրության ամեհի հոթձանքը պատռելով ես կը դառնանք, և քանի որ չկա աղջիկս, թող Հայուն գլուխը ետ չըլլա։

ՆԱԽԱՐԱՐՔ.— Կոթձանի՞ թագավորը։

ՍԱՀԱԿ.— Եվ ո՞վ պիտի կանգնի։

ՍՈՒՐՄԱԿ.— Մեր վրեժխնդրությունը։

ՍԱՀԱԿ.— Խնայեցեք, Հայրենյաց իշխաններ, Տոգ չէ որ նա առանց թագի ըլլա, այլ չըսեն թե Հայն իր հայրենիքը օտարին մատնեց. չե՞ք մտածեր, գերի և հեզ Հայեր կը պատրաստեք ապագային համար, որոնք իրենց շղթաներուն մեջեն գերության և օտարության ետևեն և անիծել պիտի սովրին. ձեր գերեզմաններեր պիտի փնտռեն ամերակաց կույտերուն տակ, որ ձեր ոսկրներեր այրեն, այն առեն ապագա սերնդյան առուկ Հայերն օտարության առնապատ խորերեն իրար «Հայաստան» պիտի գոչեն, և միայն կոթձանյալ հիշատակարաններ այն ձայ-

նը խուլ մռնչմամբ մը իրենց մէջ պիտի խնդրեն և այն հայրենակարոտ հառաչները ձեր դժոխոց բոցերուն հետ պիտի խառնվին, և այն ատենի ի՞նչ պիտի ընեք, ի՞նչպես Հայուն պիտի տաք Հայաստանը:

ՍՈՒՐՄԱԿ.— Մեր Սրբազան կաթուղիկոսը Ս. Գրոց մարգարեութիւնները շատ կարդալով կը շփոթի... Օ՛ն, իշխանք, ա՛լ բավական մտիկ ըրինք, շաղակրատութիւնները Հայաստանը չեն ազատեր, հիմա չը խոսինք, վաղընդի վաղը շատ պիտի խոսինք:

ՍԱՀԱԿ.— Վերջապես հայրենյաց անկումը վճռեցի՞ք:

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— Արտաշիրի անկումը:

ՆԱԽԱՐԱՐՔ.— Կործանի՛ թագավորը:

ՍԱՀԱԿ.— Ուրեմն վերջապես, գոռոզդ Մասիս, վեր առ ամպերուն մեջեն ժժգույն ճակատդ և բոլոր սիեզերաց առջև որոտագոչ ձայնե, թե Հայերն իրենց հայրենիքը կը մատնեն:

ՍՈՒՐՄԱԿ.— Հայաստանը կը խաղալի:

ՍԱՀԱԿ.— Վերջապես կերթաք, մատնիչք հայրենյաց, դուք Հայ եք և Հայեն վրեժ կառնեք:

ՍՈՒՐՄԱԿ.— Հայաստանն ազատելու:

ՍԱՀԱԿ.— Ուրեմն Հայաստանեն առաջ ինձնե անիծյալ ըլլաք (ամենքը կերթան, բացի Բաբելեն):

ԲԱԲԵԼ.— (Սահակի մոտենալով) Ես հոս եմ, Սրբազան Հայր, դիս մի՛ անիծեր:

ՍԱՀԱԿ.— Բայց անոնք գացին:

ԲԱԲԵԼ.— Աղջկանս վրեժը լուծելու համար հայրենիքս մատնել ուզեցի... Երդում ըրի և հոս եմ... Թող մեկը երեսիս վատ չը գոչե (դաշույնը կուրծը կը մխե):

ՍԱՀԱԿ.— *Ի՞նչ ըրիր, ծերունի։*

ԲԱԲԵԼ.— *Ադոթեմ ինծի համար, Սրբազան Հայր, որ ապրեցանիմ հոն գոնեմ* (կիյնա)։

ՍԱՀԱԿ.— *Ա՛հ, բոլորովին միշտ մահ և անկում* (վարագույրը կիջնե)։

<ՎԵՐՋ Ե ԱՐԱՐՎԱԾԻՆ>

ԱՐԱՐՎԱԾ Զ

Վռամի պալատը.—Այուձազարդ և փառավոր սրահ մը.—Աջ կողմը Վռամի գահը:

Տեսիլ Ա

ՎՌԱՄ և ՍՈՒՐԵՆ

ՎՌԱՄ.— Քաջդ Սուրեն, վերջապես Հայաստան վշտալից ճակատը ոտքերուս առջև խոնարհած գթութիւն կաղերսե ինձմե իր վրկութեանը համար. մինչդեռ ես ավելի կուզեմ դինքը տապալել ու ջնջել... Ես՞ղճ Հայ, որ իր ոսոխը ու բարեկամը դեռ չը ճանչնար, չը զարնար իրեն զարնողին և կը խոնարհի. չեմ գիտեր, թե Հայը խոնա՞րհ է թե՞ վախկոտ... Ա՜յ, Ա՜յ, եթե քու հանճարիդ հետ կրակ մը միավորես, տիեզերքը կը գերազանցես ու կը սարսես. դողացեք Հայեն, տիեզերք, եթե Հայերը միաբան ու համախումբ տեսնեք:

ՍՈՒՐԵՆ.— Բայց այդ ալ անկարելի է, արքա քաջ, գուցե առյուծը և վագրն իրարու հետ հաշտվին. բայց Հայը Հայուն հետ չը հաշտվիր... Արտաշես առաջին բոլոր աշ-

խարհ կը խոնարհեցներ, եթե իր բանակին մեջ իր զոր-քերուն չպանվեր։

ՎՌԱՄ.— Եվ ի՞նչ եղավ Արշակունի Հարտոութիւնը... Իր նախարարներուն մին Պարսկաստանի շահուն համար Արշակունիի ձեռքին նախագահութիւնը հափշտակեց և հիմա անոր հաջորդներուն մեկն ալ իր գահը բոլորովին Պարսկաստանի կը ծախե... Եվ ի՞նչ պիտի ընդունի անոր փոխարեն, եթե ոչ նախատինք և անկում... Ջարմանալի ազգ մ'է Հայը... Դու ալ Հայ ես Սուրեն, ըսե, ի՞նչպիսի մարդ է Հայը։

ՍՈՒՐԵՆ.— Հայը Հայ ծնելուն միշտ կը զժգոհի, տեր աբգա, Հայը հուսահատ ու զժգոհ ազգ մ'է. իր փառքը, զորութիւնը և ճոխութիւնը միշտ անկատար կերևին իր աչքին... Եթե բոլոր աիեղերաց ալ տիրե, զարձյալ իր հազթանակն իրեն համար անկատար կերևի. օտարին շատ կը հարի և, ասով ավելի օտարասեր, քան թէ հայրենասեր ազգ մը կը սեպվի։ Ահա կը տեսնես, որ ինքն իրեն փրկութենեն հուսահատած Պարսկաստանեն կակնկալե զայն... Ինքը շատեր օտարը և կը կարծե, թե օտարն ալ ինքը շատեր... Հայը բարեսիրտ՝ միշտ ուրիշեն բարեսրտութիւն կակնկալե և միշտ կը խաբվի... Դեռ զարմանալին կա, տեր աբգա, մտածե մեկ մը. այսչափ ներքին խռովութիւն և աոելութիւն և միշտ ամեն կողմեն արտաքին հարված. դեռ Հայը կանգուն է և ազգ մ'է... Ես կըսեմ, որ եթե բոլոր աշխարհ կործանի ու խաոնակի, զարձյալ Հայը Հայ է։

ՎՌԱՄ.— Բայց եթե այսպես Վռամի ապստամբի՝ իր կրոնքն ու ազգութիւնը շուտ կը թաղե իր կործանյալ հիշատա-

կարանացը մոխրույն տակ... Պիտի տեսնես, որ վագր Հայաստան չկա... Վագր Հայր ստրուկ կամ Պարսիկ է: Վա՜յ այն հարվածյալ ազգին, որ օտարին պատրիչ ու թունավոր լեզվին կը խաբվի. վա՜յ այն անձին, որ յուր ազգը փառասիրության կամ մեծության կը զոհե, վա՜յ քեզ, Հա՜յ, եթե Պարսկաստանի դիրկը նետվիս (կը մեկնին):

Տեսիլ Բ

ՍԱՀԱԿ (մենակ)

Վերջապես ապիտակ ալյացս տակ Հայության ստղին անկո՞ւմը պիտի տեսնեմ... Մտախուզ մը կը պատե Մասյաց ճակատը. Հայության հետին հառաչա՞նքն է այն, որ այս սև կամարներուն տակ պիտի նվագի... Ա՜հ, հյուծյալ աչերս չունին շանթեր, որ Հայության ոսոխները զարնեմ... Ի՞նչ ընեմ, կը սիրեմ Հայը, կը սիրեմ ազգս սրտիս խորեն... Օրորոցիս մեջ աչերս հպարտության գաղնյա կամարներուն մեջ բացի, և ես ոչ մոխրի և մոռախուղի մեջ զերեզմանս պիտի գոցվի... Ո՛վ երկինք, այրե հոգիս դժոխոց անծուխ բոցերուն մեջ, բայց կայծ մը տուր Հայաստանի մարած սրտին... Այլ ո՞վ կը մարե Հայուն փառաց ջահը, Հայը, Հայն իր անկումը կը խնդրե և երկինք ի՞նչպես կանգնե... Գոցվեցե՛ք անդունդներ... Գոցվեցե՛ք զերեզմանի սհարիու դռներ, ի՞նչպես պիտի ծածկեք թագն ու Հայը ձեր համր մշուշին ներքև... Ելի դո՛ւք, Արշակունի ուրվականներ, դեռ պիտի հանդուրժե՞ք ձեր դամբանաց մեջ:

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆ և ՍՈՒՐԵՆ

ՍՈՒՐԵՆ.— Ի՞նչ կը մտածես, Սրբազան Հայր... կը տեսնես որ անհնար է և վտանգավոր և անհամաստար զենքով մաքառիլ... Այնչափ Հայոց նախարարներ Արտաշիրը կամբաստանեն և կուզեն գահեն վար ձգել... Կրնդդիմանաս և Շահին ահավոր նայվածքը կը դրգռես վրադ... Միթե ահեղ փոթորիկներու կրնա՞ դիմադրել տկար ծառ մը։

ՍԱՀԱԿ.— Իրավ է որ հայրենյացս ցավերը որդի պես թոքերս և աղիքներս կրծելին և պիս կմախք մը ձեացուցին, բայց դեռ չը ցամքեցան արտիս արյան ճապաղիրը և կրնամ դեռ արդարություն աղաղակել կամ աղերսել, մինչև որ անիրավ վճռո մը տակ ձայնս մարի... Դու Հայ էիր, ուրացար ազգդ... Դու չես գիտեր, հայրենասիրությունն այնպիսի բուռն կրակ մ'է, որ մարդս մոխիր կը դարձնե... Դու մարդ չես, պահլավ արյունդ[14]) հայրենասերի մը ծախե... Հայրենիք քեզ համար բոժոժի մը ձայն է... Պարսկին գահին երկրպագելու համար Թողուցիր և ուրացար հավիտյան հայրենիքդ, որուն զվարթ երկնքին տակ աշերդ լույս տեսան... Ա՜հ, իմի՛վ թե ուրացողներուն մորը կաթը թունավոր եղած ըլլար կամ ժայռերու մեջ ծնեին նոքա։

ՍՈՒՐԵՆ.— Բայց վերջապես մեր ընելիքին վրա խոսինք, Սրբազան Հայր, քիչ մը եաթը Արտաշիրի դատաստանը պիտի սկսի, և ես կը խրատեմ քեզ, որ նախարարաց համակարծիք գտնվիս... Ի՞նչ է այս, որ մոլի թագավոր մը

կը պաշտպանես, որ բոլորովին ձեր կրոնքը ոտնակոխ ըրած և Արշակունյաց պալատը սրբապղծած է։

ՍԱՀԱԿ.— Այո՛, Արտաշիրը կը պաշտպանեմ, բայց Հայուն իշխանութիւնը պահելու համար... Ա՜հ, չեմ կրնար հանդուրժել ապազգային անիծախառն բողոքներուն... Չեմ կրնար լսել, թե Սահակ ալ առանց արյունը թափելու՝ անտարբեր դիտաց Արշակունյաց գահին անկումը... Ես կուզեմ մաշիլ, դեղնիլ, մարիլ և մեռնիլ հայրենյացս համար, աչերս բաց և կուրծս պատռած... Բայց որո՞ւ կըսեմ... Ոչ ոք իմ զգացմանս կը պատասխանէ, մեկը փառք կը սիրե, մյուսը կին կը սիրե, ուրիշը ոսկի կը սիրե... Սահակն է միայն, որ Հայը կը սիրե։

ՍՈՒՐԵՆ.— Ալ կարև հույսդ Հայեն, այսուհետև Պարսկեն խաղաղություն պիտի գտնես։

ՍԱՀԱԿ.— Պարսիկն իր գահը Հայաստանի հողին վրա կանգնե՜... Չե՞ք լսեր, Արշակունի գոռոզներ, այսչափ սովո՞ր են ձեր վհատը, որ այսպիսի ահարկու վճիռ մը չեք լսեր ու չեք մռնչեր... Դուրս նետվեցեք ձեր բանտեն, ոսկերք Արտաշեսի, դուք վարժ եք հարվածի և կրնաք դողդոջ ձեռքերով սուր գործածել... Ես խաչս կառնեմ, բայց ո՞վ սուր պիտի առնե ինծի հետ։

ՍՈՒՐԵՆ.— Պատերազմի դաշտը չե՛ք, Սրբազան Հայր, այլ այսօր Պարսկաստանի գահեն խաղաղություն պիտի բերես... Մի՛ համառիր, վասնզի պիտի հաղթվիս և Շահին առելության շանթերը քու ճակատդ պիտի պայթին։

ՍԱՀԱԿ.— Շնորհք մ'է այդ... Պետք է որ տանջվիմ կամ մեռնիմ, քանի որ հայրենիքս չեմ կրնար ազատել։

ՍՈՒՐԵՆ.— Ուրեմն չի պիտի՞ ամբաստանես Թագավորը։

ՍԱՀԱԿ.— Երե՛ք... Չես հասկնար... Հանցավոր է նա, բայց Հայ է, եղբայրս է. ա՜հ, հայրենիք պաշտպանելու համար Հայ և ծեր ըլլալու չէի:

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ, ՎՌԱՄ և ԱՐՏԱՇԻՐ

ՎՌԱՄ.— (ներս մտնելով և գանը ելնելով) Ուրեմն պաշտպանեմ ինքզինքդ:

ԱՐՏԱՇԻՐ.— Ինքզինքս պաշտպանելու համար պետք է որ հանցավոր եղած ըլլամ:

ՎՌԱՄ.— Դու կուրանաս քու արարքդ, բայց պալատիդ կամարները և դերեզմանը չեն կրնար զանոնք ուրանալ, բայց են այն արտերը, որոնց մեջ դու արյուն հոսեցուցիր և փոխանակ արիության արձաններու՝ հնչության արձաններով զարդարեցիր պալատդ:

ՍԱՀԱԿ.— Ինչպես կրնաս դինքը իր ազատ կրոնքին մեջ դատապարտել, մինչդեռ ինքն ալ ձեր հնչասիրին կրոնքին հետևած է. իր քաղաքական հանցանքները կրնաս դատել, և ես իմ եղբորս մեղքերը կրնամ քավել:

ՎՌԱՄ.— Վերջապես Հայն իր թագավորը չընդունիր:

ՍԱՀԱԿ.— Ես ալ Հայ եմ:

ՎՌԱՄ.— Բայց չես կրնար նախարարաց չափ իրավունք ունենալ հայրենյացդ վրա. անոնք իրենց սուրերովը կը պաշտպանեն զայն և դու միայն խաչ մ'ունիս:

ՍԱՀԱԿ.— Բայց բոլոր ժողովուրդը իմ և թագավորին հետ է:

ՎՌԱՄ.— Ես չեմ ընդունիր այն ժողովուրդն, որ կղերի մը

մորուքեն կը պատկառի և Աստվածային երկյուղե մը պգածված՝ ակամա կը չնազանդի յուր թագավորին։

ՍԱՀԱԿ.— *Տեր արքա, վերջապես կը չայտնես, որ Հայոն թագը և ազատութիւնը կը մուրաս. կը տեսնե՞ս, Արտաշիր, դու վատ մը եղար և բոլոր Հայ ազգը նվաստացուցիր, այն Պարսիկը, որ երբեմն Հայու անունեն կը դողար, հիմա խրոխտաբար գահին վրայեն Հայութեան անկումը կը վճռե. անգութնե՛ր, վատե՛ր, մատնիչնե՛ր և իմ սիրելի ազգիս ոսոխնե՛ր, ամենքնիդ ալ նզովյա՛լ ըլլաք։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Ա՜հ, կեցի՛ր, Յոզ տան թագս, և ես սուրս փայլատակելով ու արյան հովերե թռչելով՝ ազատեմ Հայը և Հայաստանը։*

ՍԱՀԱԿ.— *Ա՛լ բան մը չը մնաց, այլ միայն անհուսութեան վհեր։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Սահակ, օգնե՛ ինծի, կը սարսափիմ ես սպասգային կռծերեն. մի՛ անիծեք զիս, Հայե՛ր, այլ իմ գեներսմանես վրա Պարսկաց դիակներ փռեցեք։*

ՎՌԱՄ.— *Լռե՛ Արտաշիր, ատրուկ մը այդչափ հանդգնի՞։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Օգնեցե՛ք ինձ, Հայե՛ր, ձեր թագավորին շղթա կը կապեն։*

ՎՌԱՄ.— *Ի՞նչ ընե Հայը, երբ յուր թագավորը շղթա ընտրեց։*

ՆԱԽԱՐԱՐՔ.— (դրսեն) *Կործանի՜ Արտաշիր, կեցցե՜ Վռամ արքայն։*

ՎՌԱՄ.— *Կը լսե՞ք, Հայ են ասոնք։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Հայրենիք դանոնք Հայ չընդունիր։*

ՆԱԽԱՐԱՐՔ.— (դրսեն) *Կորածնի՜ Արտաշիր, կեցցե՜ Վռամ արքայն։*

ՆՈՒՅՆՔ, ՍՈՒՐՄԱԿ, ՎԱՉԵ, ՓԱՌՆԵՐՍԵՀ, ՀՄԱՅԱԿ և ՆԱԽԱՐԱՐՔ

ՓԱՌՆԵՐՍԵՀ.— *Ի՞նչ վճռեցիր, արի արքայդ արյաց։*

ՎՌԱՄ.— *Թող խաղաղի Հայաստան, Արտաշիր ալ Հայոց թագավորը չէ, այլ Խուժաստանի տրուկ աքսորյալը։*

ՆԱԽԱՐԱՐՔ.— *Կեցցե՛ Պարսկաստան։*

ՍԱՀԱԿ.— *Ա՛հ, չկա մեկը, որ ինծի հետ «կեցցե՛ Հայաստան» գոչե։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Կը տեսնե՞ս, արքայդ վհատած, կաթուղիկոսն ալ աքսորյալին մեղսակիցն ըլլալով՝ զայն կը պաշտպանե, ինքը Պարսկաստանի օրերիմ թշնամին է։*

ՎՌԱՄ.— *Քաջ գիտեմ, և արդեն անոր համար մշանջենավոր բանտ վճռված է[15])։*

ՍԱՀԱԿ.— *Ես ալ արդեն մենաստան մը կուզեի ապրելու և հայրենիքս ողբալու համար... Բայց երանի թե օր մը Հայ եղբարցս ազատության ձայնները լսեի և բանտիս երկաթե դռները խորտակվելով՝ վերականգնյալ Հայաստանիս գիրկն իյնայի։*

ԱՐՏԱՇԻՐ.— (հուսահատաբար) *Ո՛հ, իսկ ես։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Մի՛ զարմանար, արքա քաջ, կը զառանցեն։*

ՍԱՀԱԿ.— *Երանի թե երազ մ՚ըլլային ասոնք։*

ՍՈՒՐՄԱԿ.— (Արտաշրի մոռնալով, որ հուսահատաբար գլուխը կուրծին ինցուցած է, կամաց) *Կը ճանչե՞ս դիս։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Դու դիս մի՛ ճանչեր, ես ալ ըզքեզ չը ճանչեմ։*

ՍՈՒՐՄԱԿ.— *Ք՛ո՛ւ պալատականդ, Աշոտն եմ։*

ԱՐՏԱՇԻՐ.— *Աշո՞տ... Թշվառականս։*

ՍՈՒՐՄԱԿ.— Բայց ամեն բան լմնցավ։

ՎՌԱՄ.— Սուրմակ, ջքեզ Հայոց աշխարհին հայրապետ կը կարգեմ, քու հայրենի ծառայութեանդ փոխարէն (Սուրմակ կը խոնարհի)։

ՍԱՀԱԿ.— Երկի՞նք, կամ կայծակդ, կամ Հայաստանը։

ՎՌԱՄ.— Ձեզ տեսնեմ, Հայե՛ր, այսուհետև հայրենիք և ազատութիւն բառերն ալ մի հիշեք (սուրը կը հաշե.—Վարագույրը կիջնե)։

վ ե ր ջ

ԱՍՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՔ ՊԱՐԻԿԱՅ Ի ՀԱՅՍ
ԿԱՄ
ԱՎԵՐՈՒՄՆ ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՅ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՐԳԱԽԱՌՆ
ԲԱՃԱՆՅԱԼ ՅԵՐԿՈՒՍ ԹՎԱԿԱՆՍ, Ի ՀԻՆԴ ԱՐԱՐՍ,
ՅԵՐՒՍ ՊԱՏԿԵՐՍ ԵՎ Ի ՄԻ ՎԵՐՋԱՐԱՆ

<1870>

ԱՆՁԻՆՔ Ա. ԹՎԱԿԱՆԻՆ

ՈԳԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ[1])
ՏՈՒՂՐԻՎ, թագավոր Պարսից[2])
ԳԱԳԻԿ ԱԲԱՍՅԱՆ, թագավոր Կարույց
ԹԱԹՈՒԼ, իշխան Հայկազն[3])
ԱԲԱՍ, վրթապետ Պարսից[4])
ՊԱՐՍԻԿ ՋՈՐԱԿԱՆ ՄԸ
ԾԵՐՈՒՆԻ ՔԱՀԱՆԱ ՄԸ

ԱՆՁԻՆՔ Բ. ԹՎԱԿԱՆԻՆ

ԱԼՓԱԼԱՆ, թագավոր Պարսից
ԲԱԳԱՐԱՏ, իշխան Անիի
ՈՐՏԵԼՄՆՁ, վրթապետ Պարսից[5])
ԱՂԿԱՆ, իշխան Պարսից[6])
ՏԵՐ ՎԱՀՐԱՄ, ձեր բռնանա՞)
ՋԱՐՄՈՒՀԻ, Բագարատա աղչիկը
ԱՊՐՍԱՄ, Հրամանատար զորաց Անիի
ԼԵՎՈՆ, Հայ պատանի
ԳՈՒՐԳԵՆ, ⎫
ԲԱԲԳԵՆ, ⎭ իշխանք Հայոց
ՎԻՐԱՎՈՐՅԱԼ ՄԸ
ԱՂՋԻԿ ՄԸ
ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ ՄԸ
ՊԱՀՆՈՐԴ ՄԸ

ԱՌԱՋԻՆ ԹՎԱԿԱՆ

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Ս

Տեսարանն է դաշտակ մը.—Ձախ կողմը բլուր մը.—Խոր ավերակ մը.—Աջը հորիզոնին ետև վեր կը բարձրանայ:

Տեսիլ Ա

ԴԱԳԻԿ ԱԲԱՅԱՆ (ձիով), *ԹԱԹՈՒԼ* (եռանիւ, որուն կը հետևի բանակ մը, տեսարանին աջ կողմեն կը մտնեն հետևյալ պատերազմական երգը երգելով):

ԵՐԳ

Ժամ է արդ փառաց,
Որդիք հաշտգանց
Առյամբ հաղեցեք
Դափնիս վարդագեղ:

Վառյալ ի զեն հուր,
Ի սուր և յերկաթ,
Ըզվրեժ դյուցազանց,
Լուծեք օ՜ն հառաջ:

ԴԱԳԻԿ.— (հիվանդ և վիրավոր) *Ահա արևը կը ծագի, քայ ընկերակիցք, դիտեցեք չորս կողմերնիդ և տեսեք թե մեր*

Հայրենիքն ի՞նչ տխուր տեսարաններ կընծայեն մեր աչքը. արյան աղետալի գոլորշի մ՚է պատեր մեր բերդին դաշտերը և վերջիվերջ քաղաքները. հարցնենք նախնյաց գերեզմաններուն, թե այսպե՞ս էր առաջ Հայաստան. այնպիսի ժամանակի մը մեջ ենք, որ մայրերն իրենց զավակաց խաղալիքի տեղ դանակ կուտան, որպեսզի արյան ու պատերազմի վարժվին, և հայրն այն առեն կը ճանչնա յուր զավակը, երբ Պարսկի մը և Թշնամիի մը արյամբը ներկված սուր մը իրեն ներկայացնեն:

ԹԱԹՈՒԼ.— *Արքա քաջ, ես ալ այդ ուխտը մորս արբազան գրկացը մեջ ըրած եմ և հորմես ալ վենք շարժել սորված եմ... Թշնամվույն դեմ անվեհեր գինվոր մը ըլլալու համար պետք է մորմե մը առնել սորվիլ, և հորմե մը՝ կռվիլ:*

ԳԱԳԻԿ.— *Եվ ի՞նչպես չառնենք այն վատ ազգը, որ Հայոց այնչափ անձնվիրությանց և ձեռնտվությանց փոխարեն՝ Հայուն սրած սուրը Հայուն դեմ կը դարձնե, երբ պատեհ առեներնջ գտնե, ահա կը տեսնենք Տուղրիլ, որ քանի մը տարիե ի վեր զորաց նորանոր գումարտակներ զորկելով Հայաստանը կը կողոպտեր կը քանդեր, հիմա ալ ինք պարսկական բանակին գլուխն անցած կուգա բոլորովին կողոպտելու և ի հիմանց կործանելու.*) *բայց ավա՛ղ, այնչափ սոսկալի չեն Թշնամվույն հարձակումները, որչափ են վատ արանց քաղմնելի մատնություններ. մատնությո՛ւն... ահա այս է հոգվույս վերքը, որ դիս կը տանջե, իսկ մարմնույս վրայի այս վերքը, որ քանի մը օր առաջ պարսիկ զորականե մը ընդունեցա, պատվանշան մը կը համարիմ, որովհետև իմ ձեռքս իր*

սև հոգին սադայելին նվիրեցի, իսկ հայրենյաց մասնչի մը ոգին, որ նույնիսկ սադայելին անընդունելի է, որո՞ւն կրնանք հանձնել... Քաջ ընկերք, խորշինք այս ոճիրեն. քիչ առնեն Տուղրիլի դեմ պիտի պատերազմինք, Հայաստանի սեմին վրա պիտի կռվինք ամեհաբար, եթե կան ձեր մեջ անանկներ, որոնց ծանր գա այս դիրքին մեջ պատերազմիլ, թող ձգեն սուրերնին. ես առանց զիրենք մեղադրելու՝ կընդունիմ իրենց հրաժարականը:

ԹԱԹՈՒԼ.— Արքա քաջ, Հայուն սրտին մեջ պարսկական առելութենեն ուրիշ բան մի՛ փնտռեր, մինչե կա՞ Հայ մը, որ Պարսկին հարվածը զգացած չըլլա, եթե իր հորը կամ եղբորը վերքը չորցած կամ անհետացած է, Հայաստանի ստացած վերքերը դեռ թաց են, կը մխան և մեզ կը դիտեն վրեժխնդիր և արյունոռւշտ աչքերու պես... (զորաց) դիմացե՛ք եթե կրնաք, Հայրենասեր սրտե՛ր, այն ահեղ վերքերը տեսնելով:

ՋՈՐԱԿԱՆՔ.— Վրեժխնդրությո՞ւն:

ԳԱԳԻԿ.— Կատե՞ք ուրեմն Պարսիկը:

ՋՈՐԱԿԱՆՔ.— Միշտ:

ԳԱԳԻԿ.— Կերդնո՞ւք Հայաստանի վերքերուն վրա, որ երբեք չը պիտի ընկրկիք:

ՋՈՐԱԿԱՆՔ.— Կերդնունք:

ԳԱԳԻԿ.— Լսե Հայաստան ձեր ուխտը:

ԹԱԹՈՒԼ.— Ի՞նչ ձայն է այս (ամենքը մռիկ կրնեն, հետուեն աղոթքի դողդոջ ձայն մը կը լսվի):

ԳԱԳԻԿ.— Ո՞ւսկից կուգա այս ձայնը:

ԹԱԹՈՒԼ.— (ձախ կողմը ցուցնելով) Սա կողմեն:

ԳԱԳԻԿ.— Այն կողմը ավերակներ են (նայելով):

ԹԱԹՈՒԼ.— Ավերակի մը վրա խաչ մը կերևի:

ԳԱԳԻԿ.— Ըսել է որ մատուռ մը կա հոն:

ԹԱԹՈՒԼ.— Եվ քահանա մը անշուշտ, որ կաղոթե:

ԳԱԳԻԿ.— Մեզի համար... զարնող դինվորին հետ, երանի այն քահանային, որ կաղոթե:

ԹԱԹՈՒԼ.— Ահա ծերունի մը կերևի:

ԳԱԳԻԿ.— Անշուշտ աղոթող քահանան է:

ԹԱԹՈՒԼ.— Քայլերը դեպի հոս կուզան... Մեր բանակին գալը տեսած ըլլալու է...

ԳԱԳԻԿ.— Եվ անոր համար կաղոթե:

ԹԱԹՈՒԼ.— Ի՜նչ վեհ կերպարանք. եթե ծերունի քահանա մը չըլլար, պիտի կարծեի թե պատերազմի դաշտն իջնող հսկա մ'է. ոտքերը կը դողդողան, բայց սիրտը կը բաբախե:

ԳԱԳԻԿ.— *Խոնարհեցեք իրեն* (զորքեր հարգանաց շարժում կընեն, մինչդեռ բահանայն տեսարանը կը մտնե):

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ՔԱՀԱՆԱՅՆ

ՔԱՀԱՆԱՅՆ.— Նեղեցե՛ք, արի զինվորներ, եթե ակար ծերունի մը գանվելով՝ փոխանակ հայրենիքս երկաթով պաշտպանելու ձեղի պես, որ զինվոր ու երիտասարդ եք, դո՞ կըլլամ միմիայն աղոթելով... Բայց դեռ ահեղ առյուծ մ'եմ այն մատուռին մեջ՝ անոր, որ զայն սրբապղծելու կը հանդգնի. հսկել և աղոթել, ահա ասոնք միայն բաժին մնացին ինձ իմ անկյալ հայրենիքես, հսկել հսկայի մը պես, աղոթել՝ բահանայի մը պես. մեև կը զարնեի երբեմն ալ

վինվորի մը պես, իսկ երբ ծերացա և տեսա որ այն ծանր երկաթը ձեռքես կիյնար, մտածեցի, որ գեթ կրնայի հայրենյացս ծառայել, Աստուծո վինվոր ըլլալ և աղոթել...

ԴԱՎԻԿ.— *Եւ քու ձայնդ երկինք, և քու հսկած միայնիկ մատուռիդ դուռը զարնեն օր մը ազատութիւնը, վինվորդ Աստուծո, աղոթի՛ մեզի համար. դու քու խաչդ ա՛ռ, մենք ալ մեր սուրը կառնենք, դու աղոթե՝ մենք զարնենք, դու սիրեն Աստվածդ, մենք տանենք թշնամին:*

ՔԱՀԱՆԱՅՆ.— *Աստուծմե և հայրենիքես եաև կը սիրեմ այն վինվորը, որ պատերազմի դաշտը կը խոյանա, օրհնյալ ըլլաք, քաջե՛ր, որ կը ջանաք ձեր անկյալ հայրենիքը վերականգնել, դուք մի՛ լար Հայաստանի վրա, այլ զարկեք այն բազուկը, որ ազեատ կը տեղացնե անոր գլխուն. լալը ծերերուն թողուցեք և այն մայրերուն, որոնք իրենց զավակաց գերեզմանները կորուսած են. ծերերուն և մայրերուն վրեժը առե՛ք, քաջե՛ր և քավեցեք թշնամվույն արյամբը մեր եկեղեցյաց, պալատներուն և գերեզմանաց եղած սրբապղծութիւնները:*

ԹԱԹՈՒԼ.— *Վինվորդ Աստուծո և հայրենյաց, եթե լավ ուշ դնենք, Հայաստանի բոլոր խորշերը վրեժ կը մռնչեն. Հայաստանի մեջ չը կա մեկը, որուն սիրտը չը լսիե վրեժխնդրութեյան բոցը. մենք մեր հայրենակցաց վրեժը պիտի առնենք, պիտի պատերազմինք անոնց տեղ, որք կարող չեն սուր շարժելու, նաև անոնց տեղ՝ որք կը սոսկան պատերազմի դաշտեն:*

ՔԱՀԱՆԱՅՆ.— *Մի՛ դանդաղիք ձեր սուրը պաշտոնը կատարելու, եղբարք իմ. հառաջ վարե բանակդ, արքա քաջ, և ես ուխտնամյա հատակիս մեջ՝ այս հսկա և վրեժխնդ-*

դիր բանակին հետ քանի մը դուղոջ քայլ առնելով հրթռվիմ գոնե, քանի որ կթոռութեանս մէջ անկարող եմ ձեր փառքին մասնակցիլ։

ԹԱԹՈՒԼ.— (ձախ կողմենն նայելով) *Արքա՛ քաջ, պարսկական բանակ մը կերևի բլրին գագաթը... տե՛ս...*

ԳԱԳԻԿ.— *Տուղրիլի բանակն է այն։*

ՔԱՀԱՆԱՅՆ.— *Պարսիկնե՞ր* (ակռաները կրճտելով)։

ԳԱԳԻԿ.— *Պատրաստ եղիք, քաջ զինակիցք իմ. ահա այն թշնամին, որուն արյանը անհագ ծարավ մը կզգան մեր սուրերը, նա դեռ իր ժանտ սուրը մեր անմեղ հայրենակցաց արյամբը չը ներկած՝ զիմապրենք մեր կուրծերը ժայռերու պես. Հայը այն է, որ երկու Պարսիկ չսպանած չը մեռնիր։*

ԹԱԹՈՒԼ.— *Տասը Պարսիկ իմս են... կերդնում արույս վրա։*

ՔԱՀԱՆԱՅՆ.— *Եթե ես չեմ կրնար զարնել, գոնե զիակները կոխկռտեմ։*

ԳԱԳԻԿ.— *Պատրա՞ստ եք։*

ՋՈՐԱԿԱՆՔ.— *Վրե՛ժ...*

ԳԱԳԻԿ.— *Ա՛ռ վրեժդ ուրեմն Հայաստան* (զորքեր սուրերնին կը բաշեն և պատերազմական երգով կը մեկնին ձախ կողմենն.—Պատկեր կը փոխվի)։

Բլուր մը.— Արմուճի վրան

Տեսիլ Գ

ՏՈՒՂՐԻՎ, ԱԲԱՍ և ՋՈՐՔ

ՏՈՒՂՐԻՎ.— Ա՛հ, ո՛րչափ մեծ հաճույք է այս, զորապետ, երբ կը մտածեմ թէ այսօր իմ նախնյացս դարավոր վրեժները կը լուծեմ՝ անտեսունչ Հայաստանը ոտնակոխ ընելով և մերկացնելով զայն բոլոր իր փառքերեն, զենքերեն և պանձերեն։

ԱԲԱՍ.— Մեր մեծագոր Աբեգական շնորհն է այդ, տե՛ր արքա, որ քու հայրենյացդ վրեժխնդրության սուրը կընես քեզ օգնական, այսպիսի փառքե զատ ոչինչ կրնար քու զորությանդ հետ կապվիլ։

ՏՈՒՂՐԻՎ.— Որչա՛փ կը զվարճանա արդյոք մեծն Աբեգակ, երբ զինքը չը պաշտող անօրեն ժողովրդյան մը արյամբը ներկված դաշտերուն վրա կը սփռե իր ճառագայթները և մեր գինեն ու զրահը ավելի ահեղապես կը շողացնե թշնամյաց ահարեկ նայվածքին... ի պատերազմի երեկոյին, կարծես թե թշնամյաց արյամբը կշտացած և կարմրած՝ իր աստվածային բնակարանը կը վերադառնար, որչա՛փ գոհացավ արդյոք, երբ Սմբատաբերդ և Արծն քաղաքներուն կործանումը[9]) և ջարդր տեսավ և այն կոտորածները, որ Հայաստանի բոլոր գավառները սոսկումով լցուցին։

ԱԲԱՍ.— Բայց այն ատեն մեկ սասանյան գունդ մ'էր որ Հա-

յաստանն այնչափ տակնուվրա ըրավ, տեր ալքա, և երբ այժմ դու անձամբ քաջաց բանակի մը գլուխն անցած Հայաստան կարշավես՝ անշուշտ այն սոսկումով լցված բոլոր բերդերը և քաղաքները իրենց դռները պիտի բանան, երբ լսեն թե դյուցապն Տուղրիլ՝ արյաց արքայն ահեղ առյուծի մը պես իրենց կը նայի և իրենց վրա կը քալե, կարելի է որ քանի մը հայրենասիրությամբ վառված տկար բանակները հանդգնին մեզ դիմադրելու, բայց մեր քաջերուն և փիղերուն հարձակմանց չը կրնալով դիմանալ՝ պիտի փշրին փուշիի պես և պիտի խառնվին իրենց հայրենյաց ավերակաց աճյունին:

ՏՈՒՂՐԻԼ.— Ես արյունախանձ սրտիս խորը գրած եմ բոլոր Հայաստան ավերակ դարձնել, Հայութիւնը չնջել աստանց ավերակաց մեջ հեծող հայկական շունչ մը թողելու և այնպես հաղթական, Պարսկաստան՝ իմ շքեղապանծ գահս դառնալ, և անկե զվարթ նայվածքով իմ գրացի երկրիս փլատակները դիտել, որոնց վրա կը սավառնի պարսկական սոսկումը, ալ վախ չունենալ Հայաստանեն, որ միշտ կիչնա և կը կանգնի և կանգնած աստեր իր գրացի ազգերուն գահերը կը սարսե, գինքը խեղդելու համար պատեհ առիթ մ'է իր անահուսալ վիճակը... Կուզեմ Հայութիւնը չնջել երկրիս երեսեն. լսե՛ երկնից բարձրերեն և դու Արև, և ծիծաղե՛ քու Աստվածությունդ արհամարհող ազգի մը գերեզմանին վրա... Ավա՜ղ որ գրեթե ծեր եմ, եթե չը կրնամ կարճ կյանքիս հետ Հայաստանը վերջացնել՝ թագիս հետ ժառանգություն պիտի ձգեմ Ալփասլան եղբորս, որ քաջերու մեջ քաջ է, Տաճկական առակությունը, և Հայության ջնջումը, չը թո-

զուլ՝ որ Հայը չորրորդ անգամ հոգի առնե[10]. Հայը այնպիսի ազգ մ՚է, որ իր վերքերեն քաջ կը ծնի:

ԱԲԱՍ.— Հայն ա՛լ հոգի առնելիք չունի, մինչդեռ Տուլբիլի հարվածը զգաց իր ներքին խոցերով պատած սրտին վրա:

ՏՈՒՂՐԻԼ.— Դեռ գերեզմանին մեջ ալ կուզե հևալ:

ԱԲԱՍ.— Պարսկական սուսկումը կը հսկե անոր դիակին վրա ինկած անոպա ժայռի մը պես:

ՏՈՒՂՐԻԼ.— Եվ չի պիտի հառնե երբեք Տուլբիլի երկաթե ձեռքին տակ, երբ նախնի հայկազանց դամբաններըը կը կոխկռտեմ գարշապարաց տակ, անոնք որ երբեմն սասանյան գահին դեմ խրոխտացին, երբ կը կոթծանեմ նկեղեցիները, ուր խաչափայտի մը առջև կանթեղ կը վառեն և կերկրպագեն. երբ կը տեսնեմ Հայը վիրավոր և անզոր ոտքերուս տակ, որ կաղերսե կամ կսպառնա ընդունայն, երբ կը տեսնեմ արյան ծով մը, որուն մեջ կը շողան հայկական խոցյալ գլուխներ, և անոնց վրա պարսկական արյուներանգ դրոշը կը ծածանի... անհագ վրեժխնդրություն մը կզգամ:

ԱԲԱՍ.— Եվ այս ամենը Հայն ավերակի մը խորշը սուսկումով կծկած կը դիտե, երբ կը տեսնե որ հազիական արծիվը կարմիր դաշտերուն վրայեն կը թևարկե (նահկաած աղմուկ մը կը լսվի խոռեն):

ՏՈՒՂՐԻԼ.— Ի՞նչ ձայներ են սոսնք:

ԱԲԱՍ.— Ի՞նչ կը նշանակե այս:

ՁԱՅՆԵՐ.— Կեցցե՛ Հայաստան (խոռեն):

ՏՈՒՂՐԻԼ.— Ա՞հ, Հայերն են:

ԱԲԱՍ.— Կը դարնվին մեր բանակին հետ:

ՋԱՅՆԵՐ.— Մա՜հ Սասանյանց (խորեն):
ՏՈՒՂՐԻԼ.— Անօրիննե՜ր:

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ և ՋՈՐԱԿԱՆ ՄԸ

ՋՈՐԱԿԱՆ.— *Տե՛ր արքա, Կարուց Թագավորին բանակը մեր հառաջապահ դնդին վրա հարձակեցավ:*
ՏՈՒՂՐԻԼ.— *Ջորապե՛տ, շուտ բանակը ոտք հանե և այդ հանդուգնները խորտակի* (Որոնվելով պատերազմական փողը կը ճնշե և բոլոր զորքերը կը ժողովին. Տուղրիլ բլրին գագաթը կելնե և կը դիտե): *Ահա կը զարնվին, մեզմե երամ մը արծվո երամի մը դեմ... Հայոց բանակը քիշվոր է, կրնաք պաշարել և ձեր ահեղ սուրերուն մեջ այդ հանդուգն բանակը խեղդել:*
ԱԲԱՍ.— (զորաց) *Հառա՜ջ:*
ՋՈՐՔ.— *Մա՜հ Հայկազանց* (սուսերամերկ կը մեկնին):

Տեսիլ Ե

ՏՈՒՂՐԻԼ (առանձին բլուրն վրայեն կը դիտե)

Ո՞վ է այն իշխանը, որ մեր բանակին մեջ ինկած Պարսկաց դիակներ կը փոե և չը Թողուր որ մեկը իրեն հարված մը տա... Ահա կը տեսնեմ Կարուց Թագավորն ալ որ զորքերը կը քաջալերե միշտ, բայց չը պիտի հաջողի. Արտասի բանակը կը հասնի, այն իշխանին հետ մեկը կը զարնվի, Արտուրան ամիրային որդին է... կը փախչի... իշխանը եռևեն կը վազե... ա՜հ, օդնութեան

հասավ... զարկավ (վշտանալու շարժում մը կընե) *դեռ ասդին անդին կը վազե, գոհ կը փնտռե կատաղի վագրի մը պես, երկու Հայու հետ չորս Պարսիկ կիյնա... բայց ահա Հայոց բանակը պաշարվեցավ... Կարուց թագավորը կը փախչի... չը բռնվեցավ... և այն իշխանը դեռ կը զարնե... պիտի բռնվի... ահա պաշարեցին զինքն ալ... դեռ կուզե զարնել... Պարսիկները կը վախնան անկից. բայց վերջապես բռնվեցավ Արտուրան ամիրային որդին՝ այն քաջին զարնողը՝ որ այնչափ սիրելի է ինձ... բանակը փախստական Հայոց զորքերը կը հալածե* (դրսեն պարսից զորքերը «հաղրուբյո՛ւն, հաղրուբյո՛ւն» կաղաղակեն): *Ահա Արտա այն իշխանը դերի բռնած հոս կը բերե...* (լուրեն վար կիջնե և արքունի վրաները կը մտնե):

ՋՈՐԱԿԱՆՔ.— (դրսեն) *Կեցցե՛ Տուղրիլ, կեցցե՛ Պարսկաստան:*

ՏՈՒՂՐԻԼ.— *Ա՛հ, այս օրվան հաղթության գափնիին հետ նոճի խառնվեցավ, արդյոք մահացո՛ւ էր Հայ իշխանին՝ ամիրային որդվուն տված հարվածը:*

ՋԱՅՆԵՐ.— *Կեցցե՛ն արիք, մա՛հ անարյաց* (դրսեն):

Տեսիլ Զ

ՏՈՒՂՐԻԼ, ԱԲԱՍ, ԹԱԹՈՒԼ (շղթայակապ),

գերիներ, զորք Հայոց, զորք Պարսից

ՏՈՒՂՐԻԼ.— *Ի՞նչ եղավ Արտուրան ամիրային որդին, զորապետ:*

ԱԲԱՍ.— Վիրավորված է, տեր արքա, վինքը վրանը բերինք խնամելու համար։

ՏՈՒՂՐԻԼ.— Ինչպե՞ս է վերքը։

ԱԲԱՍ.— Ուսին վրա է։

ՏՈՒՂՐԻԼ.— Այս Հայ իշխանն է վինքը զարնողը, այնպես չէ՞։

ԱԲԱՍ.— Այո՛։

ՏՈՒՂՐԻԼ.— Ես այս բլրին դագաթեն կը դիտեի։

ԹԱԹՈՒԼ.— Ես էի։

ՏՈՒՂՐԻԼ.— Քաջ իշխան, ևս քու բոլոր բաջագործութեանցդ հանդիսատես եղա, եթե Արտաւան ամիրային որդվուն ալած վերքդ մահացու չէ, և եթե չը մեռնի՝ շեմ սպանները զքեզ, կազատեմ, իսկ եթե մեռնի՝ գու ալ իրեն պոտ պիտի ըլլաս։

ԹԱԹՈՒԼ.— Եթե հարվածն իմս է՝ անկարելի է որ չը մեռնի[11]), իսկ եթե ուրիշի մը՝ այդ շեմ գիտեր. Տիմակվընն զարկ պիս, կամ թող բոլորովին, որ զենքս առած դարձյալ անառերունջ հայրենիքս պաշտպանեմ, ծանր են ինձ այս շղթաներս, երբ հայրենիքս անդին կոչէ և օգնութեյուն կը խնդրե, ավելի ազեկ է, որ չը լսեմ իր ազեկնոյ ձայնը։

ՏՈՒՂՐԻԼ.— Հայրենի՞ք կուզես դեռ պաշտպանել։

ԹԱԹՈՒԼ.— Այո՛։

ՏՈՒՂՐԻԼ.— Որո՞ւ դեմ։

ԹԱԹՈՒԼ.— Ձեզի։

ՏՈՒՂՐԻԼ.— Առանձի՞ն։

ԹԱԹՈՒԼ.— Սուր մը բավական է ինձ ընկեր։

ՏՈՒՂՐԻԼ.— Ո՛վ քաջ, կարե ալ հույսդ հայրենյացդ վերադանդնումեն։

ԹԱԹՈՒԼ.— Ինչո՞ւ։

ՏՈՒՂՐԻԼ.— Մինչև հայրենյաց անունը կրնա՞ կրել մոխրակույտ մը։

ԹԱԹՈՒԼ.— Զգուշացիր, ո՛վ թագավոր, գուցե այն աճյունին տակ դեռ կայծեր կան պահված... ինչպես գերիին սըրտին մեջ վրեժը. զարհուրելի պիտի ըլլա գուցե օր մը այն Հայը, որ փլատակաց խորշերու մեջ կծկած՝ ատելություն կը սնուցանե իր թշնամյաց դեմ։

ՏՈՒՂՐԻԼ.— Այն խորշը իր գերեզմանն է և Պարսիկն՝ իր մահը։

ԹԱԹՈՒԼ.— Հայը չը մեռնիր երբեք երբ Պարսիկը զարնե, գուցե՝ Աստված զարնե։

Տեսիլ Է

ՆՈՒՅՆՔ և ՋՈՐԱԿԱՆ ՄԸ

ՋՈՐԱԿԱՆ.— Տեր արքա՛, Արտուրան ամիրային որդին մեռավ։

ՏՈՒՂՐԻԼ.— Վերջապես։

ԹԱԹՈՒԼ.— Ես չըսի՞, եթե իմ զարկածս է չապրիր։

ՏՈՒՂՐԻԼ.— Պատրաստ եղի՛ր։

ԹԱԹՈՒԼ.— Ի՞նչ բանի։

ՏՈՒՂՐԻԼ.— Մեռնելու։

ԹԱԹՈՒԼ.— Գոհ եմ որ Պարսկին սիրտը ցավ մը քանդակելով գոնե կը մեռնիմ, բայց ավելի գոհ պիտի ըլլայի, եթե աուր ի ձեռին մեռնեի... Ա՜հ Հայաստան, քաղցր հայրենիք, վերջապես քու ազատությանդ արշալույսը չը տեսած՝ պիտի փակեմ աչերս. բայց Հայաստանի սրտին

վրա նստած տեսա արյունռուշտ Պարսիկը... Մեռնի՛լ... Թողուլ Հայաստանը, մեռնիլ շղթայակապ այն մարդերեն, որ կատեմ և կուզեմ անխնա ջախջախել... Ա՜հ, սո՛ւր իմ (կատաղաբար զինքը պատող զոհաց կը նայի). *Կատեմ զձեզ, ավեր սուրս և առանձին կռվիմ ձեզի հետ, ա՜հ, դուք վատ եք, կը վախնաք...*

ՏՈՒՂՐԻԼ.— *Վերջապե՞ս։*

ԹԱԹՈՒԼ.— *Տո՛ւր հրամանդ։*

ՏՈՒՂՐԻԼ.— *Տարեք և զարկեք ղինքը հոն ուր ամիրային որդին սպանվեցավ* (զոհը կը տանին զայն):

ԹԱԹՈՒԼ.— *Մնաս բարյա՛վ, Զարմուհի... Հայաստա՜ն* (կը մեկնի):

ՏՈՒՂՐԻԼ.— (Ուռելմեզի) *Զոհապե՛տ, իր աջ թևը կտրելով Արսուրան ամիրային ղրկե մխիթարելու համար ղինքը, որ որդին վատ բազկե մը մեռած չէ* (վառոգույը կիջնե):

<(ՎԵՐՋ Ա ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ԵՐԿՐՈՐԴ ԹՎԱԿԱՆ

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Բ

Տեսարանն է Անի բաղաքին ներքնակողմը.—Բագարատ իշխանի ապարանքը փառավոր սրահի մը.—Խորը դուռ մը.—Երկու կողմը պատուհան:

Տեսիլ Ա

ՋԱՐՄՈՒՀԻ (առանձին)

Ահա Անիի ալ զարկավ իր ճիրանը անգութ Ալփասլան. ի՞նչ սոսկում է այս, որ բոլոր Հայաստանը պարսաժածկեր է. մթութիւն մը կա բոլոր անմեղ ճակտի վրա, սևութիւն մը՝ ամեն սրտի մեջ... Ալ ամեն բան լմնցավ Հայաստանի համար, ալ կը մարի բոլորովին Հայաստանի հուսո աստղին արյուններանգ լույսը... Բագրատունյան անառնութենջ վիճակին մեջ Տուղրիլի պես ճիվաղ մը Հայաստանն անխնա ոտնակոխ ընելե վերջը իր սուրը կը ժառանգե իր եղբայրը՝ Ալփասլան, որ Հայաստանի հոգին կը լափե... Թաթո՜ւլ, քա՛ջդ իմ Թաթուլ, քեզ ալ Տուղրիլի անգութ սուրը լափեց... Պատերազմի արյունոտ դաշտին վրա, հեռու ինձնե, ինծի մնաս բարյավ ըսելեդ վերջը, այն տխուր մնաս բարյավը կյանքն ալ

ինծի կրկնեց, դեռ առագաստ չի մտած՝ գերեզման իջար, և այն հարսանեկան քողին տակ, որ մեր զլուխները պիտի միացներ, սգավոր քող մը ձգեցիր ինձ. գոնե գերեզմանի քար մ'ալ չը թողուցիր, որուն վրա գայի երբեմն լալու... Հայաստան, այս արյունալին ժխորին մեջ միմիայն հիմարը ապատ է ժպտելու (Ապրսամ դռանը մեջ կերևի):

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆ և ԱՊՐՍԱՄ

ԱՊՐՍԱՄ.— Նաև այն որ քաջ մ'է. ո՞վ իշխանուհի:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դո՞ւ ես, զորապետ...

ԱՊՐՍԱՄ.— Մի՛ խորշիր, Ջարմուհի, զորապետ մը՝ որ քու նշանածիդ հետ միևնույն պատերազմի դաշտին վրա կռվեցավ և միևնույն Պարսկական վերքն առավ, և երեն Թաթուլ մեռավ՝ ինքը դեռ ողջ է և կը սիրե:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Թաթուլը մեռած չէ՛ ինծի համար:

ԱՊՐՍԱՄ.— Պարսիկները զինքը դերի բռնած չպահանջի՞ն միթե:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Նա դեռ ողջ է ինծի համար:

ԱՊՐՍԱՄ.— Ո՞ւր է ուրեմն:

ՋԱՐՄՈՒՀԻ.— (սիրտը ցցնելով) Հոս է, կանգնած հսկայի մը պես, անմահ ճառագայթի մը պես:

*ԱՊՐՍԱՄ.— Ջարմուհի, կը ցավիմ որ կյանքիդ արժեքը չես դիտեր. ի զուր սերդ սև երազներով կը մարես և դեղեցկութեանդ վարդերը, որ հսկաներու նայվածքն անգամ խոնարհեցնելու կարող են, դառն արցունքներով կը խամ-

ընս... Գեղեցիկ ես, Զարմուհի՛, սիրվե՛ քաջե մը, սիրե՛ զինվոր մը, որ իր սուրեն առաջ կը սիրե քեզ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— *Ես սիրեցի և դեռ կը սիրեմ, զորապե՛տ... Մի՛ ջանար մեր սիրո դրախտին թովիչ օձը ըլլալ, դու՝ որ քու քաջագործություններուդ հարգելի ես ինձ, մի՛ ջանար քու սիրուդ առելի ըլլալ... Ես երկնքի այն ջահալից խորանին առջև ուխտեցի Թաթուլը սիրել, մեռա՛վ... կը հարգեմ իր հիշատակը ինչպես կը հարգե քաջ մը իր հաղթական սրուն բեկորը. երբ հիշեմ՝ դառն է իր մահը, երբ լամ՝ քաղցր է իր հիշատակը. զորապետ, մի՛ խռովեր սև ամպի մը պես կնոջ մը երազը, ես առի մնաս բարյավս սերեն, առի մնաս բարյավս աշխարհեն, և մտա այն մենաստանը, ուր հիշատակները կը փսփսան... Ես ա՛լ միայն հիշատակի մը և հայրենիքի մը համար կապրիմ։*

ԱՊՐԱՄ.— *Կուզե՞ս որ անիծեմ այն արևը, որ երկնքին մեջտեղ շողաց... Զարմուհի, լսե՛ զինվորի մը, որ սուր մը և սիրտ մ'ունի... Սուրս գոհ է, վառնվի իր տենչը կատարված է, կշտացած է թշնամյաց արյամբը, իսկ սիրտս դատարկ է, դու պիտի լեցնես զայն քու սիրովդ... Դու կըսես ինձ, թե գնա ուրիշ մը գրկե, մինչդեռ դիս բեղի կը քաշես և կը կաշկանդես ոսկի շղթաներով։*

ԶԱՐՄՈՒՀԻ.— *Թո՛ղ վիս... զորապե՛տ։*

ԱՊՐԱՄ.— *Կը սիրեմ զքեզ։*

ԶԱՐՄՈՒՀԻ.— *Մի՛ կրկներ իմ ականջիս այդ աղետալի բառը, որ դժոխոց բոցին նման կայրե զիս... Եթե դեռ սրտիս խորը հուզես, սիրտ տեղ առելություն պիտի գըտնես։*

ԱՊՐՍԱՄ.— Անգո՜ւթ...

ՋԱՐՄՈՒՀԻ.— Սերը չէ, որ քու սիրտդ կը լափե, այլ զժոխային բոց մը. դու սիրելն ավելի կուզես քու պինակցիդ սերը և հիշատակը սրբապղծել:

ԱՊՐՍԱՄ.— Ջարմուհի՜...

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հեռացի՛ր ինձնե, եթե չես ուզեր տավիլ անկե, զոր սիրել կը կարծես:

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, Պարսկի մը դաշույնեն ավելի սուր են և կը խոցեն սիրտս քու խոսքերդ, Ջարմուհի:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հարդե՛ պինակիցդ:

ԱՊՐՍԱՄ.— Ո՜հ, չեմ կրնար այն րոպին դիմանալ, որ իմ ներսս կը լափե, եթե առելութեյան տիպարն ալ ըլլաս՝ դարձյալ պիտի սիրեմ զքեզ:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Զգուշացի՛ր, զորապե՛տ:

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, մի՛ բարկանար, վասնզի ավելի գեղեցիկ և հրապուրիչ կըլլաս... Այն աչերուդ բոցերը, որ պիս նախատինքս համար զուրս կը ցայտեն՝ սրտիս բոցերուն հետ կը խառնվին և ավելի ահավոր կրնեն հոս վառող հրդեհը:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Տե՛ս, զորապե՛տ, ամենքը մեր բախտը պաշտարող Պարսկաց հետ քաջաբար կը պատերազմին, իսկ դու՝ որ քաղաքին զորաց հրամանատարը պիտի ըլլաս...

ԱՊՐՍԱՄ.— Դադրեցո՛ւր նախ սրտիս պատերազմը:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Վերջապես կը հրահրես կուրծիս տակ առելութեյան հուրը:

ԱՊՐՍԱՄ.— Այդչափ համառ մի՛ ըլլար, Ջարմուհի:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Գնա նախ պարտքդ կատարե՛... Մինչդեռ մեր Անի քաղաքը Ալփասլանի զորքերով պաշարված՝ օր օրի

վտանգն իրեն կսպառնա, մինչդեռ ամեն մարդ քաղաքին փրկութեանը համար ճիգ կը թափե, մանուկը պաշարող բանակին քար կը նետեն, քահանայն կաղօթե, ծերը կը հսկե, կինն իր ամուսինը կամ եղբայրը կը քաջալերե, դու հանդուգն քայլ մը կը նետես այն սեմեն ներս՝ ուր մենակյաց վշտահար և քողարկյալ կին մը կը սքնի և...

ԱՊՐՍԱՄ.— (ընդմիջելով) Ա՛լ բավական է:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դնա պարտքդ կատարելու, մի՛ թողուր որ սուրդ ժանգոտի և սրտիդ մէջ սպրդի դժոխային բոց մը. դնա հայրենիքդ պաշտպանելու, ջանա՛ որ հաղթական դափնիներով պսակյալ ճակատդ դժոխոց անդնդային սեմին չը խոնարհի, նայե՛ երկինքը, ուր աստղը կը փայլի, անբիծ ըրե սիրտդ այն աստղին պես. քույր մ'է որ քեզի կը խոսի... Օ՛ն, դո՛ւրս ել այս սեմեն, ուր սգո քողի մը տակ կը հեծեծ վշտահար կին մը, որուն սրտի մէջ հայրենյաց հույսն անգամ կը մարի, և դու աղետալի սիրո մը հետքը կը փնտռես ընդունայն և կը ջանաս վիս վատ մը ընել, սիրադրուժ մը...

ԱՊՐՍԱՄ.— Ա՛հ, ո՛չ, Զարմո՛ւհի... այլ ո՞վ պիտի մարե սըրտիս այս հուրը, որ միշտ կը լափե զիս:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Արցունքս, զոր ջերմաջերմ կը թափեմ դեռ իմ նշանածիս անհետ գերեզմանին վրա:

ԱՊՐՍԱՄ.— Ա՛հ, այդ չէ՛ կարող:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Խիղճ չունի՞ս ուրեմն:

ԱՊՐՍԱՄ.— (ոտքն իյնալով) Միայն սեր կզգամ:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ապրսա՞մ:

ԱՊՐՍԱՄ.— Զարմուհի՛:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Մեկը կուգա:

ԱՊՐՍԱՄ.— (ոտք ելնելով) *Ո՞վ։*

ԶԱՐՄՈՒՀԻ.— *Հայրս։*

ԱՊՐՍԱՄ.— *Վերջին խոսք մը ուրեմն...* (Զարմուհի սպառնական ձայնածո մը կուղղե) *Մնաս բարյա՜վ* (կը մեկնի)։

ԶԱՐՄՈՒՀԻ.— (միձակ) *Կուգե որ առեմ պինքը։*

Տեսիլ Գ

ԶԱՐՄՈՒՀԻ և ԲԱԳԱՐԱՏ

ԲԱԳԱՐԱՏ.— *Ասուա՜ծ իմ։*

ԶԱՐՄՈՒՀԻ.— *Ինչո՞ւ խռոված ես, հայր իմ, ի՞նչ կա, միթե քաղաքնիս վտանգի մե՞ջ է... խոսե՛...*

ԲԱԳԱՐԱՏ.— *Զարմուհի, Աղկան իշխանը, որ միշտ ձեռնտվություններ կըներ մեզ՝ մագաղաթի մը վրա անոնց խորհուրդները գրելով, գաղտնի մեր պարսպին ներս կը նետեր*[12]*), հիմա ալ նույնպես կը հայտնե թե Պարսիկները ահագին բաբան մը բերած են, որ 50—60 լիտր ծանրությամբ քար կը նետե եղեր*[13]*), և մեր պարիսպներն անով պիտի քարկոծեն... և այն բաբանը չը վնասվելու համար բամբակի հակերով պատսպարած են։*

ԶԱՐՄՈՒՀԻ.— *Միթե ատոր հետևանքը շատ ծանր կրնա՞ ըլլալ...*

ԲԱԳԱՐԱՏ.— *Ի՞նչ կըսես, աղջիկս... Երևակայե՛ անգամ մը, վաթսուն լիտր ծանրությամբ քար մը... եթե պարսպին զարնե...*

ԶԱՐՄՈՒՀԻ.— *Մի՛ հուսահատիր, հա՛յր իմ։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Եվ ի՞նչ հույս կրնամ նշմարել... Բոլոր քաղաքին մեջ քարոզ կարդացուցի և իմացուցի թե՝ ով որ հա-*

ջողի այն բաբանն այրել, ինքը մեծամեծ շնորհքներով պիտի վարձատրեմ, և եթե ինքը Պարսից կառավարության ալ զոհ ըլլա բաբանը մոխիր դարձնելն վերջը՝ իր բոլոր ընտանիքը երջանիկ վիճակի մը պիտի հասցնեմ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Աղեկ խորհեր ես, հայր իմ, անշուշտ կը գրանվի քաջ մեկը, որ այդ ձեռնարկը գլուխ հանե։

ԲԱԳԱՐԱՏ.— Տեսնե՛նք... եթե այս գործին մեջ ալ հաջողինք, ա՛լ քաղաքին դիմադրությանը վրա չեմ կասկածիր, մինչդեռ Պարսիկներն ալ մեծ կորուստ ընելուն համար շատ հավանական է, որ քաղաքին առնանը վրա բոլորովին հուսահատած մեկնին... Բայց եթե այսպիսի գործ մը սառնձնող քաջասիրտ մեկը չը գտնվի, խիստ աղետալի պիտի ըլլա մեր վիճակը. մտածե՛ մեկ մը, որ երբ անդութ Պարսիկն իր սև ոտքը քաղաքին սեմին վրա դնե, Անի՝ Բագրատունյաց այս գոռող, հաղթական և փառավոր մայրաքաղաքը, որ այնչափ քաջաց օրրան հանդիսացած է, Հայոց ազգին վերջին ակար մնացորդին ահագին գերեզմանը պիտի ըլլա... մոխրակույտ մը... Ասավա՞ծ իմ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Մ՛ի հուսահատիր, հայր իմ, դեռ չէ մարած հայրենասիրության վանմ կայծը հարվածյալ Հայոց սրտերուն մեջ, թեպետ բոլոր Հայաստանի հողին վրա Հայոց արյամբը չը կարմրած ափ մը անբիծ հող չը մնաց, բայց դեռ Հայոց խավարամած սրտին մեկ անկյունը նվիրական և անբիծ խորշ մը կա, ուր կը հրահրի հայրենյաց հուրը։

ԲԱԳԱՐԱՏ.— Իսկ մատնչությո՞ւնը... այդ չի՞ս բսեր... եթե վհատ Սարգիսի պես փառամոլ և ուրացող ճիվաղ մը

չըլլար՝ հիմա Անի վլարթ էր, Բագուհի էր[14]), Բագրատունի թագավոր մը կար իր թափուր գահին վրա, Գագիկ՝ որ հիմա օտարության և պանդխտության մեջ կը հալի ու կը մաշի...[15]) Մերկացուցին Հայաստանը իր թագեն և փառքերեն և արդ սգալի ու անշուք դագաղ մը կը պատրաստեն անոր համար։

ՋԱՐՄԻՒՀԻ.— *Իրավունք ունիս, հայր իմ... Ա՜հ, երանի թե ես ալ փոխանակ տկար և վախկոտ կին մը ըլլալու՝ հողի վրա պառկող և սուրին կրծնող վիճվոր մը ըլլայի և թուրս լոկ ընկեր առած խոյանայի արծվի մը պես պատերազմի դաշտը, թափիի թշնամյաց սև կառափներ, ազատության պռատյի և զարնեի, իսկ երբ սուրս խորտակեր՝ անոր բեկորին վրա ինկած, տայի շունչս հայրենյաց խոցյալ սրտին վրա։ Ավա՜ղ, երբ վիճվորի մը գոնե բախտակիցը պիտի ըլլայի, բախտը խլեց զայն ինձնե, թող չը տար, որ գոնե ինքը պատերազմի դաշտեն դարձած աներնը՝ ճակտին քրտինքը սրբեի և վերքը կապեի։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Թաթո՜ւլը։*

ՋԱՐՄԻՒՀԻ.— *Այո՛* (կուլա)։

ԲԱԳԱՐԱՏ.— *Մի՛ լար, Ջարմո՛ւհի, հանցանք է հայրենյաց նահատակի մը վրա լալը։*

ՋԱՐՄԻՒՀԻ.— *Գոնե իր վերջին մնաս բարովը լսեի իր բերնեն, համբուրեի իր վերքը, սրտիս վրա տար իր վերջին շունչը՝ փոխանակ անարգ թշնամյաց դեմ ոտնակոխ ըլլալու, գոնե գերեզման մը ունենար, որ արցունքովս թրջեի։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Մի՛ լար անոր վրա, մինչդեռ հայրենիքը ժըպտեցավ. միմիայն հարգի իր հիշատակը։*

ՋԱՐՄՈՒՀԻ.— Միշտ պիտի հարգեմ, Տա՛ր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Ա՛ղջիկս, գոցենք Թաթուլի փառաւոր դերեզմանը և չը խոովենք իր դյուցազնական քունը և մեր արդի անորոշ կացութեանը վրա խորհինք, ապագային ես պիտի ըլլամ պատասխանատու Անիի վերականգնմանը կամ կործանմանը, մեր պարապին պարնող այն ահագին քարը խոր վերք մը պիտի բանա սրտիս մեջ... Արդեն այս տարաձայնութիւնը մեծ հուզմունք պատճառած է քաղաքին մեջ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հուսա՛, Տայր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Դյուրին է հուսալ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Անշուշտ հնարք մը կգտնվի... ինչպես որ Պարսից այնչափ հանդուգն ջանքերն ի դերև հանող հնարքներ եղան։

ԲԱԳԱՐԱՏ.— Շատ անգամ այն Պարսիկ իշխանն էր օգնողը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Անգամ մ՛ալ Աստված կօգնե։

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ և Տ. ՎԱՀՐԱՄ

Տ. ՎԱՀՐԱՄ.— Այո՛, Աստվա՛ծ։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ ըրիր, տեր Տայր։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ի՞նչ կրնե ծեր քահանա մը. ժողովուրդը խրատեսուել և ապրիլ։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ վիճակի մեջ է ժողովուրդը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Հուսահատ վիճակի մը մեջ էր, բայց ես քաջալերեցի զիրենք իմ տկար ձայնովս երկինք ցուցնելով և Ամենակալին բարութիւնը հեղհեղելով, որ իր բարկու-

թյունը մեր վրա չը թափե. ի՞նչ հանդուգն փափաք, կուզեք որ Աստված կապե Հայուն վերքը, որ Հայը Հայուն կուտա։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Այնպես է։

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրեմն կը հուսահատի՞ս մեր կացութեանը վրա։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Բնավ. հույսը դևերմանին դառնը մեջ անպամ կը շողա... Հույսը Աստուծո ժպիտն է... Կը դիմա Աստված, երբ երկնքի համապատակերը կը տեսնի մարդուս վրա, որ արցունքներով շողացող պայծառ աչեր իրեն կը նայի հուսալից. վա՛յ մեզի, որ երբ մեր քաղքին մեջ մատնիչ մը կը շնչե և կը խոկա անդունդը նայող սև ժայռի մը պես։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ ընելու է ուրեմն։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Պետք է հզորի մը պես ջանալ և խրախուսել տկարը... Ասով կրնանք Բշնամյաց հանդուգն ջանքերուն դիմադրել. այս է մեր ընելիքը, եթե դեռ Բշնամին հազթանակ, Աստուծո կամքն է այն, դուցե ալ շատ շնչեց և փառավորեցավ երկրիս երեսը Հայը, և վերադարձ կամքը կուզե որ սորա հակա և փառավոր անունը թաղվի իր երկրին հոյակապ շենքերուն վերատակին ներքև, ինչպես ուրիշ ազգեր և երկիրներ վշրեցան այն Աստվածային կամաց անդիմադրելի փոթորկին առջև։

ԲԱԳԱՐԱՏ.— Ա՜հ, սոսկալի է այդ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ ահագին անդունդ մը պետք է Հայը թաղելու համար։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Աստուծո ափ մը հողը կը բավե, Ջարմուհի։

ԲԱԳԱՐԱՏ.— Հայը դեռ շատ կանգուն կը կենար, եթե երա-

կացը մեջ շրջան չառներ իր հայկական արյանը խառնըված այն թույնը, որ չեմ գիտեր ուսկից ժառանգած է... Իր ներքին վերքերը Հայաստանը օրհասական ըրին և ո՛չ թե իշնամյաց արտաքին հարվածները. կը զարմանամ թե ինչպե՞ս Հայաստան դեռ կը շնչե կանգուն և դողդոջուն. և իր փեռնկտյալ ճակտին վրա դեռ անջինջ կը կրե ազգության դրոշմը... Հայաստանի փլատակաց մեջեն միշտ Հայու գլուխներ կը փթթին հետզհետե:

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ազատության արմատ ձգած ծաղիկներն են անոնք, այն ազատությունը որ Հայկ իր նետովը հնչեցուց ու տարածեց և փառամոլ ուրացողք հանդգնեցան զայն իրենց սրտին մեջ խեղդել:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Անե՞ծք անոնց:

Տ. ՎԱՀՐԱՄ.— Դժոխք իրենց հետ կը խոսի, անոնք՝ որ երկրի վրա երկաթե շղթա անցուցին ուրիշին, իրենք բոցեղեն շղթա կը ժառանգեն հոն, ուր արդարությունը կըրատա իր ամենեն ահեղ ձայնովը:

ԲԱԳԱՐԱՏ.— Միայն այն վատերը իջիվ թե իյնային Աստուծո շանթեն՝ փոխանակ հայրենիքն ալ թավալելու:

Տ. ՎԱՀՐԱՄ.— Հայաստան սնուց զանոնք:

ԲԱԳԱՐԱՏ.— Ճշմարիտ է:

ՋԱՐՄՈՒՀԻ.— (պատուհանեն ճայելով) Հա՛յր իմ, քաղաքին մեջ ժխորը հետզհետե կը բարձրանա, և ժողովուրդը ալեկոծյալ ծովու պես կը տատանի:

ԲԱԳԱՐԱՏ.— Արդյոք պիտի ներկայանա՞ ինձ քաջ մը խոստանալու համար թե ինքը պատրաստ է այն ահագին բաբանը այրելու ձեռնարկել:

Տ. ՎԱՀՐԱՄ.— Մանազկերտցիք ալ Մանազկերտի առջև պար-

սից մեկ ահագին բաբանը այրեցին հնարքով մը[16]) Տուղբիլի արշավանց ժամանակ. բայց չեմ հուսար, որ Պարսիկք այս գործը դյուրությամբ հաջողցնել տան մեզի։

ԲԱԳԱՐԱՏ.— Եթե ձեռնարկողը մահը աչքը առնե՝ գործքը իրենց վրանը քաշված ժամուն կրնա դեռ Պարսիկներն իր վրա չը հարձակած այն ահագին բաբանը հրոտ ճարակ ընել և գուցե ձեռքերնեն ալ փախչիլ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Չկա արդյոք այդպիսի քաջասիրտ և հայրենասեր մեկը։

Տեսիլ Ե

ՆՈՒՅՆՔ և ԼԵՎՈՆ

ԼԵՎՈՆ.— Վեհա՜ղն իշխան։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ կը խնդրես, ո՜վ պատանի։

ԼԵՎՈՆ.— Դու քաղաքացվոց մեջ քարող հանեցիր պանելու համար մեկը, որ հանդգնի ի սեր հայրենյաց՝ Պարսից մեր քաղաքին դիմաց կանգնած և մեծ վտանգ սպառնացող այն ահագին բաբանն այրել։

ԲԱԳԱՐԱՏ.— Այո՛, և ձեռնարկողին մեծամեծ շնորհներ խոստացա, և եթե ինքը մեռնի՝ իր ընտանյաց։

ԼԵՎՈՆ.— Ես շնորհքներ չեմ ուզեր և ոչ ալ ընտանիք ունեմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Դո՜ւ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ասաված իմ։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Քաջասիրտ տղա։

ԼԵՎՈՆ.— Այո՛, ես որ որբ եմ, ո՛չ հայր, ո՛չ մայր և ո՛չ եղբայր ունիմ[17]), այլ միայն թշվառ հայրենիք մը, ահա այն է հայրս, մայրս ու եղբայրս. հայրենիք մը ունիմ

միայն, որ կը սիրեմ և զայն սիրելու համար կղգամ, որ պետք է մեռնիլ, մեռնիլ, խառնել իմ երակացս արյունը այն դյուցազանց թափած արյան հեղեղներուն, որք իրենց աշխարհեն քշեցին տարին գերության ահագին շղթաները և անդունդը թափեցին։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ծկո՛ւր դրկեմ զքեզ սրախս վրա, ո՛վ նորատի դյուցազն։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հայաստանի հրեշտա՛կը։

ԲԱԳԱՐԱՏ.— Անիի հաղթական բուրգը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Պիտի կրնա՞ս հաջողիլ։

ԼԵՎՈՆ.— Եթե Հայաստան դեռ պիտի ապրի։

ԲԱԳԱՐԱՏ.— Կապրի Հայաստան, եթե քեզի պես քաջեր ըլլան։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Երանի՛ քեզի, որ այդ նորատի հասակիդ մեջ հայրենյաց փրկարար մը պիտի հանդիսանաս։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ա՛հ, հայրենասիրությունն ի՛նչ գեղեցիկ ճառագայթ մ՚է վահ և անմեղ ճակտի մը վրա (աճապին բոմբյուն մը կը լսվի խորեն) Աստվա՛ծ իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Ահա առաջին հարվածը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Սիրա ա՛ռ քաջասիրտ տղա։

ԼԵՎՈՆ.— Բանի մը պետք չունիմ... օրհնությունդ, դինվորդ Աստուծո։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Օրհնյա՛լ ըլլաս, զավակս (ձեռքերը գլխուն կը դնե)։

ԲԱԳԱՐԱՏ.— Պատրաստ ըլլանք (Տ. Վահրամի) *դու դնա՛ հնեղնցի, տե՛ր հայր, ազոթելու, ես ալ երթամ քաղաքացիքը քաջալերելու* (Ջարմուհիին) *իսկ դո՛ւ։*

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հայրենակցաց վերքերը կապելու (ամենքը կը մեկնին.— Պատկերը կը փոխվի):

ՊԱՏԿԵՐ Բ

Անկի պարսպաց առջև դաշտակ մը.—Տեսարանին խորը բարձր.— Պարսպին վրա խոց մը կերևի:

Տեսիլ Զ

ԱԼՓԱՍԼԱՆ, ՈՐՏԵՄԼԵՋ և ՋՈՐՔ

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ահա մեր առաջին հարվածը պարսպին վրա ահագին վերք մը բացավ[18]*, թող տեսնեն Անիցիք և իրենց փրկութեանը վրա հուսահատած անձնատուր ըլլան առանց Պարսկաց հաղթական ճակատը քրանելու:*

ՈՐՏԵԼՄԵՋ.— Այսչափը բավական է վիրենք ահաբեկելու, արքայդ վեհափառ... Քիչ մը ետքը պատրաստվոր մը կը փութա հաշտութեան պայմաններ առաջարկել:

ԱԼՓԱՍԼԱՆ.— Բայց ես երբեք չը պիտի դիմեմ իրենց վրա, այսչափ տանն իմ զորութեանս ընդունայն դիմադրելուն համար, ես այսչափ ժամանակի մեջ հարյուր քաղաք կապտած, քանդած և ջարդած էի... Մանավկերտի և պարսկաց վրեժը պիտի առնեմ[19]*) բոլոր Հայաստան ավերակ դարձնելով, այսպես ընդունելի Պարսկաց թագը իմ դյուցազն Տուղրիլ եղբորմես. իր ցուրտ գերեզմանին և արևին վրա այս ահավոր ուխտը կրկնեցի. ջնջել Հայաստանը:*

ՈՐՏԵԼՄԵՋ.— Եվ պիտի հաջողիս, տե՛ր արքա։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Կերդնում ահավոր սրույս վրա։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Քու մեկ հրամանդ կը բավէ՝ Հայաստանի Հայերը սարսելու։

ԱԼՓԱՍԼԱՆ.— Թող Հայաստանի ավերակները կրկնեն սոսկմամբ առյուծ Ալփասլանի անունը, ուր նա որոտաց. այս է այն հիշատակը, որ հոս պիտի թողում և հայկական կամաքը մը իմ շքեղապանծ գահիս պատուանդան։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Տե՛ր արքա, քեզ երախտապարտ պիտի ըլլա Պարսկաստանի ապագայն։

ԱԼՓԱՍԼԱՆ.— (զորաց) Դուք ալ գացեք, քաջեր, ձեր վրաններուն մեջ հանգչելու, և պատրաստ եղեք քիչ առնեն այս գոռոզ քաղաքը կործանելու և կողոպտելու... (զորքերը կը մեկնին) քաջդ Որտելմեզ, մենք ալ երթանք հանգչելու, այս հարվածը բավական է (կը մեկնի)։

Տեսիլ Է

ԱՂԿԱՆ (առաճձին)

Ահա Անիի պարսպին վրա խոր վերք մը, վերջապես պիտի տապալի նա։ Ալփասլան կը կատղի՝ կործանելով որ իր բոլոր հնարքները քաղաքացվոց նախատանքեր ըլամբը կը վճռանան, չը գիտեր որ իր բանակին մեջ մատնիչ մը կա, որ իր բոլոր խորհուրդները զաղտագողի քաղաքացվոց կը հաղորդե... Ա՜հ, Զարմուհի, գեղանի աղջիկ, դու ես որ դիս այս մատնութիւնները գործադրելու կը դրդես... Անիծյալ ըլլա այն օրը, որ քեզ տեսա այդ պարսպին վրա և սիրեցի. ա՜հ, կը սիրեմ ու կա-

մոթհարիմ, կը մատնեմ և կը կատղիմ. անիծյա՛լ սեր... Պարսիկ մը Հայուհի մը սիրե և անոր սիրուն իր Հայրենիքը մատնե՞... բայց սերն ամեն բանի կը հաղթե, պետք է տեսնել դինքը (կը մեկնի):

(Պարսպին վրա հետաքրքիր գլուխներ կերևին):

ՆԵՐՍԵՆ.— Պատերա՛զմ, պատերա՛զմ:

Տեսիլ Ը

ՀԵՎՈՆ

(Միևնակ կերևի, ձեռքը նիզակ մը, որուն ծայրը մագաղաթ մը կը շարժի):

ՀԵՎՈՆ.— Պատգամավո՛ր, պատգամավո՛ր (բաբանին կուգե մոտենալ):

ՊԱՐՍԻԿՔ.— (դրսեն) *Բաբանը պիտի այրե՞, բաբա՛նը.* (մեծ աղմուկ):

ՀԱՅԵՐ.— (պարսպին վրայեն) *Փախի՛ր, Պարսիկները կը հասնին:*

ՀԵՎՈՆ.— (որ դյուրավառ նեղուկ մը բաբանին վրա թափած էր, բաբանը կսկսի բռնկիլ, և՝ կուգե փախչիլ, Պարսիկները ամեն կողմե զինքը կը պաշարեն) *Պարսկաց ձեռք չեմ իյնար* (կը դառնա շուտով և հանկարծ բաբանին բոցին մեջ կը նետվի[20]) և աչքերը երկինք հառելով կաղաղակե) *Կեցցե՛ Հայրենիք* (Պարսիկները, որ զինքը պաշարած էին, ապշած և կայծակնահար կը մնան.— Վարագույրը կիջնե):

<(ՎԵՐՋ Բ ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Գ

Տեսարանն է Բագարատա ապարանին մեջ կամարակապ և սյունազարդ սրահ մը. պատեն կախված զենքեր և զրահներ.—Տեսարանը մութ է:

Տեսիլ Ա

ԲԱԳԱՐԱՏ և Տ. ՎԱՀՐԱՄ

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ի՞նչ կը մտածես, իշխան։

ԲԱԳԱՐԱՏ.— Բաբանը և միանգամայն ինքզինքն այրող հայրենասեր պատանվույն վրա կենտրոնացած է ուշս... Ա՜հ, որչափ սրտաշարժ և վսեմ էր այն վայրկյանը, երբ նա «Հայրենի՛ք» դոչելով բոցին մեջ նետվեցավ։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Հիրավի, զարմանալի էր իր արիասրտությունը. սիրած Պարսից ձեռք չիյնալու համար ինքզինքը կրակը նետեց, և զինքը շրջապատող Պարսից այն կատաղած խումբը շանթահար մնաց, երբ այն հայրենասիրական վսեմ տեսարանը տեսավ. Ալփասլան Անին պաշարելեն ի վեր է, որ շատ հանդուգն քաջագործություններ տեսավ Անիցվոց կողմանե։

ԲԱԳԱՐԱՏ.— Եվ դեռ մինչև հիմա Անին իր ճանկերուն տակ

առնել հուսահատած չը մնկնիր, և մինչև ցե՛րբ այս-պիսի սրտառանջ վիճակի մը մեջ պիտի տատանինք։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ինչո՞ւ սրտառանջ ըլլա մեր վիճակը, երբ մեր հույսը ցամքեցնող բաբան մը կար, այն ալ մոխիր դարձավ քաջի մը կրակովը։

ԲԱԳԱՐԱՏ.— Եվ միթե դեռ նորանոր .. կատաղի և Տանդուգն փորձերու չի՞ պիտի ձեռնարկեն։

Տ.ՎԱՀՐԱՄ.— Թող այդպես ըլլա. մենք ինչվան հիմա ինչ որ ըրինք, ասկից ետքն ալ նույնը կընենք դարձյալ, արիու-թյուն և միություն. դարձյալ կը կրկնեմ, եթե մեր բա-զաքին մեջ մատնիչ մը չը խոկար, կրնայինք խորտակել այսպես Ալփասլանի երկաթե կամքը։

ԲԱԳԱՐԱՏ.— Այս անգամ Պարսիկին է կարգը. նա կընե մատնությունը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ագկան իշխանը։

ԲԱԳԱՐԱՏ.— Կը զարմանամ այդ իշխանին մեր վրա ցցու-ցած համակրական ցույցերուն և անձնվիրությանց վրա[21]). ես այնպես կը կարծեմ, թե զազանիք մը կա ծածկված իր զործոցը ատկ... կամ գուցե բան մը կա-կընակալ մնցնե։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ի՞նչ ակնկալություն կրնա ունենալ, երե ճըշ-մարիտ Պարսիկ մ'է, քանի որ Պարսկի մը երջանկու-թյունը իր խոզխոզած Հայոց թվույն քանակութենեն կախում ունի, ես այնպես կը կարծեմ, թե այս իշխանը պարզապես կը զիա մեր զառն կացությանը վրա, նա գուցե Պարսկաստանի անապատներուն մեջ զոհար մ'է։

ԲԱԳԱՐԱՏ.— Գրեթե նա եղավ Անիի ազատարարը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ճշմարիտ է։

ԲԱԳԱՐԱՏ.— Եթե դեռ Պարսիկք բաբանին այրելուն վրա կատաղած ուրիշ ձեռնարկի մը խորհուրդ ընեն, մեր բարեսիրտ իշխանը սովորականին պես դաղտնի կերպով անշուշտ կիմացնե մեզի։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Այլ դեռ ի՞նչ մնաց գործադրելու Պարսից համար, ինչ որ կուզեն թող ընեն. բավական է որ մենք միարան և արիաբար՝ հարվածը ձեռքերնիս՝ հակենք այն վիշապին գլխուն վրա... Ո՞վ երկինք, մենք կազոթենք և կը զարնենք, այս է մեր զորութիւնը, դու ալ օգնե, որ Հայութեան վերջին արձանն ալ չը տապալի բշնամյաց առջև։

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆՔ և ՊԱՀՆՈՐԴ

ՊԱՀՆՈՐԴ.— Վեհազն տեր, այս մագաղաթը գտանք դարձյալ Անիի պարսպաց ներսը։

ԲԱԳԱՐԱՏ.— Ագկան իշխանը գրած է անշուշտ (կառնե)... տեսնենք (կարդալով) «Որտեղմեզ գորապետը գորաց գլուխն անցած՝ Անիի արևելյան պարսպացը տակ խրամատ կը փորեն»[22]։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ա՜հ նենգավորներ։

ԲԱԳԱՐԱՏ.— Պետք է ճանկեր և քարեր պատրաստել՝ գորքերը քարկոծելու և զորապետը որսալու համար։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Բայց պետք չէ դանդաղիլ, իշխան, պետք է շուտով գործի սկսիլ, որովհետև վտանգը կսպառնա վայրկենե վայրկյան։

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրեմն երթանք։

Տեսիլ Գ

ԱՊՐԱՍԱՄ (առաւնթին ներս կը մտնէ)

Վերջապես չեմ կրնար սանձել սրտիս այս փրփրեցող դժոխքը. պիտի սեանեմ զինքը, պիտի իյնամ իր ոտքը, պիտի նետեմ աւուր իր առջին ըսելով՝ «ա՛ռ աւուր, տո՛ւր սերդ». և եթե դեռ մերժե իմ սէրս, սոսկալի պիտի ըլլամ իմ սրտիս դժոխքին նման... կը սիրեմ ես, ինչպես կը սիրե վագրն իր արյունաթաթախ որսը. կը սիրեմ, ինչպես կը սիրե Պարսիկն իր Ներքինին կը գայրանամ ինձ դեմ, երբ կսպառնա, աստղի մը նման շողշողուն կրլլա ինձ համար. երբ կը ժպտունի՝ ճառագայթ, երբ կը շառագնի՝ բոց մը... Սակայն դարձյալ կը գոգամ իրմե, ինչպես ոճրագործն աստղե մը... Ա՜հ, ուրի ձայն մը կա... ինքն է կարծեմ...

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆ և ՋԱՐՄՈՒՀԻ

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դու հո՞ս, վրթապետ:

ԱՊՐԱՍԱՄ.— Քեզ սեանել ուզեցի:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ բանի համար:

ԱՊՐԱՍԱՄ.— Վասնզի քեզնե հեռու գառն և խամար է ինձ կյանքը. Ջարմուհի, քու ժպիտդ միայն բաղդը և լուսավոր պիտի ընե գայն:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ջորապե՛տ:

ԱՊՐԱՍԱՄ.— Ինձ դեմ մի՛ գայրանար, Ջարմուհի, այլ անիծե՛ այն ձևոքը, որ այս կրակը սիրտս ձգեց:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ձեզ այսչափ հանդուգն չէի կարծեր։

ԱՊՐՍԱՄ.— Ա՜հ, ի՞նչ ընեմ, եթե սերը զիս այսչափ հանդուգն կընդ և վրաս կը ծիծաղի դժոխային ծիծաղով մը։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Գնա՛, ա՛լ առելի ես ինձ։

ԱՊՐՍԱՄ.— Ջարմուհի՛։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ա՛նգութ, ի՞նչ կուզես այն կնոջմեն, որ երազ մը ունի լոկ, տխուր վերջալույս մը... Հեռացի՛ր ինձմե։

ԱՊՐՍԱՄ.— Առանց քու թևերուդ մեջ սարսռալու... անկարելի է այդ, այն առեն սիրոս քեզմե կը բաժնվի, երբ գլուխս մարմնես զատվի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Դեռ կը հանդգնի՞ս։

ԱՊՐՍԱՄ.— Պիտի սիրեմ զքեզ։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Բայց ես զքեզ կատեմ։

ԱՊՐՍԱՄ.— Դու առե, ես սիրեմ, տեսննք ո՞վ պիտի հաղթանակի (կուզե մոտենալ աճոր)։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Հեռո՛ւ, վաս մարդերե։

ԱՊՐՍԱՄ.— Մի՛ դպրեր վիս, Ջարմուհի։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Ամո՛թ քեզի... ա՛լ արտասիր Հապթական սուրդ... Թաթխեցիր զայն վատության ադմին մեջ, ալ վատ պիտի հրատարակեմ քեզ քաջագ մեջ. պիտի ըսեմ թե Ապրսամ զինվոր չէ, այլ ոճրագործ մը, որ կանանց արտերուն հետ կը պատերազմի... Զորապե՛տ, հոս է Թաթուլի սովերը՝ մեր երկուքին մեջ արձանացած, դեռ պիտի հանդգնի՞ս։

ԱՊՐՍԱՄ.— Ո՛չ թե մեռյալի մը սովերը մեր մեջտեղ, այլ եթե դժոխք մ'ալ ըլլա, պիտի անցնիմ քեզ գրկելու համար իմ բոցավառ սրտիս վրա. (կուզե վրան հարձակիլ)։

ՋԱՐՄՈՒՀԻ.— (հանկարծ կը նետվի և պատին վրայեն կախ-

ված սուր մը կը ճափշտակէ. Ապրահամ կանգ կառնէ) *Մոռցի՛ր եթէ կրնաս... Ա՜հ, ակա՞ռ կը կարծէիր դիս քու հանդուրդն վատութեանդ դեմ... կը կարծես թէ Հայուհի մը չը՞ կրնար սուր շարժել... Տե՛ս... պատերազմի դաշտին վրա ճակատ առ ճակատ մենամարտած թշնամիվույզ կը նմանիմ, կին մը՝ ոչ միայն սուր, այլ տապար ալ կը գործածէ իր պատիվը պաշտպանելու և չը սրբապղծելու համար անոր հիշատակը, զոր կը սիրէ... Հեռացի՛ր հալածական կնոջ մը առելութեան առջևեն:*

ԱՊՐԱՀԱՄ.— *Պիտի դղջաս, Զարմուհի, վաղվան հալածական քայլս դնպի զժոխք պիտի ուղղվի:*

ԶԱՐՄՈՒՀԻ.— *Դու որ դինվոր մ'էիր և սուրովդ չը կրցար խոնարհեցնել կնոջ մը ճակատը, ալ ուրիշ զենք չունիս որ գործածես. վատ ես, չեմ ուրանար այդ, բայց ես պատիվս համար կռվող Հայուհի մ'եմ, Հայուհի մը, որ առաղաստին մեջ կը զողզոջա, բայց անոի զուրս հակայի մը պես հանդուրդն է:*

ԱՊՐԱՀԱՄ.— *Դողա՛ վրեժխնդրութեննես, Զարմուհի:*

ԶԱՐՄՈՒՀԻ.— *վա՜ռ:*

ԱՊՐԱՀԱՄ.— *Պիտի տեսնես* (սպառնալից կը մեկնի):

Տեսիլ Ե

ԶԱՐՄՈՒՀԻ (առանձին)

Ա՜հ, Թաթո՜ւլ, սրտիս հատորը, ինչո՞ւ դիս որբ և միայնակ թողուցիր, տե՛ս, քու զինակիցներդ անգամ կը հանդգնին մեր սգավոր և թափուր առագաստը մտնել... Մոռցան զքեզ ամենքը, միայն քու Զարմուհիդ չը մոռ-

ցավ, որ իր սրտին խորը քու մշտնջենավոր մահարձանդ կանգնեց... Կը թքնեմ մահարձանիդ ամբարիշտ և վատ պինակիցներեդ մեկը. եթե հավիտենականության շղթայն կոտրեր, կիջնեիր շանթի մը պես այն անօրենին գլխուն և կը չախչախեիր, այլ ավա՜ղ, անդուի է հավիտենականության շղթայն... Լռեցե՛ք, հաղթության փողեր և աղոթքի զանգակներ, երբ ես իմ Թաթուլիս վրա կուլամ։

Տեսիլ Զ

ՆՈԻՅՆ և ԲԱԳԱՐԱՏ

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրախ լուր մը, Զարմուհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ լուր, հայր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Պարսից Որոնելմեզ սպարապետը գերի բռնվեցավ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչպես, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Անշուշտ զարմանալի կը թվի քեզ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Շատ հետաքրքրական բլլալու է պատմությունը։

ԲԱԳԱՐԱՏ.— Բավական։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Տեսնենք, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Ապկան իշխանը մադաղաթով մ'իմացուց, թե Պարսիկները իրաման կը փորեն քաղաքին պարսպացրատակ, անմիջապես պահնորդներու ձեռք ահագին քարեր և երկաթե ճանկեր պատրաստել տվի, և սկսան բաղաքացիք Պարսից զորքերը քարերով չախչախել, քաչ որ րավար մ'ալ նույն միջոցին հաչողեցավ երկաթե ճանկով

Որեւէմեկ զորապետը բռնել[23]). և ուրիշ ընկերներու օգնութեամբ օդին մեջ բառնալով վեր քաշել. Պարսիկ զորապետը կատղած և իր քարկոծյալ զորաց օգնութենեն հույսը կտրած՝ իզուր կը պոռար, և ինքզինքն այն ճանկեն ազատելու համար ընդունայն կը թոթվըտար օդին մեջ... Արդ երևակայեն ին ս՛րշափ կրնա կատղիլ Պարսիկ սպարապետ մը, երբ Հայու մը ճանկեն բռնված օդին մեջ խաղալիքի մը պես կը տատանի և սրծիլ կաշխատի:

ՋԱՐՄՈՒՀԻ.— *Հիրավի նշանավոր որս մ՛են բռներ մեր քաղաքացիքը:*

ԲԱԳԱՐԱՏ.— *Այդչոք ս՛րշափ պիտի կատղի Ալփասլան:*

ՋԱՐՄՈՒՀԻ.— *Երանի՜ ին ալ Անին տանեին հետաւտաներ:*

ԲԱԳԱՐԱՏ.— *Դուցե, որովհետև շատ հանդուգն քաջագործութիւններ ցույց կուտաս Անիի ժողովուրդը... Այս նոր հաջողութեան համար ալ իշխաններդ և զորականներդ խընճույք մը խնդրեցին ինձնեն այս ապարանիս մեջ:*

ՋԱՐՄՈՒՀԻ.— *Ուրեմն երթանք հյուրընկալելու* (կը մեկնին.— Պատկերը կը փոխվի):

ՊԱՏԿԵՐ Գ

Փառաշեն սրահ մը, ուր շքեղազարդ սեղան մը դրված է:

Տեսիլ է

ՆՈՒՅՆՔ, ԳՈՒՐԳԵՆ, ԲԱԲԳԵՆ և ԻՇԽԱՆՔ

ԲԱԳԱՐԱՏ.— *Ահա այն կամարակապ և այունապարդ սրահը, ուր շատ ավագանյաց խնճույքներ և ժողովքներ տեղի*

ունեցած են. ահավասիկ սեղանն ալ պատրաստ է, իշխանք։

ԳՈՒՐԳԵՆ.— *Մինչդեռ մեր նոր հաջողությանց գոհությանը համար եկեղեցւոյ զանգակները կը հնչեն, մենք ալ հոս գավաթներ բախենք Հայաստանի կենաց։*

ԲԱԲԳԵՆ.— *Ճշմարիտ է, ա՛լ բավական դողացինք Պարսից առջև։*

ԳՈՒՐԳԵՆ.— *Թող մեր խնճոյից ձայները մինչև Ալփասլանի ականջը հասնին։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Կը կատպի նա։*

ԲԱԲԳԵՆ.— *Վագրի մը պես։*

ԳՈՒՐԳԵՆ.— *Կը կրճտաւ ակռաները, կերկնցնի ճիրանը, բայց ահագին պատեր և երկաթի կամք մը կը գտնի՝ փոխանակ Հայուն օձիքը գտնելու։*

ՋԱՐՄԻՒՀԻ.— *Ահա հայտնի կերևի, ո՛վ վեհազն իշխաններ, որ Ալփասլանի նման անապատի առյուծի մը զորութեանը այլևայլ դեմ դնելնուս և զայն մինչև անգամ կորուստներով հուսահատեցնելնուս միակ պատճառը մեր մեջ սերած միութեան է եղեր, և այն հայրենասիրութեան, որ ամեն զգացմանց վրա կը հաղթանակե... Ա՜հ, շատ սքանչելի կը տեսնեմ Հայուն սրտութեանը, կը պնդեմ թե աշխարհի վրա հայրենասիրութեան կրակով հրահրած պայծառ ճակատ մը ավելի գեղեցկութեան չը կա... և իր վիրաց արյան հոտոմը մեկ ձեռքովը բռնող և մյուս ձեռքովը թշնամին զարնող պինվորին ճգնաժամեն ավելի վսեմ տեսարան մը չը կա։*

ԳՈՒՐԳԵՆ.— *Իշխանուհին շատ գեղեցիկ խոսեցավ։*

ԲԱԲԳԵՆ.— Արդյոք դեռ ո՞րչափ պիտի կատգի Այփասլան իր զորապետին գերի բռնվելուն վրա։

ԳՈՒՐԳԵՆ.— Մանավանդ որ գրեթե բանակին հրամանատարությունը ընողը այն էր, շատ քաջ զորապետ մ'է այն... Գագիկ Աբասյան՝ կարուց թագավորին հրամանատարությանը տակ Տուղրիլի արշավանաց դեմ պատերազմած առեննիս բանակին մեջ զորապետ էր նա[24]) (Բարգեն), այնպես չէ իշխան։

ԲԱԲԳԵՆ.— Այո՛, երեկվան պես կը հիշեմ այն պատերազմը։

ԲԱԳԱՐԱՏ.— Մեր քաղաքացիքը ազեկ որս մը որսացին իրենց ճանկերովը՝ ի շնորհս Ազկան իշխանին, որ սովորականին պես մագաղաթով մը Պարսից պիշերային դավը մեզ իմացուց զգոնի կերպով։

ԲԱԲԳԵՆ.— Կը զարմանամ Պարսիկ իշխանի մը Հայոց ցցուցած այս տարօրինակ անձնվիրությանը վրա։

ԳՈՒՐԳԵՆ.— Ես այնպես կը դուշակեմ, որ այդ անձնվիրության տակ տարօրինակ գաղտնիք մը ըլլալու է։

ԲԱԲԳԵՆ.— Այնպես ըլլալու է, եթե ոչ անկարելի է, որ Պարսիկ մը Հայոց վրա այսչափ խնամք և հոգ ունենա։

ԳՈՒՐԳԵՆ.— Բայց սևդանը պարապ մնաց։

ԲԱԲԳԵՆ.— Ուրեմն խմենք։

ԲԱԳԱՐԱՏ.— Եթե կը հաճիք, մեր Տին Գողթան բանաստեղծներուն[25]) մեկ երգը նախ նվագենք, վասնզի երաժշտությենն շատ կախարժիմ ես։

ՀԱՄԵՆՔՐ.— Երգենք։

ԵՐԳ ՆՆՃՈՅԻՑ

Խմենք գինին, աճուչ գինին կենաց բաժակ,
Քաչաց բաժին դրավ երկինք, համենք հատակ.
Տխուր դիմաց վարդ կը սրսկե կարմիր գինին,
Աչաց ծիծաղ, շրթանց ոգի տա բոցագին:

Խմենք գինին, աճուչ գինին կենաց բաժակ,
Քաչաց բաժին դրավ երկինք, համենք հատակ.
Գինին ոգի, սեր կարծարծե մաշած սրտին,
Մենք զայն խմենք, և բող վերեն հրեշտակք ժպտին:

ԳՈՒՐԳԵՆ.— Կարծեմ ա՛լ խմելուն կարգը հկավ, իշխաններ, եթե կուզեք, ես լեցնեմ ձեր գավաթները. (կսկսի բոլոր գավաթները լեցնել) *ամենքնուդ ալ միահեղ, ո՛չ մեկուն շատ և ոչ մյուսին՝ քիչ. Ակտոսի գինին է այս, որ բոլոր Ասիա մեջ իր կրակոտ համբավը տարածած է:*

ԱՄԵՆՔԸ.— Խմենք (ամենքը գավաթին իրար զարնելով կը խմեն) *Հայաստանի կենացը* (սույն միջոցին գինվորներ Որոնվմեզ զորապետը կը բերեն շղթայակապ):

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ և ՈՐՏԵԼՄԵՋ

ԲԱԳԱՐԱՏ.— Քակեցե՛ք զորապետին շղթաները. որչափ որ Պարսիկները մեր արյունը խմելու և մեր փառքը մարելու անհագ ոնդ մը կզգան, Հայերը դարձյալ իրենց Պարսիկ գերվույն շղթաներն անգամ կը քակեն, և սուր կրող զորապետը կը պատվեն:

ՈՐՏԵԼՄԵՋ.— Պետք չէ՛ ինձ այդ պատիվը, իմս են այս շղթա-

ները, կընդունիմ. մինչդեռ անհուն ցավ մ'է ինձ Հայու մը օղակ կրել պարանոցս, դուք ավելի դառնացնել կուզեք իմ ճակատագիրս, դո՛ւք, Հայոց գծուծ իշխաննե՛ր, լիաբերան շնորհ առատաձեռնելով ինձ։

ԱՄՆՔԸ.— (զայրացած) *Նախատի՛նք։*

ՈՐՏԵՄՆՋ.— *Ձեռքերնիդ սուրերնուդ կը տանիք գոռոզաբար, մինչդեռ շղթայակապ կը տեսնեք զիս ձեր առջև... Դուք հոս ձեր կարճ թուրերովը, թղուկնե՛ր, դատավոր կը կարծեք ինքզինքնիդ արի հսկայի մը, որուն խոժոռեցավ սև ճակատագիրը։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Հսկա մը այդպես չը խոսիր, հսկա մը չը նախատեր իրեն շղթանները քակող և սուրը պատվողը... Այնչափ նենգությյան և դրկանաց համակրությյամբ և պատվով համապատասխանող Հայը դեռ կը հանդիպիս նախատել, ժանտ Պարսիկ, մինչդեռ Հայը իր դարավոր վրեժները ծածկել կուզե անհիշաչարությյամբ, դու դեռ կը հրահրես զայն... Պետք է որ ամոթահարեիր այնչափ նենգավոր արարքներու դեմ Հայոց ցցուցած վեհանձնություններ տեսնելով։*

ՈՐՏԵՄՆՋ.— *Վեհանձնությյո՜ւն. ի՞նչ վեհանձնություն կրնա ընել իր մոխրակույտ ավերակներն հայրենիք անվանող լալկան ու անզոր ժողովուրդ մը Սասանյան սպարապետի մը, որ իր եռևին ահեղ վրեժ մը կը թողու, վրեժ մը, որ երբեք չը պիտի հագենա և չը պիտի մարի Հայոց արյամբը։*

ԳՈՒՐԳԵՆ.— *Նախ Հայաստան համայն հայության վրեժը լուծև, ետքը Պարսկաստան՝ Պարսիկ սպարապետի մը վրեժը։*

ԲԱԳԱՐԱՏ.— Այդչափ հանդուրժն նախատինքներդ, որոնք վատութիւններ կը բուրեն, կրնային զքեզ Հայու մը վրեժխնդիր սրուն մատնել, բայց Հայը վատութիւն կը սեպե իր շրթայակապ գերին զարնել։

ՋԱՐՄՈՒՀԻ.— Եթե այդչափ ցաւ կը պատճառեր քեզ հայկական լուծը, ինչո՞ւ ուրեմն վիզդ անցնել ալիր, հսկայդ Սասանյան։

ՈՐՏԵԼՄԵՋ.— (զայրացած) Ա՜հ, անգութ ճակատագիր։

Տեսիլ Թ

ՆՈՒՅՆՔ և Տ. ՎԱՀՐԱՄ

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ի՞նչ է այս, իշխաններ, մինչդեռ քահանայն կադոթե, զինվորը պե՞տք է թուլնա զվարճութեան սեղանի մը վրա, այսպե՞ս պետք է ընդունիլ երկնից շնորհաց հաջողությունը... Քաշվեցեք այդ սեղանեն, ուր սատանյլը[26] կը ծիծաղի... (կամաց կամաց սեղանեն կը հաշվին և Տ. Վահրամի բոլորտիքը շրջանակ մը կը կազմեն)։

ԳՈՒՐԳԵՆ.— Հայաստանի կենացը կը քամեինք մեր բաժակները, տե՛ր հայր։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Հայաստանի վերականգնումը գինւո գավաթին մեջ չէ՛, իշխան, Հայաստան մեր միութեամբը և երկաթի կամքովը կը վերականգնի... զվարճութեան և ուրախութեան ժամ չէ՛ մեզի համար այս ժամը, այլ դոհութեան տալու ժամ է Արարչին, որ մեր հայրենասիրական ջանքերը կը պսակե... Պետք չէ որ թուլնանք, մինչդեռ թշնամին կը հսկե մեր դռանը մեջ։

ԲԱՒԳԵՆ.— Միշտ նույնն եմք Պարսից դեմ, ան՛ր Հայր։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Միշտ նույնն են նաև Պարսիկները մեզի դեմ՝ վատ, նենգավոր և խորամանկ։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Ի՞նչ ըրավ քեզ Պարսիկը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ինչ ըրա՞վ. ինչ որ ըրավ մինչև այս ալևոր հասակս՝ ես գիտեմ, և անկեց առաջ ինչ որ ըրավ՝ Մասյաց ալևոր սարերը գիտեն. Հայն իր վեհ դյուցազներուն արի՞ն վրեժն առավ։

ՈՐՏԵԼՄԵՋ.— Եվ դեռ չես մոռցեր, թե ի՞նչ Հայկական դեհեր պիտի մորթվին իմ դևերիս մանիս վրա վրեժս բավելու համար։

Տեսիլ Ժ

ՆՈՒՅՆՔ և ՊԱՀՆՈՐԴ ՄԸ

ՊԱՀՆՈՐԴ.— Վեհապն ան՛ր, Աղկան՝ Պարսիկ իշխանը կուզե քեզ տեսնել։

ԲԱԳԱՐԱՏ.— Հայոց բարեբա՞ղդ... Թո՛ղ գա (պահնորդը կը մեկնի)։

ՈՐՏԵԼՄԵՋ.— (մեկուսի) Ի՞նչ կը լսեմ։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Ի՞նչ կը նշանակե արդյոք իր գալուստը։

ԲԱԳԱՐԱՏ.— Արդյոք մեծ վատ՞նդ մը կա, որ կուգա անձամբ իմացնելու մեզի։

ՈՐՏԵԼՄԵՋ.— (մեկուսի) Մատնիչ մ՚է եղեր նաև

*Տ. ՎԱՀՐԱՄ.— Ահա ինքը (Աղկան իշխանը կերևի, որ Որտելմեզ հոն շղթայակապ տեսնելով՝ շանթահար և շփոթած կը մնա, Որտելմեզ իր շարագուշակ նայվածքը աճոր վրա կը հառե)։

ՆՈՒՅՆՔ և ԱՂԿԱՆ

ԱՂԿԱՆ.— (մեկուսի) *Որտեղմե՞զ:*

ՈՐՏԵԼՄԵՋ.— *Ա՜հ, վատ մատնի՛չ... Մատնություններ ընելի վերջը կը հանդիպիս դեռ Հայոց գիրկն իյնել. այդպե՞ս սորվեցուց քեզ հայրենիքդ, այդպե՞ս սորվեցար Հայերն ատել և Պարսկաստան սիրել... դողա՛ այն արևեն, որ գլխուդ վրա կը շողա ահեղ վրեժխնդրության շանթի մը պես... նայի՛ այն անդունդը, ուր Պարսկաց անեծքներ կը մռնչեն. քեզ կանիծե հայրենիքդ, վատ արանց, ես կը կարծեի թե աշխարհի վրա միայն հայը կրնամ ատել, այլ անկ ատելի էակ մ'ալ կա եղեր, Պարսիկ մը, որ իր հայրենիքը կը մատնե:*

ԱՂԿԱՆ.— (որ նուաճած և գլուխը կախած՝ վշտագին մտիկ կըներ, դեպի Որտեղմեզ կը նառաջանա և ոտքն իյնելով) *Գթությո՛ւն... ներե՛ թշվառիս, ո՛վ վեհագն քաջ:*

ՈՐՏԵԼՄԵՋ.— *Ներե՛լ... մինչև ես կրնա՞մ ներել. անիծել խնդրե ինձնե, անիծե՛լ:*

ԱՂԿԱՆ.— *Ուրեմն ինձ ալ կիյնա անիծել զայն, որ իր ապրած սիրովը և գեղեցկությամբը սիրտս մթագնեց... զքեզ Ջաթմուհի... սիրեցի զքեզ, անիծյալ ըլլաս* (կը մեկնի նուաճած, ամենքը շվարյալ կը մնան):

ՈՐՏԵԼՄԵՋ.— *Ավելի՛ վատ, կը սիրե Հայուհի մը* (նանկարած դրսեն դղրդյուն մը կը լսվի):

ԲԱԳԱՄԱՏ.— *Ի՞նչ է այս* (ամենքը միջնադռան կը մոտենան):

ԴՈՒՐԳԵՆ.— *Ազկան իշխանն է իյնողը:*

ԲԱԲԳԵՆ.— Ինքդինքը զարկեր է։
ՈՐՏԵՎՄԵՋ.— Չը թողուց որ երկինք զարնեին։

Տեսիլ ԺԲ

ՆՈՒՅՆՔ և ՊԱՀՆՈՐԴ

ՊԱՀՆՈՐԴ.— Վեհազն այ՛րք, Ապրսամ զորապետն իր հրամանատարության տակ դանված զորաց բազմությանր հետ թշնամյաց կողմն անցավ։
ԱՄԵՆՔԸ.— (սարսափած) Ա՜հ։
ՋԱՐՄՈՒՀԻ.— Վա՜յ։
Տ. ՎԱՀՐԱՄ.— Ո՜վ երկինք։
ՈՐՏԵՎՄԵՋ.— Խնդացեք, հայե՛ր։
ԲԱԳԱՐԱՏ.— (զարաց) Զորապետին գլուխը կտրելով Պարսից բանակը նետեցեք[27])։
ՈՐՏԵՎՄԵՋ.— Եվ թող իմ վրաս փլչի Անի։
ԲԱԳԱՐԱՏ.— Ողջ են դեռ հայերը։
Տ. ՎԱՀՐԱՄ.— Արդա՜ր են երկինք (վարագույրը կիջնե)։

(ՎԵՐՋ Դ ԱՐԱՐՎԱԾԻՆ)

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Դ

Տեսարանն է Բագարատ իշխանի ապարանը, սգապատ սրահ մը:

Տեսիլ Ա

ԲԱԳԱՐԱՏ և ՋԱՐՄՈՒՀԻ

(վարագույրը բացված ատենն նստած են մտազբաղ, հետևեն կոշնակահարություններ և աղոթքներ կը լսվին):

Ա Ղ Ո Թ Ք

Ո՛վ Տեր, լսե մեր ազոթից տխուր ձայն,
Ու հուսահատ ասա ինձ մեամբ ապաստան,
Զեռ տուր մեզի, և բող կանգնի մեր ճակատ,
Սկեղեցիք, սադմոսք ըլլան բող ազատ:

Տուր, Տեր կանգնել մեզ դրոշակ փառավոր,
Յավերակուն մեր հայրենյաց սգավոր,
Յայնժամ կենոք հառնե ի վեր Հայաստան,
Յայնժամ ծաղկին սրբոց պսակ հաջության:

ԲԱԳԱՐԱՏ.— Ա՜հ, ինչ սոսկալի հարված էր այս:
ՋԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ պիտի ընենք, հա՛յր իմ:

ԲԱԳԱՐԱՏ.— Ձեմ դիտեր, հուսահատությունն արդեն քաղաքին ամեն կողմը սիրած է, և հիմակվնէ կսկսին իրենց կորուստները լալ ամեն մարդ։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ պիտի ըլլա մեր վիճակը։

ԲԱԳԱՐԱՏ.— Ամեն բան լմնցավ Անիի համար, այս ալ Հայաստանի մյուս հոյակապ քաղաքաց նման, որք ավերակ դարձան, անոնց ճակատագիրը կը կրե։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Միշտ սև մառնութի՞ւն։

ԲԱԳԱՐԱՏ.— Տեսեր այն վաստ՝ Ապրատ զորապետը, որ իր հայրենիքը դավեց, պիտի գտնէ՞ իր վարձքն ու հանդիսատ. ո՛չ երբեք. նույնիսկ իր խիղճը պիտի խռովէ միշտ վինքը և հալածէ արյունարբու հրեշի մը պես, ինչվան որ հոգեսպառ գերեզման իջնէ, ուր կը ծավալին արդեն դժոխոց բոցերն իր հոգին լափելու համար...

ԶԱՐՄՈՒՀԻ.— Մի՛ հուսահատիր, հա՛յր իմ, կը պատերազմինք դեռ թշնամյաց դեմ մինչև մեր արյան վերջին կաթիլը։

ԲԱԳԱՐԱՏ.— Անկարելի է այդ, Զարմո՛ւհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ինչո՞ւ, հա՛յր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Մենք ա՛լ չենք կրնար Պարսից ահեղ զորութեանը դեմ դնել, մինչդեռ Ապրատ սպարապետը զորոց մեծ մասն իրեն կողմը որսալով թշնամյաց կողմն անցած է՝ այնպես համոզելով պիրենք, թե Անի երկար ատեն չէ կարող Պարսից զորութեանը դիմադրել, և փոխանակ Պարսից ահեղ սրուն ճարակ ըլլալու, անոնց կողմն անցնելով կրնան գոնե կյանքերնին ազատել։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Բայց, դարձյալ պետք է քաջալերել զինվոր-

ները, որ պարսպին վրա կենալով ի դերև Տանեն թըշնամվույն ջանքերը։

ԲԱԳԱՐԱՏ.— Ի՞նչ կըսես, Զարմուհի, բոլոր քաղաքին պարիսպները պահնորդելու չափ զինվոր չը մնաց. քաղաքին մեջ մինակ խառնիճաղանճ բազմություն մը մնաց, ծերոց, կանանց և տղոց, որոնք ավելի ժողովրդյան հուսահատությունը կը գրգռեն։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ի՞նչ ընելու է ուրեմն։

ԲԱԳԱՐԱՏ.— Բոլոր իշխանները քիչ մը եառքը հոս պիտի ժողովին և քաղաքին բռնելիք ընթացքին վրա համաձայն որոշում մը պիտի տրվի... Տեսնենք ի՞նչ պիտի ըլլա որոշումնիս։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ինչ որոշում ալ ըլլա՝ խեղճ ժողովուրդն ուրիշ փրկություն չունի, բայց եթե Պարսկին սո՛ւրը կամ շըղթա՛յն... ընտրել երկուբին մեկը. ո՞րն ընտրե, երկուքն ալ սոսկալի են. երկուքն ալ Հայության ջնջում կսպառնան, մեկը կենաց դահիճ, իսկ մյուսն իրավանց դահիճ... Ա՜հ, մեր վիճակին վրա մտածելն անգամ սոսկումով կը լեցնե և կը սառեցնե պես... Միայն Անիի պարիսպները կան կանգուն թշնամյայ դիմաց, և այն պարիսպներուն եառ Հայուն տակար կուրծը կա, ալեւոր ծնրունիներ, հնրարձակ մայրեր, ողբագին տղաքներ, վերջապես այնպիսի անձեր, որք միայն աղերսել գիտեն թշնամվույն։

ԲԱԳԱՐԱՏ.— Գերեզմաննիս փորենք, աղջիկս։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ո՛չ, Հայր իմ, ես միտքս դրի չը մեռնիլ, մինչև որ Պարսիկ մը արյունաթաթաւ ոտքերուս տակ չը փռվի։

ԲԱԳԱՐԱՏ.— Ջես կրնար զարնել, Զարմո՛ւհի։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ինչո՞ւ, Հայր իմ։

ԲԱԳԱՐԱՏ.— Դու չես տեսեր Պարսկի մը արյունոտուշտ աչքը։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Եվ դու ալ չե՛ս կարդացեր, հայր իմ, կնոջ մը սիրտը և չես կրնար կարդալ. պիտի տեսնես, հայր իմ, թե ինչպես սուր պիտի շարժեմ։

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆՔ, ԳՈՒՐԳԵՆ, ԲԱՐԳԵՆ և ԻՇԽԱՆՔ

ԳՈՒՐԳԵՆ.— Ի՞նչ պիտի ընենք, իշխան։

ԲԱԳԱՐԱՏ.— Պետք է որ համաձայն մտածենք մեր ընելիքին վրա։

ԲԱՐԳԵՆ.— Անդի վիճակը շատ խղճալի է։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Պետք է դարման մը գտնել անոր։

ԳՈՒՐԳԵՆ.— Շատ ուշ մնաց դարմանը, որովհետև Պարսից կրկնապատկյալ զորությունը կը ծանրանա մեր վրա, անկարելի է դեմ դնել, վասնզի այսուհետև ալ Պարսից խորհուրդները մեզ իմացնող մը չըլլալե զատ՝ մեր պինվորներեն շատերը թշնամյաց կողմն անցած են։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ուրեմն պատերազմինք մինչև մեր վերջին շունչը, վասնզի եթե անձնատուր ըլլանք, դարձյալ Պարսից անխնա սրուն ճարակ պիտի ըլլանք... Այո՛, պետք է պատերազմիլ և մեռնիլ, բայց դյուցազնաբար։

ԲԱՐԳԵՆ.— Ո՛վ իշխանուհի, մեր դիմադրությունն արդյունք մը չունենալե զատ՝ Պարսից կատաղությունը սիրտ դրդռեւ մեր վրա։

ԶԱՐՄՈՒՀԻ.— Ուրեմն ուրիշ ի՞նչ միջոց կրնանք ունենալ։

ԳՈՒՐԳԵՆ.— Պետք է գոնե մեր կյանքն ազատելու հնարք մը

գանել... և մեր ժողովուրդը բոլորովին անտերունչ և անզուրկ չը թողուլ ապագային... Ի՞նչ կըսես, իշխան։

ԲԱԳԱՐԱՏ.— *Կընդունիմ այդ գաղափարը... բայց հնա՞րքը։*

ԳՈՒՐԳԵՆ.— *Քաղաքին միջնաբերդը քաշվինք, ասկե ուրիշ ազատութեան միջոց չի կա մեզի համար։*

ԲԱԲԳԵՆ.— *Բայց ժողովո՞ւրդը... հուսահատ քաղաքացինե՞րը։*

ՋԱՐՄՈՒՀԻ.— *Ո՞վ պիտի խրախուսե այն խեղճերը, որոնց սիրտն արդեն դառնութեամբ լի է։*

ԳՈՒՐԳԵՆ.— *Եթե դեռ ժողովուրդը մտածենք, որուն կորուստն անհրաժեշտ է, մենք մեր ազատութիւնը պիտի կորսընցնենք... ժողովուրդին ազատութիւնը մեր դյուցազնութեանը կարոտ չէ, այլ պիտի խոնարհի նա անողորմ ճակատագրի մը առջև։*

ԲԱԲԳԵՆ.— *Ճշմարիտ է։*

ԳՈՒՐԳԵՆ.— *Բոլոր իշխաններն այսպես կուզեն։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Ի՞նչ ընենք, ա՛ղջիկս։*

ՋԱՐՄՈՒՀԻ.— *Դու գիտես, հա՛յր իմ։*

ԲԱԳԱՐԱՏ.— *Միթե անխոհեմութի՞ւն մ'է մեր ըրածը։*

ՋԱՐՄՈՒՀԻ.— *Քանի որ բոլոր իշխաններուն կամքն այդ է, և եթե դու անոնց խորհրդոցը չը համաձայնիս, անմիաբան պիտի ըլլաս, ընդունե ուրեմն իրենց կարծիքը։*

ԲԱԲԳԵՆ.— *Իսկ դո՞ւ։*

ՋԱՐՄՈՒՀԻ.— *Ես ալ կընդունիմ, վասնզի մինակ կարող չեմ բան մը ընել, և մանավանդ դառն ճշմարտութիւնը կը տեսնեմ։*

ԳՈՒՐԳԵՆ.— *Ուրեմն համաձայննցանք մեր կարծյաց մեջ։*

ԲԱԲԳԵՆ.— *Այս է մեր փրկութեան միակ միջոցը։*

*ՋԱՐՄՈՒՀԻ.— Ա՜հ, երանի թե ասով կարենայինք ծառայութ-
թյուն մը ընել հայրենյաց:*

ԳՈՒՐԳԵՆ.— Ապրի՛նք, որպեսզի հայրենյաց վրեժն առնինք:

*ՋԱՐՄՈՒՀԻ.— Ուրեմն երանի ձեզ, որ վրեժ առնելու համար
կուզեք ապրիլ:*

*ԳՈՒՐԳԵՆ.— Կերդնում Անիի հաղար ու մեկ եկեղեցիներուն
վրա:*

ԲԱԳԱՐԱՏ.— Իսկ դո՞ւք, իշխաններ:

ԱՄԵՆՔԸ.— Կերդնունք:

ԲԱԳԱՐԱՏ.— Ուրեմն սրբազան է մեր խորհուրդը:

ԳՈՒՐԳԵՆ.— Միջնաբե՛րդը, իշխա՛նք:

ԲԱԲԳԵՆ.— Երթա՛նք:

ԲԱԳԱՐԱՏ.— Օ՛ն, Ջարմուհի:

ՋԱՐՄՈՒՀԻ.— Երթանք, հա՛յր իմ (կը մեկնին.—տեսարանը
վայրկյան մը պարապ կը մնա):

Տեսիլ Գ

Տ. ՎԱՀՐԱՄ և ՊԱՀՆՈՐԴ ՄԸ

Տ. ՎԱՀՐԱՄ.— (պահնորդին) *Իշխանները հոս հավաքվեր են
խորհրդակցելու համար, ո՞ւր են:*

ՊԱՀՆՈՐԴ.— Ամենքն ալ միջնաբերդը քաշվեցան, տեր Հայր
(կը մեկնի):

Տ. ՎԱՀՐԱՄ.— (մինակ) *Միջնաբերդը քաշվեր են, անտե-
րունչ թողլով խեղճ ժողովուրդը, այդչափ իշխան ի՞նչ-
պես միաբաներ են առանց երկպառակություն հանելու,
վանդի դյուցազնական գործ մը համար չեն միացած.
Թող չլսեն թե անմիաբան է Հայը, կը միաբանի՝ երբ գոր-*

ծը վատութիւն կը բուրի... Միջնաբերդը կը քաշվին առանց ժողովուրդը մատծելու այն մեծ և հսկա իշխանները...[28]) վատերը... առանց հուսահատ քաղաքացիները խրախուսելու... Ահ հարվածը միշտ ժողովուրդին գըլխուն կիջնե. բայց ժողովուրդը դեռ հայր մը և ղորապետ մը ունի, քահանայն... ինչվան հիմա աղոթեցի, արդ ղորապետի մը պես դարձյալ կը քաջալերեմ ժողովուրդը (կը մեկնի.—Պատկերը կը փոխվի):

ՊԱՏԿԵՐ Դ

Ալփասլանի բանակը.— Պարիսպ

Տեսիլ Դ

ԱԼՓԱՍԼԱՆ և ԱՊՐՍԱՄ

ԱՊՐՍԱՄ.— Վեհափա՛ռ թագավոր, Անի ա՛լ անկարող է այսուհետև քու ահեղ ղորութիյանդ դիմադրել, վասնզի ես ղրկեցի վինըը իր բոլոր քաջերեն:

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ուրեմն կրնանք անվտանգ հարձակիլ:

ԱՊՐՍԱՄ.— Այո՛, վեհափառ տեր, եթե Անի մինչև հիմա դոռող ճակատ մը կը բարձրացներ քեզի դեմ, պատճառն այն էր, որ քու բանակեդ իշխան մը քու բոլոր խորհուրդներդ գաղտագողի կը հաղորդեր քաղաքացվոց:

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ո՞վ է այդ վատը:

ԱՊՐՍԱՄ.— Ագկան իշխանը:

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ագկան... որ բոլորովին անհետացած է բանակեն:

ԱՊՐՍԱՄ.— Գուցե Հայոց կողմն անցած է:

ԱԼՓԱԼԱՆ.— Ա՜հ, այդպիսի դավադրություն մը կրլա՜ր, և ես Անթիվոց նախատեսությունը և քաջագործությունները կը կարծեի. ես բոլորովին հուսահատած էի Անին առնելե. ա՜հ, եթե այն վատը Անիի մեջ կենդանի պահեմ, չի՞ պիտի չախչախեմ:

ԱՊՐՍԱՄ.— Ուրեմն ալ սիրտին հուսահատություն, վեհափառ տեր. առաջին հարձակման պիտի տանես, որ սըրտտա զինվորի մը գլուխը չը պիտի երևի Անիի պարսպացը վրա. գլուխս աղատեցի քեզ՝ ապստամբելով, վեհափառ տե՛ր, օգնե՛ նաև որ վրեժս ալ առնեմ. Անիի բոլոր Հայերուն գլուխը քեզի, գլուխ մը կա՝ այն միայն ինձի թող... Տե՛ր հրամանդ և հարձակինք փոթորկի նման:

ԱԼՓԱԼԱՆ.— Վա՜յ Անիի. այս վայրկենես նա իմ աշխարհակալ ձեռքիս մեջ ափ մը փոշի է իր հազար ու մեկ նկեղեցիներովը, պալատներովն ու շինքերովը. լսեցին անունս և չը դողացին, ուրեմն ինչո՞ւ տեսնեն վրեժս:

ԱՊՐՍԱՄ.— Սկսի՞նք հարձակումը, վեհափառ տե՛ր:

ԱԼՓԱԼԱՆ.— Այո՛, զորապետ, գնա՛ բոլոր բանակին մեջ հնչեցուր իմ հրամանս:

ԱՊՐՍԱՄ.— Կը հնազանդիմ, արքա (կը մեկնի):

Տեսիլ Ե

ԱԼՓԱԼԱՆ (առանձին)

Ահա վատ մ՚ալ, որ իր հայրենիքը կը մատնի, մեկ անձի մը վրեժը բոլոր հայրենակիցներին կառնե... Թշնամիներեն ավելի մատնիչները կործանեցին Հայաստա-

նը... արդ ինք իր հարվածներով կիյնա. Հայաստան անձնասպան մ'է, ո՛չ ոք իր վրա կարդահատի, ո՛չ ոք կօգնե իրեն... Ա՛հ, եթե մեկ մը Անին ալ ճանկերուս մեջ առնեմ, ավելի մեծափարթամ և զորավոր պիտի ըլլամ... և այն մատնչին գերեզման մը պիտի տամ Անիի ավերակաց մեջ...

Տեսիլ Ջ

ԱԼՓԱՍԼԱՆ, ԱՊՐԱՀԱՄ և ՋՈՐՔ պարսից

ԱՊՐԱՀԱՄ.— Բոլոր բանակը պատրաստ է քու հրամանդ կատարելու:

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ջորապե՛տ, դու անգամ մը քու զորքերովդ Անիի պարսպին վրա հարձակելու փորձ մը ըրե՛ք, և տեսնենք թե Անիցիք դիմադրելու ջանք պիտի ընե՞ն դարձյալ (սույն միջոցին Անիեն ողբոց և լալագին աղաղակաց աղմուկ մը կը լսվի) ի՞նչ է այս:

ԱՊՐԱՀԱՄ.— Կը լսե՞ս, վեհափառ թագավոր, Անիի մեջ հուսահատությունը սիրեր է[29]:

ԱԼՓԱՍԼԱՆ.— Ուրեմն հարձակինք (վարագույր կիջնե):

<(ՎԵՐՋ Դ ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Ե

Տեսարանն է ավերակ վայր մը.— Ասդին ասդին փռված դիակներ, որոնք կը ճնան և կը գալարին.—Ջնեմներ ցիրուցան:

Տեսիլ Ա

ԿՈՒՅՐ ՄԵՐՈՒՆԻՆ (մանկիկ մը գրկած)

Ա՜հ, ո՞ւր փախչիմ, ամեն կողմին Պարսկաց մոբնչյուններ կը լսվին, որոնք Հայու արյամբ հագենալ կուզեն... Կորսնցուցի որդիս, Տարսս, մեռա՞ն, ո՞ղջ են, չը գիտեմ, մինակ թոռս մնաց ինձ, զոր կուզեմ զինուց շաոաչյուններուն մեջեն փախցնել... Կույրին մնացեր է խեղճ թոռն ազատել, մինչդեռ Տկականերու ձեռքեն զենքերը կը Տափշտակվին. չեմ գիտեր թե այս ճամբան ո՞ւր կը տանի դիս, գուցե Պարսկաց ոտքը... Ես ինքնին կերթամ ըսելու «խեղդեցեք դիս և այս մանկիկն ալ գետինը զարկեք». Աստվա՜ծ իմ, Աստվա՜ծ իմ, պիտի մատնեն դիս բնության այս մարած կանթեղները... (վիրավորյալ մը շնշասպառ ծերունիին Տով կիյնա սարսափած) *Գթությո՜ւն, գթությո՜ւն:*

ՆՈՒՅՆՔ և ՎԻՐԱՎՈՐՅԱԼ ՄԸ

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— (ինկած տեղը գալարելով) *Ջավա՜կս...*

ՇԵՐՈՒՆԻՆ.— (զարմացած) *Այս ձայնը... Քշնամվո մը ձայնին չը նմանիր, սիրելվո մը ձայնն է այս* (դառնալով, բարձր) *ո՞վ ես դուս:*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— (գլուխը վեր առնելով և ծերուկին դիտելով) *Հա՜յր իմ...*

ՇԵՐՈՒՆԻՆ.— *Ա՜հ, որդիս է կարծեմ... Բակո՛ւր...*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Ես եմ:*

ՇԵՐՈՒՆԻՆ.— *Ո՞ւր ես:*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Ջայնիս մոտեցի՛ր:*

ՇԵՐՈՒՆԻՆ.— *Վիրավորյա՞լ ես:*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Այո՛:*

ՇԵՐՈՒՆԻՆ.— *Ջավա՜կս...* (մոտենալով):

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Ի՞նչ է այդ գրկածդ:*

ՇԵՐՈՒՆԻՆ.— *Ջավակդ է:*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Բարի՛կս:*

ՇԵՐՈՒՆԻՆ.— *Այո՛:*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Տուր ինձ, որպեսզի խոցյալ սրտիս վրա գրկեմ անգամ մը, Հայր իմ* (կառնե):

ՇԵՐՈՒՆԻՆ.— *Արդյոք ծա՞նր է վերքդ, Բակուր:*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Մահացու է, Հայր իմ, սրտիս վրա:*

ՇԵՐՈՒՆԻՆ.— *Աստվա՜ծ իմ:*

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— *Բայց դեռ կրնամ քանի մը վայրկյան ապրիլ, քանի որ Բաբիկս գիրկս է... իսկ Աշխենս ի՞նչ եղավ, Հայր իմ. ո՞ւր է ինքը, իմ սիրելի ամուսինս:*

ՅԵՐՈՒՆԻՆ.— Չեմ գիտեր. ես այս մանկիկին հետ եկեղեցին էի և կազոթեի, երբ լսացա, որ Պարսիկները Անիի վրա կը հարձակին... դարձա տուն՝ ձեզ գտնելու... և երբ հոն հասա՝ թաղն ավերակ և ամայի գտա... Ձայն մ'անգամ չը լսեցի. չը տեսա մեկը, որուն հարցում մ'ընեի.. միշտ վիրավորյալներու հանդիպեցա, որոնք կը հեծեծեին և պապակած՝ «ջուր» կաղաղակեին:

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ուրեմն անդութ Պարսից սրույն ճարակ եղավ նաղելի Աշխենս, առանց անգամ մ'իր մանկիկը սրտին վրա սեղմելու. բայց լավ է որ գերի չըլլա և մեռնի:

ՅԵՐՈՒՆԻՆ.— Ա՜հ, այսպե՞ս պիտի անանկինր մեր գտած Անին, իր հազար ու մեկ օծյալ գլուխներն այսպե՞ս պիտի փշրին. հոյակապ պալատներն ու փառավոր շինքերն առհասարակ Բագրեցան արյան հեղեղներու մեջ...[30]) Չը բացվի՜ն աչքերս և չը տեսնեմ իր ողբմելի ավերակները:

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ա՜հ, հայր իմ, կղգամ որ պիտի մեռնիմ. ազատե զոնե զավակս և իմ տեղս վրեժխնդրութեյուն սորվեցո՛ւր իրեն, միշտ պատցո՛ւր դիներն ավերակաց մեջ, և անոնց սուրն մեկ բեկորին տակակի պատմութեյունն ըրե իրեն... Եթե Աշխենս ալ գտնես, իմ վերջին մնաս բարովս հաղորդե իրեն, թող աղեկ խնամե մեր զավակը... Իր սիրտը պարսկական տեսլութեյամբ վառե՛... Քաղաքին պարիսպներուն մոտ ենք, հայր իմ, ազատե՛ զավակս... փախի՛ր...

ՅԵՐՈՒՆԻՆ.— Իսկ դո՞ւ, Բակուր...

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ես հիմա պիտի մեռնիմ, հայր իմ:

ՍԵՐՈՒՆԻՆ.— Ա՜հ, ինչպե՜ս զքեզ վիրավոր թողում մինակ։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Ձիս մի՛ մատծեր, հանգիստ եմ, հայրենյաց համար կը մեռնիմ... երջանիկ եմ։

ՍԵՐՈՒՆԻՆ.— Ջավա՜կս։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Փախիր, հայր, հիմա Պարսիկները կը հասնին։

ՍԵՐՈՒՆԻՆ.— Մնաս բարյա՜վ։

ՎԻՐԱՎՈՐՅԱԼ.— Երթաս բարյավ, հա՛յր իմ (եաեեն նայելով և պոռալով), փախի՛ր, հայր իմ, եաեեդ խումբ մը կատաղի Պարսիկ կուգան... Ա՜հ, հասան հարս քավ... Բաբիկս ձեռքեն կը հափշտակեն...[31]) օդին մեջ հանեցին... դեաինը պիտի զարնեն... կեցե՜ք... ա՜հ (ճիչ մը կարձակէ և կը մեռնի)։

Տեսիլ Գ

ՏԵՐ ՎԱՀՐԱՄ.— (ձեար կիներ, ծերեր, բանւոցաներ և ուրիշ գինյալ մարդիկ) Ա՜հ, ամեն տեղ ավերակը ծածկեր է, ամեն տեղ Հայու արյուն կը քալե... Աստուծո փոթորկալից շունչը անցավ Անիի վրայեն, ինչպես անցավ Բաբիլոնի, Նինվեի և ուրիշ դառդ քաղաքաց վրայեն։ Անի՝ Հայաստանի քաղաքաց թագուհին, որուն խրոխտ պարսպացը տակ աշխարհակալ թշնամյաց արտեր արյունեցան, ի գետին կը խոնարհե իր մոխրալից գլուխը, որպեսզի անարգ Պարսիկն անցնի անոր վրայեն, կոխկրտտելով Հայութեյան դրոշմը. ա՜հ, այսչա՜փ պիտի խոնարհի եղեր Հայաստան... այսչափ սա՜ է եղեր Հայութեյան ճակատագիրը... այսչափ անտերունչ պիտի մնա

եղիր Հայաստան... (իրենները ցուցնելով) *ահա քահանաներ, որ սուր շարժել գիտեն, ահա կիներ, որ պատրաստմիլ կուզեն... ահա ծերեր, որ զարնել կուզեն... դո՛ւք, Հայութեան մնացորդներ, դո՛ւք կռվեցեք հայրենեաց փառացը համար, մինչդեռ իշխանները միջնաբերդը կապաստանին... ձեր զավակներուն, եղբայրներուն, հայրերուն, մայրերուն և ամուսիններուն համար կռվեցի՛ք... ինչվո՛ր չիկա՝ ինչվո՛ր եղի՛ք. Հայ չիկա՝ Հայ եղի՛ք... հրամանատար չունինք՝ ահա ես զորապետ. ձեր ճակտին վրեմ պայծառութիւնը բավական է թշնամին դողացնելու:*

Տեսիլ Դ

ՆՈՒՅՆՔ և ԱՊՐՍԱՄ

ԱՊՐՍԱՄ.— (առանց զաճռճռ տեսնելու) *Դեռ չը կրցի գտնել ինքը, միջնաբերդն է եղեր:*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Զո՞վ:*

ԱՊՐՍԱՄ.— (մեկուսի) *Տեր վահրա՜մ:*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Դեռ զո՞վ կը խնդրես քու ժոխային սրտիդ պահ, վաա սրանց, դեռ չը կշտացա՞ր եղբարցդ արյամբը, որոնք քու սրբազան հայրենեացդ ավերակները ողողեցին... Զորս կողմդ նայէ, չի՞ տեսներ... Ինչ՞ն քըսրմնիր մազերդ այս ողորմելի տեսարաններդ դիտելով. մինչև քու մարմարյա կուրծքիդ տակ փոխանակ սրտի՝ ժոխ՞ը կը վառի... Ինչ՞ տեսար եղբարցդ տիխրության ողողակները, տո՛ւր տասնց իրենց ամուսիններուն, զավակներուն, եղբայրներուն, հայրերուն, մայրերն ու հայրենիքը, և ապա դեռ զարկ:*

ԱՄԵՆՔԸ.— Տո՛ւր մեզ։

ԱՊՐԱՀԱՄ.— Պարակեն ուղեցեք։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Դուն ալիր Պարակին, անօրե՛ն, դու քու հայրենյացդ դռներն անոր բացիր, քու սրտիդ դժոխային բոցերուն մատնեցիր հայրենիքդ... Հավիտյան անեծք պիտի լսես այն դարերեն, որոնք Անիի ավերակացը վրա յեն պիտի անցնին լալով... Արյուն քալե սրտեդ՝ Հայաստանի ավերակացը պես. անիծյալ ըլլաս Հայության ճակատագրին պես։

ԱՄԵՆՔԸ.— (սուրերին բարձրացնելով) Մա՞հ մատնչին։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Կեցե՛ք, այն՝ որ զարնել կուզեք, Հայ անունը կը կրե. դուք մի՛ զարնեք, վասնզի ձեր սուրերեն ավելի ահնել և արդար՝ Աստուծո ձեռքը կա անոր վրա, դուք մի՛ ըլլաք իր դահիճը, թող իր խիղճը ըլլա իր դահիճը, թողե՛ք ղինքը, մի՛ պղծեք իր արյամբը ձեր անբիծ սուրերը...

ԱՄԵՆՔԸ.— Տուր մեզ մեր հայրենիքը։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Երկնքեն խնդրեցեք և ոչ թե այս վաստեն, որ միայն մատնել գիտե... Թողեք ղինքը։

ԱՊՐԱՀԱՄ.— Ա՛լ բավական է։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Գնա՛, վա՛տ, և թող դունդադունդ անեծքներ քեզ հալածեն... կորի՛ր...

ԱՊՐԱՀԱՄ.— (մեկուսի) Միջնաբե՛րդը... (կը մեկնի. հանկարծ ավերակ մը փլչելու աղմուկը կը լսվի դրսեն)։

Տ. ՎԱՀՐԱՄ.— Տեսե՛ք, իր գործած ավերակն իր վրա փլավ և թաղեց ղինքը։

Տեսիլ Ե

Տ. ՎԱՀՐԱՄ (իրենեւրով), *ԱԼՓԱԼԱՆ* (զուրկով)

ԱԼՓԱԼԱՆ.— *Ո՞վ են այս քահանաները, ծերերը և կիները, որոնք սուր կը կրեն և իմ արյունաթույր շուրեւս չեն փախչիր... Ո՞վ են ասոնք։*

Տ. ՎԱՀՐԱՄ.— *Քու թշնամիներդ։*

ԱԼՓԱԼԱՆ.— *Իմ թշնամինե՜րս... Իմ թշնամիներս Հսկաներ կրնան ըլլալ... ձգեցեք սուրերնիդ և խոնարհեցուցե՛ք գլուխնիդ Պարսկական լուծին, եթե չեք ուզեր մեռնիլ։*

ԱՄԵՆՔԸ.— *Ո՛չ երբեք։*

ԱԼՓԱԼԱՆ.— *Ի՞նչ կը խնդրեք, ուրեմն։*

ԱՄԵՆՔԸ.— *Ազատությո՜ւն Հայրենյաց։*

ԱԼՓԱԼԱՆ.— *Ի՞նչ իրավամբ ինձնե կը խնդրեք այն ազատությունը, զոր դուք ծախեցիք ինծի. քանի՞ տեսակ Հայ կա, մեկը կուտա, մյուսը ետ կուզե. Իշվառնե՛ր, մտացեք այսուհետև Հայրենիք, ազատություն և իրավունք, վասընդի Պարսկին օգակն անցավ ձեր վիզը. քանի որ Հայը չը կրցավ տեր ըլլալ, պետք է որ գերի ըլլա։*

(Հայերը գլխիկոր ետ կը դառնան.—վարագույրը կիջնե)։

<(ՎԵՐՋ Ե ԱՐԱՐՎԱԾԻՆ)>

ՎԵՐՋԱԲԱՆ

Տեսարան Ի գիշեր.—Լուսին.—Ավերակ վայր մը, խորը ձորեն:

ՄՈՒՍԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ (շղթայակապ)

Մայր մ'ունեի ես միայն,
Այն ալ գնաց գիրկ մահվան,
Անմխիթար թողուց զիս՝
Գերեզմանաց պահապան:

Հայրենիք մը ունեի
Յետ Աստուծո սիրելի,
Այն ալ իր ճակ փառերեն,
Զգնց ինձ սև շղթա մի:

Ես որ չառի ձեռս սուր,
Ինչո՞ւ կրեմ այս աճուր,
Պարսի՛կ, բակե՛ այս շղթայն,
Ձիս մորթս ինա ճոպիճ տո՛ւր:

Ամեն դիեն սև խուժան
Կը կոխոտեն Հայաստան,
Հայ կը ճնան վիրավոր,
Պալատ և ճյուղ կը մըխան:

Չը կա ճուժկու Հայ զինվոր,
Չի կռտրեցավ սուրն աճոր,
Չիմ աղորդ բանանա,
Եվ չիմ տանեար փառավոր:

Սուգ է պատեր ամեն վայր
Աստղերն անգամ չեն խնդ վառ,
Այն Հայաստանն ա՛լ չըկա,
Այլ գերեզմանիմ ու խավար:

Շղթա կապած իմ վրգին,
Գերի վաբեն ցավագին,
Կուզեն պաշտել տալ ինծի
Օտար մարդ, հող ու երկին:

Ավերակներն ես կուզեմ
Հայաստանիս տխրադեմ,
Որ ճոճ լամ իմս հայրենիք,
Մինչ ողջունեմ մանվան սեմ:

Ո՜հ, անոնք սև թող ըլլան,
Ես կը սիրեմ հավիտյան.
Չի երբ իմ մայրըս մեռավ,
Ըսավ. «Սիրե՛ զՀայաստան»:

Պիտի սիրեմ զանի ես՝
Յիետին շունչ իմ սրտես,
Մինչ որ ժպտի Հայաստան՝
Հանդեպ շիրմիս բոցակեզ:

Թող Հայ ուսնին միաբան
Ինձ պես սիրել Հայաստան,
Յետ իմ աչաց ցողնն ցող,
Երբ զայն ավեր կը տեսնեն:

Թո՛ղ է անկյալ Հայաստան,
Պիտի կանգնի հուսկ յապայն,
Երբ որ հայեր միասիրտ
Գոչեն «կեցցե Հայաստան»:

ՎԵՐՋ

ԹԱՏՐՈՆ ԿԱՄ ԹՇՎԱՌՆԵՐ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՏԵՐԱԽԱՂ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ ԵՎ Յ'ԵՐԻՍ ՊԱՏԿԵՐՍ

3 Հունվար, 1871

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Մեկ բանի տարիե ի վեր հղացած երկոցս մեջ սույն ժամանակակից բառերախաղն անա կը համարձակիմ ի լույս ընծայել, իբր առաջին պտուղ իմ ճգանց, զոր կուզեմ ճվիրել ազգիս: Սույն հրատարակումն ինձ համար նոր է. ուստի դողդողալով կիջնեմ յասպարեզ առաջնորդող ասպիճաններ՝ ներողամիտ ժպտումներ[1] ակնկալելով: Աւդարև բառերագրություններ[2] դժվարին աւհնաս մ'ըլլայր ամեն ոք կր խոստովանի. ես ալ աւդեն խիստ բարձր գտած եմ զայն իմ փառաւոր կարողության և մանավանդ հասակին հով. սակայն գայս ալ պետք է խոստովանիմ, թե դժվարին գործ մր առանց հանդուգն ձեռաց օժանդակության. չը կրնար դյուրավ կատարիլ. և թե երկ մր բանաղատության բովեն չանցած՝ չը կրնար գովիլ:

Թառերախաղիս հյուրը բեպետև նշմարիտ դեպքեր կը պարունակե[1]), սակայն այսու ամենայնիվ, ինչպես որ հեղինակ մր կ'ստիպվի ընել. պահանջված հավելադրություններ չեն գլացված:

Զայս երկասիրելով, իմ մտանավոր դիտումն է իմ անձնշանությամբ օրինակ բլլալ ուրիշ թառերագրաց, որ ավելի արդի բնտանեկան անցքերը պարունակող բառյալից թառե-

ռախաղեր հորինելու աշխատին, որով ավելի օգուտ կրնան ընծայել Հայ հասարակության[3], քան թե ազգային ինն դյուցազնությունը ողբերգության վերածելով, որ միշտ միակերպութենե վրիպած չեն, վասնզի նյութոց հարուստ աղբյուրներ չունին և հետևաբար ունկնդիր բառերասերներու ուաղուկալի կրնան ըլլալ իրենց միակերպ և անբնդհատ ներկայացումներովը:

Որչափ որ կարելի է, սույն բառերախաղիս լեզուն բառերական կամ պարզ ըրի:

Իմ այս բառերախաղը տեսարանի վրա հանդիսացնելե առաջ ուպագրության տալուս վրա գուցե զարմանան ումանք, սակայն այս մասին այնպիսի պատճառներ կան, զորս լուսաբանելու համար հատուկ ժամանակի կսպասեմ[2]):

[4]Իրավ է որ սույն բառերախաղը Վիքթոր Հյուգոյի ԷՌՆԱՆԻ բառերահանդեսին պես չի պիտի հեղափոխե հասարակության գաղափարն ու զգացմունքը[3]), սակայն և այնպես սորա և փոշիներր բոթվելով գրադարակեն դուրս հանելով թերևս դույզն ծառայություն մ'բրած համարիմ:

Անհրկրա եմ, որ փուշեր չի պիտի պսակեն սույն հանդուգն և միանգամայն դողդոջ հայլափոխս, և այն ակամա թերությանց նկատմամբ, որ հարկավ սպրդած են երկասիրությանս մեջ՝ ներողամտություն և հետևաբար հաջալերություն գտնելով, պիտի փութամ հուսալից նորանոր ճիրտությանց ձեռնարկել և այս գրական արհեստը ինչ շատ կատարելագործելու աշխատիլ:

ՀԵՂԻՆԱԿՆ

Ա Ն Ձ Ի Ն Ք

ՄՈՒՐԱՏՈՖ, անանկացյալ վաճառական, Թումմա անվանյալ
ՎԱՐԴՈՒՀԻ, դուստր } *Մուրատոֆի*
ԵԴՈՒԱՐԴ, որդեգիր }
ԳԵՈՐԳ, դրամանենգ, Նահապետոֆ անվանյալ
ՄԱԿԱՐ, սպասաւոր, մատակարար[1] Նահապետոֆի[2]
ՊՈՂՅԱՆՅ, տնօրէն թատրոնի
ՎԱՀԱԳՆՅԱՆ, դերասանապետ
ՃԻՈՐՃԻ
ՍԱԼՈՄՈՆ
ՋԻՋԻԿ, դերասանուհի
Ա. ԴԵՐԱՍԱՆ
Բ. ԴԵՐԱՍԱՆ
Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ
Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ
ԹԱՏՐՈՆԻ սպասաւոր մը

Դերասանք, դերասանուհիք, ոստիկանք[3], ժողովուրդ.

ԱՐԱՐՎԱԾ Ա.

Թովմայի տնակն.—Վարագույրը բացված ժամանակ նդուարդ հողե կանթեղով լուսավորված գրասեղանի մը վրա գրելու զբաղած է.—Գրքեր և թուղթեր ցիուցաք.—Մուրը կոխած է.—Փոթորիկ.—Մերթ ընդ մերթ փայլակը կը լուսավորե սենյակը:

Տեսիլ Ա.

ԵԴՈՒԱՐԴ.— (առանձին գրելու զբաղած՝ հանկարծ պատուհանը կը բացվի, զոր գոցելու կերթա) *Ի՞նչ սարսափելի քամի... փոթորիկ եղած ժամանակ հազիվ հազ այս տնակին մեջ եղած խոսակցություններդ կը լսվին... մարդուս դլուխը և երևակայությունը կը շփոթին.... կարծես թե դուրսը բանականեր դիրար կը զարնեն...*[1] *Այս ազմուկին մեջ դժվար է երևակայությունն ամփոփել և*[2] *հանդարտ գրել կամ բան մը հասկնալու չափ կարդալ...* (նորեն գրասեղանին վով կը նստի և գրիչը թուղթի մը վրա բռնած կը մտածե). *Պատուհանին ուժգնակի բացվելեն և հանած ազմուկեն երևակայություններս ցնդեցան... միտքս բան մը չ'գար...* (գրիչը վար կը դնե): *Վերջապես չի պիտի*

կարենամ սա տեսարանը ուղածիս պես լավ գրել. ապրատ երիտասարդի մը՝ հարուստ տիկնոջ մը սիրահարելով, սերը անոր հայտնելն է... գրածս է թատերգութիւն մը... (ոտքի կելլեն) *երբ Ռուսիո մեջ վարժարանին ելնելս վերջը անգամ մը հոս տեսա թատրոն գացի, շատ ախորժեցա անկե. սեր մը ամի անոր և միշտ կերթայի, շատ անգամ ալ մինակ...* (արխուրեյամբ), *բայց երբ Մուրատոֆ Բոլմա եղավ և զղյակնիս՝ անակ... անկե ի վեր է որ թատերական երեւակայութեանց մեջ ընկղմած՝ թատերգութիւն գրելու կզբաղիմ... առաջին անգամն է որ սիրահարական թատերգութիւն մը ահա կը գրեմ... դեռ չը կրցի ավարտել, գրածս միշտ հեռվհեռ կը սրբագրեմ, մաքուրը կառնեմ և դարձյալ կը սրբագրեմ, և դեռ գրածես գոհ չեմ... բայց երբ վարդուհիին կը կարդամ, շատ կախորժի, կը հավնի, կզմայլի, դիս փոքրիկ բանաստեղծ կը կոչե. Վա՛րդուհի,* (կը ցնցվի, մոազրաղ կարձանագա, ետեւ նայուչով մը կուզե մոխիրը փարատել): *Բայց տեսնեմ սա տեսարանը կրնամ ավարտել...* (գրասեղանին մոտ կը նստի և գրիչը[3] ձեռքը կառնե):

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆ և ՎԱՐԴՈՒՀԻ

ՎԱՐԴՈՒՀԻ.— (կը մոտենա աներ. միճչդեռ նա մոազրաղ՝ տետրակին վրա նայած է. մեկուսի) *Միշտ կը գրե՜*

ՆՈՒՅՆ.— (գրելու ատեն առաջբերելով) *Կը սիրեմ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ընդմիջելով) *Ջա՜վ...*

ԵԴՈՒԱՐԴ.— (շփոթած ոտքի ելնելով) *Քույր իմ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կարծեմ գրութեանդ արդիւնքը եղա։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ընդհակառակն, ժամ մ'է[4] որ կը մտածեի և չէի կրնար գրել... Բայց դու քիչ մը առաջ հոս մտածած էիր, այնպես չէ՞։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Այո՛։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ուրեմն քու ներկայութեանդ և շնչառութեանդ է հզեր, որ զոնե այս բառը գրելու խանդը ներշնչեց ինձ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Երկու ամիս առաջ սկսած թատերգութե՞նդ է գրածդ։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Այո՛... դեռ չը կրցի ամփոփել։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կը տեսնեմ որ առանձին գրելն շատ կախարժիս... ուրեմն եթէ ես մեկնիմ՝ դեղ չըլլար...* (կուզե հեռանալ)։

ԵԴՈՒԱՐԴ.— (եռանդով) *Քո՛ւյր իմ...* (ձեռքեն բռնելով) *քու ներկայութեանդ պակսած վայրկեաններուն է որ գրելով զբաղիլ կուզեմ, և այն տեսութեան վայրկեաններուն[5] մեջ ի՛նչ որ ներշնչես ինձ՝ գրի առնել կը փութամ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ժպտելով) *Ի՛նչ ըսել կուզես։*

ԵԴՈՒԱՐԴ.— *Նստե՛ քիչ մ'ալ խոսակցինք։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (աթոռ մ'առնելով և հովր ննջելով) *Խոսակցինք, եղբայր իմ...*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ահա այդպես...* (հիացմամբ ամոր երեսը կը նայի)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բայց ինչո՞ւ այդպես երեսս կը նայիս։*

ԵԴՈՒԱՐԴ.— (ձեռքը սեղմելով) *Քույր իմ... ո՛րչափ գեղեցիկ ես։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ջիս կը ծաղրես։*

ԵԴՈՒԱՐԴ.— (ձեղաձալով) Կը ծաղրե՞ս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ձեմ գիտեր... երեք չորս ամիս է որ հայելին նայած չունիմ... Արդարև երբ Ռուսիո մեջ էինք... կը հասկնա՞ս... այն ատեն ինքզինքս փոքր ինչ վայելուչ կը կարծեի։

ԵԴՈՒԱՐԴ.— Կը հասկնամ, քույր իմ... Արդարև հոս հայելի չըլլալն զատ մեր հյուղին պատուհանի ապակիներն անդամ փոշոտ ու անթափանց են... Ատոր վրա չը մտածենք... Շարժող տերևին անդամ Ամենակալին շունչը կը դպի կըսեն... Բայց փոխենք խոսակցությունիս... Ի՞նչ կըսեի հիմա... այո՛, կըսեի թե շատ[6] գեղեցիկ ես...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ձիս կը նեղացունե՞ս, Եդուարդ։

ԵԴՈՒԱՐԴ.— Բայց, քույր իմ, մտիկ ըրե... քու գեղեցկությանդ բնական և ճշգրիտ ապացույց մը պիտի տամ, թող հայելին խաբե քեզ... Դու գեղեցիկ ըլլալով՝ քեզ պատող ճառագայթ մը չե՞ս զգար։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ձայդ կզգա, բայց ուրիշ մը... սիրահար է այն։

ԵԴՈՒԱՐԴ.— Ո՛չ... սիրահարը պատողը ո՛չ թե ճառագայթ է, այլ բոց... Կը հասկնա՞ս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Արդարև շատ գիտուն ես։

ԵԴՈՒԱՐԴ.— Այդ հասկցունել չեմ ուզեր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուրեմն ի՞նչ է միտքդ։

ԵԴՈՒԱՐԴ.— (զմայլումը շարունակելով) Որչափ ինքզինքս երջանիկ պիտի համարեի, եթե Ռաֆայել մը ըլլայի և քու պատկերդ գծագրեի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եղբայր իմ, կը տեսնեմ որ շատ ագահ ես... Համարձինի բնարն ունիս և դեռ կուզես Ռաֆայելի վրր-

ձինն ալ ունենալ (ժպտելով), կըսեմ թե շատ ագահ ես, փոքրիկ բանաստեղծս։

ԵՌՈՒԱՐԴ.— Ձիս կը ծաղրես, քույր իմ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Քիչ մը առաջ դու ալ ինծ կը ծաղրեիր։

ԵՌՈՒԱՐԴ.— (տրտմած) Այսպե՞ս կը փոխանակես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (գիրկը ձեռվելով) Տխրեցա՞ր, Եդուարդս... Ուրեմն կընդունիմ քու դաղափարդ, այլ լոկ քեզի համար գեղեցիկ ըլլալու պայմանավ։

ԵՌՈՒԱՐԴ.— Բայց...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եվ դու ալ բանաստեղծ մ'ըլլալդ կընդունի՞ս։

ԵՌՈՒԱՐԴ.— Այո՛, լոկ քեզ երգելու նվիրված ըլլալու պայմանավ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Թող այնպես ըլլա... ուրեմն հաշտվեցանք, սիրելի Եդուարդս։

ԵՌՈՒԱՐԴ.— Այո՛, քույր իմ, ո՜հ, շատ գեղեցիկ ես... Վարդուհի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ե՞րբ։

ԵՌՈՒԱՐԴ.— Պահապան հրեշտակս ես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Վերջապե՞ս։

ԵՌՈՒԱՐԴ.— Կը սիրեմ զքեզ Վարդուհի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Գիտեմ... քրոջդ պես։

ԵՌՈՒԱՐԴ.— (կատմրելով և տխրությամբ) Գուցե՞։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ապշած) Գուցե՞։ (լուրյուն) Ուրեմն դու միտք մը ունիս... լուռ կը կենաս... կը ծածկես դեմքդ. դու ինձնե բաժնվիլ կուզես՝ թողլով այս տնակը, զայն պարածածկող թշվառութենեն ազատելու համար... դուցե...

ԵՌՈՒԱՐԴ.— (եռանդով) Վարդուհի՛, չես հասկցեր միտքս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուրեմն ի՞նչ կուզես որ հասկնամ, եղբայր իմ։

ԵԴՈՒԱՐԴ.— Կաղաչեմ, պիս եղբայրդ մի՛ կոչեր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Տե՛ր Աստված... բայց ահա կապացուցանես իմ[8] ենթադրություններս... զքեզ եղբայր չը կոչե՞մ... Միթե մանկութենե ի վեր քեզի[9] հետ մեծցած ու սպրած չե՞նք, երբ դու սրբ մ'ըլլալով հայրս զքեզ որդիգրեր էր... Միթե եղբոր պես միշտ վիրաւ սիրած չե՞նք. Աստվա՛ծ իմ... հիմա միտքս կարթննա, այնչափ անհամիտ եմ եղեր որ ժամանակն մը ի վեր պիս տեսած առնող բնաւ չէի կասկածեր՝ հանկարծ զգացած թեթև սարսուռներեզ և շփոթություններեզ...

ԵԴՈՒԱՐԴ.— (եռանդով) Ուրեմն ճշմարի՞տ եա։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բնաւ չէի դուշակեր որ օր մը պիտի փոխվիս և... (կը փղձկի)։

ԵԴՈՒԱՐԴ.— Կուլա՛ս, վարդուհի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Անգո՛ւթ, միթե լալու իրավունք չունի՞մ, երբ կը գտնվիս ինձնե...

ԵԴՈՒԱՐԴ.— Վարդուհի, չես հասկնար միտքս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (արտասուքր սրբելով) Բայց ո՛չ, իրավունք չունիմ քեզ բռնադատելու, անշուշտ անհնարին ցավ կղգաս Մուրատոֆի ապտրանեն Թումայի անշուք անունը փոխադրվելով, ուր քաղցը և ցուրտը կը սիրտպետանեն... Գիտեմ, շատ անգամ գրած առնող մտանեդ կը մտնեն և կընդարմանան... շատ անգամ ալ կանթեղին յուղը հատնելով կը մարի և աշխատութեննեդ կը դրկվիս, որ քեզի համար շատ կարևոր և թանկագին է... Գիտեմ, Եդուարդ, առնոր սաստիկ ցավ կը պատճառեն քեզ...

ԵԴՈՒԱՐԴ.— (արտասվալից) Վա՛րդուհի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Գիտեմ, Եդուարդ, կը սիրես զիս, բայց այդ ցավերն ալ կրել՝ քեզ համար դառն և անհնարին է։

ԵԴՈՒԱՐԴ.— Իսկ դո՞ւ, քաղցր և հնք արարած։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ձիս մի մտածեր... ես կը համբերեմ...

ԵԴՈՒԱՐԴ.— Անհնար է որ ես բաժնվիմ քեզնե, վարդուհի, բայց...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ընդմիջելով) Քաշածնե՛րդ...

ԵԴՈՒԱՐԴ.— Մտիկ ըրե, վա՛րդուհի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հիմա կը հասկընամ ատեն ինձ «գեղեցիկ ես» ըսելուդ իմաստը. ըսել կուզեիր՝ թե գեղեցիկ ես, բայց աղքատ... անոր համար...

ԵԴՈՒԱՐԴ.— Վա՛րդուհի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Տե՛ս, առաջ քույր կը կոչեիր զիս և հիմա ատենդ անունս կուտաս։

ԵԴՈՒԱՐԴ.— Հրե՛շտակս... (ձեռքը աչքերուն կը տանի և արցունքով կը բաճա)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Շիտակ խոսե, Եդուարդ, ե՞րբ սիրտի երթաս։

ԵԴՈՒԱՐԴ.— Ո՞ւր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուր որ միտդ դրած ես։

ԵԴՈՒԱՐԴ.— Ա՜հ, իմ հոգիս... մինչև քեզնե բաժնվելն վերջը գերեզմանեն ուրիշ տեղ մ՚ունի՞մ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Գերեզմա՞ն։

ԵԴՈՒԱՐԴ.— Սոսկացի՛ր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Շա՜տ մութ կը խոսիս, Եդուարդ։

ԵԴՈՒԱՐԴ.— Լավ... Վարդուհի, համարձինի սիրավեպ «Ռաֆայել»-ը կարդացեր ես[4]), այնպես չէ՞։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո՛...

ԵԴՈՒԱՐԴ.— Անշուշտ ինքզինքդ Հուլիայի տեղ երևակայեցիր[5]։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո՛... վաճռի սրտիս համապատկերը կը տեսնեի։

ԵԴՈՒԱՐԴ.— Եվ Ռաֆայելի տեղ զո՞վ երևակայեցիր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Նույնիսկ Ռաֆայելը, համամտան Ռաֆայել մը։

ԵԴՈՒԱՐԴ.— (աչերը խոնարհելով) Հիրավի՞, ես Ռաֆայելի չափ գեղեցիկ չեմ[6]։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (շփոթած) Դո՜ւ։

ԵԴՈՒԱՐԴ.— (ձեռքը սրտին տանելով և իր սիրարորբոք ճայվածքը ձեռք աչացը մեջ ճառելով) *Վարդուհի՛...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ճանկարծ ցնցվելով և փղձկելով) *Եդուա՛րդ...* (գիրկը կիյնա, լռություն)։

ԵԴՈՒԱՐԴ.— *Վարդո՛ւհի, բնությունը շատ զորավոր է... Առաջները քեզ քրոջ մը պես անտարբեր կը սիրեի, մինչև անգամ գեղեցկությունդ չէի նշմարած... հոգը սրտիս մեջ վառած խունկ մը ծխեցավ... սիրտս լեցավ զնդվելու չափ, աչերս հեշտ արցունքներ սկսեցին ցայտել... անհանգիստ էի... սրտիս վրա բեռ մը կար, քեզ տեսնելուս կը շփոթեի, կը կարմրեի, սիրտս կը բաբախեր... զգացի որ կը սիրեի... զգացի որ եթե այս հեշտ հուրը սրտիս ծալքերուն մեջ թաղևի, մոխիր պիտի դառնայի, շունչս պիտի հատներ, պիտի նվաղեի... ա՜հ, կը սիրեի... կըզգայի որ դու ա՛լ իմ քույրս չէիր, այլ ավելի գերբնական էակ մը... եթե հրեշտակ մը ըսեմ, բայց չզգար նա... և դու ալ բան մը չէիր զուշակեր, բան մը չէիր զգար...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բայց դու երբեք այնպես նայած չէիր աչերուս խորը, ինչպես որ քիչ մը առաջ նայեցար... և ես երբ*

արտասվալից բիբերուդ մեջ հառեցի աչքս, կայծ մը ցայտանց անկե սրտիս խորը... Ո՜հ, ի՞նչ եղա... չեմ գիտեր, այլ կզգամ որ Հուլիան եմ և դու իմ Ռաֆայելս... Ո՜հ, ի՞նչ կզգամ... ի՞նչ կըլլամ... Սիրտս կվկնե, բայց երջանիկ եմ...

ԵԴՈՒԱՐԴ.— Ինձ նման:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց այս խուցը շատ հեղձուցիչ է, Եդուարդ:

ԵԴՈՒԱՐԴ.— Եթե կուզես, քիչ մը դուրս ելնենք:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Փոթորիկը անցա՞վ:

ԵԴՈՒԱՐԴ.— Այո՛... ալ հովը չը մռնչեր և ահա երկնից երեսը աստղերը կը փողփողեն:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուրեմն քիչ մը շրջագայինք անակին բոլորտիքը... քիչ մը օդ շնչենք... վաղուց դու ալ գրկե հոգնած ես... այնպես չէ՞ Եդուարդ (Եդուարդ հավանական նշան կրնե) անս, որչափ գեղեցիկ է երկինքը (կը մեկնին):

Տեսիլ Գ

ԹՈՎՄԱ և ՍԱԼՈՄՈՆ

ՍԱԼՈՄՈՆ.— (ներս մտնելով) Վերջապես պիտի տա՞ս առակները:

ԹՈՎՄԱ.— Հիմա ժամանակ չունիմ տալու:

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց, պարո՛ն, այդ պատճառաբանության վերջը ե՞րբ պիտի գա... Ջորս ամիս է որ տունս կը նստիս, 100-ական ղուրուշն[10] կրնե 400 ղ<ու>ր<ու>շ[11] և դեռ 50 ղ<ու>ր<ու>շ[12] թերհաշիվ առած չեմ...[7]) Այս ճամբան չելնենք:

ԹՈՎՄԱ.— Բայց չե՞ս տեսներ, պարոն, ես աղքատ եմ:

ՍԱԼՈՄՈՆ.— Այդ իմ փո՞ւթս է, եթե կուզես, միլիոնատեր եղիր, միայն թե իմ տանս ամսականը անթերի վճարես...

ԹՈՎՄԱ.— (մեկուսի) Երբեմն էի միլիոնատեր...

ՍԱԼՈՄՈՆ.— Վերջապես, ի՞նչ սիտի ընենք... ոստիկանության դիմենք. տունես ել կըսեմ, այդ ալ չես ըներ։

ԹՈՎՄԱ.— Բայց ո՞ւր երթամ, պարոն, այսպես աղքատ։

ՍԱԼՈՄՈՆ.— Ուր կուզես գնա՛, ա՛յդ ալ ինձ սիտի հարցնես, եթե կուզես սատանային ծակը գնա՛։

ԹՈՎՄԱ.— Դեռ քանի մ՚օր ալ համբերե, բարեսիրտ պարոն, կաղաչեմ։

ՍԱԼՈՄՈՆ.— Վե՞րջը։

ԹՈՎՄԱ.— Անշուշտ Աստված կուտա օր մը։

ՍԱԼՈՄՈՆ.— Հը՛... Աստված կուտա, Աստված իր տալիք տեղը չը՞ գիտեր. եթե տալու միտք ունենա, ինծի կուտա որ աշխատութենես հոգիս բերանս կուգա, և ո՛չ թե քեզի՝ որ ո՛չ արհնատ ունիս և ոչ ալ կաշխատիս՝ պատճառելով թե տկար և հիվանդոտ ես... Բայց ես մեր Սուրբ Մովսեսի լուսեղեն եղջյուրներուն վրա կերդնում որ բողկի մը վար չես մնար։

ԹՈՎՄԱ.— Վերջապես, պարո՛ն...

ՍԱԼՈՄՈՆ.— Սատկե՛ր։

ԹՈՎՄԱ.— Քեզ ըսի որ քանի մ՚օր ալ սպասե։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց մեթե չորս ամսե ի վեր ճանչցած մարդս դու չես։

ԹՈՎՄԱ.— Վերջապես ի՞նչ ըսել կուզես։

ՍԱԼՈՄՈՆ.— Հասկցա... ոստիկանությունը կը լմնցնե այս գործը...

ԹՈՎՄԱ.— Բայց, պա՛րոն...

ՍԱԼՈՄՈՆ.— Քեզ մարիկ ընելու ժամանակ չունիմ... այո՛... ասոիկանութիւնը...

ԹՈՎՄԱ.— Ուրիմն ինչ որ կուզես ըրե՛...

ՍԱԼՈՄՈՆ.— Օ՜, ասոիկանութիննե՞ն ալ չես պատկառիր։

ԹՈՎՄԱ.— Քանի մը օր բանտը պիտի պահկիմ... ավելի՞նը

ՍԱԼՈՄՈՆ.— Իրավունք ունիս, ասոիկանութիւնը տեսնելով որ աղքատ ես, քանի մը օր բանտը պիտի դնե քեզ՝ իբրև պատիժ կամ հատուցում պարտքիդ. այնուհետև պիտի արձակե և մեր 400 ղ<ու>ր<ու>շը[13] մնչ պիտի խաղա ասոիկանական ծախքերու հետ... Պարո՛ն, աշխատե սա պարտքդ վճարելու, մեղք է ինձ ալ, քեզ ալ. դու պատիվդ պիտի կորանցնես[14], ես ալ՝ ստակս... Գիտե՞ս, պարո՛ն, հոս ժամանակավ 500 ղ<ու>ր<ու>շ[15] ծախք ըրած եմ այս տանը շինութեանը համար որ իր[16] դիրքովը և շենքովը հովանոցի վար չը մնար. 500 ղ<ու>ր<ու>շ<ը>[17] շատ մեծ բան էր այն ժամանակվան և նույնպես հիմա՝ քեզ համար... վարձվոր պակաս չէ այս հովանոցին համար, որ թեպետ անմարդի տեղ մ՚է, բայց և այնպես անտառներ, ձորեր ու պարտեզներ կը շրջապատեն գայն, արևելքը ու արևմուտքը միշտ աշաց առջև... դուցե ամառականն ալ իր արժեքեն շատ պակաս է. բայց ինչ որ է, բան մ՚է ըրինք... պարո՛ն, վերջին անգամ կըսեմ, եթե չես կրնար վճարել, կարասիներդ դուրս պիտի հանեմ... մարդու պես տեսնվինք... իմ անխելքութիւնս որ երբ հովանոցը վարձելու համար ինձ ներկայացար, ազնվականի պես հագուստդ մաքուր ըլլալուն՝ աչքս շլացավ և իսկույն հովանոցս քեզ հանձնեցի... աղեկ միտքս եկավ, պարո՛ն,

ի՞նչ ըրիր այն հագուստները, որ առնվազն 500 ղ<ու>ր<ու>շ[18] *կարժեին։*

ԹՈՎՄԱ.— Ծախեցի։

ՍԱԼՈՄՈՆ.— Եվ ստակնե՞րը...

ԹՈՎՄԱ.— Հայց առի ընտանյացս։

ՍԱԼՈՄՈՆ.— Առանց պա՞րտդ մտածելու, անիրա՛վ... և ո՞վ գիտե, ի՞նչպես տեր եղեր էիր այն հագուստին. և ինչպես որ գուշակել կուտաս, անշուշտ հանգերձավաճառը քնացած առենը գնեցիր։

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն...

ՍԱԼՈՄՈՆ.— Վերջապես մեր գործին նայինք... ե՞րբ պիտի տաս դրամը... պատասխան տուր։

ԹՈՎՄԱ.— Չը գիտեմ։

ՍԱԼՈՄՈՆ.— Չը գիտե՞ս... մինչև կատա՞կ կընես ինձ հետ...

ԹՈՎՄԱ.— Թող ղիս կըսեմ։

ՍԱԼՈՄՈՆ.— Թողում ղքեզ, բայց ստակ պետք է ինծի... (զրնգնելով) Այս աթոռները՝ խարխուլ... սա գրասեղանը՝ որդնակեր ու փտած... (շուրս կողմը զննելով) Բայց նոր ու մեծագին կարասի մ՚ալ չունիս, որ թերհաշիվի տեղ տաս... պարոն, ստակ պետք է ինծի... ստա՛կ... (բալթոն զննելով) Հը՛, գոնե սա տուր իբրև թերհաշիվ, որ գոնե առ առավելն ֆրանք մը կարժե... այո՛, այո՛, այդ տուր։

ԹՈՎՄԱ.— (սպառնալից) Պարո՛ն, եթե չես ուզեր որ ձեռքիս կրակ թափի գլխուդ, թո՛ղ ղիս...

ՍԱԼՈՄՈՆ.— (վախնալով) Սպառնալի՞ք... կրա՛կ... Ա՜հ վերջապես մարդասպան ըլլալդ ալ կը հայտնես... Ա՛նօրեն մարդ, ստակներս կը կլլես և կը հալեցնես, հիմա ալ կըսպառնաս ինձ մարդասպանի մը կերպարանքով։

ԹՈՎՄԱ.— (հանդարտությամբ) Պարո՛ն, կաղաչեմ, դեռ քանի մը օր ալ սպասեք:

ՍԱԼՈՄՈՆ.— Հիմա ալ տեսար որ քու սպասելիքդ չեմ վախնար, հը՛, հը՛, կեղծավորությամբ և խոնարհությամբ կուզես ճամբել դիս... ո՛չ, ո՛չ, կա՛մ սուակս կուտաս կամ բանտ կերթաս: Այո՛, այո՛, ալեկ միտքս եկավ, թող սուակներս փճանան, դու բանտ երթալեդ եառքը կրնամ կարասիներդ փողոցը նետել և ձեռքեդ ազատիլ. այո՛, այնպես պիտի ընեմ... դու գույն փախստական մ'ես, և եթե ոստիկանության ձեռքն իյնաս, քեզ հարցաքննելով ի՛նչ տեսակ մարդ ըլլալդ կը գիտնան, և սաով ոստիկանության ծառայության մ'բրած կըլլամ...

ԹՈՎՄԱ.— Կաղաչեմ, պարո՛ն, այդ բանը մի՛ դործադրեք:

ՍԱԼՈՄՈՆ.— Տե՛ս ի՛նչպես շփոթեցար, և կը բծնի... շիտակ ըսե, թիարանին շղթա՞յն կոտրեցիր ու փախար, թե բանտին պատուհանին երկաթե վանդակը... վերջապես եղեռնագործ մը կերևիս (երթալու կըլլա):

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն:

ՍԱԼՈՄՈՆ.— (դառնալով) Ի՞նչ է... պիտի տա՛ս սուակներս:

ԹՈՎՄԱ.— Հիմա չեմ կրնար...

ՍԱԼՈՄՈՆ.— Ուրեմն պետք է որ առնելիքս գոհեմ արժանավոր կերպով քեզ պատժել տալու համար (նորեն երթալու կըլլա):

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն, կը խոստանամ... վաղը դուրս կը հանեմ կարասիներս:

ՍԱԼՈՄՈՆ.— Հապա սուակնե՞րը:

ԹՈՎՄԱ.— Դու չըսի՞ր որ գոնե տունես դուրս ել:

ՍԱԼՈՄՈՆ.— Առա՞նց սուակները տալու... այդ ալ չըլլար:

ԹՈՎՄԱ.— (աղեւսաձոռ) *Շնո՜րհ... պարոն... կը վճարեմ։*

ՍԱԼՈՄՈՆ.— *Վճարեն ուրեմն... տեսնեմ։*

ԹՈՎՄԱ.— *Բայց ըսի քեզ*[19] *թէ հիմա չեմ կրնար... բանի մ'օրեն։*

ՍԱԼՈՄՈՆ.— *Ո՛չ, ո՛չ, չըլլար, պետք է որ միտքս դրածս ընեմ* (երթալու կըլլա)։

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ և ՄԱԿԱՐ

ՄԱԿԱՐ.— *Հրեա, ի՞նչ կուզես այս մարդեն։*

ՍԱԼՈՄՈՆ.— *Տանս վարձքը, պարոն, չորս ամիս է որ պահաշիվ անգամ առած չեմ։*

ՄԱԿԱՐ.— *Ես խոսք կուտամ որ այս մարդը քանի մ'օրեն պահանջդ ամբողջ կը վճարէ... Ինքը բարեսիրտ և պատուավոր մեկն է և քու բոլոր ննջադրութիւններդ...*

ՍԱԼՈՄՈՆ.— *Ներեցեք, պարոն, չէի գիտեր...*

ՄԱԿԱՐ.— *Ուրեմն բաւ՛ծիս պես...*

ՍԱԼՈՄՈՆ.— *Շատ ապեկ, պարոն,* (մեկուսի) *Նահապետական մատակարարն է, հոգ չէ, հետիք է որ փորր ինչ այս մարդը ճանչէ կամ անոր երաշխաւորելու պես բան մ'ընէ...* (բարձր՝ Մակարի) *Ահա կերթամ, պարոն...* (կերթա)։

Տեսիլ Ե

ԹՈՎՄԱ և ՄԱԿԱՐ

ԹՈՎՄԱ.— (որ ապշած և մտածմանց մէջ ընկղմած էր. գլուխը վեր առնելով և Մակարիէ մոտենալով) *Պարո՛ն, թերևս չեմ ճանչեր զձեզ, այլ չի պիտի մոռնամ ձեր բրած բարեբարութիւնը...*

ՄԱԿԱՐ.— Պարո՛ն, ես կը նեղանամ, երբ պարտք մը բարերարության վերածելով ինձմե շնորհակալ ըլլաք... Դուք Հայ եք, նույնպես[20] ես ալ[21] Հայ, միթե կրնա՞յի անտարբեր ըլլալ և չը միջամտել գծուծ Հրեայի[22] մը նախատանացը ենթակա ըլլալնիդ տեսնելուվ[23] առանց ազգայնությանս կրակը զրգռելու։

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն, ներեցեք եթե համարձակիմ հարցունել[24] ձեզ, թե ի՞նչ շարժառիթով իմ տունս գալու պատիվը կրնեք ինձ...

ՄԱԿԱՐ.— Ա՛, այդ այնպիսի խնդիր մ'է, որ ձեր գլխուն այդ տաք միջոցին չը լուծվիր... Նախ և առաջ ներեցեք որ հարցնեմ, թե ի՞նչ է ձեր անունը։

ԹՈՎՄԱ.— (չփոթած) Թովմա։

ՄԱԿԱՐ.— Ուրեմ, պարո՛ն Թովմա, եթե կը հաճիք, նստինք։

ԹՈՎՄԱ.— Շատ աղեկ, պարոն, (աթոռ մը կը բերե Մակարի, որ նստի) Զգուշացեք, պարոն, նստելու առեննիդ, աթոռը խարխուլ է...

ՄԱԿԱՐ.— Հոգ չէ, պարոն Թովմա (կը նստի). բայց դուք ինչո՞ւ ոտքի վրա կեցաք, աթոռ մ'ալ դուք առեք և նստեցեք։

ԹՈՎՄԱ.— Շնորհակալ եմ, պարոն (աթոռ մը կառնե)։

ՄԱԿԱՐ.— Օ՜, ես չեմ ախորժիր այդպիսի չափազանց քաղաքավարական ձևերեն, եթե կը ներեք։

ԹՈՎՄԱ.— Ինչպես որ կը փափաքիք, պարո՛ն... (կը նստի)։

ՄԱԿԱՐ.— Անուննիդ Թովմա էր, այնպես չէ՞։

ԹՈՎՄԱ.— Այո՛, պարոն...

ՄԱԿԱՐ.— Կարծեմ որ դուք Թովմա առաքյալի[25] չափ դժվարահավատ չեք...[8])

ԹՈՎՄԱ.— Հավատացեք, պարոն, որ...

ՄԱԿԱՐ.— (ընդմիջելով) Կատակ մ'էր ըրածս... Պարո՛ն, ձեր վիճակին վրա շատ կը ցավիմ։

ԹՈՎՄԱ.— Այդ ձեր բարեսրտությունն է։

ՄԱԿԱՐ.— Իմ՝ այսպես տարաժամ քու տունդ գալուս վրա ղպացած հետաքրքրությունդ հագեցնելու համար՝ պետք է քեզ իմացնեմ, թե քու ցավալի վիճակիդ դարման մը գտնելու համար եկած եմ։

ԹՈՎՄԱ.— Շնորհակալ եմ, պարո՛ն։

ՄԱԿԱՐ.— Դուն չես ճանչեր զիս, բայց ես զքեզ կը ճանչնամ...

ԹՈՎՄԱ.— (շփոթած) Ձի՞ս...

ՄԱԿԱՐ.— Այո՛... ես շատ անգամ մութը կոխած ժամանակ քեզ նստած տեսած եմ Ֆըստըք փողոցին պարտեզին պատին տակ, ուստի շուկայի անցորդները կը վերադառնան։

ԹՈՎՄԱ.— Սխալ տեսած ըլլալու եք, պարոն...

ՄԱԿԱՐ.— Գիտեմ, պարո՛ն, կամաչես մուրացկանի վիճակիդ վրա, զոր ընդունելու հարկադրած են քեզ կենաց ատիպողական բնդմունքները... Դադտնիք մ'է այդ ինձ համար, որուն խորը չեմ ուզեր թափանցել՝ վախնալով որ սիրտդ անհուն ու դառն հիշատակներով կը լեցնեմ։

ԹՈՎՄԱ.— Այո՛, պարոն, այն մարդը ես եմ...

ՄԱԿԱՐ.— Իմացա որ դուն ընտանիք ալ ունիս եղեր։

ԹՈՎՄԱ.— Այո՛, աղջիկ մը և որդեգիր մը։

ՄԱԿԱՐ.— Աղջիկդ շատ գեղեցիկ է եղեր։

ԹՈՎՄԱ[26].— (շփոթելով) Բավական։

ՄԱԿԱՐ.— Ինչ որ է... առաջին վարձը 50 կլորիկ ու կարմրուկ ոսկի արժելու չափ գեղեցիկ։

ԹՈՎՄԱ.— (ապշած) Ի՞նչ ըսել կուզեք, պարոն։

ՄԱԿԱՐ.— Նախախնայրիքը։

ԹՈՎՄԱ.— Չեմ հասկնար, պարոն ..

ՄԱԿԱՐ.— Պարոն Թովմա աղջիկդ կը սիրե՞ս։

ԹՈՎՄԱ.— Կը հարցնե՞ք։

ՄԱԿԱՐ.— Հարուստ ըլլալ կուզե՞ս։

ԹՈՎՄԱ.— Հարո՞ւստ... մութին մեջ չը մուրալու չափ։

ՄԱԿԱՐ.— Կուզե՞ս որ աղջիկդ քու մուրացած չոր հացդ չուտե և դու ալ մուրալու համար վերարկուովդ երեսդ չը ծածկես մութին մեջ։

ԹՈՎՄԱ.— Ա՜հ, պարոն, սրտիս խորեն կը խոսիք։

ՄԱԿԱՐ.— Շատ կը ցավիմ, որ այսչափ առեն անգիտակցաբար կը տառապիք։

ԹՈՎՄԱ.— Եվ ի՞նչ կրնամ ընել, քանի որ...

ՄԱԿԱՐ.— (ընդմիջելով) Քանի որ ձեռքիդ տակ գանձ մ'ունիս...

ԹՈՎՄԱ.— Չեմ հասկնար միտքերնիդ, պարոն։

ՄԱԿԱՐ.— Պարոն Թովմա աղջիկդ հարուստ է։

ԹՈՎՄԱ.— (ժպտելով) Կաղաչեմ, ազնիվ պարոն, կատակը մեկդի։

ՄԱԿԱՐ.— Պարոն, Թովմա առաքյալ մի ըլլար գլխուս։

ԹՈՎՄԱ.— Բայց դուք դարձվածավոր կը խոսիք, պարոն։

ՄԱԿԱՐ.— Ուրեմն պարզապես եղելությունը հասկցնեմ քեզի... Վերին աստիճանի ազնվական մը այս օրերս աղջիկդ տեսեր է...

ԹՈՎՄԱ.— Ո՞ւր տեղ։

ՄԱԿԱՐ.— Չեմ դիտեր, դուցե այս տնակին բովի ճամբեն ձիով անցած առենը... Վերջապես ձեր աղջկան դեղեց-

կությունը իր սիրտը գրավեր է... պարզապես ըսենք, սիրահարեր է... Ես այն ազնվական անձին մատակարարն ըլլալով, քեզ տեսնելու և այս գործին վրա խոսելու պաշտոնն ինծի հանձնված է։

ԹՈՎՄԱ.— Ուրեմն այդ ազնվական անձը կը պիջանի իմ աղջիկս իրեն կին առնելու։

ՄԱԿԱՐ.— Ա՜հ, ոչ, շատ բարձրերը ելար... մխթս լավ չես հասկցեր...

ԹՈՎՄԱ.— Ուրեմն հառաչ տարեք խոսքերնիդ։

ՄԱԿԱՐ.— Մթին հնա՞ր է որ վերին աստիճանի ազնվական մը խոնարհի մուրացկանի մը աղջիկ իրեն բացատրակ կին առնել. այս ըսելով միտքս քեզ նախատել չէ... բայց աստանկ անտեղի ամուսնության անտեղի ջրույցներ և ենթադրություններ կը հաջորդեն, որ կրնան նորին ազնվության հարցն ու վարկը կոտրել։

ԹՈՎՄԱ.— Այո՛, շատ սխալ հասկցեր եմ։

ՄԱԿԱՐ.— Բայց դարձյալ տեր ձեր աղջկան սիրահարած է և իր սերը պսակելու համար պետք է որ հարստանիքը գաղտնաբար տեղի ունենա, կարելի եղածին չափ անշուք։

ԹՈՎՄԱ.— Այո՛, պարոն։

ՄԱԿԱՐ.— Բայց դարձյալ ասի պատիվ մ'է քեզի, վասնզի աղջիկդ ալ թշվառության չը կրնալով տոկալ և իր դեղեցկությունն ալ հայելիին մեջ ստեպ տեսնելով, վերջապես... աղջիկդ լկտի և հասարակաց չեղած... տեր կուզե իր անմեղ ճակտին նախախնայրի վարդը ծախու տանել... 50 ոսկիի... ի՞նչ կըսես։

ԹՈՎՄԱ.— (զառանցելով) 50 ոսկի՞...

ՄԱԿԱՐ.— Մտածե... 50 փայլուն ռակի:

ԹՈՎՄԱ.— Բայց ո՞վ է ձեր տերը, պարոն, կրնա՞մ գիտնալ:

ՄԱԿԱՐ.— Չես ճանչեր... Ռուսիացի վաճառական մ'է:

ԹՈՎՄԱ.— (շիոլած) Ռուսիացի՞...

ՄԱԿԱՐ.— Ի՞նչ կա... կը ճանչե՞ս...

ԹՈՎՄԱ.— Անունն ի՞նչ է արդյոք:

ՄԱԿԱՐ.— Նահապետոֆ:

ԹՈՎՄԱ.— (մտազբաղ) Նահապետո՞ֆ... ո՛չ, չեմ ճանչեր (մեկուսի), այս անունով ոչ ծանոթ ունիմ և ոչ ալ պարտատեր:

ՄԱԿԱՐ.— Ուրեմն մեր սակարկութեանը նայինք... մի՛ վախնար, այս անգրը դաղտնիք պիտի ըլլա քու և աղջկանդ, իմ և տիրոջս մեջ... աղջիկդ դարձյալ աղջիկ է... 50 ռակի ալ բացին շահ, նաև չը մոռնամ ըսելու որ տերս՝ ի սեր աղջկանդ՝ այս դումարը գրեթե նպաստ կուտա և ոչ հատուցում... 50 ծիծաղկոտ ռակի... կընդունի՞ս...

ԹՈՎՄԱ.— (միշտ մտազբաղ) Կընդունիմ:

ՄԱԿԱՐ.— Մաքսատունեն վաճառք փախուցածի չափ եղար, պարո՛ն Թովմա... հուսամ թե աղջիկդ ալ բնավ արտընջալու առիթ չի պիտի ունենա... ե՛րբ պատրաստ ես:

ԹՈՎՄԱ.— Երբ որ ձեր տերը գալու հաճի:

ՄԱԿԱՐ.— Ուրեմն դիշեր բարի:

Տեսիլ Զ

ԹՈՎՄԱ.— (առանձին կերթա, աթոռի մը վրա կը նստի մտազբաղ՝ ձեռքը ճակտին դրած) Ա՛լ մուրացկան չեմ, ալ չի պիտի ամաչեմ, ալ մուքին, անձրևին ու ձյունին տակ, առանց երկինքի աստղերուն նայիլ համարձակելու՝ ալ

գլուխս չի պիտի կախեմ կուրծքիս վրա որ երեսս չը տես-
նեն. ալ դողդոջ թևերս երկնցուցած առնես անցորդ
մանկտիք ափիս մեջ նետդյալ դրամ չի պիտի նետուն և
դիս խաբեն ու ծաղրեն. ալ վեր պիտի բոնեմ ճակատս,
ուր խորշոմն ու խոհմունքը ծանրացան... Այս իրիկուն
անձրևին ամենքը շտապով կերթային և չէին տեսներ գի-
շերվան մութին մեջ անկյուն մը կծկող թշվառ մարդը՝ որ
տեղատարափին, քոնին տակ անշարժ ու դրեթե անդգա
ստվերի պես՝ պաղ քարի մը վրա նստած՝ անցորդներուն
բարեմաղթություններ կը մրմնջեր, մարդ մը, որ անծա-
նոթ անցորդներու ոտնաձայնը կը հաշվե, կարծես իր
հույսը մարդոց ոտքին տակ կը փնտռեր... չը տեսան այն
մարդը որ խեղճ ընտանիքի մը հաց տանելու համար
հոն կը թրներ... մեկը չը տեսավ խավարին մեջ այն սև
ամպը որ կը շնշեր... որուն ներսեն ալ կանձրևեր... չը տե-
սան ու անցան... ոտնաձայնները դադրեցան... անձրևեն
թրջած մարդիկը իրենց տունը դարձան և ճարճատուն
վառարանի մը բոլորտիքը կը չորնային ու կը տաքնա-
յին... անդին մութին մեջէ մարդը նոր ոտքի կելներ,
բայց ծանր, վանդի իր ոտքերը թրջած, թմրած և ըն-
դարմացած էին... առաջին անգամ գլուխը վեր՝ երկինք
վերցուց... լացավ ապու[27] պես այն անձրևոտ գիշերվան
հետ... ծանր ծանր տուն դարձավ առանց հացի... այն
անձը ես եմ... այն անձը վաճառական Մուրատոֆն է,
որ մուրացկան Թովմա անունով առանց հացի և անոթի
տուն կը դառնա այժմ. ա՜հ, աղջկանս դահիճը կըլլամ,
ալ մուրացկան չեմ ըլլար... ի՞նչ պիտի ընեն խեղճը այս-
պես պեղնցիկ և թշվառ մնալով. մեկը կին չառներ պինքը,

վանդի հայրը մուրացկան է... վերջապես իր ճակատագիրը հոն կանդ կառնե, ինչ որ ես վճռեցի քիչ մը առաջ... այո՛, թող անպատիվ ըլլա, բայց ոչ անոթի... վանդի անոթի մարդը, աղքատ մարդն արդեն անպատիվ է... ի՜նչ աշխարհ, ի՜նչ մարդկութիւն, որ ցնցոտիով ծածկված սրտին ազնվութիւնը կը մարևն... այո՛, անպատիվ կըլլամ, բայց ոչ անոթի:

Տեսիլ Է

ԹՈՎՄԱ, ՎԱՐԴՈՒՀԻ, ԵԴՈՒԱՐԴ (ձեռքը գիրք մը կը թղթատե և կը կարդա)

ՎԱՐԴՈՒՀԻ.— (հոգը կը մոռնե, ու պոռալ մը վրա ինկած է մտազբաղ) *եկեր ես, Հայր իմ... այդ որչա՜փ թրջեր ես:*

ԹՈՎՄԱ.— *Այո՛, բավական... քիչ մը առաջ տեղացող անձրևին տակ կեցողն ի՞նչ պիտի ըլլա:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բայց ի՞նչ հարկ կար անձրևին տակ կենալու:*

ԹՈՎՄԱ.— *Որովհետև մեկուն կսպասեի:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ո՞ր անսիրտն այդպես անձրևին տակ սպասցընել տվավ քեզ:*

ԹՈՎՄԱ.— *Իմ բաածս մարդ չէ, հոգի չունի, այլ հոգի կուտա, անունն է Հաց... վաղվան բաժին ինկած Հացերնիս չը կրցի բերել:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Հոգ մի ըներ, Հայր իմ, անշուշտ կուտա:*

ԹՈՎՄԱ.— (ընդմիջելով) *Ո՛վ:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Աստվա՜ծ:*

ԹՈՎՄԱ.— (ակռաները կրճտելով) *Աստվա՜ծ...* (հանդարտությամբ) *Այո՛, Աստվածը...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կրակարաններս ամայի է, եթե ոչ Հագուստներդ կը չորցընեինք։

ԹՈՎՄԱ.— Հոգ չէ, Վարդուհի... ես գոհ եմ որ փոթորկին ժամանակ պատին տակ նստած տանիս կայծակը չը զարկավ դիս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ինչո՞ւ նստար պատին տակ, անոր համար թրչե՞ր ես։

ԹՈՎՄԱ.— Կը մուրայի։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Աստվա՜ծ իմ։

ԵԴՈՒԱՐԴ.— Ի՞նչ կը լսեմ (գիրքը գոցելով գրասեղանին վրա կը նետե ու ոտը կը մոտենա)։

ԹՈՎՄԱ.— Այո՛, կը մուրայի՛... ոչ մի լոկ այս պիշեր... այլ ամեն պիշեր՝ երբ մութը կոխելուն դուրս կելնեի. դուր չէիք մտածեր անգամ մը մի մեր հայրը ի՞նչպես կը բերե այս հացը և մե՞վ կուտա զայն։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Աստվա՜ծ։

ԹՈՎՄԱ.— (ակռաները կրճտելով) Աստվա՜ծ... (ճանդարտութեամբ) Այո՛, Աստվա՜ծ... և ի՞նչպես չը մուրայի, մինչդեռ անակնկալ դիպվածով մը պարտուց ահագին գումարով անանկացած՝ Բուսիայեն հոս փախչելու ստիպվեցա՝ գրպանս մեկ քանի մանեթ միայն ունենալով. արհեստի մը տեղյակ չըլլալով, չէի կրնար օրապահիկս ճարել հոս, վասնզի չէի կրնար մեկուն քով ծառայութեան մտնել կամ պարապորդ և անարհեստ մարդո մը բաժին ինկած նվաստ աշխատութեան մը պարապել, վասնզի երբեմն Մուրատոֆ մ'էի. քանի որ դու կար կարելու վարժ չէիր և Եդուարդ միշտ գրելու զբաղած էր, քանի որ թշվառութեանն ու անոթութեանը մեզ կսպառ-

նար՝ ի՞նչ կրնայի ընել... միտքս դրի մուրացկան մ'ըլլալ, վերարկուովս երեսս ծածկած՝ իրիկուններըմութ առեն ափս բանալ այնպիսի մարդոց՝ որոց եթե անունս տայի, ըսեի թե ես[28] Մուրատոֆն եմ, ապշած ու զարհուրած ետ ետ կը քաշվեին առանց դրամ մը տալու՝ որուն կարոտ էի... լռեցի միշտ, դեմքս ծածկեցի և ձեռքան մը չը հայտնեցի՝ մտածելով որ գուցե մուրացված հաց է ըսելով չէիք ուտեր. բայց հիմա ամեն բան կը հայտնեմ, վաղվզի ալ չի պիտի մուրամ... (փոփոխակի աճոնց եւեսը կը ձայի). *բայց երկուբեդ և ոչ մեկը չըսեր[29] թե ի՞նչ պիտի ընեք, ի՞նչպես հաց պիտի գտնեք:*

ՍԴՈՒԱՐԴ.— Մենք անոթի չենք, հայր իմ:

ԹՈՎՄԱ.— Հիմա... բայց վա՞ղը:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Աստված կուտա:

ԹՈՎՄԱ.— (ակռաները կրճտելով) *Աստվա՞ծ:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ինչո՞ւ կը հուսահատիս, հայր իմ:

ԹՈՎՄԱ.— Եղուա՛րդ, Մուրատոֆի սպարանը կը վայելեր կարդալ, գրել, նվագել և պրոսնուլ... բայց Թովմայի հյուրը սառնք չընդունիր. եթե չես ուզեր յուզուս օձիքով, մաշած ու պատռած հագուստ հագնիլ, ոսկեզօծ ըշվառ մը, ինձի պես մուրացկան մ'ըլլալ, սա տարբերությամբ, որ եթե ես պղնձե թաս մը ունիմ, դուռ քնար մը պիտի ունենաս... վերջապես եթե չես ուզեր բացարձակ մուրացկան մ'ըլլալ, կրակը նետե այդ մրոտած թուղթերը, որոց վրա ընդունայն քիրտ և լույս կը թափես... տաղերգությանդ մեջ սիրուհիդ առջև խոստումներ, անձնուրացություններ կը շարես, բայց երբ ամուսին ըլլաս՝ չոր հաց անգամ չես կրնար տանիլ անոր... հրաժարե այդ բոզդր

բայց խաբուսիկ երևակայություններեն և երազներեն, հրաժարի այդ թովիչ փառքեն, ջախջախի այդ մուրացկանության նպատակդ քնարը:

ԵԴՈՒԱՐԴ.— Բայց օր մը անշուշտ անոր հարկը կը ճանչցվի:

ԹՈՎՄԱ.— Այո՛, գուցե անունդ ոսկեզօծ պիտի հիշատակվի խնդճ և անշուք մեռնելի վերջը, հորանջող քահանաներ՝ գերեզմաններուն ճամբուն վրա գտնված փոսի մը մեջ քեզ նետելե հաքը, երեսակս ու դժգոհ մեռելաթաղներ քանի մը թի ցուրտ հող վրադ թափելե և տարիներ գերեզմանիդ հողակույտը հարթ ու անհայտ ընելե վերջը: Մա՛րդն է ապրողը թե փտած ոսկորը, սի՛րտն է պպզողը թե գերեզմանը... կը հասկնա՞ս... գնա, գործավոր եղիր՝ արհեստավոր[30], սպասավոր[31] եղիր[32], բայց երբեք մի՛ փափագիլ Հայ մտավորական ըլլալու: Ահա իմաց կուտամ քեզ. վաղվընե գնա առակ վաստակելու գործ գտիր, և եթե իրիկունը ձեռդ հաց մը և մամ մը չը տեսնեմ, ուրեմն չի պիտի ընդունիմ քեզ:

ԵԴՈՒԱՐԴ.— Բայց վարպետի մինակ կը մնա հոս:

ԹՈՎՄԱ.— Ես հոս եմ:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՜հ, հա՛յր իմ, նա ոչ զոք կը ճանչե հոս և ոչ ալ արհեստի մը տեղյակ է. ի՞նչպես կրնա գործ գտնել և առակ շահիլ:

ԹՈՎՄԱ.— Թող հարուստին մեկուն աղերսագիր մը առ և անոր քով ծառայության մտնե:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՛յսպիսի[33] ուսումնական և հանճարեղ պատանի մը ծառա կամ սպասավոր ըլլա՞:

ԹՈՎՄԱ.— Եթե չուզեր վերջը մուրացկան մ'ըլլալ:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց, հա՛յր իմ, ես կար կարել կսկսիմ և

Եղուարդի տեղ սուակ կը շահիմ, ասով կրնանք ապրիլ։

ԹՈՎՄԱ.— Նեղճ աղջիկ, կը կարծես որ ասով կրնա՞նք ազատիլ... քիչ մ՚առաջ մեր տան տերը՝ Սալոմոն օձիքս բռնեց և ըսավ որ եթե քանի մ՚օրին չը վճարեմ 4 ամսվան վարձքը, կարասիներս փողոցը պիտի նետեն և ոստիկանութեան պիտի մատնեն զիս[34]. մտածեցեք որ եթե ոստիկանութեան հանձնվիմ...

ԵԴՈՒԱՐԴ.— (ատրապիած) Ասավա՜ծ իմ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՜յր իմ։

ԹՈՎՄԱ.— Հիմա որ[35] ամեն բան հայտնեցի ձեզի, ի՛նչ որ կուզեք ըրեք (մտահոգ ատրուի մը վրա կիյնա)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եղուա՜րդ։

ԵԴՈՒԱՐԴ.— Վարդուհի՛ (կը գրկվին) (վարագույրը կիջնե)։

ԱՐԱՐՎԱԾ Բ

Տեսարանն է թատերաբեմ.—Թատրոնի սպասավոր մը թատերաբեմը կավլե.—Տեսարանին խորը՝ ձեացյալ դռուններ, պատուհաններ, առձաններ, ևն:

Տեսիլ Ա

Բ. ԴԵՐԱՍԱՆ, (ներս) Ա. ԴԵՐԱՍԱՆ

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (ցրտեն դողալով, մերթ ձեռքերը և մերթ աչքերը շփելով կը մտնե)

Գեշ[1] *տաեն*[2]*, տը, տը, տը,*
Անշահ բան, տը, տը, տը,
Գեշ տաեն[3]
Իրավ շատ
Անպիտան, ևն:

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— (մտնելով՝ նույնպես)

Դեռ մանուկ էի,
Մնողքս ինձ բսին, ևն:

(ընկերը տեսնելով) *Բարի լույս, ժա՛ք, ի՞նչպես երեկ գիշերվան փոթորկահույզ անձրևը խափանից վիքթոր Հյուգոյի այն*[4] *ընտիր խաղը:*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Թշվառակա՞ն, կարծես թե թատրոնին ձեղունին մեջ տնտղին և խոֆած մուկերու երամ մը չեղեր պես կերթևեկեր։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— (խնդալով) Հապա Հանդիսատեսներու աղմո՞ւկը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այո՛, փոխարիկը բռնեց անոր տեղը... ամայի նստարանները և օթյակներն ըսել կուզես... ևթե դեբատաններու թափփուրներ, թատրոնի սպասավորներ, ապատ[5] մուտք ունեցող քանի մը պարոններ ատդին անդին կծկած չըլլային սատրինջի քարերու պես, թատերասրահը մարդու շուք անդամ չի պիտի տեսնվեր... մոռցա ըսելու որ վերնատունը քանի մը տուլող պարոններ կը գտնվեին։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Հապա անցյալ շաբաթ պիշերվան ներկայացո՞ւմը, քանի որ երկինքը պայծառ էր և խաղն ալ փառավոր[6] ազգային ողբերգություն մը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Դուցե թատերազդի ցրվիչը շատպի գալով ազդերան տպչալ երեսը փակցուցած է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բայց՝ Ազդ մ՚ալ Մ. լրագրին ղրկվելչալ[9])։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ա՜հ, պրաշարապետը շարված թատերազդը անուշադրությամբ տեղավորած միջոցին, վանդի իրեն ձրի մուտք չը կար՝ մտած մտանեքեն սահելով գետինը ինկեր և ցրվեր է[8]... պրաշարապետը փույթ չէ ըրեր զանոնք նորեն ժողվելու, և անոր տեղ պատրաստ ազդ մը տեղավորեր է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Կատակը մեկդի, ես այնպես կը կարծեմ թե Հասարակությունը ձանձրացած է դերասանին կոկորդը պատռող և թատերատեսներու գլուխը ուռեցնող ազգա-

յին[9] դյուցազներգական[10] խաղերեն, և եթե ընտանեկան անցքերու վրա հորինված ժամանակակից[11] բառերախաղեր ներկայացվին, հուսամ թե ժողովուրդը շատ կախորժի անոնցմե և իր քաջալերությունը չի պլանար:

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Եթե բերանփոխ ըլլա, պեշ չըլլար ըսել կուզես:

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ոչ, իմ կարծիքս այն է, որ ներկայացումները պրեթե բոլորովին ժամանակակից[12] բառերախաղեր[13] ըլլալու են, վասնզի Հայ հասարակությունը հիմա առաջինը չէ, արթնցավ... և այն պառանցական խաղերով գոհ չըլլար[14] որոնց իմաստը մեր արդի կացության հետ կապակցություն չունի պրեթե:

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այո՛, այն խաղերուն նորությունը անցավ:

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Նաև այն դյուցազնական[15] խաղերուն բոլորն ալ միակերպ են պրեթե, որով[16] ժողովուրդը կը ձանձրացնեն հարկավ. ասով ըսել չեմ ուզեր թե այն խաղերը բոլորովին չը ներկայացվին, այլ ըսել կուզեմ թե ժամանակակից[17] խաղերն անոնցմե նախամեծար համարվին, քանի որ ունկնդիր հասարակաեն ալ վերջիններեն ավելի բան մը կզգա կամ կը շահի, վասնզի ինքն ալ տեսարաններուն վրա ներող անձի մը համապատկերը կը գտնե իր վրա, և հերիակին ճաշակին կամ հմտությանը շնորհիվ քիչ կամ շատ օգուտ կը քաղե անկե:

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Մանավանդ արդի կատակերգությունները:

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բառերգություն կամ կատակերգություն, երկուքն ալ եթե ժամանակակից[18] անցքերու[19] վրա[20] հորինվին, ժողովուրդին համար շատ օգտավետ են. ժողո-

վուրդին օգտակար եղածը թատրոնին ալ ըսել է, վասնզի դիրար կը սնուցանեն։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Կեցցես, ժա՛ն, լրագրի մը խմբագրի պես դատողություն ունիս։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բայց վերջապես ըսածներս իրավացի չե՞ն։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Օ՛հ, իմ նպաստիս, անձրևոտ, ձյունոտ և ցուրտ դիշերվան վրա կերդնում որ բոլոր ըսածներդ իրավացի են։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Պետք է որ մենք հասարակութենե քաղված այս դիտողությունները մեր անօրենին հաղորդենք, որպեսզի ժողովուրդին[21] ճաշակին համեմատ վարվելով ոչ իրեն վնաս ըլլա և ոչ ալ մեզ... Ես ազգային[22] խաղի մը ներկայացման դիշերը դեր չունենալով գետնասարահը կը գտնվեի. վարագույրը գոցված աաեն առջևի նստարանին վրա գտնվող ուսումնական և հարդի երևույթ ունեցող երկու պարոններու խոսակցութենեն քաղեցի այս դիտողության[23] աղբյուրը և եսքը մտածեցի որ շատ իրավունք ունեին. իրենց քննադատությունը հեղինակին գրչին և հանճարին վրա չէր, այլ ցավ կը հայտնեին թե թատերապիրք ընդհանրապես անօգուտ նյութերու վրա կը հոգնեին և թե դերասանական արվեստն ասանկով չէր զարգանար։

Բ. ԴԵՐԱՍԱՆ։— Այդ մարդիկը շատ լավ դիտողություն ըրեր են։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Վասնզի այն խաղերուն մեջ ունակություն կամ արհեստ ալ չը մտներ որ դերասանը կարենա փայլեցնել իր հանճարը։

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆՔ և ՉԻՉԻԼ (խիստ վերջը՝ ապաստավոր մը)

ՉԻՉԻԼ.— *Բարի լույս ձեզ, ժա՛ն, ժա՛ք։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Բարի լույս, Ռուսո։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— (խնդալով) *Հա՛, հա՛, հա՛, շատ խելկատակ ես, ժաք։*

ՉԻՉԻԼ.— *Ինչո՞ւ խնդացի՛ր ժա՛ն, ի՞նչ րսել է Ռուսո։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Ժան ժաք Ռուսո՝ պապիացի փիլիսոփայի մ՚անուն է. մեր ժաքը անոր փիլիսոփայությունը շատ կարդացած ըլլալուն և իր բնությանն ալ միշտ ժան ժաք Ռուսո հեղնելուն համար՝ երբ դու մեր անունը տալով՝ ժան, ժաք ըսիր, ինքն ալ՝ բնությանը վարժված ըլլալով՝ պակասը լեցնելու համար, Ռուսո կուշեց քեզ, բայց միտքը ուրիշ բան էր. Ռուսո շիկահեր րսել է*[10]*) և այս անունը քեզ տալով կատակախաոսն նախատինքով մը ակնարկություն մը քեզ հատկացնել էր միտքը, թեպետև մազերդ մեսաքսի պես փայլուն և սև են, օրիորդ Չիչիլ։*

ՉԻՉԻԼ.— (գլուխը երերցնելով) *Խելկատակ պարոնս։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Բայց դուն ալ պինդը Մոլիեր կոչե իր դեկորիկ կատակաբանությանը համար, որ շատ կը վայլե։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Ա՜հ, փառք մ՚է ինձ այդ, որովհետև Մոլիեր Գաղիացվոց առաջին կատակերգակ բանաստեղծն է։*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Եթե բառարանը նայիս, Մոլիեր ցնախի ալ նշանակություն ունի*[11]*)։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *վա՜յ... այդ չէի գիտեր։*

ՉԻՉԻԼ.— (խնդալով) *Շնորհակալ եմ քու ազնիվ կատակաբանությունիդ, պարոն Մոլիեր։*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (խոնարհությամբ) *Ներում կը խնդրեմ ուրիշն... ժան՝ որ ողբերգակ դերասան մը ճանչցված է, ինձնե ավելի լավ կապեց այս կատակը. ներում կը խընդրեմ, օրիորդ Ջիլիլ... Հաղթվեցա...:*

ՋԻՋԻԼ.— (գոռոզությամբ) *Կը ներեմ, պարոն ժաք:*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— (ձեռները[24] շփելով) *Բայց բավական ցուրտ կընե օդը:*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Ձմեռը կանուխ արթնցավ, ձեռքերնիս ծակ դրպաններնիս խոթելու սոսկալիով՝ հազար ու մեկ դառն մտածումներ մտաց մեջ դիզելու համար... բայց կեցցեն կատակաբանությունները:*

ՋԻՋԻԼ.— *Իրավունք ունիս, ժա՛ք.* (սայն միջոցին ապաւավոր մը խոհեն կանցնի, վառարան մը ձեռը):

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (զայն տեսնելով) *Օհո՜, Միքե, ո՞ւր կը տանիս այդ վառարանը:*

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Պարոն տնօրենին սենյակը:*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Մեզի տուր* (կուզե առնել):

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Բայց, պարոն...*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— *Տուր կըսեմ* (կառնե). *ուրիշ վառարան մը տար իրեն* (սպասավորը շփոթած կը մնկնի). *Պարոն տնօրենը շատ զոհ կըլլա եթե առանց վառարանի սենյակին մեջ ինքը մտի և մենք վառարանով մը ձայներնիս կըտրենք քան թե մեր առվախ մնացած ամսականները պահանջելու համար գլուխն ուռեցնենք* (վառարանը կը բերե, որուն բոլորտիքը շարվելով երեքը կը տաքնան):

ՋԻՋԻԼ.— *Այդ մասին իրավունք չունիս պարոն տնօրենին դեմ բողոքելու, վասնզի Թատրոնն արդեն հաստատ չունի գեռ:*

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— *Բարեսիրտ Ջիլիլ իրավունք ունի:*

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Եվ մթթե ես իրեն պետ բողոքած ունի՞մ... կատակ մ՚էր ըրածս։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ահա լավ վառարան մը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Փափուկ ձեռքերդ կապուտցեր են ցրտեն. տաքցո՛ւր, օրիորդ Զիչիլ։

ՉԻՉԻԼ.— Իրավունք ունիս... շատ մսեր եմ։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Մեր քնասեր ընկերներըը դեռ ցուրտ անկողիններու մեջ կը խոհան։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ապրատ և որը ըլլալն այսպես է ահա, օրիորդ Զիչիլ։

ՉԻՉԻԼ.— (տխրելով և հառաչելով) Կաղաչեմ, պարոն Ժան, անցեալյան վարդույրը մի բանար։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Եթե այնպես է, ներե ուրիմն, բարեսիրտ Զիչիլ։

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ և ՎԱՀԱԳՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— (աճուրդը տեսած մը՝ մոնելով) Բարի լույս ձեզ... այսօր շատ ցուրտ կընե (վառարանեն կը տաքնա)։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— (ժամացույցը նայելով) Ժամը ճիշտ յոթն է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Եվ դեռ մեկը չի կա թատերաբեմին վրա։

ՉԻՉԻԼ.— Այսօր փորձ չունի՞նք։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Քանի մը դերասաններ առիպողական պարծերու համար հրաման առին, ուստի այսօր չի պիտի կրնանք փորձ ընել։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ուրիմն հոս մարմար կտրելու տեղ մեր սեն-

յակը քաշվինք, որ բավական կոկիկ է և այս վառարանով կրնանք տաքնալ։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Այո՛, աղեկ ըսիր... (Վահագնյանի) դուք ալ կուգա՞ք։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Ո՛չ, ես սա խաղը պիտի կարդամ։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Նո՞ր հեղինակություն մ՚է։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Այո՛։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ազգայի՞ն[25]։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Այո՛։

ՋԻՋԻԿ.— Ողբերգությո՞ւն։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Անշուշտ։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ե՞րբ պիտի ներկայացվի։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Դուցե երկու շաբաթեն։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Երթանք։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այո՛ (երթալու կըլլան)։

ՋԻՋԻԿ.— Վառարա՛նը։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ա՜[26], քիչ մնաց որ կը մոռնայի (վառարանը կառնե, երեքը կը մեկնին)։

Տեսիլ Դ

ՎԱՀԱԳՆՅԱՆ և ԵԴՈՒԱՐԴ

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— (նղուարդի՝ որ գուլիսի մեջ կերևի) Ո՞վ կուղես, պարո՛ն։

ԵԴՈՒԱՐԴ.— Ներեցեք, պարոն, արդյոք կրնա՞մ տեսնել պարոն տնօրենը։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Ի՞նչ պիտի ընես։

ԵԴՈՒԱՐԴ.— Առանձին խոսիլ կուզեի իրեն հետ։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Այդ սանդուղքն վեր էլ և առաջին անկյունը նայե՛... բայց կնկիր, ինքն ալ ահա կուգա։

ԵԴՈՒԱՐԴ.— Շնորհակալ եմ, պարոն։

Տեսիլ Ե

ՊՈՂՅԱՆՑ, ԵԴՈՒԱՐԴ, ՎԱՀԱԳՆՅԱՆ (որ ափսեի մը վրա եստած՝ ձեռքի տետրը կարդալու կզբաղի)։

ԵԴՈՒԱՐԴ.— Պարոն անօրեն, պատիվ ունիմ ձեզ ներկայացնելու։

ՊՈՂՅԱՆՑ.— Կրնաս խոսիլ։

ԵԴՈՒԱՐԴ.— Արդյոք կարելի՞ է որ ինձ համրին մեջ ընդունելու բարությունը շնորհեք ինձ։

ՊՈՂՅԱՆՑ.— Դերասա՞ն ըլլալ կուզես։

ԵԴՈՒԱՐԴ.— Այո՛, պարոն։

ՊՈՂՅԱՆՑ.— Անշուշտ դերասանի մը հարկավոր նշած ընդունակությունն ու միջոցը ունիս։

ԵԴՈՒԱՐԴ.— Ըստ բավականին, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— Կրնա՞ս խոսք առ[27]։

ԵԴՈՒԱՐԴ.— Սթե կր հաճիք, փորձեցեք, պարոն։

ՊՈՂՅԱՆՑ.— Շատ լավ։

ԵԴՈՒԱՐԴ.— Ընդունելու համար պայման մ՚ունի՞ք առաջարկելիք։

ՊՈՂՅԱՆՑ.— Սա կա որ նորեկ դերասանի մը 40 ֆրանքեն[12]) ավելի ամսական չեմ կրնար վճարել։

ԵԴՈՒԱՐԴ.— Շատ մեծ բարեբարություն մ՚է բրածնիդ, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— Ուրեմն կընդունի՞ս այս պայմանը։

ԵԴՈՒԱՐԴ.— Եվ շնորհակալությամբ, պարոն։

ՊՈՂՅԱՆՑ.— Ուստի ես ալ այս պայմանավ խումբին[28] մեջ իբրև դերասան կընդունիմ քեզ այսօրվընն... Հուսամ թե գոհ ես։

ԵԴՈՒԱՐԴ.— Ոչ թե գոհ, այլ երջանիկ, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— Արդ, այսօրվընն դերասանաց հատկացյալ սենյակներեն մեկը կրնաս բնակիլ քու բոլոր պիտույքդ հոդալով[13])։

ԵԴՈՒԱՐԴ.— Շնորհակալ եմ, պարոն։

ՊՈՂՅԱՆՑ.— Անշուշտ որևէ անտեղություն մը չեմ տեսներ մինչև վերջը։

ԵԴՈՒԱՐԴ.— Կը հուսամ, պարո՛ն, և կը փափաքիմ որ այդպես ըլլա։

ՊՈՂՅԱՆՑ.— Ուրեմն, այսպես...

ԵԴՈՒԱՐԴ.— Պարոն...

ՊՈՂՅԱՆՑ.— Եթե խոսելիք ո՛ւնիս, ըրուցե։

ԵԴՈՒԱՐԴ.— (զրպանեն տետր մը հանելով) Արդյոք կրնա՞մ ձեզ ներկայացնել։

ՊՈՂՅԱՆՑ.— Ի՞նչ է այդ։

ԵԴՈՒԱՐԴ.— Ռուսերենեն թարգմանված թատերախաղ մը[29]։

ՊՈՂՅԱՆՑ.— Տեսնեմ (կառնե և կը զննե) ընտի՛ր խաղ է։

ԵԴՈՒԱՐԴ.— Եթե կարգալու հաճիք, պիտի տեսնեք։

ՊՈՂՅԱՆՑ.— Ադեկ։

ԵԴՈՒԱՐԴ.— Պետք ունի՞ք։

ՊՈՂՅԱՆՑ.— Ի՞նչ կը պահանջես։

ԵԴՈՒԱՐԴ.— Հինգ ֆրանք։

ՊՈՂՅԱՆՑ.— Հինգ ֆրա՞նք... շա՛տ լավ։

ԵԴՈՒԱՐԴ.— Պարոն...

ՊՈՂՅԱՆՑ.— Ստա՞կը կուզես։

ԵԴՈՒԱՐԴ.— Շատ բարեսիրտ ես, պարո՛ն։

ՊՈՂՅԱՆՑ.— (վահագնյանի մոտենալով, որ միշտ կը կարդա) Ի՞նչ է կարգացածնիդ[30]։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Անցյալ օր կարդալու համար ինձ տված ազգային [31] խաղերնիդ[32] է։

ՊՈՂՅԱՆՑ.— Ի՞նչպես է։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Բանաստեղծություն։

ՊՈՂՅԱՆՑ.— Եթե կուզեք, սենյակս երթանք և միատեղ կարդանք։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Շատ լավ... (ցած՝ առ Պողյանց՝ նդուարդը ակնարկելով) Նորնի դերասա՞ն է։

ՊՈՂՅԱՆՑ.— (ցած) Այո[33], ի՞նչպես կը դանես։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Շատ փափուկ... Լավ սիրահար կըլլա... անդիի աշխարհ գացող մեր սիրահարին տեղը կը բռնե և կամ գայն կը գերազանցե։

ՊՈՂՅԱՆՑ.— Ես ալ այնպես կը հուսամ... (բարձր) Երթանք ուրեմն։ (Նդուարդի) Ինչպես որ ըսի, պարոն, (Նդուարդ գոհության և շնորհակալության շարժում մը կրնե)։

Տեսիլ Զ

ԵԴՈՒԱՐԴ (մինակ)

Հինգ ֆրա՞նք... Որչա՜փ հարուստ եմ... պիտի երթամ վարդուհիս տեսնելու... բա՛յց դուռը, անգո՛ւթ հայր, բա՛յց դուռը ձեռքի հինգ ֆրանքիս. ես որ վարդուհիս տեսնելու համար արյունս անգամ կուտամ, դու ատակ կուզես... սիրտ մուրք... բայց ոչ, դրնե նախատելու իրա-

վունք չունիմ, վասնզի քու մուրացած հացդ կերա... բայց անոթի կը մնայի եթե Վարդուհի քովս ըլլար, իր շունչը ինծի կյանք կուտար... ո՞[34], եթե հոս եկած չըլլայի, այս գիշեր՝ առանց սառակի և անոթի՝ փողոցին սալահատակին վրա պիտի պառկեի, եթե ստվերս տեսնեին՝ գինով և եթե դեմքս տեսնեին՝ սրիկա մը պիտի կարծեին և բանտ պիտի տանեին զիս... աղքատությո՞ւն, ո՞վ կը ղրկե զքեզ, ես չեմ կարծեր որ երկնից հեղինակությունն ես, այլ դժոխոց մեկ կատակը... ա՜հ, սոսկալի է աղքատ ըլլալ և սիրել, երբ սիրուհիդ՝ զոր քու շունչովդ կուգես պատսպարել, մերկ է և անոթի... բայց ես հի՞նգ ֆրանք ունիմ, Վարդուհիս քիչ մը հաց և բոսին մը կառնեմ և վաղը երկու երեք ժամ թե թեւի[35] կը շրջագայինք մեր անակին ձորը... ամսագլխուն թոշակովս ալ մեր անակին քառասուն ֆրանք պարտքը կուտամ... երջանիկ կըլլանք... բա՜ց դուռը, հա՛յր, հի՞նգ ֆրանք ունիմ... հի՞նգ ֆրանք... (կը մեկնի. պատկերը կը փոխվի):

ՊԱՏԿԵՐ Ա.

Թովմայի տնակը. պատուհանը աւևտուն մարը մտնելեն կը ցոլա:

Տեսիլ Ա.

ԹՈՎՄԱ և ՎԱՐԴՈՒՀԻ

ԹՈՎՄԱ.— Ահա արեւը մարը կը մտնե... կուզե՞ս որ վաղը անոթութենեն ընկճյալ և կթոտ՝ իղուր իր ճառագայթենե-

բուն կծկինք քիչ մը կյանք և հոգի առնելու համար... կուզե՞ս որ վազ իրիկվան մարը մանող արևին հետ մենք ալ անոթութենն մարինք... Վարդուհի՛, մենք արդին այս անակին մեջ, աղքատության մեջ, անոթության մեջ անպատիվ ենք... Ասոնց չը կամիր որ անձնասպան ըլլանք, բայց՝ մինչդեռ ես մուրացկանությունը կատեմ և դու ալ մուրացված հաց չես ուտեր... հաց չունինք... ի՞նչ ընենք, Վարդուհի՛, հարո՛ստ ըլլանք և վրե՛ժ առնենք:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ուակի՞ց:

ԹՈՎՄԱ.— Չեմ դիտեր, բայց կզգամ որ սիրտս առելության հնոցի պես կը բռնկի... վրե՛ժ առնել կուզեմ, այլ չեմ դիտեր ուակի՞ց... երբ Ռուսիո ապստամբես կը հիշեմ, ուր ինչվան առավոտ ջահերը կը վառեին, ուր մինչև առավոտ ծիծաղներըը արձագանք կուտային, երբ հոն բազմահարուստիկ սեղանս առնելով միայն կը հագենայի և երբ հոս ցամաք հացի անհագ քաղցը կզգամ, երբ կը մտածեմ թե բոլոր անցելույն փառքերը դիս լքին և սոխերի պես անցան, անոթութենն ավելի հարստության ծարավ մը կզգամ, ա՜հ, մեռնի՛լ, բայց հարուստ մեռնիլ կուզեմ... այո՛, Թովմայի գծուծ անունը կուզեմ թոթխել և զՄուրատոֆ վերահանդնել... կուզեմ որ մուրացկանի ապջիկ չը կոչվիս դու, այլ Մուրատոֆի ապջիկը... Վարդուհի՛, հարստությունն ամոթապարտ կարմրությունը կը ծածկե, իսկ աղքատությունն անրիծ ճակատը կը նսեմացնե... Վարդուհի, հարո՛ստ ըլլանք:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հապա խեղճ Եղսա՞բեը, որ վռնտեցիր:

ԹՈՎՄԱ.— Աղեկ ըսիր, այն ալ անշուշտ քովերնիս կառնենք և երջանիկ կըլլանք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց կը վախնամ ես անկե։

ԹՈՎՄԱ.— Ինչո՞ւ կը դեղնիս... կը սիրե՞ս գինքը։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Անկե կը վախնամ միայն։

ԹՈՎՄԱ.— Բայց այդ գաղտնիք մը պիտի ըլլա։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՜հ, ո՛չ, կը վախնամ։

ԹՈՎՄԱ.— Ուրե՞մն։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Չեմ կրնար։

ԹՈՎՄԱ.— Բայց մտածե... անոթությունը։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կը համբերեմ...

ԹՈՎՄԱ.— Իսկ ես չեմ կրնար համբերել... արյունս ցամքելով անոթի մեռնելու տեղ արյուն թափելով կուզեմ մեռնի՛լ... (հուսահատությամբ բան մը կը փնտռե)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (հայրը բռնելով) Հա՛յր իմ... ի՞նչ կընես...։

ԹՈՎՄԱ.— Թո՛ղ դիս... անոթի՞ մեռնիմ... միթե ես մանո՞ւկ եմ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կեցիր, հա՛յր իմ, ալ բուկդ եմ... (Թովմա կը ցնցվի) քու աղջիկդ եմ, ի՛նչ որ կուզես այն րրե, միայն թե դու մի մեռնիր... միայն թե մի լրաներ հետո անպատիվ[36] աղջիկդ, դարձյալ քու անմեղ աղջկանդ պես նայի ինծի։

ԹՈՎՄԱ.— (փղձկելով) Վարդուհի՛... (արցունքը կրնդմիջե գինքը)։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եթե մայրս կենդանի ըլլար, դիս կը պաշտպաներ։

ԹՈՎՄԱ.— Վարդուհի, գո՛րկ դիս, և այդպես մի խոսիր։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ներե, հա՛յր իմ... Եթե փոքր ինչ վախկոտ եմ։

ԹՈՎՄԱ.— Վարդուհի, եթե այսպես պիտի մեղադրեիր միս, ինչո՞ւ քիչ մ'առաջ ծող չը տվիր որ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՛չ, հա՛յր իմ, նեղսումն կը խնդրեմ, հանդարտեցե՛ք:

ԹՈՎՄԱ.— Աղջի՛կս, չես գիտեր թե անոթությունը ո՛րչափ սոսկալի է...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Գիտեմ, հա՛յր իմ... (հառաչելով) Եղուա՛րդ...

ԹՈՎՄԱ.— Այդ անունը մի տար:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ինչո՞ւ, հա՛յր իմ:

ԹՈՎՄԱ.— Վանդի քաջությունդ կը նվաղի:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ընդհակառակն, հա՛յր իմ, հիմա կզգամ որ պինքը պիտի ազատեմ փողոցներու մեջ անպաշտպան, հիվանդ և անոթի մեռնելեն... արդյոք խեղճ Ռաֆայելս ի՞նչ կընե այս վայրկենիս:

ԹՈՎՄԱ.— Կաղաչեմ, Վարդուհի՛, փարատե այդ մտածմունքը, վանդի դու լալով սիրտս թունդ կը հանես... պիտեմ, անիրավություն ըրի Եղուարդը ճամբելով, բայց ի՞նչ կրնայի ընել, երբ[37] ոսոխկանության[38] պիտի[39] մատնվեի[40]. թե իր և թե քու վիճակդ գեշ պիտի ըլլար. մտածեցի որ օր հառաջ գործ մը գտնելով կրնար գինդ և գինքը խնամել, բայց հիմա որ հարուստ պիտի ըլլանք...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ընդմիջելով) Կը հասկնամ, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Վարդուհի, շատ պիտի սա՞ս գիս:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ընդհակառակը գոհ պիտի ըլլամ... վանդի դու և Եղուարդ անոթութենն և աղքատութենն պիտի ազատեք...

ԹՈՎՄԱ.— Մանավանդ մուրալե...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Տես, հա՛յր իմ, ալ գոհ եմ և կը ժպտիմ... (կը ջանա ժպտիլ)։

ԹՈՎՄԱ.— Վարդուհի՛... ապչի՛կս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (կարմրելով, աչերը խոնարհելով և գրեթե թոթովելով) *Հա՛յր իմ, արդյոք այն մարդը երիտասա՞րդ է։*

ԹՈՎՄԱ.— Ինչո՞ւ կը հարցնես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՜հ չըլլա որ անհաճո դեմք մ՚ունենա, կը վախնամ, կը սոսկամ որ քաջությունս կը պակսի... գիտես որ վախկոտ եմ։

ԹՈՎՄԱ.— (ծուռաճառուրյամբ...) *Ա՜հ, սոսկալի բան է այս*[41]։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Մի՛ բարկանար, հա՛յր իմ, սիրտս ամուր կը բռնեմ... ալ ամեն բանի պատրաստ եմ... եթե ճիվաղ մ՚ալ ըլլա, պիտի գրկեմ, որպեսզի դուք երջանիկ ըլլաք... գո՞հ ես, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Վարդուհի, ալ բավական է... ինձ մի հարցներ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կուզո՞ս որ սենյակս քաշվիմ։

ԹՈՎՄԱ.— Դու գիտես։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դու հոս պիտի ըլլաս, այնպես չէ՞։

ԹՈՎՄԱ.— Այո՛։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Կաղաչեմ, եթե նդուարդ առանց հացի գա այս իրիկուն, մի վռնտեր։

ԹՈՎՄԱ.— Անառարակույս (մեկուսի) *բայց եթե նահապետոջ հո՞ս ըլլա...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— Սենյակս կերթամ, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Բայց մի՛թե՞...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դեռ լսելիք մ՚ունի՞ս, հա՛յր իմ։

ԹՈՎՄԱ.— Արդյոք առանձին լալու համա՞ր սենյակդ քաշվիլ կուգնա։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՛չ, հա՛յր իմ... այլ կը խոստովանիմ որ մինակ լլլալ կուգամ... դու անփույթ եղիր... (մեկուսի) *ո՞վ պիտի օգնի ինծի, հրեշտա՞կը թե սատանան* (վարդումի կը մեկնի. Թովմա արտի մը վրա կիյնա մտազբաղ)։

Տեսիլ Բ

ԹՈՎՄԱ և ՄԱԿԱՐ

ՄԱԿԱՐ.— (ձեռքը մախաղ մը՝ մտնելով, մեկուսի) *Խիստ լավ խնկը մը մտածեցի. 50 հատ հրաշագործ ոսկի այս մարդուն հանձնելու տեղ, տիրոջս տնտեսին տակ մնացած ննջյալ պրամնեկն 50 ոսկի գտա և պիտի տամ...* (մախաղը կը բանա և բսակ մը կը հանե)։ *Ահա ննջյալ ոսկիները, որ գտա և բան ոսկի լլլալու համար կենդ լլլալեն ուրիշ պակասություն[42] չունին... խնդձ մարդը բար պիտի կարի, երբ ննջյալ լլլալն իմանա. ասոիկանության ալ չի պիտի կրնա բողոքել, վասնզի ասոիկանությունը անշուշտ պիտի հարցնե թե այն[43] կենդ պրամնեքուն փոխարեն ի՞նչ ուզած է. պատասխանը ամենահասարություն է... և այս մարդն ալ[44] շատ խղճահար լլլալեն զատ՝ միանգամայն վախ մ'ալ կունենա որ պրամանիոց չամբաստանվի... եթե գտ բողոքելու տիրոջս, այն ատեն բան մը կրնենք...* (Թովմայի մոտենալով և անոր ուսին զարնելով) *պարո՛ն Թովմա...*

ԹՈՎՄԱ.— (շփոթած՝ ոտ ելնելով) *Դուք հո՞ս... պարոն...*

ՄԱԿԱՐ.— Տերս հոս է... պատրա՞ստ ես։

ԹՈՎՄԱ.— Իմացուցեք իրեն, որ կրնա նեբս մտնել... (Նահապետոֆ ներս կը մտնե. մեկուսի) Ջեմ ճանչեր այս մարդը:

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ո՞ւր է ինքը:

ԹՈՎՄԱ.— Հոս, իր սենյակն է, պարո՛ն:

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Կրնա՞մ տեսնել:

ԹՈՎՄԱ.— Անտարակույս, պարո՛ն... (Նահապետոֆ կակնարկե Մակարի):

ՄԱԿԱՐ.— (Բանկը տալով) 50 ռակի է, պարո՛ն Թովմա...

ԹՈՎՄԱ.— Շնորհակալ եմ:

ՄԱԿԱՐ.— Տե՛ր իմ... (Նահապետոֆ երթալու հրամայական նշան կրնե Մակարի, որ խոնարհելով կը մեկնի. Նահապետոֆ սենյակը կը մտնե):

Տեսիլ Գ

ԹՈՎՄԱ և ԵԴՈՒԱՐԴ

ԵԴՈՒԱՐԴ.— (Ներս մտնելով) Հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Դո՞ւն հոս[45]...

ԵԴՈՒԱՐԴ.— Ներե՛ս, հա՛յր իմ, եթե համարձակեցա ներս մտնելու, վասնզի 5 ֆրանք վաստկեցա... ահա քեզի կը հանձնեմ...

ԹՈՎՄԱ.— Շա՛տ ուշ հասար... վասնզի ես արդեն շատ ունիմ (Բանկն ափին մեջ թոթվելով) *ռակի են ատոնք, ռակի՛...*

ԵԴՈՒԱՐԴ.— Ուրեմն հարուստ ենք... և ալ չի պիտի վռնտես դիս... վարդուհին քով պիտի կենամ ալ... բայց ո՞ւր է վարդուհի:

ԹՈՎՄԱ.— Չես կրնար տեսնել զինքը։

ԵԴՈՒԱՐԴ.— Ինչո՞ւ, հա՛յր իմ, միթե իր սենյակը չէ՞ (կուզե երթալ)։

ԹՈՎՄԱ.— (առաջքն առնելով) *Հոս չէ։*

ԵԴՈՒԱՐԴ.— Մի բարկանար, հա՛յր իմ... կսպասեմ որ գա... բայց միթե իրավունք չունի՞մ զինքը փնտռելու, եա՝ որ ամբողջ օր մը զինքը չը տեսած անցուցի և...

ԹՈՎՄԱ.— Դարձյալ պետք չէ որ տեսնես զինքը։

ԵԴՈՒԱՐԴ.— Ի՞նչ կըսես, հա՛յր իմ... չեմ հասկնար... բայց...

ԹՈՎՄԱ.— Եվ կը հրամայեմ որ հիմա դուրս ելնես։

ԵԴՈՒԱՐԴ.— Ջիս կը վռնտե՞ս դարձյալ։

ԹՈՎՄԱ.— Այնպես պետք է... (բարկացած՝ հրամայական նշան կրնե. նդուարդ սարսափած կը մեկնի)։ (վարագույրը կիջնե)։

Ա ՐԱՐՎԱԾ Գ

Թուվմայի տնակին մեջ սենյակ մը:

Տեսիլ Ա

ԹՈՒՎՄԱ (առանձին, որ հուսահատ և մտահոգ ներս կը մտնե)

*Վատութ՛յո՞ւն... սոսկալի վատութ՛յո՞ւն... այն դրամներն կեղծ են եղեր. ա՜հ, չարաչար խաբեցին զիս... ի՞նչպես պիտի նայիմ աղջկանս երեսը... որ ձեռքս անբիծ ճակտին դրի, արդարացուցի զինքը, ներեցի իր անպատվութ՛յանը, բայց չը մտածեցի որ իմ գլխուս վերև ալ ուրիշ ձեռք մը կա, անողոք և[1] արդար[2] ձեռք մը՝ որ զիս անիծեց... Ավա՜ղ, թեթև բնո մ՛ունեի, մուրացկանի տոպրակ մը և տրտնջացի. իսկ հիմա սրտիս վրա երկաթե ձեռք[3] մը կա, որ միշտ կը ճնշե... աղջկանս անմեղ սրտին վրա դերեզմանաքար մը թավալեցի. աղջիկ մը վարդի պես շուտ կը թոռմի... մեռա՜վ աղջիկս... և ես իրավունք ալ չունիմ իր վրա լալու, վասնզի դահիճը գլխատյալին վրա չի լար... ա՜հ, այս միայն կը պակսեր կործանյալ Մուրատոֆին... Հարո՜ւստ մարդիկ, ի՞նչ կուզեք

աղքատներն... անոնք ալ պատիվ ունին... ներսեցիք միայն եթե դրամ կը շլանան, վասնզի աշխարհի վրա կարող են և շատ անգամ անոնք... իսկ եթե այն դրամն ալ կեղծ ըլլա... սոսկալի՜ բան է... սոսկալի՜... ի՞նչպես չընդունելի, երբ այն սպասաւորն սատանան[4] բովական հարստութիւն կը խոստանար ինձ, մինչդեռ ես մուրացկան, պարապող, անոթի էի և կուզեի վերականգնիլ... մեռնի՞ր... ո՛չ... վասնզի կուզեի վրեժ առնել աշխարհն... բայց աշխարհ ինձմե վրեժ առա՞վ... ա՛հ, ի՞նչ ընեմ... մատնեմ այն վաստ... բայց ի՞նչպես... եթե արդարութեան առնին դիմեմ, պիտի ըսեն թե ի՞նչ ապիր այս ննջեցեալ դրամներուն վրայօրեն... ի՞նչ պատասխան տամ... ի՞նչ ընեմ... ոչի՞նչ... թշուառ մ'ըլլամ և անիծե՜մ... (արտոի մը վրա կիյնա նուաճած):

Տեսիլ Բ

ԹՈՎՄԱ և ՍԱԼՈՄՈՆ

ՍԱԼՈՄՈՆ.— Տեսնենք, եղբայր Թովմա, անշուշտ մեր սատկածները պատրաստեցիր, վասնզի Նահապետին մատակարարին հոս գալը քեզի շատ նպաստավոր կերևի, մանաւանդ որ ինքը հավատաց[5] թե քանի մը օրեն պիտի տան սատկես:

ԹՈՎՄԱ.— Վա՛տ մ'է այն մարդը:

ՍԱԼՈՄՈՆ.— Ինչո՞ւ:

ԹՈՎՄԱ.— Սհա այսչափ:

*ՍԱԼՈՄՈՆ.— Կապաշնամ, եղբայր Թովմա, այդպիսի վարպետ

ձևերով մի ջանար օր օրի ձգելու պարարդ... Հավատա որ այս օրերս շատ պետք ունիմ դրամի։

ԹՈՎՄԱ.— Ես ալ։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց դու բավական ստակ առած ըլլալու ես։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ բանի համար։

ՍԱԼՈՄՈՆ.— Ես գրեթե բավական կը դուշակեմ։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ է դուշակածդ։

ՍԱԼՈՄՈՆ.— Աղջիկդ գեղեցիկ է։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ ըսել կուզես։

ՍԱԼՈՄՈՆ.— Նահապետաբար զայն տեսած ըլլալու է։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ կրնա ըլլալ ատկե։

ՍԱԼՈՄՈՆ.— Շատ բան կրնա ըլլալ։

ԹՈՎՄԱ.— Զգուշացի՛ր... պարո՛ն... եթե մեկ մ՚ալ այդպիսի խոսք մը հանես բերնեդ, կը չախչախեմ քեզ։

ՍԱԼՈՄՈՆ.— Մի՛ բարկանար, եղբայր Թովմա, իրավունք ունիս... այդ իմ խառնվելիք գործս չէ, ես միայն ինծի տրված առտկն առնելու պարտական եմ, ինծի չը վայլեր հասկնալ թե այն առտկը ի՞նչպես վաստկված է։

ԹՈՎՄԱ.— Հրեա՛, ի՞նչ ըսի քեզի։

ՍԱԼՈՄՈՆ.— Ա՜, իրավունք ունիս... բայց դու ալ գործը մի երկարեր. առտկներս տուր որ բերանս գոցեմ, գործիս երթամ... օ՜ն, տեսնեմ սա երկու ամբողջ ոսկին որ իմ բոլոր առնելիքս է... եթե կուզես լավ խելք մը բանեցնել, քանի մ՚ամսվան վարձքն[6] ալ կանխիկ տուր որ ետքը չունեցած ժամանակդ դժվարություն չը կրես։

ԹՈՎՄԱ.— (մենավսի) Ո՛չ... այս մարդը ինծի պես սխմար չէ և՛ վերջը դեշ կըլլա։

ՍԱԼՈՄՈՆ.— Քեզի կըսեմ, եղբայր Թովմա... չե՞ս լսեր։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ կըսես։

ՍԱԼՈՄՈՆ.— Կըսեմ որ եթե հիմա տաս, վերջը դժվարություն չըլլար։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ պիտի տամ։

ՍԱԼՈՄՈՆ.— Ծաքեն գալիք քանի մը ամսվա վարձքը (Թովմա դառնությամբ կը ծիծաղի), ի՞նչ կը խնդաս... գի՞շ խելք է այս...

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն, պարապ տեղը կը ցամքեցնես բերանդ։

ՍԱԼՈՄՈՆ.— Եթե չես ընդունիր իմ առաջարկությունս, որ շատ նպաստավոր է քեզի, դու դիտես... առայժմ սա առնելիքս տուր որ երթամ... ժամանակը կանցնի... պիտի երթամ։

ԹՈՎՄԱ.— Կրնաս երթալ։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց կառավը մեկդի, եղբայր Թովմա։

ԹՈՎՄԱ.— Կառա՞վ... կառավին աղեկը ինծի ըրին։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց վերջապե՞ս։

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ ըսել կուզես։

ՍԱԼՈՄՈՆ.— Տեր Աստվա՛ծ... քու ախանջիդ ինչո՞ւկ զարնելու է որ իմանաս... քեզի ըսի թե գործ ունիմ, օրը կը տարաժամի...

ԹՈՎՄԱ.— Ես ի՞նչ ընեմ... ազատ ես երթալու։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց դիս կը կառղեցնես։

ԹՈՎՄԱ.— Որչափ որ կառղիս, ինծի չափ չես կրնար կառղիլ։

ՍԱԼՈՄՈՆ.— Եվ այս կառավարության վի՞րջը։

ԹՈՎՄԱ.— Ողբերգության չը դառնալու համար կրնաս դուրս ելնել։

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց ի՞նչ է քու միտքդ։

ԹՈՎՄԱ.— Ես ո՛չ միտք մ՚ունիմ և ո՛չ ալ դրամ մը...

ՍԱԼՈՄՈՆ.— Սուտ կը խոսիս, վասնզի աղեկ[8] դիտեմ որ...

ԹՈՎՄԱ.— (ընդմիջելով) Լռե՛... չեմ կրնար մտիկ ընել քեզ:

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց վերջապես ի՞նչ պիտի ընենք քեզի հետ:

ԹՈՎՄԱ.— Ինչ որ կուզես, այն ըրե...

ՍԱԼՈՄՈՆ.— Կուզես որ ամեն տեղ տարաձայնե՞մ աղջըկանդ...

ԹՈՎՄԱ.— (կտսփնեռով վրան վազելով) Եթե կուզես որ գլուխդ չախչախեմ:

ՍԱԼՈՄՈՆ.— (սարսափելով) Ա՜հ... օգնու...

ԹՈՎՄԱ.— Լռե՛:

ՍԱԼՈՄՈՆ.— Ներե, պարո՛ն....

ԹՈՎՄԱ.— Դուրս պիտի ելլե՞ս:

ՍԱԼՈՄՈՆ.— Այո՛, պարոն... կելնեմ...

ԹՈՎՄԱ.— Օ՜ն, ուրեմն, կռնակդ տեսնեմ...

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց ի՞նչ իրավունք ունիս իմ տունես վռնտելու զիս...

ԹՈՎՄԱ.— (վրան հարձակելով) Դեռ կեցեր կը խոսի՞ս...

ՍԱԼՈՄՈՆ.— Կերթայի, պարո՛ն...

ԹՈՎՄԱ.— Գնա՛ ուրեմն...

ՍԱԼՈՄՈՆ.— Բայց մեծ անիրավություն...

ԹՈՎՄԱ.— Գծուծ Հրեա[9]... (վրան կը վազե և Հրեայն սարսափած կը փախչի) Աղջկանս սենյակը ոտքի ձայն մը կա. ինքն է... արթնցեր է... ի՞նչպես երեսը պիտի նայիմ և պատասխան պիտի տամ... բոլոր ջիղերովս կը դղնդվիմ... սիրտս կը նվաղի... ա՜հ, ո՞վ վեր[10] պիտի վերցնե ամբեն աղջկանը առջև խոնարհած տարաբախտ հոր մը ճակատը...

Տեսիլ Գ

ԹՈՎՄԱ և ՎԱՐԴՈՒՀԻ

ԹՈՎՄԱ.— (մեկուսի) *Ինքն է...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բարի լույս, հա՛յր իմ...*

ԹՈՎՄԱ.— (աղջկան առջև՝ ի ծուռ և երեսը ծածկելով) *Ապ-ջի՞կս...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ի՞նչ կըլլաս, հա՛յր իմ... ոտք ել...* (կը ջանա ոտք հանել)։

ԹՈՎՄԱ.— *Ո՛չ, ո՛չ, ինչվան որ չը ներես, չի պիտի ոտք ել-նեմ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բայց ի՞նչ կա քեզի ներելու, հա՛յր իմ...*

ԹՈՎՄԱ.— *Վասնզի շատ թշվառ ըրի քեզ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բնավ, հա՛յր իմ, ես երջանիկ եմ քանի որ դու և եղբայրս այլևս չի պիտի մուրաք փողոցները... մինչև ալ հարուստ չե՞նք...*

ԹՈՎՄԱ.— *Ա՜հ, եթե դիտնայիր, վարդուհի՛։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բայց ի՞նչ կա, հա՛յր իմ։*

ԹՈՎՄԱ.— *Նախ ներե ինձ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Մինչև[11] ես աղջիկդ չե՞մ։*

ԹՈՎՄԱ.— *Բայց դու անմեղ ես, իսկ ես ոճրագործ մ'եմ[12]... դու կրնաս ներել ինձ, իսկ[13] ես չեմ կրնար օրհնել քեզ։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Քու ըրածդ բնավ ոճիր չէ, հա՛յր իմ... ի՞նչ կրնայինք ընել առանց սատկի և առանց հացի։*

ԹՈՎՄԱ.— *Այնպես չէ՞։*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Բայց ոտք ել, հա՛յր իմ, մոռնանք անցյալը... և ապագային մեր ապահով բարօրությունը վայելենք։*

ԹՈՎՄԱ.— *Եթե դիտենայի՛ր, խե՛ղճ աղջիկ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ի՞նչ պատահեցավ, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Եթե նեղես, կը խոսիմ:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՛չ միայն նեղվել, այլ, եթե զժոխոց բոցերուն մեջ ալ ըլլաս, քեզ կը փարիմ անքաժան, հա՛յր իմ... (աճուր փարելով ոտքը կը հանե):

ԹՈՎՄԱ.— Ազջի՛կս... հրեշտա՛կս...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ ունիս, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Որչա՛փ դեղներ ես, վարդուհի՛... սրչափ լացեր ես...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Վարդուհի՛, եթե քու տեղդ ըլլայի, այսպիսի հոր մը չը նեղվելս զատ՝ զահիճս մ'ավելի սոսկալով կը խորշեի անկե... վասնզի ցած զահիճին գարհածն իր արյունը չէ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Մի՛ կոչեր զիս հայր... կը մեղանչես, անմեղ ազջիկ... փախի՛ր, սոսկա՛ ինձմե, անիծի՛ զիս... ես քու հայդ չեմ, մի՛ մոռնար... Միթե չե՞ն սահեր, չե՞ն զարներ, չե՞ն ջախջախեր հայր մը, որ իր աղջկան[14] պատիվը[15] կը ծախեն ննդյալ զրամներով...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ կըսես, հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Ճշմարիտ... խաբեցին զիս...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ան՞գճ հայրս...

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ, զի՞ս կը մեղքնաս:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Վասնզի դու ինձմե ավելի Թշվառ ես... ես քանի մը զաղանի արցունք Թափելով անցուցի այն հինաժամը... իսկ դու...

ԹՈՎՄԱ.— Ասավա՜ծ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց միթե այն ատեն չի՞ պիտի ստիպվինք անոթութենն նվաղիլ։

ԹՈՎՄԱ.— Իսկ հիմա՞։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ճշմարիտ է...

ԹՈՎՄԱ.— Բայց ես զարձյալ կը մուրամ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (գետինը դրած մը տեսնելով և առնելով) Ի՞նչ է այս, հա՛յր իմ, տե՛ս, հինգ ֆրանքնոց մը։

ԹՈՎՄԱ.— (ճիչ մ'արձակելով) Ա՜հ... այո, Եդուարդ բերավ երեկ իրիկուն... քեզ տեսնել ուզեց...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եվ դու ճամբեցիր դինքը... այնպես չէ՞...

ԹՈՎՄԱ.— Ըսելով թե ինքը հոս չէ... Գիտես որ ստիպված էի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո՛... հա՛յր իմ... արդյոք ի՞նչ եղավ խեղճը. հիմա ո՞րչափ հուսահատած է և մեկ մ'ալ մեր տանը սեմը ոտք չի պիտի կոխե, վասնզի երկրորդ անգամ վռնտեցիր դինքը։

ԹՈՎՄԱ.— Անհոգ եղիր, վարդուհի, ես դինքը կը գտնեմ, կը բերեմ և մուրալով առաջվան պես կապրինք։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բարեսի՛րտ հայրս...

ԹՈՎՄԱ.— Ջավակնե՛րս, սիրեցեք զիրար և ինծի համար աղոթեցեք այսուհետև։

Տեսիլ Դ

ՆՈԻՅՆՔ, ՍԱԼՈՄՈՆ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒՉ ՄԸ, ՈՍՏԻԿԱՆՔ

ՍԱԼՈՄՈՆ.— Պարոն ոստիկան, բռնել տվեք այս մարդը...

ԹՈՎՄԱ.— Հրեա՛յն է։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Աստվա՜ծ իմ։

ՈՍՏԻԿԱՆ.— Պարո՛ն, հանուն արդարության ատենին կը ձերբակալեմ քեզ. դատախազդ այս Հրեայն[16] է։

ՍԱԼՈՄՈՆ.— Ինքը կը ճանչե զիս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՛յր իմ...

ԹՈՎՄԱ.— Աղջի՜կս...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Սա հինգ ֆրանքնոցը տանք, հայր իմ, գուցե...

ԹՈՎՄԱ.— (ցած) Այդ չը բավեր, աղջիկս, զայն քովդ պահե, եթե ոչ անոթի կը մնաս հոս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Իրավունք ունիս... ա՜հ ի՜նչ դժբախտություն էր այս...

ՍԱԼՈՄՈՆ.— Օ՜ն, շուտ, պարոն տհսուչը քեզ կսպասե...

ԹՈՎՄԱ.— (առ ոստիկանն) Քանի մը վայրկենի համար նեղսրտամիտ եղեք, պարո՛ն... (ցած՝ առ աղջիկն) գոնե սա վերարկուս քեզ ձգեմ որ հին գնող Հրեայի մը ծախես, երբ հինգ ֆրանքնոցը հատնի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Ո՛չ, ո՛չ, հայր իմ, բանտը ցուրտ է, կը մսիս... Անփույթ եղիր, Աստված բոլորովին երեսն չը ձգեր մեզ[17]...

ԹՈՎՄԱ.— (նույնպես) Աղջիկս, ինքզինքդ աղեկ խնամե... չը հիվանդանաս...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ինքզինքս Աստուծո կը հանձնեմ։

ԹՈՎՄԱ.— Եթե Աստված մը կա, թող լսե քեզի...

ՍԱԼՈՄՈՆ.— Երկար ըրիր, եղբա՛յր Թովմա։

ՎԱՐԴՈՒՀԻ.— (ցած) Անգո՛ւթ Հրեա...

ԹՈՎՄԱ.— վադը գուցե քեզ ալ վռնտե տունեն... և այն ա-

աեն... (վարդուհի մատովը երկիմեր կը ցուցնե) *Ապջի՛կս...*

ՈՍՏԻԿԱՆ.— Օ՜ն, առջևս ինկիր, պարո՛ն, շատ ապաեցիներ...

ԹՈՎՄԱ.— Ներեցեք, պարո՛ն... մնա՜ս բարով, ապջի՛կս...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հա՜յր իմ... (գիրկըեղխառն կը մեկնին):

Տեսիլ Ե

ՎԱՐԴՈՒՀԻ (միևնակ)

Մնա՜ք բարյավ, դուք՝ պերճութեյան, զեղեցկութեյան, անմեղութեյան և սիրտ օրեր... մնա՜ք բարյավ, խաբխուլ աթոռակներ[18]*, ուր եղուարդի և հարս հետ կը նստեինք քով քովի. մնա՜ս բարյավ, տխուր սեմ, որկե անցավ եղուարդս արցունք կաթեցնելով և հայրս՝ վշտահար ճակտով. մնա՜ս բարյավ, գծուծ օթևան, որ իմ ամոթահար ճակատս տեսար... մնա՜ս բարյավ եղուա՜րդ, եղուա՜րդ...* (կը մեկնի.—պատկերը կը փոխվի):

ՊԱՏԿԵՐ Բ

Տճօրեճին սենյակը. խորը դռնակ մը:

Տեսիլ Ա

ՊՈՂՅԱՆՑ և ՎԱՀԱԳՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Իմացա որ այսօր նոր գերասանուհի մը պիտի գա:

ՊՈՂՅԱՆՑ.— Այո՛, նամակով մ՚իմացուցած էր ինձ թե արդյոք կրնա՞ խումբին մեջ իբր դերասանուհի ընդունվիլ. ես ալ պատասխանեցի որ եթե հաճի, կրնա ինծի ներկայանալ և խոսիլ։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Եթե ընդունելու պայմաններն հաջողին, շատ շատ աղեկ պիտի ըլլա, վասնզի հեղինակին մեկը ելեր չորս դերասանուհի պարունակող խաղ մը հեղինակեր է...

ՊՈՂՅԱՆՑ.— Խաղն ի՞նչպես է։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Ժամանակակից, բավական դարձվածքներով և բարոյական դասերով համեմված։

ՊՈՂՅԱՆՑ.— Անունն ի՞նչ է։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Պարունակությունը հայտնելս վերջն այդպես հետաքրքրությամբ անունը հարցնելդ ի՞նչ պիտի ըլլա։

ՊՈՂՅԱՆՑ.— Գործը անունին վրա է։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Անունը խորհրդավոր անուն մ՚է. «Գալանիք մուրացկանին»։

ՊՈՂՅԱՆՑ.— Ա՜հ, ըսել է որ այդ խաղը չը կրնար ներկայացվիլ։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Ինչո՞ւ։

ՊՈՂՅԱՆՑ.— Միթե կարելի՞ է որ այդ խաղին անունը փոխելով մեր մեծ[19] դյուցազուններեն[20] մեկուն ծանոթ[21] անունը դրվի առժամանակյա կերպով։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Ո՛չ, այն խաղը ծանոթ դյուցազանց[22] չնա քնավ հարաբերություն չունի։

ՊՈՂՅԱՆՑ.— Ուրեմն, ինչպես որ ըսի, չեմ կրնար ներկայացնել, վասնզի անանկ խաղերու շնորհիվ կրած վնասներս

մտածելով՝ գլուխս ուռեցավ... մեր հասարակութիւնը թատերագրներուն վրա խոշոր, փառավոր և ահավոր անուններ կը փնտռե, և անունին կը գուշակե խաղին լավ կամ գեշ ըլլալը. եթե մեր հեղինակներեն մեկը խելք ունենար՝ «Կործանումն[23] աշխարհի»[24] կամ[25] «Վերջին դատաստան» անունով խաղ մը[26] գրե, ես ալ ազդին վրա «արտաքո կարգի փառավոր ներկայացում» մը կը գրեմ, թատրոնը լեցավ գնաց:

ՎԱՀԱԳՆԻԱՆ.— *Իրավունք ունիս:*

ՊՈՂՅԱՆՑ.— *Խոսիլն ավելորդ է, քանի-որ շատ փորձերով հաստատված է:*

ՎԱՀԱԳՆԻԱՆ.— *Բայց հայ հասարակութեան արդի հառաջդիմութեանը նայելով ժամանակակից խաղերն ավելի հաճո և օգտակար պետք է համարվին իրեն:*

ՊՈՂՅԱՆՑ.— *Բայց ի՞նչպես կրնա դիտցվիլ այդ, քանի որ լրագիրներու միջոցավ թատրոնի հոդի կամ լավ վիճակին վրա խոսող չկա, և եթե թատերասեր անձե մը այդ նյութին վրա դրված հոդված մը լրագրի մը ղրկվի, լրագրին գրասենյակին մեկ անկյունը մնալով կը փոշոտի, լրագրատիրոջ ընթացքը ալ չը գատաքննվիր, վասնզի մեր հասարակութեան մեջ թատրոնի և դրականական[27] նյութերու վրա գրված հոդվածներ կարդացող չկա. ամենքըն ալ քաղաքագետ են եղեր. խելքերնին ու մտածմունքնին[28] տվեր են այն քաղաքագետ[29] ճիվաղներուն[30] մեքենայութեանց, որոնք քանի մը կանգուն հոդի համար արյան հեղեղներ թափել կուտան և անոթի ընտանիքներ կը կազմեն... վերջապես ձմեռ դիշերները մեր հայ փոխքաղաքագետներն իրենց ակումբները թողլով թատրո՞ն*

պիտի գան կամ թատրո՞նը պիտի մոտածեն... թատերաբեմը հոդին անդունդը կը նետե, կը թաղե և բարին կը վանմացնե, կանմահացնե. թատրոնի ընծայած սիրո, եղբայրության, անձնվիրության[31], ընկերականության[32] և խղճի օրինակը տեսնելե ավելի՝ Հայը կը ղվարճանա պապաեղրայրի[33] սոսկալի[34] պատկեր[35] մը[36] նկատելով[37]...

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Բայց այդ տրամախոհությունները գրպիտաց վերապահենք և մենք մեր[38] գործին վրա խորհինք... մենք որ դերասան ենք, որչափ հեռու են մեզնե այդ տրամախոհությունները, մենք որ թութակ ճանչցված ենք, եթե ակնոցավոր պարոն մը լսե, կը ծիծաղի մեր վրա:*

ՊՈՂՅԱՆՑ.— *Իրավունք ունիս... ի՞նչ բանի վրա կը խոսակցինք:*

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— *Նորեկ դերասանուհվույն վրա:*

ՊՈՂՅԱՆՑ.— *Այո՛... տեսնենք, իր փափաքած արհեստին ընդունակ պիտի գտնե՞նք զինքը:*

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆՔ, ՎԱՐԴՈՒՀԻ, Ա. ԴԵՐԱՍԱՆ, Բ. ԴԵՐԱՍԱՆ, ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՔ, ԴԵՐԱՍԱՆՔ

ՎԱՐԴՈՒՀԻ.— (դերասանի մը) *Արդյոք կրնա՞մ տեսնել պարոն տնօրենը:*

ՊՈՂՅԱՆՑ.— (տեսնելով) *Ա՛, կարծեմ ինքն է...* (վահագնյանի հետ վարդուհիի կը մոտենան և անկյունը կեցած՝ ցած կը խոսակցին. նույնպես Ա.[39] Բ. դերասանիմ և Զիչիլ ադին կեցած ցած կը խոսակցին):

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Տես, Զիչիլ, նոր դերասանուհի մը... կը նախանձի՞ս...

ԶԻՉԻԼ.— Ասոնք չընեն. ինձ համար ավելի ադեկ. բնանվորված դերերես բավական կը թեթևնամ...

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ճշմարիտն ըսելով՝ մուրացիկ կնոջ մը դեր կատարելու շատ հարմար պիտի դա, վասնզի լաւկան աչեր ունի։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Շատ կը սխալիք, ժաք, լավ սիրուհի մը կըլլա, այնպես չէ՞, Զիչիլ։

ԶԻՉԻԼ.— Գուցե։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ոչ, հակառակորդի դեր ադեկ պիտի հարմարի իրեն, վասնզի աչքերը խոշոր են։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Բայց դեղեցիկ։

ԶԻՉԻԼ.— Սակայն դեղնած և նիհար է։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ադքատութեան մեջ տառապելուն նշան է այն։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Գրաւ կը դնեմ որ լավ հակառակորդ մը կըլլա։

ԶԻՉԻԼ.— Կարծեմ իմ անձնականիս նկատմամբ է այդ խոսքը, ժաք, որ միշտ կը կրկնես։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ամեննին, Զիչիլ։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Իր վեհանձն շարժվածքն է որ այդպես կարծել կուտա քեզ, ժաք, բայց իր անուշ նայվածքն ո՞ւր թողունք որ բնավ հակառակորդի չը հարմարիր։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Բայց մեթե սիրահար մը խաբելու պետք չըլլա՞ր։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ատոր համար օձի նայվածք պետք է։

ՋԻՋԻԼ.— Վերջապես փորձն ամեն բան կը հայտնե։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ջիլիլ իրավունք ունի։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Ես ալ իրավունք կուտամ այն խոսքին։

ՋԻՋԻԼ.— Ուրեմն դադրեցուցեք ընդունայն վիճաբանութիւնները։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Մոլիերի գլխուն վրա կերդնում, որ նորեկ դերասանուհվույն վրա եղած խոսակցությունը շատ կը նեղացնե Ջիլիլը։

ՋԻՋԻԼ.— Լռե՛, փողոցի մոլիեր։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Մեր ցայտող մոլիերը լռեց։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Այս ալ քու պյուտդ է, ժա՛ն։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ահա ձեռքը մաս մը կուտան, ըսել է որ ընդունվեր է։

ՋԻՋԻԼ.— Ի՞նչ դեր է արդյոք։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Եթե ժանի դիտողությանը հավատաք ընծայենք, գուցե Լուիզա Միլլերի դերն է, որ մոտերս պիտի ներկայացնենք։

ՋԻՋԻԼ.— Լուիզա Միլլերի՛։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Տես, ինչպե՛ս կը նախանձիս։

ՋԻՋԻԼ.— Շատ կը սիրեմ ես այն դերը։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Ֆերդինանտի դերն[14]) ալ արդեն նորեկ դերասան, Եդուարդի տվին։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Եդուարդ շատ պիտի հաջողի սիրահարության մեջ։

Ա. ԴԵՐԱՍԱՆ.— Առանց հակառակորդի դու մնացիր, ժա՛ք։

Բ. ԴԵՐԱՍԱՆ.— Իմ հակառակորդս և սիրահարս դինին է։

ՎԱՀԱԳՆՅԱՆ.— Պարոն դերասաններ, թատերաբեմը եր-

Թանք, փորձը պիտի սկսինք (ամենքը կը մեկնին. Վարդուհի մինակ կը մնա՝ ձեռքը բղքի ծռար մը):

Տեսիլ Գ

ՎԱՐԴՈՒՀԻ և ԵԴՈՒԱՐԴ

ԵԴՈՒԱՐԴ.— (դռենն երևնալով, մեկուսի, միևչդեռ Վարդուհի կռնակը ամոր դարձուցած ձեռքի դերն աշխե կանցնե) *Նրանկ դերասանուհի՜ մը... ո՞վ է արդյոք...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (դառնալով, նկուարդը տեսնելով և ինչ մը արձակելով) *Ա՜հ...*

ԵԴՈՒԱՐԴ.— (զարմացած) *Վարդուհի՜...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (գիրկը իյնալով) *Եդուա՜րդ...*

ԵԴՈՒԱՐԴ.— *Բայց ինչո՞ւ եկար հոս, Վարդուհի՛:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Վտանգի մինակ մնացի:*

ԵԴՈՒԱՐԴ.— *Սակայն հա՞յրդ, որ պիտ վտանգ:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Հրեայն բանտ դնել տվավ զինքը:*

ԵԴՈՒԱՐԴ.— *Բա՜նա... խե՜ղճ Վարդուհիս, որչա՜փ հալեր ու դևղներ ես:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Եթե հարցնե՜ս...*

ԵԴՈՒԱՐԴ.— *Կուլա՜ս... Վարդուհի՛... ի՞նչ ունիս:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Շա՜տ բաներ:*

ԵԴՈՒԱՐԴ.— *Պիտի պատմե՜ս:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Եթե դիս չատես:*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ի՞նչ լսել կուզես...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Եդուարդ, ալ անմեղ Հուլիան չեմ ես...*

ԵԴՈՒԱՐԴ.— *Ինչո՞ւ...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Լկկյալ Ֆանթինն եմ*[15]*:* (վարագույրը կիջնե):

ԱՐԱՐՎԱԾ Դ

Եղուարդի հագնվելու սենյակը.—Աջ[1] կողմը[2] դռնակ մը:

Տեսիլ Ա

ԵԴՈՒԱՐԴ և ՎԱՐԴՈՒՀԻ

ԵԴՈՒԱՐԴ.— Այսպես ուրեմն, Վարդուհի:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ ընեի, Եդուա՛րդ. հայրս անոթութենե չը մեռնելու համար ինքզինքը պիտի զարներ, եթե ամոթահար ճակատս իրեն առջև չը խոնարհեի և չըսեի. «Հա՛յր իմ, ալ քուկդ եմ». մանավանդ որ ասով կը կարծեի թե քեզ ալ փողոցներու մեջ անպաշտպան ու անոթի մնալե կազատեի, վասնզի չէի գիտեր որ պաշտպանություն գտած էիր... տես, Եդո՛ւարդ, առանց առաջուց ներում խնդրելու քեզնե՛ ատա ամեն բան պատմեցի քեզի[3]...

ԵԴՈՒԱՐԴ.— Անկարելի է որ չը ներեմ քեզի և չը սիրեմ, վըշտահար հրեշտա՛կ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՛հ, հիմա ես ալ որչա՛փ կը սիրեմ զքեզ, Եդուա՛րդ... այլ ամոթահա՛ր...

ԵԴՈՒԱՐԴ.— Մի ըսեր այդ խոսքը, Վարդուհի՛:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Երկու պարտք ունեի. նախ՝ հայրս բանտեն ազատել...

ԵԴՈՒԱՐԴ.— Այսօր բանտեն պիտի ելնեն և հոս գա, վաճառի իր պարտքը վճարեցինք մեր վաստակովը:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Երկրորդ՝ վերջին անգամ քեզ տեսնել և հետո...

ԵԴՈՒԱՐԴ.— Հետո՞:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ես դիտեմ ընելիքս:

ԵԴՈՒԱՐԴ.— Ի՞նչ պիտի ընես:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դու թատերախաղ մը գրեցիր, որ մեր պատմությունն է և այս գիշեր պիտի ներկայացնենք:

ԵԴՈՒԱՐԴ.— Այո՛, բայց անի մինչև վերջը մեր ճշգրիտ պատմությունը չէ. անոր վերջը վիպասանական է. մեր պատմությունը մինչև մեր թատրոն մտնելը և դերասան ըլլալը կը հանդի, իսկ վերջին արարվածը բոլորովին մտացածին է:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Լավ ուրեմն, ես ալ կուզեմ թատերախաղը ճիշտ այնպես վերջացնել...

ԵԴՈՒԱՐԴ.— Ի՞նչ, Թույն խմե՞լ:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Թույնն ալ պատրաստած եմ... պարզ բաղադրություն մը, զոր վիպասանությեան մը մեջ սորվեցա:

ԵԴՈՒԱՐԴ.— Ի՞նչ կրսես, Վարդուհի՛:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ասպի՛լ... ա՜հ, Եդուա՛րդ, չե՞մ կրնար... քանի որ թատերախաղին վերջին խոսքերն արտասանեմ... Թույնի տեղ ջո՛ւր խմեմ և մա՜հ կեղծեմ... ո՛չ... ո՛չ... չե՛մ կրնար...

ԵԴՈՒԱՐԴ.— Բայց անկարելի է այդ, Վարդուհի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եթե վիս կը սիրես, Եդուա՛րդ, օդնի ինծի այս դերապուն ճգնաժամին:

ԵԴՈՒԱՐԴ.— Անգո՛ւթ, չի՞ս մտածեր պիս։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դու անպատիվ չես և...

ԵԴՈՒԱՐԴ.— (ընդմիջելով) Վարդուհի՛...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ա՜հ, որչա՜փ թշվառ եմ... Թող որ երջանիկ ըլլամ...

ԵԴՈՒԱՐԴ.— Անգո՛ւթ, չես սիրեր պիս ուրեմն...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Մի՛ վիրավորեր պիս, Եդուա՛րդ, գոնե դու միայն այս աշխարհիս մեջ պիս սիրած և չը վիրավորած եղիր։

ԵԴՈՒԱՐԴ.— Մտածե՛ք թե ի՞նչ անողորմ հարված մը կուտաս ինձ... դու մեռնի՜ս... Վարդուհի, դո՛ւ, իմ պահապան հրեշտակս...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Բայց ի՞նչ ընեմ, Եդուա՛րդ, կզգամ որ քիչ ժամանակին մայր պիտի ըլլամ...[4] նախատուկից մայր մը... ի՞նչ ընեմ...

ԵԴՈՒԱՐԴ.— Ա՜հ, սոսկալի է այդ։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այսչափ ատեն շատ վիշտ կրեցի և համբերեցի, բայց չեմ կրնար մայրական ցավոց հանդուրժել... ա՜հ, տկար եմ, կին եմ... մանավանդ որ կը վախնամ... կը վախնամ ամոթահարութենե... կը սիրեմ զքեզ... Եդուարդ, նման այն փուշին, որ վարդին կուշտը կը սիրե...

ԵԴՈՒԱՐԴ.— Դու ինձ համար էակ չես, Վարդուհի՛, այլ ճառագայթ մը արտիս խավարին[5] մեջ... զնիյուս մը՝ ցավագին ճակտիս, թեև մը՝ իմ քնարիս... Մուրատոֆի ապարանին մեջ մանուկ էինք և կը խաղայինք ճոխութեանդ մեջ... հյուղի մը մեջ միասին սիրեցինք, անոթության մեջ միասին սիրեցինք, պլպլուն կանթեղի մը լուսավը խոսեցանք, ցուրտ քամին փշած ատեն իրարու շնչովը տաք-

ցանք... վերջապես անոթությունն իրարմե բաժնեց մեզ, թշվառությունը միացուց... դարձյալ որբ ու լքյալ ենք... գրկենք ուրիմն այն աննշան ու անհիշատակ հողակույտը... որուն վրա քահանայն անգամ դուցե չը մրմռար և մենք առանց ձայնի իջնենք այն մութ և խաղաղ փոսը։

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ի՞նչ, դո՞ւ ալ մեռնիլ կուզես։

ԵԴՈՒԱՐԴ.— Մեր պատմության մեջ Եդուարդ ալ թույն կը խմե... թույնը երկուքիս կը բավե, այնպես չէ՞ վարդուհի՛... ապրելու համար հացը խնայությամբ կուտեինք, բայց մեռնելու համար պետք չէ որ թույնը խնայությամբ խմենք...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եդուա՛րդ, եթե ճշմարիտը իմանալ կուզես, ես երկուքիս համար պատրաստեցի թույնը, վասնզի առանց քեզի մեռնելու համար քաջասրտություն կը պակսի... բայց դարձյալ չէի կրնար համարձակիլ քեզ թույն առաջարկել՝ մտածելով որ դուցե դու չէիր ուզեր մեռնիլ, և հերիք կը սեպեիր քանի մ'արցունք թափել իմ աննշան դագաղիս և հողակույտիս վրա... բայց կզգամ հիմա որ մեր սրտերն երկնային ճառագայթով մը միացած են անբաժան։

ԵԴՈՒԱՐԴ.— Որչա՜փ դժվար է աշխարհի վրա համոզվայ սիրուհի գտնել, սիրվիլ անկե և մեռնիլ իրարու դիրկ՝ դարձյալ դիրար սիրելով. ապրի՞լ է այս՝ աշխարհային ժխորին մեջ, սիրե՞լ է այս. ո՛չ... ապրիլն այն է, սիրելն այն է, երբ մահվան դալուկն ղեկցած երկու դվարթագեմ դիակ դիրկընդխառն կիջնեն այն լուիկ փոսը... եթե երջանկությունը չեն զգար՝ թշվառություն, զրկանք, անոթություն ալ չե՞ն զգար...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ո՜հ, որչա՜փ քաղցր է բանաստեղծ մը սիրել և հետը մեռնիլ...

ԵԴՈՒԱՐԴ.— Դո՛ւ բանաստեղծ ըլլիր պիս, Վարդուհի՛... դու մատուակեցիր ինձ այն նկատառը, որ սեր և բանաստեղծութիւն կը ներշնչե... այն նկատառը քու նայվածքեդ և սրտեդ կը բխեր...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ես հիմա ինչն կը մատուակեմ:

ԵԴՈՒԱՐԴ.— Կընդունիմ, Վարդուհի՛, վասնզի այդ ինչն ալ Աստված և անմահութիւն ներշնչող նկատառն է... (ձեռքը կը հատրուե):

ՎԱՐԴՈՒՀԻ.— Եդուա՜րդ...

ԵԴՈՒԱՐԴ.— Վարդուհի՛... (կը գրկախառնին Բանի մը վայրկյան՝ լուռ և արտասվալից...)

ՎԱՐԴՈՒՀԻ.— Ոտքի ձայն մը կը մոտենա... Եդուա՜րդ...

ԵԴՈՒԱՐԴ.— Գուցե հայրդ է, արցունքդ սրբե... մեր գաղտնիքը չիմացվի...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Այո, առանձին մեռնինք (արցունքը սրբելով):

Տեսիլ Բ

ՆՈՒՅՆՔ և ԹՈՎՄԱ

ԹՈՎՄԱ.— (դուռը բանալով և ներս մտնելով աննկց կը մոտենա և փոփոխակի կը գրկե զանոնք) *Ջավակնե՜րս... վերջապես բանտեն ալ ազատեցիք զիս... ա՜հ, երբեք երես ունենալու չէի ձեր դեմն ելնելու... բայց ի՞նչ ընեմ, զավակ եք և ես ալ թշվառ և ժանտ հայր մը գտնված եմ... ես որ կենացս մեջ խիստ քիչ անգամ լացեր եմ, այս*

վայրկենիս լալու անպատշաճ փափաք մ'ունիմ (կուլա. ներսէն հնչակի մը ձայն կը լսվի) *ի՞նչ ձայն է այս:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— Պատրաստութեան նշան է, հա՛յր իմ:

ԹՈՎՄԱ.— Ի՞նչ պատրաստութեան:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Վարագոյրը բացվելու մոտ է... հա՛յր իմ... պետք է որ բաժնվինք:

ԹՈՎՄԱ.— Բայց շատ քիչ տեսնվեցանք... ես շատ նեղսիրտ պիտի խնդրեի ձեզնե:

ԵԴՈՒԱՐԴ.— Այսուհետև շատ կը տեսնվինք, հա՛յր իմ...

ՎԱՐԴՈՒՀԻ.— Դու հիմա գնացածդ գնա և Սպուարդի հնդկական թատերախաղին հանդիսատես եղիր:

ԹՈՎՄԱ.— Արդյոք որչա՞փ գերազանց պիտի ձեացնեք:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Պիտի տեսնես, հա՛յր իմ... (դռնակեն կը մեկնին: Պատկերը կը փոխվի):

ՊԱՏԿԵՐ Գ

Տեսարանն է թատրոնին ներքնակողմը.—Օդյակներ և նստարաններ լցված են հանդիսատեսաց բազմությամբ մը.— վարագույրը դեռ բացված չէ:

Տեսիլ Ա

ԹՈՎՄԱ.— (մինչև վերջը մոազքաղ) *Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ, Բ. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ* (թատերատեսներ ասդին ցած կը խոսակցին):

Ա. ՀԱՆԴԻՍԱՏԵՍ.—Վերջապես հինգերորդ արարվածին վա-

բադույրը պիտի բացվի հիմա[6]. տեսնենք խաղը ի՞նչպես պիտի վերջավորի։

Բ. ՀԱՆԴԻՍԱՏՑՈՒ.— Մինչև հիմա թե խաղին կապակցությունը լավ էին և թե այն երկու ամոլներն սքանչելի կերպով կատարելին իրենց դերը։

Ա. ՀԱՆԴԻՍԱՏՑՈՒ.— Բնավ չը հուսացվիր որ մեկ քանի ամսոր դերասաններ եղած ըլլան։

Բ. ՀԱՆԴԻՍԱՏՑՈՒ.— Կերևի թե սիրահարյալ են իրարու։

Ա. ՀԱՆԴԻՍԱՏՑՈՒ.— Թող ըլլան, բայց միթե առանց դերասան ըլլալու՝ երկու սիրահարյալներ կրնա՞ն այս հրապուրիչ տեսարանն ընծայել... դյուրին բան չէ դերասան ըլլալ. թատրոնին բախտը դերասանի ձեռքն է. պետք է որ դերասանը գոնե լուռ բանաստեղծ մ'ըլլա, որուն լեզվին տեղ[7] հոգին խոսի, պետք է որ գլխուչն մեջ բոց և սրտին մեջ ավյուն ունենա. դերասան մը իր ընդունակությամբը կրնա հեղինակության մը հարակից փայլ մը տալ, նույնպես կրնա իր ապիկարությամբը նսեմացնել այն փայլը։

Բ. ՀԱՆԴԻՍԱՏՑՈՒ.— Ձեր բոլոր դիտողությունքը շատ ճշգրիտ են, բայց խիստ քիչեր այդ մասին գիտակցություն ունին. շատեր զբոսնելու համար թատրոն կուգան և ոչ թե ներկայացված խաղին ոգվույն թափանցելու. նույնիսկ եթե արհեստի և գաղափարի թերությունք կան թատերախաղին մեջ, անոնց բոլորովին աչք կը գոցեն։ Եվրոպացիք գիտեն թատրոնին Տարգը. թատրոններն[8] անցյալ[9] դարերուն[10] հեղափոխությանց[11] վատարաններ[12] հանդիսացան[13], թատրոններն իրրև ժողովրդյան կրթարաններ կը նկատվին, կրսեն, բայց ես կրսեմ թե անոր մարմինը կազմող բոլոր երակներուն կեղրոններն են. անոր[14] հե-

զափոխությունն[15] հարդարող[16] հրաբուխներ[17] են[18]. անհնար է, որ մարդ Շեքսպիրի, Շիլլերի, Հյուկոյի և Տյումայի թատերգությունքը կարդացած ժամանակը չաքանչանա. կը պաշտեմ ես այդ հանճարները, ժողովրդոց այն շանթեռանդն ու կարմիր գավակները:

Ա. ՀԱՆԴԻՍԱՏՆՍ.— Յամալի է որ մենք գրկված ենք այսպիսի հոյակապ հեղինակներե:

Բ. ՀԱՆԴԻՍԱՏՆՍ.— Երբ քաջալերությունը պակսի[19], ամեն բան կը պակսի. եթե արարչագործության տրանչիլերը գԱստված չը քաջալերեին իրենց վեմ արդյամբը, ինչպես Աստված չէր կարողանար իր հսկայական գործն հատաջ տանել: Քաջալերությո՞ւն, մի՛շտ քաջալերություն վեմ գործերու: (Թատերասեր[20] վարագույրը բանալ տալու համար խոսն ծափահարություն մը կսկսին) Տե՛ս, ահա մեր տված քաջալերությունը՝ չոր ծափահարություն մը (դարձյալ ծափահարություն):

Ա. ՀԱՆԴԻՍԱՏՆՍ.— Այդ ծափահարությունն ալ կրնա դիտողություն վերցնել, վասնզի շատ անգամ կը տեսնենք որ անտեղի ծափահարություններ ալ կըլլան, որոնք կրնան իրենց ծայրահեղությամբն ամեն բան շփոթել և երբեմն ալ իրենց անտեղի թերությամբը՝ բռնկած դերասան մը քար կտրեցնել (ծափահարությամբ):

Բ. ՀԱՆԴԻՍԱՏՆՍ.— Կարծեմ թե վարագույրը պիտի բացվի, վասնզի հուշարարը իր տեղը մտավ[21]:

(Վարագույրը կը բացվի և անոնց ներկայական վայր մը կերևի լեռան մը ծոցը, ծառերով և ծաղիկներով զարդարված. առվակ մը կը սահի կերթա տեսարանին դեպի խորը):

ՆՈՒՅՆՔ, ԵՂՈՒԱՐԴ և ՎԱՐԴՈՒՀԻ (ձեացյալ բառեր տեսարանին վրա.—Տեսարանին միջև վերջն անընդհատ ծափահարություն):

ՎԱՐԴՈՒՀԻ.— Հնո՞ւ մեզնե այդ առուները, այդ շենքերը... Հնո՞ւ մեզնե այդ ամպերն անգամ... միմիայն այս ծառերուն տերևները թող պարածածկեն մեզ, միայն սա զեփյուռը թող մոռենա և միայն սա առվակը նայի մեզ... ա՜հ, սա տերևները, զեփյուռը և առվակն իրենց շշունջներովը բավական կրնան ազոթել մեր հոգվույն փրկության համար:

ԵՂՈՒԱՐԴ.— Եվ դու կը կարծես որ մեր հոգիները փրկելի՞ հոգիներ են, վարդուհի՛... պետք է մեռնինք... այո՛, մեռնինք, վասնզի աշխարհս անհուն սև ամպ մ՚է որ մեր սիրո արևը կը պարփակե զայն խեղդելու չափ... անկարելի է սիրել հոս... սերը ծագիկ մ՚է որ միայն երկնքին մեջ կը գտնվի, և մենք հոս միմիայն անոր բուրումը կրնանք զգալ... ա՜հ, տեսնենք ի՞նչ է այն սերը, որուն լոկ ցավերը կզգանք հոս միանգամայն:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Պիտի տեսնենք, Եղուա՛րդ, պիտի ըողունք այս աշխարհը, յորում մարդիկ իրարու հավասար և եղբայր չեն, յորում միայն սակաւ արարածներն ամոթ, խիղճ և ցավ ունին[22]. անգութ է այս աշխարհիս վերտառուչը,

քաղաքականութիւնն լսել կուզեմ որ չը ներեր անոթիին կտոր մը հաց գողնալ՝ հարկավ ունեցողէ մը, չը ներեր խեղճ աղջկան մը որ իր սիրուն մէջ խաբված է անոթի չը մնալու համար, կամ ստիպված է իր երկնային լուսային ապօրինավարութես ծախսել... սիրելի մը և ալևոր հայր մը անոթի չը ձգելու համար (սույն միջոցին Թովմա նստարանին վրա կը սուրսի):

ԵԴՈՒԱՐԴ.— Կաղաչեմ, վարդուհի՛, այդ ցավերը հոգվույդ մեջ մի՛ խորասուզեր, հիմա պիտի փշրեն զանոնք երկրնքի ալիները մեր հոգիները կոծելով... հանդարտ ըլլանք, թողունք որ մեր օրհասին մեջ մեր հոգիները երկրի բուրումը վայելեն... դեռ ժամանակ կա թուչնը ներսործելու... նամինք սա առվակին քով, սա աթոռաձև ժայռին վրա և առվակին հայելվույն մեջ մեր դակութիւնը դիտենք... (դեպի ժայռը կերթան իրարու կրծած, վարդոմի նստած ատենն կը դողդջե) Կը դողդոջի՞ս, վարդուհի՛:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Անշուշտ թուչնի ներսործութիւնն է որ կպպամ:

ԵԴՈՒԱՐԴ.— Ուրեմն ինչո՞ւ չը փութար ինձ ալ ներսործելու այդ թուչնը, անկարելի է որ վայրկյան մը իրարմե անջատյալ մնանք... ա՜հ, կը հասկնամ քեզ շուտ ներսործելուն պատճառը... ազա՛հ, դու ինձնե առաջ և րու բաժիննդ ավելի համեղիր:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Վանդի քեզնե ավելի ծարավի էի մահվան:

ԵԴՈՒԱՐԴ.— Ի՞նչ կդպաս, վարդուհի՛:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Երակներուս մեջ թմրեցուցիչ հյութ մը կը հոսի... ա՜հ, որչա՜փ թեթև և երջանիկ կըլլա եղեր դողդոջ էակ մը:

ԵԴՈՒԱՐԴ.— (ինքզինքը զննելով, հանկարծ) *Վարդուհի, ես ալ բան մը կզգամ, ա՜հ, միատեղ պիտի մեռնինք...* (կընդգրկե զվարդուհի):

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կուրծքդ ավելի մոտեցուր կուրծքիս, Եդուարդ, թող մեր սրտից արուիչուններն իրարու խառնված աղոթք մ'ըլլան առ Բարձրյալն... վանդի սրտերը շուրթերեն ավելի մաքուր կըլլան:*

ԵԴՈՒԱՐԴ.— *Այո...* (վարդուհին դիտելով) *ա՜հ, որչափ գեղեցկացեր ես, Վարդուհի', մինչև հիմա այսչափ ճառագայթից տեսած չէի քեզ*[23]*... միթե երկնքի առաջին ալիևե՞րն են այդ ճառագայթները, ուր կը բարձրանան մեր հոգիները...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Եվ միթե Աստուծո աթոռին նայելու համար ադամանդյա աչե՞ր պետք են... այն ատավոր փառաց ցոլմունքին չը շլանալու և չը փշրվելու համար...* (դողդոջուն՝ Եդուարդի վրա կընկնի):

ԵԴՈՒԱՐԴ.— *Ի՞նչ կըլլաս:*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Կայրի՜մ:*

ԵԴՈՒԱՐԴ.— *Երկնքի բո՛ց, իջար վերչապես...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ինձ փարե...*

ԵԴՈՒԱՐԴ.— *Այո՛, իրարու մեջ այրինք...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— (մթագնած աչերը ճորիզոնին վրա հառելով) *Տե՛ս, որչա՜փ սև է ևղևր աշխարհը, կը տեսնե՞ս, Եդուա՛րդ:*

ԵԴՈՒԱՐԴ.— (նույնպես) *Այո՛, ես ալ նույնպես սև կը տեսնեմ, Վարդուհի'... Բայց մեր ներելմանը չըլլա՞...*

ՎԱՐԴՈՒՀԻ.— *Ա՜հ, ի՞նչ կըլլամ... մնա՞ս բարով, Եդուարդ...*

ԵԴՈՒԱՐԴ.— *Կեցիր... ես ալ..*

ՎԱՐԴՈՒՀԻ.— Միաւեղ...

ԵԴՈՒԱՐԴ.— Երթա՜նք բարով... (իրարու վարած կարձանաձան. վարագույրը կիջնի):

ՀԱՆԴԻՍԱՏՍՔ.— (աներեսիաւ և ուժգին ծափահարելով)[24] Ի ա՜հ... ի ա՜հ... ի ա՜հ... (սույն աղմուկը մեկ բանի վայրկյան կը տևե):

Տեսիլ Գ

ՀԱՆԴԻՍԱՏՍՔ և ՊՈՂՅԱՆՅ

ՊՈՂՅԱՆՅ.— (վարագուրիկը բանալով շփոթած և այլագունած) Մեծարգո Հանդիսականք...

ՀԱՆԴԻՍԱՏՍՔ[25]*.— (խոսքն ընդմիջելով և ծափահարելով, անտարբերությամբ) Ի ա՜հ... ի ա՜հ...*

ՊՈՂՅԱՆՅ.— (նույնպես) Բայց...

ՀԱՆԴԻՍԱՏՍՔ[26]*.— (նույնպես) Ի ա՜հ... ի ա՜հ...* (Պողյանց վարագուրիկեն ներս կը մտնե և հանդիսատեսայ աղմուկին և ծափահարության միջոցին՝ վարագույրը ներեն կը բացվի և միևնույն տեղը եղուարդ և վարդուհի դիակնացած կերևին):

ՀԱՆԴԻՍԱՏՍՔ[27]*.— (սարսափած) Մեռա՜ծ...*

ԹՈՎՄԱ.— (կայծակնահար) Ջարդակնե՜րս... (վարագույրը կիջնի):

ԱՐԱՐՎԱԾ Ե

Նահապետոֆի տանը մեջ ծաճրագին կարասիներով զարդարված սենյակ մը:

Տեսիլ Ա

ՆԱՀԱՊԵՏՈՖ և ՄԱԿԱՐ

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Այո՛, քեզի խոսք ուված եմ որ ևին բոլորովին իմ վաստահությունս և համակրությունս դրավես, օր մը իմ հետաքրքրական պատմությունս քեզի պատմեմ:

ՄԱԿԱՐ.— Եվ կը հուսամ որ...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Դոհ եմ քու ծառայութիննդ, փոքրիկ սպասուդս... (Մակար բարկությամբ ոտները կը րոթվի) ի՞նչ կըլլաս:

ՄԱԿԱՐ.— Վևրջապես չը կրցի՛ հասկցնել որ իմ անունս Մակար է...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Է՛հ, մի բարկանար...

ՄԱԿԱՐ.— Եվ պաշտոնս ալ ձեր քով մատակարար...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ուրեմն, Մակար մատակարար... մոխկ ըրե՛ս որ պատմությունս սկսիմ...

ՄԱԿԱՐ.— Ունկնդիր եմ, տեր իմ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ասկից 28 տարիի չափ առաջ, պիշեր մը Բեռլայի հրապարակն աղջիկ մը առանձին, կը պտտեր։ Երթևեկող բազմութեան մեջեն ուսանական զգեստ հագած վայելչադեմ երիտասարդ մը այն մենաշրջիկ օրիորդին մոտենալով՝ լուսընկային, քաղաքավարական և անուշ կերպիւ մը կըսե. «Օրիորդ, ինչո՞ւ մինակ եք, կը համի՞ք թևակցելու պատիւը տալ ինձ». աղջիկը, որ մտադրած էր, հանկարծ երկու արցունք կը ծագին աչերուն մեջ... վանդի որբ, մինակ և աղքատ էր բոլորովին երկրի վրա... և վայելուչ երիտասարդ մը, թեպետ անծանոթ, բայց համակրութեան ցույց կուտար իրեն. ուստի երիտասարդին խնդիրը չը մերժեր։

ՄԱԿԱՐ.— Վայելուչ ըլլալուն համար... եթե ես այդպիսի առաջարկութեան մ'ընեմ, իսկույն լավ ապտակ մը կուտեմ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Մտիկ ըրե. ուրիշ դիշերներ ալ այս երկու անձինքը կը տեսնվին Բերայի հրապարակը, բայց երկձի բաց կառքով, և այն օրիորդը բավական վայելուչ հագված և երեսը կարմրորակ քող մը ձգած է, դուցե չը ճանչցվելու համար... երիտասարդը Ռուսիացի սևեռի վաճառականի մը որդի է և Մուրատոֆ կը կոչվի... ճամբորդելու և պտտելու համար Պոլիս կուգա և այն աղջկան կը հանդիպի, որ իր հրապույրովն անոր սիրտը կը գրավե... քանի մ'ամիս շքեղ տան մը մեջ ճոխութեամբ կը կենակցին. վերջապես անպատկ սիրո ձանձրութեան ժամերը գալով, Մուրատոֆ Ռուսիա կը վերադառնա... աղջիկն իզուր կուլա և կաղերսե, դեռ կը սիրե... երկու ամիսեն գալակ մը կը ծնի, զիս, անունս Գեորգ կը դնեն։

ՄԱԿԱՐ.— Ուրեմն այն աղջիկը քու մայրդ է:

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Այո՛, կար կարելով պիս և ինքզինքը խնայությամբ կը սնուցանե... երբ մանուկ էի, խաղալիք չունենալով՝ մորս գուլպա հյուսած առնն կծիկովը կը խաղայի, երբ խնկահաս եղա՝ բազմոցի տեղ տախտակամածին վրա փռած հին գորգի մը վրա կը նստեի, երբ պատանի եղա շատ անգամ մորմես ծածկվելով կուտեի ցամաք հացը... վերջապես երիտասարդ եղա գրիվի՝ մայրս պիս աշկերտ ուղարկեց երկաթագործի մը քով. մինչև իրիկուն կռանով սալը ծնծղով կրակին դնեմ հոգիս բերանս կուզար և ուժս կսպառեր, վաստկի ցամաք հացով և ցուրտով անած էի. ամբողջ 60 փարա կառնեի... վերջապես մայրս, որ բանի՞ մը՞ ամիսն ի՞ վեր՞ հազեն կը հագներ, մեռավ... մորս կուրծքին վրայեն մատանի մը գտա, զոր երբեք մատը դնելը տեսած չէի, վրան «Մ» նշանագիր մը կար, որ անշուշտ իր սիրահար Մուրատոֆի ամածը պիտի ըլլար... մայրս շատ սիրելուս՝ այս մատանին, որ տնա մատս է, միշտ հիշատակ պահեցի և երբեք ծախել չը մտածեցի՝ աղքատությանս մեջ անգամ:

ՄԱԿԱՐ.— Եվ դեռ կը պահես:

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Միշտ... մորս մահվան և իմ ինձառակիս վրա վշտահար՝ գիշեր մը, չը գիտեմ ինչ դիտավորությամբ, այլ գրիվին արտառանջությունս փարատելու համար Վոսփորի[3] եվերքնները կը թափառեի՝ լուսնկային, ինքզինքս ամայի տեղվանք գտա... այն ամայության մեջ կռանի՝ սալին դարնվելու ձայներ և ուրիշ աղմուկներ կը լսեի, չորս դիս նայեցա և շենք մը չը տեսա. կենդանյաց որջի կամ քարայրի պես տեղ մը կտեսնեի,

կառնին ձայնները մոռնայն... այն քարայրին ներս նայեցա, բավական մութ էր, բայց քիչ մը ետքը լուսե ապտա հնոք մը նշմարեցի... հետաքրքրությունս ավելցավ, քաջ բնական առնդուղ մը կար, ուսկից քիչ մը վար իջնել և բան մը հասկնալ ուզելի առանց անանկ լու, բայց առքս առհլով՝ հանկարծ ինքզինքս բավական ընդարձակ գետնափորի մը հատակը գտա...

ՄԱԿԱՐ.— *Ի՞նչ անեկդուպիյուն...*

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— *Կառնին ձայները գադրած էին, ապշած չորս դին և երկու մարդոց կը նայեի՝ որոնք շվարած փոփոխակի իրարու երես նայելով դիս կը դիտեին. կերևի որ՝ հազած գործավորի շապիկս իրենց-վատահություն գրավեց և չը կասկածեցան ինձմե այնչափ, որչափ որ պիտի կասկածեին գրամանեղնելու. մեկը բայց մը հատաչ գալով հարցուց ինձ տաճկերեն լեզուն իմոխովով. «Ո՞վ ես դուն». ես ալ պատասխանեցի որ ինձմե բնավ չը կասկածին, վասնզի հասկցա թե ինչ տեսակ տեղ մը կը գտնվեի, և պատմություն և Հոն իջնալս իրենց համառոտիվ անցա... անոնք իմ վրաս գութ ցուցուցին և իրենց բնակելի բլլալով իրենց հետ աշխատիլ առաջարկեցին ինձ, ես ալ ընդունեցի սոխմամբ...*

ՄԱԿԱՐ.— *Վասնզի վախնալով որ իրենց գաղտնիքը կը տարածանեմ, անշուշտ Հանկի[10] ապչ գտած չէին Հաներ բնչ...*

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— *Տարի մը այն տեղը բնակելով և գիշերներն աշխատելով՝ բավական տեղ գիպեցինք և տարուստ եղանք, գանազան բաղաքներու մեջ մեկի բնակեր գանվող գրամախուչներու շնորհիվ. վերջապես մեր մեջ որոշեցինք որ ալ այն տեղերի գետնափորներն ետևնուվ*

արևուն դիմաց Հանգիստ ապրինք... ընկերներս ուրիշ երկիրներ գաղթեցին, ես ալ Ռուսիա գացի ասկից[11] երեք ամիս առաջ, Հոն Հայրս միասս եկամ, և երբ Մուրատֆը փնտռեցի, բայն ըև նա անանկանալով ամիսի մը չափ կար որ անհետացեր էր և ոչ երբեմն չէր գիտցվեր... վերջապես Հոն առտնկան Հայուհիներ Հարցնելով Պոլիս դարձա, դարձյալ իրրև Ռուսիացի վաճառական... ալ քեզ Հանդիպելուս և իմ մտահաղորդս ընելուս պատմությունը դուն գիտես... կը Հուսամ որ դուն ես:

ՄԱԿԱՐ.— Բավորով սրտիվ, տե՛ր իմ, և կը Հուսամ որ դուր ալ...

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Եվ միևն իմ գոհությունս և վստահությունս Հայտնելու Համար չէ՞ որ այս պատմությունը քեզ ըրի, որ ինձ Համար մեծ պատանիք մ'է:

ՄԱԿԱՐ.— Տե՛ր իմ, միշտ վստա՞հ եղիր իմ վրաս:

Տեսիլ Ը

ՆՈՒՅՆՔ և ՍՊԱՍԱՎՈՐ ՄԸ

ՍՊԱՍԱՎՈՐ.— Տե՛ր իմ, մեկը եկեր ձեզ տեսնել կուզե:

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Ձե՞ս ճանչեր պինքը:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Ո՛չ, տեր իմ:

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Ի՞նչպես մարդ է:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Արհեստավորի Հագուստով երիտասարդ մ'է:

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Անունը չը պրուցե՞ց:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Ձիտցեի:

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Ձիտցե՞ի... ներս մտցուր պինքը. (ապասավորը կը խոնարհի և կը մեկնի) *իմ դրամատեղ ընկերներս*

մնկն ըլլալու է... բայց ի՞նչ կը նշանակէ արհեստավարժ կերպարանքը... տեսնենք... (Ճիտրճի՝ դռանը մէջ Մակարի համար կակճարկն և նահապետոֆ ճշան կրճն ու դուրս ելլեն):

Տեսիլ Գ

ՆԱՀԱՊԵՏՈՖ և ՃԻՐՃԻ

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ի՞նչ կա, Ճիրճի, ի՞նչ վիճակի մէջ կը գտնեմ զքեզ:

ՃԻՐՃԻ.— Բան չկա, Գեորգ... ը՛... պարոն Նահապետոֆ:

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Բայց ի՞նչ կուզես որ դուշակեմ:

ՃԻՐՃԻ.— Ի՞նչ պիտի գուշակես... անանկացա...

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ի՞նչ կըսես:

ՃԻՐՃԻ.— Է՛, ի՞նչ ընեմ, քեզի պես Տարտուֆյանո[12] Հարգը չը պիտցա կամ մականունիս վրա դը[13] մը օֆ մը կամ ուիչ մը չավելցուցի... այլ Փարիզուհիներու հետ վատնեցի բոլոր ոսկիներս, որ այնչափ արտառանջութեամբ և աշխատութեամբ ձեռք բերի այն մութ դետնափորին մէջ:

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ուրեմն Գադիայեն կամ Փարիզեն կուգաս:

ՃԻՐՃԻ.— Այո՛, վերջին գրամներս մսխած դիշերը՝ գինովութեան մէջ հազիվ մտածեցի շոգենաւի ծախքը պահել Պոլիս դառնալու համար, կը մտածեմ որ գոնե քեզ հարուստ գտնելով կրնայի քիչ մը տակ առնել... քու տվածդ փրկանք մը պիտի սեպվի, վաղդի մեր գետնափորը ինկած դիշերդ կռանով մը գլուխդ ջախջախելու տեղ մարդասիրութեամբ զքեզ ընկեր բրի:

ՆԱՀԱՊԵՏՈՖ.— Ուրեմն ո՞րչափ կը պահանջես:

ՃԻՈՐՃԻ.— Հազար ոսկի։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ա՜հ, շատ է։

ՃԻՈՐՃԻ.— Բոլոր հարստությունդ ստիկանության հանձնելու և Փարանը տարիներով փտելու տեղ, դու մարդասեր ընկերիդ հազար ոսկի տալ շա՞տ է։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Բայց մինչև դու ալ իմ ընկերս չե՞ս... ինչպես կը մտանես։

ՃԻՈՐՃԻ.— Ինծի համար քեզի չափ հոգ չէ... սոսկալի բան է, երբ Նահապետոֆ մը դրամանենգ կամ թիապարտ հրատարակվի... իսկ ես միշտ ճիորճի եղա... միանգամայն այս վիճակիս մեջ մնալու տեղ ինծի ավելի աղեկ է բանտը պատրաստ հաց ուտել և բանտը իմ զվարճությենն[15] հետու դանվելուս փաստ[16] մ՚ընել։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Եթե ստակները տամ՝ ի՞նչ պիտի ընես։

ՃԻՈՐՃԻ.— Փարիզ պիտի երթամ։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Դարձյա՞լ...

ՃԻՈՐՃԻ.— Ա՜հ, Գեորգ, չես գիտեր Փարիզը և Փարիզուհիները։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Բայց ետքը՞։

ՃԻՈՐՃԻ.— Ի՜նչ կուզե Թող ըլլա... դու չես գիտեր Փարիզը, իր գեղեցկությամբն աշխարհի Թագուհին է և իր գեղեցկիկներովը երկրային դրախտ. հոն միշտ զվարճություն, ճոխություն, գեղեցկություն և երջանկություն կը Թագավորեն... վերջապես, ի՞նչպես բացատրեմ, ամեն բան ուսաա... մտածե մեկ մը, Փարիզի գերեզմանոցներուն մեռելաթաղին Թին անգամ հողով լի է և մեռելին վրա խնայողությամբ հող չի[17] նետեր։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ա՜հ, խեղճ։

ՃԻՈՐՃԻ.— Վերջապես Փարիզի դերեզմանոցը[18] կտեսնեմ բաղվիլ:

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ձիրճի՛, հարուստ եղիր և տես:

ՃԻՈՐՃԻ.— Հարուստ ըլլա՞մ, քեզի պես տուգա՞նք տալու համար, ինչպես որ դուն իմա ինծի կուտաս:

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Անդա՞մ:

ՃԻՈՐՃԻ.— Օ՜ն, համրե հազար ոսկին, զուցե այսօր ճամբա պիտի ելնեմ... վայրկենն[19] վայրկյան երթալու խոսք ալի սիրտ չվայտա... և օրեր անցան:

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— (բոպր մը տալով) Ա՛ռ:

ՃԻՈՐՃԻ.— Արժեքո՞ւղի է:

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Այո՛:

ՃԻՈՐՃԻ.— (զննելով) Հազար ոսկինոց... շնորհակալ եմ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Երե մեկ մ՚ալ ինծի դիտես...

ՃԻՈՐՃԻ.— Տեսնե՛նք...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.—Դուն դիտես:

ՃԻՈՐՃԻ.— Մնաս բարով, Գեո՛րգ... տեսնեմ այսօր ճամբա ելնող Մարսիլիո շոգենավին կրնա՞մ հասնիլ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Փարիզի խնամի:

ՃԻՈՐՃԻ.— Մնաս բարով... (կը մեկնի):

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— (միճակ) Ո՞ւսկից[20] դիմացս ելավ այս սատանան:

Տեսիլ Դ

ՆԱՀԱՊԵՏՈՑ և ՍՊԱՍԱՎՈՐ ՄԸ

ՍՊԱՍԱՎՈՐ.— Տե՛ր իմ, Թուխմա անուն մեկը նկեր ձեզ տեսնել կուզե:

ՆԱՀԱՊԵՏՈՅԻ.— Թումա՛... Լոկ պա. (ապաւավորը կը խոնարհի և կը մեկնի) Հիս ու մոռցած մարդիկներ կը հաճախեն տունս... մեկը վիս կոպտանց, տեսնենք այս ի՛նչ պաշտոնով կուգա... փոխորիկ մը կա իմ գլխուս վրա:

Տեսիլ Ե

ՆԱՀԱՊԵՏՈՅ և ԹՈՎՄԱ, <(հետո ՍՊԱՍԱՎՈՐ ՄԸ)>

ԹՈՎՄԱ.— Ա՛հ, պարո՛ն, ի՛նչ վաստկիլան էր որ բրիք, բոլոր ընտանիքս ինշուած բրիք... ապրիկս մնաւ...

ՆԱՀԱՊԵՏՈՅԻ.— Ես ի՛նչ ընեմ... Լիւ ապրիկդ մնաւ է:

ԹՈՎՄԱ.— Դու ի՛նչ ընես, դուն ես պատճառը... որ ապրիկս իր հզրայրացրին հետ ինչն խմեց և մնաւ:

ՆԱՀԱՊԵՏՈՅԻ.— Բայց միրն քու հաճութիւնդդ չեղա՛ւ ամէն բան:

ԹՈՎՄԱ.— Պարո՛ն, միրն վախտին նէնդյալ դրա՛մ խոստացար ինձ...

ՆԱՀԱՊԵՏՈՅԻ.— Նէնդյալ դրա՛մ... ի՛նչ կըսես...

ԹՈՎՄԱ.— Ա՛հա վաստկիլան մ՛ալ, որ կուրանաս և պարմացյալ կը ձիացնես:

ՆԱՀԱՊԵՏՈՅԻ.— Բայց բան մը չեմ հասկնար քու խոսքերդդ:

ԹՈՎՄԱ.— Միրն դու չը ավի՛ր նէնդյալ դրամը աստղաւորին որ ինձ հանձնեն և վիս խոսի... վաստկիլար:

ՆԱՀԱՊԵՏՈՅԻ.— Ձշմարի՛տ կըսես...

ԹՈՎՄԱ.— Ա՛հ, այդ ձևերով մա՛րդ կուզես ճաթեցնել...

ՆԱՀԱՊԵՏՈՅԻ.— (կանչելով) Մակա՛ր... Մակա՛ր...

ՍՊԱՍԱՎՈՐ.— (ներս մտնելով) Դուրս ելավ, տե՛ր իմ...

ՆԱՀԱՊԵՏՈՅԻ.— Ո՛ւր գնաց:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Ջեմ գիտեր։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Գնա, շուտ գինը գտիր։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Շատ ապեկ, տե՛ր իմ... (խոնարհելով կը մեկնի)։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Պարո՛ն, կերդնում այս մատանվույն վրա, որ աշխարհի մեջ ինձ համար ամենեն նվիրական բանն է, կերդնում որ բան մը չեմ գիտեր...

ԹՈՎՄԱ.— (մատանին տեսնելով՝ զարմացած, մեկուսի) Այս մատանի՞ն...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Բայց, պարո՛ն, այն ննջեցյալ դրամներն ի՞նչ ըրիր...

ԹՈՎՄԱ.— (որ աչքը մատանվույն հառած է[21] առանց զայն մոխիկ ընելու) Այս մատանին որո՞նն է, պարո՛ն...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Իմս է...

ԹՈՎՄԱ.— վրայի նշանագիրը «Մ» է, այնպես չէ՞...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Այո՛... բայց ի՞նչ կա որ...

ԹՈՎՄԱ.— Ո՞վ ավավ ձեզ պայն...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Բայց ինձ մոխիկ ըրի, այն ննջեցյալ...

ԹՈՎՄԱ.— (ընդմիջելով) Կաղաչեմ, պարո՛ն, ուսկից առիք այս մատանին... տերը կը ճանչնա՞ք...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Մորս հիշատակն է...

ԹՈՎՄԱ.— (զարմացած) Մո՞րդ։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Բայց բան մը չեմ հասկնար։

ԹՈՎՄԱ.— Աստվա՜ծ իմ... Աստվա՜ծ իմ...

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ի՞նչ կըլլաս, պարոն Թովմա...

ԹՈՎՄԱ.— Քեզի համար Թովմա չէ իմ անունս։

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— Ի՞նչ ըսել կուզես։

ԹՈՎՄԱ.— Կյանքիս Բշվառ մասին անունս[22] է[23] Թովմա[24], իսկ իմ[25] բուն անունս...

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Անո՞ւնդ։

ԹՈՎՄԱ.— Մուրատոֆ։

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Իմ հա՜յրս... և վարդուհի՞ն...

ԹՈՎՄԱ.— Քու քույրդ էր...

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Աստվա՜ծ իմ... մեռա՜վ...

ԹՈՎՄԱ.— Ես եղա իր դահիճը... և դարձյալ պիտի ըլլամ։

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Բայց, հա՜յր իմ, ի՞նչ ըրիր այն կեղծ դրամները։

Տեսիլ Զ

ՆՈՒՅՆՔ և ՄԱԿԱՐ, <(ներս ՍՊԱՍԱՎՈՐ ՄԸ)>

ՄԱԿԱՐ.— (գթովմա տեսնելով՝ սարսափած, մեկուսի) Այս մարդը՜...

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Անիծյա՜լ սպասաւոր, այս մարդուն ննջյալ դրամ տվիր ես...

ՄԱԿԱՐ.— (վախեն տատամսելով) Բայց... տե՛ր իմ...

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— Օ՛ն, կորիր աչացս առջևեն. տանս սեմևն ներս մեկ մ՛ալ ոտք չի պիտի կոխես...

ՍՊԱՍԱՎՈՐ.— (շփոթած մտնելով) Տե՛ր իմ... ոստիկաննե՛րը տունը կը պաշարեն...

ՆԱՀԱՊԵՏՈՅ.— (սարսափած) Ի՞նչ կը նշանակե ասիկա...

ԹՈՎՄԱ.— (որ մինչև հիմա մտածույզ էր) Ձախող վրեժ մ՛առի... աղջկանս մահվանը[26] վրա բոլորովին կատաղած՝ ամեն բան ոստիկանության իմացուցի... քեզ մատնեցի... զավակս...

ՄԱԿԱՐ.— (մնկոտի) *Իր հա՞յրը..*

ՆԱՀԱՊԵՏՈՑ.— *Անե՛ծք...* (Մակար կուզ վախչիլ) *Կեցի՛ր անօրեն սատաւոդ, այս բոլոր ապեսից պատճառը դու ես,* (առիճաւոր մը կուպի աճոր և կը զարնե):

ՄԱԿԱՐ.— (թավալգլոր բնկնելով) *Կորամ՛եցա՞...* (վառարդոյը կ'իջնե):

վ ե ր ջ

3 Հունվար 1871

ՏԱՐԱԳԻՐ ԻՄԻՊԵՐԻԱ

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ Ի ՄԻ ԱՐԱՐՎԱԾ

Ա Ն Զ Ի Ն Ք

1. ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼՊԱՆՏՅԱՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆ
3. ՍԻՊԵՐԻԱ
4. ԺԱՄԱՆԱԿ
5. ՄԱՀ
6. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ա. ՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

(Վարագույրը կը բացվի, Նալպանդյան հետևյալ երգը կերգե տխուր եղանակավ)

ԵՐԳ

Ո՛չ երեկո՝ ո՛չ առավոտ՝
Ոչ ցող՝ բուրումն և ոչ ծաղիկ,
Հոս միշտ խավար ու մահվան նման,
Գետին սփռած աւյուն՝ աղիմ:

Այս ամայի տեղն է Սիպի՜ր...
Հոս կամսուրվին անշըշունջ
Ազատություն ու ազգ սիրողներ,
Ավա՜ղ, Հայոց անտեռո՜ւնչ...

Հոս ո՛չ գարուն և ոչ ամառն,
Ո՛չ ալ ծաղկանե՛ ու դալարիք,
Այլ ճանապազ ձմեռն ու սառն
Ցուրտ, և աճեղ մերթ փոթորիկ:

Հոս տարագիրք միշտ ողբ ի կոծ՝
Անհուն ճնծեն մինչ կմախք դառնան,
Հետո մահվան դիմեն ի ծոց,
Նվ կը գլորին ի գերեզմա՜ն...

(Տեսարանին խորը Միսերիո լեռները կերևին և անոնց նաև՝ Սառուցյալ օվկիանոսը)

Տեսիլ Ա

(Նալպանդյան առանձին՝ ոժգույն, կրոտ և խոկուն կերևա, ձեռքերը՝ արտին վրա խաչաձև):

Տարագիր ի Միսերիա՜... Ազատության գաչեցի[1]) և իմ երիտասարդությանս երևակայությամբը կարծեցի որ ազատության բևեռուն վրա հանդչած, դեպի հայրենիք կը րոչեի՝ իրեն ազատության ավետիսը տալու համար. բայց երբ աչքերս բացի, շուրս կոտմս նայեցա և տեսա սառնապատ լեռներ ու անապատներ, այլ ոչ թե ախուր ավերակներ. նայեցա որ տեսածս հայրենիքս չէր. սոսկացի և գգացի որ սիրտս ուժգին կը բաբախեր. ի՞նչ անիս, սի՛րտ իմ, գաչեցի, և նա Միսերիա՜ պատասխանեց... սարսափեցա, ոգորացի հայրենյացս բախտը, արդարությունն: ազատակեցի հատատեա, և Միսերիա առ բանձևով մանչեց վախնատով որ չըլլա թե ձայնս իր բարեցյալ սառնամանիքներեն քաղտնցնելով Ամենակալին ականջին ինդա: Ուզեցի լսիկ մնչիկ արտասվել միայնակ՝ գգիս վրա, այլ անգամ Միսերիան սառեցուց աչացս մեջ արցունքը և ինչման համա սիրտս հատաչանքներով մաշեցավ և հալեցավ: Հայրենիքս կը փնտռեի և Միսերիո մեջ մոլորեցա և նիմա նոս տատապամ և մանկը պատեճ գիս՝ երկու անագին բշնամիներ: Եվ երբ երկինք կը վերցնեմ ցամպին աչքերս, Միսերիա կայծակներ կը ցոլացնեն դլխուս վրա. Միսերիո երկինքը անգամ

անողորմ է, բնութիւնը կարծես թէ խանգարված և քունն անգամ արգիլված է հոս, միայն թէ գերեզմանին մեջ կը տիրե. Սիպերիա եթե կարող ըլլա այն մահվան քունն ալ պիտի արգիլե իր երկրին, որպեսզի իր բռնութեան համբավը իր զոհերուն գերեզմաններուն վրա և բոլոր աղգայ սրտերուն մեջ աոսկումով անմահանա՝...: Անգամ մը ալեվոր մը տեսա, որ անծանոթ գերեզմանի մը վրա կարտասվեր, խորհրդավոր մեկը երեսց ինձ այդ ծերունին, բայց չը համարձակեցա զինքը հարցաքննել, նեսո ոտքի ելավ, աչերը ինձ դարձուց և անհետացավ. անշուշտ թշվառ հայր մ'էր որ իր որդվույն գերեզմանը իր արտասվոք կը բաներ. այլ ես սիրելի մը չունիմ որ մեռնելես նեսո գերեզմանիս վրա կաթիլ մը արցունք թափե: Ազատությունը սիրեցի, այլ ինքը բնավ չերեվցավ ինձ: *Ա՛հ, ազատությո՛ւն, ո՞ւր ես,* տեսնեի մեյ մը զինք՝ համբուրելի վեհ ճակատդ և հու անույշ գրկացդ մեջ անշնչանայի մինչև վերջին շունչս, հու անուդդ մրմնջելով *և զքեզ օրհնելով:* Կը տեսնե՞ս *քու սիրույդ համար կը մեռնիմ ես այսա, քու անունդ պահելու համար Սիպերիո սառնամանյաց խորերը կը հեծեմ. սառն սառն Սիպերիս այս լեռներուն վրա ելնելով հայրենյացս սգապատ ավերակները կը դիտեմ, կը տեսնեմ Հայաստանյայց ոգին, որ իր սև թևերովը իր ամայացյալ աշխարհին վրա սավառնելով կը թափառի, իսկ աղատն Այրարատ սրտում տխուր նստած՝ արտասուքը կնճռած կը մտածե* միշտ. մերթ իր ճայվածքը չորս կողմը և մերթ յերկինս դարձունելով *կը հառաչե միշտ. իր հառաչանքներն են Հայաստանի երկնից երեսը թանձ-*

բացած ամպերը և իր արցունքներն են իր կոպերեն վազած ողբամրմունջ գետերը, այն ամպերը փարատելու համար կայծակ, այն կայծակը մարելու համար Միսկերիա սառերը և այն Միսկերիան ոչնչացնելու համար ժամանակ պետք է։ (Այս վերջին խոսքեն լույս մը կր ծագի)։ *Ո՞ւր եմ ես... երկինք թռա՞...* (Ազատություններ կերևա ապիտակագգեստ և գլուխը ծաղկյա պսակ)։

Տեսիլ Ե

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Ձատամած կր տենդե՞մ... երկինքն է՞մ։

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.— Թշվա՛ռ պատանի, ա՛յ, ա՛յ, տե՛ս, Միսկերիա մեջ եմ, իսկ տեսածդ ազատությունն է։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Միսկերիա՞... ազատությո՞ւն... ո՞վ երկինք (ծունր կիյնա)։

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.— Ոտքի ելիր, դիտե դիս ազնկ մը, երկնից դուստր և քու յանկալիդ Ազատությունն եմ ես, Թշվա՛ռ պատանի..., այն ազատությունը, որուն կր ևվիրեն մարդիկ սիրտ և կյանք. սիրտը ապագայն արթնցնող ճառ մ'է և կյանքը ապագայն լուսավորող աոև մը. աճա այս բախտին արժանացավ Նալպանտյան։

*ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Այո՛, Թշվառ են Ռուսիո Հայերը, երե ամենայն ազգասեր մը մտքեն ազատության խորհուրդ մր անցնե, ինքզինքը Միսկերիո լեռներուն մեջտեղը կր գտնե, ո՞վ մտանեց դինքը. իր բարեկամներեն կամ ազգականներեն հայ մր... այսպես մտանությամբ հայրենյաց ափիքներր կր կտրտին. երե Հայերը միտքը մտանեով

միայն մեկ հայ մը մնա, ան ալ ինքզինքը պիտի մատնի որպեսզի հայ եմ բանով բայց՛ ազգայ առջև պարծենա. եթե Ռուսիա բոլոր Հայերը մեկ բերան «ազատութի՛ւն» գոչեին, Ռուսիա պիտի գոգար, այլ ավա՛ղ, հայը իր ձևաբովը ընկմելիք անպատեհը կը փորձ: (Դեմքը ձեռացը մեջ կառնե):

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.— Ո՛չ, ո՛չ, Հայերը պիտար կը սիրեն, նիմա առջի Հայերը չեն. իրենց անունը մատնիչ ելնելուն համար է որ իրարու խորհուրդ հայտնելու կը վախնան որպես թե իր բարեկամը մատնիչ մը չըլլա: Համբերեն պատահի, ձող չը կատկծին իրարմե Հայերը, ամենքն ալ համաձայնա հայրենիքին կը սիրեն. իսկ ան որ մատնիչ է, երկինք վերցնեն ձող մեկ մը աչքերը և զոգա՛: Համբերեն պատահիդ ապատասեր, զուցե կը ինգա ականջիդ սառնամանեայ խորերը եղած առենդ սա ձայնը՝ «ալ ազատ են Հայերը». սիտի՛, պիտիր որ ան իմ ձայնս է և պիտի գամ գրեզ քու ալևոր հայրենյացդ գիրկը պիտի գարձնեմ և Մասյաց մուսայնները գրտիդ ծաղկյա պսակներով պճնելով ասկի բնարներուն ելևէտուն վրա քու անունդ պիտի անմահացնեն, գարեր պիտի անցնին և դեռ Նալպանտյանի անունը բնարներու և շրթանց վրա պիտի խաղաս. եթե Հայոց ազատութեյան ժամանակն առաջ մեռնիս, պիտի գամ և քու անմահ շիրմիդ պիտի գոչեմ. «գնծացե՛ք ոսկերք Նալպանտյանի, Հայոց ազատութեյան արշալույսը ծագեցավ» և այն ցանկալի ոսկրներդ հայրենյացդ գիրկը պիտի լեցնեմ:

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Ա՛հ, բաղդը է ինձ այդ ավետիսը բան մի իմ կյանքը. ահա գոհ կը մեռնիմ, շիրիմն անգամ վարած

մարմնույս բեռ մը չի պիտի ըլլա, Թող ծանրանան վըշտեր ակարացած գլուխիս վրա և գայն մինչև գերեզմանին եզերքը խոնարհեցնեն. երջանիկ եմ, որովհետև հայրենիքս և ազատությունը կը սիրեմ, մահվան տեսքը դիս չի պիտի զարհուրեցնէ և աներկյուղ իր յուրտ գիրկը պիտի ներավիմ՝ վերջին անգամ «հայրենիք և ազատություն» մրմնջելով. Թող Ռուսիա չարաբաստիկ, Նալպանտյանի հոգին չերկինս սանձալով. Ամենակալին աթոռին առջև աներկյուղ «արդարություն» պիտի աղաղակե:

ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ.— «Վրնժ» պիտի արտաս Աստուծո աշխ ձայնը և երկինք երկիր դղրդելով արձագանք պիտի տան, արդարության սուրը Սիպերիո խրոխտ գլխուն պիտի շողա. պիտի զարհուրի Սիպերիա իր անկմանը վրա, վանդի իր աստղ կայծակը աստուծ մ'էր որ սահնցավ և պիտի ծպտի Հայաստան իր վրիժառությանը վրա, պիտի վայնե Ռուսաց սավերները, պիտի պարսն Հայոց սավերները, Ռուսիո հորիզոնին վրա վերջալույս մը պիտի տեսնվի և անոր պիտի հաջորդի Հայաստանի արշալույսը, և այն ժամանակ ազատությունը պիտի բնակվըի Հայաստանի պայծառ երկնքին երևսը անր և միության հոգևով Հայոց սրտերուն մեջ, պիտի ավազեն այն առեն մատնիչ և ազգուրաց Հայերը:

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Սիպերիա չգիտե՞ սիրե որ գլխուս վրա աթոռ մը դրված կա և անոր վրա կը բազմի վրեժխնդիր Աստված մը... Սիպերիա այնչափ անգութ է որ վայրկյան մը քուն չդրկեց աչքերուս, որպեսզի չըլլա թե քնույս առեն հայրենյացս ազատությունը երազելով ժպիտ մը խաչտա նվաղյալ աչացս մեջ, ժպիտ մը զոր արթնու-

թյունը կը փարատեմ. եթէ մնանիմ՝ դարձյալ աչքս չի պիտի գոցել առ. ինչվան որ մարմինս իր սառերուն տակ հարի. ա՜հ, վայրկյան մը միայն, Ազատությո՛ւն, քու կաթոգին գրկացդ մեջ վշտակոծ գլուխս հանգչեցնեմ, և պարծենա թող բոլոր ազգաց անցավոր կյանքս թե Սիպերիս մեջ քան վայելից վայրկյան մը. ա՜հ, աչերս գինզ դիտելն չեն կշռաճառ, ի՜նչ խաղցր դեմք:

ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ.— *եկո՛ւր, սիրելի՛ պատանի, այս գիրկը միայն գիս սիրողներու գլխուն բարձն է: (Նալպաճոյան գիրկը ճեռվելու կըլլա—ճանկարձ որոտմունք և կայծակ):*

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— *ի՜նչ է այս...* (Սիպերիա խռոխռատպանձ կերևա):

Տեսիլ Գ

ՆՈՒՅՆՔ և ՍԻՊԵՐԻԱ

ՍԻՊԵՐԻԱ.— *Սիպերիա՜ն է... դողացնք ձայնես և տեսքիս, ցամա՛քք և ծովք:*

ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ և ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— (միասեղ) *Սիպերիա՜...*

ՍԻՊԵՐԻԱ.— *Ազատություն գոչող ձայնը թո՛ղ դադրի, ազատություն երգող քնարը թո՛ղ փշրի, ազատության նվիրյալ կյանքը թո՛ղ խամարի, Սիպերիան եմ ես, սարսռեցնք իմ անունես, ա՛զգք և ազինք, խոնարհեցեք իմ առջիս, թագավո՛րք և իշխանք, և դո՛ւ, Ազատություն, գիտցիր որ հոս Սիպերիա է, Սիպերիս սրտին մեջ միայն բռնության և մահ կը թագավորի, հոս ուր կոխող մարդուն միայն շունչը կազատի:*

ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ.— Մի՛ խրախուսար այդպես, Սիպերիա՛, քու ձայնիդ զորավոր երկնային ձայն մը կա, որ պիտուի վերև կորսուա, ձեռք մը որ ամենուն բախտը իր մեջը կը բռնե, աչք մը որուն նայվածքը լեռներ կը կործանե, ականջ մը, որ մարդուս մտքին կը լսե, շունչ մը որ ստոգերը կը մարե, Աստված մը որուն հրամաններ կը դողան:

ՍԻՊԵՐԻԱ.— Հանգի՛ստ, գիտցիր որ Սիպերիա քու ձայնդ ալ իր սառնամանեայ տակը կը խեղդե, կանհետացնե ապատութեան անունը և բոլոր աշխարհի կը տիրե և կը հրամայե, Սիպերիա ոտիքը տակ կառնու բոլոր ազգայ սիրարն ու պարանոցը, Սիպերիո սկզբունքն է աշխարհակալութիւն և փառք, իր օրէնքն է բռնութիւն և մահ: Եվ դու, անմի՛տ պատանի, ի՞նչպես ապստամբիլ կը կուշես երբ կը տեսնես որ Հայոց սարսափելով կը նայի Սիպերիո լեռներուն. քանի մը անգամ մռնչեցի և դու ականջ չը տվիր, կայծակներ հանեցի և չը զարհուրեցար, որևմն մեռի՛ր:

ՆԱՊԱՆՏԱՆ.— Արդեն պատրաստ եմ ես, հա՛յ է իմ անունս, չեմ վախնար ես քու սպառնալիքներեդ, Թող իմ մահս վրեժխնդրութիւն ներմանե Հայոց սրտերուն մեջ և ավելնա Սիպերիո թշնամի ազգ մը, որոնք ջանան անոր գլուխը իրենց ուժգին հարուածներով փշրել, պատերազմին կյանք կյանքի դեմ, տավիր տավիրի դեմ, հիշատակ հիշատակի դեմ, քիչ տևեննն ես ալ կերթամ ահա տավիրներուն կարգը:

ՍԻՊԵՐԻԱ.— Անմի՛տ, շուտով կը պատժեմ այդ մեծամտոտ բերանը, տեսնեմ որ Սիպերիո ծոցը բնակող մահը տես-

նելու տանն չը պարտուիս: Եվ դո՛ւ, Ազատութի՛ւն, զատվե՛ւ ալ Սիպերիա հոգնե՛ն և ալ անոր օդուն մեջ թևավորելու վախցիր. Սիպերիա գեղ կատե, կանարգն և կարհամարհե: Այո՛, անգութ և անարգար է Սիպերիան, թող ամեն ազգ դիանան, վասնզի տառնկով կը զորանա և ավելի արյուն թափելով իր քարացյալ սիրտը կը զովանա, Սիպերիա բարձրացուցած գլուխը անեղկյուղ է, բոլոր աշխարհի վրա խրոխտաբար և արհամարհանոք կը նայի, Ազատութի՛ւն, ի բաց տակե:

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ.— *Հանդարտե՛, ահա կերթամ ես հավիտյան, անշուշտ պիտի գա ժամանակը որ դո՛ւ, Սիպերիա՛, արհամարհանաց և գերության շղթայներու տակ պիտի հնծես, ի զուր ոգորմագին ձայներ ազատության պիտի գոչեն, ի զուր շղթայներու շառաչյուններ պիտի բարձրանան, ի զուր Սիպերիա ծունր եկած գթության պիտի աղաղակե: Ահա ես կը հեռանամ, մնաս բարյավ, սիրելի՛ պատանի, քաջասրտության և հույս:*

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— *Ա՜հ, կը հեռանաս, թողցի՛ր Ազատութիւն, դիս մինակ կը թողուս զարձյալ այս անգութ հրեշին ձեռացը մեջ, որուն ծոցեն մահ կը բուրե, կը սարսափիմ քենե, Սիպերիա՛:*

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ.— *Քաջալերվե՛, միաքդ բեր այն ավետիսը, զոր քեզի պիտի բերեմ:*

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— *Ա՛լ չեմ վախնար, երթաս բարյավ, քաղցր Ազատութիւն, մի՛ մոռնար զիս:*

ՍԻՊԵՐԻԱ.— *Ալ բավական եղավ, բաժնվեցեք իրարմե, դո՛ւ՝ ի բաց, դու՝ ի մահ, կը հրամայեմ ձեզի:* (Ազատությունը կը հեռանա.— առջի պես խավար):

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Աստվա՜ծ իմ, այս ի՞նչ մահաշշուկ խավար մը պատեց դարձյալ, Ազատությո՛ւն... Ազատությո՛ւն...

ՍԻՊԵՐԻԱ.— Լռե՛, հանդո՛ւգն, եկուր, Մա՛հ...

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Ա՛հ, Ազատությո՛ւն... (սարսափելով ետ ետ կերթա. մահը կերևա Սիպերիո, նարգանո՛ք կը խոնարհի.— Սիպերիա խռխռտաբար կաներևութանա):

Տեսիլ Դ

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ և ՄԱՀ

ՄԱՀ.— Այս դարերուս բավական սով Հաշեցի. շնորհակալ եմ Սիպերիայեն որ գիս միշտ կը խնամե, Բանի որ ձեռ գիս կը խնամե, իմ ճամբան ալ հավիտյան կը բարձրանա, վերջապես Ասիո մեջ երջանիկ եմ, բայց դարձյալ առաջվան պես հանգիստ չեմ, բավական ժամանակ Ամերիկայի մեջ աշուն խմեցի, բայց բավական ժամանակ ալ Համբերեցի: Ամեն ազգ աշուն կը խմեմ, բայց Հայուն չափը անցավ, ժամանակ մը Հայաստանի մեջ կանգնեցի արորս և հանգիստ ապրեցա, անա դարձյալ հոս մը որուն աշուն պիտի խմեմ ես ինձմե:

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Մա՛հ, Մա՛հ, կը վախնամ բնեն, ինչո՞ւ այդպես ահարկու ես մարդկային աչաց:

ՄԱՀ.— Ո՛չ, ո՛չ, մի՛ վախնար ինձմե, աստվածային հրաման մ'եմ ես այս սոսկալի կերպարանաց տակ. ոճրագործին համար սանդարամետ մ'եմ իսկ անմեղին համար՝ հրեշտակ մը, իմ անունդս է աշուն, բնությունը այսպես տնօրինած է, տեսքես կը զարհուրիս, բայց իմ շունչս անուշահոտ զեփյուռ մ'է անմեղ օրհասականին

ճակտին, իսկ ոճրագործին ճակտին տապտակեզ շոգի մը, վերջապես երկնային հույսն եմ ես, հավիտենականության դրանց պահապան, միայն վատը ինձմե կը վախնա, և հիրավի իրավունք ալ ունի, վասնզի գիտե երթալիք ճամբան, գնալ ի դժոխս։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Քու գնդիդ եմ, Մա՛հ, բայց կաղաչեմ խնայել գնի այն Հայերուն, որոնք Հայաստանի պահակներ հյուսնել կը խոստանան, խնայել գնի այն Թշվառ Հայերուն, որոնք իրենց հայրենիքը ազատելու համար կը տքնին։

ՄԱՀ.— Երկրի վրա խոնարհ ծառա մ'եմ, մինչև անգամ մանուկի մը հրամանին կը պարտիմ հնազանդիլ. աշխարհի բոլոր աստիճաններուն վրա իմ հիրաններս բաժնված են. ով որ ան հիրաններուն մեկուն դպչի, անոր արյունն իմս է, թագավոր կամ հովիվ երկուքն ալ հավասար են առջևս, երկուքն ալ կը վախնան ինձմե, երկուքն ալ առջիս ծունր կը չոքին, երկուքն ալ կը սառին, երկուքն ալ գերեզմանին քարը կը համբուրեն և երկուքին ալ հոգին գնալ ի յերկինս կը թռչին։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Ա՛հ, չունիս դու գութ, չես գթար այն իմաստուն երիտասարդներուն վրա, որոնց արյունը անհագաբար կը լափես, և որոնց հիշատակին վրա արցունք կը սրտնես։

ՄԱՀ.— Ո՛չ սիրտ ունիմ և ոչ այլ ինչ, սովեր մ'եմ, տեսիլ մ'եմ, շունչ մը զոր երթե փչեմ, մարդուս զգայարանքները կը քաղվին, և հոգին կը զատվի. երթե հիմա վրադ փորձեմ, կը տեսնես մահվան ի՞նչ ըլլալը։

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— Ո՛հ, պիտի մեռնիմ ես, հայրենիքս այսպես Թշվառ վիճակի մը մեջ թողլով։

ՄԱՀ.— Է՜հ, ինչո՞ւ կը դժկամակիս, երանի՛ քեզ եւս նման արարած ըլլայի, ապրիլ եւ մեռնիլ, քան քեզ այսպիսի անարգ անուն մը կրելի եւ մարդկանց արհամարհանքի առարկայ ըլլալ. ոչ սիրելս գիտեմ եւ ոչ վախճանս. հազարաւոր դարեր անցան եւ ես դեռ նոյնն եմ. ամենևին փոփոխութիւն մը կրած չունիմ... պատրաստակե՛ն, պատանի՛, ժամանակը եկաւ, մի՛ զարհուրիր ինձմէ բնաւ:

ՆԱԼՊԱՆՏՅԱՆ.— (ծունր գալով) Աստո՛ծ իմ, նեղե իմ երկչոտութեանս, այո՛, չեմ փափաքիր մեռնիլ, կը դժկամակիմ, վասնզի երբ մանուկ էի, կը հաւատայի եւ կուրախանայի որ երիտասարդութեան՝ առն հայրենեացս պահն մեկ արհամարհը պիտի սրբեի, այլ ավա՛ղ, որ իմ մահվամբս արհամարհ մ՚ալ պիտի ավելնա Հայաստանի ցավագին աչացը մեջ և վիշտ մ՚ալ պիտի ծանրանա իր սրտին վրա. ա՜հ, պիտի մեռնիմ ես և ազատութեան հոյսը վերեզմանիս մեջ թաղված պիտի հալի իմ մարմնոյս հետ ինչվան որ ամենաւերջ ձայն մը պայն արթնցնե... Ահա՛ վերջին անգամ կը գոչեմ՝ Աստված, Հայրենիք և Ազատութի՜՜՜ւն...

ՄԱՀ.— Աստծո շունչը մարդուս մարմինը կենդանացուց, մահվան շունչն ալ պայն կը մեռցնե: (Նալպանտյանի կր մոտենա, որ աչքր յերկինս հառած է, դեմքին կր վիշն) մեռի՛ր... (Նալպանտյան կանշնչանա, մահր վայրկյան մը առջին կարձանանա, ետոո համրամայր անեւևույր կրլլա.— բանի մր վայրկյան խոր լռություն):

ՆԱԼՊԱՆՏՅԱՆԻ ԴԻԱԿԸ և ՀԱՅԱՍՏԱՆ

(Ցնցոտապզյաց և մոախոն)

(Առանց դիակը տեսնելու)։ *Երկրե երկիր կը թափառիմ, միշտ հայու հառաչանք կը լսեմ, երկրե երկիր կը թափառիմ և միշտ ոսքերուս տակ հայու դիակ՝ հայու դերեզման կը տեսնեմ, ուրեմն Հայաստանի ճակատագիրը միշտ ողբ ու արցունք է. ալ ողբալ ձայնս մոլեգնավ, արտասվելն աչացս ակբյուրները ցամքեցան. հառաչելն սրտիս տախտակները քակվեցան, Հայաստանի աչացը մեջ արցունք չկա, արյուն կա, Հայաստանի սրտվանը պատռեն, ապիք չկա, ճապաղիք կա, թշվառությունը Հայաստանի թոքը քանի մը գարե ի վեր է որ կը կրծե, ներմա բոհն ալ հալած է, բոհացավ է Հայաստան... Դերեզմանի մոտեցեք, Հայե՛ր, սթափեցեք, վերջին ճիգ մ՚ալ...։ Իսկ դո՛ւ, Սիպերիա, ի՞նչ կուզես ինձմե, ի՞նչ թշնամություն տեսեր ես ինձմե, այս քանի՞ անգամ է որ քու անողորմ սառնեղեն ձեռացդ մեջ Հայրենասեր որդվոցս փոփուկ պարանոցը կը խզդես։* (Նալպանտյանը տեսնելով) *Ա՜հ, ահա Հայ մ՚ալ կը քնանա կարծեմ,* (մոտը կերթա) *Նալպանտյա՞ն է* (ծնր կը բռնե) *սառե՞լ է, մեռե՞լ է... ավա՜ղ...։ Սիպերիա՜, Սիպերիա՜, վախցիր Հուսահատ և օրհասական Հայաստանի վերջին հարվածեն. և դուք գոնե, սակ՚րք դյուցազանց, շիրի՚մք Հայկազանց, պաշտպանեցեք զիս, մի՚ հուսաք, հիմա Հայ չկա, անուն կա, Հայ չկա, մասունիշ կա, Հայ չկա,*

օտար կա, հայ չկա, դիակ կա. մահ կա, ծնունդ չկա, գերեզման կա, խանձարուր չկա, սեր չկա, առևտրություն կա, և ամենեն ավելի միութիւն չկա... Օրհասական է Հայաստանի ավերակաց վրա թափառական թռչող հայության աճումը հանգչելու տեղ մը չի գտնելով և վերջապես հոգնելով ավերակաց տակ հոգին պիտի առ... Վա՜հ պիտի չնչվի ուրեմն Հայության աճումը՜՜՜...:
(Ուսանիատ ծուռ կիյնա.—Ժամանակը կերևա):

Տեսիլ Զ

ՀԱՅԱՍՏԱՆ և ԺԱՄԱՆԱԿ

ԺԱՄԱՆԱԿ.— Ո՛չ, չի պիտի չնչվի, մի հուսահատիր, Հայաստան, դադրեցուր ողբդ:

ՀԱՅԱՍՏԱՆ.— (ձայնին դառնալով ու ոտի ելլելով) *Ո՛վ ես դու, ծերունիդ, Հայկա սովե՞րն ես որ ձայնես արթնցար:*

ԺԱՄԱՆԱԿ.— Քաջալերվե՛, ժամանակն եմ որ քու ապերթներդ դարերն ի վեր կարձանագրեմ, այն ապերթներր զորոնք քու որդիքդ գլխուդ վրա նետի պես տեղացուցին. ու ոված ձայնովդ հայր ինգի հայհոյեց, քու ոված սրտովդ հայր ղքեզ ատեց, քու ոված բազկովդ հայր քու գլուխդ չաղխեց, քու ոված արյամբդ հայր օտարին կյանքը ազատեց, ժամանակը այն ատեն անզգա կեցավ՝ տեսնելով որ Հայաստանի թշնամիքը իր հարազատ որդիքն էին, Այրարատայ զագաթեն իջնող հրեշատակաձեմ մանկունքը, հետո մեկ մեկ արյունարբու հրեշներ դարձան:

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ո՜հ, մթին գալիքս արթնցնելո՞ւ համար և-

կար, ժամանա՛կ, առնն մը ի վեր է որ Մասյաց մուսայից քնարներուն թելերը խորտակելով՝ չեմ լսած Հայաստանի վրա հյուսված ոդերը, դու եկար և իմ մտացն մեջ սոսկալի հիշատակներ զարթուցիր, միթե դու ալ թշնամի՞ ես Հայաստանի, դո՞ւ ալ կարհամարհես Քրվաւո Հայաստանը:

ԺԱՄԱՆԱԿ.— Մտածի՛, բարեկա՛մ, ժամանակը զքեզ չարհամարհեր ընաւ, միայն զքեզ ոտքիդ նետելու չի զար նախատանելով ազգուրաց որդիդդ, այլ սիրելու համար քու վշտալի սիրտդ, գովելով այն Հայերը, որոնք հիմա լուսավորութեամբ կը մարտնչին՝ ինչպես որ քու նախնի դյուցազունքդ զորութեամբ կը պատերազմեին, նախնի Հայերը բազուկ ունեին, արդի Հայերն ալ հանճար ունին, մի՛ վախնար ալ, մատնիչ չկա, Հայերը մատնութեան ու անմիաբանութեան ոգին առաքուր կոխելով անշնչացուցին, միութիւնը իրենց սիրտը հրավիրեցին և արդեն Հայաստանի ավերակացը վրա ուխտած և երդվընցած են հայրենիքնին միաբան սիրելու, Հայաստանի համար քրտինք և արյուն թափելը միևնույնն է անոնց մեջ, սիրտ, կյանք և հոգի քեզի նվիրած են: Ուրախացի՛ր, Հայաստան, քու հառաչանքներդ ինչվան Ամենակալին աթոռն առջև թանձրացան, քու արցունքդ գթության հրեշտակը ժողվելով Անոր ներկայացուց և ձայն մ՚է որտաց, «ժամանա՛կ, ժամանա՛կ, ալ գթացի Հայաստանի վրա»: (Այս խոսքին՝ Նալպանճյանի դիակը կը ժպտի միճչև վերջը):

ՀԱՅԱՍՏԱՆ.— Ա՜հ, ի՞նչ կը լսեմ, ի՞նչ քաղցր ավետիս է այս. ուրեմն ալ չի՞ պիտի վշտանա Հայաստան, ալ որ-

դիքը իր գրկացը մեջ ազատարար պիտի սիտի՛, կմախք չեմ, դեռ պիտի ապրի՛մ ես ուրեմն... (դիակը դիտելով) *այս անշնչացյալ մարմինը անգամ կը ժպտի սույն ավետիսին վրա,* (դիակը գիրկը առնելով) *կեն-դանացի՛ր, դիա՛կդ անշունչ, բա՛ց այս նվաղյալ աչքերը և տես Հայաստանն է որ գրկել կը գրկե, քու ցանկալի հայրենիքդ.* (դիակը կը համբուրե և կամացուկ մը գե-տին կը դնե), *բայց երազ է այս... խորհրդաւոր երազ մը... կը խաբվիս, սի՛րա իմ, կը խաբվիք աչքերս...:*

ԺԱՄԱՆԱԿ.—*Սիսափե՛, Հայաստա՛ն, ժամանակն է որ բևեռ կավիանա, այն ժամանակը որն որ աշխարհի երջանկու-թյուն և թշվառություն կը գրկե, սիևեռեր ժամանակին ճակտին վրա արձանագրյալ են, ժամանակով այս աշ-խարհը առնչված և ժամանակով պիտի վերջանա. Հայ-ոց ժամանակին դուռն է. բախտ ժամանակին բախ-կոմն է, վերցուր աչքդդ, տե՛ս երկնքին երեսը պայծառ աստղ մը կա. ան ալ Հայաստանի բախտն է:*

ՀԱՅԱՍՏԱՆ.—(աչքերը ուրախությամբ դեպի երկինք հառե-լով) *վա՛ռ, վա՛ռ,* (նալպանդյանի դիակը դեռ կը ժրպ-տի, սիպերիո լեռները կը տատանին. վարագույրը կիջ-նա):

(ՎԵՐՋ)

ՀԱՏԵՎԱԾ



ՏԻՊՐԱՆ Բ

ԹԱՏՐՈՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ Ի ՀԻՆԳ ԵՐԿՈՒՅԹ

ԱՌԱՋԻՆ ԵՐԵԿՈՒՅԹ ԿԱՄ ՄԱՍՆ Ա.

— ՓԻՆՆԱ. —

ՀԻՆԴ ԱՐԱՐ ԵՒ ՄԵԿ ՊԱՏԿԵՐ

ԱՆՁԻՆՔ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

ՏԻԳՐԱՆ Բ, արքա Հայոց
ՄԻՀՐԴԱՏ, փոխարքա Տիգրանա
ԱՐԻՈԲԱՐԶԱՆ, արքա Կապադովկիո
ԱՐՏԱՎԱԶԴ, գահաժառանգ Հայոց
ՏԻՐԱՆ, արքայորդի Հայոց
ԱՍՈՒԴ, Բագրատունեաց տոհմա
ԲԱԿՈՒՐ
ՄԻՀՐԱՆ } *զորապետք*
ՎԱՀԱԳՆ ՔՐՄԱՊԵՏ
ԿՈՒՐՆԵԼԻՈՍ, զորավար Հռոմա
ՈՊՊԻՈՍ, զորապետ
ՄԱՆԻՈՍ, դեսպան
ՍԻՐԱՆՈՒՀԻ, դուստր Միհրդատայ
ՓԻՆՆԱ, դուստր նախագահին ծերակուտի
Նախարարք, զորապետք, զոր
Քուրմք եւ եւ

Ա. Ր Ա. Ր Վ Ա. Ծ Ա

Տեսարանն է Տիգրանա պալատը: Աստղ և Սիրանուշ կը հիշեն, թե ինչպես Աստղ որսի մը ատեն ազատած է Սիրանուշի կյանքը անոգին վարպետ մը ճիրաններեն: Այն օրեն ի վեր կը սիրեն զիրար: Սիրտ սրտահայտութիւններ կընեն: Աստղի մեկնման պահուն, Մինդրատա կը տեսնէ անձրեն. պետք է պատմար մը կանգնել անոնց մեջ, կ'ըսե, որովհետև Տիգրան արդեն խոսք բացած է իրեն Արտավազդ արքայորդվուն և Սիրանուշի միութեան վրա: Ահա Մինդրատա բազաբակեան նկատառումներուն համար կուգա: Մինդրատա չեր տեսակցութեան մը միջոցին Տիգրան կը հետաքրքրի այդ միութեամբ և Մինդրատա բազմավոր կանխամտի Պոնտոսի՝ անոր ծովեզրա տիրոյթները պաշտպանելու համար Հռոմեացւոց դեմ, որ եկած են Փիննան պահանջելու, որ զերի է Տիգրանա քով, ապա թե ոչ պատերազմի: Տիգրան՝ Տիգրանա փոքր ատեն, սիրահարյալ է Փիննայի, որ կը կեղծե և անոնք ըլլալ կը խուճապահար, յուր ապատման ի զերութենե: Տիրան ալ խոսք կուտա պայն ազատիլ:

ՏԻՐԱՆ.— *Կերպով քու աչերուդ վրա... կերպով սրունդ վրա...*

ՓԻՆՆԱ.— Ուրեմն ի՞նչ կը խնդրեիր ինձմէ։
ՏԻՐԱՆ.— Գիրկդ։
ՓԻՆՆԱ.— (թևերը բանալով) Ա՜հ, ամաստիկ (կը գրկախառնին)։

ԱՐԱՐՎԱԾ Բ

Միհրդատ Ասողի լեզուն կտրել ուզած է, որովհետև արիկա է և կուզեբուն երկրպագութիւն չընծայ։ Այդպէս կը հաշտուի Միհրդատի բլանը։ Սիրանուշ գայթ ըսելն ետև անմիջապես Արտավազդ հավանութիւն կուտայ։ Իրենց միութիւնը և միանգամայն Միհրդատա իշխանութիւնը մեկ ավուր մեջ կը կատարվի մեհեանի մեջ։

ՏԻԳՐԱՆ.— Արդ քաջդ Միհրդատ, ահա Պոնտոսի իշխանութեան եղար հանուն Ասողածոց, ա՛ռ զորքերդ, ճամբա՛ ել դեպ ի Պոնտոս, խորտակի՛ Հռովմեացվոց իշխան ճակատները, թափի՛ անկոնա արյան հեղեղներ և այն հեղեղներէ մեր Ասողածոց փառքը և Հայաստանի հպարհանակը մանել են։

ՎԱՀԱԳՆ.— Թող Ասողածոց շուքը վրադ ապահ... ի ծանր ամենքնիդ ալ (ամենքը կը ծնրադրին։ Աղօթ)[1]։

ԱՐԱՐՎԱԾ Գ

Հռովմեացի զորապետք Սիլլան և Պոպիոս բանակին կարգադրութեանը մասին կը խորհրդակցին։ Նոյն միջոցին Արիոբարզան՝ Կապադովկիա թագավորը, կուգա իր բանակով միանալ իրենց, որովհետև Միհրդատ պինդ պահրնկից ընելով իր ծ-ամյա տղուն՝ Արիստարկ

Թագավորեցուցած է անոր տեղ: Հռովմեացիք իրենց աջակցութիւնը կը խոստանան Արիոբարզանին: Սիղղա դՄանիոս կը հղե առ Տիգրան՝ Փիննայի արձակումը պահանջելու, և Ոպպիոս ալ կերթա բանակին պատրաստութիւններ հոգալու:

Տեսիլ Ե

ՍԻՂՂԱ, ետև ԱՍՈՒԴ

ՍԻՂՂԱ.— Տիգրա՜ն... Միհրդա՜տ...
ԱՍՈՒԴ.— (երևնալով աւերը Սիղղայի առջև կը նետե):
ՍԻՂՂԱ.— Ո՞վ ես դու:
ԱՍՈՒԴ.—(ձևով) Պիտի պիտնաս:

ԱՐԱՐՎԱԾ Դ

Տիրան և Փիննա կը խոսին փախստյան վրա.

ՏԻՐԱՆ.— Պալատին պահնորդապետը կաշառած ինձ շահեցա... Երեքնիս միատեղ այս գիշեր պիտի փախչինք... Սա ամեն բան պիտի պատրաստե մեր փախստյան համար... Գիշերվան չորրորդ պահուն[2] առենները սենեկիդ պատուհանին ալաթի մը հարմածը դզալուդ պետք է որ պատրաստ գտնվիս և չվանի մը և իմ օգնութեամբ կբռնաս պատուհանեն վար իջնիլ» են:

Տիգրան և նախարարք կը մեծախոսին[3]:

Հռովմեացվոց դեսպանը կուգա:

ՄԱՆԻՈՍ.— Հռովմեացվոց լիազոր հրամանատար Սիղղայի առ արքայդ Հայոց խնդալ (!!!) Փիննայի արձակումը կը պահանջե:

կը մերժվի։ Պատերազմ։

ՏԻԳՐԱՆ.— Այո՛, պատերա՛զմ... բայց նախապատրաստ իմ Միհրան և Բակուր. Գացե՛ք այդ խրոխտ Հռոմեացվոց հետ սրով տեղանվելու Միհրպատա հետ միացած։ Հայ անունս իսոր դրոշմեցեք ամէնուկաց և դիակաց վրա... Քայլ Բակուր, դու Հռոմա ամէնուկեն քար մը բեր ինձ, և դո՛ւ. քայլ Միհրան, Սիղոպի գլուխը։

ԱՐԱՐՎԱԾ Ե

Տեսիլ Ա

ՏԻԳՐԱՆ.— (մենակ). Ոչա՛մ պայծառ է երկինը և... այս լուռ պիշերման մթութեանը մեջ արդյոք մտաբերող կա Տիգրանը, որ աշխարհի տիրապետելու վրա կը մտածե... Ահա՛ տասը մ՚ալ քառասնի երկնքեն։ Ահա տղան մը բախտն ալ կը տապալի ... կը սիրեմ գձնել, վար իջնող աստղեր...» են (կերթա, կը նստի նստարանի մը վրա մտազբաղ)։

Տեսիլ Բ

Տիրան և Փիննա փախչելու վրա են. Փիննա Տիրանա օգնությամբ պատուհանեն վար կիջնա։ Տիգրան, որու ականջին ձայներ կուգային, մութի մեջ կը նշմարե զանոնք.

ՏԻԳՐԱՆ.— (բարձր) Կեցե՛ք։

ՏԻՐԱՆ.— (մենքուսի Հա՛յրս...

ՓԻՆՆԱ.— (մենքուսի) Թագավո՛րը...

ՏԻԳՐԱՆ.— *Ո՞վ եք դուք։*

ՏԻՐԱՆ.— (մեկուսի) *Մառնութիւնք։*

ՓԻՆՆԱ.— (մեկուսի). *Ո՞վ երկինք...*

ՏԻԳՐԱՆ.— *Դեռ չեք պատասխաններ...* (փայլակ մը գաճաճը կը լուսավորէ) *Տիրա՜ն...*

ՎԵՐՋ Ա ԵՐԿՈՒԹՅԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԿՈՒՅՑ [ՈՐ Է] ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ
ԱՍՈՒԴ ԿԱՄ ԼՆՋՎԱՀԱՏՆ

ԱՆՋԻՆՔ Բ ՄԱՍԻՆ

ՏԻԳՐԱՆ Բ, արքա Հայոց
ՄԻՀՐԴԱՏ, արքա Պոնտոսի
ԱՐՏԱՇԱՄԱ, թագուհի Պոնտոսի
ԼՈՒԿՈՒԼՂՈՍ, զորավար Հռովմա
ՓԱՌՆԱԿԵՍ, որդի Միհրդատա
ԱՐԻԱՐԱԹ, կրտսեր (որդի) Միհրդատա
ԿՈՏՏԱՍ, զորապետ Հռովմա
ԱՍՈՒԴ, Բագրատունի ասպետ
ՈՊՊԻՈՍ, զորապետ
ԿՈՐԴԻԱՍ, ծովահեններու դլխ<ավոր>
ՍՈՒՐԵՆ, իշխան Պոնտոսի
ԳՈՐԴԻՈՍ, խնամակալ Արիարաթիա
ԲԱԿՈՒՐ, ՄԻՀՐԱՆ — *զորապետք Հայոց*

ԱՐԱՐՎԱԾ Ա

Միհրդատ թագավոր է Պոնտոսի: Տիգրանեն օգնությեան խնդրած է Արիարաթը վերստին թագավորեցնելու կապաքովկիո վրա: Միհրան և Բակուր զորապետք կը հանեին: Միհրդատ Միհրանին կը հանձնե Արիոբարզանը կրկին տապալել և անոր տեղ թագավորեցնել Արիարաթը: Փառնակես՝ Միհրդատա անդրանիկ որդին, կը կատղի իր անդրանկութեան իրավանց ոտնակոխ ըլլալուն համար և, ինչպես որ առաջին անգամ, այս անգամ ևս Ասուղի կը հանձնե տապալել զԱրիարաթ Հռոմեացվոց միջոցով: Մյուս կողմանե կուզե հրամանը վրեժ առնել և ասոր համար իրեն դավակից կընտրե բայի Ասուղեն Պոնտացի Սուրեն նախարարը և Կորդիաս՝ ծովահենաց զլուխը: Մինչդեռ Կորդիաս, Փառնակես և Ասուղ Կղիտարը քարայրը ժողով մը ընելու ժամադրութեան վրա կը խորհըրդակցին, Բակուր վրա կուգա և կսպառնա Միհրդատի իմացնել ամեն բան: Կորդիաս և Ասուղ կը վազեն նահանջ ու կը զարնին:

ՓԱՌՆԱԿԵՍ.— *Երթանք... այսպես չախչախինք մեր թշնամիները* (կը մեկնին):

ԲԱԿՈՒՐ.— (երևալով, վիրավորված) *Ո՛ւր կերթաք... Պիտի*

մնանիմ... Հոգ չէ, բայց Միհրպատը չի պիտի կրնամ ազատել... (ծնկան վրա կիյնա):

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Բ

Միհրպատ հոգևար բակուրի կը հանդիպի, որ հոգին կուտար, կրնա արտասանել. «Փառնակես քիզ կը դավաճանե... դիս սպաննեց», ուստի Միհրպատ առաջի նախարարաց ժողովուն կը դատե զՓառնակես.

ՓԱՌՆԱԿԵՍ.— Վճռե՛:

ՄԻՀՐԴԱՏ.— Զորակա՛նք, շղթայք դարկեք:

ՓԱՌՆԱԿԵՍ.— Ձի՞ս... Դահիճ հայր...

ԱՐՏԱՇԱՄԱ.— (առ Փառնակես) Ոտքը ինկիր...

ՄԻՀՐԴԱՏ.— Բանտարկեցե՛ք...

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Գ

Փառնակես բանտին մեջ կը մտածե հոսմեն առևրես ներսոսիյան խնդրելով բանտեն ազատել: Առաջ կուզա իրեն իմացնել, թե Արիարաթի գահընկեց եղած է: Փառնակես կը խնդրե Առաջեն, որ մեկու մը միջոցով մայր թագուհին իրեն կանչե: Առաջ կը մեկնի անմիջապես: Մայր թագուհին կուգա ինքնին ու խորհուրդ կուտա Փառնակեսի ներումն խնդրել: Փառնակես կը հավանի: Արտաշամա շղթաները կը բակե, ու կերթա ներումն խնդրել: Նույն միջոցին դավադիցներեն Սաւրեն կը հայտնե ամեն ինչ Միհրդատի և կուտա անոր իր գտնաներր, որպեսզի իրեն տեղը Կղեոպատր քաղաքի ժողովրին ներկա դանվի Փառնակես և Արտաշամա կը ներկայանան Միհրդատի: Փառնակես հպատակության երդում

կրնե։ Մխիթարա դիտումյամբ (անդրնիճն.) Մխիթարի կուգան իմացնել, իբ Արիարաթ վերատին տապալած է։

ՄԻՀՐԴԱՏ.— *Ո՜հ, մեր ամեն բանակիները դուրս տանինք այդ տպարա ժողովրդյան դեմ... պատերազմի դաշտը։*

ՓԱՌՆԱԿԵՍ.— (մեկուսի) *Կղխարք քարայրը։*

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Դ

Փառնակես, Ասուդ, Կորդիաս, Մխիթարա (ծպտյալ իբր Սուրեն) տավաքված են Կղխարք քարայրին մեջ ու կը խորհրդակցին։ Մխիթարա խոչընդոտանքը կը տարուցանե միշտ, վերջապես «Անիրավ եք» կրսե ու չուզիր մասնակցիլ։ Սուրենին կը քաշնե պայն սպանելու, Մխիթարա կը տայտնե ինքզինքը։


ԱՄԵՆՔԸ.— (սարսափած) *Մխիթարա՞...*

Ա Ր Ա Ր Վ Ա Ծ Ե

3 Հռոմեացի պահնորդներ կը վիճաբանին. 2-ր դժգոհ են պատերազմեն, իսկ մին միայն գոհ է։ Կատաղած զորապետը կուգա ու կերթան ի դիմավորության Լուկուղլոս Հրամանատարին։ Տիգրան կը տասնի իր բանակով, փոդեր կը զարնվին. Հայերը կրակ կը ձգեն Հռոմեացվոց նավերուն։

ՏԻԳՐԱՆ.— *Փա՜ռք, փա՜ռք Հայերուն...* (երկու բանակներ կատաղաբար իրարու վրա կը հարձակին, Հռոմեացիք կը հաղթվին)։

ԵՂԵՎԱՑՈՒԹՅՈՒՆԵՐ



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԲ—Տապր և բառերզուգությանք Պետրոսի Դուրյան, հրատարակյալ ջանյուք ընթերցասիրաց բնկերության Սկյուտարու։ Կ. Պոլիս, 1872։

ՏԲՆԴ—Տապր և բառերզուգությունք, նամականի, դամբանական, տապանագիր, հավաքեց Բարսեղ Ե. Էրանբյան, Կ. Պոլիս, 1893։

Տ—Տապր, փորձ մը բնագրային վերականգնումի, հրատարակեց Արա Գալֆյան, [Երուսաղեմ], 1967։

«Ընդարձակ կենսագրություն...»—Բարսեղ Ե. Էրանբյան. Ընդարձակ կենսագրություն բարեբիյատակ Պետրոս Դուրյանի. Կ. Պոլիս. 1893։

«Դուրյանի կյանքը...»—Արշակ Չոպանյան, Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, երկրորդ տպագրություն՝ վերամշակված ու ճոխացած։ Ներսես պատրաստեց Գոնար Ալեռավուրյանը, խմբագրեց, վերջարանը և ծանոթագրությունները գրեց Ա. Ս. Շարուրյանը։ Երևան, 1967։

ԲՆՀ—«Բանբեր Երևանի Համալսարանի». հասարակական գիտություններ։

ԴԱՖ— ՀՍՍՀ գրականության ինստիտուտի Ե. Չարենցի անվան արխիվատուն և արվեստի թանգարան։

ԱՉՖ—Արշակ Չոպանյանի ֆոնդ։

ՄՄ—Մաքսուտ Մինրպաշյանց։

Տ.—Տառող

ծ.—ծանոթագրություն

Պետրոս Դուրյանի նամակներ առաջին ժողովածուում գետեղված էր միայն հինգ բառերախաղ։ Իրականում դրանց թիվը բավարար ծավալ էր կազմում ավելի հարուստ է նկար։ Դա հաստատում են ժողովածուի կազմողները, որոնք իրենց համառոտ առաջաբանում գրել են. «Բացի նամակներ մեջ ամփոփյալ գործերեն, Դուրյանի ձեռագրաց մեջ կան գտնելի հեղինակություններն. Տիգրան Բ. մեծահանդես ողբերգության հինգ երկոլիվ բաժնված, Աբուաչիս Աշխարհակալ. Կործանումն Հռոմի և Շահատակություններ Հայոց՝ ողբերգություններ հեղական արարված»։ Հիշյալ գործերի լույս ընծայմանը, ավելացնում էին նրանք, խանգարել է «տպագրական ծախուց ծանրությունն» (ՏԲ, էջ Գ)։

Պ. Դուրյանի կենդանության օրոք տպագրված կենսագրական ծանրությունից կարելի է հետևցնել, որ մինչև 1869-ի հոկտեմբերը նա «Վարդ և Շուշան», «Սև Հոգեր», «Արտաչես Աշխարհակալ» և «Անկման Արշակունի Հարստության» բառերախաղերի ինքնագրերը պահել է։ Բայց հետագայում, ինչպես դրանց, այնպես էլ ավելի ուշ հեղինակված ների բնագրերը հարկադրված է եղել վաճառել։ Տիգրան Ագամյանին ուղղած 1870-ի դեկտեմբերի 21-ի նամակում նա գրել է. «Տեսնենք, բանի մը բառերախաղ, անիմ, կրնա՞մ տասիով կամ ծափով փոխանակել»... Գրողի բառերախաղերը շնչին գումարով գնել են բառերական հուշարար Տիգրան Գալեմճյանը և վերատանատես Հակոբ Վարդովյանը։

Եղիշե Դուրյանը հետագայում կարողացավ գտնել 1872-ի ժողովածուից դուրս մնացած «Արտաչես Աշխարհակալ»-ն ու «Տիգրան Բ-ի» երկու մասերը, իսկ մյուսները, ինչպես գրել է Ա. Ջոպանյանին 1891-ի

օգոստոսի 30-ի նամակում, «հակառակ բոպում ջանից ձեռք չեն բերված և գուցե կորուսյան դատապարտված լինեն» (ԲՃՀ, 1967, № 1, էջ 167)։

Բարսեղ Էքսերձյանը և իր աշակերտակիցներ Սիմոն Գարամանյանը, Արմենակ Ատամյանցյանն ու Հարություն Գաղազյանը նույնպես հետաքրքրվել են Դուրյանի թատերախաղերի ձեռագրով։ Նրանք ն. Դուրյանից իմանալով, թե «Պետրոս դեռ ունի շատ ձեռագրներ, որոնք կը գտնվին մեծ մասամբ Տիգրան Գալեմձյանի քովը», 1880-ին նրանից պահել են «երկու անտիպ թատերախաղեր Պետրոսի ձեռագրովն»։ Թատերական հուշարարը խոստացել է օգնել նաև Պ. Դուրյանի մեկ այլ ոգրերգությունը և այդ նպատակով 1880-ի «Մասիս» օրաթերթում «կորուստը իմացնող» ծանուցում է կատարել (այդ ծանուցումը մեզ չի հանդիպել), բայց որևէ արդյունքի չի հասել («Արևելյան, օրաթերթ, Կ. Պոլիս, 1893, 21 մայիս, թիվ 2789)։ Գալով Հ. Վարդովյանին, ապա վերջինս Բ. Էքսերձյանին հայտնել է, թե ինքը «Պետրոսի խոպերեն ոչինչ ունի յոթ քով. Ընթերցասիրաց ընկերության և դերասաններն իրմե առած են և ալ չեն վերադարձրած, և չհիշեր մինչև իսկ, թե որո՞ւ տված է («Ընդարձակ կենսագրություն...», էջ 92)։

Որ իսկապես և Տ. Գալեմձյանը, և Հ. Վարդովյանը ժամանակին ունեցել են Պ. Դուրյանի ոգրերգությունները, երևում է նաև Սիմոն Սիմոնյանի հրապարակած նյութերից։ Վերջինս Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում պահվող գրոցի տոպերի անտրակներից մեկի հետևում 1959-ին գտել է մի ուշադրավ «արձանագրություն», որի համառոտությունը տպագրել է։ Պարզվում է, որ Տ. Գալեմձյանն ի շարս այլ թատերախաղերի, Պ. Դուրյանից պահել է նաև «Ողբերգանումն Հռովմա» և «Շահատակությունք Հայոց» ոգրերգությունները («Սիլսուրք» շարաթաթերի, Բեյրութ, 1959, թիվ 32 և 1961, թիվ 49—52)։

Պետք է ենթադրել, որ այս առնդհատորածությունները կորել են անվերադարձ։

Պ. Դուրյանը գրե՞լ է այլ թատերախաղեր։ Այս հարցին Ա. Չոպանյանն անուղղակիորեն տալիս է դրական պատասխան։ Իր աշխատության կենսագրական բաժնում նա գրոցի ինքնուրույն թատերգությունների թիվը համարում է «տասնեն ավելի» («Դուրյանի կյանքը...», էջ 39), բայց, ավելի ուշ, երբ անցնում է թատերգությունների քննարկմանը, թվարկում է ինն առնդհատորածություն, այսինքն այնքան, որքան տպագրված ու հիշված

էին 1872-ի ժողովածուում։ Բայց «Շահատակութիւնք Հայոց» ողբերգութեան փոխարէն Չոպանեանի բերած ցանկում գտնում ենք «Շուշանիկ» խորագրով մի ստեղծագործութիւն։ Հետաքրքրիր է, որ «Շուշանիկ» թատերախաղի չենք հանդիպում ոչ միայն 1872-ի ժողովածուի առաջաբանում, այլև Ն. Դուրեանի ու Մ. Մխիթարեանցի նամակներում և ժամանակի պարբերական մամուլում։ Այստեղից հնարաւոր հետևութիւնները երկուսն են. կա՛մ Ա. Չոպանեանը օգտվել է այլ՝ դուրեանագիտութեանն անծանոթ աղբիւրներից, կա՛մ «Շուշանիկ»-ը նոյն «Շահատակութիւնք Հայոց» ողբերգութիւնն է, ավելի ճիշտ՝ դրա խորագրի մի մասը («Շահատակութիւնք Հայոց կամ Շուշանիկ»)։ Այս վերջին ենթադրութեան օգտին է խոսում նաև հետևեալ փաստը։ Դուրեանի «Թատրոն կամ Թշվառներ» դրամայի իտալերին թարգմանութեան առաջաբանի հեղինակ Ալֆրեդո Վիտալեանեն նոյնպես բերում է Դուրեանի տպագրված ու անտիպ թատերգութիւնների ցանկը, ըստ որում դրանց քանակն ու հաջորդականութիւնը նոյնն է, ինչ Չոպանեանի դրքում։ Այստեղ ևս հիշվում է «Շուշան» անունով մի ստեղծագործութիւն («I miseralili», [1916]. Միլան, էջ 8)։ Ոչ մի կասկած, որ իտալացի քննադատը այս տեղեկութիւնները վերցրել է դրամայի թարգմանչից՝ Հրանդ Նազարեանցից։ Բայց հաղիվ թե Հ. Նազարեանցը օգտված լինի Ա. Չոպանեանի աշխատութիւնից, քանի որ վերջինիս բիբլիոյան հրատարակութիւնում (1894) ևս «Կործանումն Հռոմայ», «Շուշանիկ» և «Տիգրան Բ» ողբերգութիւնների գրութեան թվականները չեն նշված, մինչդեռ Ա. Վիտալեանեն դրանք թվագրել է։

Եթե «Շահատակութիւնք Հայոց»-ը և «Շուշանիկ»-ը («Շուշան») դիտելու լինենք միևնոյն ստեղծագործութիւնը, ապա «Տարագիր ի Սիպրիա»-ի հետ միասին Պ. Դուրեանի հեղինակած թատերգութիւնների թիվը կհասնի 10-ի։

Ամենայն հավանականութեամբ «Կործանումն Հռոմայ» և «Շահատակութիւնք Հայոց» ողբերգութիւնները մնացել են անավարտ։ Դա կարելի է հիմնավորել երկու վկայութեամբ։ «Օրագիր...»-ի խմբագրութեանն ուղղած Պ. Դուրեանի նամակում կարդում ենք. «...Ուրվագիրը և ամբողջ շարադրութիւնն իմս ըլլալով, Կործանումն Հռոմայ անուն խաղ մ'ալ ունիմ Պ. Տիգրանի (Գալեմճեանի—Ա. Շ.) քով»։ Իսկ «Շահատակութիւնք Հայոց» թատերգութեան դիմաց, ըստ Ս. Սիմոնեանի, նշված է «1 երեկոյթը պահաս» («Մխիթար», 1959, թիվ 32 և 1961, թիվ 49—52)։

Պ. Դուրյանը նշել է իր թատերախաղերի դրության թվականները, որպիսիք ՏՐ-ում միշտ չեն պահպանվել։ Դա ուսումնասիրողներին առիթ է տվել անելու տարբեր ենթադրություններ։

1872-ի ժողովածուի թատերգությունների խմբագրումը հանձնարարվել է Հակոբ Պարոնյանին («Արևելք», 1892, 19 դեկտեմբեր, թիվ 2667, «Դուրյանի կյանքը...», էջ 83—84)։ Վերջինս ինքնագրերում որևէ միջամըտում իւուլ չի տվել։ Այդ հավաստել են Ն. Դուրյանն ու Մ. Մինրդատյանցը. «Թատրերգությանց մասին... մատ չէ խաղցված», «Թատերգությունները քնավ ուրիշի սրբագրության տեսած չեն,—որովհետև գրածին պես տարած ծախած է» (ԲԵՀ, 1968, № 1, էջ 143 և 146)։ Ա. Չոպանյանը իր ընկերոջը խնդրել է պարզել, թե արդյոք թատերախաղերի չափածո հատվածները չէ՞ն ազավազվել, որովհետև գրանք «հատուկ անխնամությամբ մը գրված են, տարօրինակ կերպով ակար են և զարմանալի կերպով գրարարախառն. երբեմն մինչև իսկ հայր-Արևմտական հովեր առնելով» («Դուրյանի կյանքը...», էջ 108)։ Այդ առիթով Մ. Մինրդատյանցը, հանձնելով Ն. Դուրյանի վկայությանը, դարձյալ հարկ է համարել վստահեցնել. «Ոտանավորներն էլ երդվելու համար շինված տղայական բաներ են, քերթվածներ չեն. այն տեղը երգի մը պետք դղայվեր է, և անանկ բան մը գրեր էր» և ապա՝ «Թատերգությանց երգերը... իրեն են երևի» (ԲԵՀ, 1968, № 1, էջ 143 և 147)։

Ժամանակակիցներից մեկը՝ Մանուկ Աբեղյանը, հայտնում է, որ Դուրյանի մահից հետո Հ. Վարդովյանը որոշել է «ամեն տարի մի անգամ ի հիշատակ այս վաղամեռիկ քերթողին ներկայացնել իր հորինած խաղերեն մին...» («Մասիս», 1872, թիվ 1201), բայց այդ խոստումը չի կատարվել։

ՎԱՐԴ ԵՎ ՇՈՒՇԱՆ ԿԱՄ ՀՈՎԻՎՔ ՄԱՍՅԱՑ

(էջ 9)

Երուսաղեմի պատրիարքարանում պահվում է թատերգության երկու օրինակ, «անջատ տետրակներով»։ Սրա Գալայճյանը գրանց մասին հայտնում է.

«Ա. Տետրակիճ վերնագիրն է. «Վարդ և Շուշան կամ Հովիվք Մասյաց. Թատրերգություն երգախառն՝ ի չորս արարվածս. Հնդիկոպոլյան Պետրոս Ա. Դուրյանի, Սկյուտար, 1867»։

Բ. Տետրակին վերնագիրն է. «Վարդ և Շուշան. Թատերգություն երկսիասան՝ ի չորս արարվածս. գրեց Պ. Ա. Դուրյան. Սկյուտար, 1867»: Կը թվի թե այս տետրակին միայն առաջին էջը (անվանաթերթը) և երկրորդ էջը («Անձինք») Դուրյանի ձեռքով գրած են: Թատերգությունը ուրիշ մը կողմե ընդօրինակություն է: Մանավանդ որ, մյուսներեն տարբեր՝ այս մեկը չունի բանաստեղծին ստորագրությունը վերջավորության (տ. էջ է—Ը):

Երկրորդ տետրակի վերաբերյալ ենթադրությունը ընդունելի է, քանի որ Ա. Լուսինյանին Դուրյանի գրած 1871-ի սեպտեմբերի 30-ի նամակից հետևում է, որ «Վարդ և Շուշանին» մի «խաղատետր» է եղել: Ընդօրինակողն, անկասկած, Բ. Էքսերձյանն է, որովհետև 1893-ի ժողովածուում է, որ բաց է թողնվել թատերգության խորագրի երկրորդ՝ «կամ Հովիվը Մաստյաց» մասը:

Հիշված նամակում Դուրյանն ընկերոջը գրել է. «Ինն մեկ բանի թատերախաղերս կուզեր, բայց ես միայն նոցա ծրագիրներն ունիմ, որոնք անընթեռնելի բլլալն պատ՝ բղթի կտորվանքներու վրա գրված են: Մաքուր ըլլալով «Վարդ և Շուշան» անուն սիրային թատերգության խաղատետրն ունիմ քովս: Ասի տասն և հինգ տարեկան հասակի սիրո և տանջարի տանդուզն փիլոում մ'է. ևրև կը հաճիր, սա Ձեզի կրնամ յուղարկել»: «Վարդ և Շուշան»-ը ուղարկվել է Ա. Լուսինյանին թե ոչ, հայտնի չէ: Բայց Ս. Սիմոնյանի «արձանագրություններից» երևում է, որ գրողն իր թատերախաղը վաճառել է Տ. Գալեմքյանին («Մեխուռք», 1959, թիվ 32, և 1961, թիվ 49—52):

Ինչպես տեսնում ենք Դուրյանի իսկ վկայությամբ «Վարդ և Շուշան»-ը հեղինակվել է 15 տարեկան հասակում, այսինքն 1866-ին, քանի որ տաուլ գիտենք, որ գրողը ծնվել է 1851-ին (տե՛ս «[Կենսագրության]» ծանոթություններ): Մյուս կողմից ինչպես թատերախաղի անվանաթերթում, այնպես էլ ՏԲ-ում, գրության թվական է նշված 1867-ը: Մենք հետևել ենք վերջին աղբյուրներին և գրության թվականը թողել 1867-ը:

Առաջին անգամ տպագրվել է ՏԲ-ում, ապա ՏԲՆԴ-ում և «Երկեր»-ում (1947):

Տպագրվում է բուն առաջին հրատարակության:

1893-ի հրատարակությունում Բ. Էքսերձյանը գրաքննական նկատա-

ռումներով կատարել էր մի շարք փոփոխություններ, որոնց վրա առաջինը ուշադրություն է դարձրել Վ. Թերվիրաշյանը. «Այդ պիեսի,— գրում է նա,— այն բոլոր անունները, որոնք հիշեցնում են հայոց պատմության մեջ պատահող անունները, փոխարինված են «չեզոք» աստվածաշնչական անուններով. Պարետ—Հովսեփ, Սուրմակ—Գևորգ, Տիգրան—Հակոբ, Դուրգին—Սիմոն, Գևդամ—Սահակ։ Համիդը վախենում էր հայ պատմական անուններից... («Պետրոս Դուրյան», Երևան, 1959, էջ 85)։ Ավելացնենք նաև, որ գրաքննական արգելքի պատճառով ՏԹՆԴ-ում թատերգությունը վերնագրվել է միայն «Վարդ և Շուշան», իսկ տեքստում հանդիպող «Անի», «Մասյաց», «Արարատյան», «Նախարար» բառերը դուրս են գցվել իբրև «վտանգավոր» կամ փոխարինվել այլ «անվնաս» բառերով։ Սրանցից բացի կան նաև լեզվա-ոճական ուրիշ տարբերություններ, որոնք ցույց են տրվում ստորև։

ՏԹՆԴ

Արարված Ա

1 Վահրամին։ 2—3 (բացակայում են)։ 4 ազնվականի։ 5—6 (բացակայում են)։ 7 սովորաբար։ 8 կնկնին։ 9—11 (բացակայում են)։ 12 կենացը։ 13 ճանչնար։ 14 զքեզ։ 15 (բացակայում է)։ 16 նիններ։ 17 (բացակայում է)։ 18 յուր։ 19 (բացակայում է)։ 20 նա։ 21 ա՜հ՝ բախ։ 22 մանկությանս։ 23 իր։ 24 իր։ 25 մոտենալով։ 26 դարհուրեցնես։ 27 խոսքերովդ։ 28 (բացակայում է)։ 29 գիրեսմանիս։ 30 կոմսին։ 31 Հարմած։ 32 ազնվականը։ 33 (բացակայում են)։

Արարված Բ

1 [իմ] աղջկանս։ 2 իրենն։ 3 յուր։ 4 (բացակայում է)։ 5 շրթունքդ։ 6 (բացակայում է)։ 7 կորստյան։ 8 խոցերը։ 9—10 (բացակայում են)։ 11 իր։ 12 (բացակայում է)։ 13 կըլլա։ 14 իր։ 15—16 (բացակայում են)։ 17 իր։ 18 անզգա՜մ։ 19 (բացակայում է)։ 20 իր։ 21 (Մարիամի խոսքը բացակայում է)։ 22 (բացակայում են)։

Ա ր ա ր վ ա ծ Գ

1 տխուր։ 2 իր։ 3 իր։ 4 գոնե։ 5 վայրկյան։ 6 էր։ 7 ինչ։ 8 տուգանքն [տուգիլ]։ 9 անտառին։ 10 բազմաթույնն։ 11 ոգեւ։ 12—13 (բացակայում են)։ 14 կյանք [մը]։ 15 [իմ] որովայնս։ 16 վա՞րդն։ 17 կը մնկճի։ 18 իր։ 19 արտասվորդ։ 20 այրած։ 21 (բացակայում է)։ 22 լինելիք։ 23 կապանն։ 24 իր։ 25 («ալ նուն հրապույրը չուներ... տեսա որ» բառերը բացակայում են)։ 26 (բացակայում են)։

Ա ր ա ր վ ա ծ Դ

1 աչ։ 2 («այն սեւ գիշերը» բառերը բացակայում են)։ 3 հուսացի։ 4—6 (բացակայում են)։ 7 տմպրիր։ 8 ինչ։ 9 իր։ 10 (բացակայում է)։ 11 տեսնեմ [իսկ]։ 12 եւս։ 13 (բացակայում է)։ 14 իր։ 15 («ի՞նչ է այս (առնելով)» բառերը բացակայում են)։ 16 մ՛է։ 17 իր։ 18 ո՞չ։ 19 վարդ։ 20 հառաչ։ 21 պահվրտեցաւ։ 22 սպանիներ։ 23 այդ։ 24 (բացակայում է)։ 25 այն։ 26 մեհեանը։ 27 բենն։ 28 («բա՛ց աչքդ, վերջին անգամ մ՛այս բառերը բացակայում են)։ 29 է։ 30 ճանչնամ։ 31 բեզ։ 32 (պարբերությունը բացակայում է)։

1869-ի հոկտեմբերի 6-ին տպված Պ. Դուրյանի կենսագրական նոթագրման մեջ ասված է, որ հնդիկի թատերախաղերից «Վարդ և Շուշանը» միայն ներկայացված է անցյալ տարի Կեսրի Բաշայի թատրոնում (տե՛ս ներկա հրատարակության առաջին հատորը)։ 1868-ին բեմադրվելու մասին տեղեկություններ չկան, սակայն 1869-ին արդեն հանդիպում ենք այդպիսի։ Ահա դրանցից մեկը, տպված «Մասիս» շաբաթաթերթի 1869-ի փետրվարի 22-ի համարում։

Թ Ա Տ Ր Ո Ն Օ Ս Մ Ա Ն Ի Ե

ԿԵՏԻԿ ԲԱՇԱ

1869 փետրվ. 22 շաբաթ գիշեր ժամ 2 ½

Չորրորդ ներկայացումն

տնօրինությամբ Հ. Վարդովյանի

Հանդես ապագային

ՎԱՐԴ ԵՎ ՇՈՒՇԱՆ ԿԱՄ ՀՈՎԻՒՔ ՄԱՍՅԱՑ

Թատերգություն երգախառն ի չորս արարս.

Հեղինակություն պ. Պ. Դուրյանի

Երաժշտություն պ. Տ. Չուխաճյանի

ՀԻՇՈՒՏԱԿ

Տաղերգություն պ. Պ. Դուրյանի

Արտասանեալ օր. Վ. Պարապաշյանի.

«Մամուլ» հանդեսը այս ծանուցման հետ տպագրել է նաև Հ. Վարդովյանի հետևյալ տողը (1869, փետրվար 22, թիվ 3, էջ 24):

«Ազդ—Վերոհիշյալ Թատրոնին մեջ քանի մը ազգային խաղեր ներկայացնելով Թատերասեր Հասարակության կոմսանեն գտած բնդունելությունենիս քաջալերեց մեզ՝ պ. Պ. Դուրյանի վաստուն գրչին կարեւորությունը զգալով՝ անոր հեղինակած Վարդ և Շուշան անուն սիրա Հարական գոգարիկ թատերգությունը ներկայացնել, որուն համար պերասանական խումբս երբեք ծախք և ջանք չէ խնայած:

Հարգո Հասարակությունը գոհ՝ սրտիվ տեսավ շատ անգամ Պողոս և Վերգինեան, բայց դեռ նոր պիտի տեսնե Վարդը և Շուշանը. տեսավ Ալ պյաց Հովվուհին, բայց դեռ նոր պիտի տեսնե մասյաց Հովվուհին, եվ գովելի եռանդյամբ Հասաջադիմության շրջեց տեսարանի մը Հանդիսատես գտնվելու փութալով՝ թե հեղինակին և թե պերասանաց ձիգն ու ջանքը պատկելու մասին իր քաջալերիչ ներկայությունը չը պլանա:

Ուրեմն մեր ակնկալության վրա Հավատա, առաջուն մեր խորին չը նորհակալությունները կը Հայտնեմք Հայ Հասարակության:

Հ. Վարդովյան»

«Վարդ և Շուշանը» բեմադրվել է նաև 1871-ի նոյեմբերի 13-ին Սամաթիայի Հայկական ընկերության պրոսարանում Հայկական անձնվեր խմբի ջանքով (տե՛ս «Մասիս», 1871, թիվ 1165 և «Ծիծեռնակ», 1871, թիվ 41):

ՍԵՎ ՀՈՂԵՐ ԿԱՄ ՀՆՏԻՆ ԳԻՇԵՐ ԱՐԱՐԱՏՅԱՆ
(էջ 68)

Ինքնագիրը գտնվում է Երևանի պատրիարքարանում։ Անվանաթևերին է. «Սև Հողեր, թատերգություն երգախառն չորս արարվածս և ի մի վերջարան. Հնդինակության Պետրոս Ա. Դուրյանի, Սկյուտար, 1863» (Տ, էջ Ը)։

Պ. Դուրյանը թատերգության ձեռագիրը ներկայացրել է Մկրտիչ Պեշիկթաշլյանին, որը կարդալուց հետո ասել է, «Ին բավականին լավ է և ին այդ գործին հնդինակը փայլուն ապագա կխոստանա» («...Դուրյանի կյանքը...», էջ 47)։ Այս փաստը հիշատակում է նաև Վ. Թերզիբաշյանը, սակայն վերագրում է «Վարդ և Շուշանա»-ին, որովհետև գրականագիտի կարծիքով, «Սև հողեր»-ը Դուրյանի առաջին գործերից մնկը չէ, այլ գրված է ավելի ուշ, «Արտաշես Աշխարհակալ»-ից հետո («Պետրոս Դուրյան», Երևան, 1959, էջ 27 և 41)։

Պ. Դուրյանի՝ «Օրագիր...»-ին գրած նամակից երևում է, որ նա այս ողբերգության ինքնագիրը նույն տարվա ձմռանը վաճառել է Տ. Գալեմճյանին՝ պայմանով, որ բեմադրվելուց հետո պետք է վճարեր նրա արժեքը։ Թատերական հուշարարը հնդինակին է հանձնել պահանջվածի «զուտ նարյա մասը» միայն և ինքնագիրն էլ չի վերադարձրել։

Առաջին անգամ տպագրվել է ՏԲ-ում, առանձին հրատարակվել է Կ. Պոլսում 1908-ին («Ազատ մատենաշար» թիվ 1) և 1928-ին, չորրորդ անգամ գտնվել է 1947-ի «Երկեր» ժողովածուում։

Տպագրվում է ըստ առաջին հրատարակության։

«Սև հողեր»-ը բեմադրվել է Դուրյանի կենդանության օրոք։ «Մանկության էֆբյար» թերթը գտնել է Տ. Գալեմճյանի հետևյալ թատերազրը («1871, մարտ 5, նյումերո 1517).

ԹԱՏՐՈՆ ԺՄԱՆԻԵ
Ի ԿՆՏԻԿ ՓԱՇԱ.

1871 մարտ 6, շարաթ գիշեր

Ժամ հիշա 3
վարչության Հ. Վաղդվյանի

ի նպաստ ազգատուց
Հանդես ազգային

ԱՐՇԱՎԱՆՔ ԼԵՆԿԻՄՈՒԻ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵՎ ՀՈՂԵՐ

ԿԱՄ

ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐ ԱՐԱՐԱՏՅԱՆ

Ողբերգություն երգախառն չերիս արարս
և ի մի վերջարան
Հեղինակությունն պ. Պ. Դուրյանի

Հաջորդ օրը «Մանզումա»-ում (մարտ 6, նյումներո 1519) տպագրվում է Տ. Գալեմճյանի նամակը ուր առաջիկա բնագրության մասին կարդում ենք. «Շարաթ երեկո մարտ 6 ի նպաստ ազգատուց անվամբ Արշավանք Լենկրիմուի ի Հայաստան լսված խաղը պիտի ներկայացվի և դարձյալ հարյուրին վաթսունը մասնավոր ազգաստ ընտանյաց պիտի բաժնվի։ Եվ ապա՝ «Ձենք ուզեր ներկայացվելիք խաղիս գովեստ մի կարդալ. միայն սաչափ կըսենք, որ Թատրոնիս ընդհանուր դերասանապետ Պ. Մազարյանն յուր աշխատությունը չը զլանար խաղը անթերի տեսարան հանելու. իսկ խաղին փայլեցուցիչըը պիտի ըլլան օր. Ա. Հրաչյա իրենց փափուկ դերերովը. չենք ուզեր Լենկրիմուի մասը կատարող պ. Ս. Պենկլյանի գովեստ ընել, որ արդեն բոնավորի մասեր ներկայացնելու առաջին դերասան մ'է, որ սույն խաղին դյուցազն է. իսկ պ. Տ. Թոսպաղյանին զալով, կր հուսանք, որ յուր սիրահարական դերը կատարյալ կերպով ներկայացնե։ Խաղին զալով հասարակաց դատմանը կր ձգենք։ Մայր Հայաստան պիտի ներկայանա օր. Ա. Աստղիկ, իսկ սիրո փափուկ մասը օր. վ. Թարագաշյան պիտի կատարե, որ արդեն յուր բնաձիր ձիրքովը ազգիս համակրություններ ստացած է...»

Մի քանի օր հետո Տ. Գալեմճյանը տպագրում է մի հաղվետվություն («Մանզումա», 1871, մարտ 13, նյումներո 1526), որով հայտնում է, թե «Սև հողեր»-ի ներկայացումից ինքը 17 ոսկու վնաս է կրել։

Ողբերգության ներկայացմանը Պ. Դուրյանը հիվանդության պատճա-

ռով ներկա չի եղել, բայց ինչպես ինքն է գրել վերը հիշված նամակում, հասարակության կողմից աչերմ ընդունելություն է գտել «քսան վկայության իմ հանդիսատես բարեկամաց»։ «Սև հողեր»-ը հետագայում էս բեմադրվել է այլուրեք։ Ըստ Գ. Սունիանյանի, «խաղացվել է Թուրքիայում, Բալկաններում, Պարսկաստանում, Կովկասում և այլուր» («Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության», հ. առաջին, Երևան, 1962, էջ 413)։ ԳԱՖ-ի թատերական բաժնում (Ср/216) պահվում է ոդրերգության բնագրական օրինակներից մեկի ոմ էջանոց համառոտումը՝ «Սև հողերից երկու ոդրերգական պատկեր» վերնագրով։

Թատերախաղը պատկերում է 1403 թվականի իրադարձություններ։

Սև հողեր — Դուրյանագետները ուշադրություն չեն դարձրել այս անվանումին՝ ըստ երևույթին համարելով պատահական արտահայտություն։ Իրականում Սև հողերը վայր է Սերաստիայի մոտակայքում։ Պատմական այդ տեղանունը չի հիշատակվում հայկական աղբյուրներում, սակայն Մ. Չամչյանը, օգտվելով օտար հեղինակներից, տալիս է այսպիսի բացատրություն։ Երբ Լենկթիմուրը գրավում է Սերաստիան «լորում բուն ասնդելոյ Քալկոնտիդայ յոյն պատմագրի՝ կային ավելի քան զերկուասան բիւր» մարդիկ, ավերում է քաղաքը, «իսկ զմանկունս բազարին զամէն ևս ժողովել ՚ի դաշտավայրի կապկալ ձեռօք և ոտիւք, և կոխան երիվարաց առնել իւրև զորայս ընդ կամնասայլիւք, որոյ վասն և տեղին կոչեցաւ և կոչի Սև հողեր» («Պատմութիւն Հայոց ՚ի սկզբանէ աշխարհի մինչև յամ տեառն 1784, յօրինեալ ՚ի Հայր Միքայէլ վարդապետէ Չամչեանց կոստանդինուպօլսեցւոյ..., հ. Գ, 1786, ի Վենետիկ, էջ 429)։ Այս փաստը ապացուցում է, որ Դուրյանը օգտվել է Մ. Չամչյանի պատմությունից։

Անձինք թատերախաղին— *Ոդրերգության հերոսներից պատմական է միայն Լանկթիմուրը, մյուս կերպարները հորինված են։*

1) Անկեց 5—6 տարի առաջ Սերաստիո մեհեձականները Հազարագվոզ դեմ եղած սոսկալի պատերազմը — *Սերաստիայի մերձակայքում XIV դարի վերջերին հազարացիների (արարների) դեմ կռիվներ չեն մղվել։ Հայտնի է միայն, որ 1396-ին օսմանցիներն արշավանքներ են սկսել Կապադովկիան ու Փոքր Ասիան տիրելու նպատակով և այլ բնակավայրերի հետ գրավել են Սերաստիայի արևմտյան կողմում գտնվող Տյուրիկե (կամ Տիպրիկ, Տիվրիկ) քաղաքը (տե՛ս «Պատմության ականավոր քաղաքին Սե-*

բաստիո և սահմանաց նորա կամ Արքեպիսկոպոսաց ներին», Հորինյալ զերպ. Անդրնաս վ. Աղեքսանդրյան, Վենետիկ, 1911, էջ 210)։

2) Լանկրիմուր... Հայաստանը գրեթե հիմնահատակ ըննել ևնաս— Լանկրիմուրը Հայաստան է արշավել երեք անգամ՝ 1386-ին, 1395-ին և 1400-ին։ Թաեւրախաղում խոսքը վերջին ասպատակության մասին է։

3) Լանկրիմուր... կերդնու յերկինս, որ երե Սեբաստիա անձնատուր լիներ, երբեմ սուր չի պիտի շողացնե Հայոց գլխուն վրա — Պատմիչը վկայում է, որ իրոք Լանկրիմուրը խոստացել է չկոտորել բազաբացիներին՝ ասելով. «Մի՛ երկնչիր, զի ով զձեզ սրով սպանանէ՝ սուր նոցա ի սիրտս նոցա մտանէ» («Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոփեցւոյ», Փարիզ, 1860, էջ 64։ Տե՛ս նաև Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց...», հ. Գ, էջ 429)։

4) Մատնությո՞ւն... Մատնությո՞ւն — Ո՛չ հայ, ո՛չ էլ օտար պատմագիրների աշխատությունների մեջ հիշատակություն չկա, թե Սեբաստիան զրավվել է դավաճանների օգնությամբ։ Իրողությունն այն է, որ բնակիչները համաձայնել են Լանկրիմուրի խոստմանը և բացել դարպասները։ Իսկ ինչո՞ւ համար պիտի զրավեր Լանկրիմուրը մի քաղաք, որի բնակիչները հավատացել էին նրա խոստումներին։ Դուրսը համոզված էր, որ Հայաստանին բաժին ընկած ավերների գլխավոր պատճառը անմխիթարանելի յուն է, այդ իսկ նկատառումով նա Սեբաստիայի առումը վերագրել է մատնության։

5) Սանդրամե — Վեհով Ալիշանը բացատրում է որպես զժոխային ոգի, սատանա կամ դև («Հին Հավատք կամ հեթանոսական կրոնք Տայոց», Վենետիկ, 1895, էջ 311—312)։

6) ...գաբրիելյան փողին զոչյունը — Համաձայն Աստվածաշնչի, Գաբրիել հրեշտակապետը, որ ավետել էր «փրկչի» ծնունդը, իր փողը պետք է հնչեցնի նաև վերջին դատաստանի օրը։

7) ... իր վերջին բազավոր կոռնամոլ, անարգ և օտար էր. լեռներ ողբացին... մինչդեռ Լևոն Չ Կապան բերդին մեջ ապաստանած էր — Հայոց վերջին բագավոր Լևոն VI, ըստ Չամչյանի, հայ էր մոր կողմից, իսկ հայրը սերում էր, «ի ցեղէ Ճիւանայ և Գուիտոնայ»։ Երբ եգիպտոսի մամլուկները ու սելջուկները ներխուժում են Հայաստան, նա կնոջ, զաներ, փեսաի և յուրայինների հետ ապաստանում է Կապան բերդում, բայց ին-

նամակից պարարտանից հետո հանձնում է Ապուհանի զորավարին, չգիտ-վում (տե՛ս Մ. Զամչյան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, էջ 355—361)։

ծ) Ասիանագյան հաջեր — Աստվածաշնչում Հայաստանն անվանված է Ասքանազյան երկիր, իսկ հայերը՝ ասքանազյան ազգ։ «Սրա համեմատ էլ հայ մատենագիրները մեր ազգը կոչում են երբեմն Ասքանազյան» (Հ. Անաս-յան. Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 251)։ Այդ վերջին իմաստով էլ օգտագործել է Դուրյանը։

ԱՐՏԱՇԵՍ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ

(էջ 133)

Պ. Դուրյանի արխիվում այս թատերախաղը, բաս Ս. Սիմոնյանի, պահ-պանվում է «երեք արտագրությամբ, երեք տարբեր գիրերով, երեքն էլ գրա-բախտարար թերի» («Սիփյուր, 1959, թիվ 32)։ Ա. Գալանճյանը նույնպես հաստատում է, որ Երուսադեմի պատրիարքարանում «Արտաշես Աշխարհա-կալ»-ը թերի է, «կը պարունակե միայն բանի մը տարրներ, իսան ի իսուն. առանց պատավորված ըլլալու» (Տ. էջ ը)։ Երկու վկայություններից էլ պարզ չէ, թե եղած հատվածներն ինքնագի՞ր են։ Դրա պատասխանը անհերքելի-բեն բացասական է։ Բանն այն է, որ Ե. Դուրյանը ժամանակին ձեռք է բերել ստրերգության բնօրինակությունները միայն։ Նա 1891-ի օգոստոսի 30-ի նամակում Ա. Չոպանյանին հայտնել է, որ ունի «Արտաշես Աշխարհակալ»-ը, բայց հետաքրքրող խնդրի կապակցությամբ ոչինչ չի գրել (ԲԵՀ, 1967, № 1, էջ 167)։ Իսկ Մ. Մինրդատյանցն արդեն նույն տարվա սեպտեմբերի 23-ի նամակում ասում է, թե Ե. Դուրյանի «ձեռքն անցուցած «Արտաշես Աշ-խարհակալ»-ը բնօրինակություն է (ԲԵՀ, 1968, № 1, էջ 147)։ Մի քանի օր անց, նա ամենայն որոշակիությամբ գրել է. «Արտաշես Աշխարհակալը Համառոտեցի։ Ինչպես որ պիտի տեսնես, բավական լավ թատերգություն մ'է, պոչ լոֆերու (դատարկաբանությունների—Ա. Շ.) բով շատ մը գեղե-ցիկ կտորներ և խոսքեր կան։ Բնագրի չէ, որ թողեցի առոնք, այլ բնօրի-նակությունն մը (բնագիրը չը կա)»—նույն տեղը, էջ 150)։

Ի՞նչ ճակատագիր է ունեցել ինքնագիրը։

Ա. Չոպանյանը պատմում է, որ Պ. Դուրյանը իր թատերախաղերը հե-պինակել է Տ. Գալեմճյանի պատվերով։ Վերջինս «առաջին անգամվան հա-մար կհանդրև Արտաշես Ա-ի վրա թատերգություն մը գրել. Պետրոս կգրե

*խաղը և կհանձնեն. Գալեմճյան կվճարի 15 ռուբլի...» («Դուրյանի կյանքը...», էջ 34)։ Թերևս «Արտաշես Աշխարհակալ»-ը պրվել է Տ. Գալեմճյանի նանանարարությամբ, բայց որ այն դնել է Բաաերախաղի հուշարարը՝ տարաիուսելի է։ Ա. Լուսինյանին գրած Պ. Դուրյանը 1871-ի սեպտեմբերի 30-ի նամակը հաստատում է, որ «Արտաշես Աշխարհակալ»-ի ինքնագիրը պահվել է Հակոբ Վարդովյանի մոտ. «Կը խոստանամ,— գրում է Դուրյանը.— որ Վարդովյանը տեսնելով՝ քիչ մը միջոցի համար ուղեմ. ևին տալու համար, ուրախությամբ Ձեզ կը յուզարկեմ»։ Ս. Սիմոնյանի տպագրած նյութերը նույնպես ցույց են տալիս, որ Բաաերախաղի ինքնագիրը վաճառվել է Բաաերաբերին («Ազիւտար», 1959, թիվ 32 և 1961, թիվ 49—52)։ Ինչ վերաբերում է Տ. Գալեմճյանին, ապա անկասկած նա ունեցել է «Արտաշես Աշխարհակալ»-ի բեմական օրինակը (կամ օրինակներից մեկը), որը և 1880-ին վաճառել է Բ. Էքսերճյանին ու նրա ընկերներին։

Պ. Դուրյանի մահից հետո «Արտաշես Աշխարհակալ»-ը առաջին անգամ հիշատակվում է 1872-ի ժողովածուի առաջաբանում։ Տարիներ անց միայն Հրանդի (Մ. Կյուրճյան) «Վառարանիս բով» բրոնիկում («Ազնիվը», 1890, 20 հունվար, թիվ 1806) հանդիպում ենք երկրորդ, ավելի հանգամանալի տեղեկությանը։ Հրանդը հայտնում է, որ սկյուտարցնակ մի ուսուցչի (Բ. Էքսերճյանի) մոտ Պ. Դուրյանի «մեկ անտիպ բաաերբերությունն ևս հատված մը ևս գտանը» և նույն բրոնիկում տպագրում է այդ հատվածը՝ Որմիջոց ուս Արտաշես» խորագրով։ Դա «Արտաշես Աշխարհակալ»-ի Գ արարվածի Բ տեսիլի մի մասն է։

Ինչպես տեսել ենք, Մ. Մխիթարյանցը Ա. Զոպանյանի համար համառոտել է «Արտաշես Աշխարհակալ»-ը։ Համառոտված ինքնագիրը բաղկացած է 8 էջից և պահվում է ԳԱԹ-ի Ա. Զոպանյանի ֆոնդում։ Այդ օրինակի վրա նշված է. «26 սեպտ. 1891», որ համառոտման թվականն է, իսկ անկյունում ցույց է արված Բաաերախաղի գրության ժամանակը. «1 հուլիս 1869»։

Ունենալով ողբերգության համառոտված տեքստը և Մ. Մխիթարյանցի նպաստավոր կարծիքը (տե՛ս ԲՀՀ, 1968, № 1, էջ 150 և 151), Ա. Զոպանյանը «Բաաերերգությունը մեր մեջ» հոդվածում «Արտաշես Աշխարհակալ»-ի մասին գրել է. «Այդ գործերում լավագույնը իր մեկ անտիպ ողբերգությունն է, որուն մեջ ճշմարիտ պատմական ողբերգության մը համեմատությունները առած է խաղը՝ բանի մը վսեմ տեսարաններով և շատ ուժեղ ոճով մը,

ամրոզության մեջ շեքսպիրյան մեծ հով մը կուգնան գործը» («Մասիս», Հանդես, Կ. Պոլիս, 1893, թիվ 3979, էջ 40)։

Ողբերգությունն առաջին անգամ հրատարակվել է 1899-ին («Լումա», գրական հանդես, դիրք Բ, հուլիս, Տիխիս, էջ 1—54)։ Թատերախաղը տպագրության է հանձնել Ս. Դուրյանը։ Այդ մասին իմանում ենք հանդեսի խմբագիր Գյուտ քահանա Ազանյանցի՝ Ա. Չոպանյանին ուղղած 1899-ի հունիսի 2-ի նամակից, ուր կարդում ենք. «Գալով հանգ.[ուցյալ] Պ. Դուրյանի «Արտաշես Աշխարհակալ» ողբերգին, պիտի բսեմ, որ դեռ անցյալ տարվա վերջերը, երբ սրբ.[ազան] Դուրյանը եկած է Թիֆլիս և իջևանած ինձ մոտ նա ինքը խոստացավ հղել այն «Լումա»-ի մեջ հրատարակելու և իրոր ուղարկեց տարվույս սկզբներին. արդեն տպված է այն «Լումա»-ի հուլիսի գրքի մեջ, որ լույս պիտի տեսնե առաջիկա հուլիսի 1-ին և նարկավ անմիջապէս պիտի ուղարկվի Ձեզ «Լումայ»ն. շատ կցավիմ սակայն, որ առանձին տպատպիլ կարելի չեղավ՝ ինձանից միանգամայն անկախ պատճառներով։

Եվեն վաղուց արդեն տպված չլիներ «Արտաշես»ը, սիրով պիտի ուղարկեի Ձեզ մի ընդհին ծառայության անելու, սակայն ամեն ինչ վերջացած լինելով, կցավիմ որ չկարողացա բավականության պատճառել Ձեզ (ԳԱԱՐ Ա.Չ.Ֆ. 295 1 բ)։ Ըստ երևույթին, Ա. Չոպանյանը չի առացել «Լումա»-ն։ Նա հետագայում ևս «Արտաշես Աշխարհակալ»-ի մասին խոսել է որպես անտիպ առնդագործության և «Դուրյանի կյանքը...» աշխատության մեջ ամրոզության գնահատել է Մ. Մինրդատյանցի համառոտած օրինակը։

Ողբերգությունը երկրորդ անգամ տպագրվել է «Երկեր»-ում (1947)։

Տպագրվում է ըստ առաջին հրատարակության։

Արդյոր բնագրինակությունը հարազատորեն է վերարտադրում ինքնագիրը։

Մ. Մինրդատյանցը նկատել է, որ բնագրինակությունում նկել են «մեկ-երկու տառասխալներ» և «անհամականալի կետեր», որոնք ինքը նուհ-նուիյամբ պահպանել է (ԲՆՀ, 1968, № 1, էջ 150)։ Հիմքեր կան պնդելու նաև, որ «Արտաշես Աշխարհակալ»-ը մեզ է հասել թերի վիճակում։ Նախ Դուրյանի բոլոր թատերախաղերը ունեն «Վերջ» նշումը, իսկ «Արտաշես Աշխարհակալում»-ում այն բացակայում է։ Մի փաստ ևս ցույց է տալիս, որ այս առնդագործությունը թերի է։ Ողբերգության թե համառոտած օրինակը և թե տպագիր տեքստը բազկացած են հինգ արարվածից ու մի պատկերից։

մինչդեռ ինքնագիրը, գաղափար մամուլում գեհենված բեմական ապրելիքից, ունենալ է նաև «մի վերջարան»։ Այս «վերջարանն» է, որ չի հասել մեզ և ընդհանրապես անծանոթ է դերլանագիտությանը։

Համեմատությունը ցույց է տալիս, որ և՛ տպագիրը («Լումա»-ի), և համառոտված (Մ. Մինրդատյանցի) տեքստերի հիմքում ընկած է միևնույն՝ Ե. Դուրյանի մոտ եղած ընդօրինակությունը։ Սակայն «Լումա»-ում (և «Երկեր»-ում) տղբերգությունը խորագրվել է «Արտաշես Ա»։ Դա միակ խմբագրումը չէ։ Գաղափար համառոտված տեքստից, «Լումա»-ի խմբագրությունը հապավել է առանձին տողեր։ Համառոտված օրինակի վրա Մ. Մինրդատյանցը կատարել է մի քանի դիտողություններ, որոնք ցույց են տրվում տեքստային տարբերությունների հետ՝ փակագծերի մեջ առնված ընդգծումներով և ՄՏ նշումով։ «Արևելյր»-ի տպագրված հատվածը ևս «Լումա»-ի համեմատությամբ ունի որոշ անհամապատասխանություններ։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համառոտված օրինակ

Ա. ր ա ր վ ա ծ Ա

1 Այս խոսքերից առաջ Արտաշեսն ասել է. «Հայաստանի երկինք՝ ապրելու պատանքը, Հայաստանի ձորերը՝ օտար թագավորաց դերեզմանք և Հայաստանու փառաց խանձարուրը մը պիտի բլլա, Հայաստան՝ տիեզերք և տիեզերք՝ Հայաստան պիտի բլլա...»։ 2 փշրե։ 3 շուրթ։ 4 մատնին։ 5 [վերջապես] սակայն։ 6 («Ա. արարվածի այս վերջին տեսիլը հատուկ օրինակեցի. որովհետև նախ բառերզուրյանց կապն է, երկրորդ միակ կտորն է, ուր emphase *(վերամբարձություն—Ա. Շ.)* չի կա», *ՄՄ)*։

Ա. ր ա ր վ ա ծ Բ

1 կրլլա։ 2 կը լոզար։ 3 հնչեցնեին։ 4 ատմիկ [մր]։ 5 գոցվեցավ։

Ա. ր ա ր վ ա ծ Գ

1—2 (բացակայում են)։ 3 որ [կը փայլին ու]։ 4 ունեա։ 5 («Պատմական կատ մ'է հետևյալը, ուր Դուրյան կնեռա. չի պիտի օրինակի ևր-

կայն ըլլալուն համար, բայց ուռվենաև կարելի է աւտոատպել, կօրինակի անա»—ՄՄ) 6 [շունչ մը կարող չէ դիպվածի ավանդ մը ատպաիլ և] սերբ։ 16 ձայնիդ։ 18 ունենար։ 22 («կարծեմ պիտի ըլլա, «Թեև բոյնը կը Ճանկե» բեռնա»—ՄՄ)։ 26 («Թախտմ լաֆեր» (մի շարք խոսքեր—Ա. Շ.) —ՄՄ)։

Ա ր ա ր վ ա ծ Դ

1 (Նախորդ պարբերությունների մասին ՄՄ-ն գրել է. «Պուշ լաֆեր»—(դատարկաբանություններ—Ա. Շ.)։ 2 մեջ։ 5 Այս պարբերության մասին ՄՄ-ն գրել է. («Բայց պիշ չէ)»։

«Ա ր և և լ Ք» (Առաւոտ Դ, տեսիլ բ).

7 (Հատվածն սկսում է այստեղից)։ 8—9 (բացակայում են)։ 10 աչատատուր։ 11 խոտին։ 12—13 (բացակայում են)։ 14 անդունդներու։ 15 անհունությանը։ 16 ձայնիդ։ 17 խրոխտացիր։ 18 (բացակայում է)։ 19 (պարբերության սկզբից մինչև այստեղ գրաքննական նկատառումներով բաց է թողնվել)։ 20 չը վախնար։ 21 թիվը։ 23 (Այս և հետագա երեք պարբերությունները դուրս են մնացել)։ 24 (բացակայում է)։ 25 (Այստեղ ավարտվում է հատվածը)։

Ա. Չոպանյանը նշել է, որ Հնդիկի կենդանության օրոք «Արտաչես Աշխարհակալ»-ը հաջողությամբ բեմադրվել է Սկյուտարի «Ազիզիե» թատրոնում («Դուրյանի կյանքը», էջ 34—35)։ Բայց մամուլում եղած տեղեկություններից երևում է, որ այդ ողբերգությունը ներկայացվել է զարձյալ Վարդովյանի թատրոնում։ Ահա «Օրագիր» թերթի 1870-ի հունվարի 8-ի թիվ 101-ում տպագրված ազդը, որ կրկնված է նաև 102 և 103 թիվերում։

Թ Ա Տ Ր Ո Ն Օ Ս Մ Ա Ն Ի Ե

Ի Կ Ն Տ Ի Կ Փ Ա Շ Ա.

1870 Հունվար 10 շաբաթ դիշեր ժամ 3

Վարչության պ. Հ. Վարդովյանի

Արտաքո կարգի

Փառավոր ներկայացումն

Հ ա ն դ ե ս ա զ գ ա յ ի ն

ԱՐՏԱՇԵՍ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ

Ավա՞ղ փառացս անցավորի

Ողբերգություն քնարերգական ի հինգ արարս ի մի պատկեր և ի մի վերջաբան։

Երաժշտություն պ. Ճ. Մայեւպերի. պ. Տ. Զուխաջյանի։

Առաջին ներկայացմանը «Օրագիր»-ը ավել է հետեւյալ գնահատականը (1870, Հունվար 12, թիվ 104).

«Անցյալ շաբաթ գիշեր Օսմանեան թատրոնին մէջ «Արտաշես Աշխարհակալ» անուն ողբերգութիւնը ներկայացաւ։

Նոյն գիշեր խառն բազմութեան մը ներկա էր հոն, այնչափ որ շատերը ստիպված էին ոտքի վրա կենալ։

Գալով ներկայացման, առայժմ այսչափ միայն կրսեմք, որ թե տեսարանաց շրջագիծերը ու կանոնավորութեամբը և թե խաղին վսեմ ու սքանչելի գաղափարներովը՝ որ հեղինակին տաղանդն ու հանճարը կը փայլեցնեին, կրնամք ըսել, թե մինչև հիմա ներկայացված բոլոր հայ ներկայացումներուն առաջինը կրնա համարվիլ։

Բնև այս մասին մի քանի դիտողութիւններ ունինք ընելիք, բայց տեղերնիս չը ներեին ուրիշ տողի մը կը բռնունք»։ Հայտնի չվ, թերթը անդրադարձե՞լ է այդ ներկայացմանը, թե՞ ոչ։

«Եփրատ» լրագիրը 1870-ի Հունվարի 15-ի թիվ 21-ում այդ բեմադրության առիթով գնահատել է Գ. Յ-ի (Գ. Յեսայան) «Թատրոն Օսմանեան ի Կեսարիա փաշա» թատերախոսականը, որից քաղում ենք հետեւյալը.

«Ինչպես որ ծանուցված էր պ. Հ. Վարդովյանի վարչության տակ շաբաթ գիշեր «Արտաշես Աշխարհակալ» անուն քնարերգական ողբերգութիւնն ներկայացվեցավ Օսմանեան թատրոնը, ուր հազար հոգիի ավելի բազմութեան մը կը նշմարվիր, Մահմեդականք և Քրիստոնյայք։

... Ժամը ճիշտ 3-ին վարագույրը բացվելով առաջին անգամ Արտաշես ներկայացուց պ. Հ. Վարդովյանը, որ բավական հաջողականութեամբ կատարեց փառասեր Արտաշեսի մը հատուկ եղած ձիրքերը դպալի ընելով։

Նույնպես պ. Պենկլյանը, Լյուդացվոց արքայն կը ներկայացներ իր երեսին խոնարհական, երեսին խրոխտ և խոժոռ ձևերով զովեստի արժանի էր։

Պ. Խ. Փափազյան և պ. Բ. Նալյան, որոց առաջինը Վրույրի դերը և երկրորդ Խոսրովի դերը ներկայացուցին, անոնք ալ իրենց մասերուն մեջ խիստ հաջողակ էին, այսինքն ինչ որ տիեզերաց տրամայող աշխարհակալի մը դեսպանին վայելուչն է. նույնը կրցավ ընել պ. Նալյան. նույնպես նույն իսկ սպարապետի մը պես կը ներկայանար պ. Վրույր, ասոնց քով չենք ուզեր նշմարել ներկայացման այն թերություններըր, որոնց հետզհետե բարվոքելու կերաշխավորեն վերոհիշյալ հաջողականությունները, և արդեն հառաջադիմական դիրքն ալ այս է»։

Այս ներկայացումը կրկնվել է նաև հաջորդ շաբաթ օրը՝ հունվարի 17-ին (Յատերագրերը տե՛ս «Օրագիր», 1870, թիվ 105 և 106)։ Գրողի մահից հետո ևս, 1872-ի փետրվարի 12-ին «Ի հիշատակ Պետրոս Դուրյան ծագկահատակ բերթողին» բեմադրվել է «Արտաշես Աշխարհակալ»-ը (Յատերագրը տե՛ս «Մասիս», 1872, թիվ 1201)։

Ողբերգության նյութին առնված է Մ. Խորենացու «Հայոց պատմություն»-ից և վերաբերում է մ. թ. ա. 189—160 թթ. դեպքերին։

Անձինք բատերախաղին — Գործող անձերից պատմական են Արտաշես Ա-ն, Տիգրան Բ-ն, Կրյուսոսը, Միհրդատը, Վարաժը։

1) Վրույր — Բատերախագում սպարապետը Վրույրն է, մինչդեռ Խորենացու «Հայոց պատմություն»-ում (և Ջամչյանի աշխատությունում) Հայոց սպարապետը Արտավազդն էր, իսկ Վրույրը Արտաշեսի «իմաստուն և բանաստեղծ» որդին էր, որին հայրը «կարդ... հպարապետ... և հաւատա՝ի նա զամենայն գործս տանն արքունի» (Գիրք Բ, ՄԳ)։

2) Վաճառամ Վաճունեի, Իմմապետ Հայոց — Սա պատմական կերպար չէ, բայց Դուրյանը մտահղվել է նրա պատմական հիմքով և օգտվել Խորենացու այն վկայությունից, որ Հայոց քրմապետները սերում էին Վահունիների ցեղից (գիրք Ա, ԼԱ, Գիրք Բ, Ը և ԺԲ)։

3) Պյուրոս, Իմմապետ Լյուդացվոց — Այս կերպարի համար ևս հիմք է ծառայել Խորենացու պատմության հետևյալ հատվածը. «Խարկանք լինէին Հպարատացնոցն լիւդացւոց, Կրիտեայ Պիւիիայ...» (Գիրք Բ, ԺԳ)։

4) ... Հայոց՝ նետաձգությամբ առաջ մրագնեցնող բանակը — Այս պատկերի հիմքում ընկած է Խորենացու աշխատության հետևյալ հատվածը, որտեղ բառ եվազարոսի ասված է. «Փորր Ադիաբանդրի և Դարեհի պատերազմ առ Արտաշիսին բաղդատեալ. բանդի նոցա ոչ փոչւոյն մարդոյ նրևէր

լոյս տուընջեանն, այլ ծածկեաց նետաձգութեամբն և աստուերացոյց զարեգական, ձեռագործ դիշեր զմիջօրէիւ արարեալ» (Դիրք Բ, ԺԴ)։

5) «Կրիւսոս, անցեալ ընդ Ալիւս գետ՝ բակեսցէ զիշխանութիւնս»—արտահայտությունը բառացիորեն առնված է Խորենացու պատմությունից (Դիրք Բ, ԺԴ)։

6) Թորգոմյան — Թորգոմը ըստ Խորենացու Հայկի հայրն էր։ Օգտագործված է «հայկական (հայերի)» իմաստով։

7) Պոսիդոն (կամ Պոսեյդոն) — Հին հունական դիցաբանության մեջ ծովի ու փոթորկի աստվածը, ծովագնացության հովանավորը։

8) Արես — Հունական դիցարանության մեջ պատերազմի աստված։

9) Տեր իմ, նոր Աստված մը կը կանչե — Այս և հետագա տրամախոսությունները հարազատորեն վերարտադրում են Խորենացու պատմության հետևյալ հատվածը, որ պատմահայրը քաղել է Սկամադրոսից. «...Կալեալ գնա (Կրյուսոսին—Ա. Շ.) պարթևին Արտաշիսի, հրամայեաց Տանել երիվարին տապակ։ Իսկ Կրիւսոսի չիշեալ զրան Սողոնի աբենացւոյ, ասէ չիր լեզուն՝ Ով Սողոն Սողոն, զեղցիկ բարբառեցար, ոչ երանեալ զբարեբախտութիւն մարդոյ մինչև ցվախճան։ Եւ լուեալ որ մերձն կային, պատմեցին Արտաշիսի, եթէ զնոր ոմն աստուած կարդայ Կրիւսոս։ Եւ զիացեալ Արտաշիսի, հրամայեաց ածել և հարցանել և ուսանել, թէ զի՞նչ է որ ազազակեացն, հրամայեաց ներել պանջանոն» (Դիրք Բ, ԺԴ)։

10) Աւաղ փառացս անցաւորի — Խորենացին վկայելով Սվազարոսին, ասում է, որ այս խոսքը պատկանում է Արտաշեսին (Դիրք Բ, ԺԴ)։

11) ...Սրկու գնդեր իրար զարնվեցան... Անոնք... արյուն կը բախեին փոփոխակի ...Հասա... — Խորենացին գրում է. «Այլ ոչ դիտեմ ասել յորպիսի ազդմանէ ահագին իմն ազմուկ լսել շիտոթից, բազմութեան զօրաց զմիմեանս կոտորել. իսկ Արտաշէս փախուցեալ մնուանի, որպէս ասեն, յիւրոց զօրաց...» (Դիրք Բ, ԺԲ)։ Դուրյանը այդ «ահագին իմն ազմուկ»-ո վերագրել է Որմզդուխտին։

ԱՆԿՈՒՄՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ

(էջ 195)

Ինքնագիրը պահվում է Նյուսաղեմի պատրիարքարանում։ Անվանա-

Բերթն է. «Անկումն Արշակունի Հարստության. Հեղինակություն Պետրոս Դուրյանի, 1870» (Տ, էջ Ը)։

Ա. Լուսինյանին ուղղած Պ. Դուրյանի 1871-ի սեպտեմբերի 30-ի նամակից երևում է, որ թատերախաղի ինքնագիրը գտնվել է Հ. Վարդովյանի մոտ։ Նույնը հաստատվում է նաև Ս. Սիմոնյանի հրատարակած «արձանագրությունից» («Մուրճ», 1959, թիվ 32 և 1961, թիվ 49—52)։

Առաջին անգամ հրատարակվել է ՏԲ-ում, ապա զետեղվել «Երկեր»-ում (1947)։

Տպագրվում է ըստ 1872-ի ժողովածուի։

Ե. Դուրյանը Ա. Չոպանյանին գրած 1891-ի օգոստոսի 30-ի նամակում թատերախաղի գրության թվական է համարում 1870-ը (ՐԻՀ, 1967, № 1, էջ 170)։ Ինչպես տեսանք, նույն տարեթիվն է նշված նաև անվանաթերթի վրա։ Սակայն Հեղինակի կենդանության օրոք «Օրագիր...» թերթում տպագրված կենսագրական ծանոթության մեջ ասված է, որ Դուրյանը «ավարտած ունի «Վարդ և Շուշան», Եվ Հոդեր. Աւտաշես Աշխարհակալ և Անկումն Արշակունյաց Հարստության անուն ողբերգությունները...»։ Սրանից պարզ երևում է, որ 1869-ի հոկտեմբերին «Անկումն Արշակունի Հարըստության» թատերախաղն արդեն հեղինակված էր, ուստի 1870 թվականը մնում է անհավանական։ Այնուամենայնիվ, տարեթիվը թողնում ենք ըստ ինքնագրի։

ՏԲ-ում և ներկայացման թատերագրում խորագրից հետո գրված է. «Թատերդութիւն երգախառն ի վեց արարս, չորիս պատկերս և ի մի վերջարան» (թատերախաղում «ի մի լուռ վերջարան (Բալլո վիվան)», բայց տպագրված է առանց «Վերջարան»-ի։ Ինքնագրի անվանաթերթում առհասարակ ոչինչ չի նշված, թե ողբերգությունը քանի արարված ունի։ Արդյոք «Վերջարան»-ի մասին հիշատակությունները պե՞տք է դիտել որպես վրիպակ, թե՞ այն իրոր եղել է։ Այս հարցի վերջնական պատասխան տալը հնարավոր չէ այլ ապացույցների բացակայության պատճառով։ Կարելի է ենթադրել, որ վերջաբան պետք է լիներ, քանի որ Դուրյանի բոլոր պատմական ողբերգությունները որպես կանոն այդպիսիք ունեն։ Իսկ նրն «Անկումն...»-ի «Վերջարան»-ը չի տպագրվել, ապա ըստ երևույթին այն պատճառով, որ 1872-ի ժողովածուի կազմողները Հ. Վարդովյանից թատերա-

խոպի ինքնագիրն ատացել են Բերի վիճակում, առանց «Վերջարան»-ի, որը Բերևս կորել է։

Հ. Վարդովյանի «Թատրոն Օսմանեան ի Կետիկ փաշա» հայտարարության մեջ («Մանզումա», 1870, Հունվար 31, Նյումերո 1146, «Մասիս», 1870, 4 փետրվար, Թիվ 944) կարդում ենք. «Տարվույս Թատերական շրջանին մեջ ներկայացված թատերգությունները պատվող Թատերասեր ազգայնոց ներկայութիւնեն թաչալերված, կը փութանք պ. Պ. Դուրյանի նոր հեղինակած Անկումն Աւշականի Հարստության անուն ազգային վեպ և սրտաշարժ թատերգությունը մեծ պատրաստությամբ Թատերասեր Հասարակության ներկայել, որուն ոգին և լեզուն իրավամբ արդո հեղինակին հանճարը կարտափայլեն... Քաշահույս ենք, որ Հայ Հասարակությունն ալ իր ներկայությամբը սույն երեկույթը պպտվել փութալով՝ Թատերական Հասարակության, այլև Հայ հանճարին փայլ տալու չպլանար, ինչպես որ Աւտաշես Աշխարհակալի առաջին ներկայացման իր Թատերասիրական նոանդը արտահայտեց»։ «Մանզումա»-ն պետնդել է ներկայացման հետևյալ թատերազդը. (1870, փետրվար 7, Նյումերո 1152).

ԹԱՏՐՈՆ ՕՍՄԱՆԻԵ

Ի ԿԵՏԻԿ ՓԱՇԱ

1870 փետրվար 7, շարաթի դիշեր, ժամ 2½

Վարչության Հ. Վարդովյանի

Արուաթո կարդի փառավոր ներկայացումն

Հ ա ն դ ե ս ա զ գ ա յ ի ն

ԱՆԿՈՒՄՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Թատերգություն երգախառն ի վեց արարս և չերիս պատկերս և ի մի լուռ վերջարան (Բասլո վիվան).

Հեղինակության Պ. Դուրյանի

Երաժշտության Տ. ՉՈՒԼԱՋՅԱՆԻ

Ոգրերգությունը պատկերում է Արշակունի վերջին Բագավորի՝ Արտաշես կամ Արտաշիր Գ-ի գահակալության ժամանակները և այդ Բագավորության վերացումը (428 թ.)։ Թատերախոսի այժմեի համար հիմը է ծա-

ռայել Խորենացու «Հայոց պատմության» մեջ եղած հետևյալ վկայությունը. «...Բագաւորն Հայոց Արտաշիր անհուն սկսաւ ողողանել յանառակ ցանկութիւնս, մինչև տապտականալ ի նմանէ ամենայն նախարարացն։ Որոյ եկեալ առ մեծն Սահակ, պրոդոք բարձին՝ հրաւիրելով և զնա յօգնականութիւն ինրեանց, չարախօսել առ արքային Պարսից և ի բաց ընկենուլ զթագաւորն իրեանց, և պարսիկ տնօղ աշխարհս» (Գիրք Գ, ԿԳ)։

Անձինք — *Պատմական են Արտաշիրը, Վռամ, Սահակ Պարթևը, Արծրունյաց Վաչե իշխանը, Աշոցա իշխան Համայակը, Սուրմակը և Սուրեն Պահլավը։*

1) ...իւ կողեն հոսող արյան կայլակնեւն — Համաձայն Աստվածաշնչի, երբ Տրնա զինվորներից մեկը զեղարդով խոցում է խաչված Հիսուսի կողը, նրանից հոսում է արյուն ու ջուր (Հովհ. ԺԹ, 34)։

2) ...փուշ պսակն — Ըստ Աստվածաշնչի, Տրնա զինվորները Հիսուսին խաչելության տանելով, նրան հագցնում են ծիրանի և գլխին դնում փշահյուս պսակ։

3) ...նոմանի Մարիամներ — Ակնարկը վերաբերում է Մարիամ Մագդաղինին, որը յոլարեր (Հիսուսին յոլով օծող) կանանցից մեկն էր և որին Հիսուսը մի ժամանակ բուժել էր։ Նա անառակ էր և Քրիստոսի ազդեցությամբ մաքրագործվեց՝ դառնալով պարկեշտ ու ջերմեռանդ հավատացյալ։

4) ...սուրբ Մարիամներ — Խոսքը Մարիամ Աստվածածնի (Աստվածամոր) մասին է, որը, լինելով կույս, ծնեց Հիսուսին։

5) ... մեղաց խոր վիրապը — Ըստ ավանդության, Հայոց Տրդատ Բագավորի հրամանով Գրիգոր Լուսավորիչը ոտք ու ձեռքը կապված նետվել է Երասխի (Արաքսի) ձախ ափին, Արտաշատի մոտ գտնվող մութ գուբը, որի վրա դրել էին մեծ երկանքարար։ Բայց քրիստոնեական հավատքը Գրիգորին կենդանի է պահել։ Գործածված է «մեղքերի անդունդ» իմաստով։

6) ... խոստովանութեան մր սրբազան կապը — Խոստովանություն բահանայի առջև զղջալով մեղքերին բողություն հայցելն է։ Խոստովանությունը պետք է գաղտնիք մնար։

7) ... Քրիստոսի հոտին գայլն է — Ակնարկված է Պողոս առաքյալի արտահայտությունը. «Զգույշ կացէք անձանց և ամենայն հօտիդ... Քանզի

պիտեմ ես, եթէ չետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակօղք ի ձեզ որ ոչ խնայեսցեն հօտիդ...» (Գործ. Ի, 28—29)։

8) ... ու հուրդ ստվերը — Արտաշիրի հայրն էր Վռամշապուհը։

9) Աբտավազդ իր երիվարովը գլորեցավ — Ըստ Խորենացու, Արտաշեսի մահից հետո նրա որդին՝ Արտավազդը «անցեալ գնամարչյան Արտաշատ քաղաքի՝ որսալ կինճս և իշավայրիս գալամբր Գինա, ազմկեալ իմն ի ցնորից խելագարանաց, ընդ վայր չածելով երիվարան, անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյզ լեալ՝ անհնտիւ» (Գիրք Բ, ԿԱ)։

10) Ակոռիի... գինին — Մասիսի ստորոտում բնակած Ակոռի գյուղը հայտնի է եղել իր ընտիր ու ազնիվ գինիով (տե՛ս Ղ. Ինճիճյան, Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. երրորդ, ի Վենետիկ, 1835, էջ 14)։

11) կեցցե Նոյ նահապետ, որ գինին ճնաւեց — Ըստ ավանդության չրհեղեղից հետո Նոյ Նահապետն է տնկել խաղողի վազը։

12) ...Վռամշապուհի ջանը կր մաոես — Վռամշապուհի թագավորության օրոք Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայերեն տառերը։

13) ....միթե իմ խաչս ձախակողմյան ավազակինն է — Համաձայն Աստվածաշնչի, Հիսուսի հետ խաչվել են երկու ավազակներ՝ մեկը աջ և մյուսը ձախ կողմում։ Աջակողմյանը հավատում էր Քրիստոսի գործությանը, մինչ ձախակողմյանը չէր հավատում և նրան ու աստվ. «Որ դու ես Քրիստոսն, փրկիա զանձն քո և մեզ» (Ղուկ. ԻԳ, 39 և Մաշտոց ծիսարան. Հանգստեան շարականն)։

14) ... պահլավ առյուծ — Պահլավները կամ պարթևները ունեին բուրանական ծագում և հետո գաղթելով Պարսկաստան, բնակություն էին հաստատել Կասպից ծովի հարավ-արևելյան կողմում, նվաճել Բակտրիան՝ Բահլ (Պահլ) մայրաքաղաքով, որի անունով և կոչվել են պահլավներ։ Նրանք մ.թ.ա. 250 թ. նվաճեցին ամբողջ Պարսկաստանը և հիմնեցին իրենց հարստությունը, որը գոյատևեց մինչև մ.թ.ա. 226 թ. («Հայկական բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. չորրորդ, էջ 83)։

15) ... անոր համար մշտնջենավոր բանտ վճռված է — Սահակ Պարթեւ Արշակունյաց հարստության վերացումից հետո բանտարկվեց Պարսկաստանում, ուր մնաց մինչև 432 թվականը։

ԱՍՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՔ ՊԱՐՍԿԱՑ Ի ՀԱՅՍ
ԿԱՄ
ԱՎԵՐՈՒՄՆ ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ

(էջ 307)

Ինքնագիրը չի պահպանվել։

«Օրագիր...»-ի խմբագրությանը գրած 1871-ի սեպտեմբերի 30-ի նամակում Պ. Դուրյանը բողոքում է, որ Տիգրան Դալեմճյանը «անցյալ ձմեռ» իրենից «Սև Հողեր»-ի հետ միասին գնել է նաև «Կործանումն Անի Մայրաքաղաքին Բագրատունյաց» թատերախաղը և «մինչև հիմա» չի վճարել ոչ լրիվ «արժեղինքը», ոչ էլ վերադարձրել ինքնագիրը։ Ս. Սիմոնյանի հրատարակած նյութերը նույնպես վկայում են, որ այս թատերախաղը վաճառվել է թատերական հուշարարին («Սիփյուռք», 1959, թիվ 32 և 1961, թիվ 49—52)։

Առաջին անգամ տպագրվել է ՏԲ-ում, երկրորդ անգամ՝ առանձին հրատարակությամբ «Ավերումն Անի մայրաքաղաքին Բագրատունյաց կամ Ասպատակությունք Պարսկաց ի Հայս» խորագրով Կ. Պոլսում, 1908-ին («Ազատ մատենաշար», թիվ 8), երրորդ անգամ գտնվել է 1947-ի «Նոկեր»-ում։

Տպագրվում է ըստ առաջին հրատարակության։

Հեղինակի կենդանության օրոք, 1869-ի հոկտեմբերին, տպագրված կենսագրական ծանուցման մեջ հիշված էր, որ բացի «Վարդ և Շուշան», «Սև Հողեր», «Արտաշես Աշխարհակալ» և «Անկումն Արշակունյաց Հարստության» ավարտված ողբերգություններից, Դուրյանը «մոտերս ուրիշ մ'ալ կը հեղինակե»։ Հավանաբար խոսքը «Ասպատակությունք...»-ի մասին է։ ՏԲ-ում գրության տարեթիվը չի նշված, բայց Ն. Դուրյանը Ա. Զոպանյանին գրած 1891-ի օգոստոսի 30-ի նամակում պնդում է, որ հայտնի այլ գործերի հետ միասին հիշյալ ողբերգության «Բվականը» նույնպես որոշ է՝ 1870 (Բեհ, 1967, № 1, էջ 170)։

Ինչպես կարելի է տեսնել Պ. Դուրյանի վերը հիշված նամակից, նա իր ողբերգության վերնագիրը (համենայն դեպս նրա մի մասը) անվանում է «Կործանումն Անի Մայրաքաղաքին Բագրատունյաց», իսկ 1908-ի առանձին հրատարակություններում խորագրի երկու մասերը նո ու առաջ են տեղափոխված (դա միակ տեքստային տարբերությունն է)։ Ինքնագրի բացա-

կայությունը հնարավորություն չի ընձեռում պարզել խոսությունը։

Պ. Դուրյանի վկայությամբ ողբերգությունը հաջողությամբ բեմադրվել է, որին ինքը չի կարողացել ներկա գտնվել հիվանդության պատճառով։ «Թատրոն Օսմանիե» հայտարարության մեջ կ. Պոլսի «Մամուլ արձագանք հասարակաց կարծյաց» հանդեսը («1871, մարտ 13, էջ 240) գրել է.

«Այս դիշեր պ. Բուրյանի հեղինակած Անի թագարին ավերումը առաջին անգամ պիտի ներկայացվի ի նպաստ պ. Տիգրան Գալեմճյանի։

... Կաղաչեմք որ հարգո հասարակությունը այս փափուկ կետը նկատողության առնելով չիջողու, որ Անի թագարին հետ այս դիշեր մեր Տ. Գալեմճյանին տունն ալ փլի»։

Լրագրերում («Մանզումա», 1871, մարտ 11, նյումերո 1523, «Մասիս», 1871, 11 մարտ, թիվ 1063, 13 մարտ, թիվ 1064) հանդիպում ենք հետևյալ թատերագրին.

ԹԱՏՐՈՆ ՕՍՄԱՆԻԵ
Ի ԿԵՏԻԿ ՓԱՇԱ

1871 մարտ 13 շարաթ դիշեր

ժամ հիշատ 3

Վարչություն Հ. Վարդովյանի

Արտաքո կարգի փառավոր ներկայացումն և առաջին անգամ ներկայանալի
ի նպաստ

Պ. Տիգրան Գալեմճյանի

Հուշարարի թատրոնին

Հ ա ն դ ե ս ա պ ո ա ջ ի ն

ԱՍՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՔ ՊԱՐՍԿԱՑ Ի ՀԱՅՍ

ԿԱՄ

ԱՎԵՐՈՒՄՆ ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ

Մեծահանդես թատերգություն երգախառն յերկուս բվականս, ի հինգ արարս, յերիս պատկերս և ի մի վերջարան

Հեղինակություն պ. Պ. Դուրյանի

«Մանզումե»-ն միաժամանակ տպագրել է Հ. Վարդովյանի «Ազդ»-ը։

«Ազդ.—Տուրքիի և Ալփասլանի բարբարոսական հարձակումները, որ Բագրատունյաց թագավորության կործանումն հարր տեղի ունեցած Հայոց պատմության մեջ հիշատակաց կետ մը ձգած է։ Այս անգամ ուզելով, որ սույն պզալի հանդեսս ազգիս ներկայացնել, որոշեցինք նպաստավորյալ հուշարար պ. Տ. Գալեմճյանի հատկացնել, հուսալով որ մեծարգո ազգայինս իրենց պատկառելի ներկայությամբը պատվել պիտի բարեհաճին ըն նպաստավորյալը և ըն մեր անխոնջ աշխատություններ։

Հ. Վարդովյանս

Տ. Գալեմճյանը իր նամակում («Մանզումե», 1871, մարտ 13, նյութերու 1526) հայտնում էր, թե քանի որ իրը «Սև Հոդեր»-ի ներկայացությից նյութապես տուժել է, ապա «սույն մեր բաց հաշիվը զոցելու համար տոխրվեցանք նպաստ մ'ալ մեզ համար տալ...»։

«Ասպատակություններ...»-ը բեմադրել են նաև արևելահայ թատերական խմբերում։ ԳԱՖ-ի թատերական բաժնում պահպանվում է ողբերգության բեմականացման երկու ձեռագիր օրինակ. «Անի քաղաքին ավերումն» վերնագրով առաջինը (Bp/104) բաղկացած է 36 էջից և ունի հինգ դործողություն և երեք պատկեր։ Այս օրինակի վրա կա կովկասյան գրաքննական կոմիտեի 1906-ի օգոստոսի 5-ի նշումը՝ բեմադրության թույլտվության մասին։ Երկրորդը (№ 43/Dph) 14 էջ է, ունի հին «ողբերգական պատկեր» և «1885» նշումը։

«Ասպատակություններ...»-ի նյութին առնված է սելջուկյան արշավանքների շրջանից։ «Ա թվական»-ում ծավալվող գործողությունները տեղի են ունեցել 1054-ին, իսկ «Բ թվական»-ինը՝ 1064-ին։ Որպես պատմական աղբյուր ծառայել են Արիստակես Լաստիվերտցու «Պատմություն»-ը (առաջին անգամ լույս է տեսել Վենետիկում, 1844-ին), Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրություն»-ը (առաջին հրատարակությունը՝ 1869, Երուսաղեմ) և Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ի Բ հատորը։ «Բ թվական»-ում պատկերված իրադարձությունները (Ակռկանի օգնությունը հայերին, բարբառն այրելը, Որսկմիրի բռնվելն ու գլխատվելը) իրական են, բայց դրանք կատարվել են ավելի վաղ՝ 1054-ին, Մանազկերտի հերոսական պաշտպանության օրերին, երբ սելջուկ հորդաներին գլխավորում էր Տուղրիլը։ Գուրյանը Մանազկերտի դեպքերը հատուկ մեծատոմով վերագրել է Անիին, որով-

հետև հայոց վերջին մայրաքաղաքի ավերումն էր խորհրդանշում պետականության կորուստը։

Ողբերգության հերոսներից պատմական են կամ ունեն իրենց պատմական նախատիպը Դադիկ Արասյանը, Թաթուլը, Տուղրիլը («Ա թվական»), Այփասլանը, Բագրատը, Որտելմեզը, Աղկանը և Լևոնը («Բ թվական»)։

Անձինք Ա թվականին

1) ՈԳԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ — այսպիսի «անձ» չկա ոչ Ա և ոչ էլ Բ թվականներում։ Այդ վերացական կերպարը հանդես է գալիս միայն «Վերջարան»-ում, բայց կոչված է «Մուսայն Հայաստանյայց»։

2) ՏՈՒՂՐԻԼ, Բաղավոր Պարսից — Լանտիվերտցու «Պատմություն»-ում այսպիսի անուն չկա, հանդիպում ենք միայն «Սուլտան» ձևին, իսկ Մ. Ջամշյանը կոչում է Տուղրիլ՝ ավելացնելով «Բնակ յաղգէ Թուրքաց սկիւթացւոց՝ ի ցեղէ սալչուկեանց»։ Պ. Դուրյանը Տուղրիլ անունը վերցրել է Մ. Ջամշյանից, բայց համարել է պարսիկ, որովհետև Թուրքիայի պայմաններում չէր կարող հայերի թշնամուն Թուրք ներկայացնել։

3) ԹԱԹՈՒԼ, իշխան Հայկազն — Ջամշյանի աշխատությունում Թաթուլը սպարապետ է (Հ. Բ, էջ 955), իսկ Լանտիվերտցու մոտ՝ «զմի ոմն յազատացն» («Պատմութիւն...», Երևան, 1963, էջ 88)։ Դուրյանը հետևել է Լանտիվերտցուն։

4) ԱԲԱՍ, զորապետ Պարսից — «Ա թվականի» Դ և Է տեսիլների ոտմարկներում Արասի փոխարեն գրված է Որտելմեզ («Որտելմեզ պատերազմական փողը կը ճնշէր», «ՏՈՒՂՐԻԼ (Որտելմեզի)», որը «Բ թվական»-ի կերպարներից է։

Անձինք Բ թվականին

5) ՈՐՏԵԼՄԵԶ, զորապետ Պարսից — Մ. Ջամշյանի պատմությունում սելջուկ զորավարի անունն է Աղկան, իսկ Լանտիվերտցու աշխատությունում՝ Որտելմեզ։ Դուրյանը հենվել է երկրորդ աղբյուրի վրա։

6) ԱՂԿԱՆ, իշխան Պարսից — Պատմական աղբյուրներում սելջուկներին դավաճանած և հայերին օգնող իշխանը անանուն է։ Դուրյանը «Աղկան»-ը վերցրել է Ջամշյանի պատմությունից։ Ջամշյանը օգտվելով XI դարի հույն պատմիչ Գեորգ Կեդրինոս Միայնակյացի աշխատությունից, հավաստում է, թե սելջուկներն ունեցել են խորհրդյան մի գունդ, որի հրա-

մանաւտարն էր Աղկան անունով մեկը, որին և դերի են վերցրել մանազկերտցիները (Հ. Բ, էջ 958—959)։

7) ՏՐ ՎԱՀՐԱՄ, ծեր բահանա — Այս կերպարի նախատիպը պատմական ապրյուրներում հիշվող այն երիցն է, որ Մանազկերտի պաշարման ժամանակ ատելծից մի հարմարանք, որին դիպչելով՝ թշնամիների արձակած քարերը «ի վերա իւրեանց ընկենոյր»։

8) ... Տուղրիլ, որ բանի մր տարիե ի վեր զորաց նորանոր գումարտակներ դրկելով... նիմա ալ իմ պարսկական բանակին գլուխն անցած կուգա — Սելջուկ թուրքերը առաջին անգամ Գրիմուշի և Իբրահիմ Յանալի առաջնորդությամբ ասպատակել են Հայաստանը 1048-ին, երկրորդ անգամ՝ 1049-ին, իսկ 1054-ի արշավանքը գլխավորում էր Տուղրիլը։

9) ... Ամբատաբերդ և Արծն բաղաքներուն կործանումը — Ըստ Չամչյանի Ամբատաբերդը գրավվել է 1048-ին, իսկ Արծնը՝ 1049-ին։

10) ... Հայը չորրորդ անգամ նոգի առնե — Ակնարկը վերաբերում է հայկական երեք՝ երվանդունիների (ըստ Խորենացու), Արշակունյաց և Բագրատունյաց հարստությունների։

11) Նրե հարվածն իմս է՝ անկարելի է որ չը մեռնի — Թաթուլի այս խոսքերը և առհասարակ ամբողջ միջադեպը վավերական է։ Լաստիվերտցին գրում է. «Իսկ զմի ոմն յաղատացն կալեալ, որում անուն էր Թաթուլ որ էր այր հզօր և պատերազմաւէր, զոր առեալ տարան առ Սուլտանն։ Եւ բանզի կարեվէր խոցեալ էր զորդի Արսուրանայ Պարսից ամիրային, զոյ իրրև նանս Սուլտանն՝ ասէ. Եթէ դա սպրի, դրեզ ազատեմ, ապա թէ մեռանի, զքեզ զմա մատաղ հրամայեմ առնել։ Որ նո սակաւ աւուրց մեռաւ։ Իսկ նորա պատասխանեալ, Թէ իմ է զարկածն, չէ կենաց. թէ այլում է պայն ոչ գիտեմ։ Սուլտանն իրրև լուաւ թե մեռաւ, հրամայեաց սպանանել զնա, և զաջ բազուկ նորա հատեալ, նո տանել Արսուրանայ ի մխիթարութիւն, թէ ի վատ բազկէ չէ մեռեալ քո որդին» («Պատմութիւն...», էջ 88, տե՛ս նաև Մ. Չամչյան, Հ. Բ, էջ 995—996)։

12) ... Աղկան իշխանը ... մազաղաթի մը վրա անոնց խորհուրդները գրելով — Պատմական ապրյուրներում վկայված է, որ պարսիկ իշխաններից մեկը օգնել է պաշարված Մանազկերտի բնակիչներին «Բազում անգամ գրեալ ի բարեխի ի սլաք նետին կապէր, և պատերազմի օրինակաւ մերձենալ ի պարիսպն՝ դնեան ի քաղաքն բնկենոյր» (Լաստիվերտցի, էջ 91)։

13) ... պարսիկներ անպին բարան մը բերած են, որ 50—60 լիտր ծանրությամբ մար կը ճնեն եղեր — *Աբիսողան իրոր այդպիսի բարան բնին է. «Հրամայեց ապա կանդնել Հանդեպ այնմ բարան մեծ և պարուրելի, որ բնին էր ընդ իւր», բայց չնայած գործադրված բազում հնարքներին, չեն կարողացել «խափանել պղծության նորա ... և ոչ կարելին ելս հնարից գտանել» (Ջամչյան, Տ. Բ, էջ 979)։ Ըստ Լաստիվերտցու Մանազկերտ բնին բարանն է, որ արձակել է 60 լիտր ծանրությամբ բարեր («Պատմության...», էջ 92)։*

14) ... երբ Վեստ Սարգիսի պես... ճիվաղ մը չըլլար՝ հիմա Անի... բացումի է. — *Ակնարկը վերաբերում է Անիի իշխան Վեստ Սարգիս Այրնեցուն, որ բանից գավեր նյութեց Անիի հայ թագավորների դեմ և ի վերջո Անին հանձնեց բյուզանդացիներին։*

15) ... Գագիկ՝ որ հիմա օտարության մեջ — *Վեստ Սարգսի և Պետրոս Գետադարձ կաթողիկոսի հորդորանքով Անիի թագավոր Գագիկ Բ-ն 1044-ին մեկնում է Կ. Պոլիս, բյուզանդական կայսեր հետ բանակցելու։ Այստեղ էլ նրան հրաժարեցնում են գահից, բանտարկում, ապա ուղարկում Կապադովկիայի Բիզու բաղաքը։*

16) Մանազկերտցիի ալ Մանազկերտի առջև պարսից մեկ անպին բարանը այրեցին — *Մանազկերտի պաշտպանության ժամանակ է, որ պարսկաններից մեկը նավթի և ծծմբի հեղուկը լցրել է շշի մեջ, ձեռնածով թղթարեր, մոտեցել բարանին, այրել և փախչելով վերադարձել բազարը։ Պատմական աղբյուրներում այս անձնագոհ երիտասարդը «Հոռոմ» էր (Լաստիվերտցի), «փոնդ» (Ուռհայեցի) կամ «գազդիացի» (Ջամչյան)։ Թուրքերը գարձրել է հայ և անվանել Կոռ, որովհետև հայ մարդու օրինակը կարող էր հուզել ու վարակել ժամանակակիցներին։*

17) ... ես որ եմ, ո՛չ հայր, ո՛չ մայր և ո՛չ եղբայր ունիմ — *Այս խոսքերը պոետում են Մատթեոս Ուռհայեցու մոտ։ Պատանին Մանազկերտի բյուզանդացի կառավարիչ Վասիլին ասել է. «... ես միայն եմ, ոչ ունիմ կին կամ որդիք, որ յան պիս...» («Ժամանակագրութիւն» Վազարշապատ, 1898, էջ 120)։*

18) ... մեր առաջին հարվածը պարսպին վրա անպին վնաս մը բացավ — *Բարանը խորտակել է Անիի պարսպի մի մասը, բայց փլուզված կողմից Բշնամին չի կարողացել մտնել բազաք և Ալփասլանի հրամանով*

հանձնել է (Լաստիվերտցի, էջ 135—136, Ուռայեցի, էջ 148—149, Ջամչյան, Տ. Բ, էջ 979—981)։

19) Մանազկերտի և պարսից վրեժը պիտի առնեմ — *Մնկամայա պաշարումից հետո Տուղրիլը պարտված հեռացել էր Մանազկերտից։*

20) ... բարձին բոցին մեջ կը նետվի... — *Բոլոր աղբյուրներում պատանին բարեհաչող քաղաք է վերադարձել։ Դուրյանը Լևոնի կերպարի հերոսականությունը բնդգծելու միտումով նրան մղել է անձնազոհության։*

21) Կը զարմանամ այդ իշխանին մեր վրա ցցուցած համակրական ցույցերուն և անձնվիրությանց վրա — *Պարսիկ իշխանի՝ հայերին օգնելու շարժառիթների մասին պատմական աղբյուրներում ոչինչ չկա։ Լաստիվերտցին ասում է, որ Աստծո օգնությամբ է պարսիկն այդպես վարվել։ Դուրյանը այսպիսի «մեկնարանումից» հրաժարվել է և գտել ռոմանտիկ հիմնավորում։*

22) Ակոռն իշխանը գրած է... «Անիի արևելյան պարսպացը տակ խոռամաս կը փուռեն» — *Մանազկերտի պաշտպանության ժամանակ սելջուկ պարսպակռիվ հրամայել է «բոլոր բանդել զհիմն պարսպին» (Ջամչյան, Բ, էջ 958), իսկ այդ մասին տեղյակ է պահել պարսիկ իշխանը (Լաստիվերտցի)։*

23) ... հաջողեցավ երկարե ճանկով Ուռելմեզ զորապետը բռնել — *Որուելմեզը «սկսաւ խոհին կամէր հզօրապես ի ներքս մտանել, և հանկարծակի փիրովին երթեալ անկաւ։ Իսկ որ ի վերա պարսպին էին, ձգեալ զճանկ երկաթի՝ կալան զնա և քարշեալ ձգեցին ի ներքս պարսպին» (Լաստիվերտցի, էջ 92)։*

24) ... Տուղրիլի արշավանաց դեմ պատերազմաց ատենին բանակին մեջ զորապետ էր նա — *Տուղրիլի արշավանքի ժամանակ, ըստ Դուրյանի «Ա. Բիւրական»-ի, զորապետը ոչ թե Որուելմեզն էր, այլ Ապասը։*

25) ... Դողրան բանաստեղծներուն... — *Դողրն զավառը Հայտնի էր իր երգիչներով։*

26) Սադայել — *Սատանաների պետը։*

27) Ջորապետին գլուխը կտրելով Պարսից բանակը նետեցիր — *Մանազկերտի բյուզանդացի կառավարիչ Վասիլը իրոք «հատեալ զգլուխ նորա՝ ընկէց մերենայիւք առաջի Տուղրիլայ և զբաց նորուն» (Ջամչյան, Գ, էջ 959)։*

28) ... միջնաբերդը կը բաշվին առանց ժողովուրդը մտածելու — Անին չի պրավվիլ պավաճանությամբ, այլ իշխանների խուճապի հետևանքով։ «Իշխանք տկարամիտք՝ երկիւղիւ պաշարեալ, և՛ ի պատերազմել ձանձրացեալ, և ամենևին լքեալ փութացան ելին՛ ի ներքինարերդն, և ամբացան անդ զօրօք իւրեանց» (Չամչյան, Գ, էջ 980)։

29) ... Անիի մեջ հուսահատությունը սիրեր է — «Իսկ բազաքացիքն... տեսեալ՝ թէ քաղաքապետք իւրեանց փախեան՛ ի ներքինարերդն, յերկիւղ անհնարին ըմբռնեցան. և՛ ի տագնապ մահու պաշարեցան... Եւ չագաչս այսորիկ այնկոծեալ և շփոթեալ յոյժ՝ անկան՛ ի ծփանս խռովութեանէ...» (Չամչյան, Գ, էջ 280)։

30) ... պալատներն ու... շենքերն... թաղվեցան աւյան հեղեղներու մեջ — «... լցաւ քաղաքն լի ծայրի և ծայրի, և ճանապարհ էր մարմին սպանելոցն, զի ի բազմութենէ կոտորելոցն և յանթուելի դիականցն՝ վտակն մեծ, որ անցանէ առ քաղաքաւն, ներկանէր արեամբ» (Հաստիվևրացի, էջ 136)։

31) Բարիկա ձեռքեն կը հափշտակեն... օդին մեջ հանեցին... գետինը պիտի զարնեն... — «Ի դրկաց մարդ չափշտակեալ լինէին մանկունք՝ անոդորմաբար դբարի հարեալ...» (Հաստիվևրացի, էջ 136)։

ԹԱՏՐՈՆ ԿԱՄ ԲՇՎԱՆՆԵՐ
(էջ 373)

Ինքնագիրը պահվում է Սրուսադեմի հայկական պատրիարքարանում։ Անվանաթերթին է. «Թատրոն կամ Բշվառներ. ժամանակակից Բատերախաղ. Բատերդութիւն ի հինգ արարվածս և յ'երիս պատկերս. Պ. Դուրյան, 1871»։ Ա. Գալայճյանը վկայում է, որ Պ. Դուրյանի արխիվում «էջ 48-ի վրա կա նաև «Հառաջաբան»-ը, ուրիշ ձեռքի մը կողմե (Հ. Պարոնյան?) կատարված «սրբագրություն»-ներով» (Տ, էջ Ը)։

Պ. Դուրյանը չի կարողացել իր այս Բատերախաղը բեմադրել տալ և մահվողվել է նրա տպագրությամբ։ Դա որոշակի երևում է «Հառաջաբան»-ի հետևյալ տողերից. «Մեկ քանի տարիե ի վեր հղացած երկոցս մեջ սուրբ ժամանակից Բատերախաղն ահա կը համարձակիմ ի լույս ընծայել, իբր առաջին պտուղ իմ ճղանց, զոր կուզեմ նվիրել ազգիս»։ Գրողի վերջին նամակը ևս ցույց է տալիս, որ նա իր «Թատրոն կամ Բշվառներ»-ի լույս

ընծայումն ուղեցել է իրագործել Ա. Լուսինյանի ջանքերով. «Արդյոք Զարդարյանի հետ խոսեցար վերջի հեղինակած գործուքս տպագրության համար»,—գրել է նաև Հրատարակությունը դլուխ չի եկել և Դուրյանը ստիպված թատերախաղի ինքնագիրը վաճառել է Հակոբ Վարդովյանին (տե՛ս Ս. Սիմոնյանի հրապարակած նյութերը, «Միության», 1959, թիվ 32 և 1961, թիվ 49—52)։

Ե. Դուրյանը Ա. Զոպանյանին գրած 1891-ի օգոստոսի 30-ի նամակում տեղեկացրել է, որ թատերախաղն ավարտվել է 1871-ի հունվարի 3-ին, (ԲՆՀ, 1967, № 1, էջ 170), իսկ մի քանի օր անց Մ. Մինդրատյանցի միջոցով ճշդրտել է. «Թատրոն ևվ (պետք է լինի՝ «կամ» — Ա. Շ.) Բըշվառները» դեկտ. 18-ին սկսած և հունվար 3-ին լմնցուցած էր» (ԲՆՀ, 1968, № 1, էջ 143)։

Առաջին անգամ լույս է տեսել ՏԲ-ում, երկրորդ անգամ՝ ՏԲՆԴ-ում և երրորդ անգամ, առավելապես ըստ ՏԲՆԴ-ի տեքստի, վերահրվել «Երկիր»-ում (1947)։

Տպագրվում է ըստ առաջին հրատարակության։

«Հառաջարան»-ի առթիվ Բ. Էքսերճյանը նկատել է. «Պետրոս Դուրյան դրած է սույն հառաջարանը, զոր նախորդ հրատարակիչը տպագրելու ձեռնարկած ատեն պահելով հրատարակած են» (ՏԲՆԴ, էջ 72)։ Ի դեպ, երուսաղեմի՝ Պ. Դուրյան արխիվում պահվող «Հառաջարան»-ի երկրորդ օրինակի վրա կատարված «սրբագրություններին» հեղինակը ոչ թե Հ. Պարոնյանն է, ինչպես ենթադրում է Ա. Դալալեճյանը, այլ ամենայն հավանականությամբ Բ. Էքսերճյանը, քանի որ այդ «Առաջարան»-ը ՏԲՆԴ-ում իրոք լույս է տեսել հապավումներով։

Նախորդ բոլոր ժողովածուներում թատերախաղի պատկերների թիվը համարվել է «չինն»; որ վրիպակ է, իսկ վերնագրից հետո բացակայում են «ժամանակակից թատերախաղ» բառերը։ ՏԲՆԴ-ում խորագիրն է «Թատրոն», իսկ «Հառաջարան»-ում և բուն տեքստում թույլ են տրվել դրաբարնական բնույթի կրճատումներ ու փոփոխություններ, որոնց վրա առաջինը ուշադրություն է հրավիրել Վ. Թերզիբաշյանը։ «... Այն ամենը,—գրել է նա,—ինչ կարող է ընթերցողին հիշեցնել բանակ, զենք, պատերազմ և նման դաղափարներ արտահայտող բառերը կրճատված են ... Հայ վաճառական Մուրատովի, ըստ երևույթին անմեղ, ազգանունը փոխվել է Դու-

կատվ... դրա բացատրությունը հետևյալն է։ Արյունարբու Սուլթան Համիդը 1876 թ. փաստորին դահընկեց արավ իր ավագ եղբորը՝ սուլթան Մուրատին, հայտարարելով նրան խելագար և արգելափակելով պալատներից մեկում՝ սպանից վարձկան մարդասպանների ձեռքով։ Ահա թե ինչու իր հարազատ եղբոր արյան մեջ ձեռները թաթախած բռնակալը չէր կարող թույլ տալ, որ իր գոհի անունը հետավոր կերպով անգամ հիշեցնող մի ակնարկ, բառ կամ հնչյուն երևա մամուլում կամ գրականության մեջ» («Պետրոս Դուրյան», էջ 85)։

Ստորև ցույց ենք տալիս մնացած բոլոր հապավումներն ու փոփոխությունները.

ՏԲՆԴ

Հ ա ռ ա ջ ա բ ա ն

1 ժպիտներ 2 թատերգություններ 3 (Այտենդից մինչև պարբերության վերջը բաց է թողնված)։ 4 (Պարբերությունը չի տպագրված)։

Անձինք

1—3 (բաց են թողնված)։

Ա ր ա ր վ ա ծ Ա.

1 (Նախադասությունը դուրս է թողնված)։ 2 կամ։ 3 գրիչը [նորեն]։ 4 մ'էր։ 5 վայրկյաններում։ 6 (բացակայում է)։ 7 նեղացնես։ 8 (բացակայում է)։ 9 բեզ։ 10 գրուշեն։ 11—12 գրուշ։ 13 գրուշը։ 14 կորանցնես։ 15 գրուշ։ 16 յուր։ 17 գրուշը։ 18 գրուշ։ 19 քեզի։ 20 նույնպես [և]։ 21 (բացակայում է)։ 22 հրեի։ 23 (Նախադասությունն ավարտվում է)։ 24 հարցնել։ 25 առաքյալին։ 26 (Այտենդից մինչև ե տեսիլի վերջը բաց է թողնված՝ փոխարենը տրված է հետևյալ բացատրությունը. «(Թողմա՝ յուր ջշվառություններն հարկադրյալ և Մակարի շլացուցիչ խոստումներին հրապուրված՝ կը հավանի յուր աղջիկն կեղծ ամուսնությանը տալ նորա տիրոջ, Նահապետոֆի)»)։ 27 տղու [մը]։ 28 (բացակայում է)։ 29 կրսեր։ 30—32 (բացակայում են)։ 33 այսպես։ 34 (Նախադասությունն ավարտվում է)։ 35 (բացակայում է)։

Ա ր ա ր վ ա ծ Բ

1—2 ի՛նչ գեշ օդ։ 3 ի՛նչ գեշ օդ։ 4 այս։ 5 [և] ձրի։ 6 (Նախադասությունն ավարտվում է)։ 7 (բացակայում է)։ 8 էր։ 9—10 (բացակայում

են)։ 11 Նորանոր։ 12 Նոր։ 13 (բացակայում է)։ 14 (Նախադասությունն ավարտվում է)։ 15 (բացակայում է)։ 16 որ։ 17 նոր։ 18 նոր։ 19 դրության։ 20 Համեմատ։ 21 ժողովրդյան։ 22 հին։ 23 դիտողության։ 24 ձեռքը։ 25 (Այս և հաջորդ տրամախոսությունը բացակայում է)։ 26 Ա՛հ։ 27 (Այս և հաջորդ տրամախոսությունը բացակայում է)։ 28 խումբիս։ 29 մ՛է։ 30 կարդացածդ։ 31 (բացակայում է)։ 32 թատերախաղդ։ 33 (բացակայում է)։ 34 ո՛հ։ 35 ի թև։ 36 (բացակայում է)։ 37—40 (բացակայում են)։ 41 (Այս և հաջորդ տրամախոսությունը բացակայում է)։ 42 պահասություն։ 43 սույն։ 44 (բացակայում է)։ 45 ես։

Ա ր ա ր վ ա ծ Գ

1—2 (բացակայում են)։ 3 բան։ 4 (բացակայում է)։ 5 հաստատեց։ 6 ստակն։ 7—8 (բացակայում են)։ 9 մարդ։ 10 (բացակայում է)։ 11 [Բայց] մեքեն։ 12 եմ։ 13 բայց։ 14 ազջիկը։ 15 (բացակայում է)։ 16 մարդն։ 17 զմեզ։ 18 աթոռներ։ 19 ծանոթ։ 20 երևելիներուն։ 21 (բացակայում է)։ 22 անձերու։ 23—25 (բացակայում են)։ 26 մը [կը]։ 27 պրականեր։ 28 մտածումներին։ 29 քաղաքագետներու։ 30—32 (բացակայում են)։ 33 ուրիշ։ 34 նկարագրել։ 35—36 ահարկու։ 37 խաղերով։ 38 (բացակայում է)։ 39 Ա[և]։

Ա ր ա ր վ ա ծ Դ

1 (բացակայում է)։ 2 մեջը։ 3 քեզի։ 4 (Նախադասությունն ավարտվում է)։ 5 խավին։ 6 (բացակայում է)։ 7 տակ։ 8—18 (բացակայում են)։ 19 [կը] պակսի։ 20 թատերասերը։ 21 անցավ։ 22 (Պարբերությունն ավարտվում է)։ 23 գքեզ։ 24 ծափահարություններով։ 25—27 Հանդիսականը։

Ա ր ա ր վ ա ծ Ե

1 չկրցա։ 2—7 (բացակայում են)։ 8 ծովեզերքները։ 9 Թե։ 10 անկե։ 11 ասկից։ 12 Հարստության։ 13 տը։ 14 (բացակայում է)։ 15 գվարճությանս։ 16 պատճառ։ 17 չեն։ 18 գերիզմանոցները։ 19 վայրկյանն։ 20 ուսկից։ 21 (բացակայում է)։ 22 անունը։ 23 (բացակայում է)։ 24 Թումա [է]։ 25 (բացակայում է)։ 26 մահվան։

Պ. Դուրյանի մահվանից ավելի քան քսան տարի անց, երբ Թուրքիայում հայկական ներկայացումներն արգելված էին, հարուցվեց «Թատրոն կամ Թշվառներ»-ի բեմադրության հարցը։ «Արևելք» օրաթերթը 1893-ի մայիսի 15-ին (թիվ 2784) հայտնում է, որ Տիրան Փափազյանը նախորդ օրը (14-ին) կարողացել է թատերախաղի ներկայացման թույլտվություն ստանալ։ Դրան օգնել են Ռ. Էքսերճյանը և հրատարակիչ Պ. Պալենցը։ Նախատեսվել է, որ «Թատրոն»-ը բեմադրելու է Մնակյանի խումբը, տրվելու է երկու ներկայացում՝ Սկյուտարում և Բերայում, իսկ հասույթը հատկացվելու է Դուրյանի շիրիմի բարեկարգմանը։ Սակայն շուտով «Հայրենիք» օրաթերթում (մայիս 26, թիվ 488) տպագրվում է մի տեղեկություն, թե Դուրյանի հիշատակը հարգելու համար հարկ չկա «գինը քիչ տալ իբր ամենեն տկար կողմով, այն է իբր թատերգակ. ատիկա գինն ավելի պզտիկցնելու միայն պիտի ծառայեր ալ պ. Մնակյան... այդ գործը... շատ տղայական գտնելով և շատ քիչ բեմական, որոշած է չխաղալ այն»։ Նույն օրը «Արևելք»-ը (թիվ 2793) հրապարակում է Տ. Դ. Փափազյանի, Պ. Պալենցի և Ռ. Էքսերճյանի նամակը, որով նրանք մեղադրում են «Հայրենիք»-ին թատերախաղին տրված դնահատականի համար և հայտնում են, որ եթե իսկապես հրաժարվում է Մնակյանը, ապա կան Թասուլաճյանի ու Այիքսանյանի թատերախմբերը։ Մ. Մնակյանը, «Արևելք»-ի մայիսի 28-ի թիվ 2795-ում հանդես եկավ «Սխալ հասկացողություն մը» նամակով, որտեղ հարկ համարեց բացատրել իր վերաբերմունքը։ Դուրյանը, նրա կարծիքով, մեծ է որպես բանաստեղծ, իսկ նրա թատերախաղերում «ցոլացումներ կան, բայց անկատար»։ Գալով բուն խնդրին, Մնակյանը գրում է. «Այո՛, Թատրոն կամ Թշվառներ թատերկը ունի յուր բերի կետերը թե նյութի և թե կապակցության կողմանե, բայց ո՞վ չգիտեր, թե այդ գործը բարեհիշատակ հեղինակին առաջին երկն էր, ինչե՞ր պիտի ի լույս բերեր, եթե վերահաս մահը չդրկեր այդ բարձր տաղանդեն։

Այո՛, ես ըսած եմ թե սույն թատերական երկը ի հիշատակ այդ մեծ հանճարին ի բեմ հանելը այնչափ մեծ պատիվ չբերեր, բայց չեմ ներկայացներ չեմ ըսած ... Ես առաջին օրը Պ. Պալենցի ըսած եմ, որ այս գործը որ թուղ մը կուգե, և իրոք ալ այնպես է. այս ալ չվիրավորեր հանճարավոր բանաստեղծին վարկը, վասնզի լավ գիտեմ, որ եթե ինքն ալ կենդանի ըլլար՝ նույնը պիտի խոստովաներ և ըներ»։

«Հայրենիք»-ում զետեղված լուրը վրդովել է նաև Գրիգոր Զոհրապին, որը իր «Մոռցվածներ» հոդվածում («Մասիս», Հանդես, 1893, մայիս 29, թիվ 3993, էջ 322) գրել է.

«Թող ուրիշներ խոչընդոտ դնեն... Դուրյանը պզտիկ թատերգակ գտնեն և Մնակյանը՝ մեծ քննադատ. կը հավտանք, որ այս պզտիկ չարութիւնները անզոր պիտի մնան. Դուրյանի Թատրոնը իր արժանավոր ներկայացումը պիտի ունենա...

Դժվարահաճ միտքեր Դուրյանի Թատրոնին քննադատները Հանդիսացան. առանց վարպետ մը բլլալու թատերգական ասպարեզին մեջ կըրնանք հայտարարել սակայն, որ բանաստեղծին այս գործը այդ քննադատներու պզտիկ կշիռեն շատ մեծ է դեռ. այդ խաղին հզացումը միայն գյուտ մըն է, որ Դուրյանի անգամ պատիվ կը բերե. ոճը կրնա պակասութիւններ ունենալ, տեսարաններու բաժանումները կրնան բարեփոխութիւններու կարոտիլ, բայց շենքը հաստատ ու գեղեցիկ է. ամեն պարագայի մեջ նոր բլլուկ թատերդութիւնից նման անշահ խոսակցութիւնից շարք մը չէ Դուրյանի գործը. ազամանդը կրնա հղկվելու պետք ունենալ և ատոր համար ներելի՛ է միթե հոդին մեջ ձգել զայն. և եթե ստույգ է, որ պ. Մնակյան «տղայական» գտած է զայն, իրավունք կուտա մեզի բսելու բոլոր դերասաններուն ինչ որ ատենով ֆրանսացի ակնվկաններուն բսին, երբ իրեն Հայրենիքը վերադարձան անոնք։

«Այս մարդիկը ոչ բանն մը սորված են, ոչ ալ բան մը մոռցած»։

Ի վերջո վճիռը հարթվում է, և «Ծաղիկ» հանդեսը (1893, 19 Հունիս, թիվ 23) ծանուցում է, որ Հունիսի 20-ին տեղի է ունենալու առաջին ներկայացումը «Մասիս»-ի խմբագրական ծանոթութիւնից (1893, Հունիս 26, թիվ 3997, էջ 386) իմանում ենք, սակայն, որ ներկայացումը հետաձգվել է Հունիսի 27-ին։ «Արևելք» օրաթերթը գետեղել է հետևյալ թատերազդը (1893, Հունիս 26, թիվ 2819).

ԹԱՏՐՈՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ, ՍԿՅՈՒՏԱՐ ՊԱՂԱՀԱՐ ՊԱՇԻ

1893 Հունիս 27, կիրակի ցերեկ ժամը ճիշտ 7-ին

Արտաքո կարգի շքեղ ներկայացումն

Օամ. թատերական խմբին կողմանե

Առաջնորդութեամբ

պ. Մ. Մնակյանի

Հայերեն լեզվավ

Առաջին անգամ ներկայանալի

ԹԱՏՐՈՆ

Թատերգություն 5 արար 8 պատկեր

Հեղինակություն

Բարեհիշատակ Պետրոս Դուրյանի

Ա Ց Ե Ի Ց

Ղուկասոֆ *(կեղծանունը Թովմա)* — *պ.* Մնակյան
Վարդուհի *(անոր աղջիկը)* — *տ.* Պինեմճյան
Եղուարդ *(անոր որդիքը)* — *պ.* Պինեմճյան
Պողյանց *(տնօրեն թատրոնի)* — *պ.* Ալիքսանյան
Գեորգ *(դրամատիրոջ, նահապետոֆ, անվանյալ)* — *պ.* Յալտըզճյան
Մակար *(սապատող)* — *պ.* Ջափրաստճյան
Վանագճյան *(դերասանապետ)* — *պ.* Պենլյան
Ճեորճի — *պ.* Պալբազարյան
Սալոմոն — *պ.* Սիսակ
Ա. դերասան — *պ.* Հոլաս
Բ. դերասան — *պ.* Առշակ
Զիչիլ *(դերասանուհի)* — *տ.* Պենլյան

Թատերգության ներկայացումն վերջ, Պ. Դուրյանի «Իմ մահը» քերթվածը պիտի արտասանեն պ. Տիրան Չըրաքյան և նվագածուց խումբը պիտի նվագի զայն ընտիր եղանակով»։

Հունիսի 27-ին նախատեսված ներկայացումը տեղափոխվում է Հուլիսի 11-ին։ «Վատահարար ծանուցված է մեզ,— գրել է «Ծաղիկ»-ը,— Թե վարչ կյուրակն, պիտի կատարվի վերջապես ողբացյալ Պետրոս Դուրյանի Թատրոն անուն թատերախաղին ներկայացումն Սկյուտարի մեջ։ Ժողովուրդն այս անգամ կրնա ներկայանալ թատրոնին դուռը, ուրկե հուսա-

խար ետ զարձած էր նախընթաց կյուրակեներըն» (1893, 10 Հուլիս, թիվ 26, էջ 203)։ Ներկայացումն իրոք տեղի է ունեցել և «Մասիս»-ը գրել է (1893, 17 Հուլիս, թիվ 4000, էջ 146).

«Կիրակի օրը Սկյուտարի Թատրոնին մեջ տեղի ունեցավ Դուրյանի Թատրոն անուն թատերախաղին ներկայացումը ակնկալված հաջողությամբ, Մնակյան թատերախմբին կողմե։ Ոպերացյալ բանաստեղծին համար անոր ջերմեռանդ համակրողներն ամեն կողմե վազած եկած էին՝ հաշակելու համար անոր թատերական տազանդին ալ բուրումնավետ հյուրը։ Տնեղոտ ծափերով իջավ վերջին վարագույրը։ Բնազդությանը ընդառաջ հոդված («Դուրյանի «Թատրոն»-ը. կիրակի օրվան ներկայացումը») գրիչից Վահե Բաշալյանը («Հայրենիք», 1893, 13 Հուլիս, թիվ 515)։ Այս թատերախոսականից իմանում ենք, որ դահլիճը լեփլեցուն է եղել, հանդիսականներ են էկել նաև Նիկոմեդիայից, Պարտիզակից, Հ. վարդովյանը ներկայացմանը հետևել է արցունքոտ աչքերով։ Լ. Բաշալյանը տեղեկացնում է նաև, որ Մնակյանը «ամբողջ տետրաններ հատցված էր, տակնուվրա ըրած տետրաններու կարգը, հետիոտն առաջին ըրած և առաջինն հետին, և այս իսոնությունն հառաջ եկած խճողակը պարմացույց գմիզ, շվարեցուց և ցավով ու տխրությամբ համակեց»։ Լ. Բաշալյանի եզրակացությունն այն է, որ նրա «Թատերախաղին ներկայացումը կատարյալ հուսախաբություն մը եղավ», ապա պատճառը թատերախաղն է, որը «տղայական փորձ մըն է», ինքնությունները այնքան շատ են, որ «թատերախաղի անունը պետք կուտան այդ գրվածքին»։

1) ... նյութը թեպետև նշմարիտ դեպքեր կը պարունակե — Թատերախաղում ինքնակենսագրական բնույթի մի շարք տեղեկություններ կան։ Մասնավորապես Ե. Դուրյանի խոստովանությամբ «Թատրոն կամ Թշվառներուն» մեջի էդուարդով ինքգինքը ներկայացնել ուզած է, և թե այս միջադեպը ակնարկող կետ մը կա մեջը» (ԲՍՀ, 1968, N 1, էջ 146)։ Վ. Թեքչիբաշյանը ևս ցույց է տվել, որ «էդվարդն ընդհանուր գծեր ունի հեղինակի հետ» («Պետրոս Դուրյան», էջ 55—59)։

2) ... թատերախաղը տեսարանի վրա հանդիսացնելն առաջ տպագրության տալուս ... մասին այնպիսի պատճառներ կան — «Թատրոն կամ Թշվառներ»-ը բնագրության չընդունվեց, որովհետև արևմտահայ թատ-

րոնում դեռևս որևէ «ժամանակակից թատերախաղ» չէր ներկայացվել, պատմական թեմատիկան դուրս էր մղել արդիականը։

3) ...էռնանի թատերաշինդեսին պես չի պիտի հեղափոխե հասարակության գաղափարն ու զգացմունքը — Վ. Հյուգոյի «Էռնանի» դրաման բեմադրվեց 1830-ի հեղափոխության նախօրյակին և նշանավորեց ռոմանտիզմի հաղթանակը կլասիցիզմի դեմ։ Դրամայում հեղինակը հակադրվելով կլասիցիստներին, առաջին անգամ վեհ դատափարների արտահայտիչ դարձրեց ավազակին, որ պատրաստ էր հանուն ազատության ու հավասարության «Էռնանի»-ն բեմադրվել է նաև արևմտահայ թատրոնում։

4) ...Լամարթինի սիրավեպ «Ռաֆայել»-ը — Լամարթինն նշված վեպը լույս է տեսել 1849-ին, հայերեն առաջին անգամ հրատարակվել է 1867-ին՝ Զմյուռնիայում, Գր. Չիլինկիրյանի թարգմանությամբ։

5) ...ինքզինքդ Հուլիայի տեղ երևակայեցիր — Հուլիան (Գր. Չիլինկիրյանի թարգմանությունում՝ Ժյուլի) «Ռաֆայել»-ի հերոսուհին է, մահանում է։

6) Ես Ռաֆայելի չափ գեղեցիկ չեմ — Լամարթինն իր հերոսին նկարագրում է փորր-ինչ դունատ, մելամաղձոտ, խոհուն, ազնվամորթ, գեղեցիկ բնթանով, երկնագույն, լուսավոր և փորր-ինչ խոնավ աչքերով, սևաթույր մազերով, որի ճակատը... «սակավ ինչ կամարաձև գմբեթ մ'էր»։

7) Դուրուշ — Տաճկական դրամ, հավասար էր 40 փարայի, կամ 0,227 ռակի ֆրանկի։

8) ...Թովմա առաքյալի չափ դժվարահավատ չեմ ... — Քրիստոսի 12 աշակերտներից մեկը՝ Թովմա առաքյալը նախապես չէր հավատում Հիսուսի հարությանը, մինչև որ չշոշափեց նրա վերքերը։

9) ...ազդ մ'ալ մ. լրագրին ղրկվեցավ — «Ակնարկում է անշուշտ Յուլյանի «Մասիս» օրաթերթը» (ծ. Հ. Անտոյան, Երկեր, էջ 331)։

10) ...Ռուսո շիկահեր բսել է — Ռուսո անունը ֆրանսերեն գրվում է Rousseau, *իսկ* rousse *նշանակում է շիկահեր։*

11) ...Մոլիեր ցեխի ալ նշանակություն ունի ... — Մոլիերը (Molière) *ֆրանսիացի թատերգակ Ժան Բատիստ Պոկլենի կեղծանունն է։*

12) Ֆրանք — Ֆրանսիական դրամական միավոր, 1803—1873 թթ. մեկ ֆրանկը պարունակում էր մոտ 0,3 գրամ ոսկի։

13) ...դերասանաց հատկացյալ սենյակներեն մեկը կրնաս բնակիլ —

«Դերասանապետ Վարդովյանն իր խմբում դերասաններ գրավելու համար, բնակարան չունեցողներին անկյակ էր հատկացնում թատրոնի շենքում։ Այս իրողությունը արտացոլվում է «Թատրոն կամ Թշվառներ» դրամայում» (Ծ. Վ. Թերզիբաշյանի, «Պետրոս Դուրյանը», էջ 60)։

14) Գուցե Լուիզա Միլլերի դերն է... Ֆերդինանդի դերն ալ... — Լուիզա Միլլերը և Ֆերդինանդը Շիլլերի «Սեր և խարդավանք» թատերախաղի գլխավոր հերոսներն են։

15) Կկյալ Ֆանթինն եմ — Ֆանտինը վ. Հյուգոյի «Թշվառներ» վեպի հերոսներից է։

ՏԱՐԱԳԻՐ Ի ՍԻՊԵՐԻԱ

(էջ 461)

Ինքնագիրը պահվում է Երուսաղեմի հայկական պատրիարքարանում։

Սիմոն Սիմոնյանը 1959-ին Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքում գտել է այս «բոլորովին անհայտ» թատերախաղը։ «Մեղի համար ևս,— գրում է նա,— անսպասելի էր Պետրոս Դուրյանին նոր ստեղծագործության մը հայտնաբերումը. մենք ևս կասկածներ ունեցանք այդ երկի Դուրյանի պատկանած ըլլալու մասին։ Բայց բարեբախտաբար կարելի եղավ գտնել հետևյալ շատ մանրատառ արձանագրությունը, որ բնագրիչին կողմե չնչված էր և որ դժվարավ կարելի եղավ կարդալ շնորհիվ պրոֆ. Հ. Կյուլոյանի. «Ես Պ. Դուրյան գողտրիկ բերթող մ'եմ, որում ի Տարագիր Սիպերիա նկարեցի (անընթնանելի է այս բառը) ողբերգություն ի մի արարված» («Մասյաց», 1959, 19 սեպտեմբեր, թիվ 32, էջ 3)։ Ավելի ուշ Ս. Սիմոնյանը հրատարակեց այս թատերախաղը, իսկ հիշված «արձանագրությունը» նա մեջ բերեց առանց «նկարեցի» բառի («Մասյաց», 1961, 31 դեկտեմբեր, թիվ 49—52)։ Ասենք, որ այդ տողերը հազիվ թե գրած լինի Պ. Դուրյանը, անհավանական է, որ նա իրեն համարեր «գողտրիկ բերթող»։ Բայց առանց դրանց էլ անտարակուսելի է, որ «Տարագիր ի Սիպերիա»-ն հեղինակել է Պ. Դուրյանը։ Ս. Սիմոնյանը հավատացնում է, որ ինքը աչքի է անցկացրել Պ. Դուրյանին և Մ. Նալբանդյանին նվիրված «բոլոր գործերը» և «տող մը իսկ հիշատակություն» չի գտել այդ թատերախաղի մասին։ Բայց ահա թե տարիներ առաջ ինչ է գրել Հակոբ Օշականը. Նա «Համապատկեր արևմտահայ գրականության» աշխատության երկրորդ հատորում («Ռոմանթիքներ»,

Սրուագրեմ, 1953) թվարկելով դրոդի թատերախաղերը նշել է նաև. «Միմայել Նալպանտյանց զոր տեսած եմ սեպտրյալ վիճակով Դուրյանի ձեռագիրներուն մեջ» (էջ 326)։ Որ իսկապես այդ թատերախաղը պատկանում է Պ. Դուրյանի գրչին, ցույց է տալիս նաև հետևյալ կարևոր վկայությունը Մ. Մինրդատյանցը Ս. Զոպանյանին գրած 1891-ի սեպտեմբերի 23-ի նամակում խոսելով Դուրյանի թատերախաղերի մասին, ի միջի այլոց նաև նկատել է. «Վերջարանի պես բան մը ունի, որու անձինքն վերացական են. ազատություն, մահ, իշխանություն են։ Առոր առջի ձևը ուրիշ է եղեր, այդ անձերուն մեկը Նալբանդյանցն է եղեր, որ ի Սիպիր աքսորված է եղեր։ Տեսա հին ձեռագիրը, բայց միայն տեսա, զոր հետո փոխեր է և իր վերջնական ձևին վերածեր է, բայց ինձ կու թվի, թե առջի ձևը ավելի ազեկ եղած ըլլա» (ԲԵՀ, 1968, № 1, էջ 147)։ Ինչպես տեսանում ենք, Մ. Մինրդատյանցը հավաստում է, որ ինքնագիրը կրել է փոփոխություններ, «առջի ձև»-ում եղել է Նալբանդյանի կերպարը, «հին ձեռագիր»-ը Դուրյանը փոխել է։ Այդպիսի մատնանշում է անում նաև Ս. Սիմոնյանը։ «Կարևոր կը նկատենք հայտնել,— գրում է նա,— որ հեղինակին (Դուրյանի) կամ բեմադրիչին (Տիգրան Գալեմճյանի?) կողմե ջնջված բազմաթիվ տողեր ու բառեր կային, զորս մենք վերականգնեցինք և շեղատառով (արամյան) նշանակեցինք» («Սփյուռք», 1961, թիվ 49—52)։ Դժվար է որոշակի ասել, ո՞ւմ ձեռքով են արված ջնջումները՝ հեղինակի, թե՞ ուրիշի, բայց առանց այդ ջնջումները վերականգնելու, թատերախաղը աղճատում է։ Հավանական է, որ դրանք իսկապես «բեմադրիչի կողմից» են արված (Մ. Մինրդատյանցը միայն թեռւցիկ ուշադրություն է դարձրել այդ փոփոխություններին և նրա կարծիքը տվյալ դեպքում վճռորոշ չի կարող լինել)։

«Տարագիր ի Սիպերիա»-ն ունեցել է մեկ տպագրություն («Սփյուռք», 1961, թիվ 49—52)։ Ս. Սիմոնյանն արել է տեքստային 61 թվային նշում, որոնք իր խոստովանությամբ «պիտի ընկերանան բնագրին, երբ գայն առանձին հրատարակենք»։ Թատերախաղի այդպիսի հրատարակություն ցարդ չի իրագործվել։

Տպագրվում է ըստ «Սփյուռք»-ի տեքստի, նույն ակզբունքով (ընդգծումները ցույց են տալիս ջնջված տողերն ու բառերը), առանց բացատրվելիք թվանշանների։

Թատերախաղի ինքնագրում գրության տարեթիվը չի նշված։ Ս. Սի-

մոնյանը ենթադրում է, որ «Տարագիր ի Սիպերիա»-ն հեղինակված է «Նալբանդյանի մահվան թարմ տպավորության տակ, 1866-ին», Մ. Նալբանդյանի հիշատակին նվիրված միջոցառումների հետ է կապում թատերախաղի ստեղծումը Ս. Բազյանը. «Այդ ամենի տպավորության տակ պետք է, որ Դուրյանը գրած լինի «Տարագիր ի Սիպերիա» նորահայտ գրաման՝ գլխավոր հերոս դարձնելով Նալբանդյանին» (Հ. Սրվանձյան. Հրապարակախոսություն, Երևան, 1960, Առաջարան. էջ 33)։ Ավելի որոշակի է արտահայտվել Դ. Ստեփանյանը. նախապես, թատերախաղին նվիրված հոդվածում, նա «Տարագիր ի Սիպերիա»-ն համարել է «գրական առաջին փորձ» («Գրական թերթ», 9 մարտի, 1962, № 10), իսկ «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» աշխատությունում (հ. առաջին, Երևան, 1962), դիտել է «ժամանակագրական կարգով» երկրորդ թատերգական ստեղծագործությունը (էջ 405)։ Հիշեցնելով, որ 1867-ի ապրիլի 11-ին Կ. Պոլսում տեղի է ունեցել Մ. Նալբանդյանի հիշատակին նվիրված երկրորդ երեկույթը, բանասերը նկատում է. «Դուրյանը պիեսը պետք է գրած լինի դրանից հետո։ Հնարավոր է, որ դա լինի Դուրյանի դրամատիկական առաջին գործը. հնարավոր է, որ գրված լինի «Վարդ և Շուշան»-ից հետո 1867—68 թ.թ. թատերաշրջանում» (Նույն տեղը, էջ 408)։

Ս. Սիմոնյանը գրում է. «Այս թատերախաղը ներկայացնելու փորձ եղած է. այդ մասին կա փաստ, երբ դերակատարներու («Անձինք») անուններու առջև մատիտով նշանակված են անունները հետևյալ դիրքանշանների. Պետրոս Աղամյան (Միքայել Նալպանտյան), պ. ... Վարդովյան (Հայաստան), պ. ... Պենկլյան (Սիպերիա), պ. ... Վարդան (Ժամանակ), պ. Տիգրան ... (Մահ), օր ... (Ազատություն)» («Սփյուռք», 1961, թիվ 49—52)։ Այս անունները «հետո ջնջված են» («Սփյուռք», 1959, թիվ 32)։

«Տարագիր ի Սիպերիա»-ի բեմադրության մասին տեղեկություններ չկան։ Թատերախաղում Սիպերիան (Սիբիր) օգտագործված է որպես բրոնեակալության, տարիքի խորհրդանիշ։

1) Ազատություն գոչեցի — Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության 5-րդ տան առաջին տողն է։ «Ազատություն»-ը առաջին անգամ լույս է տեսել Կ. Պոլսի «Մեղու» թերթում, 1860-ին։

ՏԻԳՐԱՆ Բ

(էջ 481)

Ինքնագիրը չի պահպանվել։

1872-ի ժողովածուի Առաջաբանում ասված է, որ «Դուրյանի ձեռագրաց մեջ» այլ հեղինակությունների թվում կա նաև «Տիգրան Բ. մեծահանդես ողբերգություն հինգ երեկույթի բաժնված» ստեղծագործությունը, որը մյուսների նման չեն կարողացել տպագրել նյութական միջոցների բացակայության պատճառով (էջ Գ)։ Այս վկայությունից կարելի էր եզրակացնել, թե «Տիգրան Բ»-ն ավարտված գործ է։ Բայց մի վավերաթուղթ ցույց է տալիս, որ այդ ողբերգաշարը պետք է ունենար երեք «երեկույթ», որից հեղինակն ավարտել է միայն երկուսը։ Խոսքը «Օրագիր...» ԹԵրթի խմբագրությանն ուղղված Պ. Դուրյանի 1871-ի սեպտեմբերի 30-ի նամակի մասին է, ուր կարդում ենք. «... Տիգրան Բ. անուն երեք երեկույթի բաժնված և միայն երկու երեկույթը շարադրված ազգ.[ային] թատերախաղ մ'ալ ունիմ պ. Տիգրանի ճանկը նույնպես անցած, որուն անձինքը և տեսարանները կը տեսնվին պ. Ռ. Սեմենֆյանի հեղինակած Հիսնամյա պատերազմ Հայոց ընդ Հռովմայեցիս անուն խաղին մեջ...» (հիշյալ նամակը և համապատասխան ծանոթությունները տե՛ս սույն հրատարակության առաջին հատորում)։

Ինչպես տեսնում ենք. «Տիգրան Բ»-ի երկու «երեկույթները» վաճառվել են Տ. Գալեմճյանին։ Ս. Սիմոնյանի հրապարակած նյութերից ևս երևում է, որ մի քանի այլ ստեղծագործությունների հետ միասին թատերական հուշարարը Պ. Դուրյանից գնել է նաև «Փիննա» և «Աստղ» ողբերգությունները, որոնց առջև դրված է միացման նշան { և գրված՝ «Տիգրան Բ» («Սփյուռք», 1959, թիվ 32 և 1961, թիվ 49—52)։ Պարզ է, որ «Փիննա»-ն և «Աստղ»-ը հենց այն «երկու երեկույթ»-ն են, որոնց մասին խոսել է Պ. Դուրյանը։ Ա. Չոպանյանին գրած 1891-ի օգոստոսի 30-ի նամակում Ե. Դուրյանը ասում է, որ ինքն ունի «Տիգրան Բ»-ի առաջին երկու երեկույթներն» (ԲՆՀ, 1967, № 1, էջ 167)։ Գրողի եղբայրը ձեռք է բերել ոչ թե ինքնագրերը, այլ ընդօրինակություններ։ Այդ մասին ուղղակի հիշատակություններ կան Մ. Մինդրատյանցի 1891-ի սեպտեմբերի 23-ի

նամակում. «... Տիգրանի երկու երեկույթներուն ընդօրինակությունները, զոր ապա ձեռք անցուցեր է (ն. Դուրյանը—Ա. Շ.) տվավ ինձ և կարդացի։ Այդ մասին զատ պիտի գրեմ, միայն այժմեն սակաւիկ ըսեմ, որ Տիգրանի երկու երեկույթները բնավ արժեք մը չունին, emphatigue (վերամբարձ—Ա. Շ.) արարվածներ, անհամ մեծախոսություններեն բաղկացյալ բաներ են» (ԲՀՀ, 1968, № 1, էջ 147)։ Եվ իսկապես, երեք օր անց Մ. Մխիթարյանցը ընկերոջը գրում է. «... Տիգրանի երեկույթները» այնչափ <վար են>, որ Եղիշե վ.[արդապետ] տված առենը բավ, թե «կը կասկածիմ, որ Դուրյանին գրածը ըլլա»։ Բայց երբ կարդացի, մի քանի կետերն մատնեցին, թե Դուրյանինն են ասոնք ալ։ Ասոնց նյութն ալ ամփոփ չէ, որոշ նպատակ մ'ալ չի կա, ամփոփ վերջավորություն մ'ալ չը կա։ Ինչևէ, անոնց նյութերն ալ յուզարկեմ քեզ, բայց անոր պես չէ, համառոտ, խիստ համառոտ, ինչպես գրած էիր վերջին նամակիդ մեջ։ Ասոնց մեջ բնավ հիշատակելի գեղեցիկ կտոր մը չես գտներ» (նույն տեղում, էջ 150)։ Ստեղծագործության մասին իր բացասական կարծիքը Մ. Մխիթարյանցը կրկնել է նաև սեպտեմբերի 30-ի նամակում. «Երբ Աբտաշես Աշխարհակալեն վերջը Տիգրանա երեկույթները կարդացի, բնավ համ չառնելես զատ Աբտաշես Աշխարհակալեն փոխ առնված մի քանի խոսքեր անոր արժեքն ալ կոտրեցին. զոր օրինակ Աբտաշեսի մեջ երկինքեն վար իյնող աստղերը աչքերու կր նմանցնե, որք կր խոնարհին Արտաշեսի գորության առջև են։ Միևնույն նմանությունը կա Տիգրան Բ-ի մեջ գրեթե նույն բառերով» (նույն տեղում, էջ 151)։

ԳԱՔ-ի Ա. Չոպանյանի արխիվում կա «Տիգրան Բ»-ի երկու մասերի համառոտ շարադրանքը՝ Մ. Մխիթարյանցի դիտողություններով։ Այդ շարադրանքը առաջին անգամ հրատարակել ենք ԲՀՀ-ում (1967, № 1, էջ 175—181)։ «Տիգրան Բ»-ի ընդօրինակությունները նույնպես չեն պահպանվել՝ ո՛չ Ս. Սիմոնյանի և ո՛չ էլ Ա. Գալայճյանի՝ Պ. Դուրյանի երեսաղիմի արխիվի նկարագրություններում դրանց մասին որևէ խոսք չկա։ Մ. Մխիթարյանցի շարադրանքում ևս նշված է, որ «Տիգրան Բ» բաժանված է հինգ երեկույթի, իսկ հնդհնակի վկայությամբ՝ բաղկացած էր երեք մասից։ Սակայն ոչինչ ասել հնարավոր չէ, թերևս «Օրագիր...»-ի տեքստում «երեք»-ը վրիպակ է, քանի որ ՏԹ-ի առաջարանում ևս «հինգ» է։

«Տիգրան Բ»-ի երկու երեկույթները՝ «Փիննա»-ն և «Աստղ»-ը բաղ-

պացած են հնգական տպարվածից։ Երև ենթադրելու լինենք, որ մյուս չորված մասերը ևս պետք է նույնքան արտրված ունենային, ապա կարելի է ասել, որ Երև «Տիգրան Բ»-ն ավարտված լիներ, ապա նա կլիներ հայ Քաղաքերգության ամենամեծավալուն ստեղծագործությունը, հինգ (կամ ե-րեք) ոտանավորություններից կազմված մի ոտանավար, որի ամեն մի մասը ունենալու էր առանձին խորագիր և բնագրվելու էր մեկ երեկոյի ընթացքում (այստեղից էլ «երեկույթ» անվանումը)։

Ամենայն հավանականությամբ «Փիննան» և «Աստղ» գրվել են 1870-ին։

Տպագրվում է ըստ ԳԱՔ-ի Մ. Մինրդատյանցի ինքնագրի։ Մինրդատյանցի պիտոդուբլյուններր առանձնացված են և դուրս են տրվում ծանոթագրությունների մեջ։

Մ. Մինրդատյանցի պիտոդուբլյուններր.

Փիննա

1 Բայց գրված չէ, տեղը բաց է։ Վերջավորությունները հատուկ կօրի նակեմ կոր, որպեսզի դատես այս խաղին մեջ այնչափ աչքի չեն զարնիր կոր։ 2 ժամը 4-ին բանել կուզե։ 3 Նոր բառեր կր շինեմ, ինչ ընեմ։

Աստղ կամ Եզվտեսան

1 Ահավասիկ նյութերը, ինչպես որ կր տեսնես յուրաքանչյուր երեկույթ առանձինն առնելով նշանակություն մր չունի։ 5 երեկույթները ամբողջ լրլալու էին բան մր հասկցվելու համար։ Գիտելու արժանի կետ մր, որ միշտ հայերը կր հաղթեն և դավաճանությունները միշտ երևան կհանեն։ Արատչես աշխարհակալ կր մեռնի Որմզդատեսի փախած զատկի դատ դուրս տալու համար։ Նույնպես Բակուր ալ իր վերջին շունչը կր պահե «Փառնակեսր բեզ կր դավաճանե... դիս ազատեց...» բսելու համար Մինրդատի։ Մինրդատր անձամբ կերթա Կղեոպրր բարայրը և դավաճանության տեղյակ կրլլա։ Տիգրան ալ անձամբ Փիննայի և Տիրանի փախստին արգելր կրլլա։ Անբնական բան մրն է, որ Մինրդատ ծպտյալ իրրև Սուրեն Կղեոպրր բարայրին մեջ անձամբ կր խոսի իրենց հետ և Մինրդատի կողմնակցություն կրնե, ու տակավին չեն հասկնար, թե Մինրդատն էր իրենց դիմաց կեցողր։ Մարդ որշափ իր ձայնը կեղծե, նորեն կր մատնվի։ Միայն բարեկենդանի անճոռնի ճիչերը չեն հայտնիր իրենց (անընթռն.)։ Նույնպես ան-

բնական է սա կետը, որ սուրբերին կը քաշին Սուրբը սպանելու համար, որպեսզի Մխիթարտա չը մատնե գիրենք, և հետո երբ իրենց ձշնամին՝ Մխիթարտը, կը տեսնեն իրենց դիմացը՝ տեղյակ իրենց ամեն պաղտնյաց, առանձին 3 հոգիի դեմ, չեն սպաններ զայն, բան մը, որ իրենց առաջին նպատակն է։ Հռովմայց ավերակ, Հռովմը կործաննեք, Հռովմեացիները ջախջախիչ, սուր, պատյան, արյան հեղեղ և ասացվածքներ չափազանց շատ կրկնված են։ Ուրիշ բան մ'ալ կա, որ շատ տեղ կրկնված է. մեկը կուզե տեսնել այս ինչը, բայց ահա «նա ալ կուզա» կ'ըսե ու կը տեսնե, որ այս ինչը ով է նե կուզա»։

«Փիննա»-ն և «Ասուդ»-ը չեն բնմադրվել։

«Տիգրան Բ-ին» նյութը Պ. Դուրյանը քաղել է Լ. Ջամչյանի պատմությունից՝ մասնակիորեն օգտվելով նաև Խորենացուց։ Ողբերգաշարի երկու մասերում պատկերված գործողություններն ընդգրկում են մեր թվականությունից առաջ 95/94—77 թվականների իրադարձությունները Հայ-պոնտական դաշինքից մինչև Քաղկեդոնի մոտ Կոտտասի զորքերի ու նավատորմիղի ջախջախումը։ Թատերգության հերոսներից պատմական են Տիգրան Բ-ն, Միհրդատը, Արիոբարզանը, Արտավազդը, Տիրանը, Ասուդը, Բակուրը. Միհրանը, Կուռնկլիոս Լիդոն, Ոպպիոսը, Մանիոսը, Կոտտասը, Արտաշաման, Լուկուղդոսը, Փառնակեսը, Արիարաթն ու Գարդիոսը։

ՀԱՎԵԼՎԱԾ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ «ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ»-Ի ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ...

Ներկա հրատարակության առաջին հատորն արդեն լույս էր տեսել, իսկ երկրորդ հատորը տպագրվում էր, երբ Երեւանի Մատենադարանից ստացվեցին Պ. Դուրյանի տպերի ինքնագիր առաջին (նախնական) և երկրորդ (վարատուն) տետրերի միկրոֆիլմերը։

Հատորում գետեղված տպերը համեմատելով բնագրերի հետ, պարզվեց, որ տպագրված տեքստերում տեղ է գտել միայն մեկ էական տպավորում։ Խոսքը «Ջինն պաշտեմ» բերթվածի 37-րդ տողի մասին է (էջ 65)։

Ես կը դողդողամ իր վրա,

Հիշյալ տողը 1872-ի և 1893-ի ժողովածուներում տպագրված է տասնչ բնդդծված մասնիկի։ Այն բացակայում է նաև ԴԱՄ-ում պահվող ինքնագիր օրինակում։ Այս հանգամանքները նկատի ունենալով, Երեւանի ժողովածուի առթիվ գրած գրախոսականում («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2, էջ 179—180), ինչպես նաև առաջին հատորի ծանոթագրություններում (էջ 272 և 273) մենք «կը»-ն դիտել էինք տպավորում կամ վրիպակ։ Սակայն տեքստը պատրաստելիս, այնուամենայնիվ, հետևել էինք Երեւանի ժողովածուին, քանի որ վերջինս հրատարակված էր ըստ բնագրերի։ Այժմ երբ մեր ձեռքի տակ կան ինքնագիր տետրերի միկրոֆիլմերը, վերջնականապես համոզվում է, որ «կը» եզանակիչն իրոք ավելորդ է։ Բնագրային տողն է.

Ես դողդողամ իր վրա,

Միաժամանակ մատնանշում ենք առաջին հատորի տպերի տեքստում տեղ գտած վրիպակները. 13, 19, 21, 25, 28, 30, 42, 53, 58, 60, 67, 69 և 78 էջերում տպագրված վրա, եվանիր, դոշ, սպալի, դիմավորու-

բյուն, հրեւլած, ոտքյս, ֆնար. տղա, տրտմագին, այն, մնաք. հանդրգնի, բրնդոջ, ժրպտե *բառերը պետք է լինեն վրա, նրվաճեր, դրոշ, սրգալի, դիմավորության, հրեվլած, ոտքրս, ֆրնար, տրդա, տրտմագին, այս, մրնաք. հանդգնի, բնդոջ, ժպտե:*

Չունենալով տողերի նախնական տեսրը, մենք ցույց էինք տվել տիպնակային սրբագրումների մի մասը միայն: Տեսրերի միկրոֆիլմերը թույլ են տալիս ներկայացնել ու ճշտել նաև մնացած փոփոխությունները:

ՀՆՂԻՆԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ

2. Իցի՛վ բե

3 Վարդը չ'ունի բու լանջդ [անբիծ] ամբիծ, լուսափթիթ,
8 Դու չ'ես շնորհներ [նայվածք] նայվածք մ'ինձ տուր աչերիդ:
10 Կր նախանձին փայլիդ [վըրա] վրա վարդ, լուսնակ.
17 Պարտեզդ իցի՛վ բե [փթըթնթի] փրթի վարդ լացող,
26 Շողշողայի դեմքիդ [վրա] վրա վայրիկ մի,

16-րդ տողում, որ Մ. Մխիթարյանցը նշել է որպես սրբագրված, որևէ փոփոխություն չկա:

3. Վիշտ Հայուց

5 Ավերակաց ծաղկանցըդ [լակ] սոսկ այցելու
13 Եվ արտասուք ու [բառանչ] հառաչ
34 [Ավարայրի պլպուլն] Վարդաստաւրփիկ բուլբուլն *դողով թռչեցավ,*
54—55 Եվ [Հայաստանն] հայրենիքն *շղթաներն ազատեր.*
Նոճյաց [խորերն] խորը *մանվան շունչը սոսափնց,*

4. Իղձ առ Հայաստան

1 *Երբոր ցողին* [հնշտին] փաղփուն *շիթերն պիշերվան*
3 *Երկինքն* [աստղեր երբոր] երբոր աստղեր *փալփլին դիշերը՝*
20 *Բույր՝ կայծ ու գեղ* [նայվածք] նայվածք, *ժըպիտ սիրուհույս.*
25—28 *Արշալույսին ժժգույն աստղեր երբ* [պլպլին] փալփլին
Դողդոջը գեղգեղն վարդակարոտ [պուլպուլին] բուլբուլին.
Բնության դաշնակը, [ո՛չ]ո՛հ, չե՛ն կրնար նրվաճեր

Զեր հառաչներն որով [մռնչեն] մորճչեն նոճիներ.

31—34 [Դուցե] Թերևս ժպտին Մասյաց [մթին] մըրիկ սարերը,
[Դուցե] Կամ արտավին Սիպերիո սառերը,
Բայց սև [ձնոքներ, մատնիչ] [քնծղոտ] [շուրթեր] նոգիի ու սև
նանկեր չ'են կրանր
[Հեղնել] հեղդել իմ ձայնս, փշրել փըշոտ իմ քընար.

44—45 Թև [լույս և սեր] «լույս և սեր» Հայ սրտերուն մեջ բաժին,
Թև լուսո դարն երկնե [ազատ գավակներ] «ազատ գավակներ»

5. Սիրեցե՛ր գ'միմյանս

1—2 Վարդակարմիր Դողդոջային վեհ [գագաթին] գագար
[Հար] Միշտ փալփլյող սիրո անշե՛ջ ճառագայթ,
5 Ո՛ր [ժայռերուն] սև ժայռից մեջ մարեցավ այն բնկրկե
8 Եվ Յող խայտան ցավոտ [ոսկերոտիք] ոսկերք սև Հուգա...
14 [Մխենկույդներն, կամարներն փառը] Մխենկույդը, կամարը
«փա՞ռ» գոռացին,
16 [Հաչն սև դրրոշակ] Սև դրոշ մը ատելության արյունի.
18 [Թշվառն] Չրկյալն լրսել, թե «ըզմիմյանս սիրեցե՛ր»
20 [Հյուպակին] Տրճակին մեջ մարթ ատեայծ կանթեղն հոգ,
25—29 Գնթանմանին իջնող հրեշտակն [անաչառ] դալկահար,
Որ [չը ճանչեր արցունք՝ ծաղիկ՝ գեղ ու փառը] գեղ, ծաղիկ, ար-
ցունք ու փառ չը ճանչեար՝
[Անոր] Նորա ցուրտ գոգն ազքատը [միայն] [լոկ] սոսկ կ'ըսփոփի,
Ճոխն ու [հշվառն] [տնանկն] [պատանքին] տճանկ պատանին
մեջ կ'բլյան մի.
[Ահեղազազատ] [Շանթեր գոռան] Կայծակնաբաշ թե մրոտնչեն
մրբրիկներ

6. Պետք է մեռնի՞լ

1—2 [Տժգույն] Դժգույն դիշեր մ'էր քաղցրաբույր աշնային,
Երկինքն աստղեր ղերք [սիրո վիրքեր] «սիրո վիրք» ցոլային.
4 [Շողն կը] Շողը ցողեր ամրան վարսիցն ադեղիկ.
7 Այսրը [կը] խազար տերևներուն հետ քնքն,

10—12 Բայց կ'արծարծներ [արտիս], ո՞ն, իմ սիրուն [վառ] բյուր կայծներ...
Ոգի մ'անցավ սրանս՝ Յողուց հոն [տակեր] քամվեր,
[Անշնջ հուր] Աստեղդ բույլ մը... միայն դիտեն [այս] գայս ատ
գներ...:

14 Իր դողդոջ ձայնն՝ տերևներուն [չոր] սա շշշունջ.

17 Կը սիրե [նա] ճն. [նայվածքիդ] ճայվածքին մեջ կը Յաումի.

19 Վրանէ ճակտին վրրա [երկու] գույզ մը աստղեր վառ՝

21 Լոկ հուր աչեր, մրպիտ, արցունք [տեսա] տեսի նախ,

26 Էակ չ'էր [նա] ճն, այլ սեր, հուր, շունչ՝ [մրպիտ] մրպիտ. ցավ.

28 Ան պիտավոր աստղն [բար մը] «Քար մը» մրնաց ինձ...

37 Շիրմիդ [վարդերն] վառիմը չը Յուման քեզ պրկեմ ես...

7. Ի պատիարխական բնաւորութիւն Ամեն. Հայրիկին

8 Հուր [ներշնչողն] ճերշնչողիմ չ'ե'ն աստղեր,

12 Եվ արևուն արլաքաց Հնա [հուր] կրակ դարձավ,

47 [Արցունքդ] Աւտոսր ու [քիրտ] Իիտդ Յոգ փալփլին՝

55 Թո'ղ փլատակաց [մուխեն] մխարճն հառնեն Տիշատակր,

64 [Վեհ իրավանց] Իրավունքին, սիրտ, լուսո ննք կարատ.

8. Ի դիմավորութիւն Ամեն. Հայրիկին

4 Ո՞չ, դիմդը [վառող] վառողմ արցունք՝ բսպի ճն.

7 Նա մեր Հայ [եղբարցն] եղբարց արցունքն է քավեր,

9 Դյուցա՞զն մ'է, որ պո՞ւրս [ելավ] ըրռավ դամբանին,

21 Աստղի մը նայվածք, [Հովիկի] էքճարի մը ձայն,

25—26 Ահա կը հնչե [իրեն]ճորա հեշտ սրրինգ,
Արձագանք կատան Հայոց [ձորը] դաշտ, լեռինք,

33 Բայց իր [ճակտին] դիմաց վրա կանուխ ճն փթթած

9. Հայրիկն Հայոց

7 [Ցո'ւր] Յրցո'ւր ցատպ. Հայերն կանչե՝ չ'արատ մի՝

19 Սոխակ [ծնար նռնչաց խորհրդն] մ'Լիւր մերթ ի ճոճս. ո'երգիդ՝

18-րդ տողից հետո Դուրյանը պրել է «Օրագիրս»-ում տպագրված հետևյալ 18—19 տողերը, որոնք ապա ջնջել է:

10. Երգ մատաղ վարդանանց

Բանաստեղծության ավարտուն տեքստն ունի 18 տող, բայց նախնական՝ 16։ Դրա պատճառը այն է, որ երկրորդ տեքստի 9—10 և 11—12 տողերը առաջին տեքստում կազմել են մեկական տող։

11. Սիրեցի ինձ

8 Ամրան այսրի [մի] մը հանգույն։

5-րդ տնից հետո գրած, ապա ջնջած տան վերջին տողերն են.

Երշոդումն այն կենսատու
Այրևաց ամեն սրտերու։

12. Կույսն լիյալ

5 Ո՞չ, ինչո՞ւ [կուսին] կույսին
12 է [կուսին] կույսին հակառ
20 Մրմունջ, [նայվածք] նայվածք տանկով հետ,
30 Հանև [կուսին] կույսին յանջ։

13. Նվագ է. տաեղարձի ազգային տանմանագրության

2 Հայկազն հրակայից կրմախք [շինեն] կայրեն չ'տան,
27 [Երգնումբ հետ] Թե չերգնումբ. հզրա՛բր. [միշտ] հիշել զհայաստան,

14. Նե

4-րդ տողը սրբագրում չունի։

16. Նայվածք մը

7 [Աբշալույսին] Աբշալույսին կանուխկեկ՝
13 Երբ [միայնիկ] միայնակ ես գամ տան,
20 Լլյա երկինք [գմբեթիարդ] գմբեթարդ,
26—27 [Աչն] Մեկ նայվածքին հետ անբավ՝
[Զոր] Թե չտպարիկ ինձ հեշտյավ

19. Մանուկն առ խաչ

3 [Որոն] Որս հակառ
18 Որ [Երգնի] նգնի միշտ

20. Սիրել

15 Գտնեմ ո՛րս հոն դժգույն [հըստակ], հատակ,
41 Բույլ մը [հայհոյ] նայվածք, փունջ մը ժըպիտ,

21. Դրժել

24 [վառո] Կ'վառե երազ մ'որուն մեկ շոդ։

22. Լճակ

37 [Մեկը չ'րսավ] Ոչ ոմ ըսավ—սա արդին

24. Ներա հետ

15 «Հոսի՛ներ» ըսավ-ո՛հ, [հոսիլն] Հոսի՛լ,

25. Տրտունջք

4 Աստղերն ի՞նչ են որ, հին ո՛չ [ամրիծ] աճրիծ
40 Ո՛չ երկնի շողերն [ժպիտ] ժըպիտ մ'ինձ չ'են տար։
49 Ի պո՛ւր այտերը [սո՛ր] «սո՛ր» ինձ ներչնչեցին։

26. Ցղջում

6 Գալկություն մը [կ'պլպլար] կը պլպլար,

28. Կոկոն-ծաղիկ կույսին

5 Ո՛հ, չ'լ՛ նոցա պես [ամրիծ] աճրիծ

39. Ա. («Երեկոյան բալն կը սպառ բարդիլ խավ»)

48 Բայց [վես] սա վարդի փոխան գիտե լույս փիլիսիլ։
68 [Ներ] ևս տիրևոց հետև գոդամ անոնց նման,
71 Երբ [պլպուլիկն] ծիծառնուկն ինձ հետ չնեն աղևկեզ.

Առաջին տետրի մի քանի էջերի վերջին տողերը, որ համապատասխանում են «Իցի՛վ ին»-ի 21, «Վիշտը Հայուն»-ի 33. 61, «Իղձք»-ի 15, 38, «Սիրեցի՛ր գ'միմյանս»-ի 12, «Գետը է մեռնի՛լ»-ի 9, 36, «Ի պատիարքական ընտրության» 19, 43, 68, «Ի դիմավորության...» 20, «Երգ...»-ի 18, «Սիրեցի քեզ»-ի 10, «Նվագ»-ի 16, «Նայվածք մը»-ի 23—24, «Հծծյունք»-ի

8, 31—32, «Սիրել»-ի 21, «Դժվել»-ի 21, «Թրքուհին»-ի 24, «Ներա հետ»-ի 10, 32, «Տրտունջք»-ի 52, «Զղջում»-ի 16, «Կոկոն-ծաղիկը...»-ի 20 և «Ա՜խ, սա՜»-ի 34-րդ տողերին, միկրոֆիլմի վրա չեն վերարտադրված, այնպես որ դրանց հնարավոր սրբագրումները բնականաբար մեզ մնում են անծանոթ։

Միկրոֆիլմերն ստացվել են Ս. Հակոբյան վանքի միաբան Շահեն սրբազանի և սփյուռքահայ ուսանող Կարիկ Պատմաճյանի ջանքերով, որոնց և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

••

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ալյուս (*Ալիս*)—*Գետ Փոքր Ասիայում, թափվում է Սև ծովը։*

Անոսի—*Գյուղ Այրարատ աշխարհի Մասյացոտն գավառում, Մեծ Մասիսի հյուսիսային կողմում, կործանվել է 1840-ին, հայտնի էր իր հռչակավոր այգիներով ու գինիով։*

Այրարատ—*Հայոց աշխարհի կենտրոնական գավառ, արևելքից սահմանակից էր Այոնիքին, հյուսիսից՝ Գուգարքին, արևմուտքից՝ Տայքին ու Բարձր Հայքին, հարավից՝ Տուրուբերանին և Վասպուրականին։*

Այրարատա դաշտ—*Հայկական լեռնաշխարհի բնագրածակ հարթավայրը, հյուսիսից եզերվում է Արագածի լեռներով, հյուսիս-արևելքից՝ գեղամա լեռնաշղթայով և հարավից՝ Մասիս (Արարատ) սարով։*

Անի—*Հայոց հին և մեծ քաղաք, Ախուրյան գետի աջ ափին, Շիրակ գավառում, Բագրատունիների թագավորության մայրաքաղաքը, 1045-ին գրավվել է բյուզանդացիներից, 1064-ին՝ սելջուկներից։*

Աշոց (*Աշոցք*)—*Այրարատ աշխարհի գավառներից։*

Արծն—*Հայկական մեծ և նշանավոր բադաք Կարինի սահմաններում, Բարձր Հայքում, ավերվել է սելջուկներից 1049-ին։*

Արծրունիք—*Նախարարական տոհմ, Արծրունիները նախապես բնակվում էին Աղձնյաց աշխարհում, ապա՝ Վասպուրականում։*

Բարիլոն—*Հնագույն բադաք Եփրատի ափին (Բաղդադից 100 կմ հարավ), Բաբելոնյան թագավորության մայրաքաղաքը, հիմարկվել է խեթերից, ասորեստանցիների և այլ ցեղերի ասպատակություններին, դադարել է գոյություն ունենալուց մ. թ. ա. II դարում։*

Բերա—*Կ. Պոլսի արիստոկրատական թաղամասը։*

Գեթսեմանի—Դյուղ Երուսաղեմի մոտ, որտեղ ըստ ավանդության Հուդան մատնեց Հիսուսին։

Գողգոթա—Բլուր Երուսաղեմի մոտակայքում, ուր և կատար էին ածվում հին Հրեաստանի մահապատիժները։ Ավանդության համաձայն Քրիստոսը նույնպես խաչվել է Գողգոթայի վրա։

Գողթն—Գավառ Սյունիքի և Վասպուրականի միջև, հայտնի էր իր երգիչներով։

Նլլադա—Հոմերոսն այսպես է անվանել Թեսալիայի տարածության մի մասը։ Հետագայում Հելլադա կոչվեց Միջին Հունաստանը, իսկ ավելի ուշ՝ ամբողջ Հունաստանը։

Էյոլիա—Հնագույն պետություն Փոքր Ասիայի արևմտյան մասում։

Խուժաստան—Պարսկաստանի հարավ-արևմտյան նահանգը։

Կապադովկիա—Հնագույն պետություն Փոքր Ասիայի կենտրոնական մասում։

Կապան—Բերդ Կիլիկիայում, ուր աքսորվեց հայոց վերջին թագավոր Լևոն Զ-ն։

Կարս—Գավառ Փոքր Վանանդում, Ախուրյան գետի ափին, Հյուսիսից սահմանակից էր Շիրակ աշխարհին։

Հուազդան—Արաքս գետի ձախ վտակը։

Մարսել—Նավահանգստային խոշոր քաղաք Ֆրանսիայի հարավում։

Մանազկերտ—Հայկական նշանավոր քաղաք Հարքի և Ապահունքի միջև։

Նինվե—Հնագույն քաղաք (այժմյան Իրաքի տերիտորիայում), մ. թ. ա. 705—681 թթ. Ասորեստանի մայրաքաղաքը. ավերվել է բյուզանդացիներից մ. թ. ա. 612-ին։

Պոնտոս—Փոքր Ասիայի հնագույն մասը, որ մ. թ. ա. 301-ին ստացավ Պոնտական թագավորության անունը։ Այս թագավորությունն ընկած էր Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում, հյուսիսից սահմանակից էր Սև ծովին։

Սառուցյալ օվկիանոս (Հյուսիսային սառուցյալ օվկիանոս)—աշխարհի չորս օվկիանոսներից ամենափոքրը, տարածվում է Եվրոասիայի և Հյուսիսային Ամերիկայի միջև։

Սեբաստիա—Երկրորդ Հայքի պետավոր քաղաքը, հիմն է Արծրունյաց արքայանիստը։

Սմբատաբերդ (Սմբատավան)— *Հեռ և ամրոց Բարձր Հայքի Մանանաղի գավառում, դրավվել է սելջուկներից 1048-ին:*

Սյունիք— *Հայոց «աշխարհ»-ներից, պատմական Հայաստանի հյուսիս-արևելքում, սահմանակից էր Այրարատին, Վասպուրականին, Արցախին, Ուտիքին և Դուպարքին:*

Տիգրիս— *Գետ, սկսվում է Հայկական Տավրոսից և միանում Եփրատին:*

Տյմուտա— *Գետ Արտազ գավառում, որ հոսում է Ավարայրի դաշտավայրի միջով:*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ալփասլան *Մուհամեդ իբն Դաուդ (1029—1072)—Սելջուկ սուլթան, որ 1064-ին արշավեց Անգրկովկաս՝ և գրավեց Անին։*

Աստղ—*Հրեական ծագումով Բագրատունի իշխան, որի լեզուն Տիգրան Մեծը կարիլ էր կուրծքերին չերկրպագելու համար։*

Արամ—*Հայոց նահապետ, Հայկի ցեղից, որի անունով էլ օտարները Հայերին անվանել են արմեններ, իսկ Հայաստանը՝ Արմենիա։*

Արիաթաթ Թ—*Միհրդատ Դ-ի կրտսեր որդին, որին Հայրը կարգեց Կապադովկիայի թագավոր (մ. թ. ա. 88—86)։*

Արիոբարզան Ա Հռոմմեասեր—*Կապադովկիայի թագավոր։*

Արտաւան—*Սելջուկ ամիրա, Տուղրիլի բարեկամը, որի որդուն մահացու վիրավորեց Կարսի Թաֆուլ իշխանը։*

Արտաշամա—*Արտաշես Ա-ի դուստր, Տիգրան Բ-ի քույրը և Միհրդատ Պոնտացու կինը։*

Արտաշես աշխարհակալ (*Առաջին*)—*Հայ Նշանավոր թագավոր (մ. թ. ա. 189—160), Հայկական Հողերի վերամիավորողն ու Արտաշիսյան Հարստության հիմնադիրը։*

Արտաշիր (Արտաշես Գ)—*Արշակունյաց վերջին թագավորը (422—428), Հայ նախարարների պահանջով պահրնից արվեց պարսից թագավորից։*

Արտավազդ Ա—*Արտաշես Ա-ի որդին, Հայոց թագավոր (մ. թ. ա. 160—115)։*

Արտավազդ Բ—*Տիգրան Բ-ի որդին, Հայոց թագավոր (մ. թ. ա. 56՝55—34), պատերազմել է Հռոմեացիների դեմ, գրել է ողբերգություններ։*

Բագարատ (Բագրատ)—*Անիի Հայ իշխաններից։*

Բակուր (Բագոաս)—*Տիգրան Մեծի զորավարներից։*

Գագիկ Աբասյան — *Կարսի թագավոր (1029—1065), կռվել է սելջուկների դեմ, սպանվել է բյուզանդացիներից 1081-ին։*

Գագիկ Բ — *Անիի թագավոր (1043—44), սպանվեց բյուզանդացիներից 1079-ին, տարապրության մեջ։*

Կարդիոս (Գորդիոս) — *Արիարաթի խնամակալը, կռվել է Հռոմեացիների դեմ։*

Դյումա, Ալեքսանդր *(Որդի Դյումա, 1824—1895)* — *Ֆրանսիացի նշանավոր վիպասան, հռչակվեց «Քամելիապարզ տիկինը» վեպով և համանուն դրամայով։*

Թարսուլ — *Կարսի հայ իշխան, թան Մ. Չամչյանի՝ սպարապետ, կռվել է սելջուկների դեմ։*

Լամարթին Ալֆոնս *(1790—1869)* — *Ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ պատմաբան ու քաղաքական գործիչ։*

Լանկթիմուր (Լենկթիմուր) *(1336—1405)* — *Միջինասիական նվաճող, արշավել է Պարսկաստան, Անդրկովկաս, Հնդկաստան, Չինաստան և այլ երկրներ։*

Լևոն Ջ Լուսինյան — *(1342—1393) — Կիլիկիայի (և հայոց) վերջին թագավոր (1374—1375), գերեվարվեց, մահացավ Ֆրանսիայում։*

Լուկուղղոս (Լուկուլլոս Լուցիոս Լիցինիոս) — *(մ. թ. ա. 117—56) — Հռոմեացի զորավար, մ. թ. ա. 74—66 թթ. պատերազմից Միհրդատ Դ-ի դեմ։*

Կատտաս (Կոտտա) — *Հռոմեացի զորավար, պրոկոնսուլ, Քաղկեդոնի մոտ, Բոսֆորի նեղուցում, ջախջախիչ պարտություն կրեց Միհրդատից։*

Կրյուսոս (Կրեսոս) — *Լյուդական թագավոր (մ. թ. ա. 560—546)։*

Կուռնելիոս Սիդղա (Սիլա, Սուլա) — *Կիլիկիայի փոխկուսակալ, մ. թ. ա. 92 թ. Միհրդատից վերադարձեց Կապադովկիան։*

Հայկ — *Ըստ Մ. Խորենացու, Թորգոմի որդին, ապստամբեց Բելի դեմ, Տայքերի նախահայրը։*

Հմայակ — *Աշոց գավառի տեր, որ վաչե Արծրունու հետ Պարսից թագավորից պահանջել է Արտաշիրի գահընկեցությունը։*

Հյուկո Վիկտոր Մարի *(1802—1885)* — *Ֆրանսիացի հանճարեղ դրող, ակադեմիայի անդամ։*

Հուդա — *Քրիստոսի 12 առաքյալներից (աշակերտներից) մեկը, ուսուցչին մատնեց 30 արծաթի համար։*

Ղևոնդ—*Երեց, 449 թ. դլխավորեց շինականներին՝ Անդր գյուղում կռտորելու պարսիկ մոգերին, Վարդանաց պատերազմի ներոս։*

Մամիկոնյան Վահան—*Վարդան Մամիկոնյանի եղբորորդին, դլխավորեց 481 թ. ապստամբությունը պարսիկների դեմ, դարձավ սպարապետ, սպա և մարզպան։*

Մանիոս Ակվելիոս—*Հռոմեական զորավար ու դեսպան, որդեց Բիթանիայի թագավոր Նիկոմեդես Գ-ին հարձակվելու Պոնտոսի վրա, դերի ընկավ Միհրդատի ձեռքը։*

Մերուժան Ա.ծրունի—*Հայոց դավաճան իշխան, որ պարսից զորքով 364, 370 և 371 թթ. արշավել է Հայաստան, սպանվել է Ջիրավի ճակատամարտում Սմբատ Բագրատունուց։*

Միհրան (Միթրաս)—*Տիգրան Մեծի զորավարներից։*

Միհրդատ Ի Պոնտացի (Եվպատոր) *(մ. թ. ա. 132—63)*—*ականավոր զորավար, Պոնտոսի թագավոր (մ. թ. ա. 114—63), Տիգրան Բ-ի դաշնակիցն ու աղգականը։*

Մոլիեր, ժան Բատիստ (Պոկլեն) *(1622—1673)*—*Ֆրանսիացի նշանավոր կատակերգակ, դերասան և թատերական դործիչ։*

Մովսես—*Ըստ աստվածաշնչի՝ մարդարե և օրենսդիր, որ Հրեաներին աղատել է եդիպտական փարավոնների հալածանքներից։*

Նալպանյան, Միխայել *(1829—1866)*—*Հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ, դրող։*

Շեքսպիր, Վիլիամ *(1564—1616)*—*Անգլիացի մեծ բանաստեղծ և հանճարեղ թատերդրակ։*

Շիլլեր, Յոհան Ֆրիդրիխ *(1759—1805)*—*Գերմանացի մեծ բանաստեղծ և թատերդրակ։*

Ոպպիոս—*Հռոմեացի զորավար, որին Միհրդատ Պոնտացին դերի վերցրեց և անարդեց։*

Ռաֆայել, Սանցիո *(1483—1520)*—*Վերածննդի շրջանի իտալացի հանճարեղ նկարիչ ու ճարտարապետ։*

Ռուսսո, ժան ժակ *(1712—1778)*—*Ֆրանսիացի մեծ լուսավորիչ։*

Սահակ Պարթև *(348—436)*—*Հայոց կաթողիկոս (387), Մեսրոպ Մաշտոցի հետ ստեղծեց հայերեն տառերը, դիտնական ու թարգմանիչ։*

Սողոն (Սոլոն) Աթենացի *(մ. թ. ա. 638—559)*—*Հին Աթենքի օրենսդիրներից, քաղաքական գործիչ և բանաստեղծ։*

Սուրեն Պահլավ—*Պարսից հպարտապետ՝ Վռամ Թագավորի ժամանակ։*

Սուրմակ Աբծկեացի—*Ազգուրաց նրեց, դավից Արտաշիրին և Սահակ Պարթևին, գարձավ կաթողիկոս, մահացել է 443-ին։*

Վաչե—*Արծրունի իշխան, բստ Խորենացու՝ 432-ին որպես պատգամավոր գնացել է պարսից Վռամ արքայի մոտ՝ խնդրելու Հայոց եկեղեցու աթոռակալ։*

Վասակ Սյունի—*Հայ մարզպան, դավաճանեց հայերին և 451 թ. պատերազմի ժամանակ անցավ պարսիկների կողմը։*

Վարաժ (Վարժ)—*Արտաշես Ա-ի ժամանակ արքունի որսերի վերակացու և Տիգրան Բ-ի մարտուսույցը։*

Վարդան Մամիկոնյան—*Հայոց սպարապետ, 451 թ. ազատագրական պատերազմի դեկավարը։*

Վեստ Սարգիս Սյունեցի—*Անիի ապգեցիկ իշխան, դավաճան, դաշնակցեց Պետրոս Գետադարձ կաթողիկոսին և Անին հանձնեց բյուզանդացիներին։*

Վռամ—*Պարսից Թագավոր, 428-ին գահընկեց արեց Արշակունի Արտաշիր Թագավորին։*

Վռամշապուհ—*Հայաստանի առաջին բաժանումից հետո (387) դարձավ Արևելյան Հայաստանի Թագավոր (388—414)։*

Տիգրան Բ կամ Մեծ *(մ. թ. ա. 142/141—56/55)*—*Հայ աշխարհակալ, Թագավորեց մ. թ. ա. 95-ից մինչև իր մահը։*

Տիրան (Տիգրան Բ կրտսեր)—*Տիգրան Բ-ի երկրորդ որդին, Ծոփքի Թագավոր, մ. թ. ա. 66 թ. ապստամբեց Հոր դեմ։*

Տյումա—*տե՛ս Դյումա։*

Տրդատ (Մեծ)—*Հայոց Թագավոր (238—330), նրա օրոք Հայաստանում քրիստոնեությունը ճանաչվեց պետական կրոն։*

Տուրքիլ—*Սելջուկ սուլթան (բեկ), 1054-ին վերսկսեց արշավանքը Հայաստան։*

Փառնակես (Փառնակ)—*Միհրդատ Դ-ի որդին, մ. թ. ա. 63-ին ապստամբեց Հոր դեմ և ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին։*

Ազն *(ապինք)* — *ապպ(եր)*
Ալի — *1. ալիք, կոհակ 2. սպիտակած մազեր*
Ակնախտիղ — *աչքը խատուցնող, շլացնող*
Աղրեր — *աղբյուրներ*
Աղեբեկ — *ալեխառն*
Աղեռաարկու *(ած.)* — *ապիրս մատուցող, խնդրող*
Ապիոր — *ապիրներով, լարերով*
Ապխել — *փակել, դոցել, ապխր (շղթան) գցել*
Ամոլ — *խաղրնկեր*
Անդամոր — *այնտեղ, այն ժամանակ*
Անդեն — *խակուն, անմիջապես*
Անդստին — *հենց սկզբից*
Անդր Բան — *ավելի քան, ի վեր*
Անդրանկություն — *առաջնություն*
Անդրիանդի — *արձան, անդրի*
Անճուճ եմ — *հնար չունեմ*
Անձկանոմ, անձկավ — *կարոտով, անհանգրվ, փափագով*
Անձնանորդոր — *ինքնակամ*
Անշուշտ եմ — *չեմ կասկածում, տարակույս չունեմ*
Անոպա — *կոպիտ, անրարեհամբոյր, գաժան*
Անոսր — *նուրբ*
Անոմ — *ոչ մեկը չունեցող*
Անտի — *այն*
Անուր — *թևատակ*
Առաթուր — *տարի տակ (տալ), կոխկոտել*
Առընթերակցել — *նեղիկ դռնվել*
Ատել — *առիթ դառնալ, պատճառել*
Ատի — *լեցուն*
Առկայծ — *մարդ*
Առցուխ մանռ — *տե՛ս* ման ընել
Ասպար — *վահան*
Աստ — *այստեղ, յաստխս — այս աշխարհում*
Աստանոր — *այնա այստեղ*
Աստղալույց — *աստղավար*
Ավաղել — *ագալ, ողրալ, սփսոսալ*
Ավուրչեք — *օրավարձ*
Ազգանատել — *պիալ, կարեկցել*
Ատատել — *արտաավորել*

Աէի (ի) — պարսիկ(ներ), անարի(ր), ոչ պարսիկներ

Աէի՛ — վեր կացեք, ելեք

Աւտալած — Հալածված

Աւտաւավարում — արցունքով թրջված

Աւտուար — արցունք

Բագին — պռնտանդան

Բալ — մատախուղ, մեգ

Բալթա — վերարկու

Բանաղատություն — քննադատություն

Բանակետ — բանակատեղի

Բարդ (բարդել, բարդիլ) — դեզ (դիզել, կուտակել)

Բարձել — վերցնել

Բացեն — դրսի, կողմնակի

Բդեաշխ (բդեշխ) — տեղակալ, փոխարքա

Բեռաճփոխ — կերակուրը փոխող, փոփոխած

Բոլոռոիմ — շուրջ

Բոտին (ֆր. bottine) — կոշիկներ

Բռցել (փրցել) — պոկել

Պահոս (ային) — բառս (ային)

Պաղջ — եղկումեղկ, տաք ու սառի միջև

Պանդյուն — ձայն

Պել — ոլորված, պրկված

Պեղ — պեղեցկություն

Պիրզ — փափուկ, նուրբ, քնքուշ

Պոզ — 1. ծոց, գիրկ, 2. գուցե

Պոզած — կորացած

Պոլ — լինել

Պռզլյակ — ցնցոտի, քրքրված հագուստ

Պուլ — բութ, ոչ սուր

Պալարիճ — կանաչ խոտ, դալարյա — կանաչ, խոտեղ

Պաչտակ — փոքր գաշտ

Պեղձաճ — բաց գեղին, խարտյաշ

Պեղելիլ — երերալ

Պերեվացնել — անպտուղ դարձնել

Պի (պեճ) — կողմ

Պիտաղատատ — գիտակի պես տապալված, սպանված

Պիմ — աստվածներ

Պժկամակել — դժգոհել

Պռճչյուն — շաչյուն, ձայն

Պույզն — բիշ, փոքր-ինչ

Եղուկ — վա՛յ, եղուկ ինձի — վայ ինձ

Երեսկախ — թթված դեմքով, նոթոտ

Երկրնկեկ — երկնքից ընկած, իջած

Զրոսնուլ — զվարճանալ, զրոսցնել — զվարճացնել, զբաղեցնել

Զգեցուլ — զգեստ կրել, հագնել

Զգոն — ընդոթեն, խոհեմարար

Զեղուլ — լիքը լցվել, գլխելցնել, թափվել, դիզվել

Զվարթուն — հրեշտակ

Ին — *ամենից, ամենա...*
Իր — *ինչո՞ւ*

Ընդհշմարել — *հագիվ նշմարել*

Թ՛ — *թե, եթե*
Թալանալ — *ուշաթափվել, նվազել,* թալկացում — *ուշաթափում*
Թալկահար — *գալկահար, դունը գցած*
Թանալ — *թրջել*
Թափառանիած — *աննպատակ շրջող*
Թերեաշիվ — *վճար՝ պարտքի դիմաց*
Թինդ — *(ի թնդոչ, թնդել)* — *թնդյուն, թունդ եյած, թնդացնել*
Թորվել — *յաւի տալ, թորթափել*
Թոչուն *(ած)* — *թռչող*
Թռռոակ — *թրթռացող, դողացող*

Ժպիրճ — *լիրր, անամոթ, ժպրիթել* — *համաթձակվել, հանդգնել*
Ժուռ գալ — *պտտել, շրջապատել*

Ինչվան — *մինչև*
Իս — *ինձ*
Իցի՛վ թե — *երանի՛ թե, ո՛ւր էր թե*

Խախտ — *մուրակ, խարազան*
Խմնալ — *ավարտել, կատարել, լրացնել*
Խնուլ — *լցնել*
Խուայ — *լսեցի*
Խուծանել — *խզել, ցրել*

Լույծ — *ծորուն*
«Լուսարան» — *լույսի ընդունարան, աչք*
Լուսինյակ — *սոխակ*

Խայտալ — *ցնծալ*
Խարշափել — *խշրտալ, սոսափել, խշխշալ*
Խլրտել — *հուզվել, շարժվել*
Խնծիդ — *ցնծություն, ուրախություն,*
Խնծդալ — *ցնծալ, ուրախանալ*
Խշրտուք — *մեղմ ձայն, խշխշոց*
Խոկ (ումն), Խոկալ — *խոհ, մտածողություն, խորհել*
Խոդդալ — *խոկալ, խոմփալ*
Խոբշյուն — *խշրտոց*
Խոֆկած — *գառամած*
Խրախ — *ուրախ*
Խրտչիլ — *ցնցվել*
Խուսել — *խուսափել, խույս տալ, հեռանալ*

Ծյուրիլ — *հյուծվել, մաշվել*
Ծոր — *պտտոտ*

Կազ — *լուսավորության գազի ճրագ*
Կայթել — *ցնծությունից ոստոստել*
Կաճուկ (կեկ) — *վագ, վագուց*
Կառափ — *գլուխ*
Կարի — *շատ ավելի*
Կենդոնականություն — *կենտրոնացում*
Կեցի՛ք — *սպասեցե՛ք*

Կրոսիլ — *տկարանալ, ուժասպառ լինել*

Կիր (կրից) — *կիրք (կրքերի)*

Կլլել — *կուլ տալ*

Կյա՛ց — *ապրի՛*

Կննիա — *դավ, խարդավանք*

Կոդկոդալ — *մղկտալ, մորմոքել*

Կողմնական — *կողմնակի, կողքին նայած*

Կորնչել, Կորուսանել — *կորչել, կորցվել*

Կրանիտ — *գրանիտ*

Կրեա — *կրիա*

Հազապ — *շուն*

Համբուն — *համակ, ամբողջովին, խոպան*

Համր — *դանդաղ*

Հայել — *նայել*

Հայնցի — *հայկական*

Հայեցված — *հայացք, հայվածք*

Հայկարան — *հայաբնակ*

Հանգույն — *նման, իբրև*

Հաջաղ — *երեսի բոշ, նաջաղը վառն — ագռնիվ, զարդարուն կտրոով բոշ*

Հավելուլ — *ավելացնել, հավելուած — ավելացրած*

Հաւիրեցնել — *հաղնեալուց ձանձրացնել*

Հեզ — *բշվառ, խեղճ, տառապյալ, հիթօֆ — հեզերով, հիմիս — հեզիս, բշվառիս*

Հեղել — *բափել, հեղուլ — բափի*

Հեկեկ — *հեկեկանք, հեկեկոց*

Հենուլ — *հենվել, հենու — հենվի*

Հեշտ, հեշտիկ, հեշտալի — *ախորժելի, դուրեկան,*

Հեշտին — *հեշտությամբ, դյուրինությամբ*

Հեշտյալ — *հեշտանքով*

Հեշտություն — *ցանկասիրություն, մարմնապաշտություն*

Հեո — *նախանձ, հակառակություն*

Հետ — *հետք*

Հիմենյան — *հարսանեկան*

Հծծել — *շշնջալ, փսփսալ*

Հոդել — *կապել, շաղկապել*

Հոլարևել — *բևերը տարածել, սրփռել*

Հոն — *այնտեղ, հոնկե — այնտեղից*

Հոպոպ — *խոպոպիկներ, գանգուր մազեր*

Հովանիե (*ած.*) — *ստվերոտ*

Հովանոցակ — *փոքր հովանոց, ճյուղերից հյուսած ծածկ՝ արևից պաշտպանվելու համար*

Հովել — *հով փչել, զովացնել*

Հոնչյուն — *հոնգյուն, ձայն*

Հրատ — *կրակ, հրաբորբոք*

Հրատարակել — *հռչակել, հայտարարել*

Հույլ — *1. խումբ (աստղերի) 2. փունջ (մազերի)*

Հուշ ածել — *մտաբերել, հիշել*

Հուշիկ — *համաց-կամաց*
Հուսկ — *վերջին, ամենավերջին*

Զեռնավություն — *օդնություն*
Զմրահուպ — *ձմռանը մոտ, ձմեռնամուտ*
Զյունարոտմի — *ձյան դույնի, ճերմակ*
Զորձ — *հագուստ*

Ճապաղիճ — *արյան վարարում, հեղում, հոսում*
Ճեռ (f) — *սերունդ(ներ), զավակ(ներ)*

Մակաբերել — *եզրակացնել, հետևցնել*
Մականճ — *զավազան, գայլսոն*
Մանճ ընել — *ման գալ, պրոսնել*
Մանրերկրորդ — *ակնթարթ*
Մառ — *մշուշ*
Մատամբ — *մատներով*
Մարմանդ — *գալարիր, հովասուն տեղ*
Մերովսանճ — *մեր կարողացածին չափ*
Միջնակաճ — *միջին, միջնակ*
Մնճ — *մենք*
Մնշել — *մեզմ հնձել*
Մոլար — *մոլորված*
Մորչ (գ.) — *կանաչ ճյուղ, մորճ (ած.) — գալար*
Մուռել — *մոռանալ*

Յամայր — *տևական, երկար ժամանակ, շարունակ*
Յայտ — *հայտնի կերպով*
Յանգետս — *անդիտությամբ*
Յապայճ — *ապագայում*
Յաուժ — *հավերժ*
Յիղակաճ — *հանկարծակի, անպատասխի*
Յուշ ածել — *հիշել*
Յօդել — *տե՛ս հոդել*

Նազիլ — *սիգալ, պչրել*
Նախախայր (f) — *առաջին պտուղ, արդյունք*
Նե — *նա (իգական սեռի համար)*
Ներկայել — *ներկայացնել*
Նժդեհ — *պանդուխտ*
Նկատում — *նկատառում*
Նշանակ — *նշան*
Նոքի — *անօթի, բազցած*

Ճաղփաղփություն — *շաղակրատանք, կատակարանություն*
Ճառայլ — *հառագայթ, շող*
Ճրշել — *շրշյուն հանել (շրչապղեստի)*

Ոյր — *որի*
Ոսկերոսիճ — *ոսկորներ*
Ոտ — *որոնք*

Չվառ — *ինչ-որ*

Պանուճապատանի — *խաղապիկնիկ*
Պատերազմիկ — *պատերազմող, պատերազմական*
Պատռել — *(պատռիչ) — խարել, մոլորեցնել (խաբող, մոլորեցնող)*
Պարապածկել — *պահել, թաքցնել*
Պարտիլ — *պարտական լինել*
Պիզգալի — *զարշելի, զզվելի, նողկալի*
Պլլել, պլլվիլ — *փաթաթել, փաթաթվել*

Չաղխել — *չախչախել*

Բազմ — *ազգմիկ, պինվոր*

Ս' — *սա, այս*
Սաղմնել — *հդանալ*
Սառ (ն) — *սառույց, սառուտ — սառած, սառցե*
Սառնահամուտ — *սառած*
Սասա — *հրաման, արգելում*
Սատրինջ — *շախմատ*
Սարավանդ — *ցցվածք, դուրս ցցված մաս*
Սարսել — *ինդացնել, ցնցել, տապալել*
Սեպել — *համարել*
Սևաթուրմի — *սև գույնի*
Սիրաբախ — *սիրուց բարախող*
Սիրակար — *սեր կաթող*
Սիրահոդ — *սիրով կապված, սրտակից*
Սիրասուզ — *սիրով սուզ մտած*
Սյալ — *սև*
Սռնճալ — *սուվարանալ, ուշնել*
Սրդդել — *նեղանալ, վիրավորվել*
Սրտնա — *սրանում է*
Սուղի նատել — *բանկ նստել*

Ս' — *նվ, ու (շաղկապ)*

Վայրիկ — *վայրկյան, պահ*
Վանկ — *1. հնչյուն 2. երգ*
Վան — *աղնիվ, գարդարուն քող*
Վատ առանց — *այրերից վատը, վատ ոգեմարդ*
Վաղդատարմիկ — *վարդ տենչացող վարդ բղձացող*
Վեա — *մանր ալիք, կոհակ, վեա ի վեա — ծուփ-ծուփ*
Վերավառիլ — *նորից վառվել*
Վիրապ — *խոր գուբ, հոր, փոս*
Վրայոմ — *մասին, վրա (կապ)*

Տապակեզ — *տապից կիզված, վառված*
Տապլկտիլ — *թապլտվել, թավալվել*
Տատամսել — *շվարել, վարանել*
Տարադաս — *տարբեր կարգի, տարբեր բնույթի*
Տարածայնել — *տարածել, հայտնել*
Տարոդնած — *ցրված*
Տարփ — *գոտու վրայի գարդարանք*
Տիպար — *նման*
Տիվ — *ցերեկ*

Տրամախոհություն — *հշտադատում, տրամաբանում*
Տրուպ — *վնրջին, ստորին*
Տուֆ — *ավնք*

Ցածուն, ցածուկ — *ցածր, ցածրիկ*
Ցայգն գիշեր — *մինչև լուսաբաց*
Ցնցոտազգաց — *ցնցոտիապոհստ*
Ցողաբոր — *ցող հոսող*
Ցուրեկ — *ցնրնկ*
Ցցնել — *ցուլց տալ*

Ուլն (ուլան) — *վիզ, պարանոց (վզի, պարանոցի)*
Ուղխ — *հոսող ջուր, առու, գնտ*
Ուշ պիտի բլլամ — *պիտի հիշվնմ*
Ուշկեկ — *մի փոքր ուշ*
Ուսկից — *որտնղից*

Փաղփուն — *փայլփլող, պսպղուն (ած.)*
Փանտխի — *նվաստ, ծուլ*
Փանդիտ — *հռչակաւոր նվագարան*
Փրիր (f) — *ծաղիկներ, ծաղկունք*
Փոխան — *փոխարեն*
Փեռնկտել — *պատառատռել, անջատնլ*
Փողփողիլ — *փայլփլնլ, շողշողալ*
Փրած — *պոկված, բաժանված*
Փույր — *շտապով, ոշինշ փույրս է — հոգս չէ, պետքս չէ*

Քաղվել — *մեռնիլ*
Քանի՞ն — *որքա՞ն, որչա՞փ*
Քաշկռնել — *քաշքշնլ, քարշ տալ*
Քնեն — *բնկնիլ*
Քնց — *բույրնրի*
Քիտա (Բտռուն Մ) — *բրտինք*

Օրոց — *ծածկոց*
Օձռում — *անջատում, պատակտում, բաժանում*
Օճ — *հապա*
Օվասիս — *օազիս, դալարիք անապատում*
Օրենք — *օրնններ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կապմողի կողմից 5
Վարդ և Շուշան կամ Հովիվք Մասյաց 9
Սև Հոգեր կամ Հետին Դիշեր Արարատյան 68
Արտաշես Աշխարհակալ 133
Անկումն Արշակունի Հարստության 195
Առաքաքակութիւնք Պարսից ի Հայս կամ Ավերումն Անի Մայրաքաղաքին Բագրատունյաց 307
Բատրոն կամ Թշվառներ 373
Տարագիր ի Սիպերիա 461

Հավելված

Տիգրան Բ 481
Մանրաբրություններ 493
Համեմատ Պետրոս Դուրյանի «Երկերի ժողովածուն»-ի առաջին հատորի 542
Տեղանունների բառարան 543
Անձնանունների բառարան 553
Բառարան 556

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ
ПЕТРОС ДУРЯН

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հատոր 2

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ա. Հ. ՇԱՂԱՄՅԱՆ
Նկարչական ձևավորումը
Լ. Ա. ՍԱՂՈՅԱՆԻ
Տեխնիկական խմբագիր
Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ
Ա. Վ. ՀՈՎԱՍԻՄՅԱՆ

ՎՖ 05427 ԽՀԽ 1297. Հրատ. 3346. Պատվեր 921 Տպաքանակ 20000
Հանձնված է արտադրության 1/XII 1970 թ.: Ստորագրված է տպագրության 2/XI 71թ..
Տպագր. 35.25 մամուլ+1 ներդիր, հրատ. 18,41 մամուլ. պայման. 24,68 մամուլ.
թուղթ № 1, $70\times108^{1}/_{32}$: Գինը 1 ռ. 36 կ.:
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ
FL0049991

A I 11870